

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

**СБОРНИК НАУЧНЫХ
СТАТЕЙ СНО ЕГУ**

**COLLECTION OF SCIENTIFIC
ARTICLES OF YSU SSS**

2 (2)

Общественные науки – Social Sciences

(Востоковедение, история – Oriental Studies, History)

ЕРЕВАН - YEREVAN

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS

2014

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2 (2)

Հասարակական գիտություններ

(Արևելագիտություն, պատմություն)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2014

Հրատարակվում է
ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ

Издается по решению Ученого совета ЕГУ

Published by the resolution
of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

պ.գ.դ., պրոֆ. Է. Մինասյան
պ.գ.դ., պրոֆ. Յ. Մարգարյան
պ.գ.դ., պրոֆ. Յ. Աբրահամյան
բ. գ. դ., պրոֆ. Գ. Ասատրյան
պ. գ. ք., պրոֆ. Ալ. Սաֆարյան
պ. գ. ք., դոց. Է. Ջոհրաբյան
բ. գ. ք., դոց. Ռ. Մելքոնյան
բ. գ. ք., դոց. Վ. Ոսկանյան
պ.գ.ք., ասիստ. Ա. Հարությունյան
պ.գ.ք., ասիստ. Ս. Սերոբյան

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ Մ. Մալխասյան

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am
Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական
գիտական ընկերություն
Հասցե՝ ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71-01-94, sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ ssspub.yasu.am

Հարգելի ընթերցող,

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կառուցվածքային ստորաբաժանումները 2012-2013 թթ. ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել են շուրջ հինգ տասնյակ միջազգային, հանրապետական և ֆակուլտետային գիտաժողովներ, որոնցից ամենախոշորը նվիրված էր Հայ գրատպության սկզբնավորման 500-ամյակին և ԵՊՀ ՌԳԸ հիմնադրման 65-ամյակին: Գիտաժողովում ներկայացված 350 զեկուցումներից 244-ը տպագրվեցին հինգ հատորներից կազմված ժողովածուում: Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպված մյուս գիտաժողովների ընթացքում ներկայացվել է շուրջ 650 զեկուցում, որոնց մի մասը գիտական ղեկավարների, ամբիոնների վարիչների և ֆակուլտետների գիտական խորհուրդների համապատասխան երաշխավորությունն ստանալուց հետո ներկայացվել է ԵՊՀ ՌԳԸ գիտական հոդվածների ժողովածուում տպագրության: Զգալի խմբագրական աշխատանքներից հետո ժողովածուն ներկայացվել է ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը:

Այսպիսով, Ձեր դատին ենք ներկայացնում 94 գիտական հոդվածից բաղկացած ժողովածու՝ հասարակական գիտություններին առնչվող 3 հատորներով՝ բանասիրություն (25 հոդված), պատմություն և արևելագիտություն (39 հոդված), իրավագիտություն, փիլիսոփայություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա, ժուռնալիստիկա (30 հոդված):

Այս եռահատորյակի հրատարակումը տրամաբանական շարունակությունն է ՌԳԸ հրատարակչական ձեռնարկումների, քանի որ վերջին տարիների ընթացքում ուսանողների և ասպիրանտների գիտակազմակերպչական հետաքրքրությունների աճի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուշիմության, սրտացավության և պրոֆեսիոնալիզմի, ինչպես նաև ԵՊՀ վարչակազմի և ՌԳԸ ստորաբաժանումների համակարգված գործելաճի շնորհիվ ԵՊՀ-ում զարգանում է ուսանողական գիտական կյանքը: Հետզհետե մեծանում է երիտասարդական գիտաժողովների ընթացքում ներկայացվող զեկուցումների քանակն ու որակը, և գիտաժողովների անցկացման տրամաբանական շարունակություն է դառնում գիտական հոդվածների ժողովածուների հրատարակումը: Պատահական չէ, որ ՌԳԸ շրջանակներում 2012-2013 թթ. ուսումնական տարվա ընթացքում հրատարակվել է գիտական հոդվածների 9 և զեկուցումների թեզիսների 2 ժողովածու, որոնցում ընդգրկված են համապատասխանաբար շուրջ 370 հոդված և մոտ 80 թեզիս: Անչափ կարևոր է, որ ԵՊՀ-ում ձևավորված այս երիտասարդական գիտական միջավայրի մասնակիցն են նաև ՀՀ այլ բուհերի ուսանողներ և ասպիրանտներ, ովքեր ևս տպագրում են իրենց աշխատանքները ՌԳԸ գիտական հոդվածների ժողովածուներում: Կարևոր ձեռքբերում է նաև ՌԳԸ հրատարակումների կայքի (ssspub.ysu.am) ստեղծումը, ինչը հնարավորություն է ընձեռում հոդվածների հեղինակներին՝ ավելի ճանաչելի դարձնելու իրենց աշխատանքները համացանցի միջոցով:

Հարկ ենք համարում նշել, որ այս հատորում տեղ են գտել պ.գ.դ., պրոֆ. Յ. Սարգսյանի, պ.գ.դ., պրոֆ. Յ. Աբրահամյանի և պ.գ.թ., դոց. Է. Ջոհրաբյանի նախագահությամբ անցկացված Կովկասագիտական երիտասարդական առաջին գիտաժողովի նյութերը:

Ամփոփելով մեր խոսքը՝ խորին երախտագիտություն ենք հայտնում ԵՊՀ ՌԳԸ աշխատանքներին մասնակցող ուսանողներին և ասպիրանտներին, ԵՊՀ ռեկտորատին, ֆակուլտետների ղեկավարությանը, ամբիոններին և հատկապես պրոֆեսորադասախոսական կազմի այն ներկայացուցիչներին, ովքեր ղեկավարել կամ գրախոսել են աշխատանքները:

Հարգանքով և արգասաբեր համագործակցության ակնկալիքով՝

*ԵՊՀ պրոռեկտոր, տ. գ. թ. Ռուբեն Սարկոսյան և
ԵՊՀ ՌԳԸ նախագահ Միքայել Մալխասյան*

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВОСТОКОВЕДЕНИЕ

ORIENTAL STUDIES

ԲԱԼՈՒՉԻՍՏԱՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Աղասի Առաքելյան

ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, հայցորդ

Գիտ. դեկ. ք.գ.թ., դոց. Վ. Ոսկանյան

Էլփոստ՝ aghasiarakelian@yahoo.com

Բալուչիստանը, որն այժմ աշխարհագրորեն բաժանված է երեք պետությունների՝ Իրանի, Պակիստանի և Աֆղանստանի միջև: Այն Գեդրոսիայի ժամանակակից անվանումը և հին հունական աղբյուրներում հանդիպող Դրանգիանայի մի հատվածն է, որը ընդգրկում է Մաքուրանը, Թուրանը (Քալաթի կենտրոնական բարձրավանդակը կենտրոնական Բալուչիստանում) և Սաջեստանը: Իրանական տարածքը զբաղեցնում է 181.000 քառ. կմ տարածք և ներկայացնում է Իրանի հարավ-արևելքում գտնվող Սիստան և Բալուչիստան նահանգը Ջահեդան կենտրոնով: Պակիստանյան Բալուչիստանը Քվետա կենտրոնով կազմում է Պակիստան պետության 40 %-ը և զբաղեցնում 347.190 քառ. կմ տարածք: Աֆղանստանում բալուչները հիմնականում զբաղեցնում են Նիմռուզ նահանգը, ինչպես նաև բելուջներ կան Իրանի և Պակիստանի սահմանին գտնվող մի շարք նահանգներում: Բալուչիստանի բաժանումը այս երեք պետությունների միջև տեղի է ունեցել 19-րդ դարի երկրորդ կեսին: Մասնավորապես 1871 թ. Բրիտանիայի և Իրանի միջև կնքված և 1896 թ. հաստատված Գոլդսմիթի պայմանագրով Բալուչիստանի արևելյան հատվածը անցավ Իրանին, իսկ արևմտյան հատվածը՝ Բրիտանական Յնդկաստանին: Դուրանդի պայմանագրով այն բաժանեց Բրիտանական Յնդկաստանի ու Աֆղանստանի միջև: Իսկ 1948 թ. Պակիստանի պետության ձևավորումից հետո Յնդկաստանի տարածքում գտնվող բելուջական տարածքները անցան Պակիստանի տիրապետության ներքո: Այսինքն կարելի է ասել, որ բելուջները հակառակ իրենց կամքի հայտնվեցին այս երեք պետությունների գերիշխանության ներքո:

Բալուչիստանի տեղանվանումը գալիս է բալուչ ժողովրդից: Այս անվան ծագման մասին կան տարբեր վարկածներ: Գանկովսկին Բալուչիստանի անվան ծագումը կապում է «բալուչ ֆեոդալական ազգության» սկզբնավորման հետ և ժամանակագրում 13-15-րդ դդ.¹: Ինայթոլլահ Բալուչը անվան ծագումը նույնպես կապում է 12-րդ դ. բալուչական կոնֆեդերացիայի ստեղծման հետ:

Սակայն Յենրի Պոտինգերը անվան ծագումը կապում է 18-րդ դ. և Նադիր շահի հետ՝ մասնավորապես նշելով, որ Նադիր շահի մահվանից հետո ընդարձակ տարածքներ, այդ թվում նաև Բալուչիստանը անցան Նասիր խանի տիրապետության ներքո²:

Բալուչները հին ժողովուրդ են, որոնց ծագումը նույնպես տարբեր քննարկումների առիթ է հանդիսացել: Բալուչների ամենաառաջին աղբյուրը Շահրեստանիայե Էրանշահրն է 8-րդ դ., որը նկարագրում է բալուչներին որպես ավտոնոմ լեռնային հասարակություն: Բալուչների մասին անդարդառնում են նաև 9-10-րդ դդ. արաբ պատմիչները՝ այդ թվում Թաբարին, Մասուդին և Իսթահրին: Մասնավորապես նկարագրելով արաբների կողմից Քերմանի գրավումը՝ նրանք գրում են, որ այդ տարածքի լեռները զբաղեցված էին Քոչ (Koch) ցեղերի կողմից, որոնց անվանում են նաև Չաֆ, Չաֆս, իսկ որոշ պատմիչներ նրանց հետ նշում են նաև Baloch ցեղերին, որոնք անվանվում են նաև բալուս: Այսպիսով, կարելի է ասել, որ բալուչները Քերմանում արդեն հաստատվել էին 10-րդ դ.: Լոնգվորթ Դեյմսը նշում է, որ այս քոչ կողմող

¹ Ганковский Ю., Дьяков А., Народы Пакистана: Основные этапы этнической истории, Москва, 1964, с. 147-148.

² Pottinger H., Travels in Balochistan and Sindh, London, 1816, p. 250.

ցեղերը բրահուիներն են, քանի որ վերջիններս դրավիդյան ծագում ունեն և մինչև այսօր էլ ցեղերի անվանումների մեջ հանդիպում է Kurd անվանումը, որը ծագում է Koch բառից: Բացի դա բրահուիների լեզուն բելուջների կողմից կոչվում է Kur-Gali կամ Kir-Geli: Չնայած որ բալուջները հաստատվել էին այս տարածքում նաև արաբական արշավանքներից առաջ, սակայն այս վարկածը հաստատված չէ: Չանաձայն արաբ պատմիչ Յաբուսիփ՝ բալուջները նման էին քրդերին և զբաղեցնում էին Ֆարսից Քերման ընկած տարածքը: Եսթահրին բալուջներին անդրադառնալիս արդեն նշում է, որ վերջիններս հաստատվել էին Սիստանի մի շարք նահանգներում: Հավանական է, որ այդ շրջանում տեղի է ունեցել բալուջների երկու տեղաշարժ: Մի ալիքը ձգվել է Քերմանից Սիստան և Արևմտյան Մեքրան, իսկ սելջուկների նվաճումների ժամանակ երկրորդ ալիքով բալուջները գաղթել են դեպի Արևելյան Մեքրան և Սինդ: Հենց այս տեղաշարժի արդյունքում բալուջները առաջին անգամ հայտնվել են Ինդոս գետի հովտում, որտեղից էլ տեղի է ունեցել վերջիններիս երրորդ գաղթը դեպի Չոկաստան Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակ¹:

Ֆիրդուսու Շահ Նամեում բալուջները հիշատակվում են թե՛ միջակայք, թե՛ պատմական բաժիններում: Առաջինում որպես Քեյ Քաուսի ու Քեյ Խոսրովի բանակի մի հատված, որոնք պայքարում էին թյուրքերի դեմ, իսկ երկրորդում որպես Արդաշիրի ու Խոսրով Անուշիրվանի դեմ պայքարելիս²:

Հետևելով «Ղաֆթարե Շաատին» («Գեներալոգայի խրոնիկա») բալուջները ու քրդերը իրար հետ գաղթել են Հալեպից՝ Սիրիայից: Որոշ պատմիչներ օրինակ Մուհամմեդ Սարդար խանը նշում է, որ դա բաբելոնյան թագավորի տիտղոսն է եղել՝ մասնավորապես նշելով, որ Նիմրուդ Քուշի կամ Քուշի որդին կոչվել է Նիմրուդ բալուս, իսկ նրա հետևորդները բելուսիս կամ բալուսիս: Իսկ մի մասն էլ նրանց կապում է վաղ արաբների հետ՝ նշելով, որ Մուհամմեդ մարգարեի ժառանգներն են և որ կռվել են Քերբալայում Ալիի կողմից: Սակայն այս պատմիչների միջև համաձայնություն կա, որ քրդերը հաստատվեցին Իրաքի, Թուրքիայի, Իրանի հյուսիսարևմուտքում, իսկ բալուջները Կասպից ծովի հարավային ափերին և միայն ավելի ուշ արտագաղթել ներկայիս Իրանի ու Պակիստանի Բալուչիստան 6-14-րդ դդ.³: Սա վկայվում է նաև այն փաստով, ու բալուչին դասակարգվում է որպես հյուսիսարևմտյան իրանական լեզու և որ Ֆիրդուսին նրանց հիշատակում է Գիլանիի հետ միասին⁴: Սակայն այս լեզաբանների կարևորն այն է, որ բալուջները մի նախահոր ժառանգներն են այսպես կազմելով կաու (ազգ):

Բալուջների ներկայիս թիվը շատ դժվար է գնահատել, քանի որ իրանական ու պակիստանյան աղբյուրները թերագնահատում են նրանց թիվը, իսկ նացիոնալիստականները գերագնահատում: Ամենամեծ թիվը տրված նացիոնալիստների կողմից եղել է 30 մլն Քալաթի վերջին կառավարչի կողմից: Սակայն ընդհանրապես նացիոնալիստները գնահատում են 16-18 մլն: Ի հակադրություն՝ պաշտոնական տվյալները նշում են 3,5 մլն: Ամենավերջին Պակիստանյան մարդահամարը 1981 թ. Բալուչիստան նահանգի բնակչությունը նշում էր 3.5 մլն⁵: Մերժելով այս թիվը նացիոնալիստները նշում էին դժվարությունները, այդ թվում լեռնային տարածքը և կառավարության ցանկությունը նվազեցնել բալուջների թիվը: Ուրանի բացահայտումը Դերա Դազի խանում նշում էր, որ բալուջներ ապրում են նաև Փունջաբում: Նացիոնալիստական աղբյուրները նշում են 65 %, իսկ պաշտոնականը՝ 25 %, սակայն եթե պաշտոնական տվյալն էլ վերցնենք, ապա ստացվում է 250 հազ. Դերա Դազի խանում ու Փենջաբում ամբողջությամբ: Այսպես, եթե վերցնենք 2 մլն Բալուչիստան նահան-

¹ Dames L., The Baloch Race: A Historical and Ethnological Sketch, London, 1904, pp. 27-34.

² Hosseinbor M., Iran and nationalism: The case of baluch nationalism, Washington, 1984, pp. 25-26.

³ Harrison S., In Afghanistan shadow: Baluch Nationalism and Soviet temptations, Carnegie Endowment for International Peace, 1981, pp. 10-11.

⁴ St'u www.iranica.com:

⁵ Hosseinbor M., Iran and Nationalism: The Case of Baluch Nationalism, Washington, 1984, pp. 80-82.

գում, 1,4 միլիոն Սինդուն, 250 հազար Փունջաբում, ապա բալուչների թիվը Պակիստանում ստացվում է 3,65 մլն: 1978 թ. պաշտոնական աղբյուրը Սիստան ու Բալուչիստան նահանգի պաշտոնական բնակչությունը գնահատում էր 659 297, որից 217 000-ը սիստանցի միառժամանակ ցուցաբերելով բալուչների թիվը այլ նահանգներում: Շահ Բախշը նշում է 2 մլն ամբողջ Իրանի տարածքում: Այս թիվը լավ մեծացված է: Սակայն ըստ անկախ աղբյուրների բալուչների թիվը Իրանում հասնում է 1 մլն-ի: Այսպես, եթե վերցնենք 1 մլն Իրանում, 3,65 մլն Պակիստանում, 350 հազ. Պարսից ծոցի երկրներում, 90 հազ. Աֆղանստանում և 13 հազ. Թուրքմենստանում: Բալուչների ամբողջ թիվը հասնում է 5 մլն-ի¹:

1980 թ. Աֆղանստանի բալուչ բնակչությունը գնահատված էր շուրջ 300 հազ.: Սակայն բալուչ նացիոնալիստները նշում են, որ իրենց բնակչությունը շատ ավելին է, քան գնահատված է պաշտոնական աղբյուրներում: Այսպես, ըստ 1980-ական թթ. արքայի մեջ գտնվող Սեյեդ Սուհամեդ Շիրանգայի բալուչների թիվը Աֆղանստանում հասնում է 500 հազ.: Գլխավոր բնակավայրը Վիլայեթ Նիմրուզն է (Նիմրուզ նահանգը): Մեծ թվով բալուչներ կան նաև Հիլմենդ, Հերաթ ու Բադղիզ նահանգներում: Ավելի քիչ թվով բալուչներ ապրում են նաև Ֆարահ, Ֆարյաբ, Սամանգան, Թախար, Քունդուզ, Բաքդախշան, Ջազյանը, Կանդահարը, ինչպես նաև մայրաքաղաք Քաբուլում: Բադղիսի և Հերաթի բալուչ բնակչության թիվը 1975 թ. 30 հազարից 40 հազար էր: Պաշտոնական տվյալների համաձայն վելայաթ Նիմրուզի բնակչության թիվը, որտեղ բալուչները մեծամասնություն են կազմում 122 հազ. էր 1975 թ-ին: Կան նաև բալուչները Աֆղանստանի ու Իրանի սահմանին, որտեղ Աֆղանստանի, Իրանի ու Թուրքմենստանի սահմանները համընկնում են : Ինչպես Իրանում ու Աֆղանստանում, այնպես էլ Արաբական թերակղզու երկրներում հստակ թիվ չկա այնտեղ ապրող բալուչների համար: Այնուամենայնիվ էլ ֆենբեյնը նշում է, որ 1979 թ. այս երկրներում կա շուրջ 500 հազ. բալուչ²:

Ամերիկայի Կենտրոնական հետախուզական վարչության տվյալներով բալուչները կազմում են Աֆղանստանի բնակչության (31.108.077) 2 %-ը (622.161)³, Իրանի բնակչության (79,853,900) 2 %-ը (1,597,078 մարդ)⁴ և Պակիստանի 193,236,868 բնակչության 3,57 %-ը (6,898,627 մարդ)⁵: Այսպիսով ընդհանուր կազմում է մոտ 9 մլն բնակչություն:

Բալուչները փոքրիկ բացառությամբ սունի մահմեդականներ են և պատկանում են հանաֆիական ժյուդին: Սակայն կարելի է նշել, որ նրանք ֆունդամենտալիստ չեն: Բալուչների կրոնական պատկանելիությունը այսպես է բնութագրում բալուչներին. «Նրանք փոքր բացառությամբ սունի մահմեդականներ են և այսպիսի զգվանքով են վերաբերվում շիիզմին, որ ես համոզված եմ, որ ավելի վտանգավոր կլինի ընդունել շիիզմը քան քրիստոնեությունը»⁶:

Բալուչիստանում գոյություն ունի նաև ոչ սունիական փոքրամասնություն: Բաների հասարակությունը, որոնք բնակվում են Բամիուրից արևմուտք ընկած Դագ-գանում, շիա են, և Մաքուրանում ապրող մեծ հասարակությունը, որոնք իրենց անվանում են զիքրի: Թե ինչպես է շիիզմը ներթափանցել Բալուչիստան դեռևս վերջնական լուծում չի ստացել գիտնականների մոտ: Մասնավորապես Հենրի Փոթինգերը նշում է, որ Քերմանում ապրող որոշ բալուչական ցեղեր պարսկական իշխանությունների դրոմամբ ընդունեցին շիիզմը 19-րդ դ. երկրորդ կեսին: Համաձայն Սելինգ Հարիսոնի 1980 թ. զիկրիների թիվը հասնում է 500-700 հազ., որոնք ապրում են

¹ Harrison S., pp. 175-178.

² Breseeg T., Baloch nationalism: Its origin and development, Royal Book Company, 2004, pp. 68-69.

³ Տե՛ս www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/af.html:

⁴ Տե՛ս www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ir.html:

⁵ Տե՛ս www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/pk.html:

⁶ Potinger H., pp. 198-200.

ծովափնյա Մաթուրանում և Կարաչիում: Բացի սրանցից կան նաև այլ փոքրամասնություններ¹:

Հարկավոր է նշել, որ Իրանում սունիզմը քաղաքական բնույթ է կրում, որը միավորում է բալուչներին ընդդեմ շիա պարսիկների: Ինչպես շիիզմը միավորեց պարսիկներին ընդդեմ Օսմանյան կայսրության, այնպես էլ սունիզմը ընդդեմ շիա գերակշռող պարսկական տիրակալության դեմ:

Ի հակառակ դրա կրոնը այդպիսի դեր չի ունեցել Պակիստանում, որի արդյունքում այնտեղ նացիոնալիստական ուժերում մշտապես գերակշռել են աշխարհիկ ուժերը:

Բելուջերենը կամ բալուչին բալուչների լեզուն է, որը մտնում է իրանական լեզուների հյուսիս-արևմտյան լեզվաճյուղին: Բալուչին որոշակի նմանություններ ունի նոր իրանական լեզուներից քրդերենին, թաթերենին, թալիշերենին:

Բալուչին աշխարհագրորեն ծավալվում է թուրքմենստանից Սերվ օագիս, դեպի հարավ-արևմուտք Պարսից ծոց, Իրանի Սիստան և Բալուչիստան նահանգից դեպի արևելք Հիլմենդ դաշտավայր, Պակիստանյան Մեքրանից մինչև Ինդոս գետը: Բալուչիով խոսող մեծ բնակչություն կա նաև Սիացյալ Արաբական Եմիրություններում և Քուվեյթում: Աֆղանստանում բալուչին Նիմրուզ նահանգի գլխավոր լեզուն է: Միակ հասարակությունը, որը բնակվում է վերոնշյալ տարածքում, սակայն չի խոսում բալուչիով, բրահուիներն են:

Բալուչին որպես գրավոր լեզու հակառակ հարուստ բանահյուսության ունի շատ կարճ պատմություն: Այսպես, Բրիտանական թանգարանում պահպանվող ամենահին երեք ձեռագրերը վերագրվում են 19-րդ դ. առաջին կեսին:

Լեզվի կանոնակարգման հիմնական խնդիրը համընդհանուր կերպով ընդունված այբուբենի բացակայությունն էր: Առաջին անգամ որպես այդպիսի այբուբեն ռոմանական հիմքի վրա առաջարկեց Լոնգվորդ Դեյմսը 1907 թ.:

Սակայն 1969 թ., երբ պատրաստվում էր բալուչիի առաջին դասագիրքը, գրքի հեղինակներ Մենգալը և Բարգերը բալուչիի համար օգտագործեցին արաբերենի նաստալիք տարբերակը: Համաձայն նրանց բալուչին ունի 37 տառ և հատուկ սիմվոլներ:

Բալուչին բաժանվում է հինգ բարբառի.

1. Ռախշանի: Այն տարածվում է թուրքմենստանի Սերվից մինչև Պարսկաստան և Աֆղանստան:
2. Սարավանի: Տարածվում է Պարսկաստանի տարածքում, մասնավորապես Սարավան գյուղում: Զահեդանից հեռարձակվող ռադիոհաղորդումների հիմնական լեզուն է:
3. Լաշարի: Կենտրոնացած է հատկապես Լաշարի գյուղում Իրանշահրից 120 կմ հեռավորության վրա:
4. Քեչի: Պակիստանյան Մեքրանի Քեչ հովտի խոսվածքն է:
5. Մերձափնյա բարբառներ: Իրանական Չահբահարից ձգվում է մինչև Պակիստանի տարածք՝ ներառելով Գվադարի նավահանգիստը:
6. Արևելյան Լեռնային խոսվածքներ: Տարածված է Լեռնային շրջաններում, մասնավորապես Մարի և Բուզտի ցեղային միավորումների մոտ²:

¹ Breseeg T., pp. 73-76.

² Տե՛ս www.iranica.com:

БЕЛУДЖИСТАН: КРАТКИЙ ИСТОРИЧЕСКИЙ ОБЗОР

Агаси Аракелян

В статье раскрыты общие представления о Белуджистане, который благодаря стратегическому расположению и наличию богатых энергетических ресурсов всегда представлял интерес для многих больших стран и находился в центре конфликтов между ними.

Белуджистан в настоящее время разделен между тремя государствами: часть его является частью провинций Ирана (Систан и Белуджистан), другая часть входит в Пакистан и составляет 40% его территории, третья часть – это несколько районов Афганистана, граничащих с Ираном и Пакистаном. В статье также рассматриваются вопросы происхождения белуджов, их численности, а также факторы, которые формируют национальную идентичность – язык и религию.

BALUCHISTAN: A BRIEF HISTORICAL OVERVIEW

Aghasi Arakelyan

The current article presents general ideas about Balochistan, which has always been in the middle of the conflict of great powers due to its strategic position and energy sources. Balochistan is currently divided among three countries. It is a part of Iranian Sistan and Balochistan province and makes the 40% of Pakistan. It also comprises Afghan provinces near the border of Iran and Pakistan.

The article considers various issues such as Baloch origins, the number of population and other elements of national identity (language, religion, etc).

ԱՅՄՊԵՆ ԿՈՉՎԱԾ «ԿԱՐՄԻՐ ՔՐԴԱՏԱՆ»

Անգլերեն Գաբրիելյան

ԵՊՅ, Արևելագիտության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ. պ. գ. ք., ասիստ. Ռ. Յարալյան

Էլվիոստ՝ angelina.gabrielyan@yahoo.com

Քրդերը Առաջավոր Ասիայի իրանալեզու ժողովուրդ են, որոնց բնակության արեալը ընդգրկում է մի քանի պետությունների տարածքներ՝ Իրան, Իրաք, Թուրքիա, Սիրիա: «Քուրդ» անվանումը հանգում է cyrtii ձևին, որը քոչվոր և ռազմական ցեղի անվանում էր: Նրանք Ք. ա 1-ին դ. ապրում էին պատմական Հայաստանի Կորճայք նահանգի տարածքում: «Քուրդ» անվանման ամենավաղ հիշատակությանը հանդիպում ենք պահլավական (6-7-րդ դդ.) և արաբական աղբյուրներում (7-13-րդ դդ.), որոնցում տերմինը ունի սոցիալական ենթատեքստ՝ «քոչվոր անասնապահ» իմաստով: Իրանում քրդական բնակչությունը կենտրոնացած է երկրի հյուսիսարևելքում, ինչպես նաև՝ Քրդստան նահանգում և Քերմանշահի Ղասրե-Շիրին բնակավայրի շրջակայքում: Ընդհանուր առմամբ, Իրանի քրդերի թվաքանակը կազմում է մոտ 4 մլն:

Իրանի քրդերին մշակութային և լեզվական առումով բավականին նման են Իրաքի քրդերը, որոնք բնակվում են Իրաքի հյուսիսային և հյուսիսարևմտյան մասում: Իրաքի քրդերի թվականակը ևս կազմում է 4 մլն: Իրաքյան քրդերի բացահայտ կարևոր դերը քրդական շարժման մեջ անհերքելի է, քանզի արդեն 1991 թ. նրանք ստացել են ինքնավարություն:

Սիրիայի քրդերը կենտրոնացած են երկրի հյուսիսային ու հյուսիսարևելյան լեռնային շրջաններում՝ կազմելով մոտ 1,5 մլն:

Թուրքիայի քրդերը ապրում են երկրի արևելյան, հյուսիսարևելյան և հարավարևելյան մասերում՝ ներառելով պատմական Արևմտյան Հայաստանի ողջ տարածքը: Թուրքիայի տարածքում կենտրոնացած է քրդերի մեծ մասը՝ մոտ 10-12 մլն¹: Այս տարածքները պայմանականորեն կրում են «Քրդստան» անվանումը, որը երբևէ չի ունեցել քաղաքական նշանակություն. «Քրդստան» եզրը ներկայումս էլ ունի «քրդաբընակ տարածք» իմաստը²:

Քրդական հարցը առաջին անգամ միջազգային ձևակերպում է ստացել Սևրի պայմանագրում³: Ըստ պայմանագրի՝ քրդերը Թուրքիայի քրդաբնակ տարածքում կարող էին ունենալ «Քրդստան» անվանմամբ պետություն կամ ինքնավարություն ձեռք բերել Թուրքիայի կազմում⁴: Սակայն այս ձևակերպումը հետագայում զարգացում չի ունենում, քանզի, ինչպես Վ. Չերչիլն է ասում՝ «Սևրի պայմանագիրը պատրաստվել է 13 ամսվա ընթացքում, սակայն հնանում է ավելի շուտ»⁵: Իսկ արդեն Լոզանի պայմանագիրը լիովին խաչ քաշեց Քրդստան պետության ստեղծման հեռանդկարի վրա: Եվ Թուրքիան ու Իրանը անհապաղորեն զինված ուժեր են տեղափոխում քրդաբնակ շրջաններ և անցնում են մի քաղաքականության, որը նպատակ ուներ քրդերի ու քրդական հարցի հետագա բարձրացումը կանխելու: Իսկ ինչ վերաբերվում է քրդական կողմին, ապա հարկ է նշել, որ բուն քրդերի դերը քրդական

¹ Асатрян Г., Этническая композиция Ирана, Ереван, 2012, с. 97-99.

² Նույն տեղում, էջ 99:

³ Лазарев М., Империализм и курдский вопрос, Москва, 1989, с. 187.

⁴ Քրդստանի ստեղծմանը վերաբերվող Սևրի 62, 63, 64 հոդվածները լիովին համապատասխանում են Սան-Ռեմոյի համաձայնության կետերին, սակայն հարկ է նշել, որ Սևրի պայմանագրում քրդական հարցը բավականին կարևոր էր դիտարկվում, քանի որ պայմանագրի 3-րդ՝ Քրդստան, հատվածը անմիջապես հաջորդում էր «Կոստանդնուպոլիս» և «Նեղոսներ» մասերին՝ տարածքային մյուս հարցերից առաջ (Նույն տեղում, էջ 187):

⁵ Նույն տեղում, էջ 182:

հարցի արժարժանն ու որոշակի տեղաշարժերի մեջ խիստ նվազ է, քանի որ քրդական հարցը արդեն դադարել էր լոկ մի ժողովրդի հարց լինելուց, ու մտնելով մեծ տերությունների իմպերիալիստական ձգտումների դաշտ, ցույց է տվել քրդական շարժման ղեկավարների ու քուրդ ազգայնականների քաղաքական թերպատրաստվածությունը¹: Ուստի պատահական չէ, որ Քրդստան անունը կրող առաջին վարչական միավորը ստեղծվում է ոչ քրդերի հիմնական բնակության արեալում, այլ՝ ԽՍՀՄ-ի տարածքում՝ Անդրկովկասում:

Անդրկովկասում քրդերը սկսում են բնակություն հաստատել դեռևս 19-րդ դ. սկզբներից, հատկապես տեղափոխությունը դեպի Անդրկովկաս մեծ թափ է ստանում ռուս-պարսկական երկու պատերազմներից (1804-1813, 1826-1828 թթ.) հետո: Դա պայմանավորված է նրանով, որ այդ պատերազմներից հետո պարսկաբնակ քրդերը իրավունք են ստանում պարսկական տարածքներից տեղափոխվել և բնակություն հաստատել Ռուսաստանի հպատակության ներքո: Մասնավորապես Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ հոդվածն ազդարարում է քրդերի իրավունքը Շահի տիրապետությունից տեղափոխվելու Ռուսաստանի հովանու ներքո²: Բնակվելով ԽՍՀՄ-ի տարածքում՝ քրդերը լիովին ընդունում էին խորհրդային գերիշխանությունը և նույնիսկ մասնակցում են նրա կայացմանը: Սակայն հեղափոխության առաջին տարիներին նրանց վիճակը ծայրահեղ ծանր էր. քրդերի մոտ 50 %-ը սովի էր մատնված³: Ահա այսպիսի պայմաններում էլ ստեղծվում է «Կարմիր Քրդստանը»:

1923 թ. հուլիսի 16-ին Ադրբեջանի ԽՍՀ-ում ստեղծվում է Քրդստանի գավառը⁴, որը ներառում էր Քալբաջարի, Լաչինի, Կուբաթլուի և Ջանգելանի շրջանները⁵: Սա փաստորեն հարավային Կովկասում քրդական վարչատարածքային մի միավորի ծնունդ է, որը հետագայում քրդական իրականության մեջ սկսելու է կոչվել Կարմիր կամ Կովկասյան Քրդստան, որ, իբրև, հնագույն ժամանակներից Քրդստանի մի մասն է եղել⁶:

Քրդստանի գավառը բաժանված էր 6 դայրեների՝ Լաչինի, Կուբաթլուի, Քալբաջարի, Քյուրդ-Գյաջինի ու Մուրադխանլիի: 1921 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Քրդստանի գավառի բնակությունը կազմում էր 51,2 հազար մարդ, որի 73,1 % քրդեր էին, 26,3 %՝ թյուրքական տարր, իսկ հայերը՝ ընդամենը 0,5 %⁷:

1930 թ. Քրդստանի գավառը վերափոխվում է Քրդստանի ինքնավար օկրուգի Լաչին կենտրոնով, սակայն այն արդեն իր մեջ էր ներառում նաև Ջաբրայիլի մի մասը: Օկրուգի տարածքում քրդերն ազատ տեղաշարժվում էին մի վայրից մյուսը՝ առավել հարմար արտադայրեր գտնելու համար և հիմնում էին նոր բնավայրեր⁸:

1930 թ. ԽՍՀՄ-ի կենտրոնական կոմիտեն և Խորհրդային ժողովրդական կոմիտեն համընդհանուր որոշում են ընդունում օկրուգների լուծարման մասին: Ըստ այդ որոշման՝ բոլոր օկրուգները պետք է վերափոխվեին շրջանների: Օգոստոսի 8-ին այդ հրամանը ընդունում են Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները, սակայն Քրդստանի շրջան այդպես էլ չստեղծվեց: Ընդհանուր առմամբ՝ Քրդստան անվանումը կրող այս վարչական միավորը չգոյատևեց նույնիսկ 7 տարի, սակայն, չնայած իր

¹ Никитин В., Курды, Москва, 1964, с. 12-13.

² Аристова Т., Курды Закавказья, Москва, 1966, с. 37-38.

³ Лазарев М., Мгой Ш., Васильева Е., Гасратян М., Жигалина О., История Курдистана, т. 3, Москва, 1999, с. 305.

⁴ Ի սկզբանե քննարկվում էր Արաքսյան օկրուգ ստեղծելու գաղափարը՝ Ջաբրայիլ կենտրոնով, սակայն բնակավայրերի հեռավորությունը և անբարենպաստ բնական պայմաններն արգելք էին դրա համար, և այս ծրագիրը չիրականացավ (Аристова Т., с. 40):

⁵ Лазарев М., Мгой Ш., Васильева Е., Гасратян М., Жигалина О., с. 306.

⁶ Мустафаев В., История Кавказского Курдистана, Москва, 2011, с. 11.

⁷ Бабаян Д., Красный Курдистан. Геополитические аспекты создания и упразднения, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=2920.

⁸ Аристова Т., с. 40.

կարճատև կյանքին, դրա գոյությունը բավականին կարևոր երևույթ է: Լեռնային Ղարաբաղի արևմտյան մասը, որում հայկական տարրը այլևս գերիշխող չէր, քրդական տարրով բնակեցնելով և տվալ տարրի էթնիկ ինքնությունը արտացոլող վարչական միավոր ստեղծելով՝ Ադրբեջանը ցանկություն ու նպատակ ուներ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև կենդանի պատմեշ ստեղծելու: Սակայն այս հարցում կար նաև մի այլ կողմ՝ բուլշևիկները: Տվյալ տարածքի նկատմամբ հսկողությունը բավականին կարևոր էր բուլշևիկների համար, քանզի 1921 թ. Լեռնահայաստանի անկախության համար պայքարը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ ստիպեց բուլշևիկներին առանձնահատուկ ուշադրությամբ զինվել այս տարածքի նկատմամբ: Սակայն ի տարբերություն Ադրբեջանի, որը քրդական տարրը ակտիվորեն օգտագործում էր հայերի դեմ, բուլշևիկներն այս հարցում բավականին զգույշ էին ու հայքրդական հակասություն ստեղծելու նպատակ չունեին¹:

Եթե քննենք այն ստրատեգիական խնդիրները, որոնք բուլշևիկները լուծում են Քրդստան գավառի ստեղծմամբ, ապա հարկ է առանձնացնել, որ դրանով բարձրանում է Ռուսաստանի հեղինակությունը քրդերի շրջանում: Քրդերը ԽՍՀՄ-ին հովանավոր էին դիտում իրենց պայքարում, իսկ ԽՍՀՄ-ի ազգային քաղաքականության մեջ գտնում էին գաղափարական հիմք: Սակայն եթե այս հարցը դիտարկենք «Կարմիր Քրդստանի» ու դրա գոյության շրջանակներից դուրս, ապա բախվում ենք այն փաստին, որ ԽՍՀՄ-ը «չարդարացրեց քրդերի հույսերը», և արդեն 1970-ական թթ. սկսում է քրդական ազգային շարժման առավել ազդեցիկ ուժերի վերակողմնորոշումը դեպի արևմուտք²: Ինչևէ, ռուս քրդագետ Լազարևի համոզմամբ՝ առանց Ռուսաստանի անհնար է լուծել քրդական հարցը³:

Շարունակելով բուլշևիկների կարևոր ստրատեգիական խնդիրների քննությունը՝ հարկ է նշել, որ Քրդստանի գավառը նաև Ադրբեջանի վրա ազդելու ուժեղ լծակ էր, քանի որ այդ ժամանակաշրջանում Ադրբեջանը ոչ միայն ԽՍՀՄ-ի տարածքում նավթի, այլ նավթային սարքավորումների արտադրության բացահայտ խոշորագույն հանքն էր⁴: Եվ այս հարցում ազգային փոքրամասնություններին օգտագործելը բավականին շահավետ էր: Իսկ քրդերի հարցում ամեն ինչ հեշտ էր, քանի որ վարչական միավորը, որտեղ բնակվում էին նրանք, արտահայտում էր նրանց էթնիկ ինքնությունը, ինչը հնարավորություն էր տալիս բարձրացնելու այդ միավորի ստատուսը՝ հասցնելով ընդհուպ մինչև պետականության:

Ադրբեջանի պաշտոնական տվյալները վկայում են, որ երկրի իշխանությունը ևս գիտակցում էր ազգային փոքրամասնությունների՝ արտաքին ուժերի ձեռքում երկրի վրա ազդելու միջոց լինելու ներուժը. արդեն 1930-ական թթ. քրդերի թվաքանակը, ըստ պաշտոնական տվյալների, սկսում է կրճատվել հակադարձ երկրաչափական պրոգրեսիայով, և արդեն 1979 թ. Ադրբեջանը հայտարարում է, որ երկրում քրդեր չկան⁵:

Այժմ քննենք իրավիճակը Քրդստանի գավառի ներսում: 1925 թ. Քրդստանի գավառի իրավիճակը ուսումնասիրելու համար ստեղծվում է հատուկ կոմիտե, որի դերը գավառի տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման գործում բավականին մեծ էր: Այստեղ սկսում է հրատարակվել «Խորհրդային Քրդստան» թերթը⁶, Շուշիում ստեղծվում է քրդական մանկավարժական տեխնիկում, հեռարձակվում էին ռադիոհաղորդումներ, երեխաները սովորում էին մայրենի լեզվով, զարգանում էր գեղարվեստական ու քաղաքական գրականությունը: Սակայն այս իրավիճակը երկար

¹ Տե՛ս **Бабаян Д.**:

² **Лазарев М.**, Новая Россия и старый курдский вопрос, Страны, люди, время, н. 1, 1994, с. 8.

³ Նույն տեղում, էջ 12:

⁴ **Аристова Т.**, с. 5.

⁵ **Асатрян Г.**, Этноды по иранской этнологии, 1998, с. 36.

⁶ Հետաքրքիր է այն հանգամանքը, որ թերթը շարունակում էր իր գործունեությունը նույնիսկ Քրդստանի օկրուգի լուծարումից հետո: (**Мгой Ш.**, Еще раз об азербайджанский курдов, <http://www.aha.ru/~said/shakro1.htm>)

չտուեց. 1920-ական թթ. վերջից սկսած այս ամբողջ աշխատանքը սկսում է մարել: Եվ Քրդստանի օկրուգի լուծարումից հետո՝ 1930-ական թթ. դադարում էր շրջանառվել «քուրդ» անվանումը: Ադրբեջանի քրդերի մեծ մասը կորցրեց իր մայրենի լեզուն, մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները: Նույնիսկ 1937 թ. Անդրկովկասի քրդերի մի մասը աքսորվում էր Միջին Ասիա ու Ղազախստան, և դրանից խուսափելու, որոշակի սահմանադրական իրավունքներ ունենալու, ուսում ստանալու և հետապնդումներից ազատվելու համար շատ քրդեր գրանցվում էին որպես ադրբեջանցի կամ այլ ազգի ներկայացուցիչ¹: Հարկ է նշել, որ ի հակադրություն սրա, իրավիճակը լիովին այլ էր Խորհրդային Հայաստանում, որը 1920-ականն թթ. վերջից ու 1930-ականն թթ. սկզբից դառնում է քրդական մշակույթի զարգացման կենտրոն²:

Սա, փաստորեն, Ադրբեջանում քրդերի ասիմիլյացիայի սկիզբն է. քուրդ բառը ստացավ ստորացուցիչ ու վիրավորական իմաստ, փակվում էին քրդական դպրոցները, մշակութային հաստատությունները, իսկ բարձր պաշտոն ունեցող ազգությամբ քուրդ անձինք, որոնք ներկայացնում էին քրդական հասարակության կրթված ու առաջադեմ տարրը, որոնց նախաձեռնությամբ պետք է կանխվեր ասիմիլյացիան Ադրբեջանի քրդերի նկատմամբ, գրանցվում էին որպես ադրբեջանցի: Ադրբեջանի պաշտոնական տվյալներում սա անվանվում է «ինքնական ասիմիլյացիա», սակայն իրականում այդպիսի տերմին չկա, կա լոկ բնական ասիմիլյացիա³: Իսկ քննելով իրավիճակը՝ համոզվում ենք, որ գործ ունենք ոչ բնական ասիմիլյացիայի հետ:

Այդուամենայնիվ, այս հարցում հարկ է արձանագրել նաև քրդերի գիջողական դերը: Քրդերի հասարակության սոցիալական կառուցվածքի հիմնական ձևը ցեղն էր. ցեղակլանային համակարգը կազմում էր քրդերի կենսաձևի անքակտելի մասը: Իսկ քննելով քրդերին Քրդստանի տարածքում՝ նկատում ենք, որ ցեղակլանային համակարգը լիովին բացակայում է. նոր բնակավայրերում բնակություն հաստատելիս քրդերը հաշվի էին առնում միայն մոտիկ հարազատներին: Սրան հակադրվում է քրդերի ապրելակերպը Խորհրդային Հայաստանում, որտեղ ցեղակլանային համակարգը բավականին ամուր էր⁴: Նաև հարկ է նշել խառը ամուսնությունների մասին, քանի որ ինչպես հայտնի է՝ Անդրկովկասյան քրդերի շրջանում էնդոգամիան, որն ընկած էր նախկին կացութաձևի հիմքում, չէր պահպանվում⁵: Սա ևս ասիմիլյացիայի գործոն է:

Քրդերը, լինելով շիա մուսուլման, Քրդստանի տարածքում չեն ունեցել մզկիթ. հոգևոր դասը զգալիորեն թույլ էր: Դրա պատճառը քրդերի մոտ մնացած նախախլանական հավատալիքներն են՝ սրբերի գերեզմանների, ծառերի, ջրի, քարի պաշտամունքը⁶: Առհասարակ, սուրբ գրքերում և տեքստերում գրված կարևոր դոկտրինաները հասու են ոչ բոլորին, սովորաբար դրանց ծանոթանում և լուսավորում են հասարակ, երբեմն անգրագետ մարդկանց հասարակության առաջադեմ տարրը⁷, իսկ Անդրկովկասի պարագայում միանշանակ կարող ենք ասել, որ քրդերի մեծ մասը գյուղաբնակ էր, ուստի իսլամը զգալիորեն թույլ էր:

Քննելով Քրդստանի գավառի շուրջ ձևավորված ներքին և արտաքին մարտահրավերները՝ կարող ենք ասել, որ ոչ առանց արտաքին միջամտության ստեղծված այս վարչական միավորը, ունենալով կարճատև կյանք, հիմք և պատճառ է դառնում քրդական լայն շրջանակներում «Կարմիր Քրդստան» անվանումով պետության գոյության մասին միջերի առաջացման: Այդպես էլ պետության կարգավիճակ չստացած այս վարչական միավորը, որը գտնվում էր ստրատեգիական բավականին

¹ Лазарев М., Мгой Ш., Васильева Е., Гасратян М., Жигалина О., с. 306.

² Նույն տեղում, էջ 307:

³ Տե՛ս Մгой Ш.:

⁴ Аристова Т., с. 47-49.

⁵ Նույն տեղում, էջ 147:

⁶ Նույն տեղում, էջ 168:

⁷ Никитин В., с. 305.

կարևոր տեղում, ներկայումս՝ քրդական հարցի ակտիվացման պայմաններում, չի կարող անուշադրության մատվել: Բաժանված լինելով 4 տերություններ միջև, քաղաքական կամ այլ նկատառումներով անորոշության մատնված և թույլ զարգացած այս ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի ներկայիս իրավիճակի ու հեռանկարների քննումը պարզ է դարձնում այն, որ Քրդստան պետության ստեղծման պատմական ու քաղաքական նախադրյալները այնքան էլ համոզիչ չեն¹, սակայն քրդական հարցում սեփական դիրքորոշում ունենալու համար պետք է բավարար ուսումնասիրենք հայ ժողովրդի և քրդերի պատմությունը՝ առանձնահատուկ ուշադրություն սևեռելով այն ժամանակաշրջաններին, երբ դրանք հատվում են:

ТАК НАЗЫВАЕМЫЙ «КРАСНЫЙ КУРДИСТАН»

Ангелина Габриелян

В статье рассматривается ситуация, при которой в 1923 году возник Курдистанский уезд, более известный как Красный Курдистан, и при которых упразднение округа в 1930 году становится неизбежным. Несмотря на то, что Курдистан просуществовал всего 7 лет, курды считают его частью великого Курдистана, который родиться в будущем.

Курдский вопрос, в связи с тем, что стратегически выгодное местоположение курдских территорий входит в сферу интересов великих империалистических государств, получает политический контекст. Создавая между Советской Арменией и Карабахом административную единицу, которая преимущественно состоит из курдского элемента, Россия решает важные геополитические вопросы, усиливает свое влияние в Курдском движении, а также устанавливает контроль над Азербайджаном. Это осознают власти Азербайджана, вследствие чего упраздняется Курдистанский автономный округ и усиливается ассимиляционная политика Азербайджана.

THE SO-CALLED RED KURDISTAN

Angelina Gabrielyan

The present article considers the situation in which Kurdistan appeared in 1923, which is better known as Red Kurdistan, and the basic facts which made the abolition of Kurdistan's district inevitable in 1930. The Kurdish problem in regard with the strategic location of Kurds entering into the arena of the imperialistic purposes of great countries, also gets political context. Creating administrative unit between the Soviet Armenia and Kharabagh which mainly consists of kurdish element, Russia solves important geopolitical issues, and also strengthens his role in the Kurdish movement. Moreover, the factor of national minorities is a way of controlling Azerbaijan. The powers of Azerbaijan realized this which led to abolition of Kurdistan's district and the assimilatory politics of Azerbaijan.

The existence of Kurdistan's district is very important, although it lasted only 7 years. Kurds named it "Red Kurdistan" and consider it a part of future great.

¹ **Հարությունյան Ա.**, Քրդական խնդիրը և նրա պատմական հեռանկարները, «Իրան Նամե», հ. 5, Երևան, 1993, էջ 5:

ԹՈՒՔ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2000-2010 ԹԹ.

Անժելա Կժդրյան

ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ. բ.գ.թ., դոց. Ռ. Մելքոնյան

Էլփոստ՝ anjelikakzhdryan@yahoo.com

Սիրիայի և Թուրքիայի առնչություններն սկսվել են դեռևս Օսմանյան կայսրության գոյության օրոք, երբ սուլթան Սելիմ Ահեդին 16-րդ դ. հաջողվեց գրավել արաբական երկրները: 20-րդ դ. թուրք-սիրիական հարաբերություններն ունեին լարված բնույթ, կապված 1939 թ. Ալեքսանդրետի սանջակի (թուրքերենում՝ Ղաթայ) Թուրքիային կցման¹, Սիրիայի կողմից Քրդական բանվորական կուսակցությանը ցույց տված աջակցության և երկու երկրների միջև ջրային հիմնախնդրի հետ²:

Թուրք-սիրիական հարաբերություններն իրենց լարման զագաթնակետին հասան 1998 թ., որն էլ հենց համարվում է այս հարաբերություններում նոր փուլի անցման տարեթիվ: Մեծ ջանքերի և Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի դիվանագիտական միջամտության շնորհիվ հնարավոր եղավ պատերազմից խուսափել և հոկտեմբեր ամսին հայտարարվեց, որ Սիրիայի հետ կարևորագույն հարցերի շուրջ համաձայնություն է ձեռք բերվել: Դրանք ամրագրվեցին 1998 թ. հոկտեմբերին կնքված Ջեյհանի պայմանագրում:

Թուրք-սիրիական հարաբերություններում տեղաշարժեր կատարվեցին 2000 թ. կեսին՝ կապված Հաֆեզ ալ-Ասադի մահվան և նրա որդու՝ Բաշար ալ-Ասադի նախագահ դառնալու հանգամանքի հետ: Ուժերի հարաբերակցության փոփոխությունը, որքան էլ անկանխատեսելի կարող էր թվալ առաջին հայացքից, ուներ իր հիմնավոր պատճառները թե՛ Սիրիայի և թե՛ Թուրքիայի դեպքում:

1963 թ., ինչպես նշվեց, Սիրիայում իշխում էին «Բասա»-ի ներկայացուցիչները՝ Հաֆեզ ալ-Ասադի գլխավորությամբ, ով 2000թ. հունիսի 10-ին մահացավ: Հաֆեզ ալ-Ասադի մահվան հենց հաջորդ օրը՝ հունիսի 11-ին «Բասա»-ի տարածքային կառավարման արտակարգ նիստում նրա որդի Բաշար ալ-Ասադը առաջադրվեց որպես նախագահի միակ թեկնածու³:

Իշխանության գալով՝ ալ-Ասադը իր առջև խնդիր էր դրել՝ ճկունորեն դուրս գալ այն հնարավոր շրջափակումից, որին կենթարկվել նախկին քաղաքական կուրսին հետևելու արդյունքում, քանի որ Թուրքիան կապեր հաստատելով Հորդանանի և Իսրայելի հետ քաղաքական շրջափակման վտանգ էր ստեղծել Սիրիայի համար: Թուրքիայի և Սիրիայի փոխադարձ բարեկամական հարաբերությունները կարևոր են այն հանգամանքով, որ դրանք դարպասներ են միմյանց համար՝ դեպի հարավ և հյուսիս: Թուրքիան լավ գիտակցում էր Սիրիայի կշիռը միջազգային հարաբերություններում, մասնավորապես մերձավորարևելյան տարածաշրջանում: Այստեղ ցանկացած կոնֆլիկտի լուծում այս կամ այն չափով կապված էր սիրիական ներկայության հետ: Բացի այդ ԱՄՆ-ի՝ Իրաք ներխուժումից հետո թուրք-ամերիկյան հարաբերություններում սկսեց լարվածություն նկատվել: Այդ լարվածությունը փոխանց-

¹ Olson R., Turkey-Syria relations since the Gulf War: Kurds and water, "Middle East Policy", Vol. 5 N 2, May 1997, մեջբերումը՝ Հարությունյան Ա., Սիրիա-թուրքական հարաբերությունները 20-րդ դարավերջին և 21-րդ դարակզբին, «Ժամանակակից Թուրքիա՝ խնդիրներ և լուծումներ» հոդվածների ժողովածու, Մոսկվա, 2006, հ. 2, էջ 169:

² 1960-ական թթ. սկսած Եփրատի և Տիգրիսի ջրերի օգտագործման հարցը երկկողմ հարաբերություններում լուրջ խնդիր դարձավ: Թուրքիան վերահսկում էր գետերի վերին հոսանքը և այդպիսով ազդեցության լծակ ուներ Սիրիայի վրա: Հարաբերությունները հատկապես սրվեցին երբ Թուրքիան 1983 թ. առաջ քաշեց Հարավարևելյան Անատոլիայի զարգացման ծրագիրը (Güneydoğu Anadolu Projesi-GAP):

³ Ахмедов В., Сирия на рубеже столетий: власть, политика, Москва, 2003, с. 92.

վեց մաս թուրք-իսրայելական հարաբերություններին և այն կապած էր վերոհիշյալ երկու պետությունների կողմից քրդերին ցույց տրված աջակցության հետ: Սիրիան, ուր, ինչպես նշվեց, առկա էր քրդական տարրը, նույնպես անհանգստացած էր Իրաքում ընթացող զարգացումներով, քանի որ Քրդստանի ստեղծմամբ Իրաքի տարածքային ամբողջականության խախտումը ոսնձգության առիթ կարող էր հանդիսանալ մաս իր տարածքների նկատմամբ: Այսպիսով, 21-րդ դարասկզբին կարծես հասունացել էր այն աշխարհաքաղաքական իրավիճակը, որի վրա հիմնվելով՝ սիրիա-թուրքական հարաբերությունները կարողացան մեկ այլ, առավել բարձր որակական փուլ թևակոխել:

Թուրք-սիրիական հարաբերությունների սերտացումը սկսվել էր 2000 թ. մայիսից, երբ երկու երկրները փորձեցին համաձայնության գալ առանցքային խնդիրների շուրջ¹: Չնայած այս հանդիպումը շոշափելի արդյունքներ չտվեց, այնուամենայնիվ բանակցությունները շարունակվում էին: Հաջեզ ալ-Ասադի հուղարկավորությանը ներկա գտնվեց Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեդ Սեզերը, և թուրքական այսչափ բարձրաստիճան ներկայությունը թուրք-սիրիական հարաբերությունների սերտացման ապացույց էր: Նույն թվականին պաշտոնական այցով Թուրքիա ժամանեցին Սիրիայի վարչապետ Հալիմ Հադդադը և ներքին գործերի նախարար Մուհամմադ Հարբային: Նոյեմբեր ամսին մուսուլմանական երկրների ղեկավարների գագաթնաժողովում հանդիպում տեղի ունեցավ երկու երկրների նախագահների միջև²:

Երկու երկրների հարաբերությունների համար նշանակալի ազդեցություն ունեցավ 2002 թ. Թուրքիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից իշխանության ստանձնումը: Սա պահպանողական, կրոնամետ գաղափարախոսությամբ կուսակցություն է, որի վարած քաղաքականությունը կարելի է բնորոշել որպես նեոսամանիզմ: Վերջինս կարելի է սահմանել հետևյալ կերպ՝ Թուրքիան ձգտում է քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, հոգևոր դերակատարում ունենալ Օսմանյան կայսրության նախկին մի շարք տարածաշրջաններում, իսկ առավել կոնկրետ՝ Մերձավոր Արևելքում, Բալկաններում, Հյուսիսային Աֆրիկայում³: Ինչպես մաս այս կուսակցությունը առաջ քաշեց այսպես կոչված, զրո խնդիր հարևանների հետ սկզբունքը, որը հռչակում է տարածաշրջանային անվտանգության ապահովում՝ հակամարտությունների խաղաղ կարգավորման, սպառնալիքի և բռնության կիրառման բացառման միջոցով⁴: Չնայած մի շարք այլ վերլուծաբանների կարծիքով «զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքի հռչակած դրույթները և Թուրքիայի վարած քաղաքականությունը լիովին հակասում են իրար⁵:

2004 թ. հունվարին առաջին անգամ Սիրիայի նախագահը եռօրյա պաշտոնական այցով ժամանեց Անկարա: Այցի ընթացքում Բաշար ալ-Ասադը իր թուրք պաշտոնակցի՝ Ահմեդ Նեջդեդ Սեզերի հետ քննարկեց տարածաշրջանային իրավիճակը և երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները: Նախագահները դատապարտեցին Իրաքի կազմից քրդական մասի անջատման գաղափարը՝ ընդգծե-

¹ Syrian prime minister hold succesful talks with Turkish minister, Syria-Turkey, Politics, 5/11/2000, <http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/000718/2000071816.html>.

² **Ахмедов В.**, Сирия на рубеже столетий: власть, политика, с. 114.

³ **Մելքոնյան Ռ.**, Թուրքական նեոսամանիզմի քաղաքականության և արաբական աշխարհի իրադարձությունների շուրջ, 14.04.2011, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5707

⁴ **Gulbahar A.**, Turkish Foreign Policy: New Concepts and Reflections, Middle East and Technical University, December 2010, <http://etd.lib.metu.edu.tr/upload/12612869/index.pdf>.

Նաև տե՛ս **Tashjian Y.**, From Conceptualization to Implementation and Revaluation: Turkey's "Strategic Depth" in the MENA region, "Strategic Outlook", October 2012, p. 1:

⁵ **Սաֆրաստյան Ռ.**, Թուրքիան հարևանների հետ զրո խնդիր ունենալու փոխարեն ստեղծեց ավելի մեծ խնդիրներ, 16.01.2013, <http://www.panorama.am/am/comments/2013/01/16/safrastryan/>; **Սարգսյան Ա.**, Թուրքիա. 1000 ու 1 խնդիր հարևանների հետ, 10.15.2012, <http://www.a1plus.am/am/politics/2012/10/15/turkey> 1.

լով, որ դա կարող է հանգեցնել այս երկու պետություններից քրդական կողմի համանման պահանջին: Այսպիսով քրդական հարցի շուրջ տարիներ շարունակված հակամարտությունը, որն առկա էր երկու պետությունների միջև, սկսեց լուծվել: Դրա ապացույցներից մեկը 2003 թ. Սիրիայի կողմից՝ Ստամբուլում իրականացված պայթյունների շուրջ քսաներկու կասկածյալների հանձնումն էր թուրքիային:

Իրաքի տարածքային ամբողջականության դեմ ձեռնարկվող քայլերը, որոնք արվում էին ԱՄՆ-ի բացահայտ միջամտությամբ, չէին կարող անտարբեր թողնել ոչ Անկարային և ոչ էլ Դամասկոսին: 2004 թ. մայիսի սկզբին Ջ. Բուշը Սիրիային մեղադրեց ահաբեկչության աջակցման և զանգվածային ոչնչացման քիմիական զենքի ստեղծման, ինչպես նաև Իրաքում իրավիճակի կայունացմանը խոչընդոտելու մեջ: Այս հայտարարությունից հետո Դամասկոսի դեմ տնտեսական պատժամիջոցներ սկսվեցին¹: Բնականաբար ԱՄՆ-ի դերի այդչափ մեծացումը տարածաշրջանում, այս գերտերության աջակցությունը Սիրիայի և Թուրքիայի տարածքային ամբողջականությանը սպառնացող քրդերին անհանգստացնում էր երկու երկրներին էլ: Մասնավորապես Սիրիայում կառավարությունը ստիպված եղավ խստացնել քրդական կազմակերպությունների նկատմամբ վերահսկողությունը: Ինչ վերաբերվում է Թուրքիային, ապա այս երկրի արտաքին քաղաքականության ուղղությունը տարածաշրջանում ընթացող իրադարձությունների լույսի ներքո էապես տարբերվում էր 20-րդ դարավերջին տարված քաղաքական կուրսից: Ասվածի ապացույցն է Թուրքիայի դիրքորոշման փոփոխությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հարցում: Երդողանն իր ելույթներում հանդես եկավ Իսրայելի՝ Գազայում և Արևմուտյան ափում տարած քաղաքականության քննադատությամբ: Թուրքիայի գործողությունները, թեպետ հիմնականում ունեին դեկլարատիվ բնույթ, այնուամենայնիվ բարձրացրին արաբական աշխարհում նրա վարկանիշը: Սա, թերևս, կանխատեսելի էր և հարկ է նշել, որ Թուրքիայի այս քարոզչությունը, հոգեբանական լծակների լայն կիրառումը, այսօր էլ արաբական աշխարհում Թուրքիայի համար բարձր վարկանիշ է ապահովում:

Թուրքիայի արտաքին քաղաքականության նորացման ապացույցներից է նաև Սիջին Ասիայում և Անդրկովկասում ազդեցության հասնելու համար պայքարում նրա գլխավոր հակառակորդ Իրանի հետ հարաբերությունների բարելավումը, որը գլխավորապես տեղի ունեցավ երկու երկրների՝ քրդական հարցի համատեքստում շահերի հատման շնորհիվ: Ինչ վերաբերվում է սիրիա-իրանական հարաբերություններին, ապա ի տարբերություն Թուրքիայի դեպքի, դրանք ունեին երկարամյա գործուն համագործակցության պատմություն: Սիրիայի հանրապետությունը կապող օղակ էր արաբական աշխարհի և Իրանի միջև: Ինչպես հայտարարեցին Թուրքիայի, Իրանի և Սիրիայի ղեկավարները իրենց երկրներ նոր ռազմավարական դաշինք ստեղծելու նպատակ չունեին, և երեք պետությունների համագործակցությունը ուղղված էր տարածաշրջանում կայունության հաստատմանը:

Ունենալով տարածաշրջանային մակարդակում համագործակցության այսպիսի հիմքեր՝ սիրիա-թուրքական հարաբերությունները շարունակեցին զարգանալ վերընթաց ուղիով: 2004 թ. հուլիսին, Սիրիայի նախագահի՝ Թուրքիա կատարած պատմական այցից հետո, վարչապետ Մուհամմադ Նեջի Օթթին պաշտոնական այց կատարեց Անկարա: Այս այցի ընթացքում Թուրքիան հայտնեց իր աջակցությունը Գոլանի բարձունքների խնդրի շուրջ Սիրիայի դիրքորոշմանը և պատրաստակամություն հայտնեց միջնորդել Սիրիայի և Իսրայելի միջև խաղաղ բանակցությունների վերսկսման համար: Ինչպես նաև համաձայնություն կայացավ երկու երկրների միջև չորս օդային միջանցքների և սահմանային շրջանում նոր հյուպատոսությունների

¹ Загорнова Е., Курдский вопрос в Сирии, [Востоковедный сборник], Москва, 2004, с. 189.

ստեղծման համար¹: Նույն ամսին Դամասկոսում թուրք-սիրիական տնտեսատեխնիկական համատեղ հանձնաժողովի նիստ կայացավ, որը նվիրված էր թուրք-սիրիական առևտրային ազատ գոտու ստեղծմանը: Հետագա բանակցությունների արդյունքում Սիրիան դարձավ առաջին արաբական երկիրը, որի հետ Թուրքիան ազատ առևտրի վերաբերյալ համաձայնագիր ստորագրեց²: 2004 թ. դեկտեմբերին Թուրքիայի վարչապետը 17 տարվա ընդմիջումից հետո այց կատարեց Դամասկոս: Էրդոդանը իր գործընկեր Մուհամմադ Նաջի Օթրիի հետ Սիրիայի հետ սահմանամերձ Հաթայի երկրամասում համատեղ ՀԷԿ-ի շինարարության վերաբերյալ պայմանագիր ստորագրեց: Թուրքիայի և Սիրիայի միջև ջրային հիմնախնդրի կարգավորումը բերել է նրան, որ տարածքային հարցն էականորեն նվազել է Դամասկոսի քաղաքական հռետորաբանության մեջ:

2004-2005 թթ. ընթացքում Սիրիայի, Թուրքիայի և Իրանի միջև կայացած այցերն ստիպեցին ԱՄՆ-ին բարձրացնել զգոնությունը, մինչդեռ Թուրքիայի համար արևելքի և արևմուտքի միջև առկա լարվածությունը առավել դժվարացնում էր իր բալանսավորված քաղաքականությունը վարելու ցանկության իրագործումը³: Միևնույն ժամանակ տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդելու խնդրով լրջորեն մտախոգ էր Մոսկվան: 2005 թ. հունվարին Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի պետական այցը այս երկիր ռուս-սիրիական հարաբերությունների զարգացման նոր ազդակ հանդիսացավ և կարող էր հանգեցնել տարածաշրջանում Ռուսաստանի դերի վերաարժևորման և բարձրացման⁴:

ԱՄՆ բարձրաստիճան ռազմադիվանագիտական գործիչների այցը Անկարա և Դամասկոս-Մոսկվա հարաբերությունների վերստին ջերմացումը չկարողացան խոչընդոտել թուրք-սիրիական հարաբերությունների զարգացմանը: 2005 թ. ապրիլի 13-ին Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեդ Սեզերը պաշտոնական այցով ժամանեց Սիրիա: Բանակցությունների ավարտից հետո Ա. Ն. Սեզերն ու Բ. ալ-Ասադը համատեղ մամուլ-ասուլիս անցկացրին: Սիրիայի և Թուրքիայի նախագահները վստահություն հայտնեցին, որ դամասկոսյան բանակցությունները կհանգեցնեն երկկողմ հարաբերությունների արագ զարգացմանը: Երկու նախագահները հայտարարեցին՝ «Անկարային և Դամասկոսին հաջողվեց հարաբերությունների կարգավորմանն ուղղված կարևոր քայլեր անել, որոնցից շահեցին ոչ միայն Սիրիան և Թուրքիան, այլև տարածաշրջանն ամբողջությամբ»⁵:

2000-2005 թթ. Թուրքիայի և Սիրիայի միջև տեղի է ունեցել ավելի քան 55 պաշտոնական այց: Երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը հնգամյա ժամանակահատվածում ավելացել էր տասն անգամ և հասել 1 մլրդ. դոլարի: Այս թիվը երեք տարում նախատեսվում էր հասցնել 2.5 մլրդ. դոլարի: Սիրիայի և Թուրքիայի հարաբերությունների զարգացմանը նպաստում էր նաև խորհրդարանականների երկխոսությունը:

2007 թ. սկսեց գործել 2004 թ. երկու երկրների միջև կնքված ազատ առևտրի մասին պայմանագիրը: 2008 թ. Թուրքիայի՝ սիրիա-հարայեյան հարաբերություններում ստանձնած միջնորդական առաքելությունը բխում էր երկու կողմերի շահերից

¹ Кольчугин Н., Иран борется за Сирию шиитской солидарностью, 6 апрель, 2012, <http://www.iimes.ru/?p=14520>.

² Singh G., A New Age for Turkey-Syria Relations, AsiaTimes, apr. 14, 2005, http://www.atimes.com/atimes/Middle_East/GD14Ak01.html.

³ Svet O., Turkey's «Zero problem» Foreign Policy, An Untenable Balancing Act, NIMEP insights, 71, http://www.tuftsgloballeadership.org/files/resources/nimep/v2/INSIGHTS06_Svet.pdf.

⁴ Ахмедов В., Актуальные проблемы политической ситуации на Ближнем Востоке, Сирийская составляющая, 2005, 20 января, <http://www.iimes.ru/rus/stat/2005/20-01-05.htm>.

⁵ Гурьев А., О Турецко-сирийских отношениях, 2005, 17 мая, <http://www.iimes.ru/rus/stat/2005/17-05-05.htm>.

էլ և խրախուսվում էր Իսրայելի կառավարության կողմից¹: Թուրքիայի խաղաղարար առաքելությունը բարձրացրեց այս երկրի միջազգային վարկանիշը²:

2009 թ. սեպտեմբերին որոշում կայացվեց վերացնել մուտքի արտոնագրերի ռեժիմը երկու պետությունների միջև: Համաձայնագիրը ստորագրվեց հոկտեմբերի 13-ին: Թուրքիայի արտգործնախարարությունը հայտնեց Սիրիայի հետ ռազմական, տնտեսական և էներգետիկ ոլորտներում հարաբերությունների զարգացման մտադրության մասին³: Նույն հանդիպման ընթացքում որոշվեց կազմել Ռազմավարական համագործակցության բարձրագույն խորհուրդ, որի առաջին նիստը կայացավ նույն թվականի դեկտեմբերին: Այս խորհրդի գործունեության շրջանակներում ստորագրվեցին ավելի քան 50 միջկառավարական տարատեսակ փաստաթղթեր: Այս համաձայնագրերը, դառնալով հետագա համագործակցության ծավալման հիմք, երկու երկրների միջև փոխգործակցության ամրապնդման և հետագա զարգացման հնարավորություն տվեցին:

Այսպիսով, 2010 թ., որը նշանավորվեց «Արաբական գարուն» անունը կրող գործընթացների սկզբով, սիրիա-թուրքական հարաբերությունները թևակոխեցին բավականին բարձր համագործակցության մակարդակով: Այս հարաբերությունների որակական փոփոխության համար, ինչպես տեսանք, գոյություն ունեին թե՛ ներքին և թե՛ արտաքին գործոններ: Ամփոփելով դրանք առանձնացնենք այն հիմնական քաղաքական և տնտեսական ազդակները, որոնք որոշիչ եղան.

- 21-րդ դարասկիզբը թե՛ Սիրիայի և թե՛ Թուրքիայի համար նշանավորվեց ներքին փոփոխություններով, որոնք, չնայած համարժեք չլինելուն (Սիրիայում իշխանության եկավ արդեն իսկ կառավարող «Բաաս» կուսակցության ներկայացուցիչ Բաշար Ասադը, իսկ Թուրքիայում փոխվեց իշխող կուսակցությունը՝ նոր գաղափարախոսությամբ), երկուսն էլ ենթադրում էին արտաքին քաղաքական ասպարեզում որոշակի փոփոխություններ:

- Սիրիայի տնտեսության համար Եփրատի ջրի մատակարարման կենսական անհրաժեշտությունը, ինչպես նաև այն շրջափակումը, որի մեջ ընկել էր հակաիսրայելական դիրքորոշման, թուրք-հորդանանյան կապերի ամրապնդման համատեքստում:

- Թուրքական պետության ամբողջականության համար առաջնային սպառնալիք հանդիսացող քրդական գործոնի ակտիվացումը տարածաշրջանում՝ իր ռազմավարական դաշնակից ԱՄՆ-ի աջակցության պայմաններում և Իրաքում վերջինիս ռազմական ներկայությամբ: Ինչպես նաև իսլամական աշխարհում առաջնորդի դերի հավակնությունները, որում մրցակցում է տարածաշրջանում օրեցօր դիրքերն ամրապնդող Սաուդյան Արաբիայի հետ:

Ինչպես տեսանք սիրիա-թուրքական հարաբերությունների այսօրինակ զարգացման համար առկա էին լուրջ հիմքեր և 21-րդ դարասկզբին զարգանալով վերընթաց ուղիով՝ բարեկամական և ռազմավարական համագործակցության հետագա ծավալման միտում ունեին, որը հիմնովին փոխվեց արաբական երկրներում սկիզբ առած հեղափոխական գործընթացներից հետո:

¹ Levinson M., American Foreign Policy Council, Turkey's Misguided Foreign Policy, August 13, 2012, www.afpc.org/publication_listings/viewArticle/1655.

² 2009 թ. Դավոսում կայացած Համաշխարհային տնտեսական գագաթնաժողովի ընթացքում էրդոհան-Պերես բացահայտ առճակատում տեղի ունեցավ: Սա կատարեց բանակցությունների հետագա ընթացքը:

³ Гурьев А., Ситуация в Турции. Октябрь 2009, <http://www.iimes.ru/rus/stat/2009/11-11-09.htm>.

ТУРЕЦКО-СИРИЙСКИЕ ОТНОШЕНИЯ С 2000 ГОДА ПО 2010 ГОД

Анжела Кждрян

В статье раскрываются проблемы политического, экономического и территориального характера, возникшие в XX веке в турецко-сирийских отношениях.

А также приводятся изменения геополитического характера в XXI веке, в результате которых природа этих качественно изменилась, и они переросли в крепкое сотрудничество.

В Турции пришла к власти партия «Справедливость и развитие», внешняя политика которой была направлена на улучшение отношений с восточными странами. Новый президент Сирии Башар ал-Асад стремился обеспечить экономическую и политическую стабильность своей страны, на пути к которой безконфликтные отношения с Турцией имели важное значение. С другой стороны укрепление позиций США и активация курдского фактора в регионе также содействовали сближению двух стран.

TURKISH-SYRIAN RELATIONS FROM 2000 TO 2010

Anzhela Kzhdryan

There were political, economic and territorial issues in the Turkish-Syrian relations in the 20th century, but in the 21st century they have qualitatively changed due to the shifts in the internal politics of the two countries as well as the emergence of new geopolitical factors. Justice and Development Party came to power in Turkey the foreign policy of which aimed at improving relations with Eastern countries and the newly appointed president of Syria, Bashar al-Assad, aimed at ensuring economic and political stability of the country, on the way of which normal relations with Turkey was of significant importance. On the other side, the rising role of the United States and the activation of the Kurdish factor in the region in the first decade of the 21st century also united the two countries' interests and the Turkish-Syrian relations grew into active cooperation.

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ԻՐԱՆ-ԱՂՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Անի Հովակիմյան

ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ դասախոս Գ. Գևորգյան

Էլփոստ՝ anihovakimyan94@yahoo.co.uk

Ատրպատական երկրամասը գտնվում է Իրանի հյուսիս-արևմուտքում, որի տարածքում ձևավորված են երեք նահանգներ՝ Արևելյան Ազարբայջան, Արևմտյան Ազարբայջան և Արդաբիլ:

Ատրպատականի անվանումը երբեմն կապվում է Ալ. Մակեդոնացու զորավարներից մեկի՝ Ատրոպատի անվան հետ, ով Իրանի այս շրջանի կառավարիչ է նշանակվել առաջինիս կողմից¹: Երկրամասի բնակչությունը դարեր շարունակ խոսել է միջինիրանական ազարի լեզվով: Այս տարածքում թյուրքալեզու տարրեր հաստատվել են սելջուկ-թյուրքերի արշավանքներից հետո միայն, իսկ թրքալեզվությունը մասսայական բնույթ է ստացել XVI դարից՝ Սեֆյան տիրապետության շրջանում²:

1918 թ. Արևելյան Անդրկովկասը թուրքական զորքերի կողմից բռնագավթելուց, այսպես կոչված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության, այնուհետև 1920 թ. Խորհրդային իշխանության հաստատումից հետո իրանական Ատրպատական նահանգի բռնակցման պանթյուրքական գաղափարը որդեգրվեց Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության կողմից: Ադրբեջան անվան յուրացմամբ Ադրբեջանի Հանրապետությունը հիմնադրման օրվանից իր առջև խնդիր է դրել հիմնավորել աշխարհագրական անվանումների շփոթը և «ապացուցել» այս տարածքում թյուրքական պետության ստեղծման պատմական իրավունքը³: Թյուրքական այս պետության ստեղծման գաղափարը առաջինն ի հայտ է եկել ռուսահպատակ թյուրքերի շրջանում, ովքեր, օգտվելով ռուսական կայսրության փլուզումից, առաջ մղեցին իրենց պանթյուրքիստական գաղափարները: Համաձայն նոր գաղափարախոսության՝ նորահայտ Ադրբեջանը պետք է հանդիսանար Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի միջև կապող օղակ: Ադրբեջանը տեղաբնիկ իսլամադավան լեզգիների, թալիշների, ավարների և այլ ժողովուրդների նկատմամբ վարում է ասիմիլացիոն, իսկ հայերի նկատմամբ՝ ոչնչացման և տարածաշրջանից դուրս մղման քաղաքականություն:

Այսպիսով, 1918 թ. սկզբին դրվեց Արևելյան Անդրկովկասի թյուրքացման հիմքը⁴, ինչը շարունակվում է նաև մեր օրերում: Այս հանգամանքն իր կնիքն է դնում ոչ միայն հայ-ադրբեջանական, այլ նաև ռուս-ադրբեջանական և իրանա-ադրբեջանական հարաբերությունների վրա: Ադրբեջանական Հանրապետությունը, Իրանի թյուրքախոս նահանգների նկատմամբ վարելով ծավալապաշտական քաղաքականություն, Արևելյան և Արևմտյան Ազարբայջան, Ջենջան, Արդաբիլ, ինչպես նաև դրանցից դուրս Ղազվին, Համադան, Գիլան, Քուրդիստան, Ղոն և Թեհրան նահանգներում ակնհայտ կեղծիքով ներկայացնում է չեղած ադրբեջանցի բնակչության ֆանտաստիկ թվեր, որոնք գերազանցում են նույնիսկ ներկայիս Ադրբեջանական Հանրապետության բնակչության թիվը:

Նախապես Խորհրդային Միության կործանումից հետո շրջանառության մեջ դրվեց Իրանում ապրող «ադրբեջանցիների» 33 մլն կեղծ թիվը: Ընդ որում, այդ ժամանակ Իրանի բնակչությունը թիվը նոր էր գերազանցել 60 միլիոնը: Այսինքն՝ կեղծվում էր, որ իրանցիների կեսը՝ «իբր ադրբեջանցիներ» են: 33 մլն թիվը որոշ ժամա-

¹ Տե՛ս <http://www.anobanini.ir/travel/fa/azarbaeijan-gh/>:

² Асатрян Г., Этюды по иранской этнологии, Ереван., 1998, с. 29.

³ Տե՛ս <http://dezas.info/s-celyu-sozdanie-iskustvennoy-istorii/>:

⁴ Տե՛ս <http://www.iriston.com/nogbon/print.php?newsid=474>:

նակ անց դարձավ «ավելի քան 33 մլն» և նույնիսկ միտումնավոր սկսեց շրջանառվել արևմտյան վերլուծաբանների և քաղաքական գործիչների կողմից:

Իրանի հյուսիսարևմտյան շրջանների բնակչությունը, ներառյալ մերձկասպյան շրջանները մինչև Գորգան, Սեմնան և նույնիսկ Թեհրանի բնակչության մեծ մասը, 30 միլիոնի չի հասնում: Հավանական է, որ այս հարցի պատասխանը չստանալու պատճառով «ուսումնասիրողները» եկան այն եզրակացության, որ ավելի քան 30 մլն «ադրբեջանցիների» գոյության թեզն Իրանում անհիմն է, և հակառակ միտումնավոր քարոզչության, որ վարվում է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից, այլևս չի աշխատում: Այդ պատճառով շուտով հայտնվեց նոր թիվ՝ 18-20 մլն: Իրականությանն առավել մոտ է թյուրքալեզուների 9 մլն լինելը Իրանում: Սակայն հարկ է շեշտել, որ այս թվի մեջ մտնում են բոլոր թյուրքախոսներն ընդհանրապես¹:

Երկու երկրները հաճախ հայտարարություններ են անում պատմական ընդհանրության մասին: Անցյալ տարի՝ Բաքվում, Իրանի նախագահ Ահմադի Նեժադը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ համատեղ հանդիպման ժամանակ ասել է. «Իրանի և Ադրբեջանի ժողովուրդները եղբայրական ժողովուրդներ են: Այդ եղբայրությունը գալիս է պատմության խորքերից, երկու ժողովուրդների կրոնական և մշակութային արժեհամակարգի ընդհանրություններից»: Իսկ այս տարի Իրանի Մաջլեսի խոսնակ Ալի Լուրիջանին իր՝ Ադրբեջան այցի ժամանակ նշել է, որ Իրանի և Ադրբեջանի կապը չունի մակերեսային բնույթ, ինչպիսին մյուս երկրների հետ է, այլ հիմնվում է բավական խոր հոգևոր արմատների վրա:

Իրանի միջուկային ծրագիրը, որն Իրան ռազմական ներխուժման կամ ԱՄՆ-ի կողմից հրթիռային հարվածի սպառնալիք է առաջացնում, ծանր վիճակի մեջ է դրել Ադրբեջանին: Հարկ է նշել, որ Բաքուն հայտարարում է, թե թույլ չի տա իր տարածքը օգտագործել Իրան ներխուժելու կամ ռազմական հարվածներ հասցնելու համար, սակայն իրանական կողմը քաջ գիտակցում է այս հայտարարության կեղծ լինելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է Իրան-Ադրբեջան վերջին զարգացումներին, ապա հարկ է նշել, որ վերջերս՝ 2014 թ. մարտի 30-ին, Բաքվում անցկացվեց միջազգային կոնֆերանս՝ «ժամանակակից հարավային Ադրբեջանի ապագան» խորագրով: Այս կապակցությամբ Իրանում Ադրբեջանի դեսպանը կանչվեց Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, որտեղ նրան փոխանցեցին բողոքի նոտա²: Այս կոնֆերանսը կազմակերպվել էր այսպես կոչված «Հարավային Ադրբեջանի ազգային ազատագրական ճակատի» նախաձեռնությամբ: Այստեղ քննարկվում էր համագործակցության հնարավորությունը տարբեր հակաիրանական և պանթյուրքական անջատական կազմակերպությունների միջև: Կոնֆերանսի ժամանակ Ադրբեջանի կողմից հայտարարվեց Իրանական Ատրպատականի կապակցությամբ ազգային ստրատեգիա մշակելու մասին: Կոնֆերանսի մասնակիցները հայտարարում էին, որ Իրանն այսօր փաստացի հայտնվել է միջազգային մեկուսացման մեջ: Իրանում Ադրբեջանի նախկին դեսպան Նասիբ Նասիբլին նշում է, որ հենց Իրանի թրքալեզու ներկայացուցիչներն են եղել Իրանի պատմության ընթացքում տեղի ունեցած չորս հեղափոխությունների հիմնական մասնակիցները: Այնուհանդերձ, ըստ բանախոսի, այդ հեղափոխությունները Իրանում «ադրբեջանական» ինքնավարությանը չհանգեցրեցին:

Իրանի Արտաքին գործերի նախարարի տեղակալ Աբաս Արադջին, Ադրբեջանի դեսպանին հայտնեց իր լուրջ դժգոհությունը այս միջոցառման անցկացման կապակցությամբ, քանզի Իրանը միշտ փորձում է ավելի խորացնել երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունները: Բայց նմանատիպ միջոցառումների անցկացումը լրջորեն խանգարում են երկու երկրների միջև հարաբերությունների

¹ Асатрян Г., с. 54.

² Տե՛ս <http://azerros.ru/analytics/11770-iran-vnov-idet-na-obostrenie-otnosheniy-s-azerbaydzhanom.html>:

հետագա զարգացմանը: Այս կոնֆերանսի ժամանակ նպատակադրված հնչել են սպառնական բնույթի հակահրանական հայտարարություններ, հետևաբար այդպիսի կոնֆերանսների անցկացումը չի կարող ոչ մի կերպ հիմնավորվել: Բացի այդ, Ադրբեջանի նախագահի միջազգային հարցերով նախկին խորհրդական Վաֆա Գուլուզադեն նշում է, որ Իրանը իրավունք չունի Ադրբեջանի կառավարությանը դժգոհություն ներկայացնելու, քանի որ Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կապ չունի կոնֆերանսի անցկացման հետ: Այս կոնֆերանսը կազմակերպվել է ոչ կառավարական-հասարակական կազմակերպությունների կողմից և նրա աշխատանքներում մասնակցել են անկախ վերլուծաբաններ ու գիտնականներ: Բացի այդ, հարկ է նշել, որ Ադրբեջանում այս կոնֆերանսի անցկացումը, հավանաբար, ուղիղ պատասխանն էր Շուշիից հեռարձակվող թալիշական ռադիոյի, որը զայրացրել էր ադրբեջանական իշխանություններին՝ կարծելով, թե Իրանն անմիջական մասնակցություն ունի թալիշական ռադիոյի կազմակերպման գործում:

Սակայն, ինչ վերաբերվում է այսպես կոչված Զարավային Ադրբեջանի հարցին, ապա պաշտոնական Թեհրանն իզուր չէ, որ անհանգստանում է: Խնդիրն այն է, որ իբր բազմամիլիոն «ադրբեջանցիներ» Իրանում գրկված են իրենց ազգային և մշակութային իրավունքներից, «ադրբեջանցիներ», որ զոյություն չունեն:

Ադրբեջանի պատասխանը այս հարցի վերաբերյալ, Իրանում Ադրբեջանի դեսպան Ջավանշիր Ախունդովի կողմից, նամակով տրվեց Իրանի Արտաքին գործերի նախարարություն, որում նշվում է. «Ադրբեջանը կարևորություն է տալիս երկկողմանի հարաբերություններին, որոնք հիմնվում են փոխըմբռնման և բարեկամության վրա: Ադրբեջանը բարձր է գնահատում Իրանի աջակցությունը ուղղված երկու կողմերի հարաբերությունների զարգացմանը»:

Չարկ է նշել, որ Իրանը բարիդրացիական հարաբերություններ է կառուցում նաև ԶԶ հետ, որը Ադրբեջանի կառավարության մտահոգության և հիստերիայի դրդապատճառներից մեկն է:

АТРОПАТЕНА В ИРАНО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ОТНОШЕНИЯХ

Ани Овакимян

В статье проводились исследования Ирано-Азербайджанских отношений со дня создания Азербайджанской республики. Особое внимание было обращено на название республики, полученное от названия Иранского северо-западного Азербайджанского региона – Атурпаткән, которое, в свою очередь, возникло от имени Атропата – одного из военачальников Александра Македонского.

В статье представлены этапы развития ирано-азербайджанских отношений. Мы обратили внимание на современное состояние этих отношений и следствия их в мировой политике. Также в статье приведены факты о численности несуществующих «азербайджанцев», живущих в Иране.

ATROPATENE IN IRANIAN-AZERBAIJANI RELATIONS

Ani Hovakimyan

The following article relates to Iranian-Azerbaijani relations since the day of establishment of the Republic of Azerbaijan. One of the most important points of the article is the name of the newly-created republic, which is taken from the north-western region of Iran, called Azerbaijan or Atrpatakan/Aturpatakan. It is worth mentioning, that the name of this region comes from the name of Atropat, who was one of the captains of Alexander The Great. Taking into consideration the past events we discuss the current developments of Iranian-Azerbaijani relations from the point of the global politics. Another important issue is the quarrelsome question concerning the number of “Azerbaijani nation” living in Iran.

ԹՈՒՐԹԻՎ-ԱԼԺԻՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1996-2002 ԹԹ.

Արմեն Ժամհարյան

ՀՀ զԱԱ Արևելագիտության ինստիտուտ, հայցորդ

Գիտ. դեկ. բ. գ. ք., դոց. Ռ. Մելքոնյան

Էլփոստ՝ armen-konferans@mail.ru

Թուրքիա-Ալժիր հարաբերությունները 1996-2002 թթ. բավական սերտ էին: Նշված ժամանակաշրջանում Թուրքիայի և Ալժիրի միջև հարաբերություններում առկա դինամիկ զարգացումները դրական էին երկու երկրների համար էլ և պայմանավորված էին Թուրքիայի և Ալժիրի՝ հարաբերությունները սերտացնելու ձգտումներով, որտեղ յուրաքանչյուր կողմը իր ուրույն նպատակներն էր հետապնդում: Մասնավորապես Թուրքիայի 1996-2002 թթ. արտաքին քաղաքականության մեջ ավելի ու ավելի էր կարևորվում Թուրքիայի աֆրիկյան քաղաքականությունը, որը ենթադրում էր Թուրքիայի դիրքերի ամրապնդում Աֆրիկայում: 1923-1998 թթ. ընթացքում Թուրքիայի հարաբերությունները Աֆրիկայի հետ ցածր մակարդակի վրա էին: 1998 թ. Թուրքիայի կառավարությունը ընդունեց նոր ծրագիր, որով նախատեսվում էր ավելի ակտիվ լինել Աֆրիկայում՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում¹: Սա էականորեն բարձրացրեց Թուրքիա-Ալժիր հարաբերությունների կարևորությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ: Այս պարագայում Թուրքիան անխուսափելիորեն պետք է ամենասերտ հարաբերություններ ունենար Ալժիրի հետ, քանի որ Ալժիրը, ինչպես և Արաբական Մադրիբի մնացած երկրները, հանդիսանում էին այն հիմնական տարածքները, որոնցով Թուրքիան փորձում էր սերտացնել իր հարաբերությունները Աֆրիկայի երկրների հետ: Ավելին՝ Ալժիրի հսկայական տարածքը այս հարցում նրան դարձնում էր առաջնայինը՝ Մադրիբի մյուս արաբական երկրների մեջ:

1995 թ. Թուրքիայում իշխանության գլուխ եկավ իսլամամետ կուսակցությունը, իսկ մեկ տարի անց՝ 1996 թ. հունիսի 28-ին, Թուրքիայի վարչապետ դարձավ իսլամամետ կողմնորոշում ունեցող Նեջմեթթին Էրբաքանը²: Վերջինս նպատակ ուներ սերտացնել իր հարաբերությունները Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի իսլամական երկրների հետ: Ավելի ստույգ, Էրբաքանը փորձում էր Ղազախստանից մինչև Մարոկկո ընկած երկրներում ստեղծել «արդար» իսլամական հասարակարգ, իսլամական ՆԱՏՕ, ԵՄ և ՄԱԿ³: Չնայած Էրբաքանը երկար չմնաց իշխանության գլուխ, այնուամենայնիվ նրա օրոք արժարժվող ծրագրերը վկայում էին, որ Թուրքիան հարևան իսլամական երկրների հետ հարաբերությունները սերտացնելու խնդիր ունի: Նշված երկրներից Մադրիբի Արաբական երկրների հետ Թուրքիան իր հարաբերությունները սկսեց սերտացնել ոչ թե կրոնական, այլ քաղաքական և տնտեսական գործոնների վրա հենվելով: Բացառություն չէր նաև Ալժիրը, որի հետ հարաբերությունները սերտացնելու համար Թուրքիան 1996-2002 թթ. ընթացքում մի շարք քայլեր ձեռնարկեց: Իր հերթին տուրք տալով պատմական անցյալին և հաշվի առնելով Թուրքիայի՝ տարածաշրջանում հետզհետե ուժեղացող ազդեցությունը և նրա աճող տնտեսությունը՝ Ալժիրը նույնպես ձգտում էր սերտացնել հարաբերությունները Թուրքիայի հետ: Սրան նպաստում էր նաև միջերկրականում կայունության ամրապնդման խնդիրը, ինչը մեծապես կշահեր Թուրքիա-Ալժիր հարաբերությունների սերտացումից:

¹ Turkey and The African Union, http://www.mfa.gov.tr/the-united-nations-organization-and-turkey_.en.mfa

² Karakas C., Turkey: Islam and Laicism Between the Interests of State, Politics, and Society, Peace Research Institute Frankfurt, 2007, p. 25.

³ Курглов А., Прорыв исламизма в Турции, http://www.rau.su/observer/N12_97/12_14.HTM.

Մասնավորապես՝ 1998 թ. հունիսի 22-ին թուրքիան և Ալժիրը համագործակցության պայմանագիր են ստորագրում Անկարայում: Ալժիրի կողմից պայմանագիրը ստորագրել էր հունիսի 21-ին չորսօրյա պաշտոնական այցով թուրքիա ժամանած Ալժիրի ԱԳ նախարար Սինադ Աթաֆը, իսկ թուրքիայի կողմից՝ նրա գործընկեր Իսմայիլ Ջեմը: Այս պայմանագրի վերաբերյալ թուրքիայի ԱԳ նախարարը հայտարարեց. «Թուրքիան և Ալժիրը նոր լիցք կհաղորդեն իրենց փոխհարաբերություններին և ձգտում են արագացնել այդ հարաբերությունները և հասնել նոր հաջողությունների տնտեսական, սոցիալական և քաղաքական բնագավառներում»¹: Պայմանագրի ստորագրումից հետո հաջորդ օրվա ընթացքում Ալժիրի ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել նաև թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ, որը նրան ասաց, որ թուրքիան ձգտում է զարգացնել իր հարաբերությունները Ալժիրի հետ բոլոր բնագավառներում: Հաջորդ տարի՝ 1999 թ. հունվարի 25-ին, պաշտոնական այցով Ալժիր այցելեց թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը, որն ավարտեց իր այցելությունը հաջորդ օրը՝ հունվարի 26-ին: Այցելության ընթացքում Դեմիրելը հանդիպումներ ունեցավ Ալժիրի իր պաշտոնակից Լիամին Ջերուալի, Ալժիրի վարչապետ Իսմայիլ Համդանիի և Ալժիրի այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Սուլեյման Դեմիրելը Ալժիր էր ժամանել մեծ պատվիրակության ուղեկցությամբ, որի կազմում ընդգրկված էին նախարարներ, խորհրդարանի պաշտոնյաներ, ինչպես նաև շուրջ հարյուրի հասնող գործարարներ²: Հանդիպումների ընթացքում երկու նախագահները քննարկեցին տարածաշրջանային և միջազգային մի շարք հարցեր, ինչպես նաև երկու երկրների միջև առկա փոխհարաբերությունները: Այս հարցերը ընդգրկում էին խաղաղության գործընթացը Միջին Արևելքում, Միջերկրականում, ինչպես նաև երկու երկրների հարաբերությունները միմյանց և Եվրամիության հետ: Երկու նախագահները նաև քննարկեցին երկկողմ փոխհարաբերությունները, որի ընթացքում կողմերը որոշեցին սերտացնել փոխադարձ կապերը և հասարակ առևտրաշրջանառությունից անցում կատարել իրական համագործակցության, որի ընթացքում կօգտագործվեն երկու երկրների տնտեսությունների ընձեռած հնարավորությունները: Հանդիպման ընթացքում թուրքիայի նախագահը հայտարարեց, որ և՛ թուրքիան, և՛ Ալժիրը դրական են գնահատում երկու կողմերի համագործակցությունը սերտացնելու հնարավորությունները տարբեր ոլորտներում, հատկապես ռազմական արդյունաբերության, կրթության, տուրիզմի և էներգետիկ ոլորտներում: Թուրքիայի նախագահը ընդգծեց, որ իր Ալժիր այցելության ընթացքում հասկացել է, որ թուրքիայի և Ալժիրի միջև համագործակցությունը հնարավոր է խորացնել բոլոր բնագավառներում, ինչպես նաև ցավակցություն հայտնեց «ահաբեկչական հարձակումների» կապակցությամբ, որոնք հազարավոր անմեղ մարդկանց կյանք խլեցին³: Կարելի է նկատել, որ թուրքիայի նախագահը իր այս հայտարարությամբ մի կողմից իր աջակցությունն էր հայտնում Ալժիրի կառավարությանը՝ իսլամական ընդդիմության դեմ պայքարում, մյուս կողմից ցույց է տալիս իր անհանդուրժողականությունը Ալժիրում այդ ժամանակ ակտիվորեն գործող արմատական իսլամական շարժումների նկատմամբ: Հետևաբար թուրքիա-Ալժիր համագործակցությունը թուրքիային հնարավորությունն էր տալիս աջակցել Ալժիրի կառավարությանը իսլամական արմատական շարժումների դեմ պայքարում, ինչը բավական կարևոր էր թուրքիայի համար: Բանն այն է, որ այդ ժամանակաշրջանի իսլամական տրամադրությունները տեղաշարժվում էին երկրից երկիր և ազդվում էին միմյանցից: Հետևաբար, իսլամական ուժերի հաղթանակը Ալժիրում կարող էր հանգեցնել արմատական իսլամի ակտիվացմանը թուրքիայում: Թուրքիայի նախագահը նաև նշեց, որ Թուր-

¹ Cooperation protocol between Algiers and Turkey, 6/23/1998, <http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/980623/1998062311.html>.

² Turkish president concludes visit to Algeria today, 1/27/1999, <http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/990127/1999012765.html>.

³ Տե՛ս նույն տեղում:

քիան մեծ կարևորություն է տալիս Հյուսիսային Աֆրիկայի երկրների հետ համագործակցությանը, և որ իր բանակցությունները Ալժիրի վարչապետ Իսմայել Համդանիի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների և պատգամավորների հետ «դրական և կառուցողական» են: Թուրքիայի նախագահի այցելության ընթացքում որոշում ընդունվեց նաև, որ թուրքական ավիաընկերությունը կվերականգնի իր թռիչքները Ալժիր¹: Հաջորդ տարվա ընթացքում՝ 2000 թ. ապրիլի 20-22-ին, Թուրքիայի ԱԳ նախարար Իսմայիլ Ջենը այցելություն է կատարում Ալժիր: Այստեղ նա հանդիպում է ունենում Ալժիրի նախագահ Աբդելազիզ Բուտեֆլիկայի, Ալժիրի վարչապետ Ահմեդ Բենբիթուրիի հետ: Ալժիրի նախագահի հանդիպման ժամանակ Ջենը նախագահին է փոխանցում Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հրավերը՝ այցելելու Թուրքիա, ինչին Ալժիրի նախագահը դրական է արձագանքում: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ քաղաքական, տնտեսական, մշակութային հարաբերությունները, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային մի շարք հարցեր: Ջենը նաև փոխանցել է Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթի նամակը վարչապետ Ահմեդ Բենբիթուրիին, որում Թուրքիայի վարչապետը վերահաստատում էր թուրք ազգի ցանկությունը՝ սերտացնել հարաբերությունները Ալժիրի հետ: Թուրքիայի վարչապետը նաև իր ուրախությունը հայտնեց Թուրքիայի՝ Եվրամիությանը անդամակցելուն հավակնող երկիր դառնալու կապակցությամբ և նշեց, որ Եվրամիությունը չի կարողանա ավարտել ընդլայնվելու և ինքնազարգանալու ծրագիրը՝ առանց Թուրքիային որպես անդամ-երկիր ընդունելու: Իսմայիլ Ջենն էլ իր հեթոնն նշեց, որ Թուրքիայի թեկնածու-երկիր դառնալուց հետո երկու երկրները կարող են էլ ավելի սերտ համագործակցել Եվրամիության Միջերկրածովյան տարածաշրջանում: Հատկանշական է, որ այդ ժամանակ Թուրքիան բանակցություններ էր սկսել Միջերկրականի երկրների հետ՝ նպատակ ունենալով միանալ Եվրոպա-միջերկրական գործընկերության երկրների միջև նախատեսվող ազատ առևտրային գոտուն: Ուստի Ջենի այցելությունից մեկ տարի անց՝ 2001 թ. վերջին, Թուրքիան ազատ առևտրային գոտու համաձայնագրի նախագիծը ներկայացրեց Ալժիրին²: Այսպիսով, Թուրքիայի՝ Եվրամիության թեկնածու-երկիր դառնալը ևս մեկ գործոն էր, որն ստիպում էր Թուրքիային սերտացնել հարաբերությունները Ալժիրի հետ: Ներկայացնելով 1996-2002 թթ. Թուրքիա-Ալժիր հարաբերությունները՝ պետք է նշել, որ Թուրքիա-Ալժիր համագործակցությունը բավական կարևոր էր երկու երկրների համար էլ: Մասնավորապես Ալժիրը հանդիսանում էր Հյուսիսային Աֆրիկայում Թուրքիայի առավել կարևոր գործընկեր պետություններից մեկը, որի հետ հարաբերությունների սերտացումը կնպաստեր Աֆրիկայում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը, տարածաշրջանում կայունության խորացմանը, ինչպես նաև հնարավորություն կտար Թուրքիային ավելի ամուր զգալ իրեն արաբական աշխարհում: Ալժիրը իր հեթոնն ներքին կայունության էր ձգտում և բարեփոխումների կարիք էր զգում, ուստի Թուրքիան հուսալի գործընկեր կլիներ այդ գործում:

1996-2002 թթ. ընթացքում Թուրքիա-Ալժիր տնտեսական հարաբերությունները նույնպես բավականին աշխույժ էին և շարունակում էին դինամիկ զարգանալ: 1997 թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտավ Թուրքիայի և Ալժիրի միջև երկկողմ հարկումից խուսափելու վերաբերյալ ավելի վաղ կնքված համաձայնագիրը, ինչը զգալիորեն խթանեց տնտեսական հարաբերությունների զարգացմանը երկու երկրների միջև: Հաջորդ տարի՝ 1998 թ., Թուրքիայի և Ալժիրի միջև ստորագրվեց ներդրումների պաշտպանման և խթանման վերաբերյալ համաձայնագիր³, ինչով նախադրյալներ

¹ Air flights resumed between Turkey, Algeria, 5/19/1999, <http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/990519/1999051908.html>.

² OECD Reviews of Regulatory Reform // Regulatory Reform in Turkey, Paris, OECD Publication, 2002, p.16.

³ Arab States Investment and Business Guide, V. 1, Arab League Countries Investment Climate and Opportunities, Washington, 2007, p. 24.

էին ստեղծվում երկկողմանի ծրագրերի, ինչպես նաև միմյանց տարածքում ներդրումային ծրագրերի իրականացման համար: Արդեն 1997 թ. Թուրքիայից Ալժիր արտահանումը կազմեց 306.6 մլն դոլար, այնինչ ներկրումը նույն տարվա կտրվածքով կազմեց 828.8 մլն դոլար: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ այդ ժամանակ Ալժիրն արդեն մեծ քանակությամբ գազ էր մատակարարում Թուրքիային, ինչը բարձրացնում էր նրա՝ Թուրքիայի հետ ունեցած արտահանման ցուցանիշը: 1998 թ. փետրվարի 26-ին պաշտոնական այցով Ալժիրում գտնվող Թուրքիայի ծովային տրանսպորտի պետական նախարար Բուրհան Քարան հայտարարեց, որ Ալժիրի և Թուրքիայի միջև համագործակցությունը տուրիզմի ոլորտում արագ տեմպերով զարգանում է, և որ այս ոլորտում 1997 թ. 1.3 մլրդ դոլար կազմող դրամաշրջանառությունը զգալիորեն կավելանա ընթացիկ տարում¹: 1999 թ. հունվարի 26-28-ը ընկած ժամանակահատվածում Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի Ալժիր այցելության ժամանակ այլ հարցերի հետ միասին նաև քննարկվեցին մի շարք կարևոր տնտեսական հարցեր: Նախագահը լույս ունեցավ նաև թուրք-ալժիրյան գործարար խորհուրդի հանդիպման ժամանակ: «Այսօր մենք այստեղ ենք՝ ևս մեկ անգամ ընդգծելու, որ Թուրքիան որոշել է զարգացնել իր տնտեսական և գործարար հարաբերությունները Ալժիրի հետ: Մեր պարտականությունն է ստեղծել հարմար միջավայր ձեր ընկերությունների համար և օգնել հեռացնել այն արգելքները, որոնք դուք կարող եք հանդիպել», - հայտարարեց նա գործարարներին: Ավելի ուշ Դեմիրելը ունկնդիրներին ներկայացրեց նաև Թուրքիայում իրագործվող տնտեսական խոշոր ծրագրերը՝ հավելելով. «Այս ամենը ապացուցում է թուրքական տնտեսության դինամիկայի մասին և ցույց է տալիս, որ Թուրքիան պատրաստ է առաջարկել իր պոտենցիալը Ալժիրին»: 2000 թ. ապրիլի 20-22-ին՝ Թուրքիայի ԱԳ նախարար Իսմայիլ Ջենի՝ Ալժիր այցելության ժամանակ Ալժիրի վարչապետ Ահմեդ Բենբիթուրը վերջինիս տեղեկացնում է, որ Ալժիրի տնտեսությունը ազատականացման ճանապարհին անցումային փուլում է, և որ իրենք ձգտում են օգտագործել տնտեսական ազատականացման Թուրքիայի փորձը՝ ձեռք բերված 1980-ական թթ.: Այստեղ պետք է հաշվի առնել, որ սառը պատերազմի ժամանակ Ալժիրը հարում էր խորհրդային բլոկի երկրներին, և նրա տնտեսությունն էլ Խորհրդային Միության տնտեսության նման ազատականացված չէր: Միայն 1989 թ. երկրորդ սահմանադրության ընդունումից հետո սահմանադրության միջից հանվեց Ալժիրը սոցիալական պետություն լինելու ձևակերպումը, և երկրի տնտեսությունը շարունակեց ազատականացումը: Սակայն տնտեսական ազատականացումը պահանջում է այլ երկրների փորձի ուսումնասիրում՝ սխալներից խուսափելու համար, որից հետո ընտրվում են մեկ կամ մի քանի երկրներ, որոնց օրինակով կազմակերպվում է տնտեսական ազատականացման գործընթացը: Ուստի վարչապետի հայտարարությունը նշանակում էր, որ տնտեսական ազատականացման ճանապարհին Ալժիրի ղեկավարությունը, որպես հաջողված օրինակ, ձգտում էր անցնել տնտեսական ազատականացման Թուրքիայի ճանապարհը և ունենալ այնպիսի չափով ազատականացված տնտեսություն, ինչպիսին Թուրքիայի տնտեսությունն էր այդ ժամանակ: Սրան ի պատասխան՝ Ջենը հայտարարում է, որ Թուրքիան ամեն հնարավոր ճանապարհով պատրաստ է աջակցել Ալժիրի տնտեսական զարգացմանը: Հաջորդ տարվա մարտի 25-ին Ալժիրի վառելիքային ազգային «Sonatrak» ընկերությունը և թուրքական «Butas» ընկերությունը համաձայնագիր ստորագրեցին 1988 թ. բնական գազի վաճառքին և գնմանը վերաբերող պայմանագրում լրացումներ կատարելու վերաբերյալ: Համաձայնագրի ստորագրումից հետո մամուլին տված հաղորդագրության մեջ «Sontrak»-ի մամուլ քարտուղարը հայտարարեց, որ ընկերությունը ամեն տարի Թուրքիային կվաճառի շուրջ 4 մլն խորանարդ մետր գազ 25 տարի ժամկետով: «Sontrak»-ի մամուլ

¹ Algeria, Turkey transport cooperation booming 2/24/1998, <http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/980224/199802245.html>.

քարտուղարը նաև նշեց, որ ալժիրյան և թուրքական ընկերությունները ներկայումս քննարկում են Թուրքիայի հետ էներգետիկ նախագծերում «Sontrak»-ի հնարավոր մասնակցության հարցը: 1996-2002 թթ. Թուրքիայի և Ալժիրի միջև համագործակցությունը խորացավ նաև տնտեսական այլ ոլորտներում ևս:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրելով Թուրքիա-Ալժիր տնտեսական հարաբերությունները, կարելի է վստահաբար նկատել, որ Ալժիրը փորձում էր խորացնել համագործակցությունը Թուրքիայի աճող տնտեսության հետ՝ դրա համար ունենալով բավական կարևոր պատճառներ: Մասնավորապես լինելով համեմատաբար ինքնուրույն տնտեսություն ունեցող երկիր՝ Ալժիրը չէր կարող որպես տնտեսական արդիականացման մոդել ընտրել ԵՄ անդամ պետությունների տնտեսական բարեփոխման ձևը, քանի որ ԵՄ անդամ երկրների տնտեսական զարգացումը մեծ չափով կախված էր միմյանցից: Բացի այս, հանդիսանալով Թուրքիային էներգակիրներ վաճառող կարևոր պետություններից մեկը, Ալժիրը բավական ուժեղ ազդեցություն ուներ թուրքական տնտեսության վրա, ուստի Թուրքիայի հետ հարաբերությունները սերտացնելու ժամանակ բավական մեծ հավանականություն կար առաջնության հարցերում առաջացած խնդիրները նպաստավոր ձևով լուծելու համար:

1996-2002 թթ. Թուրքիա Ալժիր հարաբերությունները բնականոն զարգանում էին այլ ուղղություններով ևս: Հատկապես սերտ էին երկու երկրների միջև առկա մշակութային հարաբերությունները, զարգանում էին հարաբերությունները նաև առևտրափոխադրումների ոլորտում և այլն: Ամփոփելով կարելի է նշել, որ Թուրքիա-Ալժիր զարգացող հարաբերությունները երկու երկրներին էլ հնարավորություն տվեցին լուծել իրենց համար կենսականորեն կարևոր մի շարք խնդիրներ երկրների ներսում, ինչպես նաև ամրապնդել իրենց դիրքերը տարածաշրջանում և միջազգային ասպարեզում:

ОТНОШЕНИЯ МЕЖДУ ТУРЦИЕЙ И АЛЖИРОМ В 1996-2002 ГОДАХ

Армен Жамгарян

В статье исследуются отношения между Турцией и Алжиром в период 1996-2002 годов, указываются внутренние причины (энергетическая зависимость Турции от Алжира, нестабильное состояние Алжира), а также внешние, способствующие укреплению взаимоотношений между странами. В статье также представлены пути для достижения этой цели.

В результате исследования мы пришли к выводу, что укрепление отношений между Турцией и Алжиром способствует преодолению ряда проблем, существующих в этих странах и регионе, и укреплению их политических позиций в регионе и на международной арене.

TURKEY-ALGERIA RELATIONS IN 1996-2002

Armen Zhamharyan

This article reviews the Turkey's relations with Algeria in 1996-2002. The article focuses on the aspirations of Turkey and Algeria to strengthen mutual relations. Those reasons as well as other steps of cooperation, that led to closer relations. As another important internal factor between the two sides is the Turkish Energy dependence on Algeria, as well as instability in Algeria, which would improve greatly by establishing close relations with Turkey. In addition to this, external causes that promote a closer relationship between Turkey and Algeria are introduced. To conclude, Turkish-Algerian relations helped them to overcome a number of problems within the region, and strengthen their position in the region and in the international arena.

ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԴՊԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓԱՐԻՅՅԱՆ ԿՈՆԳՐԵՍՆ ՈՒ
ՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Արշակ Գևորգյան

ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ Բ.Գ.Ք., դոց. Ռ. Մելքոնյան

Էլփոստ՝ arshak.gevorgyan@gmail.com

Մինչև 20-րդ դարազույգը իր պատմական հայրենիքում հայ ժողովրդի ծավալած ազգային-ազատագրական շարժումը ստիպում էր հայերի՝ իբրև քաղաքական միավորի հետ հաշվի նստել ինչպես աբդուլհամիդյան վարչակարգին, այնպես էլ բացարձակ միապետական կարգերի հակառակորդներին՝ ի դեմս երիտթուրքերի։ Վերջիններիս վերաբերմունքը կայսրության ներսում ազգային ու այդ թվում՝ հայկական հարցի նկատմամբ խարսխված էր 1850-1870-ական թթ. ձևավորված օսմանիզմի հիմնադրույթների վրա¹ և ըստ էության քիչ բանով էր տարբերվում սուլթանական իշխանության տեսակետից²։ Ընդհանուր առմամբ երիտթուրքերի մոտեցումը հայերի պահանջներին ամբողջացնում է Ահմեդ Ռեզա բեյի (1859-1930 թթ.) կողմից Փարիզում հրատարակվող «Meşveret» («խորհրդակցություն») թերթի ֆրանսերեն հրատարակության առաջին համարում (1895 թ. վերջ) տպագրված խմբագրական հոդվածը։ Սրանում շեշտադրելով կայսրության անբաժանելիությունն ու տերությունների չմիջամտելը իր երկրի ներքին գործերին՝ Ահմեդ Ռեզան գրում է. «մենք պահանջում ենք բարեփոխումներ ոչ թե հատուկ այս կամ այն նահանգում, այլ ողջ կայսրությունում, ոչ ի օգուտ մի ազգության, այլ ի օգուտ բոլոր օսմանցիների լինեն նրանք հրեաներ, քրիստոնյաներ կամ մուսուլմաններ»³։ Առկա ռազմավարական տարածայնություններին հաճախ գումարվում էր նաև երիտթուրքերի առաջնորդների զուտ ազգային հակակրանքը իրենց բնորոշմամբ «հայկական կոմիտեների կաչուն մտքերի» նկատմամբ։ Նման մի օրինակ է պատմում հնչակյան կուսակցության գաղափարախոսներից Ստեփանոս Սապահ-Գյուլյանը։ Նրա խոսքերով՝ Չեթունի ապստամբության հաղթանակից հետո հնչակյան գործիչների հետ հանդիպման ժամանակ, Դոկտոր Նազընը «թունոտ ժպտում էր», որովհետև անհրաժեշտ էր ժպտալ...⁴։

Ու չնայած այս խոչընդոտներին՝ հայկական քաղաքական կուսակցությունների հետ համագործակցելու երիտթուրքերի նախաձեռնությունը պայմանավորված էր երկրի ներսում զգալի ժողովրդական հեռարան ունեցող ուժերի հետ հակահամիդյան միասնական ճակատ կազմելու կենսական անհրաժեշտությամբ։ Այդ տարիներին «Meşveret»-ում տպագրված հոդվածների ուսումնասիրողներից Շերիֆ Մարդինը գրում է, որ անձամբ Ահմեդ Ռեզան «հայկական կոմիտեների հետ համաձայնության զալու համար զգալի ջանքեր էր գործադրել»⁵։ Այդ ջանքերը գնահատելիս չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ հայկական քաղաքական կառույցների հետ հարաբերությունների հետ հաստատելը զգալիորեն կմեծացներ դրան հասած գործիչի հեղինակությունը օսմանյան ոչ այնքան միասնական ընդդիմության մեջ։ Հավանաբար նաև սրանով պետք է պայմանավորել այն փաստը, որ 19-րդ դ. ողջ երկրորդ

¹ Մանրամասն տե՛ս Сафряян Р., Доктрина османизма в политической жизни Османской империи (50—70 гг. XIX в.), Ереван, 1985.

² Այդ նմանությունը հարկադրված է ընդունել նաև թուրք ուսումնասիրող Յուսուֆ Հիքմեթ Բայուրն իր «Türk İnkılabı Tarihi» աշխատության մեջ։

³ Հոդվածի անգլերենի թարգմանությունը ներկայացված է՝ Ramsaur E., The Young Turks: prelude to the revolution of 1908, Michigan, 1970, էջ. 25:

⁴ Սապահ-Գյուլյան Ս., Պատասխանատուները, Փրավիտենս, 1916, էջ 163:

⁵ Mardin Ş., Jön Türklerin Siyasi Fikirleri 1895-1908, İstanbul, 2008, s. 19.

կեսին երիտթուրք տարբեր ղեկավարներ պարբերական հանդիպումներ են ունենում հայկական քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ¹: Նման հանդիպումները նոր մակարդակի բարձրացվեցին նոր դարասկզբին: ՀՀԴ պաշտոնաթերթ «Դրոշակի» 1901 թ. ապրիլյան համարում հայտնվեց մի հաղորդագրություն, որ վերնագրված էր «Կոնգրես»: Հաղորդագրությունը հիշատակում էր 1900-1901 թթ. հակահամիդյան միջավայրում տարածված երկու բրոշյուրներ՝ այն է՝ մայրական գծով սուլթան Աբդուլհամիդի զարմիկներ, արքայազններ Սաբահեդդինի (1878-1948 թթ.) ու Լյուսֆուլլահի (1879-1973 թթ.) խմբագրած «Beyanname-yi umumi» հանրահանուր կոչը, որի փաստական հեղինակը նրանց հայր Դամադ Մահմուդ Ջալալադդին փաշան (1853-1903 թթ.) էր, և երիտթուրք Թունալը Հիլմիի (1871-1928 թթ.) «Kongre» հրապարակումը²: Երկու բրոշյուրներում էլ ընդգծվում էր սուլթանական ռեժիմին ընդդիմադիր ուժերի համատեղ կոնգրեսի հրավիրման անհրաժեշտությունը՝ անկախ ազգությունից (թուրքեր, հայեր, մակեդոնացիներ, ալբանացիներ, քրդեր ևն): Ջեմալ Քունթայը նշում է, որ Սաբահադդինն ու Լյուսֆուլլահը միասնության հասնելը հնարավոր էին համարում միայն կոնգրեսի հնարավոր հրավիրման դեպքում (բնագրում՝ «Meclis-i Umumi»)՝³: Գումարվելիք կոնգրեսին մասնակցելու այս փաստացի հրավերներին դաշնակցականների գրավոր մարմինը շտապում է իր վերոհիշյալ հրապարակմամբ պատասխանել, որ պատրաստ է ուղարկել իր պատվիրակներին⁴: Այսպիսով, չնայած առկա գաղափարական լուրջ հակասություններին և նախկին տարիներին հրապարակախոսական հարթակներում փոխադարձ անխնա քննադատություններին, ՀՀԴ-ն ի նշան հեղափոխական համերաշխության համաձայնվում է մասնակցել մյուս տարի կազմակերպվելիք ընդդիմադիրների հավաքին:

Տրամազօրեն տարբերվում էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցության դիրքորոշումը: Ստեփանոս Սապահ-Գյուլյանը 1900-1901 թթ. «Հնչակ» թերթում տպագրած իր «Երիտասարդ Թուրքիա» ուսումնասիրության մեջ հանգամանորեն վերլուծել ու շարադրել էր իրենց վերաբերմունքը երիտթուրքերի հետ հնարավոր համագործակցության հարցին: Նրա առաջ քաշած պայմանների թվում են ինքնավար Հայաստանի ստեղծումն ու ուղիղ և գաղտնի քվեարկությամբ ընդունվելիք ժողովրդավարական նոր սահմանադրության հռչակումը⁵: Ի վերջո հնչակյանների 3-րդ ընդհանուր ժողովը մերժեց երիտթուրքերի կողմից իրենց ուղարկված մասնակցության հրավերը⁶:

Այսպիսով, 1902 թ. փետրվարի 4-ին բացված «Օսմանյան լիբերալների կոնգրեսում» հայերը ներկայացված էին Հայ Հեղափոխական դաշնակցության ու Վերակազմավորված Հնչակյան կուսակցության երեքական ներկայացուցիչների միջոցով: Աշխատանքների սկզբում արդեն ֆրանսիական կառավարությունն ի դեմս Փարիզի ոստիկանական պրեֆեկտ Լուի Ժան-Բապտիստ Լեպինի արգելք դրեց հավաքի վրա և միայն ազդեցիկ պատգամավորների ու քաղաքական գործիչների դիմումներից հետո թույլատրեց շարունակել կոնգրեսի ընթացքը: Կազմակերպիչները սակայն ստիպված էին նիստերն անցկացնել մասնավոր տներում, իսկ դրանց արձանագրությունները մինչև տպագրությունը հանձնել ֆրանսիական կառավարությանը: Այս

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Կочар М.**, Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос в конце XIX – начале XX веков, Ереван., 1988, էջ 73-129:

² Այս փաստաթղթերի մասին մանրամասն տե՛ս **Петросян Ю.**, Турецкая публицистика эпохи реформ в Османской империи: (конец XVIII начало XX в.), Москва, 1985, էջ 106-109:

³ **Kuntay C.**, Prens Sabahattin Bey, Sultan II: Abdulhamit, Ittihad ve Terakki, Istanbul, 1964, s. 133.

⁴ «Դրոշակ», 1901 թ., № 2:

⁵ **Սապահ-Գյուլյան Ա.**, Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908, էջ 57:

⁶ Նույնի Պատասխանատուները, էջ 182:

օրերի իրադարձությունների վրա լույս են սփռում երիտթուրք որոշ գործիչների մասնակները ուղղված գաղափարակից ընկերներին¹:

Կոնգրեսին մասնակից հայ պատգամավորները մինչև աշխատանքների մեկնարկը ներքին բանակցությունների արդյունքում համաձայնեցրել էին իրենց տեսակետները: Ձարմանալի մի դեպք, երբ տարբեր կուսակցությունների ներկայացուցիչները ազգային շահը վեր էին դասում ներկուսակցականից: Նրանց այս քայլով «օսմանցիների առջև ներկայացան ոչ թե երկու կուսակցության ներկայացուցիչներ, այլ հայկական հարցը պաշտպանող վեց սովորական հայեր»²: Դաշնակցական ու վերակազմված հնչակյան գործիչները նաև հանդիպումներ ունեցան արքայազներ Սաբահեդդինի ու Լյուսֆուլլահի, ինչպես նաև ալբանական ազգային շարժման առաջնորդ Իսմայիլ Բենալ բեյ Վլորայի (1844-1919 թթ.) հետ ու աշխատանքներին մասնակցելու իրենց վերջնական համաձայնությունը տվեցին միայն այն բանից հետո, երբ համոզվեցին, որ կոնգրեսի կազմակերպիչներն ի գիտություն են ընդունում Բեռլինի վեհաժողովի եզրափակիչ ակտի 61-րդ հոդվածը³ ու մայիսյան բարենորոգումների ծրագիրը՝ բրիտանական լրացումը ներառյալ⁴:

Բացի հիշյալ վեց կուսակցական հայերից կոնգրեսին հրավիրված էին նաև մի շարք փարիզաբնակ հասարակապետ ակտիվ ու հայրենակիցների շարքում ճանաչված հայեր: Այդ հրավերն ընդունեցին միայն հասարակական գործիչներ Մինաս Չերազն (1852-1928 թթ.) ու Կարապետ Բասմաջյանը (1864-1942 թթ.): Նրանք ևս հայտարարեցին, որ միանում են կոնգրեսին ներկայացված միասնական հայկական հայտարարությանը:

Ընդհանուր առմամբ կոնգրեսի աշխատանքներին տարբեր տվյալներով մասնակցել է 47-ից մինչև 300 պատվիրակ (առավել հաճախ հանդիպում է 60-70 մարդ տարբերակը): Դրանց թվում էին երիտթուրքեր արքայազներ Սաբահեդդինն ու Լյուսֆուլլահը, “Meşveret” թերթի խմբագիր Ահմեդ Ռզզան, “Osmanlı” («Օսմանցի») թերթի խմբագիր Ալի Ֆահրի բեյը, “Kanun-ı Esasi” («Հիմնական օրենք», «Սահմանադրություն») թերթի տերերից Յոջա Քադրին, Հալիլ Գանեմը, օսմանյան խորհրդարանի պատգամավորներ Իսմայիլ Հաքքը փաշան (Ամասիայից), Մահիր Սաղըքը (Անկարայից), Յուսուֆ Աքչորան (Ստամբուլից), Տոկիոյում Օսմանյան կայսրության նախկին դեսպան Ֆերիդ Թեք բեյը և այլք: Երիտթուրքերից ու հայերից բացի մասնակցում էին նաև հունական (ի դեմս՝ օսմանյան նախկին փոստային նախարար Սուսիրիս Գիդիսի), ալբանական (ի դեմս՝ “L’Albanie” թերթի խմբագիր Դերվիշ Հիմալի), քրդական (ի դեմս՝ “Kurdistan” թերթի խմբագիր Աբդուռահման բեյ Բեդիրհանի), եգիպտական, կիպրական և բուլղարական պատվիրակությունները:

Կոնգրեսն անցկացրեց ընդհանուր առմամբ 6 նիստ, որոնցից 2-ը կայացան ֆրանսիացի ակադեմիկոս, սենատոր Էժեն Լաֆևր-Պոնտալիսի Լաֆայետ փողոցում գտնվող տանը, իսկ վերջին 4-ը արքայազների տանը⁵:

¹ Kuran A., İnkılâp tarihimiz ve Jön Türkler, İstanbul, 1945, s. 184.

² «Նոր Կյանք», 1902 թ., № 1:

³ 1878 թ. հուլիսի 1 (13)-ին կնքված տրակտատի 61-րդ հոդվածը արձանագրում էր. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հասպաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չեքքեզներից ու քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կիսկեն դրանց կիրառմանը» (տեքստն ըստ՝ Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 2006, էջ 8):

⁴ 1895 թ. մայիսի 11-ին Բարձր Դռանը ներկայացվել էր նույն թվականի ապրիլին բրիտանական կառավարության կողմից մշակված ծրագրի փոփոխված տարբերակը, որին միացել էին Ֆրանսիան ու Ռուսական Կայսրությունը: Դրանով լայն առումով Արևմտյան Հայաստանը դրվում էր եվրոպական տերությունների հովանու ներքո: Հունիսի 3-ին Աբդուլ Համիդի հրապարակած պատասխանով, փաստորեն, ծրագիրն ամբողջովին մերժվել էր:

⁵ Kuran A., s. 151-154.

Առաջին նիստում կոնգրեսի նախագահող ընտրվեց արքայազն Սաբահեդդինը՝ հայ և հույն փոխնախագահներով (Սիսլիյան և Սատուս): Հայ պատվիրակները պահանջեցին, որ կոնգրեսի աշխատանքային լեզու հայտարարվի ֆրանսերենը, սակայն, քանի որ թուրք ներկաներից շատերը ֆրանսերենին չէին տիրապետում, համազոր կիրառության իրավունք ստացան և՛ ֆրանսերենը, և՛ թուրքերենը:

Մինչև բուն քննարկումների մեկնարկը հայ պատվիրակները բարձրացրեցին մակեդոնական կոմիտեների հրավիրված չլինելու մասին հարցն ու հասան «Դոշակ» թերթի խմբագրատան միջոցով «Թուրքիայի եվրոպական բուլղարներին» հրավերի ուղարկմանը: Սակայն, քանի որ մակեդոնական կոմիտեներն այդպես էլ չարձագանքեցին, հայերը ստիպված էին բավարարվել մակեդոնական հարցի վերաբերյալ օսմանյան լիբերալների հայացքների քննադատությամբ:

Կոնգրեսի աշխատանքները ծրագրային ելույթով բացեց Մեհմեթ Սաբահեդդինը: Քննադատելով Աբդուլ Համիդի կառավարության աշխատանքը՝ նա առաջ քաշեց «առաջը բացառության բոլոր օսմանցիների համար» բարեփոխումներ կատարելու անհրաժեշտության օսմանիստների հայտնի թեզը: Սաբահեդդինը հատկապես կանգ առավ կայսրության ներսում շարժմանը զինվորական լայն զանգվածներին ներգրավելու ու օտարերկրա տերությունների հնարավոր միջամտությունը կանխելու հարցերի վրա:

Նախագահողի ելույթին հաջորդեցին սուր ու հաճախ վեճի սահմանին մոտեցող բանավեճեր՝ Հայ պատվիրակները պնդում էին մայիսյան բարեփոխումների ծրագրի կենսագործման ու դրանց նկատմամբ արևմտյան տերությունների վերահսկողության ապահովման վրա: Նրանք նաև ընդգծում էին, որ Բեռլինի կոնգրեսի եզրափակիչ ակտի 61-րդ հոդվածը չի կարող տարածվել կայսրության բոլոր վիլայեթների վրա, քանի որ այն կազմված է տեղական ազգային մասնավոր դեպքերի հաշվի առնմամբ: Կարծիքների մյուս բևեռն էին կազմում երիտթուրքերի մյուս թևը Ահմեդ Ռեզայի գլխավորությամբ: Այն բանից հետո, երբ թե՛ Ռեզայի կողմակիցները և թե՛ հայերը մերժեցին Սաբահեդդինի կոմպրոմիսային եզրափակիչ բանաձևը, հայկական քաղաքական թերթերի խմբագրությունները կոնգրեսին ներկայացրեցին մի հայտարարություն, որը բաղկացած էր 3 կետից՝

- հայկական կոմիտեները պատրաստակամություն էին հայտնում համազոր-ծակցել օսմանյան լիբերալների հետ տիրող ռեժիմի բարեփոխման նպատակով,
- այդ ընդհանուր նպատակից դուրս հայկական կոմիտեները շարունակելու էին իրենց անկախ գործունեությունը,
- նրանց այդ գործունեությունը չէր հետապնդում այլ նպատակ, քան Բեռլինյան ակտի 61-րդ հոդվածի, 1895 թ. մայիսյան բարեփոխումների ու ֆրանսիական կառավարության կողմից հայերին խոստացված բարեփոխումների կենսագործումը²:

Հայերը բավական զգուշությամբ էին խոսում համաօսմանյան բարեփոխումների ու միդիատյան սահմանադրության վերականգնման մասին՝ կասկածի տակ դնելով փաստը, որ այն «օսմանյան ժողովուրդների քաղաքական ազատության ամենավստահելի երաշխիքն է»: Այս նիստից հետո հայերի շահերի ներկայացուցիչներն իրենց առաքելությունը համարեցին ավարտված ու չմասնակցեցին կոնգրեսի վերջին նիստի աշխատանքներին:

Քննարկումների վերջին օրը՝ փետրվարի 9-ին, ընդունվեց որոշում, որն արձանագրում էր, որ Փարիզում բացված օսմանյան լիբերալների կոնգրեսի մասնակիցներն իրենց բողոքն էին հայտնում կայսրության իշխող ռեժիմի դեմ ու համազոր-ծակցության կոչ հնչեցնում հետևյալ երկու նպատակներով՝

¹ Петросян Ю., Младотурецкое движение: вторая половина XIX-начало XX в., Москва, 1971, с. 206-208.

² «Նոր կյանք», 1902 թ., № 1:

- իշխող ռեժիմը փոխակերպել ազատության ու արդարության համակարգի, ինչն ապահովվելու էր 1876 թ. սահմանադրության վերականգնմամբ,

- հիշեցնել եվրոպական տերություններին իրենց պարտավորությունների մասին՝ հիմնված իրենց և Բ. Դռան միջև կնքված միջազգային պայմանագրերի վրա, որպեսզի ապահովվի կայսրության բոլոր հատվածների բարօրությունը¹:

Վերջին միաստի ավարտին կազմվեց միայն երիտթուրքերից կազմված մշտական համակարգող կոմիտե, որին հայերը հրաժարվեցին մաս կազմել՝ պատրաստակամություն հայտնելով, սակայն, համագործացել արդեն գործող հայկական կոմիտեների մակարդակով:

Աշխատանքների ավարտից հետո կոնգրեսի կազմակերպիչների կողմից կազմվեց ու եվրոպական լրատվամիջոցների ներկայացուցիչներին ներկայացվեց քննարկումներն ամփոփող համառոտ արձանագրություն: Դրանում տեղ գտած որոշ ձևակերպումներ հանդիպեցին հայ պատվիրակների վճռական անհամաձայնությանը: Արձանագրության մեջ մասնավորապես նշվում էր, թե հայերը տիրող ռեժիմը սահմանադրականի վերափոխելը համարում էին «ժամանակավրեպ և անգամ իրենց շահերին հակասող»: Հայկական կողմի դիրքորոշումը, այն է՝ «հայկական կոմիտեների պատվիրակները լիազորված չեն ընդհանուր պետական վերափոխումների վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու, ինչը սակայն չի խոսում սահմանադրական կարգերի հաստատմանը հայերի դեմ լինելու մասին», տպագրվեց «L'Europe» ամսագրում:

Այսպիսով, Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի առաջին կոնգրեսն ընդհանուր առմամբ ձախողվեց: Անգամ հռչակագրի տեքստի ուսումնասիրությունն է վկայում միացյալ ճակատ կազմելու անկարողության մասին: Կոնգրեսը չկարողացավ ապահովել միասնությունն անգամ երիտթուրքական շարժման ներսում: Դրա ավարտից հետո Ահմեդ Ռեզային հարող խմբավորումը կազմակերպորեն ձևավորվեց որպես «Օսմանյան առաջադիմության և միության ընկերություն» («Osmanlı Terakki ve İttihat Cemiyeti»): Իսկ արքայազն Սաբահեդդինն ու նրա կողմնակիցներն ստեղծեցին «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերություն» ("Teşebbüs-i Şahsi ve Adem-i Merkeziyet Cemiyeti")²:

Հայերի տեսանկյունից արդեն այս շրջանում նկատելի էին դառնում, որ երիտթուրքերն իրենց լիբերալ դիմակի տակ թաքցնում էին գազանային շովինիզմի ցցուն դրսևորում հանդիսացող անմարդկային գաղափարները: Դա են վկայում նաև ժամանակի հայ կուսակցական որոշ գործիչների վկայություններ: Դրանք ապացուցում են, որ չնայած տարածված տեսակետի, երիտթուրքերի հետ հնարավոր համագործակցությունը միահամուռ ցնծություն չէր առաջացրել հայերի քաղաքական հանրության շրջանում: Անգամ քիչ ուշ շրջանում երիտթուրքերի հետ բավական սերտ համագործակցած ու անգամ Օսմանյան կայսրության ընդդիմադիրների երկրորդ կոնգրեսը (1907 թ. դեկտեմբերի 27-29) նախաձեռնած դաշնակցականների շարքերում քիչ չէին մարդիկ, ովքեր բավական հստակ էին կոնգրեսի վերաբերյալ իրենց տպավորություններում: Մասնավորապես ավարտենք կյանքի տարբեր հանգրվաններում օսմանյան ընդդիմադիրների առաջին կոնգրեսին անդրադարձած ՀՀԴ բյուրոյի անդամ Միքայել Վարանդյանի (1872-1934 թթ.) այս տեսակետից բավական բնութագրական նկարագրությամբ.

«Մենք ջերմօրեն ողջունեիք էինք Համաժողովի գաղափարին: Առաջին անգամը Օսմ. կայսրութեան դժգոհ տարրերու ներկայացուցիչները, թիւով շուրջ 40 համախըմբուեր էին զիրար ճանչնալու և համերաշխ գործակցութեան ծրագիր մշակելու... Բայց հայ պատգամաւորները առաջին օրէն իսկ զգացին զիրենք պաղ, անհիւր-

¹ Петросян Ю., Младотурецкое движение: вторая половина XIX-начало XX в., с. 209.

² Հարաթյան Մ., Օրեշկովա Ա., Պետրոսյան Յու., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 198-199:

ընկալ մթնոլորտի մէջ: Բուն օսմանցիները եւ մանաւանդ Ահմետ Ռիզա կը մատնէին ծայրայեղ անհամբերողութիւն քրիստոնեաներու հանդէպ: Դեռ որոշ յարգանք կը ցուցանէին դէպի Յ. Յ. Դաշնակցութիւնը: Մակեդոնացիները չէին հրաւիրեր այն պատճառաբանութեամբ, թէ անոնք «խռովարարներ» են: Բնականաբար չէին ճանչնար մակեդոնական դատն եւս: Ապագայ երանելի Սահմանադրութենէն զատ – որ չես գիտեր թէ ի՞նչ միջոցներով «խաղաղօրէն» պիտի իրագործէին – անոնց զխափոր մտահոգութիւնն էր լուծել հայկական դատը «ընդհանուր համաօսմանեան բարենորոգումներու» մէջ... Արդիւ Զամիդն ալ արդէն այդպէս կ'առաջադրէր ամէն անգամ, երբ արտաքին ճնշումներէն նեղուած, կ'ուզէր կերպով մը ձգձգել բուն հայկական ռեֆորմները»¹:

Փոխվում էին ժամանակները, փոխվում՝ դեմքերն ու խաղացողները, չէր փոխվում միայն «ծոյլ, թուլամորթ ու արյիւնարբու» թուրքը, հիմա արդէն՝ երիտասարդ թուրքը:

ПЕРВЫЙ ПАРИЖСКИЙ КОНГРЕСС ОСМАНСКИХ ОПОЗИЦИОННЫХ СИЛ И ПОЛИТИЧЕСКОЕ УЧАСТИЕ В НЕМ АРМЯН

Аршак Геворкян

Organized by Prince Sabahaddin and his brother Prince Lutfullah the first congress of ottoman liberals took place in Paris from 4 to 9 February 1902 and had the aim of settling the differences between various political groupings, which were opposed to the despotic rule of Sultan Abdülhamid II. Among the participants were representatives of many national political groupings of the empire and those living in exile in Europe. Armenians were represented by six delegates from the Armenian Revolutionary Federation (Dashnaktsyun) and the Reorganized Party of Hunchak.

The present article is an attempt to describe the internal relations among ottoman liberals.

THE FIRST CONGRESS OF OTTOMAN OPPOSITION FORCES IN PARIS AND POLITICAL PARTICIPATION OF ARMENIANS

Arshak Gevorgyan

Organized by Prince Sabahaddin and his brother Prince Lutfullah to settle differences among various political groups opposed to the despotic rule of Sultan Abdülhamid II, the first Congress of Ottoman Liberals took place in Paris between 4 and 9 February 1902. Among the participants were Young Turks living in exile in Europe and representatives of other national political groups of the Empire. Armenians were represented by overall six delegates from The Armenian Revolutionary Federation (Dashnaktsyun) and Reorganized Hunchak Party.

The present article is an attempt aimed to describe the internal relations among Ottoman Liberals.

¹ **Վանանդեան Ա., Յ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 423:**

**ԵԳԻՊՏՈՍՈՒԿ «ՍՈՒՍՈՒԼՄԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՊԱՆԱՆ
ՊԱՏՃԱՆՈՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Դիանա Եղիազարյան

ԵՊՅ, Արևելագիտության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. ղեկ. պ.գ.թ., ասիստ. Ա. Հարությունյան

Էլփոստ՝ dianaeghiazaryan92@gmail.com

Եգիպտոսում 2011 թ. հունվարի 25-ին, «Արաբական գարնան» շարունակության տեսքով, հազարավոր մարդիկ պարբերաբար հավաքվելով մայրաքաղաք Կահիրեի հրապարակներում՝ տապալեցին Հոսնի Մուբարաքի իշխանությունը: Ավելի քան մեկուկես տարի անց՝ 2012 թ. հունիսի 18-ին, Եգիպտոսում անցկացված առաջին հետհեղափոխական ընտրությունների արդյունքում ձայների մեծամասնությամբ նախագահ ընտրվեց «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության թեկնածու Մուհամմադ Մուրսի: Սակայն 2013 թ. հուլիսի 3-ին Եգիպտոսում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում, որի հետևանքով պաշտոնանկ արվեց և ձերբակալվեց նախագահ Մուհամմադ Մուրսի:

Դրանից առաջ Եգիպտոսի զինված ուժերի ղեկավարությունը հայտարարել էր, որ Մ. Մուրսին ունի ընդամենը 48 ժամ՝ երկրում առաջացած ներքաղաքական մեծամասշտաբ լարվածությունը հանգստացնելու համար, որին ի պատասխան նախագահը հայտարարել էր, թե չի պատրաստվում գործել որևէ մեկի թելադրանքով: Վերջապես հուլիսի 3-ին պաշտպանության նախարար Աբդել Ֆաթահ ալ-Սիսին հանդես եկավ հեռուստատեսությամբ՝ հայտնելով նախագահի տապալման, սահմանադրության դադարեցման և երկրի սահմանադրական դատարանի ղեկավար Ադլի Մանսուրին Եգիպտոսի ժամանակավոր նախագահ նշանակելու մասին¹:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տապալվեց օրինական ու ժողովրդավարորեն ընտրված նախագահը, կարելի էր համարել, որ վերջին երկու տարիներին ժողովրդավարական գործընթացները Եգիպտոսում ապարդյուն էին անցել: Սակայն մյուս կողմից էլ, թեև ասվում է, որ Մ. Մուրսին Եգիպտոսի առաջին դեմոկրատապետ ընտրված նախագահն էր, բայց փաստացի այս երկրի բոլոր նախագահներն էլ նախկինում ընտրվել էին դեմոկրատական սկզբունքներով. Նասսերը, Սադաթն ու Մուբարաքը ընտրություններում գրեթե միշտ 80-90 % ձայներ էին հավաքում: Այս առումով Մուրսիին այդքան էլ չի կարելի ժողովրդավարորեն ընտրված նախագահ համարել: Թեև նախագահին իր պաշտոնից հեռացնելու հանրաքվե չեղավ, սակայն ժողովրդի մեծամասնությունն իր ձայնն արտահայտեց՝ Մուրսիի դեմ 30 մլն ստորագրություններ հավաքվելով ու նրա հրաժարականը պահանջելով: Սակայն եթե փորձենք վերլուծել, թե իրականում ինչ էր կատարվել այդ իրադարձությունից առաջ, ապա կհասկանանք այն դրդապատճառները, որոնք Մուրսիին տարան տապալման, չնայած որ նա «դեմոկրատապետ ընտրված նախագահ էր»:

Մուհամմադ Մուրսիի նախագահության շրջանը պատմություն է: Մասսայական բողոքի ցույցերը, որոնք տարածվեցին ամբողջ երկրով մեկ Մուրսիի երդմնակալության մեկամյակի օրերին, և զինվորական ղեկավարության կողմից ներկայացված վերջնագիրը պարարտ հող նախապատրաստեցին Եգիպտոսի առաջին քիչ թե շատ ժողովրդավարորեն ընտրված նախագահի հեռացման համար: Մուրսիի տապալումը նաև «Մուսուլման եղբայրների» տապալումն էր. նրանք էին կանգնած նախագահի հետևում և նրանց ղեկավարները հեռացված նախագահի հետ միասին այժմ կալա-

¹ Մուբարաքի տապալումից հետո կրկին զինվորական ղեկավարությունն էր, որ Եգիպտոսում վերացրեց իսլամիստական «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության գործունեության արգելքը:

նավորված են: Այսպիսով՝ «Մուսուլման եղբայրները» չկարողացան ամրացնել այն ուժը, որը ձեռք էին բերել 2011 թ. հեղափոխությունից հետո:

Այսպիսով, որո՞նք էին «Մուսուլման եղբայրների» տապալման պատճառները:

Նախ և առաջ, «Մուսուլման եղբայրները» կարևորություն չէին տալիս բնակչության առջև բաց ներկայանալուն: Հոսնի Մուբարաքի վարչակարգի տապալումից հետո, եղբայրության ղեկավարությունը հիմնադրեց «Ազատություն և արդարություն» կուսակցությունը, որպեսզի վերափոխի իր քաղաքական թեք՝ ներկայանալով հանրությանը որպես կուսակցություն: Անշուշտ, «Ազատություն և արդարություն» կուսակցությունը կարողացավ կազմել մեծամասնություն և հաղթել խորհրդարանական ընտրություններում: Պատճառն այն էր, որ այդ կուսակցությունը, ի տարբերություն Եգիպտոսում գործող այլ քաղաքական կուսակցությունների, ուներ լավ կազմակերպված կառուցվածք: Սակայն ԱԱԿ-ն, այնուամենայնիվ, չհարձավ ժողովրդին համախմբող ընդգրկուն կուսակցություն: Որքան հնարավոր է շատ քաղաքական խմբակցությունների ինտեգրելու և բաց բանավեճեր ունենալու փոխարեն, այս կամ այն հարցի շուրջ կուսակցության դիրքորոշումները քննարկվում և մնում էին ՄԵ-ի ղեկավար գրասենյակում (մաքթաբ ալ-իրշադ): Թափանցիկության բացակայությունն արտացոլվում էր նաև Մուրսիի ղեկավարման ոճում: Նախագահն անգամ չէր էլ փորձում բացատրել իր որոշումները հասարակությանը: Հաղորդակցվել ցանկանալու պակասը զուգորդվում էր նաև Մուրսիի անխաթիզմատիկ լինելու և նախքան ընտրվելը ժողովրդին հայտնի չլինելու հետ¹:

Երբ նախկին նախագահ Հ. Մուբարաքը հեռացվեց իշխանությունից, ՄԵ-ը ժողովրդավարություն հաստատելու անսպառ և դատարկ խոստումներ էր շռայլում: Սակայն ավելի ուշ նրանք փորձում էին իշխանությունը միմիայն իրենց ձեռքում կենտրոնացնել, իսկ լիբերալ խելացի ու մտածող մարդկանց իշխանությունից անդադար բացառելն արդեն սովորության էր վերածվում: ՄԵ-ը իշխանությունից փորձում էին բացառել նաև զինվորականությանը, և դրա համար ընտրված ժամանակաշրջանը իրոք որ շատ հարմար էր, քանի որ սկզբնական շրջանում հեղափոխականներն ու ընդդիմադիրները համաձայն էին:

Այնուհետև զինվորականության հեռացումը իշխանությունից դարձավ ծրագիր հեռացնելու բոլորին ալ-Ազհարի ղեկավարությունից, դատական մարմիններից մինչև լրատվամիջոցներ և ընդդիմություն: Եվ այս ամենը տեղի էր ունենում տնտեսական սարսափելի անկման պայմաններում: Քաղաքական զիջումների գնալու կամ հաշտեցման եզրեր գտնելու փոխարեն, նրանք դիմեցին իրենց ընդդիմադիրներին ոչնչացնելու սպառնալիքներին կամ էլ նրանց որպես անհավատներ և դավաճաններ պիտակավորելու մեթոդներին: Եղբայրները կարծես իրականության զգացումը կորցրած լինեին՝ ցանկանալով միայն մոտենալ իշխանությանը և դրանից հետո դա սքողել իսլամի քողով՝ իրենց իշխանական լծակները ապահովագրելու համար²:

2012 թ. դեկտեմբերին ՄԵ ճգնաժամի մեջ ընկավ նոր սահմանադրության պատճառով: Դեռևս 2012 թ. մարտից Եգիպտոսում սկսեցին նոր սահմանադրությունը մշակող հանձնաժողով կազմել: Սակայն քանի որ ՄԵ մեծամասնության էր հասել խորհրդարանական երկու պալատների ընտրություններում, փաստացիորեն սահմանադրությունն ամբողջությամբ նրանք գրեցին, քանի որ ի նշան բողոքի՝ մնացած քաղաքական ուժերը հետագայում լքեցին սահմանադրությունը պատրաստող հանձնաժողովը:

Իշխող կուսակցությանն ընդդիմության որևէ հստակ այլընտրանքային նախագիծ հակադրել չկարողանալու պատճառով էր մասամբ ՄԵ-ի հանդավածությունը, որ ընդդիմության հետ ոչինչ կլա քննարկելու: Պատճառներից մյուսն էլ այն էր, որ ՄԵ-ի հիմնական մտահոգությունները գաղափարական էին: Օրինակ, մշակույթի նախա-

¹ <http://massai.ahram.org.eg/News/95636.aspx>, أسباب لسقوط وانتهيار الإخوان في مصر.

² Tariq Alhomayed (the former editor-in-chief of Asharq Al-Awsat), Opinion: The Muslim Brotherhood has failed in Egypt, 24 June, 2013, <http://www.aawsat.net/2013/06/article55306954>.

րարը մտածում էր հանրային հեռուստատեսությամբ կանանց գլուխները փակ տեսնելու մասին, իսկ կրթության նախարարը դպրոցական դասագրքերը լրամշակեց կրոնական շեշտադրումներ ունեցող տեքստերով:

«Մուսուլման եղբայրների» հիմնական սխալներից էր նաև 2012 թ. դեկտեմբերին նոր Սահմանադրությունը շարիաթական նորմերով խմբագրելն ու դրանք հասարակությանը պարտադրելը: Բացի այդ նոր սահմանադրությունն այնպիսի ենթատեքստերով էր ձևակերպված, որ իրավաբանական կրթություն չունեցողը դժվար վերծաներ դրանց տողատակերը¹:

«Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունն իր իշխելու իրավունքը հիմնավորում էր երկնային իրավասությամբ: Նրանց դիրքորոշումը հետևյալն էր. «Քանի որ մենք հաղթել ենք ընտրություններում, մենք կառավարում ենք»: Հետևաբար, երբ եղբայրները հաղթեցին պառլամենտական և նախագահական ընտրություններում, սկսեցին իրենց կամքը թելադրել երկրի քաղաքացիներին, նոր սահմանադրություն կազմել արմատական օրենքների գերակայությամբ և իրենց կողմանկիցներին նշանակել ղեկավար պաշտոններում: Կազմակերպությունից դուրս գտնվող անհատների և խմբակցությունների հետ երկխոսությունն անհնար էր²:

Այս կերպ Մուրսիին վարվեց նաև զինվորականության հետ. Բարձրագույն զինվորական խորհրդի երկու անդամի ազատեց իրենց լիազորություններից, սահմանադրության պատրաստման փուլում զինվորականներին զրկեց ձայնի իրավունքից, սակայն, ինչպես տեսանք, այդպես էլ չկարողացավ հեռացնել «գեներալներին» քաղաքականությունից: Նրանք 1950-ական թթ. սկսած գերակա ուժ էին եզիպտոսում և օգտվում էին իրենց հեղինակությունից:

Մի պահ անգամ այնպիսի տպավորություն էր ստեղծվել, որ Մուրսիին հաջողվեց զինվորականների վերահսկողությունից ազատվել, քանի որ մինչև հունիսի 30-ը զինվորականությունը չխառնվեց երկրի գործերին: Սա մի փոքր զարմանալի էր, քանի որ եթե նայենք Եգիպտոսի պատմությանը, ապա կտեսնենք, որ բանակը միշտ ներկա է եղել երկրում՝ ազդելով ընտրությունների, տնտեսության և այլ ոլորտների վրա: Բայց իրականում Մուրսիի «քաջ» արարքը բանակին հնարավորություն տվեց ժամանակավորապես նահանջելու և այդ ժամանակահատվածում գերագույն իրամանատարությունում հիսունամյա գեներալներին փոխարինող նոր սերունդ մտցնելու, որոնց առաջին ներկայացուցիչը դարձավ Աբդել Ֆաթահ ալ-Սիսին: Այսպիսով, զինվորականությունը որոշակի ժամանակաշրջան հեռանալով և այդ ժամանակն ի նպաստ իրեն օգտագործելով՝ Մուրսիին թույլատրեց իրականացնել իր ծրագիրը, ինչը հանգեցրեց, որ նոր ընտրված նախագահը ժողովրդի աչքում մեկ տարվա ընթացքում հեղինակագրկեց իրեն և իր կազմակերպությանը: Իհարկե, բանակը երբեմն նաև չարաշահում էր իր ուժը, բայց նաև հստակ էր, որ ՄԵ-ի հարձակումները զինվորների, բանկերի, պետական կառույցների, անհատների, էլ չասած քրիստոնեական կառույցների ու եկեղեցիների վրա հաճախակի բնույթ էր սկսել կրել: Եվ փաստորեն Մուրսիին հենց ինքն իր ձեռքով ճանապարհ բացեց նրանց համար, ովքեր հետագայում տապալեցին իրեն:

ՄԵ-ի վերը նշվածի հարցում հաջողության չհասնելու պատճառներից մեկն էլ թերևս այն էր, որ նրանք, գալով իշխանության գլուխ, պետության կարևոր խաղացողների հետ համաձայնության չեկան: Միակ բանը, որը եղել էր իշխանության կիսման վերաբերյալ, զինվորական ղեկավարության հետ պայմանավորվածությունն էր «ջենտլմենական համաձայնագրի» տեսքով: Զինվորականությունն իշխանու-

¹ Samir Khalil Samir, Real democracy for Egypt. The Muslim Brotherhood's Islamist project has failed, 22/08/2013, <http://www.asianews.it/news-en/Fr.-Samir:-Real-democracy-for-Egypt.-The-Muslim-Brotherhood%E2%80%99s-Islamist-project-has-failed-28803.html>.

² Jansen M., Islamic Brotherhood failed to understand the majority of Egyptians rejects fundamentalism, 15.08.2013, <http://www.irishtimes.com/news/world/middle-east/islamic-brotherhood-failed-to-understand-the-majority-of-egyptians-rejects-fundamentalism-1.1495562>.

թյունը փոխանցելիս ճանաչեց քաղաքացիական նախագահին և փոխարձաբար ստացավ նշանակալից ինքնավարություն՝ ըստ «Մուսուլման եղբայրների» առաջարկած նոր Սահմանադրության¹: Եղբայրության ղեկավարությունը հավանաբար միամտորեն հավատում էր, որ զինվորականության հետ համաձայնությունը վերահրկուցություն կսահմանի նաև պետության այլ ինստիտուտների վրա, ինչպես օրինակ ներքին անվտանգության և դատական մարմինների համակարգի: Սակայն սա այդ դեպքը չէր²:

Ներքին գործերի նախարարության նկատմամբ վերահսկողություն չունենալու հետ կապված կազմակերպությանն այդպես էլ չհաջողվեց արագորեն ձեռնարկել անհրաժեշտ փոփոխություններն անվտանգության կառույցներում և կոտրել Եգիպտական ոստիկանության ոչ ֆորմալ կապերն ու կառուցվածքը: Հունվարյան հեղափոխությունից հետո կոռումպացված ներքին գործերի նախարարությունն ու ոստիկանությունն ամբողջությամբ անգործության էին մատնվել, ինչի արդյունքում փողոցային հանցագործությունների թիվը կտրուկ աճել էր: Երկրում հաճախակի դարձած քրիստոնյաների ու մուսուլմանների բախումներին ոստիկանությունը չէր խառնվում. կատարյալ անկարգություն էր տիրում: Սա նույնպես նպաստեց իշխանությունների արագ հեղինակազրկմանը:

«Մուսուլման եղբայրների» տապալման մեջ ուշագրավ է ևս մեկ պատճառ: Գալով իշխանության կազմակերպությունն իր հարաբերությունները չշտապեց լավացնել նաև դատական մարմինների հետ: Ընտրվելուց հետո արդեն Մուհամմադ Մուրսին 2012 թ. հուլիս ամսին հրամանագրեց խորհրդարանի ստորին պալատի՝ ժողովրդական ժողովի վերականգնման մասին որոշում, որը պետք է աշխատեր սահմանադրության ընդունումից հետո մինչև նոր պառլամենտական ընտրությունների անցկացումը: Այս որոշումից հետո, չնայած պառլամենտի լուծարման Սահմանադրական դատարանի որոշմանը, իր գործունեությունը վերսկսեց ժողովրդական ժողովը: Այս հարցի շուրջ բնականաբար բացասական դիրքորոշում ուներ Սահմանադրական դատարանը, որն իր որոշումը ոչ մի կերպ չէր ուզում փոփոխել: Փաստորեն, նախագահ Մուրսին իր հենց առաջին քայլերից մեկով հարված հասցրեց դատական այս մարմնի ինքնասիրությանը:

2012 թ. նոյեմբեր ամսին նախագահ Մ. Մուրսին հրապարակեց երկրի սահմանադրական մի նոր հռչակագիր, որը նրան «հեղափոխության պաշտպանությամբ» զբաղվելու լիազորություն էր տալիս: Հռչակագիրը գործելու էր մինչև վերջնական Սահմանադրության մշակումն ու ընդունումը: Հռչակագրում սահմանադրական հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարացվում էր երկու ամսով, իսկ դատական մարմինները զրկվում էին Սահմանադրական հանձնաժողովն ու խորհրդակցական ժողովները ցրելու լիազորություններից: Երկրի գլխավոր դատախազի նշանակման իրավունքը հանձնվեց նախագահին: Նախագահը նոր դատախազ նշանակեց Թալղատ Իբրահիմին³:

Վերոնշյալ դեպքերը դատական մարմիններում չէին մոռացել և երևի թե հենց դա էր պատճառը, որ դեռևս 2013 թ. մարտին դատավորների կոլեգիան որոշել էր արգելել «Մուսուլման եղբայրներ» շարժման գործունեությունը Եգիպտոսում: Դատավորների կոլեգիան Եգիպտոսի գերագույն վարչական դատարանին հանձնարարել էր անօրինական ճանաչել իսլամիստական այս շարժումը, որի ներկայացուցիչն էր Եգիպտոսի նախագահ Մուհամադ Մուրսին: Ակնկալվում էր, որ արդեն մարտի

¹ Նախագահն ու ՁՈՒ գերագույն խորհուրդը պայմանավորվեցին, որ ապագայում արտաքին գործերի ու ֆինանսների նախարարությունները կլինեն նախագահի տնօրինության տակ, իսկ ներքին գործերի, արդարադատության և պաշտպանության նախարարությունները՝ զինվորականների:

² Roll S., Egypt: The Failure of the Muslim Brotherhood, Berlin, 02.07.2013, <http://www.swp-berlin.org/en/publications/point-of-view/egypt-the-failure-of-the-muslim-brotherhood.html>.

³ بوابة الأهرام" تنشر النص الكامل للقرارات...مصري يحصن قراراته بإعلان دستوري ويمنع حل التأسيسية والشورى <http://gate.ahram.org.eg/News/275479.aspx>, 22.11.2012.

վերջին Գերագույն վարչական դատարանը կիրառարակի Եգիպտոսում «Մուսուլման եղբայրների» գործունեության անօրինականության վերաբերյալ իր որոշումը: Այս դեպքերը մի կողմ դրած չպետք է մոռանալ, որ զինվորականությունը Մ. Մուրսիին տապալելուց հետո հենց դատական մարմնի ներկայացուցիչ Ադլի Մանսուրին նշանակեց ժամանակավոր նախագահ:

Եգիպտոսում սեպտեմբեր ամսին դատարանն արգելել էր «Մուսուլման եղբայրների» գործունեության բոլոր տեսակները և հրաման էր արձակել կազմակերպության ունեցվածքի բռնագրավման մասին ընդլայնելով Եգիպտոսի զինված ուժերի աջակցությամբ գործող կառավարության արշավը՝ ուղղված արդեն տապալված նախագահ Մուհամմադ Մուրսիի գլխավորած կազմակերպությունը թուլացնելուն:

Մե-ի տապալման պատճառներից հաջորդն էլ այն էր, որ վերջիններս անկարող գտնվեցին Եգիպտոսում միավորել իսլամական ճամբարը: Սալաֆիների ալ-Նուր կուսակցությունը երկրորդ ուժն էր, որը հավաքել էր պառլամենտական ընտրություններում քվեների 22 %-ը: Այն ժամանակից, երբ կուսակցությունը սկսեց զարգանալ, սկսեց մեծապես իրեն զատել Եղբայրությունից և ԱԱԿ-ից: Թեև ալ-Նուրն ըստ իր սոցիալ-քաղաքական դիրքերի ավելի արմատական էր, այն ցուցաբերում էր ավելի մեծ պատրաստականություն ընդդիմության հետ կապեր հաստատելու հարցում: Կուսակցությունը չէր մասնակցում հակամախազահական ցույցերին, սակայն հստակորեն հորդորում էր Մուրսիին նոր ընտրություններ անցկացնել: Ամեն դեպքում իսլամական ճամբարը բաժանված էր, և իսլամիստական Մե կազմակերպությունը քաղաքական դաշտում չունեւ օժանդակող ուժ:

Քննադատելով «Մուսուլման եղբայրներին»՝ մամուլում հաճախ էր շրջանառվում «Իխվանականացում» («Եղբայրականացում») տերմինը, որը նշանակում էր երկրի բոլոր հաստատություններում, հատկապես՝ պետական սեկտորում «Մուսուլման եղբայրների» հետ դաշնակցող պաշտոնյաներին հիմնական պաշտոններում նշանակելը: Ջինվորական հեղաշրջումից մոտ մեկ ամիս առաջ էր, որ իրենց զբաղեցրած պաշտոններից սկսեցին ազատվել Եգիպտոսի կառավարության հրատարակչական գործակալության տնօրեն Ահմեդ Մեգահեդը, Ազգային գրադարանի տնօրեն Իման Էգելեդդիինը, Մշակույթի նախարարության արխիվային նյութերի և գրադարանի բաժնի վարիչ Խալեդ Ֆահմին և այլք: Այս դեպքերը փաստում էին այն մասին, որ Եղբայրները ձգտում էին ոչ միայն սահմանադրությունն իրենց օրենքներով հարստացնել, այլև արդեն փորձ էին անում ազգային արժեքները, հատկապես ազգային արխիվներն ի նպաստ իրենց փոփոխել, իսկ որոշ կարևոր ձեռագրեր կարող էին ընդհանրապես վերացնել: Խալեդ Ֆահմինի խոսքով՝ նրանք արդեն սպառնում էին Եգիպտոսի ինքնությանը, և, բարեբախտաբար, այս գործընթացը ժամանակին կանգնեցվեց¹:

«Մուսուլման եղբայրների» հիմնական նպատակը հանուն Ալլահի ընկնելն էր լիբերալ ընդդիմության և զինվորականության դեմ Ջիհադն իրականացնելու ժամանակ: Եվ եթե նրանց բարձրագույն հույսը հանուն Ալլահի մահանալն էր, ապա մնացած ամեն ինչ անկարևոր էր դառնում: Սակայն այս ամենը կազմակերպողներն ամեն դեպքում երկչոտաբար թաքնվում էին պալատներում և այնտեղից պայքարի կոչեր սփռում հասարակ բնակչության շրջանում՝ հորդորելով գալ ու մարտիրոսվել Եգիպտոսում:

Այս առումով ևս Մուրսին որոշ սխալներ թույլ տվեց: Նա իրեն պահում էր դեմոկրատապես ընտրված բռնապետի պես, որի վառ օրինակը սահմանադրությունը շարիաթական (իսլամական օրենքներ) նորմերի համաձայն կազմելն էր, որը չէր հարգում կանանց իրավունքները, բազմակարծությունը, փոքրամասնություններին, չէր հարգում ոչ մուսուլմաններին, չէր համագործակցում երիտասարդության հետ:

¹ Hersh J., The Battle of the Archives: What Egypt's Intellectuals Lost, 04.09.2013, <http://www.newyorker.com/online/blogs/newsdesk/2013/09/the-battle-of-the-archives-in-egypt.html>.

Հանրային կապերի զարգացման մեջ նրանց փորձի պակասը նույնպես խաղաց Մե-ի դեմ: Մե-ը հետաքրքրված չէին ժամանակակից երկիր կառուցելու մեջ, քանի որ հավատացած էին, որ կրոնը վտանգի մեջ է և որ «իսլամն է միակ լուծումը»:

«Մուսուլման եղբայրները» տասնամյակներ շարունակ դաստիարակվել էին աշխարհում ամենուր «խալիֆայությունը վերականգնելու» ծրագրով, որը պետք է վերադարձներ իսլամի ուժն ու գեղեցկությունը¹: Մե-ի ղեկավարության նպատակն էր իրենց վարկածի համաձայն եգիպտոսը դարձնել «իսլամական պետություն», որը հիմնված կլիներ այնպիսի կառավարական մոդելի վրա, որը հաստատել էր Մուհամմադ մարգարեն Մեդինայում դեռ 7-րդ դարում: Մուսուլմանական օրենքները և շարիաթը պետք է լինեին երկրի օրենսդրության հիմքը, կրոնական գաղափարները պետք է թելադրեին բարոյականությունն ու հասարակական վարվելակերպը: Բացի այդ եգիպտոսը պետք է դադարեր ազգային պետություն լինելուց և վերածվեր իսլամական խալիֆայության: Մինչդեռ եգիպտացիները պնդում էին, որ իրենց երկիրը պետք է մնա քաղաքացիական և բազմակուսակցական պետության դիրքերում: Սակայն եղբայրները, գալով իշխանության գլուխ, չհասկացան, որ երկրի բնակչության մեծամասնությունը պատկանում է «քաղաքացիական» ճամբարին, և շատերը դեմ են դիմադրությամբ արմատականների «ճամբար» տեղափոխվելուն:

Մե փորձում էր օգտվել կրոնի առավելություններից՝ այն որպես դիմակ օգտագործելով: Նրանք համարում էին, որ եթե մարդիկ չեն աջակցում իրենց քաղաքականությանը, ապա չեն հավատում Ալլահին: Եգիպտոսի նախկին նախագահ Մուհամմադ Մուրսիի կառավարման առջև խնդիր էր դրված իշխանությունը կենտրոնացնել մեկ՝ այսինքն՝ հենց իր սեփական ձեռքում: Եվ հենց սա էլ հանգեցրեց ժողովրդի դժգոհությանը: Նախորդող տասներկու ամիսների ընթացքում ժողովորդը նախագահի ցանկացած նոր որոշում ընկալում էր դեպի ամբողջատիրությանն ուղղված գործողություն, որին պատասխանում էր ցույցերով և իշխող վարչակարգի կողմնակիցների դեմ բախումներով²:

«Նրանք հարյուրներով հավաքվում էին մզկիթների շուրջ իրենց կարևորությունը ցույց տալու ու կողմնակիցներ հավաքելու համար: Երբեմն ուրբաթօրյա աղոթքների ժամանակ շեյխը փորձում էր ստիպել մարդկանց աջակցել Մե-ին, բայց ժամանակակից մուսուլմանները այլևս չեն հավատում կեղծ խոսքերի և այն համոզումներին, որ աջակցել Մե-ին մշանակում է աջակցել իսլամին: Մե կորցրել է քաղաքացիների համակրանքը՝ կրոնը օգտագործելով մարդկանց հավաքագրելու համար»,- ասել էր շարքային եգիպտացիներից մեկը³:

«Մուսուլման եղբայրները», իհարկե, իսլամիստական ծրագիր ունեին և սա արտահայտվում էր եգիպտոսում քրիստոնեական համայնքի, հատկապես՝ ղապտիական եկեղեցիների վրա հարձակումներով: Այս իսլամականացմանը, սակայն, դեմ էին ոչ միայն քրիստոնյաները, այլև մուսուլմանները: Անգամ ալ-Ազհարի մուսուլմանները, որոնք սկզբնական շրջանում գումարներ էին ստացել Կատարից, որպեսզի թույլատրեն Մե-ին քարոզել իրենց մզկիթներում, արդեն դեմ էին եղբայրությանը:

«Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը, իր ողջ պատմության ընթացքում լինելով ազելված կազմակերպություն, գրեթե միշտ երկդիմի քաղաքականություն է վարել: Չպետք է մոռանալ, որ Մե հիմքը հակաարևմտականությունն էր, սակայն գալով իշխանության՝ նրանք այդ ամենը մոռացան ու բանակցում էին անգամ Իսրայելի հետ: Այս ամենը նույնպես նպաստեց, որ կազմակերպությունը մեկ տարվա ընթացքում էլ ավելի կորցներ իր վարկը սեփական ժողովրդի աչքում:

¹ Ennaji M., Why Did the Muslim Brotherhood Fail in Egypt?, 27.08.2013

<http://www.morocoworldnews.com/2013/08/102217/why-did-the-muslim-brotherhood-fail-in-egypt/>

² 06.07.2013, سقوط الإخوان المسلمين,

<http://www.aawsat.com/leader.asp?section=3&article=735132&issueno=12639#.UmzS8nA5mSq>

³ Daftari L., Muslim Brotherhood's bid to scapegoat Christians failing, say Egyptians, 25.08.2013

<http://www.foxnews.com/world/2013/08/25/muslim-brotherhood-bid-to-scapegoat-christians-failing-say-egyptians/>

Մեզ գինվորականների ղեկավարած ժամանակավոր կառավարությունից ժառանգել էր խորտակված տնտեսություն: Աճցումային շրջանի 17 ամիսների ընթացքում տնտեսությունն էլ ավելի էր վատթարացել, իսկ չմարված արտաքին պարտքն գնալով ավելի էր մեծանում, ինչը դրդում էր գազ արտադրողներին կրճատել դեպի եգիպտոս ուղղված փոխադրումները, սառեցնել ներդրումները և դանդաղեցնել տեղական գազի արտադրությունը: Հեղափոխությունից հետո քննարկվում էր Միջագային արժուքային հիմնադրամից վարկ վերցնելու հարցը, սակայն դա այնքան ձգձգվեց, որ հիմա էլ ՄԱՀ-ին վախեցնում է երկրի անկայուն վիճակը¹: Հունիսի 30-ի հեղաշրջումից հետո եգիպտական ֆունտի արժեքը զգալիորեն անկում էր ապրել²:

Մե-ի տապալման պատճառներից կարելի է համարել նաև ժողովրդի հիասթափությունն ու իրավիճակից հոգնելը: Սա իրականում շատ ավելի լուրջ պատճառ է, քան կարելի է կարծել, քանի որ իր կյանքում մի բան դեպի լավը փոխելու ձգտումը մարդկային բնույթ է, որի դեմ անգոր է ամենախիստ բռնապետությունն անգամ: Իսկ մարդիկ այս երկրում արդեն հոգնել էին անընդհատ բախումներից, կռիվներից, ցույցերի ելած բազմահազարանոց մարդկանց երթից, որոնք մեծ խցանումների պատճառ դառնալով ուղղակիորեն անհնար էին դարձնում հանգիստ տեղաշարժը, մարդիկ հոգնել էին էներգետիկ ճգնաժամից, երբ երկրի բազմաթիվ վայրերում բախումների հետևանքով խաթարվել էին հոսանքամատակարարման համակարգերը, ինչը նույնպես լրացուցիչ անհարմարություններ էր բերում եգիպտացիներին: Եգիպտոսում ամենօրյա ցույցերի պատճառով երթևեկությունն ուղղակի պայթում էր, և մարդիկ հոգնել էին այս ամենից: Երկրի տնտեսության կարևոր ստորաբաժանում հանդիսացող զբոսաշրջությունը պարզապես մահանում էր երկրի անկայուն վիճակի և նոր մտցված մուսուլմանական օրենքների պատճառով³:

Երկրում ապրանքների գինը գնալով աճում էր, ոչ մի գործազուրկ աշխատանք չէր գտնում: Վերջին շրջանում հատկապես սուր բնույթ էր կրել խոսքի ազատության սահմանափակումը, երբ ՁԼՄ-ներին ու լրագրողներին դատապարտող հոդվածների համար սպառնում էին և տանում դաժան հարցաքննությունների:

Մե-ը շատ քիչ բան արեց հասարակության համար, որը ցանկանում էր տնտեսության և գնային բարեփոխումներ, նոր աշխատատեղեր, քաղաքական ճգնաժամից դուրս գալու ճանապարհներ, չկոռունկացված պետական հաստատություններ և վերջապես՝ խաղաղ կյանք: Սրանցից ոչ մեկը Մե իրականում չարեց:

«Մուսուլման եղբայրների» ծրագիրը Եգիպտոսում տապալվեց, և եղբայրությունը երկար տարիներ այս տապալման արդյունքները կզգա իր մաշկի վրա: Ներկայումս Մե-ի իշխանությունից հեռացումը և արգելումը Եգիպտոսում իսլամիստներին դրդում է դիմել պետության դեմ զինված արյունահեղ պայքարի, շատ դեպքերում անգամ ահաբեկչական գործողություններ են ծրագրվում երկրի այս կամ այն հատվածում, որոնց արդյունքում ամեն օր լինում են բազմաթիվ զոհեր ու վիրավորներ:

Ամփոփելով վերոնշյալը՝ պետք է նշել, որ իրենց տապալման մեջ հիմնականում հենց իրենք՝ Եղբայրներն էին գլխավոր մեղավորը, քանի որ առիթ տվեցին իրենց հակառակորդներին կառչել իրենց իսկ գործած սխալներից: Եղբայրները որոշել էին Եգիպտոսը կառավարել խմբային մտածելակերպով : Նրանք կառավարեցին այն որպես ընդդիմություն, այլ ոչ որպես քաղաքական իշխանություն, որը միավորում է, այլ ոչ թե առանձնացնում, երկրի իշխանությունը մենաշնորհի չի դարձնում, այլոց չի պիտակում որպես ազգի դավաճաններ ու անհավատներ, և հավատում է, որ կարող է դադարեցնել արյունահեղությունը:

¹ Blair E., Taylor P., Perry T., How the Muslim Brotherhood lost Egypt, Cairo, 25.07.2013
<http://www.reuters.com/article/2013/07/25/us-egypt-mistakes-specialreport-idUSBRE96007H20130725>

² Հունիսին ինֆլացիան կազմում էր 9.75 %:

³ Blair E., Taylor P., Perry T., How the Muslim Brotherhood lost Egypt.

ПРИЧИНЫ ПРОВАЛА ОРГАНИЗАЦИИ «БРАТЬЯ-МУСУЛЬМАНЕ» В ЕГИПТЕ

Диана Егиазарян

Президентство Мухаммеда Мурси в Египте уже вошло в историю. Массовые митинги протеста, распространившиеся по всей стране в дни инаугурации Мурси, и ультиматум военных сил подготовили плодотворную почву для свержения первого избранного народом президента Египта. Исследуя эту политическую ситуацию, мы проанализировали причины падения власти Мурси. Показав, что провал Мурси является также и провалом организации «Братья-мусульмане», мы попытались также обнаружить те ошибки организации «Братья-мусульмане», в результате которых ее руководители вместе со свергнутым президентом сейчас находятся под арестом.

ON THE REASONS OF COLLAPSE OF THE “MUSLIM BROTHERHOOD” SOCIETY IN EGYPT

Diana Yeghiazaryan

The period of reign of Mohammad Morsi in Egypt has already passed. Mass protests that spread across the country on the day of Mohammad Morsi's reign anniversary and the ultimatum by the military leadership created a basis for the removal of the first somewhat meant democratically elected President of Egypt. The author has made an attempt to analyze the events and to reveal the reasons of failure of Morsi's power. Indicating that Morsi's failure also meant the collapse of “Muslim Brotherhood”, the author has also made an attempt to disclose the omissions by “Muslim Brotherhood”, which led to the removal of the organization's leaders along with the President. Currently they are arrested.

ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1919 թ.)

Էդգար Էլբակյան

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ. ք.գ.թ., դոց. Ռ. Մելքոնյան

Էլփոստ՝ elbakyan.edgar@gmail.com

Մուստաֆա Քեմալը ծնվել է 1881 թ. մայիսի 19-ին Սալոնիկում: Հայրը Ալի Ռըզա էֆենդին էր՝ նախկին աստիճանավոր, իսկ այնժամ՝ փայտանյութերի առևտրական, մայրը՝ Ջյուբեյդա հանընդ¹: Հաֆիզ Մեհմեդ էֆենդու դպրոցն ավարտելուց հետո կրթությունը շարունակել է Շենսի էֆենդու նախնական դպրոցում, որտեղ ուսանել է դպրոցի հիմնադիր Շենսի էֆենդու (*Semsi Efendi*)² անմիջական առաջնորդությամբ: 1896 թ. ուսման է անցել Մանասթըրի զինվորական դպրոցում՝ զուգահեռաբար սովորելով ֆրանսերեն: Գերազանցությամբ ավարտելով Մանասթըրի դպրոցը՝ 1899 թ. մարտի 13-ին ընդունվել է Կ. Պոլսի բարձրագույն զինվորական ուսումնարան, ապա գլխավոր սպայակույտի ակադեմիա, որն ավարտել է 1905 թ. հունվարի 11-ին՝ գլխավոր շտաբի կապիտանի աստիճանով:

Դրանից անմիջապես հետո նա ձերբակալվել է Աբդուլ Համիդի ռեժիմի դեմ ելույթ ունենալու մեղադրանքով և ուղարկվել Դամասկոս՝ 5-րդ բանակ³: 1906 թ. հոկտեմբերին հիմնել է «Հայրենիք և ազատություն» (*“Vatan ve Hürriyet”*) կազմակերպությունը⁴:

Քեմալը շուտով կապերի մեջ է մտել երիտթուրքերի հետ և գաղտնի հաճախել Սալոնիկում գտնվող նրանց կազմակերպությունները: 1907 թ. ստացել է մայրի կոչում և տեղափոխվել Սալոնիկ: Այստեղ էլ Քեմալը և իր ընկերները իրենց հիմնած «Հայրենիք և ազատություն» կազմակերպությամբ մտնում են Սալոնիկում գործող «Միություն և առաջադիմություն» (*“İttihat ve terakki”*) կուսակցության կազմի մեջ⁵: Ինքը՝ Քեմալը նույնպես 1908 թ. փետրվարից «Իթթիհատի» անդամ էր (անդամության համարը՝ 322)⁶:

1908 թ. հուլիսի 23-ի սահմանադրության հռչակումից հետո՝ նույն տարվա դեկտեմբերի վերջերին, հասարակական և քաղաքական հարցերը և անվտանգության հիմնախնդիրները քննության առնելու համար «Իթթիհատի» կողմից ուղարկվել է Տրիպոլիտանիա⁷: 1909 թ. մարտ-ապրիլին Աբդուլ Համիդի տապալման ժամանակ Քեմալը մասնակցել է Կ. Պոլսի վրա Մակեդոնիայում գտնվող թուրքական բանակի կատարած հարձակմանը՝ ենթակայությամբ Մահմեդ Շևքեթ փաշայի:

1910 թ. սեպտեմբերի 12-18-ին մայր Սելահեդդին բեյի հետ միասին՝ որպես դիտորդ, մասնակցել է Պիկարդիայում մարշալ Ֆոշի ղեկավարությամբ կազմակերպված զորական ցուցադրություններին⁸:

¹ Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007, էջ 190: Özel M., Atatürk, s. 9:

² Շենսի էֆենդին (1852-1917թթ.) արմատներով հրեա օսմանյան ուսուցիչ է: Իրական անունն է Շինոն Ցվի: 1871 թ. թուրքերենի ուսուցչություն է արել Սալոնիկում բացված արտասահմանյան մասնավոր դպրոցում: 1872 թ. հիմնադրել է վերը հիշատակված նախակրթարանը: Սալոնիկը հույների ձեռքն անցնելուց հետո գաղթել է Ստամբուլ, որտեղ նշանակվել է նախնական կրթության հարցերով տեսուչ: Մահացել է 1917 թ. Ստամբուլում (Özcan M., Atatürk’ün İlk Öğretmeni Şemsi Efendi, Atatürk Araştırma Merkezi Dergisi, c. 7, sayı 20, 1991, s. 331-346):

³ Սահակյան Տ., էջ 190:

⁴ T.C. Milli Eğitim Bakanlığı, Atatürk, Askerlik (1905-1918):

http://mebk12.meb.gov.tr/meb_iys_dosyalar/34/05/382459/icerikler/askerlik-1905-1918_51084.htm sitesinde mevcut.

⁵ Սահակյան Տ., էջ 190-191: Özel M., c. 9:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Özel M., s. 17:

1911 թ. ծառայության է անցել Կ. Պոլսի գլխավոր սպայակույտում: Մասնակցել է Տրիպոլիտանական և Բալկանյան պատերազմներին, իսկ 1913 թ. նշանակվել է Բուլղարիայում Օսմանյան կայսրության ռազմական կցորդ: Այս պաշտոնում 1914 թ. հասել է փոխգնդապետի աստիճանի: 1915 թ. հունվարին հեռացվել է կցորդի պաշտոնից և նշանակվել 19-րդ դիվիզիայի հրամանատար: Այս պաշտոնում ղեկավարել է Դարդանեյի պաշտպանությունը՝ ստանալով գնդապետի աստիճան: 1916 թ. տեղափոխվել է Կովկասյան ճակատ, որտեղ ստացել է բրիգադային գեներալի կոչում: 1918 թ. սկզբին ուղարկվել է Գերմանիա, որտեղ եղել է գերմանական գլխավոր սպայակույտում և արևմտյան ճակատում: Վերադարձից հետո նշանակվել է Պաղեստինի ճակատում կռվող թուրքական 7-րդ բանակի հրամանատար: Օսմանյան կայսրության կապիտուլյացիայի օրերին Քենալը զբաղեցնում էր այդ պաշտոնը¹:

Մուստաֆա Քենալի՝ վերոբերյալ կարճառոտ կենսագրությունը թույլ է տալիս հստակորեն առանձնացնելու մի քանի հանգամանք: Նախ՝ Քենալը իթթիհատական էր և ականատեսն ու ակտիվ մասնակիցն է եղել նախապատերազմյան և հետպատերազմյան շրջանում այդ կուսակցության վերնախավի ներսում ընթացող խմորումների, այդ թվում՝ տարածայնությունների: Երկրորդ՝ նա կուտակել էր ռազմադիվանագիտական և որոշակիորեն նաև՝ պետականաշինական աշխատանքի նշանակալի փորձ, իսկ Ֆրանսիայում և Գերմանիայում եղած ժամանակ հասցրել էր բավարար պատկերացում ձեռք բերել այդ երկրների ռազմական և դիվանագիտական վերնախավներում տիրապետող մտայնությունների մասին²: Ակնհայտ է, որ այս ամենն իրենց կնիքն էին թողնելու Քենալի ներքին (այդ թվում՝ ռազմական) և արտաքին քաղաքականության մշակման և իրագործման վրա:

Օսմանյան կայսրությունը պատերազմից դուրս էր եկել պարտված: Դաշնակիցների, տվյալ դեպքում՝ Անգլիայի կողմից³ պարտադրված Մուղրոսի զինադադարով՝ դաշնակիցները կարող էին ազատորեն ռազմակալել նեղուցները, բացառությամբ որոշ նպատակային խմբերի՝ ամբողջությամբ ցրվում էր օսմանյան բանակը, իսկ օսմանյան նավատորմն ու երկաթուղիները, կապի այլ միջոցները դրվում էին դաշնակիցների տրամադրության տակ: Եթե դաշնակիցների անվտանգությանը վտանգ սպառնար, նրանք իրավունք էին ստանում դիմելու լրացուցիչ ռազմակալման (հոդված 7)⁴: Մուղրոսի զինադադարի ստորագրումից անմիջապես հետո Անգլիան ռազմակալեց Դարդանեյի շրջանը, 7-րդ հոդվածի համաձայն՝ Մոսուլի նավթառատ շրջանը (նույնբեր 1-2), մայրաքաղաք Կ. Պոլիսը և արդեն դաշնակցային մյուս զորքերի հետ՝ նեղուցների շրջանն ամբողջությամբ (նույնբեր 13-15): 1919 թ. մարտին իտալացիները զբաղեցրին իրենց համար թողնված Անթալիայի շրջանը, իսկ մեկ ամիս անց՝ արևմտաանատոլիական⁵ որոշ կղզիներ¹: Ընդհանուր առմամբ

¹ **Սահակյան Տ.**, էջ 191; **Özel M.**, s. 22:

² Սա անթաքույց կերպով ընդունում են նաև թուրք պատմաբանները: Մասնավորապես Օսման Օքյարն իր «Անկախության պատերազմի տարիներին Մուստաֆա Քենալի արտաքին քաղաքականությունը» ըստ էության գիտահանրամատչելի հոդվածում գրում է. «Քենալը զգաց անգլիացիների և ֆրանսիացիների միջև առկա լարվածությունը... և հասկացավ, որ դա լավ առիթ է անգլո-ֆրանսիական դաշնակցությունը քանդելու համար» (**Okyar O.**, İstiklâl Harbi'nde Mustafa Kemal'in dış politikası, Ankara, 2002 (առանձնատիպ «XIII. Türk Tarih Kongresi: kongreye sunulan bildiriler Ankara, 4-8 ekim 1999» ժողովածուից), s. 433):

³ Պուանկարեն այս առթիվ գրում է, որ Ջինադադարի նախագիծն օսմանյան կողմին ներկայացվել էր դաշնակիցների անունից, սակայն Ֆրանսիան և Իտալիան դրա մասին տեղյակ անգամ չէին (**Ձոհրաբյան Է.**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Երևան, 1979, էջ 13):

⁴ **Սահակյան Ռ.**, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921, Երևան, 1970, էջ 39-40: **Gönlübol M., Sar C.**, Atatürk ve Türkiye'nin dış politikası, Ankara, 1990, s. 1:

⁵ «Անատոլիա» եզրը կիրառում ենք ոչ որպես պատմաաշխարհագրական գիտակարգ, այլ հիմնականում որպես ընդունված աշխարհաքաղաքական անվանում խոսքի առարկա հանդիսացող երկրամասերի համար: Ծիշտ նույն կերպ այսօր կենցաղավարում է «Հարավային Կովկաս» եզրը՝ որպես մեր տարածաշրջանի հավաքական երկրաքաղաքական անվանում, այն դեպքում, երբ ոչ հայերս և առավել ևս՝ Արևմտահայաստանը, ո՛չ էլ մասամբ Ադրբեջանն իր բնակչությամբ, աղերսներ չունեն Կովկասի, կովկասյան ազգերի և լեզուների հետ:

1918 թ. վերջ-1919 թ. սկիզբ ընկած ժամակահատվածում Անգլիան իր հսկողության տակ դրեց գրեթե ամբողջ հարավային և հարավարևմտյան Անատոլիան, ներառյալ Կիլիկիան, որը, շուրջ մեկ տարի ռազմակալված մնալով անգլիացիների կողմից, սեպտեմբերի 15-ի անգլո-ֆրանսիական համաձայնագրով հանձնվեց ֆրանսիական ուժերի հսկողությանը (Այնթափի, Ուրֆայի և Բիրեջիկի շրջաններում)²: Իսկ արդեն 1919 թ. մայիսի 15-ին անգլիական, ֆրանսիական և ամերիկյան ռազմաճակատների ուղեկցությամբ հունական զորքը ափ իջավ Իզմիրում, աստիճանաբար զբաղեցրեց քաղաքը և շրջակայքը և, ինչպես նշում է անվանի արևելագետ Բերնարդ Լյուիսը, «հույները հենց սկզբից պարզ դարձրին, որ իրենք եկել են ոչ թե ժամանակավոր օկուպացիայի, այլ մշտական անեքսիայի համար»³:

Այսպիսով, ըստ էության, ոչնչացվում էր Օսմանյան կայսրությունը՝ թուրք ժողովրդի անվտանգության և զարգացման միակ երաշխիքը⁴: Դեռ պատերազմի ավարտական տարիներին, դժգոհ վերջինիս ընթացքից և գերմանական ուժերի կամայական քաղաքականությունից, թուրք ժողովրդի շրջանում նկատվեցին հուզումներ, դասալքության դեպքեր, իսկ արդեն զինադադարից հետո տարբեր շրջաններում հատվածաբար կազմակերպվում էին կոմիտեներ, իրականացվում ցույցեր, մեծ թափ էր առնում բնակչության վերազինումը: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Օսմանյան կայսրության պարտությանն ու Մուղոսի զինադադարին հաջորդած տևական շրջանի ընթացքում Թուրքիայում չկար որևէ կենտրոնական կազմակերպիչ ուժ⁵, որը կկոորդինացներ անջատաբար ընթացող մանր շարժումները, և ինչն ամենակարևորն է՝ չկար միասնական ազգային-քաղաքական կամք՝ պայքարելու Անտանտի դեմ: Ուստի բնավ պատահական չէ, որ երկրի ազդեցիկ հասարակական-քաղաքական շրջանակներում տիրում էր համընդհանուր անտարբերության և խաղաղասիրական մթնոլորտ⁶: Առանձին շրջանակներ՝ սուլթան Մեհմեդ Զ.-ի գլխավորությամբ, կողմ էին վերջնական պայմանագրով Անգլիայի հովանավորությունը ընդունելուն⁷: Մինչ կառավարչապետ Դամադ Ֆերիդ փաշան կրկնում էր, թե «հույսներս նախ Ալլահի՛, հետո Անգլիայի հետ պիտի կապենք»⁸, աշխուժանում էին

¹ Uzel İ., 1919-1923 İtalya'yla İlişkiler, Baskın Oran (ed.), Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, cilt I, 6. Baskı, İstanbul, İletişim Yayınları, 2002, s. 151.

² Սահակյան Ռ., էջ 129:

³ Lewis B., The Emergence of Modern Turkey, 2nd edition, Oxford University Press, 1968, p. 241.

⁴ Մեր խորին համոզմամբ՝ ցանկացած ազգային պետություն (nation-state) տվյալ ազգի կամ կայսրություն՝ տիրոջնային ազգի համար հանդիսանում է քաղաքական կազմակերպման բարձրագույն ձևը և նրա հարատևման միակ կոնստանտ երաշխիքը: Սա հավասարապես վերաբերում է բոլոր ազգերին, բայց առավել ցայտուն դրսևորում է ստանում քոչվոր և զավթիչ ցեղերի պարագայում, որոնց ինքնապաշտպանության բնագոյը մեխանիկորեն մղում է դեպի պետականակենտրոն կազմավորումներ և կենտրոնաձիգ մտածողություն:

Հայոց հայրենիքի տարբեր հատվածներում հայկական պետականության կորստյան հանգամանքով է բացատրվում դրանց աստիճանական հայաթափվելը և օտարվելը, ինչը հետևանք էր վերոնշյալ հաստատուն երաշխիքների բացակայության: Պարզապես հակառակն է թուրքերի մոտ, որոնց հաջողվել է ժողովրդագրական էքսպանսիայի և ռազմական ներուժի արդյունավետ համադրման միջոցով թուրքական պետականության հիմքերը գցել Հայաստանի տարածքում, որտեղ զինադրությունը օսմանյան լծին միշտ ամենատևեղներից է եղել: Կարծում ենք հենց սրանում է հայոց, արաբների և բալկանյան ազգերի քաղաքական ճակատագրերի տարբերությունը, որը հանգեցրեց Արևմտյան Հայաստանի և Արևելյան Հայաստանի մի մասի կորստյան արտաքին առարկայական պատճառների:

⁵ Gönlübol M., Sar C., s. 2.

⁶ Համաձայն չենք խորհրդային թուրքագիտության մեջ առկա այն միտումնավոր թեզերի հետ, թե իբր սուլթանն ու իշխող դասակարգը բացարձակապես անտարբեր էին երկրի հետագա քաղաքական ճակատագրի հանդեպ, և թեմալական շարժման հիմնական և միակ շարժիչ ուժը գյուղացիական շրջաններն էին («СССР и Турция», Москва, 1981, с. 23-24): Կ. Պոլսում իշխող ղեկավար շրջանների շնորհիվ էր նաև, որ Քեմալը հայտնվեց արևելքում, իսկ պարտված Օսմանյան կայսրության հետ վերջնական պայմանագրի կնքումը հետաձգվեց մինչև 1920թ. օգոստոսը՝ կազդուրիչ և բարերար ազդեցություն թողնելով թեմալական ռազմաքաղաքական ուժերի համախմբման համար:

⁷ Okyar O., s. 432:

⁸ Uzel İ., Kürkçüoğlu O., 1919-1923 İngiltere'yle İlişkiler, Baskın Oran (ed.), Türk Dış Politikası..., s. 140:

մյուս շրջանակները, ովքեր կողմ էին ամերիկյան մանդատն ընդունելուն¹: Նկատենք, որ այս երկու կարծիքներն ունեն ակնհայտ նմանություն այն առումով, որ Օսմանյան կայսրության մասնատման փոխարեն դրանցում կենտրոնական դիրք է գրավում վերջինիս ամբողջականության պահպանման գաղափարը: Սրան հակառակ՝ կային նաև Օսմանյան կայսրության մասնատման անխուսափելիության թեզի վրա հիմնվող խմբեր, որոնք կողմ էին կայսրության մասնատմանը և նրա նախկին բաղկացուցիչ մասերի անջատ-անջատ կազմավորմանը և պաշտպանությանը²:

Ահա այսպիսի մի շրջանում էր, որ ակտիվ քաղաքականության և ազգային առաջնորդության ասպարեզ մտավ Մուստաֆա Քեմալը՝ մարմնավորումն ու կենդանի հանրագումարը ամբողջ ԺԹ. դարի և Ի. դարակգրի թուրքական քաղաքագիտական մտքի իդեալների: Նա ժխտեց վերոբերյալ բոլոր երեք տեսակետները՝ հռչակելով. «կան անկախություն, կան մահ»³: Քեմալի քաղաքականության նպատակը դարձավ պահել այն, ինչ հնարավոր էր և ինչ հարկավոր էր. ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունը զբաղեցնում է մոտավորապես հենց այդ տարածքը:

Ինչպես հայտնի և անժխտելի է, Քեմալին Անատոլիա գործուղեցին սուլթանն ու կառավարչապետը՝ վերջինիս պետական գանձարանից հատկացնելով 100,000 թուրքական ոսկի: Քեմալին հանձնարարվեց «նշանակված շրջանի մեջ ... արգելել արքայական ցանկություններին հակառակ խնդիրների առաջացումը», իսկ եթե պարզեցնելու լինենք պալատական վերամբարձ խոսքերը, ապա՝ խոչընդոտելու Արևմտյան Հայաստանի տարածքի անցումը հայկական պետության կազմի մեջ⁴: Դրա համար անհրաժեշտ էր զինական ուժի առկայություն, վերջինիս մոբիլիզացիան: Ազգայնական շարժման բանակի կորիզը կազմեցին Յակուբ Շևքիի 19 հազարանոց և Ալի Իսսան փաշայի 22 հազարանոց զորամասերը⁵: Կարևոր դեր խաղացին նաև պատերազմի վերջում դասալքած և զորացրված թուրք զինվորները, չեթենները, քրդերը և գյուղացիությունը⁶:

Նման ռազմաքաղաքական և երկրաքաղաքական պայմաններում որո՞նք պիտի լինեին Մուստաֆա Քեմալի անդրանիկ քայլերը արտաքին քաղաքականության և դիվանագիտության ասպարեզում: Ինչպես պարզ և դիպուկ է ձևակերպում թուրք պատմաբան պրոֆեսոր Էռել Թելալը. «Անկարայի կառավարությունը պատերազմի ընթացքում ջանացել է օգուտ քաղել միջազգային ասպարեզի բոլոր դերակատարներից»⁷: Օբյեկտիվ պարագաների բերումով այդ դերակատարներից հիմնականը խորհրդային Մոսկվան եղավ:

Դեռևս ապրիլին նախքան Քեմալի Անատոլիա մեկնելը, Մոսկվան թուրք ազգայնական շարժումը որակել էր որպես «առաջին խորհրդային հեղափոխությունը Ասիայում», որն իրենց «կարևոր դաշնակից էր տալիս», իսկ Ազգությունների գործերի կոմիսարիատի «Ազգությունների կյանքը» ամսագիրը պարզորոշ հայտարարում էր, որ «... եթե Թուրքիայում կառավարությունն իսկապես անցնի բանվորների ձեռքը, ապա *Կովկասի ճակատագիրը կարելի է կանխորոշված համարել* (ընդգծումն իմն է – Է.Է.)»⁸: Այսպիսով հստակորեն ուրվագծվում էին այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու էր ռուս-թուրքական համագործակցությունը: Անկասկած, վճռորոշ դե-

¹ Gönlübol M., Sar C., c. 5:

² Atatürk, Söylev (Nutuk), Birinci Cilt, Ankara, 1978, s. 9:

³ Նույն տեղում, էջ 10:

⁴ Րիֆաթ Մ., Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, 1990, էջ 202-204:

⁵ Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), Գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 236:

⁶ Գյուղացիությունը ոչ միշտ էր կամավոր կերպով ընդգրկվում չեթեական կազմակերպությունների մեջ և քեմալական քարոզչությունը շատ հաճախ դիմում էր համոզման և խրախուսման քաղաքականությանը (Սահակյան Ռ., էջ 203):

⁷ Tellal E., 1919-1923 Sovyetlerle İlişkiler, Baskın Oran (ed.), Türk Dış Politikası... s. 156.

⁸ Սահակյան Տ., էջ 199:

րակատարում ունեցավ ընդհանուր թշնամու առկայությունը, բացի այդ՝ ազգայնական թուրքիային օժանդակելով՝ Մոսկվան ապահովում էր իր անվտանգությունը և՛ հարավային սահմաններին, և՛ նեղուցների շրջանում, և՛ նաև Միջին Ասիայում հաշվի առնելով այն մեծ ազդեցությունը, որն այդ տարիներին ունեին թուրք պարագլուխները արևելքի մահմեդականության վրա: Հետագայում Չիչերինն այս մասին ոչ մեկ անգամ է հայտարարել, որ ազգայնական թուրքիայի հետ մերձեցումն իրենց համար եղել է «ինքնապահպանման գործողություն»¹:

Իսկ Անկարային համագործակցությունը թույլ էր տալիս ստանալու նյութական և ռազմական աջակցություն Մոսկվայից, առանց որի անհնար էր պատերազմել, երաշխավորելու գործերը արևելքում՝ դառնալով այնուհետև դեպի արևմուտք, և դուրս գալու դիվանագիտական մեկուսացումից²:

Լենինի հանձնարարությամբ թուրք-բուլղարիկյան շփումները սկսվեցին արդեն 1919 թ. գարնանը Ղրիմի Մահմեդական բուլղարիկյան կենտրոնի միջոցով: Կենտրոնը Կ. Պոլիս ուղարկեց իր գործակալին, որը կապեր հաստատեց մայրաքաղաքում գործող առաջին ընդհատակյա կազմակերպության՝ «Քարաքոլի» հետ: Վերջինս հիմնվել էր իթթիհատականներ Բահա Սաիդ բեյի, Կարա Քեմալի և Կարա Վասըֆի կողմից և նպատակ ուներ կազմակերպելու դիմադրական շարժումն ընդդեմ Անտանտի և այդ հարցում օժանդակելու Մուստաֆա Քեմալին³: Այս խողովակով բուլղարիկներին հաջողվեց անհրաժեշտ տեղեկություն, նյութական օգնություն և գույք առաքել Քեմալին⁴:

Ռուս-թուրքական մերձեցման հաջորդ կարևոր կետը Հավալում եղած օրերին Մուստաֆա Քեմալի հանդիպումն էր խորհրդային պատվիրակության հետ, որտեղ նա հանգամանակից զրույց ունեցավ ապագա ԽՍՀՄ ապագա մարշալ Բուդյոնու հետ: Հունիսի 7-ին կայացած այդ գաղտնի հանդիպմանը մասնակցած «Թեշքիլաթ-ը մահսուսայի» (*“Teşkilat-ı Mahsusa”*)⁵ վերջին ղեկավար, Քեմալի օրոք արդեն քարաքոլական Հյուսամեդիին էրթյուրքն իր «երկու դարերի վարագույրից անդին» (*“İki Devrin Perde Arkası”*) գրքում պատմում է, որ հանդիպման ընթացքում Քեմալն անկեղծորեն խոստացել է բուլղարիկներին, որ Անատոլիայում հիմնվող կառավարությունը լինելու է խորհրդային տիպի, փոխարենը բուլղարիկ ներկայացուցիչները Լենինի անունից օգնություն են խոստացել պատերազմում, ինչպես նաև հանդես գալ (Օսմանյան կայսրությունից - Է.Է.) Հայաստանի, Պոնտոսի և Քրդստանի անջատման դեմ: Հիմնվելով Քեմալի գլխավոր օգնական Ջեմաթ Գյուրերի հուշերի վրա՝ էրթյուրքը գրում է, որ հանդիպման ընթացքում Բուդյոնինին ասել է, որ բավական է, որ «դուք էլ (թուրքերը – Է.Է.) մեր ցանկությունները կատարեք, վերացնեք սուլթանատը և խալիֆայությունը⁶ և կոմունիզմ հռչակեք»⁷: Նախնական պայմանավորվածությունն, այսպիսով, ձեռք էր բերված, և դրված էին համագործակցության հիմքերը:

¹ «Документы внешней политики СССР», т. 9, Москва, 1964, с. 116.

² Tellal E., s. 161-163.

³ Հասկանալի պատճառներով Քեմալն այս շրջանում չէր կարող խզել իր կապերը Իթթիհատի հետ: “History of the Ottoman Empire and Modern Turkey”, V. II, 1977, p 340.

⁴ Սահակյան Տ., էջ 199-200:

⁵ Թեշքիլաթը մահսուսան 1911 թ. էնվեր փաշայի ղեկավարությամբ կուսակցության ներսում ստեղծված գաղտնի կազմակերպություն էր: 1914 թ. օգոստոսի 5-ին վերածվել է Ռազմական նախարարությանը կից պաշտոնական մարմնի: Լուծարվել է 1918 թ. հոկտեմբերի 5-ին կուսակցության հրաժարականի և անդամների փախուստից հետո: Հետագանի է պանիսլամիստական և պանթուրքիստական նպատակներ, պատերազմի տարիներին զբաղվել հակահետախուզական, քարոզչական գործունեությամբ, կազմակերպել և համակարգել հայերիս հանդեպ իրականացված ցեղասպանական միջոցառումները: Անատոլիայում քեմալական դիմադրական շարժման բոլոր ակնառու գործիչները Թեշքիլաթ-ը մահսուսայի անդամներ էին: Կազմակերպության արխիվը ոչնչացված է դեռ նախքան Ստամբուլից երիտթուրք պարագլուխների փախուստը:

⁶ Նկատենք, որ սուլթանատի և խալիֆայության վերացումը առանցքային նշանակություն ուներ մինչև Հնդկաստան պլաններ ունեցող Մոսկվայի համար, քանզի այդ գույգ հանրակարգերը՝ մարմնավորված մեկ անձի մեջ, հսկայական ազդեցություն ունեին աշխարհի մահմեդականության վրա և այդ շրջանում

Ազգայնական շարժման տեսական-հղացքային հիմքերը դրվեցին Երզրունի և Սվազի ժողովներում և իրենց վերջնակետին հասան 1920 թ. հունվարի 28-ին օսմանյան պառլամենտի կողմից ընդունված «Ազգային ուխտում»: Երզրունի համաժողովը հրավիրվեց «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերության» կողմից 1919 թ. հուլիս 23 - օգոստոս 7, իսկ Սվազի համաժողովը՝ «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերության» կողմից 1919 թ. սեպտեմբեր 4-11: Ընդունված բանաձևերի մեջ Օսմանյան կայսրության անբաժանելի մասեր հայտարարվեցին «Արևելյան Փոքր Ասիայի վիլայեթներ» Երզրունի, Սվազի, Դիարբեքրի, Մամուրեթ-ուլ-Ազիզի, Վանի, Բիթլիսի վիլայեթները, դրանց մեջ մտնող «բոլոր անկախ սանջակները», ինչպես նաև Տրապիզոնի վիլայեթը՝ Ջանիկի սանջակի հետ միասին: Ամեն մի տարածքային նվաճում և/կամ միջամտություն կայսրության ներքին գործերին՝ որպես հայկական և հունական պետություններ ստեղծելու փորձ, հանդիպելու էր դիմադրության: Տվյալ հակահայկական և հակահունական դրույթն ավելի թշնամական և որոշակի դարձավ Սվազում ընդունված բանաձևի 2-րդ հոդվածում՝ «մինչև արյան վերջին կաթիլը համատեղ պաշտպանել մեր հայրենիքը ... նրա տարածքի վրա հունական և հայկական պետություն ստեղծելու ձգտումներից»²:

Սվազի համաժողովի ավարտից 9 օր անց դարձյալ նույն վայրում կայացավ Քեմալի երկրորդ կարևոր գաղտնի հանդիպումը, այս անգամ արդեն՝ Մերձավոր Արևելքում ամերիկյան ռազմական առաքելության ղեկավար գեներալ Ջեյմս Դարբորդի հետ³: Ավելորդ չէ նշել, որ Սվազի համաժողովի ժամանակ թե՛ քննարկումների պատճառ էր դարձել ամերիկյան մանդատի հարցը, որի եռանդուն ջատագովներն էին Ստամբուլի պատվիրակները: Քեմալը և նրա մերձավոր համախոհները պնդում էին, որ պետք է որդեգրել «կատարյալ անկախության» ուղին: Քեմալը, սակայն, ակնհայտ դժվարին կացության մեջ էր, քանզի ամեն օր թափվող հեռագրերի տարափի տակ⁴ ստիպված էր ճիշտ կողմնորոշվել՝ միաժամանակ և՛ չչեղվելով անկախության պայքարից, և՛ չկորցնելով ԱՄՆ-ի պես գործոնը՝ որպես հակակշիռ Անգլիային⁵:

Եվ ահա խուսանավելու այդպիսի մի հարմար առիթ էր վերոնշյալ հանդիպումը: Այն տևել է երկուսուկես ժամ և ընթացել թարգմանչի միջոցով: Դարբորդը հարցում է արել շարժման նպատակների և որդեգրած դիրքորոշումների մասին, ինչին Քեմալը պատասխանել է, որ շարժումը Իզմիրի բարբարոսական գրավման հետևանքով կայսրության բոլոր անկյուններում ծագած անջատ-անջատ շարժումները համախմբելու համար է ստեղծվել և նպատակն է պետության ամբողջականության

կարող էին անցնել Բրիտանիայի ձեռքը, որի բնակչության 25% մահմեդական էր (Uzgel İ., Kürkcüoğlu O., s. 141): Իսլամի խաղաքարտը Թուրքիայի հետ հարաբերություններում օգտագործել էր ցանկանում նաև Ֆրանսիան, որտեղ այդ տարիներին հասարակական-քաղաքական շրջանակները ակտիվորեն թմբկահարում էին Ֆրանսիայի՝ «մահմեդական մեծ պետություն լինելը» (**Սահակյան Ռ.**, էջ 66-67): Ազգայնական շարժման և պատերազմի հիմնական առանցքն ու օժանդակությունն ապահովում էր, ինչ խոսք, իսլամիզմը և ոչ թուրքիզմը, ուստի Քեմալն առայժմ զերծ էր մնում կրոնական հանրակարգերի դեմ ուղղված քայլերից և պահպանում էր լոյալությունը սուլթանի հանդեպ՝ ընդդիմանալով միայն կառավարությանը՝ «երկիրը օտարներին հանձնելու համար» (Evans L., United States Policy And The Partition Of Turkey, Baltimore, Maryland, 1965, p. 178):

¹ **Aydoğan E.**, Kliment Yefremoviç Vorosilov'un Türkiye'yi Ziyareti ve Türkiye-Sovyet Rusya İlişkilerine Katkısı, Ankara Üniversitesi Türk İnkilâp Tarihi Enstitüsü Atatürk Yolu Dergisi, c. 39, 2007, s. 338-339; **Ertürk H.**, İki Devrin Perde Arkası, İstanbul, 1964, s. 339; **Хейфец А.**, Советская Россия и сопредельные страны Востока в годы гражданской войны, 1918-1920, Москва, 1964, с. 96-98:

² **Սահակյան Ռ.**, էջ 42-51; **Սահակյան Տ.**, էջ 193-197:

³ **Tevetoğlu F.**, Mustafa Kemal Paşa-General Harbord Görüşmesi Tanık ve Tercümanı, Prof. Dr. Hulüsi Y. Hüseyin (Pektaş), Atatürk Araştırma Merkezi Dergisi, c. 4, sayı 10, 1987, p. 197-207.

⁴ Քեմալի, Կարաբեքիրի և Ռաուֆ Օրբայի համատեղ խորհրդակցության ժամանակ որոշվեց բացառել բոլոր տեսակի մանդատները, իսկ մանդատի անխուսափելիության դեպքում, դիմադրություն ցույց տալ:

⁵ **Aytepe O.**, Milli Mücadele'de Manda Sorunu ve Mustafa Kemal'in Yaklaşımı, Ankara Üniversitesi Türk İnkilâp Tarihi Enstitüsü Atatürk Yolu Dergisi, S 24, 1999-2003, p. 476-483.

պահպանումը և ուղղված չէ երկրի ոչ մահմեդական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի դեմ:

Քննարկվել է նաև Թուրքիայի նկատմամբ ամերիկյան մանդատի հարցը: Հարբորդը հետագայում այդ մասին պատմել է. «Նրանք (թուրքերը, քեմալականները – Է.Է.), մանդատ ասելով, հասկանում են մեր պատկերացումներից արմատապես տարբեր մի բան: Նրանք մանդատը պատկերացնում են որպես մեծ եղբոր օժանդակություն՝ առանց ներքին գործերին և միջազգային հարաբերություններին միջամտելու և հեղինակություն բանեցնելու մի հարաբերություն»¹: Ակնհայտ է, որ Բուդյոննու հետ կայացած հանդիպումը և դեռևս գարնան ամսիներից բոլշևիկների կողմից ստացվող օգնությունը նկատելիորեն ճկուն էին դարձրել Քեմալի արտաքին քաղաքականությունը՝ թույլ տալով նրան մանկրել մանդատի հարցում, ինչն ակնառու է Հարբորդի թողած վկայություններից²:

Ինչպես նշեցինք աշխատանքի սկզբում, Օսմանյան կայսրության շուրջ պտտվում էր երկրաքաղաքական մի բարդ հանգույց, որում հակադրվում էին դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի, պատերազմից չտուժած և հաղթող ԱՄՆ-ի, դեռևս քաղաքացիական պատերազմի տենդով բռնված Ռուսաստանի, արաբական աշխարհի և ինչու ոչ՝ նորանկախ Հայաստանի, Վրաստանի և մահմեդականության շահերը: Շատ հաճախ հենց այս շահերի հատման կիզակետում էր քեմալական դիվանագիտությանը հաջողվում դիվիդենտներ քաղել Թուրքիայի համար: Ասվածի պերճախոս վկայությունն են թուրք-ֆրանսիական հարաբերությունները ազգայնական շարժման տարիներին:

Ֆրանսիայի երկրաքաղաքականությունը դեռևս միջմադարից ավանդաբար կողմնորոշված է եղել դեպի արևելամիջերկրածովյան, հետագայում արդեն նաև՝ օսմանյան շուկաներ: Առաջին աշխարհամարտի շրջանում և Մուդրոսի զինադադարին անմիջապես հաջորդած տարվա ընթացքում էր միայն, որ Ֆրանսիան, տուրք տալով համաեվրոպական երկրաքաղաքական միտումներին, խնդիր ունենալով՝ ապահովելու իր անվտանգությունը կայսերական Գերմանիայից, միացավ Անտանտին և իր մասնակցությունն ունեցավ Օսմանյան կայսրության ժառանգության բաժանման դիվանագիտական գաղտնի ակտերին: Պատերազմի ավարտից հետո, սակայն, երբ Ֆրանսիայի համար դարձյալ անհանգստացնող դարձավ գերմանական գործոնը՝ պայմանավորված տարածքային և ռեպարացիոն հարցերում վերջինիս անզիջումայնությամբ, բրիտանական գործոնը՝ կապված Մերձավոր Արևելքում վերջինիս ազդեցության կտրուկ մեծացման և դրա հետագա հեռանկարների հետ, Ֆրանսիան սկսում է աստիճանաբար հակվել Թուրքիայում տնտեսական նախկին դիրքերը վերականգնելու և Քեմալի հետ համաձայնության գալու ուղեգծին: Այս առումով խիստ բնութագրական են Սվազի համաժողովի նախօրեին ֆրանսիացիների որդեգրած դիրքորոշումը. «... եթե Մուստաֆա Քեմալ փաշան և համաժողովի (Սվազի – Է.Է.) անդամները թշնամաբար չեն գործի Անտանտի տերությունների դեմ, ապա պատճառ չկա համաժողովի գումարումն արգելելու համար»³:

Եվ ահա արդեն 1919 թ. դեկտեմբերին ֆրանսիական իշխանություններն առաջին լուրջ փորձն են անում անջատ համաձայնության գալու Քեմալի հետ՝ համաձայնության, որը «վերջ կտար սիրիական հուզումներին»: Երկու սպաների ուղեկցությամբ Սվազ է մեկնում Սիրիայում և Կիլիկիայում ֆրանսիական գերագույն կոմիսար ժորժ Պիկոն: Նրա նպատակն էր «ստույգ տեղեկություն ստանալ Կիլիկիայի, Փոքր Հայքի ու Քուրդստանի նկատմամբ նրանց (քեմալականների – Է.Է.) ունեցած հավակնությունների մասին»⁴: Ըստ քննվող ժամանակաշրջանի դեպքերին և դեմքե-

¹ Նույն տեղում:

² Հանդիպման վերջում Հարբորդը սեղմել է Քեմալի ձեռքը և ասել, որ եթե ինքը չլիներ ամերիկյան կանոնավոր բանակի զինական, կգար և Քեմալի հետ միասին կհետևեր պայքարի ընթացքին (Tevetoğlu F):

³ Սահակյան Տ., էջ 197:

⁴ Սահակյան Ռ., էջ 74:

րին քաջատեղյակ անգլիացի հեղինակ Քինրոսի՝ Պիկոն ներկայացել է՝ որպես ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ և Քեմալի հետ հանգամանորեն քննարկել է իրենց համատեղ ցանկությունը՝ վերադառնալու ֆրանս-թուրքական բարեկամությանը¹: Թե՛ Կեսարիայում Ալի Ֆուադի հետ կայացած նախնական տեսակցության ժամանակ, թե՛ արդեն Քեմալի հետ զրույցների ժամանակ Պիկոն հայտնում է, որ շուտով Ֆրանսիայում տեղի է ունենալու նախարարների դահլիճի փոփոխություն, և Բրիանի իշխանության գալով ամեն ինչ փոխվելու է²: Երկօրյա բանակցություններից և վիճաբանություններից հետո մշակվում է ֆրանս-թուրքական համաձայնության նախագիծ, որով Ֆրանսիան Կիլիկիան հանձնում էր Թուրքիային, երաշխավորում էր Թուրքիայի անբաժանելիությունը՝ ընդդեմ Անգլիայի, Յունաստանի և Իտալիայի, իսկ Թուրքիան իր հերթին ճանաչում էր Ֆրանսիայի իրավունքը տեղական վարչության և փոքրամասնությունների հովանավորության հարցերում³: Պայմանագրի նախագիծը ապահովելու էր Ֆրանսիայի տնտեսական իրավունքները Կիլիկիայում և արևելյան որոշ շրջաններում: Գիշտ է՝ վերջնական արդյունքի Քեմալ-Պիկո բանակցությունները չհանգեցրին, բայց կարևոր հիմք հանդիսացան արդեն երկու տարի հետո կնքվելիք ֆրանս-թուրքական անջատ պայմանագրի համար: Իսկ բանակցությունների ընթացքը միայն թև տվեց քեմալականներին և նրանց արբանյակներին, որոնք 1920 թ. հունվարին կազմակերպեցին Սարաշի դեմ հարձակումը:

Այսպիսով՝ 1919 թ. Քեմալի ունեցած երեք դիվանագիտական հանդիպումները ունեցան իրենց կարևոր նշանակությունը ազգայնական շարժման առաջին օրերին: Ընդհանուր առմամբ նկատվում է մի առանձնահատկություն. բոլոր երեք դեպքերում էլ Քեմալն առաջ է քաշել թուրքական կողմի «պլան մինիմումը» (կատարյալ անկախություն, Կիլիկիայի վերատիրում և այլն), որոնք կազմել են շարժման կենսական բաղադրամասը, իսկ մնացյալ հարցերում մանևրել է՝ սուլթանության ու խալիֆայության վերացում, կոմունիզմի հաստատում, իրենց նախընտրած ձևով մանդատի ընդունում, Ֆրանսիային արտոնությունների տրամադրում և այլն: Կարող ենք ասել, որ հենց այս հանդիպումների ընթացքում դրվեցին քեմալական արտաքին քաղաքականության հիմքերը, և ուրվագծվեցին դրա վեկտորները:

ЗАРОЖДЕНИЕ КЕМАЛИСТИЧЕСКОГО ДВИЖЕНИЯ И ВНЕШНЯЯ ПОЛИТИКА (1919 ГОД)

Эдгар Элбакян

Статья в общих чертах отображает ситуацию, в которой оказалась Османская империя после сокрушительного поражения в Первой мировой войне и навязанного ей Англией Мудросского перемирия.

Мы подробно изложили внутренние и внешние объективные причины, приведшие к возникновению в Турции Националистического движения. Среди этих причин подчеркивается факт появления греков-христиан на западе, армян-христиан на юге в составе французских войск и на востоке под эгидой новосозданной Республики Армения как стимул, побудивший турецко-исламский мир к вступлению в войну.

В статье рассматриваются первые шаги Мустафы Кемаля на дипломатической арене: тайная встреча с представителем Советской России Будённым, созыв Эрзурумского и Сивасского конгрессов, встреча с американским представителем Гарбордом и прелиминарные переговоры с французским представителем Жоржем Пико. Также

¹ Kinross L., Atatürk. The Rebirth Of A Nation, London, 1965, p. 203.

² Սահակյան Ռ., էջ 77:

³ Նոյն տեղում, էջ 80, 81:

приводится тот факт, что во время этих дипломатических встреч Кемаль всегда ставил «план-минимум» турецкой стороны – полная независимость и суверенитет над Киликией. А в остальном – упразднение институтов халифа и султана, введение коммунистических порядков, принятие американского мандата в выгодном туркам свете, предоставление Франции экономических прав и т.д. – он был не так настойчив, и тем самым не срывал переговоры с названными странами с целью дальнейшего развития отношений с ними.

THE EMERGENCE OF KEMALIST MOVEMENT AND ITS FOREIGN POLICY (1919)

Edgar Elbakyan

The article outlines the state in which the Ottoman Empire found itself after the crushing defeat in WWI and Armistice of Mudros dictated by the British side. The author observes those internal and external objective reasons that led to the emergence of the Nationalist movement in Turkey. Among these reasons the author points out the very fact that the emergence of Greek-Christian army in the west and Armenian-Christian troops in the south (amongst the French army) and army in the East, under the auspices of the newly-established Republic of Armenia, was the main stimulus, provoking the Turk-Islamic world to war.

Mustafa Kemal's first diplomatic steps are correctly scrutinized in the article – the secret meeting with Soviet Russia representative, future marshal of the USSR Budyonny, convocation of the Erzurûm and Sivas congresses and preliminary talks with the French representative Georges-Picot. The author substantiates the thesis, that during these diplomatic meetings Kemal always put forward the so-called “plan-minimum” of the Turkish party (i.e. complete independence, sovereignty over Cilicia), however, dodging over remaining issues of minor importance (abolition of Caliph and Sultan institutions, shaping a communist regime in Turkey, adoption of the American mandate the way Turks preferred, providing the French side with economic privileges in Turkey etc.), thus not cutting talks and guaranteeing the future progress in the relations with the above mentioned countries.

ՅՐԱՆՏ ԴԻՆՔ. ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

Էլինա Միրզոյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, հայցորդ

Գիտ. դեկ.՝ Բ.Գ.Ք., դոց. Ռ. Մելքոնյան

Էլփոստ՝ elina-mirzoyan@mail.ru

Յրանտ Դինքը ծնվել է 1954 թ. սեպտեմբերի 15-ին Մալաթիայում¹: Նա սերուն է հայրական կողմից գյուրունցի Յովհաննես և արաբկիրցի Պայծառ Դինքերի, մայրական կողմից՝ էրզրունցի Անդրանիկ և գյուրունցի Լուսիե Չաքըրների² գերդաստաններից: Յրանտը ավագն էր Սարգիս և Գյուլվարդ Դինքերի երեք որդիներից: Յայրը՝ դերձակ Սարգիսը, Մալաթիայում ճանաչված և հմուտ արհեստավոր էր, որը թղթախաղի հանդեպ թուլություն ուներ³: Նա, թեև ճանաչված և հմուտ արհեստավոր էր, այնուամենայնիվ, դժվարությամբ էր վաստակում ընտանիքի ապրուստը, ուստի 1958-1959 թթ. ստիպված եղավ գնալ Ստամբուլ՝ արտագնա աշխատանքի: Նոր կյանք սկսելու փորձերն ապարդյուն են անցնում, քանի որ Սարգիս Դինքի թղթամուլությունը շարունակվում է նաև Ստամբուլում:

1961 թ. դատարանի որոշմամբ Յ. Դինքի ծնողները ամուսնալուծվում են, դատարանը երեխաների խնամակալությունը հորն է հանձնում: Մայրն այս ընթացքում տեղափոխվում է Արմենակ Չաքըրի՝ Յրանտ Դինքի մորեղբոր տուն: Երեխաները, չջանկանալով մորից անջատ ապրել, տանից փախուստի են դիմում: Խոսքով (Օրհան) և Երվանդ (Լեվենթ) Դինքերը փոքր էին, իսկ Յրանտը «մեծ մարդու նման», ինչպես Երվանդ Դինքն է նշում, իր «տարիքից բարձր գործ է բռնում»՝ կազմակերպում է փախուստը. գուցե դա կյանքի դեմ նրա առաջին ընթուստությունն էր⁴: «Տանից փախուստի դիմած և փողոցներում կորսված երեք եղբայրներ... Ես և եղբայրներս միասին Գուլգափուի փողոցներով շարունակ վագում էինք ու վագում... թե որքա՞ն դա տևեց, չգիտեմ... Վերջապես ոստիկանությունը գտնում է մեզ... Գուլգափուի ձկնորսական պահոցում՝ մի քրոջի մեջ... Երեքս, որքան ուժ ունեինք, փարված մեկս մյուսին, քնած էինք այդտեղ՝ անօթի և ծարավ: Ես յոթ տարեկան էին, Խոսքովը՝ հինգ, Երվանդը՝ երկուս⁵», - գրում է Յրանտ Դինքը:

Այս դեպքից հետո Յ. Դինքի տատը՝ Լուսիեն Չաքըրը, գնում է Գեղիկփաշայի հայ բողոքական եկեղեցու շենքի ներքնահարկում գործող ժողովարան որբանոց-մանկատան տնօրեն Յրանտ Քյուչյուքգյուլգեյլյանին տեսնելու: Վերջինս Թուրքիայի ներքին գավառներից եկած հայ մանուկներին առաջին ապաստան տվողն էր. նա հայ մանուկների փրկության գործը նախաձեռնողն էր: Ժողովարանում ապաստան

¹ Çandar T., Hrant, İstanbul, 2010, s. 29.

² Ժողովարանը հիմնականում Անատոլիայից բերված անտեր հայ երեխաների ապաստան-գիշերօթիկ դպրոց էր, որտեղ նրանք բողոքական կրթություն և դաստիարակություն էին ստանում, թեև կրոնական պաշտամունքը այդքան էլ խիստ չէր կարգադրվում: Մեծ ծիսակարգեր չէին կատարվում, սակայն տնօրենը խիստ վերահսկում էր, որ ժողովարանի ներսում խոսեն միայն հայերեն՝ իրենց մայրենի լեզուն չմոռանալու համար (Çandar T., s. 42-46): Ժողովարանը որբանոցից առավել կարելի է «մանկանց բույն» անվանել, ինչպես ինքը Դինքն էր ասում: Այն որբի, անտերի, փողոցներում մնացած հայ երեխաներին ապաստան տալու, մեկ վայրում ժողովելու և կրթություն տալու վայր էր («Meleklerin mŞjdesi», Agos, 13, 04, 2001): Բարերարները և բարեգործական կազմակերպությունները անսակարկ նեցուկ էին կանգնում պատանեկան այս տուն-դպրոցին: Եվ բարերարների հետ կապված հիշողությունները վառ ու գունավոր էին Յրանտ Դինքի համար: «Գեղիկփաշայի մանկանց բույնի, ուր անցկացրել եմ մանկությունս, ամենանշանավոր, ամենակարևոր և երբեք չմոռացվող հիշողություններից մեկը, - հիշում է Դինքը, - Ամերիկայից ինձ հետ մոտիկից ծանոթանալու և ինձ այցելության եկած բարերար ընտանիքի հետ միասին Ստամբուլ կատարած զբոսանքն էր» («Kafadan atıyorum», Agos, 12 Aralık 1997):

³ «Terzi Haşim'in oğlu Firat», Aksiyon, 22, 02, 2007.

⁴ Çandar T., s. 38-40.

⁵ «Kaybolmayın çocuklar», Agos, 8, 11, 1996.

ստանալով՝ Հ. Դինքը և իր եղբայրները հաճախում են Գեղիկփաշայի հայ բողոքական եկեղեցուն պատկանող Ինջիրդիբի նախակրթարան: Հայրը նպատակ չուներ, որ որդին ուսումը շարունակի, ուստի նրան իր հետ աշխատանքի էր տանում որպես օգնական: «Դերձակ հայրս գիս քովը առաւ որպէս չըրախ (օգնական): Ի՞նչպիսի գործեր կ'ընէի իօրս քով, լաւ չեմ յիշեր... Սակայն գործ մը կար, որ երբեք չէ կորսուած յիշողութենէ: Բազմաթիւ վերարկուներ կը դիզէին ուսերուս վրայ ու ես զանոնք կը տանէի վերջին արդուկի համար ուրիշ գործարան մը: Բազմութեան ուշադրութիւնը կը գրաւէի փողոցին մէջ վերարկուներու տակ կորսուած, բարակ, նիհար տղայ մը, - հիշում է Դինքը, - բայց այդ պահուն բոլորէն ալ գեր... Օր մը Փրկիչս (Օննիկ Ֆըչըջյան) գիս ազատեց... Հօրս հրահանգեց որ գիս իր մօտ տանէր, դպրոց արձանագրելու համար»¹: Օննիկ Ֆըչըջյանը Բեզգիյանի միջնակարգ (բարձրագույն նախակրթարան) դպրոցի երջանկահիշատակ տնօրենն էր: Եթէ չլինէր նա, ապա Դինքի կյանքը, ինչպէս ինքն է գրում, «աղտոտութեան և դժբախտութեան մէջ պիտի ընթանար»², քանի որ նրա պահանջով է, որ Դինքը շարունակել է իր ուսումը. ավարտելով նախակրթարանը՝ նա սովորում է Բեզգիյանի միջնակարգ (բարձրագույն նախակրթարան) դպրոցում³: Այդտեղ սովորելու տարիները նրա համար եղան բնատուր ձիրքերի հասունացման ու ստեղծագործական մտքի կազմավորման արգասավոր մի շրջան. կրթության պակասը լրացվում է ընթերցանությամբ: Նրա գրական նախափորձը մայրերի օրվան մվիրված բանաստեղծությունն էր, որի համար նա 2.500 լիրա մրցանակ էր ստացել⁴:

Օննիկ Ֆըչըջյանի բարեբախտ ազդեցությամբ Հ. Դինքին հնարավորություն է տրվում կրթելու հրապարակախոս-քննադատի իր միտքն ու գեղագետի ճաշակը. այդ տարիներին նա թղթակցում է թուրքական «Ջումհուրիյեթ» թերթին: Երիտասարդ Դինքի գրական դաստիարակության գործում պակաս կարևոր դեր չի կատարել նախակրթարանի ֆրանսերենի ուսուցչուհի Աիդա Թանիքյանը: Վերջինիս տանը հարուստ գրադարան կար: Հրանտը հաճախ էր հյուրընկալվում նրան՝ գրքերից օգտվելու⁵: Դինքը պատանեկության տարիներին նաև զբաղվել է ֆուտբոլով. խաղացել է և՛ Ջարասփորում (Գումգափուում հայկական մարզական ակումբ), ուր ստացել է վկայական, և՛ Թաքսիմսփորում, այնուհետև Գալաթասարայի երիտասարդաց թիմում: Սակայն ուսման հետ չհասցնելով համատեղել՝ թողել է ֆուտբոլը:

Միջնակարգ կրթությունը Բեզգիյանում ստանալով՝ Հ. Դինքը ուսումը շարունակել է Սուրբ Խաչ Դպրեվանքում, այնուհետև ավարտել Շիշլիի լիցեյը: Ապա ավարտել է Ստամբուլի բնական գիտությունների ֆակուլտետի կենդանաբանության բաժինը, իսկ այնուհետ ստանում է նաև փիլիսոփայական կրթություն և հանուն ձախակողմյան քաղաքական պայքարի՝ հրաժարվում է համալսարանական կարիերայի հետ կապված երազանքներից⁶: Նա Թուրքիայում ծավալվող ձախակողմյան շարժման ակտիվ գործիչներից էր: Հայկական համայնքը հայտնի դժվարություններից հեռու պահելու և պաշտպանելու նպատակով Դինքը և Դպրեվանքի իր երեք ընկերները թաքցնելով իրենց հայկական ծագումը դատարանի որոշմամբ փոխում են անունները⁷, և Հրանտը ընտրում է Ֆըրաթ անունը:

1970-1980-ական թթ. Ստամբուլում տարածված կարծիքի համաձայն Դպրեվանքը վերածվել էր «կոմունիստական օջախի»: Հ. Դինքի՝ Դպրեվանքի եղբայր-

¹ «Ալլոս», Ստամբուլ, թիւ 8, 19, 04, 1996:

² Նույն տեղում:

³ <http://www.hurriyet.com.tr/pazar/5850528.asp>.

⁴ Çandar T., s. 75.

⁵ Նույն տեղում, էջ 81-84:

⁶ <http://www.hurriyet.com.tr/pazar/5850528.asp>.

⁷ <http://web.archive.org/web/20070927203957/http://www7.vatanim.com.tr/root/vatan?exec=yazardetay&tarikh=&Newsid=61569&Categoryid=4&wid=94> (Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս “Tibrevank için”, Agos, 8, 05, 1998, “Tibrevanklilik ruhu”, Agos, 29, 11, 1996, “Tibrevank’ın sol yamı”, Agos, 8, 08, 2003).

ներից (ահպարիզ) Օրիան (Արմենակ) Բաքըրը TIKKO¹-ի առաջնորդներից էր, իսկ Դինքն ու նա մտերիմ ընկերներ էին: Երկուսն տիրող քաղաքական պայմանները խորապես գիտակցելով՝ Դինքը մի կողմ է դնում խաղաղ կյանքը և մտնում է հասարակական գործունեության հորձանուտը: Այդ տարիներին, երբ ընդամենը 18 տարեկան էր, նրան շրջապատում «խենթ» էին կոչում, քանի որ քաջ, խիզախ, պոռթկուն, նվիրյալ, անհանգիստ և եռանդուն, ամեն խնդրի համար առաջինը նետվող պատանի էր²:

Թեև Յ. Դինքը ծավալում էր հասարակական ակտիվ գործունեություն, սակայն դա չի խանգարում, որ նա այդ տարիներին դրսևորի իր ռոմանտիկ խառնվածքը Զրանտ և Ռաքել սիրո բարձրակետում: Ռաքել Յաղբասանը Էրմենի Զայկական Վարդո³ աշիրեթի (ցեղախումբ) ցեղապետ Սիամենթ Յաղբասանի դուստրն է: Ծնվել է 1959 թ., Սիամենթ և Դելալ Յաղբասանների 13 երեխաներից մեկն էր: Նա 8 տարեկան էր, երբ մայրը մահանում է, և վերջիններս դժվարին վիճակում են հայտնվում: Քահանա Գյուզելյանը ցեղապետին առաջարկում է աշիրեթի երեխաներին ուղարկել Ստամբուլ՝ հայ-քրիստոնեական կրթություն ստանալու համար: Ցեղապետ Յաղբասանը, օրինակ ծառայելով իր մյուս ցեղակիցներին, համաձայնվում է Ստամբուլ ուղարկել իր 9-ամյա աղջկան: Այնուհետև, երբ Ռաքելը Բալաթայում գտնվող հայկական դպրոցում էր սովորում, Յ. Դինքն այդ ընթացքում դպրոցի պատանիների հսկիչն էր: Նա արտակարգ երաժշտական լսողություն ուներ. շատ էր սիրում և՛ դաշնամուր, և՛ սազ նվագել:

Վարդո աշիրեթը 1978 թ. տեղափոխվել է Ստամբուլ, սակայն անգամ այստեղ ներցեղային սովորույթները, այդ թվում՝ ներքին ամուսնությունները, չեն փոխվում: Սա արտահայտվել է այն ժամանակ, երբ Դինքը ցանկություն է հայտնել ամուսնանալու Ռաքելի հետ, ում ճանաչել է դեռևս մանկատնից: Վարդո ցեղի երիտասարդները սպառնում են Դինքին և պահանջում հրաժարվել այդ մտքից: Զարցը կարգավորվում է միայն Զայոց պատրիարք Շնորհի Գալուստյանի միջամտությամբ: Նա անձամբ է ցեղապետ Սիամենթից աղջկա ձեռքը խնդրում, և կրոնասեր հայր չի կարողանում մերժել բարձրաստիճան հոգևորականին⁴: Զրանտ և Ռաքել Դինքերը ունենում են երկու դուստր և մեկ որդի՝ Պայժառ (Դելալ), Արարատ (Արատ) և Սերա⁵:

¹ «Թուրքիայի բանվորների և գյուղացիների ազատագրության բանակ», որը ձախ ծայրահեղական կազմակերպություն է:

² Candar T., s. 105.

³ Վարդո ցեղախումբը սերում էր 4 եղբայրներից: Վարդոն (Վարդան) նրանցից մեկն էր, ում անունով էլ կոչվում է ցեղախումբը: Նրանք Վանի Կրե լ(Գրե/ Գրալ) գյուղի կողմերից էին: Զայկական այս գերդաստանը, որը բնակվում էր Ջիզրե գավառում, Զայոց ցեղասպանության ժամանակ աքսորվել է և ճանապարհին հարձակման ենթարկվելով՝ փախել է Զայաստանի հարավ՝ Իրան-Թուրքիա սահմանի կողքով դեպի Ջուդի լեռ, ապա ապաստանում են այստեղ: Ընտանիքներից մեկը կոչվել է «Մալա Վարդո», այսինքն՝ «Վարդոյի տուն» (<http://www.hurriyet.com.tr/pazar/5850528.asp>): Լեռան վրա ապաստանած ցեղախումբը շուրջ 25 տարի արտաքին աշխարհից մեկուսացված ապրել է այնտեղ՝ տեղյակ չլինելով այդ տարիներում Թուրքիայում, ընդհանրապես աշխարհում տիրող վիճակին: Նույնիսկ տեղյակ չեն եղել, որ փլուզված Օսմանյան կայսրության փոխարեն ձևավորվել է Թուրքիայի Զանրապետություն: Ցեղախումբը զբաղվել է անասնապահությամբ և բազմացել բացառապես ներքին ամուսնություններով: Ցեղասպանությունից շուրջ երեք տասնամյակ հետո միայն հայկական ցեղախումբը համարձակվել է իջնել սարից և ականատես է եղել, որ իրենց նախկին հողերին տիրացել են քրդերը: Ցեղախումբը յուրացրել էր քրդական կենսակերպ՝ հագնելով քրդական տարազ, խոսելով քրդերեն, և պահպանել է ցեղային կյանքի ներփակ բնույթը, մասնավորապես ներքին ամուսնությունները: Եղել են ծայրահեղ կրոնասեր՝ ձգտելով շարունակել քրիստոնեական սովորույթները: Թեև քրդերեն են աղոթել, սակայն քրդական միջավայրում պահպանել են իրենց եթնիկ գիտակցությունը (Տե՛ս Akar R., Cudili Rakelin masalı, Tempo, 25.01.2007, s. 7): «Քրդերեն էինք խոսում, սակայն գիտեինք, որ քուրդ չենք», - մշում է Ռաքել Դինքը (Տե՛ս Candar T., չգ. 121):

⁴ Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Երևան, 2009, էջ 47-48:

⁵ Զրանտ և Ռաքել Դինքերն իրենց երեխաների ամուսնները հայկական են ընտրում, սակայն հայտնի պատճառներով երեխաների իսկ ապահովության համար ամուսնները փոխվում են. Պայժառը (Յ. Դինքի հորական տատի անունով) դառնում է Դելալ (Ռաքել Դինքի մոր անունը, որը քրդական անուն էր), իսկ Սերային Սուրբ Գրքի Սառա անունով են կոչում, Արարատն էլ կրճատվելով դառնում է Արատ (Candar T., էջ 258, 264):

1980-ական թթ. Հ. Դինքը նոր հորիզոններ հղացող արտահայտություններով հասարակության ուշադրությունը գրավում է «Յենի Յուզըլը», «Ձաման» և «Բիր Գյուն» թերթերում անկյուն զբաղեցնելով: 1990-ական թթ. Դինքը Ջուբակ ծածկանվամբ Կ. Պոլսի «Մարմարա» օրաթերթում՝ «Նոր գրքեր» ընդհանուր խորագրի ներքո, ներկայացրել և լուսաբանել է լույս տեսնող բոլոր այն նոր գրքերը, որոնք անդրադարձել են Հայկական հարցին¹, քանի որ «Հայկական հարցը թուրք հրատարակչական մարզէ ներս այդքան ալ ձեռք առնուած ու քննարկուած հարց մը չէր եղած եւ «թապու» մը ըլլալով տեսնուած էր անընդհատ»²:

1996 թ. Հ. Դինքը և իր համախոհ ընկերները հիմնադրում են «Ալօս»* երկլեզու (հայերեն-թուրքերեն) իր տեսակով առաջին շաբաթաթերթը: Այն Դինքի և իր ընկերների կողմից ի սկզբանե հրապարակ իջավ «որպես անխուսափելի ձայն համատարած լռության մեջ»³: Պոլսահայ հասարակական կյանքի կենսական պահանջներով հրապարակ իջած «Ալօսը», ըստ էության, արգասիքն է նրա խմբագրի՝ Հրանտ Դինքի անհատականության, գրողի, քննադատի, վերլուծաբանի նրա եռանդուն ջանքերի, ստեղծագործական ու գաղափարական հղացումների. թերթի նյութերի երկու երրորդից ավելին հեղինակել է ինքը՝ Հրանտ Դինքը:

Սակայն, ինչպես կասեր Արփիար Արփիարյանը, թուրքիայում խմբագիրը պետք է լարախաղացի ճարպկություն ունենա, հակառակ դեպքում կսայթաքի և կջախջախվի: Թուրքական քրեական օրենսգրքի 301 (թուրքականությունը անարգող) հոդվածով երեք անգամ քրեական գործ է հարուցվում Դինքի դեմ: Արդյունքում նա վախվորած աղավնու հոգեվիճակում է հայտնվում. «Այո՛, ես վախվորած աղավնու հոգեվիճակում եմ, սակայն գիտեմ, որ այս երկրում (իմա՝ Թուրքիա) մարդիկ աղավնիներին ձեռք չեն տալիս»⁴, - նշում է Հ. Դինքը: 2007 թ. հունվարի 19-ին խմբագրատան առջև Հրանտ Դինքը քիկունքից կրակոցով սպանվում է 17-ամյա ազգայնամոլ Օգյուն Սամասթի կողմից: Չխորանալով առանձին ուսումնասիրություն պահանջող խնդրի մեջ՝ նշենք այն, որ դատավարությունը դեռ շարունակվում է, և այն տակավին չի բացահայտել իրական պատվիրատուներին:

ГРАНТ ДИНК: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ

Елина Мирзоян

В статье рассматриваются жизнь и деятельность известного армянского журналиста, общественного деятеля и основателя армяно-турецкой газеты «Агос» Гранта Динка. Динк был одним из выдающихся армян в Турции, который стал известен тем, что поднимал в обществе тему геноцида армян, проводившегося турками во время Первой мировой войны. На основе анализа фактов выявлены главные события жизни Динка.

¹ «Մարմարա», Ստամբուլ, 12, 11, 1993:

² «Ալօս», Ստամբուլ, թիւ 22, 30, 08, 1996:

* Պոլսո Յայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը առաջարկում է պարբերականն անվանել «Սելամ» կամ «Մերիաբա», (թուրքերենից թարգմանաբար «բարև» է նշանակում), սակայն գրող Ռուբեն Մաշոյանը առաջարկում է մտածել «Ալօս» բառի շուրջ, որը նույնահունչ բառ է և՛ հայերենում, և՛ թուրքերենում (Çandar T., նշված աշխ., էջ 340):

³ Արթար Չ., Կոչ ներումի, Երևան, 2011, էջ 15:

⁴ “Ruh halimin güvercin tedirginliği”, Agos, 10, 01, 2007.

HRANT DINK: LIFE AND ACTIVITY

Elina Mirzoyan

This article presents the characteristics of life and activity of the Armenian famous journalist, public figure, and founder of the Armenian-Turkish newspaper «Agos» - Hrant Dink. Hrant Dink was one of the most famous Armenians in Turkey, who had become known as one of the authors to raise the issue of the Armenian Genocide by Turks during the First World War. In the article we also emphasize the events of Dink's life based on the analysis of the facts.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՈՒԵՁԻ ԾԳՆԱԺԱՄԻՑ ՅԵՏՈ (1957-1958 ԹԹ.)

Էրիկ Դավթյան

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեռյան

Էլփոստ՝ komitas2010@gmail.com

Մերձավոր Արևելքում 1956 թ. Սուեզի ճգնաժամը զգալիորեն փոխեց ուժերի հարաբերակցությունը: Գնաժամը ցույց տվեց, որ ԽՍՀՄ-ը բոլոր հանգամանքներում աջակցելու է արաբական երկրներին, անգամ զինատեսակների մատակարարմամբ, ինչը լուրջ սպառնալիք էր դառնում ԱՄՆ-ի համար: Վերջինս Մերձավոր և Միջին Արևելքում կարողանում էր իր ազդեցությունը պահպանել միայն Թուրքիայի, Իրաքի, Իսրայելի և մասամբ Իրանի վրա, իսկ մնացածը ուղղորդվել էին դեպի ԽՍՀՄ-ը: Այստեղից էլ բխում է այն կարևոր հանգամանքը, որով տարբերվում են միջազգային հարաբերությունները այս տարածաշրջանում մինչև Սուեզի ճգնաժամը և դրանից հետո: Եթե մինչ այդ թե՛ ԽՍՀՄ-ը, թե՛ ԱՄՆ փորձում էին դիվանագիտական ճանապարհով նվաճել այդ երկրները՝ կնքելով տնտեսական և պաշտպանական ուղորտի պայմանագրեր, ապա 1957-1958 թթ. ԱՄՆ-ն, շատ լավ գիտակցելով, որ տնտեսական ու դիվանագիտական գործոններով անհնար է տարածաշրջանում հաստատել ամերիկյան գերիշխանությունը, դիմեց մի շարք ռազմական ինտերվենցիաների: ԽՍՀՄ ամեն կերպ արաբական երկրներում փորձում էր պահպանելով ազդեցության լծակները, տապալել ամերիկյան ռազմական գործողությունները և հասնել դրանց միջազգային դատապարտմանը:

Ահա այսպիսի միջազգային իրադրությունն էլ ստիպում էր ԱՄՆ-ին մշակելու որոշակի մարտավարություն ԽՍՀՄ դեմ պայքարելու համար, որը և հանդիսացավ «Դալլես-Էյզենհաուերի» դոկտրինան: 1956 թ. դեկտեմբերին պետքարտուղար Ալեն Դալլեսը ԱՄՆ նախագահ Էյզենհաուերին ներկայացրեց իր գեկույցը Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականության մասին, որը և դարձավ նոր դոկտրինայի անկյունաքարը: «Դալլես-Էյզենհաուերի» դոկտրինան պաշտոնապես սկիզբ առավ 1957 թ. հունվարի 5-ին, երբ Էյզենհաուերը ուղերձ հղեց Կոնգրեսին¹: Էյզենհաուերը Մերձավոր Արևելքի երկրներին առաջարկում էր ռազմական և տնտեսական օգնություն՝ «կոմունիզմի սպառնալիքը» վերացնելու համար: Այս դոկտրինայով Դուայթ Էյզենհաուերը ցանկանում էր թուլյլտվություն ստանալ Կոնգրեսից՝ օգտագործելու ԱՄՆ զինված ուժերը Մերձավոր և Միջին Արևելքում այն ժամանակ, երբ ինքը հարմար գտնի²: Նա Կոնգրեսից խնդրում էր նաև 200 մլն դոլար հատկացնել Մերձավոր և Միջին Արևելքի պետությունների տնտեսությունների զարգացման համար:

Դոկտրինան արաբական աշխարհն ընդունեց տարբեր կերպ: 1957 թ. հունվար-փետրվարին Կահիրեում կայացած խորհրդակցությունում Եգիպտոսի նախագահ Նասերը, Սաուդյան Արաբիայի թագավոր Սաուդը, Հորդանանի թագավոր Հուսեյնը, Սիրիայի և Հորդանանի վարչապետներ Ասալին և Նաբուլլահին կտրականապես մերժեցին դոկտրինան, իսկ Լիբանանը՝ նախագահ Շամունի գլխավորությամբ, Իրաքը, Իրանը, Թուրքիան և Իսրայելը կողմ եղան դոկտրինային: Նշենք, որ

¹ «Международные отношения и внешняя политика Советского Союза 1950-1959», под ред. В. Нихамича, II полутом, Москва, 1960, с. 219.

² Էյզենհաուերը այս դոկտրինայի համար որպես բարոյական հիմնավորում ներկայացնում էր այն հանգամանքը, որ Սուեզի ճգնաժամի արդյունքում Անգլիայի և Ֆրանսիայի ազդեցության խարխուլմից հետո առաջացել է «վակուում», որը անհրաժեշտ է «լցնել» ԱՄՆ-ի գերիշխանությամբ՝ տարածաշրջանը կոմունիստական ազդեցությունից փրկելու համար: Տե՛ս «История дипломатии», под редакцией А. Громыко, И. Земскова, В. Зорина, В. Семенова, С. Тихвинского, т. 5, книга 2, Москва, 1979 (այսուհետ՝ «ИД»), էջ 563:

տարածաշրջանի երկրների համաձայնությունը դոկտրինայի հարցում ապահովելու համար ամերիկյան կառավարությունը 1957 թ. մարտի 14-ից հուլիսի 2-ը տարածաշրջան էր գործուղել հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ռիչարդսին: Նրա գործունեության արդյունքում «Էյզենհաուերի դոկտրինայի» հիման վրա ամերիկյան օգնությունը ստանալու համաձայնությունը տվեցին Բաղդադյան պակտի, ՆԱՏՕ-ի երկրները, Իսրայելը, Լիբանանը, Լիբիան, Եթովպիան: Ռիչարդսի միսիան չկարողացավ ստանալ Աֆղանստանի, Եմենի, Սուդանի, Թունիսի, Սիրիայի, Եգիպտոսի և Չորդանանի համաձայնությունը¹: Վերջինիս հարցում շատ բուռն իրադարձություններ ընթացան, քանի որ դոկտրինային միանալու հարցում ամենաուժեղ ճնշումը ԱՄՆ-ն գործադրեց հենց Չորդանանի վրա՝ 1957 թ. ապրիլի 10-ին տապալելով Սուլեյման ալ-Նաբուլսիի կառավարությունը՝ իշխանության բերեց ամերիկամետ Ջաշիմիին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով երկրում ծայր առած դժգոհության ալիքը, Չորդանանը մերժեց նորահայտ դոկտրինան: Հավելենք, որ Չորդանանի նկատմամբ ճնշումների դեմ պայքարի մասին համապատասխան հայտարարություն էր արել ԽՍՀՄ-ը²: Նաբուլսիի կառավարության տապալման կարևոր պատճառներից է նաև 1957 թ. հունվարի 19-ին Եգիպտոսի, Սիրիայի և Սաուդյան Արաբիայի հետ նրա ստորագրած պայմանագիրը՝ Չորդանանին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին³: Այսինքն՝ սրանով Նաբուլսին կարողացավ հրաժարվել անգլիական սուբսիդիայից և անգլիական ազդեցության լծակներից, ինչը չէր կարող չառաջացնել ԱՄՆ-ի վրդովմունքը:

ԱՄՆ-ի կողմից «Էյզենհաուերի դոկտրինայի» առաջաշույնը մեծ անհանգստություն առաջացրեց ԽՍՀՄ-ում, որովհետև խորհրդային կառավարությունը հասկանում էր, որ ամերիկյան իշխանություններն այդքան հեշտ բաց չէին թողնի Մերձավոր Արևելքը և երբեք չէին հաշտվի արաբական մի շարք երկրներում խորհրդային ազդեցության հաստատման հետ: Ուստի խորհրդային արտաքին քաղաքականության առաջնահերթ նպատակը դարձավ խաղաղության ամրապնդման համար միջազգային իրավունքի տեսանկյունից որոշակի երաշխիքների ձեռքբերումը: Այդ նպատակով խորհրդային կառավարությունը 1957 թ. փետրվարի 11-ին ԱՄՆ-ին, Ֆրանսիային և Անգլիային առաջարկեց մի նախագիծ⁴, որով նախատեսվում էր, որ մեծ տերությունները պարտավորվելու են այդ տարածաշրջանում իրենց քաղաքականությունը կառուցել հետևյալ սկզբունքների վրա՝ խաղաղության և անվտանգության ապահովում, կոնֆլիկտների լուծում գերազանցապես խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների միջոցով, չմիջամտել Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ներքին գործերին ու նրանց ինքնիշխանության պահպանում, այդ երկրների անդամակցության բացառում մեծ տերությունների մասնակցությամբ ցանկացած ռազմական բլոկի, տարածաշրջանից օտարերկրյա բազաների վերացում և զորքերի դուրսբերում, երկրներին զինատեսակներ մատակարարելու արգելում, տնտեսական առաջընթացին աջակցության ապահովում՝ առանց որևէ նախապայմանի⁵:

Նախագիծը կազմվել էր այնպիսի ոճով, որ ակնհայտորեն դեմ էր դուրս գալիս ԱՄՆ-ի և Անգլիայի շահերին: Նախագծի համաձայն՝ պետք է բացառվեր ռազմական կառույցների գոյությունը, ուստի և այն ուղղված էր առաջին հերթին Բաղդադյան պակտի դեմ: Վերջինը թերևս ամերիկյան ազդեցության ամենաուժեղ լծակն ու

¹ «Международные отношения и внешняя политика Советского Союза 1950-1959», под. ред. В.П. Нихамича, II полутом, с. 221-222.

² Նույն տեղում:

³ **Չովհաննիսյան Ն.**, Արաբական երկրների պատմություն, հ. IV, Երևան, 2006, էջ 68:

⁴ Պաշտոնական անվանումն է «Մերձավոր և Միջին Արևելքում խաղաղության և անվտանգության և այդ շրջանի երկրների ներքին գործերին չմիջամտության հարցով ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի ու Ֆրանսիայի Ռճակագրի հիմնական սկզբունքներ»: Տե՛ս «ИД», էջ 563:

⁵ Ռճակագրում նաև նշվում էր, որ ցանկացած երկիր, որ ընդունում է վերոհիշյալ պայմանները, կարող է ազատորեն միանալ դեկլարացիային:

տարածաշրջանում նրա դաշնակիցների մի ինստիտուցիոնալ կառույց էր, որի վերացումը ուղղակի բացառվում էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ: Այդ է պատճառը, որ 1957 թ. մարտի 11-ին ԱՄՆ, Ֆրանսիան և Անգլիան պատասխան ցանկում մերժեցին ԽՍՀՄ առաջարկը:

Բաղդադյան պակտի ստեղծումը և «Էյզենհաուերի դոկտրինայի» ի հայտ գալը մեծ լարվածություն առաջացրեց հենց Արաբական թերակղզում: Անգլիայի, Սաուդյան Արաբիայի ու Օմանի հարաբերությունները լարվեցին Բույրամի կոչվող օազիսի համար, որը դեռևս 1955 թ. նվաճվել էր անգլիացիների կողմից՝ նավթային հարստություններին տիրանալու համար: Սաուդյան Արաբիան ամեն կերպ փորձում էր հետ բերել այդ տարածքը, սակայն անգլիացիները դա թույլ չէին տալիս: Դրանից հետո անգլիական զորքերը օկուպացրին Օմանը, որտեղ երկու տարի անց՝ 1957 թ. ամռանը զանգվածային ապստամբություն սկսվեց անգլիական գերիշխանության դեմ¹: Օմանում առաջացած խառնաշփոթը նպաստեց նաև Անգլիայի ու Եմենի հարաբերությունների բարդացմանը և ծայրաստիճան լարմանը²:

1957 թ. սեպտեմբերի 3-ին ԽՍՀՄ արտգործնախարար Գրոմիկոն ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ու Անգլիայի դեսպաններին հանձնեց խորհրդային կառավարության նոտան, որը դատապարտում էր Մեծ Բրիտանիայի գործողությունները Օմանում և Եմենում և որպես խաղաղության հաստատման առաջին քայլ առաջարկում էր 4 պետություններին պաշտոնապես հրաժարվել Մերձավոր և Միջին Արևելքի պետությունների ներքին գործերին միջամտելուց: ԽՍՀՄ անգամ առաջարկեց 1958 թ. մայիսին գումարել չորս տերությունների կառավարությունների ղեկավարների խորհրդակցություն՝ Մերձավոր և Միջին Արևելքում լարվածության թուլացման միջոցների շուրջ քննարկումներ ծավալելու համար:

ԱՄՆ 1957 թ. սկսեց նախապատրաստական աշխատանքներ տանել «Էյզենհաուերի դոկտրինայի» կյանքի կոչելու համար: Առաջին քայլը որոշվեց ուղղել Սիրիայի վրա՝ նպատակ ունենալով այն մտցնել Բաղդադյան պակտի մեջ: Դեռևս 1957 թ. ամռանը ԱՄՆ պետքարտուղարության աշխատակից Լոյ Յենդերսոնը այցելություններ կատարեց Թուրքիա, Իրաք, Չորդանան և Լիբանան: Այցի նպատակն էր ապահովել այդ երկրների աջակցությունը ԱՄՆ-ին Սիրիայի դեմ ձեռնարկվելիք գործողություններում: Յենդերսոնը ամեն կերպ ցանկանում էր համոզել վերոհիշյալ երկրներին, որ Սիրիան մեծ սպառնալիք է իրենից ներկայացնում և անհրաժեշտ է տապալել նրա կառավարությունը՝ «կոմունիստական շարժումը» չեզոքացնելու համար: Յենդերսոնի առաքելությունը հաջողություն ունեցավ միայն Թուրքիայում:

1957 թ. օգոստոսից ամերիկյան դեսպանատունը Դամասկոսում սկսեց աստիճանաբար զարգացնել հակակառավարական դավադրություն, որտեղ հիմնական գործող անձը դեսպանատան ռազմական կցորդ Յովարդ Սթոունն էր, նա կապեր էր հաստատել նախկին բռնապետ Շիշեկլիի և այլ անձանց հետ: Ակտիվորեն աշխատում էր նաև Իրաքում ու Չորդանանում գործող ամերիկյան հետախուզությունը, որը գաղտնի զենք էր ուղարկում ծրագրվող դավադրության մասնակիցներին: Այս ժամանակաշրջանում ԽՍՀՄ բազմիցս հանդես եկավ մի շարք հայտարարություններով՝ պնդելով, որ ամեն կերպ կաջակցի Սիրիային այդ թվում նաև՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի աշխատանքներում³: ԽՍՀՄ կարողացավ ուժեղ ճնշում գործադրել

¹ 1957 թ. օգոստոսի 20-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում արաբական 11 երկրների կողմից առաջարկվեց քննարկել Օմանի անկախության, ինքնիշխանության դեմ ուղղված անգլիական գործողությունների հարցը, բայց հակասությունների պատճառով Անվտանգության խորհուրդը չկարողացավ քննարկել այս հարցը: Տե՛ս «Международные отношения и внешняя политика Советского Союза» 1950-1959, II полутом, с. 225:

² Նույն տեղում:

³ Խորհրդային ղեկավարությունն անգամ հայտարարություն էր տարածել, որ պատրաստ է սեփական զինված ուժերով պաշտպանել Սիրիայի անվտանգությունը «արևմտյան իմպերիալիստներից»: Տե՛ս «ИД», тэ 566:

Թուրքիայի վրա՝ պահանջելով երկու երկրների փոխհարաբերություններում առաջնորդվել փոխադարձ շահով և տարածաշրջանում անվտանգության հաստատման համար խաղաղ համագործակցության սկզբունքով: Սիրիային աջակցելու նպատակով ԽՍՀՄ-ը 1957 թ. հոկտեմբերին տնտեսական և տեխնիկական համագործակցության պայմանագիր ստորագրեց նրա հետ, որը նպատակ ուներ միջոցառումներ ձեռնարկել Սիրիայի տնտեսության զարգացման համար¹:

Սիրիայի նկատմամբ սպառնալիքը ստիպեց նրան միանալ Եգիպտոսի հետ: 1958 թ. փետրվարի 1-ին կողմերի միջև ստորագրվում է պայմանագիր, ըստ որի՝ ձևավորվում էր Միացյալ Արաբական Հանրապետություն (ՄԱՀ), իսկ մարտի 8-ին դրան միացավ Եմենը: Այսպիսով, ստեղծվեց մի դաշնություն, որի անդամները պետք է համատեղ գործեին արտաքին քաղաքականության և պաշտպանության բնագավառներում (այն գոյություն ունեցավ մինչև 1971 թ.): Ի հակակշիռ դրան՝ ԱՄՆ ջանքերով ստեղծվեց Իրաքի և Հորդանանի արաբական դաշնությունը (1958 թ. փետրվարի 14), սակայն տապալվեց ընդամենը մի քանի ամիս անց տեղի ունեցած հեղափոխության արդյունքում²: Ըստ էության՝ երկու ֆեդերացիաներն էլ չժառանգեցին իրենց նպատակին:

Խորհրդային Միության ճնշումը տվեց իր արդյունքները, և Թուրքիան ի վերջո դուրս եկավ Սիրիայի դեմ մշակվող գործողությունների իրականացման ծրագրից:

Զկարողանալով դավադրություն հյուսել Սիրիայում՝ ամերիկյան իշխանությունները որոշեցին անցնել անմիջական ռազմական գործողությունների: Դրա համար առիթ ծառայեց 1958 թ. հուլիսի 14-ին Իրաքում տեղի ունեցած հեղաշրջումը, որի ժամանակ տապալվեց Նուրի Սաիդի միապետական իշխանությունը, սպանվեցին Իրաքի թագավոր Ֆեյսալ II-ը, Նուրի Սաիդը, և երկիրը հռչակվեց հանրապետություն: Ի պատասխան դրա՝ ամերիկյան զորքերը 1958 թ. հուլիսի 15-ին ներխուժեցին Լիբանան³՝ օգտագործելով այն պատրվակը, որ Լիբանանում մայիսից քաղաքացիական պատերազմ էր սկսվել Շամունի ամերիկամետ կառավարության դեմ, իսկ անգլիական կառավարությունը, հուլիսի 16-ին ստանալով Իրաքի հեղափոխությունից սարսափած Հորդանանի Հուսեյն թագավորի օգնության խնդրանք-դիմումը, հուլիսի 17-ին զորքեր մտցրեց Հորդանան: Այս բուռն իրադարձություններին շատ սուր պատասխան տվեց խորհրդային ղեկավարությունը⁴: Վերջինս 1958 թ. հուլիսի 16-ին պաշտոնապես ճանաչեց Իրաքի Հանրապետությունը, ինչպես նաև դատապարտեց անգլիական և ամերիկյան զորքերի ինտերվենցիաները: ԽՍՀՄ 1958 թ. հուլիսի 19-ին առաջարկով դիմեց Անգլիայի վարչապետ Մակմիլանին, Ֆրանսիայի նախագահ Շարլ դը Գոլին և Հնդկաստանի առաջնորդ Զավահարլալ Ներուին՝ կոչ անելով 1958 թ. հուլիսի 22-ին ժնկում հրավիրել կառավարությունների ղեկավարների խորհրդակցություն՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի մասնակցությամբ: Հիշյալ երկրներից դրական պատասխան տվեց միայն Խորհրդային Միության դաշնակից Հնդկաստանը: Ինչ վերաբերում է մնացածներին, Ֆրանսիան, ըստ էության, խուսափողական պատասխան տվեց, իսկ ԱՄՆ և Անգլիան ամեն կերպ փորձում էին

¹ «История стран Азии и Африки в новейшее время», часть 2, под. ред. М. Юрьева, Москва, 1979, с. 295.

² «История международных отношений и внешней политики СССР», т. III (1945-1963) под. ред. В. Трухановского, Москва, 1969, с. 505-506.

³ Ամերիկյան զորքերի ներխուժումը Լիբանան պայմանավորված էր նաև այլ հանգամանքներով. 1958թ. մայիսին երկրում ընդդիմության բուռն ալիք սկսվեց իշխող ամերիկամետ կառավարության դեմ, որը ուղեկցվում էր քաղաքական սպանություններով: ԱՄՆ և Անգլիան փորձեցին հարցը լուծել Անվտանգության խորհրդի միջոցով, բայց դեմ առան ԽՍՀՄ-ի բուռն հակազդեցությամբ: Դրանից հետո ամերիկյան կառավարող շրջանակներում առաջ եկավ Լիբանան զորքեր մտցնելու գաղափարը: Տե՛ս «Международные отношения и внешняя политика Советского Союза 1950-1959», II полутом, էջ 234-237:

⁴ Այն հիմնականում արտահայտվեց 1958 թ. հուլիսի 16-ի և 18-ի բողոքներում: Տե՛ս «История международных отношений и внешней политики СССР», т. III, էջ. 605:

արդարացնել իրենց գործողությունները՝ գտնելով, որ «հարցը կարող է լուծվել Անվտանգության խորհրդի հնարավորությունների շրջանակներում»¹:

Խորհրդային ղեկավարությունը նախկին առաջարկի տապալումից հետո մտցրեց մեկ այլ առաջարկ՝ հրավիրել ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի արտակարգ նիստ զորքերի դուրսբերման հարցի շուրջ: Միևնույն ժամանակ ԽՍՀՄ 1958 թ. օգոստոսի 7-ին Անվտանգության խորհրդում ներկայացրեց մի բանաձև, ըստ որի՝ անմիջապես պետք է դուրս բերվեին ամերիկյան և անգլիական զորքերը Լիբանանից և Չորդանանից: 1958 թ. օգոստոսի 8-ին բացվեց արտակարգ նիստը, որի ժամանակ խորհրդային ղեկավարության տեսակետը ներկայացրեց Գրոմիկոն: Համանման մի առաջարկով էլ հանդես եկան 10 արաբական պետություններ՝ պնդելով դուրս բերել ամերիկյան և անգլիական զորքերը Մերձավոր Արևելքից: ԱՄՆ-ի կողմից հանդես եկավ նախագահ Էյզենհաուերը, ով գտնում էր, որ «իրենք ունեն այդ իրավունքը»²:

ԱՄՆ-ն և Անգլիան ամեն կերպ փորձում էին ձգձգել հարցի լուծումը, իսկ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Մերֆին նույնիսկ բանակցություններ էր սկսել Լիբանանի ազդեցիկ քաղաքական գործիչների հետ՝ ձգտելով կազմել իրենց շահերն արտահայտող նոր կառավարություն: Տեսնելով, որ զորքերի դուրսբերումը հետաձգվում է, Խորհրդային Միությունը նորից դրեց զորքերի շտապ դուրսբերման պահանջը: 1958 թ. հոկտեմբերին ավարտվեց ամերիկյան զորքերի դուրսբերումը Լիբանանից, իսկ նոյեմբերի 2-ին՝ անգլիական էվակուացիան Չորդանանից: Ամերիկյան օկուպացիայի և Շամունի նախագահության ավարտից հետո ԱՄՆ կորցրեց իր ազդեցության լծակները Լիբանանում, քանզի այնտեղ 1958 թ. սեպտեմբերին իշխանության եկավ զեներալ Ֆուադ Շեհաբը, որը հրաժարվեց ընդունել «Էյզենհաուերի դոկտրինը»³:

1957-1958 թթ. միջազգային հարաբերություններում անհրաժեշտ է առանձնացնել Իրաքի հեղափոխությունը, որի արդյունքում իշխանության եկավ անկախ արտաքին քաղաքականության կողմնակից զեներալ Աբդել Քերիմ Քասեմը⁴: Արտաքին քաղաքականության մեջ նրա համար առաջնային էր կտրել հարաբերությունները Արևմուտքի հետ և անհապաղ լավացնել հարաբերությունները արաբական երկրների հետ⁵: Արդյունքը եղավ այն, որ Իրաքը խզեց տարատեսակ պայմանագրերը ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետ⁶: Արևմտամետ արտաքին քաղաքականության վերացման գագաթնակետը եղավ Իրաքի դուրս գալը Բաղդադյան պակտից: Այն հիմնավորապես փոխեց իր արտաքին քաղաքական կուրսը և սկսեց ակտիվ դիվանագիտական հարաբերություններ զարգացնել ԽՍՀՄ հետ: Իրաքի համար առաջնային նշանակություն ունեցավ 1959 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված համաձայնությունը տնտեսական և տեխնիկական համագործակցության մասին, որով փաստորեն պետք է վերակառուցվեր Իրաքի տնտեսությունը՝

1959 թ. ճգնաժամային եղավ Բաղդադյան պակտի համար: Պակտի աստիճանական քայքայումը սկսվեց այն ժամանակ, երբ 1959 թ. մարտի 24-ին Իրաքի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց պակտից դուրս գալու մասին, իսկ հուլիսի 25-ին պակտի մյուս մասնակիցները որոշեցին կազմակերպությունը վերանվանել

¹ «ИД», с. 567:

² Նույն տեղում, էջ 568:

³ **Туганова О.**, Международные отношения на Ближнем и Среднем Востоке, Москва, 1967, с. 95.

⁴ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», VI, Արաբական երկրներ, Երևան, 1974, էջ 8:

⁵ Նույն տեղում, էջ 10:

⁶ Խոսքը 1954 թ. ռազմական և 1957 թ. տնտեսական օգնության վերաբերյալ իրաք-ամերիկյան պայմանագրերի և անգլիական նավթային ընկերություններին կոնցեսիաներ տրամադրելու վերաբերյալ անգլո-իրաքյան համաձայնագրի մասին է: Տե՛ս «Международные отношения и внешняя политика Советского Союза 1950-1959», II полутом, М., с. 247.

⁷ «Международные отношения и внешняя политика Советского Союза 1950-1959», II полутом, М., с. 248:

Կենտրոնական պայմանագրի կազմակերպություն՝ ՍԵՆՏՕ¹ (Central Treaty Organisation), իսկ կենտրոնական մարմինները տեղափոխվեցին Անկարա: Սակայն Սուեզի ճգնաժամը, Լիբանանի և Չորդանանի դեմ ուղղված գործողությունների տապալումը, ազգային-ազատագրական շարժումների ակտիվացումը հանգեցրին ՍԵՆՏՕ-ի խարխիլմանը և հակասությունների առաջացմանը Պակիստանի, Իրանի և Թուրքիայի միջև: Պակտի քայքայումը անթույլատրելի էր համարվում Մերձավոր և Միջին Արևելքում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության թերևս միակ հենարանի վերացման առումով: Այն փրկելու համար ԱՄՆ 1959 թ. մարտի 5-ին երկկողմ ռազմական պայմանագրեր ստորագրեց Թուրքիայի, Իրանի և Պակիստանի հետ, որով ԱՄՆ հնարավորություն էր ստանում այդ պետությունների տարածքը օգտագործել ազատորեն: Սակայն Անկարայում ստորագրված այս համաձայնությունները իրականում չկարողացան փրկել ՍԵՆՏՕ-ի կազմաքանդումը:

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ И ДИПЛОМАТИЯ НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ ПОСЛЕ СУЕЦКОГО КРИЗИСА 1957-1958 ГОДОВ

Эрик Давтян

В статье представлена характеристика международных отношений и проведено сравнение систем баланса сил на Ближнем Востоке до и после Суецкого кризиса. Осью дипломатической борьбы в этом регионе является «доктрина Эйзенхауэра», разработанная президентом США Эйзенхауэром и госсекретарем Даллесом. Приняв Багдадский пакт, США и Великобритания пытаются свергнуть прокоммунистические режимы нескольких стран Ближнего Востока. Однако жесткое противодействие СССР привело американскую интервенцию к полному краху, в результате чего Багдадский пакт потерял свою силу, что привело к созданию СЕНТО.

INTERNATIONAL RELATIONS AND DIPLOMACY IN THE MIDDLE EAST AFTER THE SUEZ CRISIS (1957-1958)

Erik Davtyan

The current research presents the characteristics of the system of international relations in the Middle East before and after the Suez crisis. The «Eisenhower-Dalles» doctrine is considered to be the anchor of the diplomatic struggle of the region. Dwight Eisenhower and Allen Dulles propose an offer of economic and military support to all Arab countries in order to undermine the strong influence of the USSR in the Middle East, especially in Syria, Jordan, Egypt, Lebanon, Oman. The USSR tried to counter the USA in the UN Security Council sessions, presenting its project of regulation process. The failure of the US intervention in Syria, the overthrow of Western regimes in Lebanon and Iraq also caused the annihilation of the Baghdad pact and the creation of a new organisation - CENTO.

¹ Անվան նման վերափոխումը բացատրվում էր նրանով, որ այն պետք է միջանկյալ օղակի դեր կատարեր ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի միջև: Տե՛ս «ИД», էջ 568:

**ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼԻ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ (2012 Թ.)**

Հարություն Ծատրյան
ԵՊՀ, Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, մագիստրանտ
Գիտ. դեկ.՝ Բ.Գ.Ք., դոց. Լ. Սայադյան
Էլփոստ՝ htsatryan@ysu.am

2011 թ. մարտին Սիրիայում բռնկվեց քաղաքացիական պատերազմ: Սա Մեր-ձավոր Արևելքում դեռևս 2010 թ. վերջում սկսված ցույցերի, բողոքների ու հեղափոխությունների մեծ ալիքի ինքնատիպ տարածումն էր: Սիրիայում շատ արագ սկսեցին զանգվածային բողոքի ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին իշխանափոխություն երկրում: Սկզբնական շրջանում այդ ցույցերը տեղի էին ունենում հիմնականում ուրբաթ օրերին՝ աղոթքներից հետո, սա էր պատճառը, որ ապստամբական շարժումը երբեմն անվանվում էր նաև «Ուրբաթօրյա հեղափոխություն»:

Ապստամբական ցույցերը սկսվեցին Սիրիայի Դերյա քաղաքից, որը գտնվում է երկրի հարավում: Հետագայում անկարգություններ սկսվեցին նաև այլ քաղաքներում: Մարդիկ բողոքում էին երկրի իշխանությունից, որն արդեն 40 տարի գտնվում է մեկ ընտանիքի ձեռքում: Այս ցույցերից հետո երկրում, իրոք, որոշ դրական փոփոխություններ եղան, բայց ցույցերը չդադարեցին: Ներկա օրերին էլ դժվարին պահեր են Սիրիայում. երկրի անգամ կենտրոնական փողոցներում թեժ մարտեր են մղվում ապստամբների ու երկրի կանոնավոր զորքերի միջև:

Ավելի քան 200 հազար սիրիացիներ այս պահին արդեն լքել են սեփական երկիրը և այսօր ապաստան են գտել Հորդանանում, Լիբանանում, Իրաքում ու Հայաստանում:

Հատկապես Սիրիայի հայկական թաղամասերում տեղի ունեցող զինված արյունալի ու թեժ բախումներն անհանգստություն առաջացրին հայության շրջանում: Եթե տարածվող քաղաքացիական պատերազմի սկզբում Սիրիայի իրադարձությունների մասին հայկական տպագիր լրատվամիջոցները խոսում էին՝ հանրությանը ներկայացնելով տեղի ունեցող դեպքերը «Միջազգային լուրեր» բաժնում, ապա երբ խնդիրը հասավ սիրիահայերի կյանքի ապահովությանը, ասելիքի ձևը լիովին փոխվեց:

Հայկական բոլոր տպագիր պարբերականներն իրենց «պարտքը» համարեցին գրել Սիրիայի հայ համայնքի մասին, խոսել այնտեղ ստեղծված ծանր խնդիրների շուրջ, սակայն որքանով էր այդ ամենն արդարացված, այսօր էլ դժվար է ասել: Այս ուսումնասիրության համար հինք են ծառայել երկրի երեք համեմատաբար լուրջ տպագիր պարբերականներ (իրենց էլեկտրոնային տարբերակների հետ մեկտեղ ևս)՝ «Ազգ»-ը, «Հայաստանի Հանրապետություն»-ը և «Հայկական ժամանակ»-ը: Սույն աշխատանքն ընդգրկում է 2012 թ. հունիսի 1-ից մինչև 2013 թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածը:

Փորձելով հեռու մնալ Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների մեկնաբանման բեռը մեզ վրա վերցնելուց՝ փորձել ենք հնարավորինս լայն ներկայացնել վերոնշյալ երեք պարբերականների դիրքորոշումը խնդրի վերաբերյալ՝ առանձին-առանձին անդրադառնալով տպագրված հոդվածներին ու նշելով, թե որ պարբերականն ինչ կերպ և ինչ հաճախականությամբ է անդրադարձել Սիրիայի հայ համայնքի խնդիրներին ու այնտեղ տեղի ունեցող իրադարձություններին: Այս ամենը ներկայացնելու ենք Սիրիայում ցայսօր տեղի ունեցող քաղաքակցիական պատերազմի համատեքստում:

Մեր առջև ծառայած բարդ խնդիրը դիտարկենք համեմատելով: Օրինակ՝ «Ազգ» պարբերականը ամենից շատ է անդրադարձել Սիրիայում դեռ այսօր էլ շա-

րունակող քաղաքացիական պատերազմին, պարբերականի լրագրողները խոսել են բազմաթիվ հայ և օտարազգի անվանի վերլուծաբանների հետ, ներկայացրել վերջիններիս տեսակետը, անդրադարձել սիրիահայերի առջև արդեն մայր հայրենիքում առաջացած խնդիրներին, Սիրիայից Հայաստան ժամանելու հետ կապված բարդ հարցերին:

«Հայկական ժամանակ» պարբերականը հիմնականում վերլուծել է տեղի ունեցող դեպքերը, ներկայացրել Հայաստանի թե՛ իշխանական թևի և թե՛ ընդդիմադիր գործիչների տեսակետները խնդրի շուրջ: Հաճախ է պատահել, որ օրաթերթի լրագրողները ստահող նորություններ են տարածել՝ փոքրիկ խնդիրները դարձնելով բավականին մեծ իրարանցման թեմա: Օրաթերթում ոչ միայն սիրիական իշխանության տապալմանն էին սպասում, այլև այն զուգահեռում էին հայաստանյան իրականության հետ՝ նշելով, թե դեպքերն ավելի խստորեն կարտահայտվեն անգամ Հայաստանում:

«Հայաստանի Հանրապետություն» պարբերականը խնդիրը լուսաբանելիս հիմնականում հիմնվում էր ՀՀ սփյուռքի նախարարության Տեղեկատվության և հանրային կապերի վարչության հաղորդած լուրերի վրա: Լրագրողական նյութերը հրապարակվում էին դարձյալ տարբեր խորագրերի ներքո՝ հասարակություն, տնտեսություն, աշխարհ, արտաքին քաղաքականություն, կրթություն և այլք: Այս պարբերականը մեծ մասամբ անդրադարձել է Հայաստանի իշխանական թևի ներկայացուցիչների խնդրի վերաբերյալ ունեցած մոտեցումներին: Պարբերականը շատ մեծ տեղ էր տալիս հատկապես ՀՀ նախագահի, Սփյուռքի նախարարի հայտարարություններին, նաև ՀՀ միգրացիոն ծառայությանը:

Պետք է նշենք նաև, որ սիրիահայերի խնդիրը մեծ մասամբ ուշադրության կենտրոնում էր 2012 թ. ամռան ամիսներին: Սեպտեմբեր ամսին ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովի համաներումն առաջին պլան մղեց հայ-ադրբեջանական հարաբերությունները, և սիրիահայերի առջև ծառայած խնդիրների թեման մի փոքր «նահանջ ապրեց»: Տարվա վերջին շրջանում արդեն հայրենիք՝ Հայաստան ժամանած սիրիահայերն էին փորձում ակտիվ պահել խիստ արդիական այս թեման:

Այն, որ «Ազգ» պարբերականի գլխավոր խմբագիրն է Հակոբ Ավետիսյանը, թույլ է տալիս հասկանալ, թե ինչու էր 2012 թ. ընթացքում պարբերականը բոլորից շատ անդրադարձել Սիրիայում տեղի ունեցող իրադարձություններին: «Ազգ»-ն առաջին հայաստանյան պարբերականներից էր, որ ահազանգեց և զգոնության կոչ արեց հայությանը: Արդեն 2012 թ. հուլիսի 24-ին սփյուռքահայ գործիչ Հակոբ Ավետիսյանն անհանգստացած գրում էր՝ «Կրակը մոտեցավ մայր գաղութին» խմբագրականը¹:

Հեղինակը նշում է. «Ինչ վերաբերում է հեռահար մեր գործունեությանը, ապա չեմ կարող առայժմ տեսական թվացող մի ընդհանրացում չանել. եթե մեր պետական իշխանություններից պահանջում ենք մեր երկրում հաստատել արդարությունն ու արդարադատությունը, գործնականորեն խթանել ու զարգացնել տնտեսությունն ու գիտությունը, ապա դա պետք է անել ոչ միայն Հայաստանում ապրող ներկա ազգաբնակչության համար, այլև մեր ժողովրդի այն հատվածի համար նաև, որն ապրում է հարևան ու մերձավոր երկրներում: Մեր ազգակիցները ուշ կան կանուխ լքելու են դրանք: Եվ մեր երկիրն ի վիճակի պետք է լինի հյուրընկալելու, պատսպարելու, աշխատանքով ապահովելու նրանց: Նրանք իրենց ապագան պետք է տեսնեն այս երկրում, ինչպես և մենք բոլորս»:

Խնդիրն առավել արդիական է դառնում, երբ առաջին ինքնաթիռները Սիրիայից երևան են բերում մեր հայրենակիցներին: 2012 թ. հուլիսի սկզբին արդեն լուրեր էին ստացվում, որ Սիրիայում կառավարական ուժերի և զինված ապստամբների միջև

¹ **Ավետիսյան Հ.**, Կրակը մոտեցավ մայր գաղութին, «Ազգ» օրաթերթ, #133, 24-07-2012 թ., <http://azg.am/AM/2012072401>.

բախումների զոհ են դարձել հայկական համայնքի վեց ներկայացուցիչներ¹: Այս նորությունն «արթնացրեց» հայկական լրատվամիջոցներին:

2012 թ. սիրիահայերի մասին առաջին անդրադարձը «ՀԺ»-ում եղել է հուլիսի 17-ին: Այդ հոդվածում անդրադարձ կար այն բանին, որ սիրիահայերը դժգոհ են «Արմավիա»-ի տոմսերի բարձր գնից, որի պատճառով չեն կարողանում տեղափոխվել Հայաստան: Հատուկ այդ առիթով հրավիրված մամուլի ասուլիսին ներկա սիրիահայ տնտեսագետ Հարութ Փալույանը դժգոհել էր «Արմավիա»-ից: Փալույանը հայտնել էր, որ հուլիսի 9-ին տեղի ունեցած առաջին (2011 թ. մարտից հետո) Հալեպ-երևան չվերթի տոմսը, նախորդ տարվա համեմատ, 150 դոլարով թանկացել է²:

2012 թ. հուլիսի կեսերից հայկական տպագիր մամուլում սկսում են ավելանալ Սիրիայի քաղաքացիական պատերազմի և սիրիահայերի վիճակի մասին պատմող հոդվածները: Արդեն հուլիսի 19-ին «ՀԺ»-ն երեք հրապարակում է ունենում այս թեմայով: Դրանցում հիմնականում ասվում էր, թե թեժացող քաղաքացիական պատերազմը ստիպում է բազմաթիվ սիրիահայերի՝ անվտանգություն փնտրել այլ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, օրաթերթը գրում էր. «Ու որքան էլ ողբերգական լինի իրավիճակը Սիրիայում, սա ևս մի առիթ է Սիրիայից հեռանալ ցանկացող հայերին ՀՀ բերելու համար: Թվում էր, թե պետական մակարդակով պետք է կազմակերպվի սիրիահայերի զանգվածային տեղափոխումը ՀՀ, բայց ինչ-որ պահից տարօրինակ երևույթներ սկսվեցին՝ սիրիահայերի առաջ խոչընդոտներ ստեղծվեցին Հայաստան գալու ճանապարհին: Մասնավորապես, կտրուկ թանկացան Սիրիայից ՀՀ թռիչքներ իրականացնող ինքնաթիռների տոմսերը: Այդ ընկերությունները պարզապես ցանկանում են ստեղծված իրավիճակում լրացուցիչ եկանուտ ստանալ: Պարզվում է, սակայն, ՀՀ գալու ցանկություն ունեցողների առաջ խոչընդոտներ ստեղծելը ՀՀ իշխանությունների ոչ պաշտոնական քաղաքականությունն է: ՀՀ սփյուռքի նախարարության մամուլի խոսնակ Թևոս Ներսիսյանը մեր թղթակցի հետ զրույցում բառացիորեն ասել է. «Մենք չահագրգռված չենք, որ մեր Սիրիայի համայնքը քայքայվի»³:

Ի լրումն այս ամենի՝ «Ազգ»-ը անդրադառնում է Սիրիայից ժամանած մեր հայրենակիցներին աշխատանքով ապահովելու կարևորագույն խնդրին՝ սեփական ուժերով աշխատանք առաջարկելով հայրենադարձներին⁴:

Հետագա օրերին նույնպես «ՀԺ»-ն շարունակում է բողոքել ՀՀ կառավարության նմանատիպ վերաբերմունքից, հայրենադարձություն կազմակերպելու համար ոչ մի կարևոր քայլ չձեռնարկելուց և հազարավոր սիրիահայերի համար հայրենիք վերադառնալու հարմարավետ պայմաններ չստեղծելու պատճառներով⁵:

Սակայն, ի տարբերություն այս պարբերականի էջերից ՀՀ կառավարության հասցեին հնչող մեղադրանքների, «Հայաստանի Հանրապետություն» պարբերականը տպագրել էր ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Սերգեյ Մանասարյանի պատասխանն այդօրինակ «անհիմն մեղադրանքներին». «Հայաստանի ղեկավարությունը ոչ միայն ուշադրությամբ հետևում է Սիրիայում իրադարձությունների զարգացմանը, այլ նաև համապատասխան քայլեր է ձեռնարկել և ձեռնարկում տարբեր մակարդակներով և ուղղություններով: Սա այն դեպքերից է, երբ այդ ջանքերի հրապարակային բարձրաձայնումը կարող է նպաստավոր ազդեցություն չունենալ դրանց արդյունա-

¹ «Կոնկրետ քայլեր», «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 05-07-2012 թ.,

http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20120705_1&flag=am.

² «Դժգոհում են», «Հայկական ժամանակ» օրաթերթ, 17-07-2012 թ., <http://www.armtimes.com/35214>.

³ «Սփյուռքի նախարարին հուշարար է պետք», «Հայկական ժամանակ» օրաթերթ, 19-07-2012 թ.,

<http://www.armtimes.com/35292>.

⁴ **Մարտիրոսյան Ա.**, Սիրիահայ մասնագետներին Հայաստանում աշխատելու առաջարկություն, «ԱԶԳ» օրաթերթ, #130, 19-07-2012 թ., <http://azg.am/AM/2012071919>.

⁵ «Կառավարությունը հենց նոր իմացավ», «Հայկական ժամանակ» օրաթերթ, 20-07-2012 թ.,

<http://www.armtimes.com/35328>.

վետության վրա, ուստի ես ձեռնպահ կմնամ դրանք մանրամասնելուց: Կարող եմ հավելել, որ միջազգային շփումների ժամանակ այս հարցերը գտնվում են երկրի ղեկավարության ուշադրության կենտրոնում»¹:

Այս ընթացքում «Ազգ»-ը շարունակում էր անդրադառնալ պատերազմող Սիրիային, այնտեղի հայության առջև ծառայած վտանգներին ու կարիքավոր սիրիահայերին²: Բացի այդ պարբերականն աչքի էր ընկնում ինքնատիպ վերլուծություններով, այլ ոչ թե ստահող լուրերի տարածմամբ³:

Օգոստոսի 14-ին, երբ բոլոր տպագիր պարբերականները վերսկսեցին իրենց աշխատանքն ամառային արձակուրդի հետևանքով եղած դադարից հետո, մամուլում առաջին անդրադարձն արդեն օգոստոսի 9-ին Երևան տեղափոխված սիրիահայ երեխաների առաջին 120 հոգանոց խմբի մասին էր, որն ամառային հանգիստն անցկացնելու էր եկել Հայաստանում: Այդ առիթով ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն այցելել էր Հանքավանի «Լուսաբաց» ճամբար՝ Սիրիայից ժամանած հայ երեխաների հետ հանդիպելու նպատակով⁴:

Արդեն իսկ օգոստոսի 15-ին «ՀՀ» օրաթերթի էջերում հանդիպեցինք լրագրողական մի փոքրիկ հետազոտության, որը կապված էր Սիրիայից Հայաստան եկած մարդկանց թվաքանակի վերաբերյալ: «ՀՀ սփյուռքի նախարարության Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վարչության աշխատակիցը, որը չցանկացավ իր անունը հրապարակել, մեր զրույցում ասաց, որ այս պահի դրությամբ ՀՀ մուտք գործած սիրիահայերի թիվը մինչև 4000-ի սահմաններում է: Ի դեպ, դարձյալ ըստ նույն աշխատակցի փոխանցած տեղեկությունների, մինչև զինված բախումների սկիզբը Սիրիայում եղել է 65-70 հազարանոց հայ համայնք», - գրում էր օրաթերթը:

Ի պատասխան այս հոդվածի՝ «ՀԺ»-ը գրում է. «2012 թ. հունվարից մինչև այսօր Սիրիայի 53 քաղաքացիներ դիմել են ՀՀ-ում ապաստան ստանալու համար: 53 քաղաքացիները կազմում են 32 ընտանիք», - մեր զրույցում ասաց միգրացիոն ծառայության ապաստանի հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Ռուզաննա Պետրոսյանը»⁵:

«ՀԺ»-ի լրագրողը փորձում էր նաև պարզել՝ կմնա՞ն նրանք իրենց պատմական հայրենիքում: Այս հարցի պատասխանը պետական գերատեսչություններից չստանալով և ենթադրելով, որ հարցի ստույգ պատասխանը «թերևս, միայն ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը կարող է տալ», փորձում է սեփական ենթադրությունն անել ու համեմատականներ տանել Իրաքից գաղթածների հետ: «Սակայն, բավական ճշգրիտ կանխատեսում անելն այնքան էլ դժվար չէ: Ունենք մի քանի տարի առաջ Իրաքից իրականացած «հայրենադարձության» փորձը: Հանգամանքները գրեթե նույնական են՝ քաղաքացիական պատերազմ, կրոնական խնդիրներ...», - գրում է օրաթերթը⁶:

Օրեր անց «ՀԺ» պարբերականը հրապարակում է հետևյալ լուրը՝ «ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը երեկ ընդունել է Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության ատենապետ Սեդրակ Աճեմյանին, դիվանի անդամ Վազգեն Կալթակճյանին: Հրանուշ Հակոբյանը նշել է, որ նախարարություն-

¹ «Ձեռնարկվում են համապատասխան քայլեր», «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 21-07-2012 թ., http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20120721_13&flag=am.

² **Հարությունյան Հ.**, Պատերազմող Սիրիա, վտանգված հայություն, կարիքավոր սիրիահայեր, «ԱԶԳ» օրաթերթ, #131, 20-07-2012 թ., <http://azg.am/AM/2012072013>.

³ **Հարությունյան Լ.**, Ասադների Սիրիան, «ԱԶԳ» օրաթերթ, #136, 27-07-2012 թ., <http://azg.am/AM/2012072714>.

⁴ «Աջակցություն սիրիահայությանը», «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 14-08-2012 թ. http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20120814_1&flag=am.

⁵ **Ջախարյան Ա.**, Իսկ ո՞ւր են իրաքցիները, «Հայկական ժամանակ» օրաթերթ, 15-08-2012 թ., <http://www.armtimes.com/35413>.

⁶ «Թամաշաներից անդին», «Հայկական ժամանակ» օրաթերթ, 15-08-2012 թ., <http://www.armtimes.com/35434>.

նուն ստեղծվել է սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խումբ, և ներկայացրել լուծումներ ստացած ու կատարման փուլում գտնվող խնդիրները»¹:

Այս ընթացքում «Ազգ»-ի ուշադրության կիզակետում կրկին ՀՀ սփյուռքի նախարարությունն էր, որտեղ քննարկվում էր սիրիահայերի վերաբերյալ մի շարք կարևոր խնդիրներ. «Նախարար Յրանուշ Հակոբյանը, բացելով խորհրդակցությունը, ասաց. «Բոլորս էլ մտահոգ ենք Սիրիայում տեղի ունեցող իրադարձություններով ու ամեն պահ հետևում ենք իրավիճակի զարգացումներին: Հանրապետության նախագահի հանձնարարությամբ սիրիահայերի հիմնահարցերը համակարգում է սփյուռքի նախարարությունը»: Նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ, որը համակարգում ու համապատասխան լուծումներ է առաջարկում կառավարության ստորաբաժանումներին», - գրում էր թերթը²: Մինչև օգոստոս ամսվա վերջ «Ազգ»-ը ավելի քան 40 անգամ իր հրապարակումներում անդրադառնում է Սիրիայում տեղի ունեցող դեպքերին ու սիրիահայությանը: Իսկ դեռևս սեպտեմբեր չէկած՝ օրաթերթը խոսեց նաև սիրիահայերի առջև ծառայած մեկ այլ կարևորագույն խնդրի՝ մայր հայրենիքում կրթություն ստանալու մասին³:

«ՀԺ»-ն իր հերթին այդ օրերին անդրադարձել է ոչ միայն սիրիահայերի՝ ՀՀ վերադառնալու հարցին, այլ նաև վերջիններիս՝ Լեռնային Ղարաբաղ գնալու և այնտեղ բնակություն հաստատելու ցանկություն չհայտնելու մասին: Դավիթ Բաբայանը լրագրողի հետ զրույցում ասել էր, որ չնայած մեկ շաբաթ առաջ ինքը պաշտոնապես հայտարարել էր, որ ԼՂՀ իշխանությունները պատրաստ են սիրիահայերին ընդունել և համապատասխան պայմաններով ապահովել, բայց այդ պահի դրությամբ դիմում չեն ստացել: Հոդվածի ընթացքում պարզ է դառնում, որ ԼՂՀ իշխանությունները ձեռնպահ են մնում կոնկրետ պայմաններ առաջարկելուց, քանի որ դրան արձագանքողների թիվը կարող է շատ լինել: Առանց կոնկրետ խոստումների եթե դիմողներ լինեն, ապա ԼՂՀ իշխանությունները կփորձեն նրանց համար պայմաններ ստեղծել: Իսկ մյուս կողմից էլ կարծիք կար, և հատկապես «ՀԺ»-ում այն շատ էր շրջանառվում, որ միգրացիոն սիրիահայերը ժամանակավորապես են եկել, որպեսզի իրենց մոտ իրավիճակը կարգավորվի, վերադառնան⁴: Այս մասին մի փոքր մանրամասնություն գտանք «ՀՀ» օրաթերթի էջերում, այն է՝ «Լեռնային Ղարաբաղում սիրիահայերի բնակեցման գործընթացը խոչընդոտելու նպատակով Թուրքիայի իշխանություններն Ադրբեյջանին համազել են, որպեսզի վերջինս աջակցություն ցուցաբերի Բաշար ալ Ասադի դեմ պայքարող խմբավորումներին»⁵:

Օգոստոսի 19-ին տեղի էր ունեցել ՀՀ կառավարության նիստ այս կարևոր խնդիրը քննարկելու կապակցությամբ: Նիստից հետո ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն առընթեր միգրացիոն պետական ծառայության պետ Գագիկ Եզանյանը պատասխանել էր լրագրողների հարցերին՝ մասնավորապես նշելով՝ «Ոմանք կցանկանան ուղղակի նստել ինքնաթիռ և գալ Հայաստան՝ բնակվելով այստեղ, մինչև ճգնաժամն ավարտվի: Մյուս մասը ցանկություն կհայտնեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, իսկ երրորդները՝ ապաստանի դիմում ներկայացնելով՝ հայրենիք կվերադառնան փախստականի կարգավիճակով: Բոլոր դեպքերում, չնայած դժվարություններին, նրանք կստանան այն ամենը, ինչ

¹ «Սիրիահայերի հարցով», «Հայկական ժամանակ» օրաթերթ, 18-08-2012 թ., <http://www.armtimes.com/35527>.

² Մակարյան Մ., Սիրիահայերի խնդիրները՝ Սփյուռքի նախարարությունում, «ԱԶԳ» օրաթերթ, #144, 23-08-2012թ., <http://azg.am/AM/2012082301>.

³ Հովակիմյան Մ., Կարողակն վերամուտին ընդառաջ, «ԱԶԳ» օրաթերթ, #144, 23-08-2012 թ., <http://azg.am/AM/2012082314>.

⁴ Հովակիմյան Վ., Պայման չեն առաջարկում, «Հայկական ժամանակ» օրաթերթ, 21-08-2012 թ., <http://www.armtimes.com/35564>.

⁵ «Ադրբեյջանն օգնում է Սիրիայի ընդդիմությանը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 29-08-2012 թ., http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20120829_17&flag=am.

իրենց անհրաժեշտ է: Մինչ այժմ մեզ դիմել է ընդամենը 6 ընտանիք՝ 14 անդամներով, և նրանց դիմումները, օրենքին համապատասխան, արագ լուծում են ստանում», - այս խոսքերը մեջբերում է «ՀՀ» պարբերականը¹:

Անդրադառնալով միջազգային լուրերին՝ «ՀԺ» պարբերականը գրում է արդեն Սիրիայում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմի մասին և նշում, որ Հալեպի հայկական թաղամասերն անցել են զինված ապստամբների վերահսկողության տակ, իսկ ըստ որոշ տվյալների՝ կառավարական զորքերը փորձում են վերադարձնել հայերով բնակեցված Սուլեյմանիե, Միդան և մի շարք այլ թաղամասեր: Այդ ժամանակ արդեն՝ օգոստոսին 22-ին, կառավարական զորքերի ու զինված ապստամբների միջև շարունակվող բախումների ընթացքում սպանված հայերի թիվը հասել էր 10-ի²:

Իսկ ահա «ՀՀ» պարբերականն առհասարակ սպանվածների և վիրավորվածների մասին այդ շրջանում տվյալներ չէր հրապարակում, սահմանափակվելով միայն նշել, թե որ թաղամասում ինչպիսի դրություն է:

«Ազգ»-ը ևս խոսում է Դամասկոսում՝ ապստամբների կողմից տեղի ունեցած խոշտանգումների և հայերի սպանությունների մասին: Պարբերականը հստակ թվեր այդպես էլ չի նշում, սակայն գրում է. «Ընդդիմադիրների և կառավարական զորքերի միջև Սիրիայում սկսված բախումների հետևանքով գոհվել են մեկ տասնյակից ավելի հայեր, որոնցից երկուսը՝ սիրիական բանակի զինծառայողներ»³:

Լինելով ընդդիմադիր ուղղություն որդեգրած պարբերական «ՀԺ»-ն անգամ սիրիահայերի վերաբերյալ հողվածներ գրելիս օգտագործում է հարմար առիթը և մի լավ վատաբանում ու մեղադրում կառավարության քայլերը: Խոսքը վերաբերում է այն նորությամբ, որ ՀՀ սփյուռքի նախարարությունն ու ՀՀ ոստիկանությունը համատեղ մշակել էին կառավարության որոշման նախագիծ, որի ընդունման պարագայում Սիրիայի՝ ազգությամբ հայ քաղաքացիներն իրենց հայրենիքում ստացած վարորդական իրավունքը կարող են փոխանակել ՀՀ-ում գործածվող վարորդական իրավունքով՝ առանց քննություն հանձնելու: Լրագրողը սա համարում է խտրականություն և մեջբերում ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածը ռասայական, էթնիկական և այլ տեսակի խտրականությունների մասին, այնուհետև գրում է. «Այն, որ նախագծի հեղինակները կարող է և ընդհանրապես ծանոթ չլինեն Սահմանադրությանը, օրենքներին, միջազգային նորմերին, թերևս, զարմանալի չէ: Ի դեպ, ըստ ամփոփաբերթի՝ նախագծի վերաբերյալ որևէ առարկություն կամ դիտողություն պետական որևէ գերատեսչություն չի ներկայացրել: Որքան էլ տարօրինակ հնչի, ամենաուշագրավը դա չէ: Փորձենք պատկերացնել, թե ինչպես է ծնվել այս նախագիծը: Արդարացիորեն հնչող այն մեղադրանքներից, թե ՀՀ իշխանությունները որևէ էական քայլ չեն ձեռնարկում սիրիահայերին Հայաստան ներգաղթեցնելու ուղղությամբ, կառավարությունն ակնհայտորեն բարդությամբ վրավել է և պարբերաբար ինչ-որ ներկայացումներ է բեմադրում Սիրիայում տառապող մեր հայրենակիցների ճակատագրով առավոտից իրիկուն մտահոգված լինելու մասին: Սիրիահայերեխաների հետ հանդիպումներ են կազմակերպում, հետմերը թախծախառն ժպիտով լուսանկարվում են... Բայց նաև զգում են, որ դա բավարար չէ, ազդեցություն չի թողնում, և պետք են նոր քարոզչական նյութեր: Ստածել-մտածել են ու գտել մի նոր այդպիսի նյութ»⁴:

¹ **Գասպարյան Ա.**, Հայրենիքը պատրաստ է ընդունելու զավակներին, 20-07-2012 թ., http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20120720_7&flag=am.

² «Ապստամբները մտել են հայաշատ թաղամասեր», «Հայկական ժամանակ» օրաթերթ, 22-08-2012 թ., <http://www.armtimes.com/35604>.

³ «Դամասկոսում հայեր են սպանվել», «Ազգ» օրաթերթ, #148, 29-08-2012 թ., <http://azg.am/AM/2012082925>

⁴ **Գևորգյան Յ.**, Պռավա՝ միմիայն հայերի համար, «Հայկական ժամանակ» օրաթերթ, 23-08-2012 թ., <http://www.armtimes.com/35644>.

Այնուամենայնիվ, պատերազմը շարունակվում էր և շուտով մի նոր ինֆորմացիա է ստացվում, որ Հեղափոխական գերագույն խորհուրդը օգոստոսի 24-ին տարածել է հայտարարություն, որով արդեն սպառնացել է պատժել բոլոր սիրիահայերին: Ապստամբները սիրիահայերին մեղադրում են նախագահ Բաշար ալ Ասադի հետ համագործակցելու, սպանությունների պատճառ դարձած գործողությունների մասնակցելու, սիրիական ռեժիմին զենքով սատարելու համար: Ապստամբները պնդում են, թե Հալեպ, Լաթակիա և Քեսաբ քաղաքներում Բաշար ալ Ասադի ուղարկած կառավարական զորքերին հայերի կողմից աջակցություն ցուցաբերելու դեպքեր են նկատվել: Միաժամանակ, ապստամբները սիրիահայ համայնքին զգուշացրել են, որ Ասադին սատարելը վատ հետևանքներ են ունենալու իրենց համայնքի համար: Ընդդիմադիրները սպառնում էին ավերել հայաբնակ թաղամասերը և հայերին զրկանքների ենթարկել: Հայերին հասցեագրված սպառնալից հայտարարության կապակցությամբ Հալեպի Հայոց պատրիարքարանի մամուլի խոսնակ ժիրայր Ռեիսյանը հայտարարել է, որ Սիրիայում տեղի ունեցող մարտերի ողջ ընթացքում հայ համայնքը միշտ էլ չեզոքություն է պահպանել: «Մենք հավատարիմ ենք սիրիական պետությանն ու ժողովրդին, այլ ոչ թե կողմերից որևէ մեկին, քանի որ Հայոց ցեղասպանությունից հետո մեզ ապաստան են տվել սիրիացի ժողովուրդն ու պետությունը, այլ ոչ թե այս կամ այն քաղաքական ուժը», - Ռեիսյանի խոսքը մեջբերում է «ՀԺ»-ն¹:

Սակայն այս լուրի վերաբերյալ «ՀՀ»-ն գրում է. «Ավելի ուշ Սիրիայի ընդդիմադիր «Ազատ բանակի» զինվորական խորհրդի նախագահ Մուստաֆա ալ Շեյխը հերքել է սիրիահայերի դեմ «Ազատ բանակի» սպառնալից հայտարարությունների հրապարակման մասին լուրերը: «Ալ Արաբիա» հեռուստաընկերության եթերում արված հայտարարության մեջ Մուստաֆա Շեյխն ընդգծել է, որ հայերը Սիրիայում ապրում են տասնամյակներ, և այդ ժամանակաշրջանում հայերի հետ որևէ խնդիր չի առաջացել: «Սիրիայում ժողովուրդը հայերի, քրիստոնյաների և այլ համայնքների հետ ոչ մի խնդիր չունի», - Շեյխի խոսքը մեջբերում է «ՀՀ» պարբերականը²:

Այստեղ կարևոր է նշել նաև, որ «Ազգ» պարբերականը անդրադառնում էր նաև Հայաստան եկած սիրիահայերի կարգավիճակին, նրանց կենցաղային բազմապիսի խնդիրներին փորձելով մի շարք հարցազրույցների և լրագրողական նյութերի միջոցով ակտիվ պահել թեման: Կարելի է ասել, որ այս պարագայում առավել ակտիվ էին միայն երկուսը՝ «ՀԺ» և «Ազգ» պարբերականները³:

«ՀՀ»-ն հաճախ էր անդրադառնում պաշտոնյաների հավաքների, ՀՀ Սփյուռքի նախարարության աշխատանքներին, որտեղ բազմիցս հաստատվում էր, որ այդ գերատեսչությունն, իրոք, աշխատում է և անդրադառնում սիրիահայերի բոլոր սոցիալական խնդիրներին⁴: Սրանից էլ զատ հրապարակում էին բոլոր այն քաղաքագետների ու վերլուծաբանների կարծիքները, որոնցում դրական է գնահատվում ՀՀ կառավարության ջանքերը այս հարցի վերաբերյալ⁵: Գրեթե ամեն օր «ՀՀ» օրաթերթը լուր էր տալիս ՀՀ սփյուռքի նախարարության կատարած աշխատանքների մասին:

¹ **Մանվելյան Մ.**, Սիրիահայերին սպառնում են, «Հայկական ժամանակ» օրաթերթ, 25-08-2012 թ., <http://www.armtimes.com/35688>.

² «Սիրիայի ընդդիմությունը հայերին չի սպառնացել», «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 25-08-2012 թ., http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20120825_10&flag=am.

³ **Մկրտչյան Ք.**, Սիրիահայերը հիասթափված են, «Հայկական ժամանակ» օրաթերթ, 25-08-2012 թ., <http://www.armtimes.com/35693>.

⁴ **Ասատրյան Լ.**, Սիրիահայերի խնդիրներն օրակարգում են, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 23-08-2012 թ., http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20120823_6&flag=am.

⁵ «Սիրիահայերի՝ անուշադրության մատնված լինելու մասին գնահատականը չափազանցված է», «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 24-08-2012 թ., http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20120824_5&flag=am.

Օգոստոսի 29-30-ին արդեն հայկական մամուլը ողողվեց սիրիահայերի մի ընտանիքի մասին հրապարակումներով, որին «Զվարթնոց» օդանավակայանի սահմանապահները թույլ չեն տվել մուտք գործել Հայաստան և պատրաստվում էին արտաքսել Թուրքիա, որտեղից նրանք ժամանել էին: Այս մասին «Հայկական ժամանակ»-ը գրում էր առանց «ժխտության»: Այս խճճված պատմության մասին շատ իրարամերժ լուսաբանումներ էին հրապարակվում գրեթե ամենուր:

Այնուամենայնիվ, «ՀԺ»-ն անընդմեջ մեղադրում էր ՀՀ կառավարությանն այդ ընտանիքին ամեն դեպքում չընդունելու պատճառով¹: Մի քանի օր անց արդեն լուր ստացվեց, որ նրանք նպատակ էին հետապնդել, ՀՀ տարածքն օգտագործելով որպես տարանցիկ գոտի, ապօրինի միգրացիայի կազմակերպչի օժանդակությամբ տեղափոխվել երրորդ երկիր: Մինչև Հայաստան ժամանելը նրանց փորձը՝ Ստամբուլից մեկնել Եվրոպա, հաջողությամբ չէր պսակվել: Սիրիայի նշված քաղաքացիները Երևան-Ստամբուլ չվերթով հետ էին վերադարձվել ժամանման երկիր՝ Թուրքիա: Պարզաբանվեց նաև, որ նրանք իրականում ազգությամբ ոչ թե հայ, այլ ասորի են եղել: Այդ ամենի մասին մենք իմանում էինք միմիայն «ՀՀ»-ի էջերից²: Չնայած այս բանին «ՀԺ»-ն չի ընդունում այս պարզաբանումը և մինչև վերջ շարունակում է «քլնգել» երկրի ղեկավարությանը՝ ցույց տալով անհանդուրժողականություն³:

Սեպտեմբերի 1-ին «Ազգ»-ն ավետում է Հայաստանում առաջին սիրիահայ երեխայի լույս աշխարհ գալը. «Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը այցելել է «Շենգավիթ» բուժկենտրոն, որտեղ շնորհավորել է նորածնի մայրիկին և հույս հայտնել, որ նրա երեխան կդառնա Հայաստանի արժանի քաղաքացի ու զինվոր»⁴: Մինչև տարեվերջ «Ազգ»-ն անդրադառնում է Սիրիայում ծավալվող իրադարձություններին ու հայրենիք վերադարձած սիրիահայերին ավելի քան 140 անգամ:

Սեպտեմբերին արդեն հայաստանյան տպագիր մամուլում լուրեր էին հրապարակվում, որ Սիրիայի զինված ապստամբները մտնում էին հայկական թաղամասեր, իսկ բախումների ընթացքում սպանվում էին բազում մարդիկ, ինչպես նաև սպանվում էին օրերս Երևանից Հայէպ վերադարձած սիրիահայերը՝ օդանավակայանից տուն գնալու ճանապարհին⁵:

Բացի այդ՝ մամուլում սկսեցին խոսել նաև «Օգնիր եղբորդ» քաղաքացիական նախաձեռնության մասին, որի նպատակն էր օգնել Սիրիայի բնակչությանը, հատկապես՝ Հայաստան եկած մեծաթիվ սիրիահայերի: Մինչև սեպտեմբերի վերջ մեկ ինքնաթիռ պետք է մեկներ Սիրիա՝ հումանիտար օգնություն տանելով տեղի անապահով ընտանիքներին: Նախաձեռնության հեղինակները ԱԺ ՀՀԳ խմբակցության անդամներն էին⁶:

Սեպտեմբերի վերջին Հալեպում իրավիճակը ժամ առ ժամ ավելի էր սրվում: Ապստամբները հայտարարել էին Հալեպը գրավելու վերջին որոշիչ մարտի սկսման մասին: Ապստամբները նույնիսկ հոխորտացել էին, որ սեպտեմբերի 27-ի լույս 28-ի զիջերը քաղաքն ամբողջությամբ անցնելու է իրենց ձեռքը: Վաղ առավոտից սկսված մարտերն ընդգրկել էին Հալեպի 14 թաղամաս, որոնց թվում էին նաև հայաշատ Նոր Գյուղն (Միդան) ու Սուլեյմանիեն: Այդ պահին ռազմական գործողությունների ընթացքում սպանված հայերի թիվը հասել էր մոտ 30-ի: Հոկտեմբերին Հալեպում

¹ **Փևրոզյան Ա.**, Կանանց նվաստացրել են, «Հայկական ժամանակ» օրաթերթ, 30-08-2012 թ., <http://www.armtimes.com/35807>.

² «Հալեպի թաղամասերում շարունակվում են բախումները», «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 31-08-2012 թ., http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20120831_27&flag=am.

³ **Հովակիմյան Վ.**, Ստո՛ւմ եք, պարոնայք, «Հայկական ժամանակ» օրաթերթ, 01-09-2012 թ., <http://www.armtimes.com/35880>.

⁴ **Պետրոսյան Ի.**, Հայաստանում ծնվել է առաջին սիրիահայ երեխան, «ԱԶԳ» օրաթերթ, #151, 01-09-2012 թ., <http://azg.am/AM/2012090117>.

⁵ «Չեն ցանկանում վերադառնալ», «Հայկական ժամանակ» օրաթերթ, 18-09-2012 թ., <http://www.armtimes.com/36223>.

⁶ «Հինգ միլիոն կտան», «Հայկական ժամանակ» օրաթերթ, 27-10-2012 թ., <http://www.armtimes.com/37377>.

դարձյալ նույն վիճակն էր. մեկ ամսվա ընթացքում գրեթե բան չէր փոխվել: Ապստամբները դարձյալ գրոհում էին թաղամասերի վրա, իսկ հայկական մամուլին մեծ անհանգստություն էր պատճառում հատկապես հայաշատ թաղամասերի հետագա ճակատագիրը, որոնց մասին էլ գրում էին օրաթերթերը:

Հոկտեմբերին արդեն հայտնի էր, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ավանդական հեռուստամարաթոնը տեղի կունենա նոյեմբերի 22-ին, իսկ դրան նախորդող հեռախոսամարաթոնը՝ նոյեմբերի 15-18-ին: Այդ տարվա հեռուստամարաթոնն առանձնանում էր նրանով, որ վաղօրոք որոշվել էր հեռուստամարաթոնի ընթացքում հավաքված գումարի մի մասը ուղղել սիրիահայերին օգնելու նոր խնդրին: Տարբեր ժամանակներում արված հայտարարություններից պարզ էր դառնում, որ ընդհանուր գումարի 10 %-ը կօգտագործվի Հայաստանում հանգրվանած սիրիահայերի առաջնային կարիքները հոգալու նպատակով:

Նոյեմբերի 3-ին ՀՀ նախագահը խոսում է սիրիահայերի հարցի մասին: «ՀԺ»-ն առաջին անգամ է անդրադառնում ՀՀ նախագահի խոսքերին. «Սերժ Սարգսյանը նոյեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցել է Թեմական ներկայացուցչական ժողովին: Սարգսյանը հանդես է եկել ժողովականներին ուղղված ողջույնի խոսքով. Մենք ասում ենք, որ եթե մարդը, այնուամենայնիվ, որոշել է արտագաղթել Սիրիայից, ապա գերադասելի է, որ նա գա Հայաստան: Այս դեպքում ևս համայն հայությունը, այդ թվում և Հայաստանը, պետք է օգնեն նրան հաստատվելու և նոր արմատներ գցելու հայրենիքում», - ՀՀ նախագահի խոսքերը մեջբերում է օրաթերթը¹:

Ընդհանրապես հարցը քննելիս նկատեցինք, որ «Հայկական ժամանակ» պարբերականը փորձել է հիմնականում վերլուծել դեպքերը, ներկայացնել Հայաստանի թե՛ իշխանական թևի, թե՛ ընդդիմադիր գործիչների տեսակետները խնդրի շուրջ, թեև գերծ չէր մնում իր ինքնատիպ մեկնաբանություններից: Այս պարբերականը նոյեմբերից մինչև 2012 թ. դեկտեմբերի վերջ ավելի քան 100 անգամ շոշափում է ցավոտ հարցը:

Այսպիսով՝ 2012 թ. ընթացքում առօրեական դարձած սիրիահայերի թեման լայն լուսաբանման արժանացավ հայկական ՁԼՄ-ների կողմից: Չկար գեթ մեկ օր, որ ինչ-որ ՁԼՄ չգրեր Սիրիայում այդ օրերին տեղի ունեցող դեպքերի, Հայաստան եկած սիրիահայերի մասին: Հետաքրքիր է, որ իրենց հոդվածներին լուսանկարներ կցելու հարցում բոլոր երեք պարբերականներն էլ՝ «Ազգ», «ՀԺ» և «ՀՀ» ակտիորեն օգտվում էին ոչ պաշտոնական աղբյուրներից՝ տարածելով մի շարք «յուրօրինակ» ու մեծ սպառնալիք ներկայացնող, սահմուկեցուցիչ լուսանկարներ. այնտեղ պատկերված էին սիրիահայեր, ահաբեկիչներ, ապստամբներ, ՀՀ կառավարության ներկայացուցիչներ և այլք: Ամենից տարօրինակն այն էր, որ հատկապես «ՀԺ»-ն իր էջերում տուրք էր տալիս նաև ապստամբյալների լուսանկարները պատկերելուն, թեև ակնհայտ էր, որ երբեմն տեղադրված լուսանկարները չէին համապատասխանում իրականությանը. տեղանքը, որը պատկերված էր այնտեղ, Սիրիայում չէր, այլ ինչ-որ «անհասկանալի» ու վերացական մի նոր վայրում: Հաճախ պարբերականների կողմից նաև անհիմաստ ու ոչինչ չասող լուսանկարներ էին հայտնվում՝ անհասկանալի իրավիճակ ստեղծելով ընթերցողների շրջանում:

¹ «Մի հեռացեք Սիրիայից», «Հայկական ժամանակ» օրաթերթ, 06-11-2012 թ., <http://www.armtimes.com/37633>.

СИРИЙСКАЯ ГРАЖДАНСКАЯ ВОЙНА И ПРОБЛЕМЫ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В ПЕРСПЕКТИВЕ АРМЯНСКИХ ПЕЧАТНЫХ СМИ (2012 ГОД)

Арутюн Цатрян

Тема, исследуемая в статье, весьма актуальна. Статья содержит подробный анализ событий, произошедших в недавнем прошлом в Сирии. Армянская печатная пресса не могла пройти мимо темы гражданской войны и проблем армянской общины в Сирии. Чтобы понять, под каким углом представлялся этот вопрос ведущими армянскими СМИ, необходимо узнать страну в аспекте медиаполитики. Мы попытались провести широкомасштабное исследование каждой публикации в прессе в интересующий нас период времени и снабдить исследование профессиональным анализом.

SYRIAN CIVIL WAR AND THE PROBLEMS OF ARMENIAN COMMUNITY FROM THE PERSPECTIVE OF THE ARMENIAN PRINT MEDIA (2012)

Harutyun Tsatryan

The subject chosen by the author is quite up-to-date. The article presents a clear analysis of some past actions. Armenian print media could not turn his back on Syrian Civil War and the problems of Armenian Community, and the point from which this issue is presented by the leading representatives of the Armenian media is very important to be grasped from mass-media policy perspectives. The author of the article tried to make a broad analysis by writing about each publication separately, thus spicing them up with his own professional analysis.

«ԱՐԱՔԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ» ԹՈՒՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ 2011 Թ.

Մխիթար Հայրապետյան
ՀՀ ԳԱԱ, Արևելագիտության ինստիտուտ, հայցորդ
Գիտ. դեկ.՝ ք.գ.թ., դոց. Ռ. Մելքոնյան
Էլփոստ՝ mkhitarhay@gmail.com

Վերջին տարիներին թուրքիան սկսել է մեծ կարևորություն տալ արաբական երկրների հետ հարաբերություններին, ինչպես նաև տնտեսական համագործակցության զարգացմանը:

Ինչպես նշում են փորձագետների մի մասը, այս քայլերը պայմանավորված են թուրքիայի ներկայիս իշխանությունների կողմից որդեգրված նեոօսմանիզմի քաղաքականությամբ, որը վերաբերում է թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությանը, որն ասես թուրքիայի մեծ ու ռազմավարական տեսլականն է¹: Օսմանիզմը վերաբերում էր Օսմանյան կայսրության ներքին քաղաքականությանը (19-րդ դ. 2-րդ կես - 20-րդ դ. սկիզբ), այս ուսմունքի նպատակն էր փրկել երկիրը փլուզումից և մասնատումից²:

Նեոօսմանիզմը փորձ է վերադառնալ օսմանյան շրջանի ազդեցությանը, խորացնել կապերը նախկինում Օսմանյան կայսրության կազմի մեջ մտած և ներկայում անկախացած պետությունների և ժողովուրդների հետ: Այն նախատեսում է թուրքիային դարձնել կարևոր դերակատար, որն ունակ է լուծել ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև գլոբալ խնդիրներ:

Թուրքիան, որը մինչ 20-րդ դարավերջ տարածաշրջանային գործընթացներում մեծ հաշվով կենտրոնական դեր չէր կատարում, 1990-ական թթ. ԽՍՀՄ փլուզումից հետո Կովկասում և Միջին Ասիայում հնարավորություն ստացավ տարածել իր ազդեցությունը: Այս ամենը նոր տնտեսական և քաղաքական դոմեններ էր բացում նրա համար:

Անհերքելի է այն փաստը, որ մուտքը դեպի որևէ մեկի կողմից տնտեսապես «չիրացված» այս տարածաշրջան, թուրքիային ստատուս-քվոն փոխելու հնարավորություն տվեց:

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի շահագործումը, ինչպես նաև Կովկասի և Միջին Ասիայի էներգառեսուրսների տրանզիտի իրագործումը միջազգային առևտրատնտեսական ասպարեզում բարձրացրեցին թուրքիայի կշիռը:

Թուրքիան երկար տարիներ տարածաշրջանի մուսուլմանական պետությունների կողմից համարվում էր ոչ այնքան հուսալի գործընկեր, դա կապված էր Անկարայի նկատմամբ ԱՄՆ-ի մեծ ազդեցության հետ: Այսօր էլ թուրքիան շարունակում է անդամակցել ՆԱՏՕ-ին, այն իր տարածքում հյուրընկալում է Աֆղանստանում և Իրաքում (թեպետ ԱՄՆ-ն արդեն Իրաքից դուրս է բերել իր զորքերը) կատարվող գործողությունների համար կենսական նշանակություն ունեցող ԱՄՆ-ի ռազմական բազաները³:

2002 թ. իշխանության գլուխ կանգնեց «Արդարություն և զարգացում» իսլամամետ կուսակցությունը⁴, որին էլ փորձագետների մի մասը վերագրում է նեոօսմանիզմի քաղաքականությունը: Նոր քաղաքական կուրսի շնորհիվ արաբական աշխարհի համար թուրքիան որոշակի փոփոխությունների ենթարկվեց, այն հնարավորություն

¹ Շաքարյան Ա., Արարատից այն կողմ, Երևան, 2011, էջ 83:

² Фадеева И., Официальные доктрины в идеологии и политике османской империи (османизм-панисламизм) XIX-начало XX в., Москва, 1985, с. 268.

³ ԱՄՆ ՌՕՈՒՒ պաշտոնական կայք, Ինջիրլիքի ռազմաբազայի բաժին, <http://www.incirlik.af.mil/>.

⁴ «Արդարություն և զարգացում» կուսակցության պաշտոնական կայք, <http://www.akparti.org.tr/site/secimler/2002-genel-secim>.

ստացավ ծավալվել դեպի Մերձավոր Արևելք, արաբական գարունից հետո՝ նաև դեպի Հյուսիսային Աֆրիկա:

2011 թ. «արաբական գարունը» թուրքիայի համար ստեղծեց նոր պայմաններ և ԱՁԿ-ն փորձեց օգտվել դրանից: Փաստորեն, այսպես սկսվեց նեոսամահիզմի գաղափարախոսության իրագործման նոր փուլը, որով թուրքիան այդ կերպ ձգտում է տնտեսական, քաղաքական և մշակութային իր գերիշխանությունը տարածել նախկինում Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների և այժմ արդեն անկախ պետությունների վրա:

Ժամանակը ցույց տվեց, որ ոչ միայն «արաբական գարունը» չկարողացավ ներթափանցել թուրքիա, այլև այն թուրքիայի առջև նոր հնարավորություններ ստեղծեց:

Թուրքիան տարածաշրջանային գործընթացներին ներգրավվեց ոչ միայն որպես ՆԱՏՕ-ի անդամ, այլև որպես իսլամական աշխարհի ներկայացուցիչ: Այն հանդես եկավ իր սեփական տնտեսական ու քաղաքական շահադիտական ծրագրերով:

Օրինակ, երբ մի շարք երկրներ Տրիպոլիից դուրս էին բերում իրենց դիվանագիտական ներկայացուցիչներին, թուրք դիվանագետները շարունակում էին իրենց առաքելությունը: Տրիպոլիի թուրք դիվանագետները Լիբիայի նախկին նախագահ Կադաֆիի համար ծառայում էին որպես Արևմուտքի հետ վերջին կապող օղակ և որոշ դեպքերում անգամ բանակցություններ էին վարում Լիբիայի իշխանական զորքերի կողմից կալանավորված Արևմուտքի լրագրողների ազատ արձակման ուղղությամբ¹:

Թուրքիան ակտիվ ներգրավվեց նաև Սիրիայում սկիզբ առած հակամարտությանը՝ բաղնակողմանի աջակցություն ցուցաբերելով Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հակառակորդներին:

Երևանում կայացած մամուլի ասուլիսում Հայաստանում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Մամուլի Հարիրին նշել էր, թե իրենք գտնում են, որ 2011 թ. մարտին Սիրիայում սովորական տարածայնություն էր իշխանության և ընդդիմության միջև, որն արտահայտվում էր խաղաղ ցույցերի տեսքով, Արևմուտքը սակայն, խաղաղ ցուցարարների շարքեր մտցրեց զինյալների, որոնք սպանում էին, հրկիզում ձեռնարկություններ ու տներ. և թուրքիան պաշտպանեց արևմտյան դիրքորոշումը Սիրիայի հարցում²:

Խոսելով Իսրայելի հետ փակուղի մտած հարաբերությունների մասին՝ զարմանալի մի փաստ արձանագրենք՝ թուրքիան կարողացել է մի կողմ դնել քաղաքական անհամաձայնությունները՝ ի զոհ տնտեսական շահի:

Այսպես, 2011 թ. Իսրայելի և թուրքիայի միջև ապրանքաշրջանառությունը զգալի աճ է գրանցել՝ չնայած երկու երկրների քաղաքական հարաբերությունների կտրուկ վատթարացմանը: Թուրքիան շարունակում էր մնալ 3-րդ ամենամեծ շուկան Իսրայելի համար. առաջին 6 ամիսների ընթացքում թուրքիայից Իսրայել էր արտահանվել շուրջ 695 մլն դոլարի ապրանք, իսկ Իսրայելից թուրքիա՝ 662 մլն դոլարի ապրանք, և դա այն պարագայում, երբ կողմերից մեկն իր երկրից արտաքսում էր մյուսի դեսպանին, կամ պետական մակարդակով կողմերը վիրավորում էին միմյանց³:

Այս նույն օրինակով դեկտեմբերին թուրքիայի էներգետիկայի ու բնական պաշարների նախարար Թաներ Յըլդըզը, պատասխանելով լրագրողների հարցերին, հայտարարել էր, որ Սիրիայում տիրող քաղաքական անկայունությունը և թուրք-

¹ Time, 04/05/2011, <http://www.time.com/time/world/article/0,8599,2069584,00.html>.

² Haynews.am, 28/12/2011, <http://www.haynews.am/hy/syria-ambassador>.

³ Bloomberg, 02/09/2011, <http://www.bloomberg.com/news/2011-09-02/turkey-halts-israel-military-accords.html>.

սիրիական հարաբերություններում ստեղծված ճգնաժամը չեն կարող խոչընդոտել դեպի թուրքիա «Պանարաբական» գազատարի նախագծի իրագործմանը¹:

Թուրքիան, հաշվի առնելով իր սեփական տնտեսական շահերը, այս նախագիծը չէր ներառել Սիրիայի նկատմամբ պատժամիջոցների ցանկում:

Ստորև ներկայացնենք Թուրքիայի և 2011-2012 թթ. ներքաղաքական լուրջ վայրիվերումներ ապրած արաբական պետությունների միջև տնտեսական հարաբերությունները, որպեսզի ակներև լինի, թե ինչ կարևորություն է տալիս թուրքիան նրանց հետ հարաբերություններին:

Թուրքիա-Թունիս: Թուրքիայի և Թունիսի միջև հարաբերությունները հիմնված են պատմական և մշակութային կապերի վրա: Ինչպես գիտեք, Թունիսը մոտ երեք դար Օսմանյան կայսրության մաս է կազմել:

Մինչև թունիսյան հեղափոխությունը երկու երկրների միջև հարաբերություններում բավականին դրական զարգացում էր նկատվում: Տնտեսական համագործակցությունը տարեցտարի ավելանում էր: Երկու երկրները հիմնականում համագործակցում էին զբոսաշրջության և շինարարության ոլորտներում: Բացի այդ՝ երկու երկրների միջև տնտեսական համագործակցությանը մեծապես նպաստում էր 2006 թ. կնքված պայմանագիրը, որով սահմանվում էր ազատ առևտրային պայմաններ Թուրքիայի և Թունիսի միջև: 2005 թ. ապրանքաշրջանառությունը Թուրքիայի և Թունիսի միջև կազմում էր 500 մլն ԱՄՆ դոլլար, սակայն պայմանագրի կնքումից հետո 5 տարվա ընթացքում այն կրկնապատկվեց՝ 2007 թ. այն կազմում էր 700 մլն², իսկ 2010 թ. արդեն 1 միլիարդ ԱՄՆ դոլլար³: Սրանից բացի՝ նախատեսվում էր 2012 թ. ապրանքաշրջանառությունը երկու երկրների միջև մեծացնել՝ հասցնելով մինչև 2 մլրդ ԱՄՆ դոլլարի:

Թուրքիա-Եգիպտոս: Վերջին 40 տարիների ընթացքում երկու երկրների միջև հաստատվել էր բավականին սերտ համագործակցություն քաղաքական և տնտեսական ոլորտներում: Հարաբերությունների իրավական հիմքն են կազմում տարբեր ոլորտներին առնչվող թվով 52 միջպետական պայմանագրեր:

2007 թ. Թուրքիան և Եգիպտոսը ստորագրում են «Հուշագիր թուրք-եգիպտական ռազմավարական երկխոսության մասին»: Ապրանքաշրջանառությունը Թուրքիայի և Եգիպտոսի միջև 2004 թ. հետ համեմատած ավելացել է գրեթե 10 անգամ և 2010 թ. այն կազմում էր 3,3 մլրդ ԱՄՆ դոլլար (2004 թ. այն կազմում էր 320 մլն ԱՄՆ դոլլար), իսկ մոտակա 3 տարվա ընթացքում պլանավորվում է այն հասցնել 10 մլրդ ԱՄՆ դոլլարի⁴:

2010 թ. տվյալներով՝ Եգիպտոսում գործում էին 295 թուրքական կազմակերպություններ, որոնք ապահովում էին 50,000-ի չափ աշխատատեղեր: Թուրքական ներդրումները Եգիպտոսում 2007-2010 թթ. ընկած ժամանակահատվածում ավելացել են 20 անգամ և 2010 թ. կազմում էին 1,5 մլրդ ԱՄՆ դոլլար: Բացի այդ, նախատեսվում է, որ ներդրումները մինչև 2015 թ. կավելանան 5 անգամ և կկազմեն 5 մլրդ ԱՄՆ դոլլար: Ներդրումների այսպիսի ծավալը պայմանավորված է Եգիպտոսում առկա էժան աշխատուժով (միջին աշխատավարձը կազմում է 100 ԱՄՆ դոլլար), որի արդյունքում արտադրանքի գինը իջնում է 30 %-ով: 2010 թ. թուրքական «Սաբանջը» մեքենաշինական ընկերությունը Եգիպտոսում կառուցում է գործարան, որը տարեկան արտադրում է 500 ավտոբուս և 500 միկրոավտոբուս: Այսպիսով Եգիպտոսում գործող զբոսաշրջության համար նախատեսված ավտոբուսների 45 %-ը

¹ Zaman, 06/12/2011,

<http://www.zaman.com.tr/haber.do?haberno=1210961&keyfield=74616E65722079C4B16C64C4B17A>.

² Հինական «Ժենմին ժիբաո» թերթ, 27/05/2008, <http://russian.people.com.cn/31520/6418996.html>

³ **Волович А.**, Турция и «арабские революции» 2011 года, Институт Ближнего Востока, <http://www.iimes.ru/rus/stat/2011/26-05-11a.htm>.

⁴ Նույն տեղում:

թուրքական արտադրության են: Մեծ կարևորություն ունեն նաև տրանս-արաբական գազամուղի 4-րդ օղակի կառուցումը, որի շնորհիվ եգիպտական գազը հասավ Թուրքիա¹:

Այսպիսով՝ Թուրքիայի և Եգիպտոսի միջև հաստատվել էին տնտեսական բավականին սերտ հարաբերություններ և մեծ մասամբ դրանով էր բացատրվում Թուրքիայի վարած սպասողական քաղաքականությունը Եգիպտոսի նկատմամբ սկզբնական շրջանում:

Թուրքիա-Լիբիա: Թուրքիայի և Լիբիայի միջև նույնպես առկա էր տնտեսական փոխշահավետ համագործակցություն: Երկու երկրները հիմնականում համագործակցում էին շինարարության ոլորտում: Թուրքական շինարարական ընկերությունները ընդգրկված էին մի շարք ծրագրերի իրականացման մեջ: Բոլոր շինարարական ծրագրերը գնահատվում էին 15 մլրդ ԱՄՆ դոլար: Թուրքիայի և Լիբիայի միջև առևտրաշրջանառությունը 2010 թ. դրությամբ կազմում էր 2,4 միլիարդ ԱՄՆ դոլար²: Ինչ վերաբերում է քաղաքական հարաբերություններին, ապա դրանք փոփոխական բնույթ են կրել:

Թուրքիա-Սիրիա: 1938-1939 թթ. Ֆրանսիան Ալեքսանդրետի սանջակը Անտիոք (Չաթայ) քաղաքով զիջեց Թուրքիային, որից հետո սկիզբ առավ Սիրիայի և Թուրքիայի միջև տարածքային վեճ, որը երկար տասնամյակներ մնում էր օրակարգում: Սիրիան 1946 թ.՝ անկախություն ձեռք բերելուց հետո, մինչև այսօր չի հաշտվում այդ կորստի հետ³: Թուրքիայի և Սիրիայի միջև հարաբերությունները մինչև Բաշար Ալ-Ասադի իշխանության գալը բավականին լարված էին, և որևէ համագործակցության մասին խոսք չէր կարող լինել: Հիմնական խնդիրները կապված էին տարածքային պահանջների հետ, քրդական խնդրի, թուրք-սիրայելական հարաբերությունների, Թուրքիայի ՆԱՏՕ-անդամակցությամբ և այլն: Սակայն Բաշար Ասադի՝ իշխանության գալով 2 երկրների միջև հարաբերությունները կարգավորման միտումներ ցուցաբերեցին: Հատկապես կարևոր էր 2004 թ. Սիրիայի նախագահ Ասադի եռօրյա այցը Թուրքիա, որից հետո թուրք-սիրիական հարաբերությունները թևակոխեցին զարգացման նոր փուլ: Դիվանագիտական հարաբերությունների զարգացումը նպաստեց նաև տնտեսական համագործակցության զարգացմանը⁴: Այժմ Թուրքիայի և Սիրիայի միջև կան կնքված մոտ 50 պայմանագրեր, որոնք վերաբերում են տնտեսության տարբեր ոլորտներին: Վերջին 10 տարիների ընթացքում ապրանքաշրջանառությունը Թուրքիայի և Սիրիայի միջև ավելացել է գրեթե 3 անգամ: Եթե 2000 թ. այն կազմում էր 730 մլն ԱՄՆ դոլլար, ապա 2010 թ.՝ արդեն 2,5 մլրդ ԱՄՆ դոլար:

2010 թ. թուրքական ներդրումները Սիրիայում հասան 1 մլրդ ԱՄՆ դոլարի⁵: 2009 թ. Թուրքիայի և Սիրիայի միջև կնքվում է հուշագիր գազատար ուղիները միացնելու մասին. այսպիսով Սիրիան Իրանից և Իրաքից եկող գազը կարող էր ստանալ Թուրքիայից: Մոտակա ժամանակաշրջանում պլանավորվում էր ստեղծել թուրք-սիրիական համատեղ բանկ, կառուցել երկաթգիծ:

Զբոսաշրջությունը երկու երկրների միջև նույնպես զարգացում էր ապրում: 2010 թ. 750,000 սիրիացի այցելել է Թուրքիա, իսկ 1,350,000 թուրք Սիրիա⁶:

¹ Волович А.

² Տե՛ս Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայք, http://www.mfa.gov.tr/turkiye-libya_siyasi-iliskileri.tr.mfa.

³ Suriye Bilad-ı Şamin hazin öyküsü, <http://suriye.ihh.org.tr/turkiye/koloni/koloni.html>.

⁴ Syria FW, 08/03/2010, <http://www.forwardsyria.com/story/161/A%20recent%20history%20of%20Syrian-Turkish%20relations>.

⁵ Տե՛ս Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայք, http://www.mfa.gov.tr/turkey_s-commercial-and-economic-relations-with-syria.en.mfa.

⁶ Տե՛ս Волович А., Տե՛ս Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայք, http://www.mfa.gov.tr/turkey_s-commercial-and-economic-relations-with-syria.en.mfa.

Այսպիսով, Թուրքիան զարգացնում է երկկողմանի և բազմակողմանի համագործակցություն արաբական երկրների հետ: Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ արաբական երկրների հետ տնտեսական հարաբերությունների զարգացումը սկսել է կարևոր տեղ զբաղեցնել, որը նաև դիտվում է որպես այլընտրանք ԵՄ-ին¹: Դրա մասին են վկայում Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի և վարչապետ Ռ. Էրդողանի հաճախակի այցելությունները Արաբական երկրներ՝ տնտեսական հարաբերությունների և առևտրի զարգացման նպատակով²:

Վերջին 10 տարիների ընթացքում ապրանքաշրջանառությունը Թուրքիայի և արաբական երկրների միջև զգալի աճ է ցուցաբերել: Եթե մինչև 2004 թ. Թուրքիայի և Արաբական երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմում էր 13 մլրդ ԱՄՆ դոլար, ապա 2004-2010 թթ. ընթացքում այն գրեթե կրկնապատկվել է, և 2010 թ. այն կազմում էր 33.5 մլրդ ԱՄՆ դոլար: Թուրքիայի ընդհանուր ապրանքաշրջանառությունը աշխարհի հետ 2010 թվականին կազմում էր 300 միլիարդ դոլար, որից 185 մլրդ կազմվում է ապրանքների ներկրումից, իսկ մնացած 115 մլրդ՝ արտահանումից:

Թուրքիայում արաբական երկրներ կատարել են 14 միլիարդի ներդրումներ: Թուրքական շինարարական ընկերությունները ընդգրկված են հազարավոր նոր ծրագրերի իրականացման մեջ, որոնց ընդհանուր արժողությունը կազմում է 190 մլրդ ԱՄՆ դոլար և ընդգկում են գրեթե բոլոր արաբական երկրները³:

Թուրքիան, համագործակցելով արաբական երկրների հետ, ակտիվորեն օգտագործում է այդ երկրներում գտնվող նավթի պաշարները, մասնավորապես համեմատաբար մատչելի գնով գնում է չմշակված նավթը և մի քանի անգամ ավելի քանկ գնով վաճառում այլ երկրների⁴:

Եվ որքան էլ, որ թուրքական դիվանագիտությունը անգոյշ, երբեմն էլ ուշացած քայլեր էր կատարում, այնուամենայնիվ, նրան կարծես հաջողվեց «արաբական գարունը» ծառայեցնել իր սեփական շահերին: Այսպես, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը սկսեց իր այցը «արաբական գարնան» երկրներ (Եգիպտոս, Լիբիա, Թունիս): Այցի նպատակն այդ երկրներում «ժողովրդավարության հաստատումն» էր, ինչպես նաև Մերձավոր Արևելքում ռազմավարական գործընկերության հարցերի քննարկումը⁵: Բայց այն, թե ինչպես էին այս երկրներում ընդունում Թուրքիայի վարչապետին, ցույց էր տալիս, որ Թուրքիայի հեղինակությունն ու ազդեցությունը գնալով մեծանում է արաբական աշխարհում, դրա մասին են վկայում Կահիրեում Էրդողանին դիմավորող բազմահազարանոց բազմությունը, ովքեր Էրդողանին դիմավորում էին թուրքական դրոշներով ու «Եգիպտոսը և Թուրքիան ձեռք ձեռքի են քայլելու», «Եգիպտոսը և Թուրքիան վերացնելու են Գազայի շրջափակումը», «Էրդողանը Իսլամի փրկիչ» կարգախոսներով և պաստառներով⁶: Ավելին, մեջբերենք Լիբիայի անցումային ազգային խորհրդի նախագահ Մուստաֆա Աբդ Ալ-Ջալիլի հայտարարությունը. «Շատ կարևոր է, որ հարգարժան Էրդողանը Միջին Արևելքում և իսլամական աշխարհում կարևոր դիրք է գրավում: Պարոն Էրդողանը և թուրք ժողովուրդը իսլամական աշխարհի առաջնորդի դերում են»⁷: Մասնավորապես, Էրդողանի այցին անդրադարձել էր բրիտանական The Independent թերթը. «Էրդողանը սկսել է արաբական աշխարհում առաջնորդ լինելու իր արշավը, և իր

¹ Տե՛ս ՌԴ ազգային անվտանգության պաշտոնական կայք, http://www.nationalsecurity.ru/maps/gas_europe.htm.

² **Волович А.**

³ Տե՛ս <http://m.expert.ru/expert/2012/31/imam-ne-sderzhal-azarta/>.

⁴ **Волович А.**

⁵ Arab Spring and Erdogan's Visit to Egypt, 14/09/2011,

<http://www.sde.org.tr/en/columns/1005/arab-spring-and-erdogans-visit-to-egypt.aspx>.

⁶ Zaman, 13/09/2011, <http://www.zaman.com.tr/haber.do?haberno=1179122&title=erdogana-kahirede-miting-gibikarsilama>.

⁷ Haber Turk, 15/09/2011, <http://www.haberturk.com/dunya/haber/669696-erdogan-islam-dunyasinin-lideri>.

այդ մտադրություններն ի կատար ածելու համար այցելում է հեղափոխությունների հետևանքով իշխանափոխության ենթարկված Թունիս, Եգիպտոս և Լիբիա»¹:

Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիում խանդավառված ժողովրդի առաջ Թուրքիայի վարչապետը հայտարարեց. «Տարածաշրջանում ավտորիտար ռեժիմների ժամանակն իր ավարտին է մոտենում, տոտալիտարիզմը սպառել է իրեն: 21-րդ դարում մարդիկ ցանկանում են ապրել ազատ երկրում: Արյան գնով հնարավոր չէ իշխանության աթոռին երկար մնալ: Առաջնորդները, ովքեր սեփական ժողովրդի արյունն են հեղում, վաղ թե ուշ անհետանալու են: Լիբիացիներն ապացուցեցին, որ կարող են ապրել ազատ»²: Այսպիսով, պետք է փաստել՝ կասկածից վեր է, որ Թուրքիան կփորձի օգտվել «արաբական գարունից»՝ այն ծառայեցնելով նաև այլ նպատակների իրականացման համար:

«АРАБСКАЯ ВЕСНА» НА ПОВЕСТКЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ В 2011 ГОДУ

Мхитар Айрапетян

Непредвиденные события, направленные на коренные политические изменения в арабском мире, имели глубокое влияние на будущий курс внешней политики Турции. «Арабская весна» в очередной раз сконцентрировала внимание мирового сообщества на политике Турции на Среднем Востоке. Она также выявила непреодолимые противоречия между нормативными и реалистическими течениями в этой политике. Турция пыталась консолидировать свое влияние на арабские страны, а также заявить о себе, как о ключевом партнере Запада в вопросе адаптации к демократическим трансформациям в регионе.

Основное внимание в статье направлено на то, чтобы дать оценку действий внешней политики Турции, направленной на повышение влияния страны на Среднем Востоке в ранний период «арабской весны».

THE ARAB SPRING ON TURKEY'S FOREIGN POLICY AGENDA IN 2011

Mkhitar Hayrapetyan

The unforeseen developments in the direction of drastic political changes in the Arab world had deep influence on the future of Turkish foreign policy course. The Arab Spring placed Turkey's proactive Middle East policy at the top of international attention once again. It also revealed the discrepant tension between the normative and realpolitik developments within that policy. Turkey tried to consolidate its influence over Arab countries and also to demonstrate itself to be a key partner of the West in dealing with the democratic transformation of the region.

The major objective of this article is to evaluate the performance of Turkish foreign policy in the early phase of the "Arab Spring" while trying to exert its influence in the Middle East.

¹ The Independent, 13/09/2011, <http://www.independent.co.uk/news/world/europe/turkish-pm-sets-out-on-mission-to-become-leader-of-arab-world-2353684.html>

² Reuters, 16/09/2011, <http://www.reuters.com/article/2011/09/16/turkey-libya-erdogan-idUSL5E7KG1YJ20110916>

**ԹՈՒՐԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԲԱԼԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ
«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ**

Վարդան Կոստանյան

ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, մագիստրոս

Գիտ. դեկ.՝ Բ.Գ.Ք., դոց. Ռ. Մելքոնյան

Էլփոստ՝ kostanyanvardan@yahoo.com

Երրորդ հազարամյակի առաջին տասնամյակում թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցան մի շարք կարևոր փոփոխություններ, որոնք լիովին նոր ելքային և տեսք հաղորդեցին դրան: Սառը պատերազմի ավարտից հետո ընկած ժամանակահատվածում թուրքիան, ըստ ելքային, հայտնվել էր մի իրավիճակում, երբ նա խնդրահարույց հարաբերություններ ուներ իր գրեթե բոլոր հարևանների հետ: Հայաստանի հետ հարաբերությունները սրվել էին Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեյջանին անվերապահ աջակցություն ցույց տալու և որպես դրա հետևանք հայ-թուրքական սահմանը փակելու հետևանքով, Հունաստանի հետ շարունակվում էին վեճերը Էգեյան ծովում ջրային սահմանների շուրջ, Սիրիայի հետ վատ հարաբերություններ էին ստեղծվել վերջինիս կողմից Քրդական բանվորական կուսակցությանը (PKK) ցուցաբերվող աջակցության պատճառով: Դրանից զատ հաճախակի էին դարձել թուրքական բանակի ստորաբաժանումների ներխուժումները Հյուսիսային Իրաք՝ քուրդ զինյալներին հետապնդելու նպատակով, հարթ չէին հարաբերությունները նաև Իրանի հետ: Այս պայմաններում թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղվածությունը Արևմուտքի հետ ռազմաքաղաքական դաշինքի պահպանումն ու ամրապնդումն էր, ինչը հարևան երկրներում, մասնավորապես իսլամական աշխարհում թուրքիայի հանդեպ ակնհայտ անվստահելի և զգուշավոր վերաբերմունք էր առաջացնում:

2002 թ. խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ Արդարություն և զարգացում կուսակցությունը՝ Ռեջեփ Թայիբ Էրդողանի և Աբդուլահ Գյուլի ղեկավարությամբ: Այս իրադարձությունը շրջադարձային նշանակություն ունեցավ թուրքիայի արտաքին քաղաքական կողմնորոշման համար: Այժմ առաջնահերթություններ հռչակվեցին հարաբերությունների կարգավորումն ու զարգացումը անմիջականորեն թուրքիայի հարևան պետությունների, մասնավորապես Մերձավոր Արևելքի երկրների հետ: Բացի այդ այս նոր քաղաքականությունն ընդգրկում էր նաև Բալկանների և Անդրկովկասի երկրների հետ հարաբերությունները: Այս նոր արտաքին քաղաքական հայեցակարգը, որի հեղինակն է համարվում թուրքիայի ներկայիս արտգործնախարար Ահմետ Դավութօղլուն, վերլուծաբանների կողմից ստացավ «նեոսմանիզմ» անվանումը: Այս նոր տերմինի կիրառումը պայմանավորված էր նրանով, որ այս քաղաքականության հիմքում ընկած է թուրքիայի՝ Օսմանյան կայսրության ժառանգորդ լինելու տեսակետը, այն է՝ թուրքիան պետք է ակտիվ դերակատարում ունենա այն տարածաշրջանում, որը նախկինում Օսմանյան կայսրության տարածքն էր հանդիսանում¹:

Ահմետ Դավութօղլուի մշակած «ստրատեգիական խորության», նույն ինքը՝ նեոսմանիզմի քաղաքականության հաջորդ կարևոր աշխարհագրական ուղղությունը Բալկաններն են: Անիրաժեշտ է նշել, որ Բալկանյան թերակղզին մշտապես էլ եղել է ռազմավարական տարածաշրջան թուրքիայի համար՝ սկսած Օսմանյան տերության ժամանակաշրջանից, նաև թուրքիայի Հանրապետության օրոք: Բնականա-

¹ Murinson A., Turkish Foreign Policy in the Twenty-First Century, The Begin-Sadat Center for Strategic Studies, Bar-Ilan University, "Mideast Security and Policy Studies", No. 97, 2012, pp. 12-13.

բար, այն յուրովի իմաստավորում ստացավ նեոօսմանիզմի քաղաքական դոկտրինի ընդունումից հետո¹:

Նեոօսմանիզմի դոկտրինի մեջ Բալկանների կարևոր տեղը բացատրվում է մի շարք հանգամանքներով. նախ դա միանգամայն համընկնում է Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության ավանդական եվրոպական ուղղության հետ, միևնույն ժամանակ նաև բավարարում է ներքին՝ հատկապես արմատական իսլամական հայացքներ ունեցող քաղաքացիների պահանջը, քանի որ այս դեպքում Թուրքիան հանդես է գալիս Բալկանների իսլամադավան բնակչության, մասնավորապես բոսնիացիների պաշտպանի դերում, ինչը որոշ չափով նպաստում է նաև Մերձավոր Արևելքում Թուրքիայի հեղինակության բարձրացմանը² :

Թուրքիայի ներգրավումը Բալկաններում ունի նաև այլ պատճառներ: Նախևառաջ դա երկար ընդհանուր պատմությունն ու մշակութային ընդհանրությունն է, քանի որ երկար դարեր Բալկանները եղել են Օսմանյան պետության մի մասը: Չնայած այս հանգամանքին, Բալկանների բնակչության շրջանում, հատկապես նրանց քրիստոնյա հատվածի պարագայում, առկա են Թուրքիայի հանդեպ որոշակի բացասական վերաբերմունք՝ պայմանավորված օսմանյան պետության կողմից իրականացրած բռնություններով և հալածանքներով:

Բալկաններում Թուրքիայի ակտիվության մեկ այլ կարևոր դրդապատճառ է Թուրքիայում բնակվող, ծագումով Բալկաններից ստվարաթիվ համայնքի առկայությունը: Թուրքիայի քաղաքացիների այս խումբը, որը բաղկացած է հիմնականում բոսնիացիներից և ալբանացիներից, թվաքանակով մի քանի միլիոն է և հանդիսանում է թուրքական հասարակության ամենաակտիվ հատվածներից մեկը: Ունենալով բազմաթիվ կազմակերպություններ, ասոցիացիաներ և այլ կառույցներ՝ նրանք ակտիվորեն լոբբինգ են անում կառավարությունում՝ Բալկանների հանդեպ առավել ակտիվ քաղաքականություն վարելու կոչով, քանի որ այդպիսով ցանկանում են պաշտպանել այնտեղ բնակվող իրենց ազգակիցների շահերը :

Մեկ այլ կարևոր հանգամանք է Բալկանների աշխարհագրական դիրքը: Տեղակայված լինելով Թուրքիային շատ մոտ՝ Բալկաններում տիրող անկայունությունը իր զգալի ազդեցությունն կարող է թողնել նաև Թուրքիայի վրա:

Պակաս կարևորություն չունի նաև այս խնդրի տնտեսական կողմը, այն է՝ Թուրքիան ձգտում է Բալկաններում ամրապնդել իր տնտեսական ներկայությունը: 2000-2008 թթ. ընթացքում Թուրքիայի և Բալկանյան երկրների միջև առևտուրը գումարային առումով աճեց շուրջ վեց անգամ՝ 2.9 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով 17.7 մլրդ: Միայն 2009 թ. Թուրքիայից Բալկաններ ուղղակի ներդրումների ծավալը 4.6 մլրդ դոլար էր, իսկ վերջին երկու տասնամյակներում թուրքական շինարարական ընկերությունները ընդհանուր առմամբ Բալկաններում ներդրել էին 8.8 մլրդ դոլար՝ տարբեր նախագծերի շրջանակներում³ :

Ահմետ Դավութօղլուի արտգործնախարար նշանակվելուց երկու ամիս անց Թուրքիան ստանձնեց Հարավարևելյան Եվրոպայի Համագործակցության Գործընթաց նախաձեռնության (South-East European Cooperation Process-SEECP) նախագահությունը: Այդ մեկ տարվա ընթացքում զգալիորեն ակտիվացան բարձր մակարդակի փոխայցելությունները Թուրքիայի և Բալկանյան պետությունների միջև: Թուրքիայի նախաձեռնությամբ կազմակերպվեցին և անցկացվեցին մի շարք կարևոր

¹ **Rüma I.**, Turkish Foreign Policy Towards the Balkans: New Activism, Neo-Ottomanism or/so what?, "Turkish Policy Quarterly", Vol. 9, 2010, No. 4.

² **Constantinides S.**, "Turkey: The Emergence of a New Foreign Policy, the Neo-Ottoman Imperial Model", "Journal of Political and Military Sociology", Vol. 24, No. 2, 1996.

³ **Türbedar E.**, Turkey's New Activism in Western Balkans: Ambitions and Obstacles, Insight Turkey Vo. 13, No. 3, 2011, pp. 139-158.

միջոցառումներ, որոնք որոշակիորեն բարձրացրեցին թուրքիայի վարկանիշը Բալկաններում:

Ստորև առավել հանգամանալից և առարկայական կներկայացնենք թուրքիայի նեոսոսնակական Բալկանյան քաղաքականությունը՝ կոնկրետ երկրների օրինակներով:

Մինչև նախորդ դարի 1990-ական թթ. սկիզբը թուրքիայի և Արևմտյան Բալկանների միջև հարաբերությունները բավականին սահմանափակ բնույթ ունեին, քանի որ կար միացյալ Հարավսլավիան, որը սոցիալիստական ճամբարի երկրների թվին էր պատկանում, իսկ թուրքիան ինչպես գիտենք ՆԱՏՕ-ի բլոկի մեջ էր: Սակայն իրավիճակը փոխվեց Հարավսլավիայի աստիճանական քայքայման և դրա հիմքի վրա առանձին հանրապետությունների ձևավորման արդյունքում: Ստեղծված իրավիճակը թուրքիայի առջև նոր հորիզոններ էր բացում՝ նշված տարածաշրջանում իր ազդեցությունը և դիրքերը հաստատելու և ամրապնդելու համար¹:

Նորանկախ հանրապետություններից թուրքիայի հետ ամենատեսակետ և խորը մշակութային ու հոգևոր կապերն ունեն Բոսնիան և Հերցեգովինան: Այս հարաբերությունների հիմքում նախ և առաջ ընկած է կրոնական միասնությունը. ինչպես գիտենք, բոսնիացիները մուսուլման են, և հենց այս հանգամանքի պատճառով անընդհատ ունեցել են թուրքիայի աջակցությունը սերբերի հետ պատերազմում, իսկ հետո նաև տնտեսապես և քաղաքականապես:

Բոսնիան և Հերցեգովինան, և մասնավորապես բոսնիացիները մշտապես առանձնահատուկ տեղ են գրավել թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգում: Ինստուևականների սկզբին թուրքիան ամեն ինչ անում էր, որպեսզի ապահովի ՆԱՏՕ-ի ինտեգրացիան Բոսնիա-Հերցեգովինայի տարածք, իսկ այնուհետև հանդիսանում էր միջազգային խաղաղարար նախաձեռնություններում ռազմական և ոստիկանական անձնակազմի գլխավոր մատակարարներից մեկը: 2010 թ. թուրքիան EUFOR-Althea խաղաղապահ առաքելության գլխավոր մասնակիցներից էր անձնակազմի թվաքանակով, որոնք տեղակայված էին Բոսնիա և Հերցեգովինայի յոթ քաղաքներում: Թուրքիան նաև ակտիվորեն աջակցում է Բոսնիա և Հերցեգովինայի ՆԱՏՕ-ի անդամակցությանը :

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Բոսնիա և Հերցեգովինայի ողջ բնակչությունը չէ, որ կողմնակից է թուրքիայի ակտիվ ներգրավմանը: Այն դեպքում երբ բոսնիացիները՝ մուսուլմանները, թուրքերին համարում են իրենց շահերի երաշխավոր, սերբերը նրանց ներկայությունը համարում են վտանգ Դեյտոն-Փարիզյան համալարգին, որով պահպանվում է համեմատական հավասարակշռությունը: Բոսնիա և Հերցեգովինայի մյուս էթնիկական խումբը՝ խորվաթները, համարում են, որ թուրքիան կարող է խոչընդոտել Բոսնիա և Հերցեգովինայում հանդես գալ որպես երրորդ իրավահավասար ուժ:

Անկարայի հեղինակությունը միջազգային հանրության շրջանում զգալիորեն բարձրացավ, երբ թուրքիային հաջողվեց բանակցությունների սեղանին նստեցնել Սերբիայի իշխանություններին և բոսնիացիներին, ում միջև հարաբերություններն ատելության աստիճանի էին հասնում: Այս նախաձեռնության անմիջական հետևանք եղավ այն, որ բավականին երկար ընդմիջումից հետո Բոսնիա և Հերցեգովինայի դեսպանը վերադարձավ Բելգրադ: 2010 թ. ապրիլին տեղի ունեցավ եռակողմ հանդիպում թուրքիայի, Սերբիայի նախագահների և Բոսնիա-Հերցեգովինայի նախագահության նախագահող Հարիս Սիլաջիչի միջև, որտեղ կողմերն ստորագրեցին Ստամբուլի հռչակագիրը, որով հաստատեցին Բոսնիա և Հերցեգովինայի տարածքային ամբողջականությունը: Դրանից մեկ ամիս անց թուրքիայի հորդորով Սեր-

¹ Petrović Ž. and Reljić D., Turkish Interests and Involvement in the Western Balkans: A Score-Card, Insight Turkey Vol. 13/ No. 3, 2011, pp. 159-172.

բիայի խորհրդարանը ընդունեց հայտարարություն, որով դատապարտեց Սրբերեն-նիցայի ցեղասպանությունը :

Թուրքիան և Բոսնիա և Հերցեգովինան համերաշխություն են դրսևորում նաև մի շարք կարևորագույն միջազգային հարցերի շուրջ: Մասնավորապես նրանք միևնույն տեսակետն ունեն սիրիական խնդրի կապակցությամբ: Թուրքիայի արտգործնախարար Ահմետ Դավութօղլուն և Բոսնիա-Հերցեգովինայի արտգործնախարար Զլատկո Լագումձիան համատեղ հայտարարություն հրապարակեցին, որտեղ զուգահեռներ էին Բոսնիական պատերազմի և Սիրիայում ընթացող ռազմական գործողությունների միջև՝ այս կապակցությամբ հիշատակելով Սրբերեննիցայի ցեղասպանության մասին և կոչ անելով միջազգային հանրությանը ակտիվորեն միջամտել՝ թույլ չտալու որ նման դեպքերը կրկնվեն: Հայտարարությունը եզրափակվում է նման ձևակերպմամբ. «Մենք վստահ ենք, որ Սիրիայի ժողովուրդը ի վերջո կազատվի արյունարբու ռեժիմի ճանկերից: Ժողովրդի կամքը միշտ հաղթում է: Տասնամյակներ տևած ճնշումներից հետո այդ մարդիկ ցանկանում են ապրել մի երկրում, որտեղ գերակայում են իրենց իրավունքները, այլ ոչ թե բռնապետներինը: Սիրիայի ժողովուրդը ցանկանում է ունենալ այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են մարդու իրավունքները, իրավունքի գերակայությունը և արդյունավետ կառավարումը, որից նրանք մինչ այժմ զրկված են եղել»¹:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Թուրքիայի նեոսոսնական քաղաքականությունը Բալկաններում բոլորի կողմից չէ, որ ողջունվում է: Այն հատկապես բացասական արձագանքի է արժանանում սերբական ազգայնական շրջանակների կողմից: Այս կողմի տեսակետի համաձայն Բալկաններում նեոսոսնական քաղաքականության նպատակը այսպես կոչված «Կանաչ միջանցքի» ձևավորումն է: Դրա էությունը, ըստ սերբ հեղինակների հետևյալն է. ստեղծել մուսուլման մեծամասնություն ունեցող քաղաքական միավորների շղթա՝ հարավ-արևելքում սկսած Ստամբուլից, և հասնելով հյուսիս-արևմուտքում մինչև Բոսնիա և Հերցեգովինա: Այն նաև նպատակ է հետապնդում ամրապնդել Բալկանների մահմեդականների վստահությունը սեփական ուժերի նկատմամբ՝ հիմք նախապատրաստելով հետագա քաղաքական ծավալման համար: Այս ռազմավարությունը բաղկացած է մի շարք տարրերից. նախ պայմաններ ստեղծել մահմեդական պետություններում ժողովրդագրական աճի համար, աջակցել մահմեդական բնակչություն ունեցող տարածքային միավորներին, որոնք ունեն ռեալ կամ տեսական հնարավորություններ ինքնորոշման պահանջ ներկայացնելու համար, ամրապնդել իսլամական ինքնությունը և ճնշել քրիստոնյաներին, քաջալերել մահմեդականների առավել ծավալապաշտական նկրտումները:

Ըստ սերբ հեղինակ Տրիֆկովիչի, առանց Թուրքիայի կողմից ցուցաբերվող մեծ աջակցության անհնար կլիներ իրագործել մուսուլմանական վերածնունդը Բալկաններում՝ նախկինում Օսմանյան պետության մաս կազմած այդ տարածքում: Ըստ նրա, ԱԶԿ-ի և Երդողանի իշխանության գալով Թուրքիան դարձել է ծավալապաշտ և Բալկանների կայունության համար վտանգ ներկայացնող մի պետություն: Մինչդեռ Երդողանի կուսակցությունը փորձում է աշխարհին ներկայանալ որպես չափավոր իսլամի հետևորդ, այնուհանդերձ նրա կողմից հովանավորվող բալկանյան իսլամադավան երկրներում լուրջ զարգացում է ապրում ծայրահեղական և ֆունդամենտալ իսլամը: Քեմալական գաղափարախոսությունը որոշ չափով զսպում էր այս

¹ Joint Article by **Ahmet Davutoglu**, Minister of Foreign Affairs of Turkey and **Zlatko Lagumdzija**, Deputy Prime Minister and Minister of Foreign Affairs of Bosnia and Herzegovina published in Washington Post on 2 August 2013.

նկրտումները, որոնք սակայն նոր ուժ ստացան Էրդողանի և նրա կուսակիցների օրոք¹:

Այս ամենով հանդերձ՝ Թուրքիային հաջողվել է վերջին մի քանի տարիների ընթացքում բարելավել հարաբերությունները Սերբիայի հետ: Վերջին տարիներին բավական ակտիվացել են երկկողմ բարձրաստիճան այցերը՝ այդ թվում Թուրքիայի վարչապետ Էրդողանի, նախագահ Գյուլի և Սերբիայի նախագահ Բորիս Տադիչի կողմից:

Թուրքիայի և Սերբիայի հարաբերությունների վրա բացասական ազդեցություն է թողնում այն հանգամանքը, որ Հարավսլավիայի լուծարումից հետո սկսված պատերազմների ժամանակ Թուրքիան օժանդակում էր սերբերի դեմ կռվող ուժերին՝ բոսնիացիներին և Կոսովոյի ալբանացիներին:

Թուրք-սերբական հարաբերությունները որոշակիորեն լավացան, երբ 2000 թ. տապավեց Սլոբոդան Միլոշեվիչի իշխանությունը: Այնուամենայնիվ, երբ 2008 թ. Թուրքիան դարձավ առաջին պետություններից մեկը, որ ճանաչեց Կոսովոյի անկախությունը, հարաբերությունները կրկին մտան ճգնաժամի փուլ:

2013 թ. հոկտեմբերին Կոսովո կատարած այցի ընթացքում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանը սկանդալային հայտարարություն արեց, ասելով թե՝ «Կոսովոն Թուրքիա է...»²:

Այս հայտարարությունը կտրուկ արձագանքի արժանացավ Սերբիայի արտաքին քաղաքականության գերատեսչության կողմից: Սերբական կողմի հայտարարության մեջ նշվում է. «Թուրքիայի այս հայտարարությունը չի կարող ընդունվել որպես բարեկամական: Դրանք հակասում են այն հավաստիացումներին, որոնք մենք լսում ենք մեր թուրք գործընկերներից... Աշխարհում բոլորը գիտեն, որ Կոսովոն սերբական անուն է, սերբական հող է, նույնիսկ նրանք, ովքեր պաշտոնապես ճանաչել են այդ պետվորպետությունը»³:

Ալբանիայի հետ Թուրքիայի հարաբերությունները սկսեցին արագորեն զարգանալ, երբ այդ երկրում ընկավ կոմունիստական ռեժիմը: Ալբանիան ստացավ զգալի տնտեսական և ռազմական աջակցություն Թուրքիայի կողմից: Այս հարաբերությունների զարգացման համար նաև հիմք էին ծառայում ալբանացիների լարված հարաբերությունները հույների հետ: Պակաս կարևոր դեր չէր խաղում նաև իսլամի գործոնը, որը Ալբանիայի բնակչության մեծամասնության կրոնն է: Իսկ Թուրքիայի կողմից Կոսովոյի անկախությանը ցուցաբերած աջակցությունը լրացուցիչ հանգամանք էր, որ բարձրացնում էր այդ երկրի հեղինակությունը ալբանացիների շրջանում: Միևնույն ժամանակ, թե Ալբանիայում, թե ալբանացիներով բնակեցված Կոսովոյում բավականին զգուշավոր են մոտենում իրենց ներքին գործերի Թուրքիայի միջամտության դեպքերին: Հունաստանի հետ վատ հարաբերությունները մեկ այլ պետության ևս դրդեցին Թուրքիայի հետ հաստատել ջերմ հարաբերություններ: Խոսքը Մակեդոնիայի մասին է, որը Հունաստանի հետ վեճ ունի նախևառաջ կապված իր անվան վիճարկման հետ: Թուրքիան առաջին պետություններից էր, որ ճանաչեց Հարավսլավիայի անկումից հետո առաջացած այս պետությունը՝ ընդ որում հենց Մակեդոնիա անվանմամբ՝ ի հեճուկս Հունաստանի, որն այդ անունը համարում է իր հյուսիսային նահանգների անվանումը: Այս դեպքը հետաքրքրական է այնքանով, որ քրիստոնյա մեծամասնություն ունեցող բալկանյան պետություններից Թուրքիայի հետ ամենասերտ հարաբերություններն ունի հենց Մակեդոնիան⁴:

¹ Trifkovic S., Neo-Ottomanism in Action: Turkey as a Regional Power, Published on The Lord Byron Foundation for Balkan Studies (<http://www.balkanstudies.org>).

² PM Erdoğan: Kosovo Is Turkey, <http://english.sabah.com.tr/national/2013/10/24/pm-erdogan-kosovo-is-turkey>

³ Serbia condemns Turkish PM Erdoğan's remarks, <http://www.hurriyetdailynews.com/serbia-condemns-turkish-pm-erdogans-remarks.aspx?PageID=238&NID=56831&NewsCatID=351>

⁴ Constantinides S..

ОТНОШЕНИЯ ТУРЦИИ С ЗАПАДНЫМИ БАЛКАНАМИ В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ ПАРТИИ «СПРАВЕДЛИВОСТЬ И РАЗВИТИЕ»

Вардан Костанян

На парламентских выборах 2002-ого года в Турции партия «Справедливость и развитие», возглавляемая Реджеб Тайиб Эрдоганом и Абдуллой Гюльем, одержала решительную победу. Это событие стала ключевым во внешней политике Турции. Теперь её приоритетом стала нормализация и развитие отношений с непосредственными соседями-государствами: Ближним Востоком, Южным Кавказом и Балканами. Основоположником новой политики стал нынешний министр иностранных дел Ахмед Давутоглу – бывший советник премьер министра Эрдогана по внешней политике.

Выбор Западных Балкан как одного из главных направлений внешней политики Турции обусловлен несколькими факторами: важность позиции Западных Балкан в отношениях Турции с Европой; желание турецкого руководства распространить свое влияние на мусульманское население европейских стран, что в свою очередь укрепило бы позиции Турции во всем регионе, и историческое прошлое Балкан как одной из составных частей бывшей Османской империи.

TURKEY'S RELATIONS WITH THE WESTERN BALKANS DURING THE GOVERNMENT OF JUSTICE AND DEVELOPMENT PARTY

Vardan Kostanyan

In the parliamentary elections in 2002 in Turkey the Justice and Development Party (Turkish: Adalet ve Kalkınma Partisi - AKP) took an overwhelming victory headed by Recep Tayyip Erdoğan and Abdullah Gül. This was a pivotal turn in the political orientation of Turkey. Now the improvement of relations with the close neighborhood of Turkey was proclaimed as a foreign policy priority, particularly with the countries of the Middle East, South Caucasus and the Balkans. The author of this new approach which was coined under the name “strategic depth” was the current Foreign Minister of Turkey Ahmet Davutoglu, then the chief foreign relations advisor of Erdogan.

Choosing the Western Balkans as one of the key foreign policy priorities was determined by several factors. It includes the importance of Western Balkans from the perspective of Turkey's relations with Europe as well as the wish of Turkish leadership to exert more influence over the Muslim populations of the Western Balkans thus increasing its role in the entire region. The historical past of the Balkans as a former part of the Ottoman Empire was a key factor in planning and implementing this policy.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИЯ

HISTORY

**ԱՂՎԱՆՔԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶՆԱՌԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ալբերտ Բարսեղյան

ԵՊՅ, Պատմության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ պ.գ.դ., պրոֆ. Յ. Մարգարյան

Էլփոստ՝ asbbarsegyan@gmail.com

Աղվանքի կրոնական, ուրեմն նաև՝ մշակութային բազմազանության ուսումնասիրությունն ունի և՛ տեսական, և՛ գործնական կարևոր նշանակություն: Բավական է նշել միայն այն հանգամանքը, որ ադրբեջանական պատմագրությունը ադրբեջանցիների գոյությունն այսօրվա բնակության արեալում ապացուցելու համար հմտորեն օգտագործում է Աղվանքի կրոնական բազմազանության պատմական հանգամանքը: Աղվանքի կրոնական բազմազանությունն էր այն պատճառներից մեկը, որ այստեղ, ի տարբերություն Հայաստանի և Վրաստանի, քրիստոնեությունը չդրվեց ամուր հիմքերի վրա: Եվ պատահական չէ, որ քրիստոնեության ընդունումից նույնիսկ երեք դար անց հին կրոնն ու հավատալիքները լայնորեն տարածված էին այն աստիճան, որ Բյուզանդիայի կայսր Յերակլը փորձեց կրկին քրիստոնեությունը տարածել Աղվանքում: Հայ քրիստոնյա քարոզիչները նորից ձեռնամուխ եղան այդ գաղափարի իրականացմանը: Բոլոր ժամանակների գեոպոլիտիկ խոշոր խաղացողների համար խիստ կարևոր է եղել, թե ինչպիսի կրոնական նկարագիր կունենա Աղվանքը: Հայտնի է, որ Բյուզանդիան ձգտում էր Կովկասը դարձնել քրիստոնյա, իսկ Իրանը՝ գրադաշտական: Արդյունքում, և՛ քրիստոնությունը, և՛ գրադաշտականությունը մուտք գործեցին այս երկրամաս: Աղվանքի դեպքը կարող է դասական օրինակ ծառայել կրոնական գործոնի և աշխարհաքաղաքական շահախնդրությունների փոխկապվածության համար: Այսպես, 481 թ. Կովկասում սկսված ապստամբությունը, որը հովանավորվում էր Բյուզանդիայի կողմից, շարունակվեց շուրջ հինգ տարի: Արդյունքում, պարսից արքա Պերոզի (Pērōz, 459-484 թթ.) հաջորդը՝ Վաղարշը (Balāš, 484-488 թթ.), հրամայեց, որ մարդիկ ազատ են իրենց կրոնի մեջ և ոչ ոք նրանց բռնանալու իրավունք չունի¹: Այն, որ VIII դ. Աղվանքում քրիստոնեությունը արդեն բավական մեծ տարածում էր գտել, անկասկած է, սակայն, փաստ է նաև, որ քրիստոնեության հետ մեկտեղ արագորեն տարածվում էին նաև վերջինիս աղանդները, հատկապես՝ նեստորականությունը: Սակայն, հենց VIII դ. ոչ լիարժեք հաստատված քրիստոնեությունը ստիպված էր իր տեղը զիջել իսլամին: Մահմեդականությունն արաբական արշավանքների հետևանքով արագորեն տարածվեց առևտրականների ու արհեստավորների մեջ, սակայն լեռնաբնակ բնակչությունը տուրք էր տալիս հին ավանդույթներին: Աղվանքի բնակչությունը միանգամից չընդունեց նոր կրոնը՝ իսլամը, այլ այդ գործընթացը ձգվեց մոտ կես հազարամյակ: Իսլամի տարածմամբ նվազեց եկեղեցիների թիվը՝ սահմանափակվելով երեք կաթողիկոսավայրով: Այստեղ մենք հարկ ենք համարում փոքր-ինչ մանրամասն անդրադառնալ Աղվանքի նախաքրիստոնեական և նախաիսլամական հավատալիքներին՝ ոչ թե ելնելով պատմական այդ շրջանի ուսումնասիրության հետաքրքրությունից, այլ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հենց այդ հավատալիքներն ու կրոնական պատկերացումներն էին, որ կազմում էին աղվանական ցեղերի էթնոմշակութային նկարագիրը ոչ միայն դիտարկվող պատմաաշրջանում, այլև՝ ընդհուպ մինչև նոր ժամանակները:

Աղվանքի կրոնական հավատալիքների խայտաբղետությունն ու բազմաձևությունը պայմանավորված էր այդ տարածքի ցեղային բազմատարր կազմով:

¹ Տե՛ս <http://www.britannica.com/EBchecked/topic/497438/religious-syncretism>:

Աղվանքի բնակչությանը կարելի է համարել սինկրետիկ կրոնի հետևորդներ¹: Աղվանները երկրագաղում էին բնության այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ ամպրոպը, կայծակը, աստղերը ևն: Նրանք պաշտում էին ժայռերը, բարձրաբերձ լեռները, հաստաբուն ծառերը, որպեսզի այդպիսով արժանանան աստվածների բարյացկամությանը և պաշտպանվեն նրանց զայրույթից և ցատունից: Նրանց կրոնական արարողակարգի անքակտելի մասն էր կազմում կենդանիների զոհաբերությունը: Տարածված էր նաև աստրալ պաշտամունքը: Աղվանքի կարևոր սրբավայրերից էր Լուսնի աստվածուհու տաճարը, որն, ըստ Ստրաբոնի հաղորդման, համարվում էր Քահենի ամենամեծ և ամենաբազմամարդ սրբատեղին²: Հնագույն ժամանակներում Աղվանքի մի քանի ցեղերի մեջ տարածված էր կռապաշտությունն ու կրակապաշտությունը: Ըստ Ստրաբոնի բերած տվյալների՝ Աղվանքում ապրող քսանվեց ցեղերը միանգամայն տարբեր էին էթնիկական տեսակետից, ինչպես նաև տնտեսական-հասարակական հարաբերություններով: Այս տարբերություններն էլ նպաստում էին տարբեր կրոնական հավատալիքների առաջացմանը: Կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր ցեղամիավորում ուներ միայն իրեն հատուկ հավատալիքները³: Միանգամայն տարբեր հավատալիքների գոյությամբ էր պայմանավորված նույն երկրամասում ապրող ցեղերի ոչ սերտ հարաբերությունները: Դիոն Կասիուսը հիշատակել է Կուր գետի մոտակայքում Անահիտ աստվածուհու սրբավայրի մասին, չնայած Անահիտը հայկական դիցարանի աստվածուհի էր⁴: Ըստ հունական աղբյուրների՝ աղվանները պաշտել են հունական դիցարանի աստվածներից Զևսին և Հելիոսին: Ի դեպ, ըստ հունական դիցաբանության, Հելիոսը, որ համարվում էր արևի աստվածը, ամուսնացել է Լուսնի աստվածուհու հետ: Ապշերոնյան թերակղզում հայտնաբերված ժայռապատկերներից մեկում պատկերված էր մարդու զոհաբերություն: Ամենայն հավանականությամբ, այն վերաբերում է արքեմենյան դարաշրջանին:

Աղվանների կրոնական հավատալիքներին հանգամանորեն անդրադարձել է հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր հայտնի «Պատմութիւն Աղվանից աշխարհի» աշխատության մեջ: Կաղանկատվացին գրում է, որ պարսից արքա Վաղարշի այն հրամանից հետո, որով նա իր հպատակներին թուլատրում էր դավանել ցանկացած կրոն, Աղվանքի թագավոր Վաչագանը դավանում է «մշտնջենավոր ու ամճառ սուրբ երրորդությունը», այսինքն՝ քրիստոնեություն⁵: Այստեղ պետք է նշենք նաև այն փաստը, որ Վաչագանը, մյուս կողմից, խիստ պատժում ու տուգանում է բոլոր նրանց, ովքեր բազին են կառուցում ու կախարդությանը զբաղվում և քրիստոնեական օրենքները լրիվ ու հաստատուն չեն պահում: Փաստորեն, ստացվում է, որ Վաչագան թագավորը միայն մասամբ է հետևում պարսից արքայից արքայի հրամանին՝ քրիստոնեությունն ըստ էության դարձնելով պետական կրոն և սանկցիաներ կիրառելով կրոնական այլ հայացքներ ունեցող անձանց նկատմամբ, մի բան, որ խիստ խորթ երևույթ էր Աղվանքի ցեղերի համար: Կաղանկատվացու մյուս վկայություններից պարզ է դառնում, որ Աղվանքում լայնորեն տարածված են եղել բազմատեսակ աղանդներ⁶:

Նախաքրիստոնեական շրջանում հոգևոր կյանքը քրմերի ձեռքում էր, որոնք մեծ ազդեցություն ունեին Աղվանքի իշխանական շրջանակներում: Կապաղակում հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել են մի սրբավայրի մնացորդներ՝ իրեն կից կալվածքներով, որոնք պատսպարված էին բարձր ամրոցի մեջ: Սրբավայրի ավերակներ են հայտնաբերվել նաև Ֆանդաղանի և Խիզի

¹ Տե՛ս <http://www.britannica.com/EBchecked/topic/497438/religious-syncretism>:

² Хусейнова И., Сумбат-заде А. и др., История Азербайджана, Баку, 1958, т. 1, с. 57.

³ Гешуев Р., Христианство в Кавказской Албании, Баку, 1981, с. 16.

⁴ Дион Кассий, Римская история, пер. Латисева, «ЖДИ», 1948, 2, кн. 9, гл. 4, с. 7.

⁵ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1969, էջ 34-37:

⁶ Նույն տեղում:

պեղումների ժամանակ¹: Հայտնաբերված կավե գտածոների մեծամասնության վրա պատկերված է լուսին, ինչը վկայում է այս տարածքներում լուսնի ու աստղերի շարունակվող պաշտամունքի մասին: Երբեմն մի կտորի վրա գծագրված է մի քանի լուսին: Բացի լուսնի պատկերներից, որ աղվանների մեջ համարվում է շնորհի ու լիության աստվածություն², բրածոների վրա հայտնաբերվել են ցուլի պատկերներ: Ցուլի եղջյուրով Աղվանքում կանխատեսվել է տարեկան բերքը: Այժմ ևս կոտոշը փակցվում է տան դռներին չարխափան նշանակությամբ: Աղվանների պաշտամունքի առարկա էին նաև թռչունները, և մարդկանց հոգիները պատկերվում էին անոթների մեջ՝ թռչունների տեսքով³: Հիմքեր կան կարծելու, թե տարածված է եղել եղջերուների մատաղը: Նշենք նաև հուղարկավորության տեսակները, որոնք առավել պակաս չափով են ենթարկվում փոփոխությունների: Մեզ հայտնի է հուղարկավորության ութ տեսակ, որոնցից էին՝ հողին հանձնելը, հորը գցելը, կարասի մեջ դնելը, քարե գերեզմանոցներում տեղադրելը ևն: Հուղարկավորության ժամանակ հանգուցյալին թեք էին պառկեցնում, ընդ որում կանանց աջ կողմի վրա և այնպես, որ ննջեցյալի գլուխը լինի դեպի արևմուտք, իսկ ոտքերը՝ դեպի արևելք, իսկ տղամարդկանց գլուխը պետք է լիներ դեպի հարավ-արևելք, իսկ ոտքերը՝ հյուսիս-արևմուտք: Այս սովորույթները պահպանվել և փոխանցվել են այն ժողովուրդներին, որոնց հետ ձուլվել են աղվանները, և մասնավորապես՝ լեռնաբնակ լեզգիներին, ցախուրներին ևն⁴:

МНОГООБРАЗИЕ РЕЛИГИЙ АЛУАНКА И ИХ ОСОБЕННОСТИ

Альберт Барсегян

Как и в других странах мира в Кавказской Албании в процессе исторического развития менялись религиозные системы и культы. До принятия христианства и зороастризма в Албании было широко распространено верование, связанное с поклонением силам природы – солнцу и огню, воде и земле. Кроме культа главных божеств: божества Солнца, бога Неба и богини Луны, в первых веках нашей эры существовал и культ малых богов. Албанцы обожествляли силы природы и животного мира. Пережитки этих верований сохранились и после принятия христианства, и после торжества полного господства ислама в Албании, и дошли до настоящего времени.

О существовании язычества и огнепоклонства в Албании до принятия христианства свидетельствуют сохранившиеся письменные памятники, а также ценные материалы об обрядах захоронения. В статье рассматриваются изученные археологами погребальные памятники, относящиеся к дохристианскому периоду: кувшинные, ванночные, грунтовые, катакомбные, срубные, сырцовые, глиняные саркофаги, ямные и каменные ящики.

¹ Гешуев Р., с. 20-21.

² Барсегян А., Формирование «земледельческого образа мышления» в Армении, Теория и практика современной науки: материалы VIII Международной научно-практической конференции, т. II, Москва, 2012, с. 100-105.

³ Резаев Н., Христианство в Кавказской Албании, Баку, 1975, с. 120.

⁴ James S., An Ethnohistorical Dictionary of the Russian and Soviet Empires, Greenwood Publishing Group, 1994, pp. 27-28.

RELIGIOUS DIVERSITY AND FEATURES OF CAUCASIAN ALBANIA

Albert Barseghyan

Research of religious and cultural diversity of Caucasian Albania has theoretical and practical importance. It is enough to mention that the historiography of Azerbaijan uses historical point of religious diversity of Caucasian Albania to prove its existence in that area.

One of the main reasons why Christianity was not put on firm basis here, like in Armenia and Georgia, is the religious diversity of Caucasian Albania. Christianity was replaced by Islam which was spread all over the urban areas but those living in the mountains adhered their old beliefs.

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄԱԿՑԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐԴԻՆ ԱՌԿԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Անի Պապյան

ԵՊՂ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, քաղաքավրիատի ուսանող
Գիտ. դեկ.՝ պ.գ.դ., պրոֆ. Յ. Աբրահամյան
Էլփոստ՝ anipapayan94@gmail.com

Թուրքիան թակուն է ԵՄ դռները արդեն գրեթե հինգ տասնամյակ: Այն, որ երկիրն ունի եվրոպական ապագա, դեռևս կես դար առաջ ասում էին Շառլ դը Գոլն ու Կոնրադ Ադենաուերը: Սակայն այն բանից հետո, երբ ԵՄ արտգործնախարարների խորհուրդը 2006 թ. որոշում կայացրեց հետաձգել Թուրքիայի հետ բանակցությունները 35 կետերից 8-ի վերաբերյալ անդամակցության գործընթացն ավելի դանդաղեց, իսկ Թուրքիան էլ, կարծես հուսախաբ լինելով, գրեթե դադարեցրեց անդամակցության համար կատարվող օրենսդրական բարեփոխումները: Ինչպե՞ս է, ի վերջո, ավարտվելու Թուրքիայի եվրոպական քաղաքականությունը, արդյո՞ք Թուրքիան մի օր դառնալու է եվրոպական ընտանիքի անդամ: Եվ եթե այո, ապա ե՞րբ: Եվրոպայում այս հարցը լայն քննարկումների առարկա է, Թուրքիայի անդամակցության դեմ հանդես եկողները բերում են մի շարք փաստարկներ՝ սկսած երկրի աշխարհագրական դիրքից մինչև դրա տնտեսական զարգացածության մակարդակը: Բայց բոլորը հանգում են այն բանին, որ Թուրքիան եվրոպական պետություն չէ, երբեք էլ չի եղել և չի էլ լինի¹:

Կարելի է ասել, որ Թուրքիայի անդամակցությունը խոչընդոտող և այդ գործընթացը դանդաղեցնող հիմնական գործոնները առկա քաղաքական խնդիրներն են: Քաղաքական այդ հարցերի շարքում հատկապես կարող ենք առանձնացնել Կիպրոսի հիմնախնդիրը և Թուրքիայում ժողովրդավարացմանն ու մարդու իրավունքներին առնչվող հարցերը: Այս երկու հարցերը տարիներ շարունակ եղել են ԵՄ-Թուրքիա հարաբերություններում քննարկվող թեմա և դեռ երկար ժամանակ կմնան օրակարգի հարց:

Կիպրոսի հարցը սրվեց 1990 թ. հետո, երբ կղզու հարավային՝ հունական մասի ղեկավարությունը՝ Կիպրոսի Հանրապետությունը, անդամակցության խնդրանքով դիմեց ԵՄ: Անկարան և Կիպրոսի թուրքական կառավարությունը բողոք ներկայացրին այս որոշման դեմ՝ ասելով, որ հունական մասի կառավարությունը իրավունք չունի հանդես գալ որպես ինքնուրույն միջազգային սուբյեկտ, քանի որ կղզու իրավական կարգավիճակը դեռևս որոշված չէ²:

Անդամակցության ճանապարհին եղած քաղաքական մյուս կարևոր խնդիրը Թուրքիայում ժողովրդավարության ցածր մակարդակն է և մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի առկայությունը: Դեռևս Յելսինկյան գագաթնաժողովի ժամանակ նշվել էր, որ ԵՄ դիրքորոշումը հստակ է. անդամակցության բանակցություններ սկսելու համար Թուրքիայի՝ Կոպենհագենյան քաղաքական չափանիշներին համապատասխան լինելը պարտադիր նախապայման է:

Եվրոպական կառույցներին մտահոգող շատ հարցեր է առաջացնում նաև թուրքական բանակը: Բրյուսելը կարծում է, որ երկրի քաղաքական կյանքում Թուրքիայի զինված ուժերի այդքան մեծ դեր խաղալը անթույլատրելի է: Թուրքական բանակը անընդհատ միջամտում է քաղաքականությանը. այն Թուրքիայի աշխարհիկության երաշխավորն է: Բանակի առանձնահատուկ քաղաքական դերը երկրի կյանքում

¹ Турция в ЕС: пускать или не пускать?, Дмитрий Глуховский, <http://gazeta.aif.ru>.

² Справка: "Кипрский вопрос", Виктор Кирхмайер, <http://www.dw-world.de>.

նույնիսկ ամրագրված է Թուրքիայի սահմանադրության մեջ: Թուրքիայում սահմանադրության երաշխավորը ոչ թե երկրի նախագահը կամ այլ պաշտոնական անձ է, ինչպես շատ ժողովրդավարական երկրներում, այլ հենց բանակն է¹:

Լայն քննարկումների առարկա է նաև այն հարցը, որ Թուրքիան աշխարհագրորեն Եվրոպական երկիր չէ: Թուրքիայի տարածքի 97 %-ը և բնակչության 90 %-ը գտնվում են Ասիա մայրցամաքում: Մի կողմից հնարավոր է ԵՄ համար դրական գնահատել այս հանգամանքը, քանի որ Թուրքիայի անդամ դառնալուց հետո ԵՄ մեծ ազդեցություն ձեռք կբերի այս տարածաշրջանում, և նրա դիրքերն էլ ավելի կամրայնվեն: Այն անմիջականորեն հարևան կղառնա այնպիսի երկրների, ինչպիսիք են Սիրիան, Իրանը, Իրաքը, Անդրկովկասյան հանրապետությունները: Եվրոպական Միությունը հնարավորություն կունենա դառնալու նաև «Միջինարևելյան գերտերություն», մինչդեռ ԵՄ-ը մշտապես խուսափել է հակամարտություններով հարուստ տարածաշրջանների հետ ուղղակի հարևանությունից՝ դրանով իսկ ԵՄ համար առաջ կգան նոր խնդիրներ և մարտահրավերներ:

Թուրքիայի անդամակցության ճանապարհին խնդիրներից մեկը նրա բազմաքանակ բնակչությունն է: Այն գրեթե հավասար է Գերմանիայի բնակչությանը: 2015 թ. Թուրքիայի բնակչությունը կգերազանցի Գերմանիայի բնակչության քանակը և կկազմի ԵՄ բնակչության շուրջ 15 %-ը (այդ ժամանակ կլինի շուրջ 600 մլն)²: Վտանգ կա, որ Թուրքիայի՝ ԵՄ անդամակցելուց հետո բաց սահմանների և խոչընդոտների բացակայության դեպքում թուրք բնակչության մեծ ներգաղթ կսկսվի դեպի եվրոպական երկրներ: Նույն վախը կար Իսպանիայի անդամակցության ժամանակ, բայց նման անցանկալի շարժեր տեղի չունեցան: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ թուրքական բնակչության գրեթե 98 %-ը դավանում է իսլամ, ապա դա կբազմապատկի դեմոգրաֆիական առումով ԵՄ սպառնացող վտանգները: Որպես ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության անցանկալիության առավել խորքային պատճառներ և՛ կարելի է մշել նաև Թուրքիայի բնակչության մեծաթիվ լինելու հանգամանքը, որը անդամակցելուց հետո Թուրքիային իրավունք և հնարավորություն կտա ԵՄ-ի ղեկավար մարմիններում ունենալ առավել շատ ձայներ, ինչպես նաև այն մտավախությունը, որ ԵՄ-ին անդամակցելուց հետո Թուրքիայից դեպի ԵՄ-ի առավել զարգացած երկրներ տեղի կունենա հսկայական միգրացիոն հոսք:

Սակայն կան նաև Թուրքիայի անդամակցության կողմնակիցներ, որոնք դա արդարացնում են այն հանգամանքով, որ Թուրքիայի միացումը եվրոպական ակումբին կօգնի հետագայում կանխել բախումները մահմեդական և քրիստոնեական քաղաքակրթությունների միջև:

Զի կարելի անտեսել այն փաստը, որ Թուրքիայի անդամակցությունը նաև կբերի շատ տնտեսական օգուտներ Միությանը: Նախ Անկարան զգալիորեն կընդլայնի ԵՄ շուկան և աշխատանքային ուժ կտրամադրի եվրոպական ընկերություններին, որոնք ունեն բնակչության ծերացման խնդիր: Իսկ եթե մերժվի Թուրքիայի անդամակցությունը, այն կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ և՛ Թուրքիայի, և՛ ԵՄ համար:

«Թուրքիայի մուտքը ԵՄ կնշանակի Եվրոպայի վերջը», - այսպես է արտահայտվել Թուրքիայի անդամակցության մասին Ֆրանսիայի նախկին նախագահ ժիսկար դ' Էստենը իր հարցազրույցներից մեկի ժամանակ: Իսկ Թուրքիայի անդամակցության կողմնակիցներին նա անվանել է Եվրամիության թշնամիներ³: Ճիշտ է, այս հայտարարությունը քննադատվեց պաշտոնական Բրյուսելի կողմից, սակայն միայն այն հանգամանքը, որ նմանատիպ կարծիքներ են ասվում, այն էլ դ' Էստենի նման հեղինակավոր անձանց կողմից, ցույց է տալիս, թե որքան բազմակարծիք է

¹ Дмитрий Глуховский.

² Turkish Daily News, 28 April 2004, Turkey's membership of the European Union: A rose or a thorn? Forty years knocking at the EU's door, William Chislett.

³ D'Esten: Turkey in EU? It's a Catastrophy; November 8, 2002, <http://news.bbc.co.uk>.

Եվրոպան թուրքիայի անդամակցության հարցում, և դեռ որքան խոչընդոտներ ստիպված կլինի հաղթահարել թուրքական դիվանագիտությունը:

ԵՄ պետությունների շարքում հակաթուրքական տրամադրվածությամբ հատկապես հանդես են գալիս Ֆրանսիան, Գերմանիան և Ավստրիան: Սոցիոլոգիական հարցումների միջոցով պարզվել է, որ Գերմանիայի բնակչության 66 %-ը և Ֆրանսիայի բնակչության 68 %-ը դեմ են արտահայտվում ԵՄ թուրքիայի անդամակցությանը¹: Իսկ Ավստրիան վերջերս՝ 2008 թ. օգոստոսին, հայտարարեց, որ եթե Միությունը հավանություն տա ԵՄ անդամակցելու թուրքիայի դիմումին, ապա նա այդ հարցը կդնի հանրային քվեարկության, իսկ սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ Ավստրիայի բնակչության մոտ 80 %-ը դեմ կարտահայտվի թուրքիայի անդամակցությանը²: Նման քննադատական հայտարարություններ թուրքիայի անդամակցության հասցեին հնչում էին նաև Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզիի կողմից, որը բազմիցս նշել է, որ ինքը թուրքիային չի համարում Եվրոպայի մաս: Նրան համակարծիք է նաև Գերմանիայի կանցլեր, Քրիստոնյա-դեմոկրատների կուսակցության առաջնորդ Անգելա Մերկերը, որը Սարկոզիի հետ անդամակցության փոխարեն թուրքիային առաջարկում է «արտոնյալ համագործակցություն»:

Ն. Սարկոզին հայտարարել էր, որ «Եվրոպայի անընդմեջ ընդլայնումը կհանգեցնի քաղաքական Եվրոպայի ոչնչացմանը»³: Այս երկու պետությունների առաջնորդները փորձում են թուրքիայի անդամակցության անհնարինությունը բացատրել ոչ թե քաղաքական կամ տնտեսական պատճառներով, այլ ելնելով այն հանգամանքից, որ թուրքիան ուղղակի աշխարհագրորեն չի գտնվում Եվրոպայում: Սակայն այս առաջարկը անընդունելի է թուրքիայի համար, որը «չի հանդուրժի ոչ մի հարաբերություն ԵՄ հետ՝ բացի լրիվ անդամակցությունից»⁴:

Ֆրանսիայի նման դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ Ֆրանսիան միշտ էլ հանդես է եկել ԵՄ ընդլայնման դեմ՝ համարելով, որ դա թուլացնում է ԵՄ դիրքերը և լրացուցիչ խնդիրներ է առաջացնում: Փոխարենը ֆրանսիական կառավարությունը պաշտպանում է ԵՄ շրջանակներում համագծակցության խորացումը, իսկ ԵՄ ընդլայնումը ավելի ղվար է դարձնում խորացված ինտեգրումը: Գերմանիայում և Ավստրիայում կառավարության հակաթուրքական դիրքորոշումը ավելի շատ քաղաքական շահարկման նպատակ է հետապնդում: Ավստրիայում հակաթուրքական շարժումը հատկապես ուժեղանում է նախընտրական քարոզարշավների ժամանակ, երբ թեկնածու կուսակցությունները դրանով ցանկանում են շահել ընտրողների համակրանքը, իսկ Ավստրիայի բնակչության մեջ թուրքիայի և թուրքերի նկատմամբ պատմական թշնամանք գոյություն ունի: Գերմանիայում թուրքիայի հարցում քաղաքական կուսակցությունների շրջանում չկա միակարծություն: Ինչպես արդեն նշվել է, իշխող Քրիստոնյա-դեմոկրատական կուսակցությունը դեմ է թուրքիայի լրիվ անդամակցությանը, իսկ ընդդիմադիր Սոցիալ-դեմոկրատները հանդես են գալիս թուրքիայի անդամակցության ակտիվ պաշտպանությամբ՝ նշելով, որ Միությունը միայն կշահի դրանից: Գերմանիայում հակաթուրքականության պատճառներից մեկն էլ երկրում մեծաքանակ թուրք բնակչության առկայությունն է:

Թուրքիայի անդամակցության կողմնակից պետությունների շարքում է նախ և առաջ Մեծ Բրիտանիան: Բրիտանիայի արտգործնախարար Գավիթ Միլիբանդը 2007 թ. սեպտեմբերին հայտարարություն էր արել, որ «ԵՄ իր առջև որպես հստակ նպատակ պետք է դնի թուրքիային որպես լրիվ անդամ ընդունելը իր շարքերում»⁵:

¹ С вступлением Турции ЕС потерпит крах, интервью с Немецкий историком Ханс Ульрих Велером, Штгеффен Лайдель, <http://www.dw-world.de>.

² Ausrtia Signals Referendum on Turkey's EU Accession, 25 August 2008, <http://www.euractiv.com>.

³ Турцию не возьмут в Евросоюз, Дмитрий Бавырин, 2008, <http://www.vz.ru>.

⁴ ANKARA: Erdogan Lashes Out at EU, Says it Applies Double Standards, 10 December 2002.

⁵ EU-Turkey Relations, <http://www.euractiv.com>.

Սա նախ պայմանավորված է թուրք-բրիտանական սերտ համագործակցությամբ, հետո էլ բրիտանական կառավարությունը միշտ էլ Եվրամիության ընդլայնման կողմնակից է եղել:

Կարող է տարրինակ հնչել, սակայն անդամակցության կողմնակիցների շարքում է նաև Թուրքիայի պատմական թշնամի Հունաստանը: Պաշտոնական Աթենքի կարծիքով ավելի լավ է Թուրքիան լինի Եվրոպական ակումբում, քան դրանից դուրս: «Մենք ուղղակի հավատում ենք, որ երբ Թուրքիան միանա Եվրամիությանը, ստիպված կլինի պահպանել Եվրոպական օրենքներն ու արժեքները: Սա արդեն կլուծի մի շարք խնդիրներ», - հայտարարել էր Հունաստանի պաշտպանության նախկին նախարար Յաննոս Պապատոմիոն¹: Հարկ է նշել, որ այս դիրքորոշումը ամբողջովին արդարացված է, և մեզ համար էլ, որպես Թուրքիայի անմիջական հարևանի, ավելի շահեկան կլինի գործ ունենալ Եվրոպական ընտանիքի անդամ և դրա արժեքներ կրող կանխատեսելի Թուրքիայի հետ:

Լեհաստանը սկզբնական շրջանում անհանգստանում էր, որ Թուրքիան, ԵՄ մտնելով, իր կողմը կտանի սուբսիդիաների մեծ մասը և լինելով իր տարածքով մեծ պետություն ու ունենալով բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրներ՝ դժվար մարսելի կլինի ԵՄ համար: Այնուամենայնիվ, Վարշավան ևս բազմիցս հայտարարել է, որ ինքը Թուրքիայի լրիվ անդամակցության կողմնակից է: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Լեհաստանը, լինելով ԱՄՆ քաղաքական դաշնակիցը, չի կարող դեմ գնալ իր «մեծ եղբոր» որդեգրած քաղաքական գծին, իսկ ԱՄՆ-ը, հայտնի է, որ իր դաշնակից Թուրքիայի ԵՄ անդամակցության կողմնակիցն է: ԱՄՆ-ը շարունակում է մեծ ազդեցություն ունենալ Թուրքիայի արտաքին քաղաքական որոշումների ընդունման վրա, իսկ Թուրքիան Սերժավոր Արևելքում իրականացնում է ընդգծված պրոամերիկյան, պրոիսրայելական քաղաքականություն, որն էականորեն տարբերվում է ԵՄ-ի քաղաքականությունից և աչքի է ընկնում իր պրոարաբական կողմնորոշմամբ (Ֆրանսիա, Իսպանիա, Իտալիա): ԵՄ-ի վերջին ընդլայնումներից հետո նրա կազմում արդեն իսկ ձևավորվել է այսպես կոչված «ամերիկյան ակումբ»՝ Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, էստոնիայի, մասամբ Չեխիայի մասնակցությամբ, և ԵՄ-ի առաջատար որոշ երկրների համար (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա և այլն) բոլորովին էլ ոգևորիչ չէ այդ երկրների թվի ավելացումը: Ըստ ԱՄՆ-ի՝ Թուրքիայի անդամակցությունը կայուն մոդել կլինի ողջ իսլամական աշխարհի համար: Բացի այդ՝ Թուրքիայի մուտքով ԵՄ կավելանա ԱՄՆ քաղաքական դաշնակիցների թիվը:

Ինչ վերաբերում է Թուրքիայի անդամակցության մասին Եվրոպայի հասարակության դիրքորոշմանը, ապա անցկացված սոցիալական հարցման արդյունքները հուսադրող չեն. Եվրոպայի բնակչության 74 %-ը Թուրքիան ուղղակի չի համարում «Եվրոպական պետություն»²: Թուրքերի նկատմամբ նման վերաբերմունքի պատճառն այն է, որ Եվրոպացիները վախենում են, որ թուրքերը պարզապես մեծ հոսանքով կլցվեն ԵՄ: Արդեն իսկ թուրքական մեծ համայնքներ կան Ավստրիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում (այստեղ նրանց թիվը հասնում է շուրջ 600 հազարի): Վերջին շրջանում անդամակցության գործընթացի լուրջ առաջխաղացման բացակայության պայմաններում ԵՄ նկատմամբ վստահության անկում է նկատվում նաև թուրք հասարակության շրջանում: Սոցիարցումները ցույց են տալիս, որ թուրքական հասարակության շրջանում աճում է կասկածամտությունը ԵՄ նկատմամբ: Համաձայն 2007 թ. գերմանական Սարշալի ֆոնդի կողմից իրականացված «Տրանսատլանտյան տենդենցիա» հարցումների, որի միջոցով փորձ էր արվում պարզել, թե ինչքանով է հավանական Թուրքիայի՝ ԵՄ մուտքը, Եվրոպացիների 56 %-ը դա հավանական է համարել, մինչդեռ թուրքերի ընդամենը 26 %-ն է նման պատասխան

¹ EU-Turkey Relations.

² Турция войдет в ЕС не раньше 2015 года, 8 февраля 2008, <http://www.tourdaily.ru>.

տվել: Թուրքական կառավարությունն էլ իր հերթին այլևս այն ոգևորվածությամբ չի ձեռնամուխ լինում քաղաքական բարեփոխումների իրականացմանը, ինչպիսին նկատվում էր 2002-2004 թթ. ընթացքում: Ծիշտ է՝ անդամակցության բանակցությունները կարող են եզրափակվել միայն 2014 թ. հետո, սակայն առաջընթացի մնալ տեսնվելը թույլ չեն տալիս լավատես մնալ: Իսկ Գերմանիայի և Ֆրանսիայի առաջ քաշած «արտոնյալ համագործակցության» նախագիծը ի չիք է դարձնում լրիվ անդամակցության հեռանկարը: Այնուամենայնիվ, դեռևս շարունակվում են անդամակցության բանակցությունները Թուրքիայի հետ: Յարկ է նշել, որ Սարկոզիին և Մերկերին նախորդող Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակն ու Գերմանիայի կանցլեր Յերհարդ Շյոլդերը, ի տարբերություն իրենց հաջորդ ղեկավարների, հանդես էին գալիս Թուրքիայի անդամակցության պաշտպանությամբ: Այնպես որ գուցե որոշ ժամանակ անց այս երկրներում նորից քաղաքական դիրքորոշման փոփոխություն նկատվի՝ պայմանավորված քաղաքական հանգամանքների փոփոխություններով: Սակայն Թուրքիան ևս մշտապես ունեցել և իրագործել է «պահուստային» տարբերակներ: Ներկայումս եվրաստլանտյան համակարգում իր նշանակությունն ու կարգավիճակը բարձրացնելու նպատակով Թուրքիան ամրապնդում է իր դիրքերը մահմեդական աշխարհում, հատկապես Մերձավոր Արևելքում և թուրքալեզու պետությունների շրջանում: Աճում է նաև Թուրքիայի նշանակությունը եվրոպական էներգետիկ, հեռահաղորդակցության և տարանցման միջտարածաշրջանային նախագծերի իրականացման և անվտանգության ապահովման հարցերում: Թուրքիային արդեն հաջողվել է բավական արդյունավետորեն օգտագործել ժամանակին խոշոր տերությունների միջև եղած երկարատև հակամարտությունների հետևանքով իրեն՝ որպես ամենաթույլ պետության, «վստահված» ծովային նեղուցների գործոնը:

Այնհայտ է մի բան, ԵՄ միշտ էլ պատճառներ կգտնի Թուրքիայի անդամակցությունը կասեցնելու համար, քանի դեռ Թուրքիան լիովին չի համապատասխանել անդամակցության համար անհրաժեշտ չափանիշներին: Սակայն, կարծում ենք, ոչ մի դեպքում պետք չէ վերջնականապես մերժել Թուրքիային և տեղիք տալ այդ երկրում իսլամիստների դիրքերի ամրապնդմանը: Անհրաժեշտ է շարունակել անդամակցության քաղաքական գործընթացը, ընդ որում, երկու կողմերն էլ պետք է որոշակի քայլեր ձեռնարկեն գործընթացին նպաստելու համար:

ПОЛИТИЧЕСКИЕ И ЭКОНОМИЧЕСКИЕ ПРЕПЯТСТВИЯ НА ПУТИ ИНТЕГРАЦИИ ТУРЦИИ В ЕС И ПОЗИЦИИ ВЕДУЩИХ ЕВРОПЕЙСКИХ СТРАН В ЭТОМ ВОПРОСЕ

Ани Папян

Статья посвящена изучению политических и экономических проблем на пути Турции к интеграции в ЕС. Также нами представлены позиция и мнение европейских стран об интеграции Турции в ЕС, в частности, Франции, Германии, Австрии и Англии, а также роль и позиция США в этом вопросе. В статье рассматриваются положительные и отрицательные стороны возможной интеграции. Важную роль мы отвели социологическим наблюдениям и мнению Европейского сообщества, которые еще раз показывают, что позиция Турции довольно сильно отличается от позиции Европейского Сообщества, и доказывают, что мнение ЕС склоняется в пользу интересов Турции. Сравнительный анализ, проведенный нами, предполагает, что мы можем предвидеть последствия возможной интеграции Турции в ЕС.

ECONOMIC AND POLITICAL CHALLENGES ON THE WAY OF TURKEY FOR INTEGRATION TO EU AND POSITION OF EUROPEAN COUNTRIES

Ani Papyan

This article is about political and economical challenges on the way of Turkey for integration to EU. The position and opinion of European countries about the integration of Turkey to EU is also presented. Especially the positions of France, Germany, Austria and England are observed. Not only the positions of European countries, but also the role and position of USA in this process are presented. We have also briefly presented the positive and negative aspects of integration. Sociological observations and opinion of European community were given important role in observation, as they show once again that position of Turkey is quite different from the position of European community. Such a comparative analysis enables us to oversee the consequences of Turkey'd integration to EU.

ԻՐԱՆԻ ԱՐԱՐԱԿԱՆ ՆՎԱՃՄԱՆ ՆԱԽԱՂՅԱԼՆԵՐԸ

Արամ Պողոսյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ պ.գ.դ., պրոֆ. Զ. Մարգարյան

Էլփոստ՝ vebliber-civil@mail.ru

6-7-րդ դդ. Մերձավոր Արևելքի երկրների հասարակական-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները չըջանցեցին նաև Սասանյան Իրանը, իրադարձություններ, որոնք հետագայում հանգեցնելու էին նրա կործանմանը: Սա մի ժամանակահատված էր, որի առաջին տասնամյակները գրանցեցին Իրանի քաղաքական ու տնտեսական կյանքում կատարված փոփոխությունները: Գնալով ավելի էին ուժգնանում հակասությունները հողատերերի և ժամանակի ընթացքում իրենց անձնական ազատությունը կորցրած գյուղացիների միջև: Ոչ պակաս կարևոր էր նաև, մի կողմից՝ զինվորական և հոգևոր վերնախավի, և մյուս կողմից՝ քաղաքային վերնախավի և մանր հողատերերի՝ դեհկանների միջև սկսված պայքարը: Վերջիններս թագավորական իշխանության ամրապնդման կողմնակիցներ էին, քանի որ ի դեմս շահնշահի տեսնում էին իրենց տնտեսական շահերի պաշտպանին: Զինվորական և հոգևոր վերնախավը ցուցաբերում էր կենտրոնախույս ձգտումներ՝ դրանով թուլացնելով կենտրոնական իշխանությունը: Փաստորեն, Իրանի արաբական նվաճման համար կային լուրջ նախադրյալներ, որոնց առկայությունը դյուրացրեց և արագացրեց Սասանյան տերության կործանումը:

Խոսքով Անուշիրվանի բարեփոխումները, որոնք նպատակադրված էին կենտրոնացված բյուրոկրատական պետության ստեղծմանը, չամրապնդվեցին: Հին ավանդույթների վերհանումը, էպիկական հերոսների մասին ստեղծագործությունները վերաբերում էին առանձին իրանական հզոր տոհմերին, բայց ոչ պետական ավանդույթներին¹: Խոսքովի հաջորդները, զբաղված լինելով հին ավանդույթների պահպանմամբ, չէին հասկանում, որ բնակչությունն արդեն պատրաստ է ընդունելու նոր կրոնը՝ իսլամը: Այդուհանդերձ դրանք, թեև կարճ ժամանակով, բայց որոշ չափով ամրապնդեցին կենտրոնական իշխանությունը: Խոսքով Անուշիրվանի օրոք լուրջ հաջողություններ գրանցվեցին հատկապես կրոնական և մշակութային ոլորտներում: Խոսքովի հրամանով Բուրզան ուղարկվել էր Հնդկաստան՝ սանսկրիտով գրված գրքերի թարգմանչական գործը կազմակերպելու նպատակով: Արդյունքում նաև ներմուծվեց ճատրակը²: Արաբերենով գրի առնված շատ գրքեր՝ աստղագիտության, հատկապես աստղային աղյուսակների հետ կապված (Զիջ-ի շահրիար), թարգմանվել են հենց պարսկերենից: Դրանց մեծ մասը միջին պարսկերենով չի պահպանվել, քանի որ բավարար ուշադրության չի արժանացել մոզերի կողմից, իսկ այսպես կոչված գիտության մարդիկ նախընտրում էին արաբերեն լեզուն՝ հաշվի առնելով միջին պարսկերենի գրային բարդ համակարգը³: Սասանյանների օրոք մշակութային կյանքի աշխուժացման մասին է վկայում այն փաստը, որ բազմաթիվ գրքեր, որոնք հունալեզու էին, թարգմանվել էին պահլավերեն, և նոր միայն վերջինից արաբերեն⁴:

Այդուհանդերձ, Խոսքովի բարեփոխումները, բնականաբար, չէին կարող կասեցնել այն գործընթացները, որոնք պետք է հաստատեին, ամրապնդեին և նրա հաջորդների օրոք արձանագրեին ավատատիրական կարգերի վերջնական հաղթանակը: Սասանյան Իրանը, ֆեոդալական կարգերին անցման տեսանկյունից, ավելի

¹ Фрай Р., Наследие Ирана, Москва, 2002, с. 318.

² Նույն տեղում, էջ 316:

³ Նույն տեղում, էջ 317:

⁴ Նույն տեղում:

մոտ էր կանգնած եվրոպական վաղֆեոդալական երկրներին, քան Բյուզանդիան: Եվ եթե Բյուզանդիայի՝ 6-7-րդ դդ. ժամանակավոր անկումը բացատրվում էր նոր կարգերին անցմամբ, ապա Իրանում այդ խնդիրը լուծված էր: Բայց փաստ է, որ Բյուզանդիայի համեմատ, հասարակական հարաբերություններում իրանական հասարակությունը պահպանում էր նահապետական-իշխանական կարգին բնորոշ ընդգրծված գծեր, որոնք հետագայում նրան կանգնեցնելու էին լուրջ խնդիրների առջև¹:

6-րդ դ. վերջին իրանական հասարակությանը հատուկ էր կաստայական համակարգի խորացումը: Այն բացառում էր տարբեր կաստաներին պատկանող մարդկանց միջև ինտենսիվ կապերի ձևավորումը, ինչպես նաև բացակայում էր համընդհանուր քաղաքական պատասխանատվությունը արքայի առջև: Չվավորվել էր մի ուսմունք, որի համաձայն միայն Սասանյան արքայական հարստության անդամներն էին կրում աստվածային հատուկ արքայական շնորհ՝ ֆարրա: Հին մագդեզականության համաձայն՝ գյուղացիական կաստայի հոգևոր պարտականությունը հող մշակելն էր, իսկ այժմ՝ նոր ձևավորվող հասարակարգը պարտադրում էր նաև գաղափարախոսության և հոգևոր կյանքի համապատասխանեցում իր իսկ կողմից առաջ քաշվող սկզբունքներին: Այժմ գյուղացիների պարտականությունը արքային հնազանդ ծառայելն էր, և հարկ վճարելը²: Հարկային նախկին համակարգի որոշ գծեր պահպանվել էին նաև Խոսրով Անուշիրվանի հարկային բարեփոխումից հետո: Եթե ինչ-որ մեկը հնարավորություն չէր ունենում վճարելու հողահարկը, ապա այդ դեպքում, վերջինիս պատկանած հողը անցնում էր նրան, ով փոխարենը վճարում էր: Այսպիսով սա հնարավորություն էր տալիս վճարողին, ձեռք բերելու ստրուկ կամ կախյալ պարտապան հենց այն մարդկանցից, որոնց փոխարեն վճարում էր սահմանված հարկը³: Հարկային համակարգում կար մի առանձնահատկություն ևս: Զրադաշտական կրոն ընդունելու դեպքում հպատակները, մասնավորապես հրեաները, ազատվում էին գլխահարկից⁴: Այս համակարգը, որոշ փոփոխություններով պահպանվեց նաև արաբական տիրապետության շրջանում: Առհասարակ, սասանյանների այս համակարգը հիմք հանդիսացավ խալիֆայության հարկային կառույցի ձևավորման համար:

Սակայն վերսկսված պարսկա-բյուզանդական պատերազմները, ինչպես նաև որպես դրա անխուսափելի հետևանք, հարկային քաղաքականության սաստկացումը, բերեցին ուշասասանյան շրջանում բնակչության աղքատացմանը և կառավարող շրջանակների ձեռքում հարստության կուտակմանը⁵: Սա իր հերթին բերելու էր ժողովրդական շարժումների ծավալմանը, որոնք հաճախ ընդունում էին կրոնական երանգավորում:

6-րդ դ. վերջերին անմխիթար վիճակում էր գտնվում նաև գյուղատնտեսությունը: Բավական է նշել, որ հողագործության համար ամբողջ երկրի հողային տարածքների մոտ 3 տոկոսն էր օգտագործվում, մասնավորապես, Իրանական սարահարթում մոտ 5 մլն հա⁶: Միայն Բաբելոնիայում և Խուզիստանում հողագործության համար օգտագործվում էր մոտ 4 մլն հա, որից ստացվում էր ամենաշատ հարկը⁷: Ուստի պետական գանձարանը պետք էր համալրել այլ միջոցներով, մասնավորապես միջազգային առևտրական ճանապարհներին տիրելը և դրանցից ստացված եկամուտները հաջողությամբ կլուծեին այդ խնդիրը: Այդ ծրագրի իրականացման առաջին քայլը եղավ Եմենի նվաճումը (572 թ.): Եմենի տարածքով էր անցնում միջազգային առևտրական այն ճանապարհներից մեկը, որը կապում էր

¹ Большаков О., История Халифата, Москва, 2000, т. 1, с. 30.

² «Всемирная история в десяти томах», т. III, Академия наук СССР, Москва, 1957, с. 96.

³ Фрай Р., с. 313.

⁴ Նույն տեղում, էջ 314:

⁵ Նույն տեղում, էջ 321:

⁶ Большаков О., с. 22-23.

⁷ Նույն տեղում:

բյուզանդական միջերկրածովյան քաղաքները Արևելքի երկրների՝ մասնավորապես Չնդկաստանի հետ¹: Եմենի գրավումով առևտրական այս ճանապարհի վերահսկողությունն անցավ Իրանի ձեռքը: Սա մեծ հարված էր Բյուզանդիային, ինչը նաև որոշիչ դարձավ պատերազմի ելքի համար: Բայց սա մեծ հարված էր Արաբիայի քոչվորական բնակչության՝ բեդուինների համար ևս: Վերջիններս նախկինում քարավանաքային առևտրից ստանում էին մեծ եկամուտներ, իսկ այժմ նրանց տնտեսական հիմնական զբաղմունքը՝ առևտուրը, մեծ վնաս էր կրում: Հետագայում կտեսնենք, որ միջերկրածովյան առևտրին տիրելու համար պայքարն արաբական նվաճումների հիմնական պատճառներից մեկը դարձավ:

Սասանյան վերջին հզոր արքան Խոսրով 2-րդ Փարվեզն էր (591-628 թթ.): Նա գահ էր բարձրացել Մավրիկիոս կայսեր օգնությամբ, ով օգնել էր նրան հաղթանակ տանելու Հարավային Ատրպատականի մարզպան Վահրամ Չուբինի (Փայտյա) դեմ: Վերջինս 588 թ. ջախջախել էր Իրան ներխուժած թյուրքական ցեղերին, և այդ հաղթանակը Վահրամին մեծ հեղինակություն էր բերել: Վահրամը որոշել էր օգտվել դրանից և գրավել գահը²: Նա ապստամբություն բարձրացրեց դեռևս Խոսրովի հոր՝ Որմիզդ 4-րդի օրոք: Վահրամը սերում էր պարթևական Սիհրանների տոհմից, ուստի ապստամբությունը դիմաստիական պայքարի ձև էր ընդունել³:

Ի վերջո, բյուզանդացիների օգնությամբ, Խոսրովը տիրացավ գահին: Նրա գահակալումը նշանավորվեց երկրում կատարված փոփոխություններով, որոնք չէին շրջանցել նաև հոգևոր ոլորտը: Խոսրով վերաբերում է քրիստոնեական կրոնի և զրադաշտականության փոխհարաբերությանը և փոխներթափանցումներին:

Հինգերորդ դարից սկսած պարսկական իշխանությունները սկսեցին վարել տոլերանտ քաղաքականություն հատկապես նեստորականների նկատմամբ: Հինգերորդ դարում պարսկական արքունիքի հովանավորությամբ, նեստորականները իրենց կաթողիկոսական կենտրոնն են հիմնում Տիգրանում, ընտրում կաթողիկոս և սինոդ, որը զբաղվում էր նեստորականների կրոնական համայնքներում ծառայած խնդիրների կարգավորմամբ⁴: Նեստորականների գործունեությունը այն աստիճան էր ակտիվացել, որ ոչ նեստորական ուղղության քրիստոնյաների նկատմամբ հալածանքները այնքան էին սաստկացել, որ Դվինում 506 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Բաբգեն Ա Ութնսեցին հրավիրեց եկեղեցական ժողով, որը դատապարտեց նեստորականների գործունեությունը Իրանում:

Ռ. Ֆրայի ամրամամբ քրիստոնեությունը խոր արմատներ էր գցել Իրանում, և չէր բացառվում, որ նրա նեստորական հոսանքը ժամանակի ընթացքում փոխարիներ մազդեզականությանը⁵: Մազդեզականությունը և նրա քրմական դասը գնալով վերածվել էր կաստայական մի առանձին կառույցի, որը կարելի է համեմատել եգիպտական քրմական կամ հնդկական բրահմանների համակարգին: Կրոնական, ծիսակարգային և գրային բարդ համակարգերը խոր անջրպետ էին առաջացրել հոգևոր դասի և հասարակության ավելի ցածր դասերի միջև: Ստեղծված վակուումը կարելի էր հաղթահարել կրոնական համակարգում արմատական փոփոխություններ կատարելով, ծիսակարգի պարզեցումով: Կրոնական բարեփոխումը առաջնային խնդիր էր, ստեղծվել էր մի վիճակ, որը Ռեֆորմացիայի նախօրեին հատուկ էր եվրոպական երկրներին⁶: Բայց կրոնական բարեփոխման փոխարեն, զրադաշտականությունը ենթարկվեց իսլամի հարձակմանը, և ի վիճակի չլինելով դիմադրել՝ դուրս մղվեց: Մազդեզականությունը հաջող պայքար էր մղել նախկինում քրիստոնեության դեմ, բայց ի տարբերություն վերջինիս, իսլամի տարածումը ուներ նաև

¹ <http://farhang-alshia.narod.ru/karbin/histoir3.html>.

² «Всемирная история в десяти томах», с. 100.

³ http://www.e-reading-lib.org/chapter.php/71537/93/Boiis_-_Zoroastriiicy._Verovaniya_i_obychai.html.

⁴ Փրայ Ք., с. 313.

⁵ Նույն տեղում, էջ 325:

⁶ http://www.e-reading-lib.org/chapter.php/71537/94/Boiis_-_Zoroastriiicy._Verovaniya_i_obychai.html.

աշխարհիկ իշխանության հովանավորությունը՝ հանձին արաբական խալիֆայության¹: Խոսքով Փարվեզի գահակալման ժամանակ շարունակվեց նեստորականների նկատմամբ տոլերանտ քաղաքականության վարումը: Գուցե դա բացատրվում էր այն հանգամանքով, որ Խոսրովը ամուսնացած էր Մավրիկիոս կայսեր դստեր՝ Մարիամի հետ, բայց այստեղ պետք է դրա հետևանք տեսնել նաև մոտ ապագայում պարսկա-բյուզանդական պատերազմում Խոսրովի զործադրած ջանքերն իր կողմը քրիստոնյա միաբնակներին և նեստորականներին ներգրավելու փաստը, որոնք մեծ առելություն էին տածում գահ բարձրացած Փոկաս կայսեր վարած քաղաքականության նկատմամբ: Հետաքրքրական է, որ քրիստոնյա էր նաև թագուհիների թագուհին՝ Շիրինը: Խոսրով Փարվեզի անձնական բժիշկը ևս եղել է քրիստոնյա²: Լուկոնիսի կարծիքով, չի բացառվում, որ Խոսրով 2-րդի օրոք փորձ էր արվել յուրահատուկ կամուրջ ստեղծել զրադաշտականության և քրիստոնեության միջև, որը հատկապես արտահայտվում էր արվեստի մեջ, ուր կարելի էր զուգահեռներ տեսնել Անահիտ աստվածուհու և Մարիամ Աստվածածնի միջև³:

Միջերկրածովյան քաղաքների համար պայքարը նոր թափով բորբոքվեց 604-628 թթ. պարսկա-բյուզանդական նոր պատերազմում: Արաբական ցեղերից մի քանիսը անմասն չմնացին պատերազմից: 602 թ. Խոսրով 2-րդը նվաճեց Լահմիդների արաբական պետությունը և գահից հեռացրեց Նումանիմ⁴: Նույն բախտին արժանացավ նաև արաբական մյուս պետությունը՝ Հասանյանների թագավորությունը: Այս երկու արաբական երկրները երկար ժամանակ բուֆերային դեր էին խաղացել Բյուզանդիայի և Իրանի համար: Լահմիդների թագավորության տարածքում մեծ թիվ էին կազմում նեստորականները, որոնց Խոսրովը օգտագործում էր պարսկա-բյուզանդական պատերազմում: Բուֆերային այս երկու երկրների վերացումը հանգեցրեց բեդուինների՝ ուղղակի հարձակումների սկսմանը բյուզանդական և պարսկական տիրույթների վրա: 613-614 թթ. պարսիկների կողմից գրավվեցին Սիրիայի և Պաղեստինի քաղաքները: 611 թ. պարսիկները գրավեցին Դամասկոսը, Անտիոքը: Սրան հետևեց Երուսաղեմի նվաճումը: Պարսիկները քաղաքի հրեաների օգնությամբ նվաճեցին քաղաքը և կոտորեցին մոտ 60 000 մարդու, ոչնչացրին Տիրոջ Գերեզմանի տաճարը, որը կառուցել էին Կոստանդիանոս Մեծը և Հեղինե թագուհին: Պարսիկները, որպես ռազմավար, իրենց հետ տարան իսապախատը⁵: Բյուզանդիան պատերազմի ընթացքում կորցրեց նաև Ստորին Եգիպտոսը: Բյուզանդական տիրույթները աստիճանաբար սեղմվում էին Բոսփորի շուրջը: Թվում էր, թե ահա կայսրությունը կընկնի Սասանյան Իրանի հարվածների տակ: Իրանը իր հզորության գագաթնակետին էր գտնվում, այն հզորության, որը Աքեմենյանների կործանումից ի վեր չէր ապրել: Կայսրը իր գանձերը նույնիսկ տեղափոխեց Կարթագեն և պատրաստվում էր փախչել: Բայց պատրիարքը և մայրաքաղաքի բնակչությունը ընդդիմացան կայսեր որոշմանը⁶: Պարսիկներին, այդուհանդերձ, չհաջողվեց գրավել մայրաքաղաքը: Ավելին, բյուզանդացիներին չհաջողվեց հակահարձակման անցնել: Հերակլ կայսրը (610-641 թթ.), որին Հ. Օստրոգորսկին անվանում է միջնադարյան Բյուզանդիայի հիմնադիր⁷, վճռական քայլերի դիմեց: Հերակլը 623 թ. ապրիլին ձեռնարկեց նոր արշավանք Թեոդոսիոպոլիս-Կարս-Ամբերդ-Դվին-Նախիջևան ուղղությամբ, ապա Ուրմիայից հարավ և տիրացավ զրադաշտականների սուրբ քաղաք Փանձակին՝ ոչնչացնելով կրակի ատրուշանը՝ ի հատուցումն Երուսա-

¹ http://www.e-reading-lib.org/chapter.php/71537/94/Boiis_-_Zoroastriiicy_Verovaniya_i_obychai.html.

² Луконин В., Древний и ранне средневековый Иран, Москва, 1987, с. 89.

³ Նույն տեղում, էջ 100:

⁴ Фрай Р., с. 328.

⁵ Василев А., История Византийской империи, т. 1 (Время до крестовых походов до 1081 г.)

<http://gumilevica.kulichki.net/VAA/vaa141.htm#vaa141para01>.

⁶ Большаков О., с. 137.

⁷ Ostrogorski G., Geschichte des byzantinischen Staates, Munchen, 1940, s. 96.

ղեմի ավերման¹: Շուտով Սիրիայից ետ դարձի ճանապարհը բռնեց հիմնական բանակը՝ Շահրվարազի գլխավորությամբ: Հերակլը մարտերով նահանջեց՝ անցնելով Արաքսը, մինչև Պարտավ²:

Խոսրովը, ով ծրագրել էր կործանել Բյուզանդական կայսրությունը և վերականգնել Աքեմենյանների երբեմնի հզորությունը, շուտով դառնում է պալատական խարդավանքի զոհ: Խոսրովը Սասանյան վերջին հզոր արքան էր, որի օրոք Իրանը ապրեց իր հզորության ավարտական փուլը: Պատերազմի միջոցով Խոսրովը ցանկանում էր տիրել միջերկրածովյան քաղաքներին և իր ձեռքում կենտրոնացնել միջազգային տարանցիկ առևտուրը, որի ճանապարհները կապում էին Հեռավոր Արևելքի երկրները միջերկրածովյան տարածաշրջանի հետ: Արքայից արքայի հարստության մասին են խոսում մի քանի գանձարանների գոյությունը, խարաջից ստացվող հսկայական եկամուտները: Հերակլի զինվորները, երբ գրավեցին արքայից արքայի նստավայրը, ապշեցին պալատների շքեղությունից և հարստությունից:³ Բայց շահնշահի հարստությունը ամենևին էլ արտացոլում երկրի տնտեսական վիճակը: Պատերազմի ընթացքում մոբիլիզացվեց գյուղացիության զգալի հատվածը՝ կազմակերպչական, սպասարկման և այլ աշխատանքների համար: Այդ պատճառով էապես կրճատվեցին հարկերից գանձարան մտնող եկամուտները: Վերջինս համալրվում էր առժամանակ ռազմական արշավանքների արդյունքում ձեռք բերված ավարով: Հսկայական միջոցներ էին ծախսվում բանակի կազմակերպման, համալրման և այլ խնդիրների լուծման համար: Առաջին պարտություններն արդեն սկսեցին հստակորեն ցույց տալ սասանյան բանակի անկայունությունը: Պատերազմի ամբողջ ծանրությունը ընկավ հիմնական արտադրող դասերի՝ գյուղացիության և արհեստավորության ուսերին: Երբ պետական գանձարանը չհամալրվեց անհրաժեշտ չափով, Խոսրովը պահանջեց կանոնավոր կերպով վճարել նաև քսանամյա և անգամ երեսունամյա հնության չվճարված հարկերը⁴: Հարկերի հավաքումը ուղեկցվում էր գույքի բռնագրավմամբ և թալանով: Սա առաջացրեց ժողովրդական հուզումների նոր ալիք, զգալի թվով գյուղացիներ փախչում էին երկրից: Հազարավոր դեհկաններ և գյուղացիներ դժգոհեցին այն ժամանակ, երբ պատերազմական գործողությունները տեղափոխվեցին Իրանի տարածք: Խոսրովի գահընկեցության մախօրեին երկրի տնտեսությունը գտնվում էր անմխիթար վիճակում: Պատերազմի արհավիրքներին ավելացան նաև բնական աղետները: 627-628 թթ. վարարեցին Տիգրիսի և Եփրատի ջրերը: Ավերվեցին կառուցված ջրամբարները, հսկայական տարածություն զբաղեցնող ցանքատարածությունները հայտնվեցին ջրի տակ: Խոսրովի հրամանով հսկայական միջոցներ ծախսվեցին ավերված ջրամբարները վերականգնելու համար, բայց երբ դա անել չհաջողվեց, հրամայեց մահապատժի ենթարկել աշխատողներին⁵:

Իրանի քաղաքական և տնտեսական ճգնաժամն ակնհայտ էր նաև արտաքին թշնամիների համար: Խոսրովի կառավարման վերջին շրջանում նամակ ստացվեց Մուհամեդ մարգարեից, որտեղ առաջարկում էր ընդունել իսլամը: Այն շահնշահին էր հասցրել Աբդլլահ իբն Հուզաֆ աս-Սահմին: Շահնշահը պատռեց նամակը և Եմենի իր կուսակալին՝ Բադանին, հրամայեց իր մոտ բերել այդ ստրուկին: Բայց շուտով արքան սպանվում է, իսկ նամակի բախտին որոշ ժամանակ անց արժանանում է ամբողջ Սասանյան տերությունը⁶:

¹ Большаков О., с. 138.

² Նույն տեղում:

³ Фрай Р., с. 320.

⁴ Колесников А., Иран в начале VII века (источники, внутренняя и внешняя политика, вопросы административного деления), Палестинский сборник, выпуск 22(85), 1970, с. 88.

⁵ Նույն տեղում:

⁶ Колесников А., Две редакции письма Мухаммеда сасанидскому шаху Хосрову II Парвизу. «Палест. Сб.», Вып. 17 (80), 1967, с. 74-83.

Պարսկա-բյուզանդական երկարատև պատերազմը հյուսիսեց երկու կողմերին էլ, և կործանման շեմին հասցրեց Սասանյան Իրանը: Խոսրովի մահից հետո, արքայական գահը դարձավ խաղալիք մրցակցող արիստոկրատական խմբավորումների ձեռքին: Հաջորդ չորս տարիների ընթացքում տասնյակ ինքնակոչ գահակալների իշխեցին Իրանում, որոնց իշխանությունը շատ հաճախ ձևական բնույթ էր կրում:

Սասանյան վերջին արքա Հազկերտ 3-րդը (632/633-651 թթ.), գահ բարձրանալով, իհարկե չնկատել չէր կարող, որ չունի այն ուժի անգամ ստվերը, որին տիրապետում էին Խոսրով 1-ին Անուշիրվանը և Խոսրով 2-րդ Փարվեզը: 730-ական թթ. գահակալական կռիվները Իրանում և հակադիր խմբավորումների միջև պայքարը թուլացրել էին պաշտպանությունը միջազետքյան սահմանների շրջանում, որից հմտորեն օգտվեցին քոչվոր-բեդուիները: Բավական է նշել, որ 630 թ. գարնանից մինչև 631 թ. աշուն իրանական գահի վրա բազմեցին 3 գահակալներ, իսկ այն ժամանակ, երբ Մուհամեդը վերադարձավ ուխտագնացությունից և ճնշվեց Մուսայլիմի ելույթը, Իրանում հաջորդաբար հասցրեցին իշխել ևս 5 գահակալներ (631-632 թթ.): Սասանյան պետության կառավարող վերնախավը, զբաղված լինելով իշխանության համար պայքարով, իր ամբողջության մեջ չընկալեց արաբական վտանգը: Դեռևս, 611թ. Ջու-Քարի ճակատամարտում /Քուայի և Վասիտի միջև/ պարսկական զորքը զգաց բեդուիների ռազմական հզորությունը բայց, այս պարտությունից հետո, անհրաժեշտ եզրահանգում չարվեց²: Նոր գահ բարձրացած Հազկերտը շատ զժերով մնան էր Աքեմենյան վերջին արքա Դարեհ 3-րդին և Խորեզմի վերջին սուլթան Ալա ադ-Դին Մուհամեդին³: 620-ական թթ., ոչ ոք ենթադրել անգամ էր կարող, որ կործանիչ հարվածը կհասցվի, ոչ թե Բյուզանդիայից կամ Թյուրքական խաքանությունից, այլ հարավ-արևելքից: Արաբական արշավանքները խորտակիչ հարվածներ հասցրեցին Սասանյան Իրանին, հարվածները, որ չէր կրել Իրանը Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից ի վեր⁴: Նվաճող արաբները գրավված քաղաքների կամ շրջանների կառավարիչներին թողնում էին իշխանության գլուխ: Նվաճողների գլխավոր խնդիրը, սկզբնական շրջանում, ոչ թե տեղական բնակչությանը իսլամացման ենթարկելն էր, այլ շրջանի ռազմական և տնտեսական ռեսուրսներին տիրելը: Պետական և հոգևոր աստիճանակարգության վերնախավի վերացումը առաջացրեց վակուում, որը աստիճանաբար համալրվեց արաբ զավթիչներով⁵: Ըստ Ա.Կոլեսնիկովի՝ Իրանի արաբական մվաճումը ոչ միայն արքայական դինաստիայի իշխանության թուլացման հետևանք էր, այլ իրանական պետականության անկման արձանագրում ընդհանրապես⁶:

ПРЕДПОСЫЛКИ АРАБСКОГО ЗАВОЕВАНИЯ ИРАНА

Арам Погосян

В статье рассмотрены последствия арабского завоевания, в частности, существенное уменьшение влияния зороастрийской религии на территории так называемого Большого Ирана и почти полного его исчезновения.

Победа мусульман в битве при Кадисии привела к созданию новой арабо-персидской границы в районе хребта Загрос. Персы не примирились с новым статус-кво в регионе и несколько раз пытались вернуть завоеванную мусульманами Месопотамию. Именно поэтому халиф Омар начал в 642 году н.э. широкомасштабное наступление с

¹ Большаков О., с. 207.

² Фрай Р., с. 328.

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս <http://farhang-alschia.narod.ru/karbin/histor3.html>:

⁵ Фрай Р., с. 329.

⁶ Колесников А., с. 87.

целью полного завоевания Сасанидского Ирана. В этом же году произошла решающая битва у Нехавенда, в которой персидская армия была разгромлена. Завоевание Сасанидского Ирана фактически завершилось в 652 году гибелью последнего шаха Йездигерда III. Следствием арабского завоевания Персии является дальнейшее распространение ислама на Востоке, на территории Волжской Булгарии, уйгуров, а затем и некоторых стран Юго-Восточной Азии.

PREREQUISITES OF ARAB CONQUERING OF IRAN

Aram Poghosyan

During the first two centuries of the Muslim era (7th-8th centuries A.D.) the Sasanian state and much of the Eastern region in Central Asia were conquered by mostly Arab forces of the early Islamic state. The accounts of this conquest are often contradictory, the exact course of events are unclear, precise dates for even major events are elusive and the size of the armies are difficult to determine. Persian forces appear to have outnumbered Muslim armies at key battles such as Qādesīya and Nehāvand where they fought bravely, contested the Muslim advance fiercely, and afterwards attempted to throw off tribute arrangements. The fall of the Sasanians has been attributed to the class and religious strife in their society, the absence of popular support for an elitist regime, conflict among the nobles, dynastic instability, and the cost of the recent, long and unsuccessful war with the Byzantines. The ultimate success of the Muslims has also been explained by their organization and determination, the effect of their faith on their morale, their ability to recruit and as they expanded and their greater mobility.

ԹՈՒՐԻՔԻԱ- ԼԻԲԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՍՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1989-1995 ԹԾ.

Արմեն Ժամհարյան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, հայցորդ

Գիտ. դեկավար՝ պ.գ.դ., պրոֆ. Ա. Ավագյան

Էլփոստ՝ armen-konferans@mail.ru

1989-1995 թթ. ընթացքում Թուրքիա-Լիբիա հարաբերությունները բնականոն զարգանում էին, ինչը պայմանավորված էր երկու երկրների արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող որոշակի փոփոխություններով, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային մի շարք զարգացումներով: Մասնավորապես 1989-1993 թթ.՝ Թուրքիայի 8-րդ նախագահ Թուրգուօ Օզալի իշխանության գլուխ եղած ժամանակահատվածում, Թուրքիա-Լիբիա հարաբերությունները բավականին աշխույժ էին: Թուրգուօ Օզալը նախագահ դառնալուց առաջ, երբ դեռ Թուրքիայի վարչապետն էր, երկու պաշտոնական այցելություն էր կատարել Լիբիա¹, իսկ նախագահ դառնալուց հետո նա զգալիորեն ձևափոխեց Թուրքիայի արտաքին քաղաքականությունը²: Ձևափոխումների հիմքում ընկած էր նրա այն համոզմունքը, որ իսլամը և զարգացումը չեն հակասում իրար, և հետևաբար Թուրքիան ստիպված չէ ընտրություն կատարել իր երկու բնորոշ գծերի միջև: Օզալի օրոք, իսկ ավելի ստույգ 1987-1993 թթ., առաջ եկավ և զարգացավ Թուրքիայի մեկ այլ գաղափարախոսություն և՛՝ Նոր օսմանականությունը³, որը Թուրքիային համարում էր Օսմանյան կայսրության ժառանգ, որը պետք է հովանավորի իր ժառանգությանը, այսինքն՝ նախկինում Օսմանյան կայսրության մեջ եղած երկրներին, ինչպես դա եղել էր Օսմանյան կայսրության ժամանակ: Նոր օսմանականությունը սկսեց լուրջ դեր կատարել օսմանյան կայսրության մեջ մտած նախկին երկրների, այս թվում և Լիբիայի հետ հարաբերություններում: Թուրգուօ Օզալի այն գործելաոճը, որ իսլամը չի հակասում զարգացմանը, և որ Թուրքիան պետք է վերականգնի իր ազդեցությունը Օսմանյան կայսրության մեջ մտնող տարածքներում, հանգեցրեց իսլամական երկրների, այդ թվում նաև Մադրիբի արաբական երկրների ու հատկապես Լիբիայի հետ հարաբերությունների սերտացմանը: Թուրգուօ Օզալի օրոք Թուրքիա-Լիբիա հարաբերությունների սերտացման մասին են վկայում Լիբիայի պաշտոնական գործիչների՝ նշված ժամանակաշրջանից ավելի ուշ արված հայտարարությունները, որոնցում ասվում էր, որ Թուրքիա-Լիբիա հարաբերությունների անկումը սկսվեց Թուրգուօ Օզալի նախագահական շրջանից հետո: Իրականում Թուրգուօ Օզալի օրոք Թուրքիա-Լիբիա հարաբերությունների սերտացումը շարունակվեց նաև հաջորդ երկու տարիների ընթացքում, և միայն 1996 թ. էրբաքանի այցելությունից հետո երկու պետությունների հարաբերությունները սկսեցին անկում ապրել: Կարևոր է նշել, որ վերը նշված պատճառներից բացի հարաբերությունների սերտացմանը նպաստեցին նաև Լիբիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, որոնք ստիպեցին Լիբիային փորձ անել հաստատելու ավելի ամուր հարաբերություններ Արևմուտքի և տարածաշրջանային պետությունների հետ: Սակայն 1989 թ. հաջորդած հետագա շուրջ տասը տարիների ընթացքում Լիբիայի քաղաքականության վրա ամենաուժեղ ազդեցությունը գործեց միջազգային հանրության արձագանքը՝ կապված 1988 թ. նոյեմբերին Լոկերբիի և 1989 թ.

¹ Turkey's Political Relations with Libya, http://www.mfa.gov.tr/turkey_s-political-relations-with-libya.en.mfa.

² Bank A. and Karadag R., The Political Economy of Regional Power: Turkey under the AKP No 204, German Institute of Global and Area Studies, Hamburg, 2012, p. 9.

³ Շաքարյան Ա., Արարատից այն կողմ, Հավելված, Հատվածներ Ահմեդ Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» գրքից, Երևան, 2011, էջ 196:

սեպտեմբերին Նիգերիայի վրա երկու ինքնաթիռների պայթյունների հետ, որոնք բազմաթիվ մարդկային կյանքեր խլեցին¹: Պայթյուններից որոշ ժամանակ անց միջազգային հանրությունը, որոշակի փաստերի վրա հենվելով, այս պայթյունների մեջ մեղադրեց Լիբիային, և այս ամենը հանգեցրեց Լիբիայի դեմ Միացյալ ազգերի կազմակերպության կողմից 1992 թ. ապրիլի 15-ից պատժամիջոցների կիրառմանը: Հենց այս պատժամիջոցներն էին, որ ստիպեցին Լիբիային հետագա շուրջ տասը տարիների ընթացքում փորձելու ավելի սերտացնել հարաբերությունները Արևմուտքի, ինչպես նաև տարածաշրջանի պետությունների, այս թվում նաև Թուրքիայի հետ, քանի որ Լիբիան ձգտում էր այս կերպ վերացնել պատժամիջոցները կամ գոնե մեղմացնել նրանց ազդեցությունը: Ուստի վստահաբար կարելի է նշել, որ Թուրքիա Օզալի վարչապետ եղած ժամանակահատվածում և նաև հետագա տարիներին՝ մինչև Էրբաքանի՝ Լիբիա կատարած այցելությունը, Թուրքիա–Լիբիա հարաբերությունների սերտացումը ինչքան Թուրքիայի, այնքան էլ Լիբիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող որոշակի զարգացումների արդյունք էր:

Չնայած Օզալի օրոք Թուրքիա–Լիբիա հարաբերությունները բնականոն զարգանում էին, այնուամենայնիվ տարածաշրջանային որոշ գործոններ երբեմն բացասաբար էին ազդում այս հարաբերությունների վրա: Մասնավորապես 1989 թ. լուրեր տարածվեցին, որ Թուրքիան պատրաստվում է ջուր վաճառել Իսրայելին: Լուրերի տարածման հիմնական պատճառը այն էր, որ Իսրայելը հետաքրքրություն էր ցուցաբերել կանադական «Սեդուզա» ընկերության տեխնոլոգիաների նկատմամբ, որոնք հնարավորություն էին տալիս ծովային ճանապարհով պլաստիկ տարաներով ջուր փոխադրել: Այսպիսի հնարավոր զարգացումները հակազդեցություն առաջացրին արաբական երկրների և հատկապես Լիբիայի կողմից: Այս հարցում Լիբիայի հակաիսրայելական կտրուկ դիրքորոշումը կարելի է բացատրել ոչ միայն վերջինիս հակաիսրայելական կեցվածքով, այլ նաև այն հանգամանքով, որ Լիբիան ինքն էլ ջրի խիստ պակաս ուներ և որպես խնդրի լուծման առավել հնարավոր տարբերակներից մեկը դիտում էր Թուրքիայից ջրի ներկրումը: Հարաբերությունների լարվածությունը հանգեցրեց նրան, որ ի վերջո 1990 թ. հունվարին Թուրքիայի ԱԳ նախարար Ալի Հուսրև Բոզերը հայտարարեց. «Չկա Իսրայելին ջուր վաճառելու որևէ ծրագիր»: Թուրքիայի ԱԳ նախարարը միաժամանակ հայտարարեց, որ նաև չկա որևէ ծրագիր ջրով ապահովելու արաբական բարեկամական երկրներին: Տարածաշրջանային զարգացումներից 1991 թ. Օոցի պատերազմը նույնպես Թուրքիա–Լիբիա հարաբերությունների վրա որոշակի ազդեցություն թողեց: Օոցի պատերազմի ժամանակ, Թուրքիան չնայած զորքեր չհատկացրեց պատերազմի համար, սակայն կռալիցիոն զորքերին թույլատրեց իր օդանավակայանները օգտագործել պատերազմի համար, ինչպես նաև Իրաքի հետ սահմանային մասում շուրջ 100 000-անոց զորք կուտակեց², ինչը նույնպես ստիպեց Սադամ Հուսեյնին այդ շրջանում զորք կենտրոնացնել՝ նվազեցնելով նրա զորքերի թիվը Իրաքի հարավում: Օոցի պատերազմի ժամանակ կռալիցիոն զորքերին աջակցելու Թուրքիայի այս քաղաքականությունը Սադդիթի արաբական երկրները տարբեր կերպ գնահատեցին: Մարոկկոն, որը ինքն էլ զորքեր ուներ կռալիցիոն ուժերի կազմում, չէր կարող բացասական վերաբերվել Թուրքիայի այս քայլերին: Փոխարենը Ալժիրը և Լիբիան բացասական գնահատեցին Թուրքիայի քաղաքականությունը Օոցի պատերազմի ժամանակ, իսկ Լիբիայի առաջնորդ Մուամար Կադաֆին նույնիսկ կոչ արեց թուրքերին անհապաղ գնալ և փակել Թուրքիայի ամերիկյան բազաները³: Այնուամենայնիվ Լիբիական կողմի այս հայտարարությունները ոչ այնքան հակաթուրքական, որքան հակամերիկյան էին և որևէ կերպ լուրջ ազդեցություն չունեցան Թուրքիա–Լիբիա

¹ "The Foreign policies of Middle East States", Colorado, 2002, p. 229.

² Celik Y., Contemporary Turkish foreign policy, Westport, 1999, p. 77.

³ Turkey's War Role Threatens Economic Link With Arab Neighbors, January 30, 1991,

http://articles.chicagotribune.com/1991-01-30/news/9101090475_1_arab-world-arab-countries-turkey,

հարաբերությունների վրա: Թուրգուք Օզալի օրոք Թուրքիա-Լիբիա սերտ հարաբերությունների մասին են վկայում նաև երկու երկրների միջև իրականացված պաշտոնական այցելությունները: Մասնավորապես 1992 թ. հունվարի 27-ին Կադաֆիի զինակիցներից Լիբիայի հեղափոխության ղեկավարման խորհուրդի անդամ մայոր Աբդ Ալ-Սալամ Ջալուդը պաշտոնական այց է կատարում Անկարա: Նա Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաների հետ բանակցությունների ժամանակ ժխտում է Լիբիայի կապերը Քրդական բանվորական կուսակցության հետ: Թուրքիա-Լիբիա հարաբերություններում կարևոր նշանակություն ուներ նաև այդ ժամանակ պետական նախարար Թանսու Չիլերի այցը Լիբիա: 1992 թ. փետրվարի 17-ին: Վերջինիս Լիբիա այցելության հիմնական նպատակներից մեկը Իսլամական զարգացման բանկի կառավարիչների հանդիպմանը մասնակցելն էր: Ժամանման հաջորդ օրը՝ փետրվարի 18-ին, պետական նախարարը հանդիպում է ունենում Կադաֆիի հետ: Այս և այլ բարձրաստիճան պաշտոնյաների այցելությունները ցույց են տալիս, որ Թուրգուք Օզալի այն քաղաքականությունը, համաձայն որի Թուրքիան պետք է ակտիվացնի իր հարաբերությունները նախկինում Օսմանյան կայսրության կազմի մեջ մտած երկրների հետ, նպաստել է Թուրգուք Օզալի օրոք Թուրքիայի և Լիբիայի հարաբերությունների ակտիվ լինելուն: Նաև պետք է նշել, որ Լիբիայի հետ սերտ հարաբերությունները չխանգարեցին Թուրքիային միանալ Լիբիայի դեմ իրականացվող միջազգային պատժամիջոցներին: Իսկ ավելի ստույգ 1992 թ. ապրիլի 15-ին Թուրքիայի արտգործնախարարության խոսնակ Ֆիլիպ Դինսմենը հայտարարեց, որ Թուրքիան հաստատել է ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդի բանաձևը՝ միանալով Լիբիայի նկատմամբ կիրառվող օդային էմբարգոյին:

Թուրքիա-Լիբիա քաղաքական և տնտեսական հարաբերությունները համահունչ էին: Դրանք ուսումնասիրվող ժամանակաշրջանի ընթացքում դինամիկ զարգանում էին: Դեռևս Թուրգուք Օզալի վարչապետ եղած ժամանակ Թուրքիայի տնտեսությունը կտրուկ աճ արձանագրեց, ինչի արդյունքում 1990-ական թթ. սկզբին նրա արտաքին առևտրի ցուցանիշները զգալի չափով ավելացան 1980-ական թթ. սկզբի համեմատ: Ավելի ստույգ՝ այդ ժամանակ տեղի էր ունենում Թուրքիայի տնտեսության ազատականացումն և զլոբալացումն, ինչը իր ազդեցությունը թողեց Թուրքիա-Լիբիա տնտեսական հարաբերությունների վրա: Դեռևս 1980-ական թթ., երբ մեծացան թուրքական արտադրանքի եվրոպական շուկաներում ունեցած խնդիրները, թուրք գործարարները կենտրոնացան Մերձավոր Արևելքի երկրների՝ մասնավորապես Իրանի, Իրաքի և Լիբիայի վրա: Նշված երկրների, այդ թվում նաև Լիբիայի հետ նախարարին առևտրի հետ զուգահեռ արդեն 1980-ական թթ. վերջերին Լիբիան դարձավ թուրքական շինարարական ընկերությունների ամենամեծ շուկան, իսկ թուրք աշխատավորները Լիբիայում արդեն բավականին մեծ թիվ էին կազմում: Թուրք աշխատավորների Լիբիա հոսքը նաև պայմանավորված էր ավելի վաղ կնքված պայմանագրերով, որոնք երաշխավորում էին նրանց համար նույն իրավունքները, ինչը որ ունեին լիբիացի աշխատավորները¹, և այս ամենի արդյունքում 1990 թ. թուրք աշխատավորների թիվը Լիբիայում 50,000 էր², դա բավականին մեծ ցուցանիշ է: Այս ամենը նաև ստիպում է եզրակացնել, որ Լիբիայի հետ հարաբերությունները սերտացնելու ձգտումներում իր բաժինն ունեին նաև այն տրանսֆերները, որոնք Թուրքիան ստանում էր Լիբիայում գտնվող իր քաղաքացիներից, քանի որ Թուրքիա-Լիբիա հարաբերությունների վատացումը բացասաբար կազդեր Լիբիայում Թուրքիայի քաղաքացիների թվի վրա: Տնտեսական հարաբերությունները խորացնելու համար Թուրքիան սկսեց մեծ ուշադրություն դարձնել առևտրային, զբոսաշրջության և շինարարության ոլորտներում գործող իր ընկերություններին: Նշված ոլորտները զարգացնելու և Լիբիայի հետ առևտուրը խթանելու

¹ Abadan–Unat N., Turks in Europe. From guest workers to transnational citizen, Berlin, 2005, p. 43.

² Liel A., Turkey in the Middle East: Oil, Islam and Politics, trans. E. Lottem, London Lynne Rienner, 2001, p. 118.

նպատակով Թուրքիան սկսեց ընդունել նավթը որպես ապրանքների և պարտքերի դիմաց վճարամիջոց, դառնալով՝ Լիբիայի հետ այդպիսի գործարքների իրակամացնող մի քանի երկրներից մեկը¹: Որպես այս ամենի արդյունք՝ Թուրքուօ Օզալի նախագահության ժամանակ Թուրքիան Լիբիայի հետ ուներ լայնամասշտաբ շինարարական պայմանագրեր², իսկ առևտրաշրջանառությունը ավելանում էր: Արդարացի լինելու համար նաև պետք է նշել, որ 1989 թ. Լիբիայի պարտքը թուրքական շինարարական ընկերություններին հասնում էր 2 մլրդ դոլարի, որից 400 մլն պատկանում էր իրենց աշխատանքը ավարտած թուրքական 12 ընկերություններին, սակայն Լիբիան ի վիճակի չէր վճարել, ինչի արդյունքում էլ 1.5 մլրդ արժողությամբ ծրագրերը չեղյալ համարվեցին: 1989 թ. Թուրքիան նաև փորձեց խթանել իր ապրանքների մուտքը Լիբիա՝ դրա համար Լիբիային հատկացնելով 300 մլն դոլարի վարկ՝ պայմանով, որ Լիբիան այն կմարի կանխիկ դրամով և ոչ թե նավթով³: Այս ժամանակ Թուրքիան հիմնականում Լիբիա էր արտահանում տեքստիլ ապրանքներ, ալյուր, պահածոյացված ուտելիք, իսկ այնտեղից հիմնականում ներմուծում էր նավթ և նավթամթերքներ, ինչպես նաև պայմանագրեր ուներ հեղուկ բնական գազի մատակարարման վերաբերյալ, որոնք, սակայն, Լիբիայի նկատմամբ պատժամիջոցների սահմանման հետևանքով անիրագործելի դարձան, քանի որ պատժամիջոցների պայմաններում անհնար դարձավ անհրաժեշտ սարքավորումների ներմուծումը: Պետք է նաև նշել, որ Թուրքուօ Օզալի օրոք Թուրքիա-Լիբիա տնտեսական հարաբերությունների զարգացումը տեղի էր ունենում Թուրքիայի պատմության մեջ այնպիսի մի ժամանակահատվածում, երբ թուրքական տնտեսությունը Թուրքիայի պատմության ընթացքում առաջին անգամ մեծ չափով սկսեց կախվածություն ունենալ նաև մուսուլմանական աշխարհի տնտեսական իրադրությունից:

1993 թ. Օզալի մահից հետո էլ Թուրքիան շարունակեց սերտացնել իր հարաբերությունները Լիբիայի հետ՝ մինչև 1996 թ. էրբաքանի այցելությունը, երբ սկսվեց ճգնաժամը Թուրքիա-Լիբիա հարաբերություններում՝ շարունակվելով մի քանի տարի: Թուրքուօ Օզալի մահից հետո Լիբիայի՝ Թուրքիայի հետ հարաբերությունները սերտացնելու ձգտումների մասին է վկայում այն հանգամանքը, որ նշված ժամանակաշրջանում միջազգային որոշ հարցեր լուծելու համար Լիբիան դիմեց Թուրքիայի աջակցության: Այսպես՝ 1994 թ. հոկտեմբերի 30-ին Կասաբլանկայում սկսած Միջին Արևելքի տնտեսական եռօրյա խորհրդատուական ընթացքում Լիբիայի առաջնորդ Մուամար Կադաֆին խնդրեց Թուրքիայի այդ ժամանակվա վարչապետ Թանսու Չիլերին հետ վերադառնալու ժամանակ այցելություն կատարել Լիբիա: Նոյեմբերի 1-ին Թանսու Չիլերը այցելում է Լիբիա: Այցելության ընթացքում կայացած հանդիպման ժամանակ Կադաֆին խնդրեց նրան փոխանցել վաշինգտոնյան իր պատրաստակամությունը ընդունելու խաղաղության գործընթացը և միջնորդելու երկու լիբիացիների համար, որոնք մեղադրվում էին ամերիկյան ինքնաթիռը պայթեցնելու մեջ⁴: Լիբիական կառավարությունը նաև խնդրեց հորդորել Սիացյալ Նահանգներին վերացնել տնտեսական պատժամիջոցները և թույլ տալ երկու երկրներ-

¹ The Middle East and North Africa 2003, 49th Edition // Regional Surveys of The World, Europa Publications Limited 2002, p. 787.

² F. Stephen Larrabee, Lan O. Lesser, Turkish Foreign Policy in an Age of Unsertainty, Santa Monica, RAND National Security Research Division 2003, p. 128.

³ Liel A., p. 120.

⁴ 1988 թ. դեկտեմբերի 21-ին ամերիկյան «Պանամ» ինքնաթիռը Լոկերբիի վրա՝ Շոտլանդիայի երկնքում, պայթում է, ինչի հետևանքով զոհվում է ողջ անձնակազմը՝ 270 մարդ (Տե՛ս Cordesman, Anthony H., A tragedy of arms: military and security developments in the Maghreb, Westport, 2002, p. 186.): Այս պայթյունը ցնցում է ամբողջ աշխարհը՝ առաջացնելով դժգոհություն և բողոքի ուժեղ ալիք: Պայթյունը կազմակերպելու մեջ մեղադրվում էին Լիբիայի ազգային անվտանգության երկու աշխատակիցներ, որոնք հետագայում՝ 1999 թ., հանձնվեցին Գաազայի միջազգային դատարանին: Ավելի մանրամասն տե՛ս **Յուսուֆ Գիսան Ն.**, Արաբական երկրների պատմություն, հ. 3-րդ, Երևան, Ջանգալ-97, 2006, էջ 751:

րին առևտուր կատարել չեզոք երկրների միջոցով¹: Թուրքիային ԱՄՆ-ի հետ հարաբերություններում որպես միջնորդ ընտրելը վկայում է այդ ժամանակ առկա Թուրքիա-Լիբիա սերտ հարաբերությունների մասին, ինչպես նաև ցույց է տալիս այն հեղինակությունը, որը այդ ժամանակ Թուրքիան ուներ Լիբիայում մասնավորապես և Արաբական Մատրիբում ընդհանրապես: Թուրքիային որպես միջնորդ ընդունելը կապված է նաև Թուրքիա-Լիբիա հետզհետե սերտացող տնտեսական հարաբերություններով, ինչի վկայությունն է այն հանգամանքը, որ Թուրքիա - Լիբիա առևտրաշրջանառությունը 1994-1995 թթ. ընթացքում յուրաքանչյուր տարի ավելանում էր ավելի քան 100 մլն դոլար, ինչպես նաև այն հանգամանքով, որ պատժամիջոցները, ինչպես վերը արդեն նշվեց, արգելակում էին Լիբիայից Թուրքիա ածխաջրածինների ներմուծումը: Հատկանշական է, որ 1995 թ. Թուրքիայում իսլամիստական կուսակցության հաղթանակը ևս որոշ չափով կապված էր նավթ արդյունահանող այնպիսի երկրների հետ հարաբերությունների սերտացմամբ, որոնցում իսլամը բավական ազդեցիկ դեր ուներ: Այդ երկրներն էին Իրանը, Սաուդյան Արաբիան և Լիբիան²:

Ներկայացնելով Թուրքիա-Լիբիա հարաբերությունները և դրանց դերը երկու երկրների արտաքին քաղաքականության մեջ 1989-1995 թթ. ընթացքում՝ կարևոր է նշել, որ երկու պետությունների միջև հարաբերությունների սերտացումից կողմերից յուրաքանչյուրը իր ուրույն առավելություններն էր ստանում: Ներկայացնենք դրանցից առավել կարևորները: Թուրքիան, տարածաշրջանում իր ազդեցությունը մեծացնելուց բացի, Լիբիայի հետ հարաբերությունների սերտացումից տնտեսական օգուտներ էր ստանում, ինչպես նաև փորձում էր մեծացնել Լիբիայից էներգակիրների ներմուծումը՝ իր բուռն զարգացում ապրող տնտեսության պահանջները բարելավելու համար: Լիբիան իր հերթին, երկկողմ սերտացող հարաբերությունների վրա հենվելով փորձում էր ստանալ Թուրքիայի աջակցությունը Արևմուտքի հետ իր հարաբերությունները կարգավորելու հարցում: Լիբիան նաև Թուրքիայի աջակցության կարիքն ուներ միջազգային պատժամիջոցներին դիմակայելու համար, քանի որ միջազգային պատժամիջոցները բացասաբար էին անդրադառնում Լիբիայի տնտեսական զարգացման վրա, իսկ Թուրքիայի հետ տնտեսական համագործակցությունը որոշ չափով կարող էր օգնել այս հարցում:

ТУРЕЦКО-ЛИВИЙСКИЕ ОТНОШЕНИЕ И ИХ РОЛЬ ВО ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ ДВУХ СТРАН (1989-1995)

Армен Жамгарян

В статье рассматриваются турецко-ливийские отношения на протяжении 1989-1995 годов и их роль во внешней политике двух стран. Особое внимание уделено тем факторам, которые привели обе страны к региональным изменениям, что повлияло на взаимоотношения двух государств, а также привело к их сближению. В результате исследования мы пришли к выводу, что в рассматриваемый промежуток времени это позволило Турции утвердиться в регионе, а Ливии – преодолеть напряженные отношения с Западом.

¹ Otman W., Karlberg E., The Libyan Economy: Economic Diversification and International Repositioning, Berlin, 2007, p. 38.

² Nachmani A., Turkey: facing a new millennium, Coping with intertwined conflicts, Manchester, 2003, p. 89.

**TURKISH-LIBYAN RELATIONS AND THEIR ROLE IN FOREIGN POLICY OF
THE TWO COUNTRIES (1989-1995)**

Armen Zhamharyan

The article presents Turkey-Libya relations during 1989-1995 and their role in the foreign policy of the two countries. Particularly the emphasis is made on the factors that impelled the two countries to make close relations, as well as on the regional developments that influenced the bilateral relations. Presenting and commenting on the above mentioned, the conclusion is made, that besides other benefits, the rapprochement in relations during this period gave Turkey an opportunity to strengthen its position in the region, meanwhile allowing Libya to overcome tense relations with the West.

ԹՈՒՐԲԱԿԱՆ ԵՎ ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՈՐԲԻՆԳԻ ՀԱԿԱՐԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արմինե Բաղայան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ պ.գ.թ., դոց. Է. Հովհաննիսյան

Էլփոստ՝ armine90@list.ru

Լոբբինգը տարբեր կազմակերպություններին, քաղաքական կուսակցություններին և այլ խմբերին հնարավորություն է տալիս ազդեցություն ունենալ տվյալ պետության կառավարության և օրենսդիր մարմնի որոշումների վրա՝ ի շահ նույն այդ կազմակերպությունների ու խմբերի: ԱՄՆ-ն ընդունված է համարել լոբբինգի հայրենիքը, որը ձևավորվել է 19-րդ դ. որպես քաղաքական ազդեցության միջոց: Վաշինգտոնի «Willard» հյուրանոցի նախասրահում՝ լոբբիում հավաքվում էին տարբեր մարդկանց ու խմբերի ներկայացուցիչներ, որոնք հանդիպում էին նախագահի ու սենատորների հետ: Ներկայացուցիչները հանդես էին գալիս խնդրանքներով ու առաջարկներով պետության որդեգրած քաղաքականության վերաբերյալ: Նրանք փորձում էին նախագահին հանոզել ընդունել կամ մերժել այս կամ այն որոշումը: Մինևույն ժամանակ այդ քննարկումների հիմքում թաքնված էին որոշ խմբերի շահերը: Հիմնականում իրենց ցանկալի որոշմանը հասնելու համար լոբբիստները իշխանությունների համար կազմակերպում էին թանկարժեք ընթրիքներ և կատարում «նվիրատվություններ»: Այս հանգամանքը հիմք էր դարձել, որ լոբբիստի մասնագիտությունը համարվեր անվայելուչ, սակայն 19-րդ դ. վերջում սկսվեց կիրառվել անշահախնդիր միջնորդությունը, ինչը նպաստեց լոբբիստների վարկանիշի բարձրացմանը: Լոբբիստի մասնագիտության այս նոր ձևի առաջին ներկայացուցիչը հայտնի լոբբիստ և հռետոր Սեմ Ուորդն էր: Նա պաշտոնյաներին ու սենատորներին համոզում էր ոչ թե գումարով, այլ՝ խոսքով, ինչը նորություն էր ամերիկյան լոբբիստական իրականությունում: Արդյունքում լոբբիստի մասնագիտությունը դարձավ ավելի բարդ ու ոչ բոլորին հասու, քանզի համոզելն ավելի բարդ էր, քան պարզապես գումար փոխանցելը: Անհրաժեշտ էր ունենալ սեփական առաջարկի ճշմարտացի լինելու համոզմունք, և բացի այդ դրա ապացուցման համար բերված փաստարկների ընտրության հարցում հաշվի առնել տվյալ անձի հոգեբանությունը, ում փորձում ես համոզել: Հետևապես այս մասնագիտությունը բացի հռետորական արվեստից, պահանջում էր նաև բազմակողմանի զարգացվածության աստիճան հաջողության հասնելու համար: Ժուտով այս մասնագիտությունը ստացավ լայն կիրառություն և դարձավ ԱՄՆ-ի ժողովրդավարության ցուցիչներից: Ժամանակի ընթացքում ձևավորվեց լոբբինգի մի քանի տեսակ՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական, էթնիկ և այլն¹:

ԱՄՆ-ում հայկական լոբբիստական գործունեությունը հիմնականում իրականացվում է ամերիկահայ մեծաթիվ համայնքի միջոցով, որի նպատակներից է Հայոց ցեղասպանության ճանաչումը հնարավորինս շատ երկրների կողմից, Արցախի քաղաքական ու տնտեսական բարելավումը, Հայաստանի Հանրապետությանը սատարելը և այլն²: Նրանց բոլոր գործողությունների հիմքում հայանպաստ գործունեության իրականացումն է, որը սակայն պիտի լինի արդարացված: Լինելով ԱՄՆ-ի քաղաքացիներ ամերիկահայերը կառավարության առջև պետք է բարձրացնեն հարցեր, որոնք բխում են համայնքին հուզող խնդիրներից: Այդ խնդիրները կարող են լինել նաև Հայաստանին հուզող (ինչպես լինում է հաճախ, օրինակ՝ Հայոց ցեղասպան-

¹ «Հայ համայնքն ԱՄՆ-ում», Երևան, 2010, էջ 70-73:

² **Նահապետյան Կ.**, Ամերիկայի հայկական համագումարի կազմավորումը, նպատակներն ու կառուցվածքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1997, N 3, էջ 25-26:

նության ճանաչման հարցը), սակայն համայնքը պետք է շահ ունենա այդ հարցերի բարձրաձայնման համար: Հակառակ դեպքում համայնքը չի կարող ԱՄՆ կառավարությանը ներկայացնել խնդիր, որի լուծումը պետք է ծառայի հօգուտ այլ երկրի¹:

Միանշանակ է, որ ԱՄՆ-ի և Բաքուի վերջին տարիներին արտասահմանում բնակվող համայնքային կառույցների կազմակերպման ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել: Սակայն ակնհայտ է, որ այս գործողությունները միտում ունեն հակակշռելու հայկական սփյուռքի աշխատանքը: Այս մասին բարձրաձայնում են նաև թուրք-ադրբեջանական պաշտոնյաները իրենց հայտարարություններում: Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքի պետական կոմիտեի նախագահ Նազիմ Իբրահիմովը փաստում է, որ հայկական սփյուռքին դիմակայելը իրենց կառույցի ձևավորման նպատակներից մեկն է²:

Կարեն Վերանյանը նշում է, որ ԱՄՆ-ի թուրքական լոբբիստական խմբերն իրենց գործունեությունը ծավալում են գլխավորապես երկու ուղղություններով.

1. Հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերություններ, որոնք ենթադրում են հակազդել ԱՄՆ Կոնգրեսում և գործադիր իշխանությունում հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի շուրջ ցանկացած քննարկման, բանաձևի կամ որոշման առաջմղման գործընթացին, խոչընդոտել ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ համագործակցության խորացմանն ու ՀՀ և ԼՂՀ ցուցաբերվող ԱՄՆ ֆինանսական աջակցման հարցերին:

2. ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններ, որոնք ենթադրում են անրապնդել ԱՄՆ-Թուրքիա ռազմաքաղաքական, ռազմավարական համագործակցությունը, ապահովել Միացյալ Նահանգներից Թուրքիային տրամադրվող ռազմատեխնիկական, տնտեսական և այլ տեսակի աջակցությունը³:

Այն ժամանակահատվածում, երբ Ուրուզվայը դուրս էր եկել հայտարարողական հարթությունից և պատրաստվում էր Արցախի իրավական ճանաչման առնչությամբ պաշտոնական դիրքը ճշտելուն՝ նախագահ Ալիևը իր հարցազրույցներից մեկում նշում է, որ իր համար Ադրբեջանի թիվ մեկ թշնամին հայկական լոբբին է: Նրա պնդմամբ Հայաստանի Հանրապետությունը արհեստական պետություն է՝ «հիմնված հնադարյան ադրբեջանական տարածքների վրա»: Շահան Գանտահարյանի խոսքերով «ալիևյան այս հայտարարությունը հուշում է համահնչեղություն Անկարայի տարբեր վարիչների կողմից կրկնվող հանկերգին՝ Թուրքիան պատրաստ է Հայաստանի Հանրապետության հետ բնականոն հարաբերություններ մշակելու, սակայն Սփյուռքն է խանգարող»⁴: Նախագահի այս հայտարարությունը մատնում էր նրանց խուճապը և հայկական լոբբին թիրախ ընտրելու հանգամանքը: Ալիևի վարչախումբը նկատել էր, որ ինչպես ԱՄՆ-ի որոշ նահանգների, այնպես էլ Ուրուզվայի դեպքում շարժիչ ուժը Հայ Դատի գրասենյակներն ու հանձնախմբերն են:

2011 թ. մայիսի 28-ին Ինդոնեզիայի Բալի կղզում տեղի ունեցած Չմիացած երկրների շարժման (ՉԵՇ) ԱԳ նախարարների 16-րդ համաժողովին Ադրբեջանը դարձավ շարժման անդամ: Այս քայլը բավականին մեծ արձագանք գտավ և նույնիսկ քննադատության արժանացավ Ադրբեջանի ազգայնական ու աշխարհիկ կուսակցությունների կողմից: Սակայն Ադրբեջանի իշխանությունները հեռահար նպատակներ ունեին, որոնք առաջին հայացքից ակնառու չէին.

1. Ադրբեջանի համար աջակցություն ապահովել ղարաբաղյան հիմնահարցում և ստանալ 119 երկրների հովանավորությունը՝ սեփական տեսակետը ներկայացնե-

¹ About the ANCA, www.anca.com.

² **Նահապետյան Հ.**, Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Երևան, 2010, էջ 4-5:

³ «Հայ համայնքն ԱՄՆ-ում», էջ 149:

⁴ **Գանտահարյան Շ.**, Հայկական լոբբի. Ադրբեջանի թիվ մեկ թշնամու առաջխաղացումը, www.medialab.am.

լով, ինչպես նաև քաղաքական ու հոգեբանական ճնշում գործադրելով Հայաստանի վրա Ղարաբաղի հարցը լուծել իր շահերին համապատասխան:

2. Դառնալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ (ոչ մշտական անդամները ընտրվում են երկու տարի ժամանակով): Իսկ ՉԵՇ-ին անդամակցելը հնարավորություն էր տալիս իրագործել այդ ցանկությունը, քանի որ ՉԵՇ-ի անդամների գերակշիռ մասը ՄԱԿ-ի անդամ են: ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը նոր հարթակ պիտի հանդիսանար Ադրբեջանի հակահայ գործունեության համար:

Իրականում Ադրբեջանը իր լրբբիստական գործունեության շնորհիվ կարողացավ իրագործել երկրորդ կարևոր նպատակը: Նա 2012 թ. հունվարի 1-ից ընտրվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ¹:

Թուրքիան իրականացնում է ոչ միայն սեփական լրբբիստական գործունեությունը, այլև համագործակցում է այլ լրբբիստական ընկերությունների հետ՝ «Livingston Group», «Jones Walker», «Neusner Communications», «Fleshman-Hillard»: Հակահայ գործունեության համար հիմնականում համագործակցում են Livingston Group ընկերության հետ: Այս կազմակերպությունը միայն 2006 թ. Թուրքիայի հետ ստորագրել է 1,8 մլն դոլար արժողությամբ պայմանագիր: Կարեն Վերանյանը նշում է, որ 2000-2010 թթ. այս ընկերությունը ԱՄՆ կառավարությունում հակահայ լրբբիստական գործունեության համար Թուրքիայի կառավարությունից ստացել է ավելի քան 13 մլն դոլար: Իսկ ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր մարմիններում հակահայ լրբբիստական գործունեության համար Թուրքիան համագործակցում է «Gephardt Group»-ի հետ: «DLA Piper ընկերությունը 2007 թ.1,2 մլն դոլար է ստացել Անկարայից:

Պատահական չէ, որ 2008 թ. ԱՄՆ-ի Արդարադատության նախարարության լրբբիստական խմբերի տարեկան հաշվետվության մեջ Թուրքիան դասվել է 4-րդ տեղում՝ որպես ԱՄՆ Կոնգրեսում իր շահերը հաճախակի լրբբինգի ենթարկած երկիր (4,2 մլն դոլար): Նա միայն զիջել է Միացյալ Արաբական Եմիրություններին (11 մլն դոլար), Մեծ Բրիտանիային (6 մլն դոլար) և Ճապոնիային (4,23 մլն դոլար): Այսպիսի ցուցանիշը պայմանավորված էր նաև 2007 թ. տարեվերջին Կոնգրեսում քննարկման դրված Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության ճանաչման մասին օրինագծով: Այս ընթացքում թուրքաճապատ լրբբիստները մեկ ամսում 673 անգամ հանդիպել են կոնգրեսականների ու հրեական լրբբինգի ներկայացուցիչների հետ²:

ԱՄՆ-ում թուրքական լրբբինգը սկսեց կրկին ակտիվ գործունեություն ծավալել 252 բանաձևի քվեարկության նախօրեին, որը պիտի լիներ 2010 թ. մարտի 4-ին, Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում: Նրանք գործի դրեցին իրենց ողջ ներուժը: Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների պալատի նախագահին ու անդամներին նամակով դիմեցին ԱՄՆ-ի ավիացիոն և պաշտպանական արդյունաբերության մի շարք ընկերություններ, հորդորելով մտածել իրենց քայլերի մասին և չընդունել հայերի դեմ իրականացված ցեղասպանությունը ճանաչող օրինագիծը: Նրանք վկայակոչում էին այն հանգամանքը, որ այդ քայլը կարող է վտանգել ամերիկյան արտահանումները Թուրքիա, ինչն էլ ֆինանսական մեծ կորուստների կհանգեցնի: «Boeing», «Raytheon», «Lokheed Martin», «United Technologies» և «Northrop Grumman» ընկերությունները համատեղ նամակում նշում են, որ այդ օրինագիծը մեծ վնաս կհասցնի ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններին, դա էլ իր հերթին վտանգի կենթարկի ամերիկյան աշխատատեղերը: Այս ամենը ապացուցելու և կորուստների չափերը ցույց տալու համար ներկայացնում են 2009 թ. ամերիկյան ավիացիոն և ռազմական արտադրանքի արտահանումները դեպի Թուրքիա, որոնք կազմում է ավելի քան 7

¹ Permanent and Non-Permanent Members, www.un.org.

² «Հայ համայնքն ԱՄՆ-ում», էջ 148:

մլն դոլար: Միևնույն ժամանակ նշում են, որ այն 2010 թ. միտում ունի ավելանալու, իսկ այս օրինագիծը ի չիք կդարձնի բոլոր այդ հույսերը: Նրանց կարծիքով աննե-րելի է փչացնել հարաբերությունները Թուրքիայի հետ և միևնույն ժամանակ կրել այդքան մեծ ֆինանսական վնասներ¹:

ԱՄՆ-ում լրբբիստական ինտենսիվ գործունեություն են ծավալում նաև ադրբեյջանական կազմակերպությունները, որոնց ֆինանսավորման զգալի մասը տրամադրում է հենց Ադրբեյջանի կառավարությունը: Միայն 2008 թ. Ադրբեյջանի ԱԳՆ մոտ 371 հազար դոլար է տրամադրել ԱՄՆ-ի հասարակայնության հետ կապերի ամրապնդման, ԱՄՆ-Ադրբեյջան հարաբերությունների զարգացման, Կոնգրեսի անդամների հետ քաղաքական խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպման համար: Միևնույն ժամանակ Ադրբեյջանի Միջազգային բանկը «JWI» ընկերությանը փոխանցել է մոտ 167 հազար դոլար ՁԼՄ-ի հետ կապերի զարգացման համար: Բացի այս կատարվում են նաև բազմաթիվ այլ ներդրումներ, որպեսզի նպաստեն Ադրբեյջանի շահերի առաջխաղացմանը ԱՄՆ-ում: Դրանք ԱՄՆ Արդարատության նախարարության 2008 թ. լրբբիստական գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունում ներկայացված փոխանցումների մի մասն է: Պետք է նկատի ունենալ, որ կատարվում են նաև համագործակցություններ, որոնք որևէ տեղ չեն հրապարակվում և հետևապես զաղտնի են մնում հանրության ու երկրների համար²:

2006 թ. հոկտեմբերի 16-ին Ֆրանսիայի Սենատը հավանություն էր տվել Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծին, որին կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր դրա հաստատումը Սենատի կողմից: Սենատի 2011 թ. մայիսին կայացած նիստում մոտ 3 ժամ հնչում էին ելույթներ և կատարվում քննարկումներ, որտեղ վճռական նշանակություն ունեցավ երկրի արդարադատության նախարար Միշել Մերսիեյի խոսքը: Նա չի մերժում Հայոց ցեղասպանության փաստը, միևնույն ժամանակ բանաձևը համարում է հակաօրենսդրական և կածիքի ազատությունը սահմանափակող: Արդյունքում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը մերժվեց ձայների 196 դեմ և 74 կողմ հարաբերակցությամբ: Այս հարցում անմասն չէր թուրքական լրբբիստական գործունեությունը, որն ամեն ինչ արեց դրա համար: Թուրքիայի քաղաքներում բոլորտ էին սկսել ֆրանսիական ապրանքների նկատմամբ, ֆրանսիական որոշ խանութներ փակվեցին, սպառնում էին, որ հետ կվերցնեն Ֆրանսիայի կենտրոնական բանկում և մասնավոր բանկերում պահվող 9.1 մլրդ եվրոն և այլն³: Մինչև անգամ Թուրքիայի վարչապետ Թ. Էրդողանը դիմել էր Ֆրանսիայում ապրող և ֆրանսիական քաղաքացիություն ստանալ չցանկացող Թուրքիայի քաղաքացիներին՝ օգտվել երկքաղաքացիության մասին Ֆրանսիայում գործող օրենքից և ֆրանսիական քաղաքացիություն ստանալ: Ըստ Էրդողանի նրանք ընտրելու իրավունք ձեռք կբերեն, և մտնելով օրենսդիր և գործադիր մարմիններ, հզոր լրբբիստական լծակներ ձեռք կբերեն: Այդ հնարավորությունը ձեռքից բաց թողնել չի կարելի: Սա լավ հնարավորություն է, որ Ֆրանսիայում թուրքական լրբբին ավելի ուժեղ դառնա, քան հայկականն է⁴: Պատահական չէր, որ նախագահի թեկնածու Նիկոլյա Սարկոզին 2007 թ. ապրիլի 24 հայկական միություններին հղած բաց նամակում խոստացել էր աջակցել 2006 թ. ներկայացված օրինագծին, սակայն ընտրվելուց հետո դրժեց իր խոսքը և սկսեց խոստումներ տալ Թուրքիայի կառավարությանը:

Շուտով Ֆրանսիայի Սենատում սկսվեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող նոր օրինագծի քննարկումը, որի հեղինակն է Վալերի Բոյերը: Այս

¹ «Հայ համայնքն ԱՄՆ-ում», էջ 152-153:

² Նույն տեղում, էջ 163-164:

³ Թուրքիայում սպառնում են հանել Ֆրանսիայի ԿԲ-ին պահ տված 9.1 մլրդ եվրոն, www.armenpress.am.

⁴ Էրդողանը Ֆրանսիայի թուրքերին հորդորել է ֆրանսիայի քաղաքացիություն ընդունել և լրբբիստական գործունեություն ծավալել, www.armenpress.am.

օրինագծի համաձայն՝ Ֆրանսիայում Հայոց ցեղասպանությունը ժխտողներին սպառնում է մինչև մեկ տարվա ազատազրկում և 45,000 եվրո տուգանք: 2011 թ. դեկտեմբերի 22-ին այն ընդունեց Ֆրանսիայի Ազգային ժողովի ստորին պալատը: Այս նոր օրնագիծը Թուրքիայում մեծ իրադարձություն առաջացրեց, և իշխանություններն ու լրբիստական կառույցները սկսեցին ինտենսիվ աշխատանքներ տանել: Այդ նպատակով Փարիզ մեկնած պատվիրակության անդամները հանդիպեցին Ֆրանսիայի արտգործնախարար Ալեն Ժյուսկենին և Սենատի նախագահ Բեռնար Ալուլայեին: Բնականաբար այս հանդիպումները տեղի ունեցան փակ դռների հետևում՝ մանրամասների տարածումից զերծ մնալու համար: Այնուհետև Թուրքիան հայտարարեց, որ իրենց դեսպանը ի նշան բողոքի անորոշ ժամանակով լքում է Փարիզը: Ավելի ուշ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը հայտարարեց, որ իր երկիրը դադարեցնում է նաև Ֆրանսիայի հետ ռազմական համագործակցությունը. չեղյալ է հայտարարում թուրքական օդանավակայաններում ֆրանսիական մարտական ինքնաթիռների վայրէջք կատարելու, ինչպես նաև նավահանգիստներում ֆրանսիական մարտանավերի խարիսխ գցելու թույլտվությունը¹:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր իշխանությունում ադրբեջանական լրբիստական գործունեությանը մեծապես աջակցում են պաշտոնական Անկարան և ԱՄՆ-ի թուրքական լրբիստական կազմակերպությունները: Սակայն այս աջակցությունը ինքնանպատակ չէ և միտված է թուրք-ադրբեջանական հարաբերությունների առավել սերտ համագործակցությանը, ինչպես նաև հարաբերությունների բարելավմանը ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր իշխանությունների պաշտոնյաների հետ: Այս համագործակցությունն ու կապերի ընդլայնումն ունեն հստակ ուղղվածություն հայկական սփյուռքի, Հայաստանի Հանրապետության և Արցախի դեմ:

Թուրք-ադրբեջանական լրբիստական այսքան մեծ ծավալների հակահայկական գործունեությունը բոլորովին էլ պատահական չէ: Այս հանգամանքը պայմանավորված է հայկական լրբիստական ընկերությունների հայանպաստ ինտենսիվ աշխատանքներով, ինչի շնորհիվ այն համարվում է երրորդ ազդեցիկ էթնոլրբիստական շարժումը ԱՄՆ-ում՝ հրեականից ու հունականից հետո²: Հայկական լրբիի երկու խոշոր կազմակերպություններն են ՀՅԴ կուսակցության Հայ դատի հանձնախմբերը, որոնք տեղակայված են աշխարհի տարբեր երկրներում և Ամերկայի հայկական համագումարը: Հայկական լրբիստական շնորհիվ է, որ ԱՄՆ-ն հրաժարվեց ֆինանսավորել Կարս-Ախալքալաք-Բաքու երկաթուղու շինարարությունը, ԱՄՆ-ի կառավարությունն ամեն տարի մարդասիրական օգնություն է ցուցաբերում Լեռնային Ղարաբաղին, Հայոց ցեղասպանության ճանաչմանը ուղղված բազմաթիվ միջոցառումներ են իրականացվում և այլն³: ԱՀՀ ակտիվ լրբիստական գործունեության շնորհիվ 1995 թվականին ստեղծվեց Հայկական հարցերին նվիրված կոնգրեսական հանձնախումբ, որի նպատակն է նպաստել հայ-ամերիկյան հարաբերությունների պահպանմանն ու ամրապնդմանը⁴:

Այսպիսով, թուրքական և ադրբեջանական լրբիները թե՛ առանձին, թե՛ իրար աջակցելով կատարում են հսկայական հակահայկական լրբիստական գործունեություն, որի նպատակն է առավելության հասնել հայ-թուրքական և հայ-ադրբեջանական խնդիրների նկատմամբ, ինչպես նաև հակակշռել հայկական սփյուռքին:

¹ Հնարավոր է՝ չեղյալ հայտարարվեն թուրք-ֆրանսիական համատեղ 40-50 մլրդ եվրո արժողությամբ ներդրումային ծրագրերը, www.armenpress.am.

² Rafiga Gurbanzade, Influence of ethnic lobbying on US foreign policy, www.eurasiareview.com,

³ Position papers. Current Issues of Concern to the Armenian American Community, www.anca.com,

⁴ Congressional Caucus on Armenian Issues, www.aaainc.org.

ТУРЕЦКАЯ И АЗЕРБАЙДЖАНСКАЯ ANTI-АРМЯНСКАЯ ЛОББИСТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ

Армине Бадалян

Лоббирование дает возможность различным организациям, политическим партиям и другим группировкам влиять на решения правительства и законодательных органов в своих интересах.

Турецкие лоббистические фирмы имеют большой опыт в организации лоббирования в отличие от азербайджанских, которые только начали свои шаги в этой сфере. Законодательная и исполнительная власть США для поддержки азербайджанской лоббистической деятельности помогает Анкаре и турецким лоббистическим организациям в США. В свою очередь турецко-азербайджанское лобби вкладывает миллионы долларов на продвижение интересов Азербайджана и Турции в США. Стоит отметить, что большая часть объема лоббирования этих стран осуществляется в направлении анти-армянской деятельности, особенно против армянской диаспоры, Республики Армении и Арцаха.

Армянское лобби, в свою очередь, выполняет огромную работу – поддерживает армян не только в США, но и проводит про-армянскую пропаганду во всем мире.

THE ANTI-ARMENIAN ACTIVITIES OF TURKISH AND AZERBAIJANI LOBBYING

Armine Badalyan

Lobbying gives an opportunity to different organizations, political parties and other groups to influence the decisions of the government and the legislative body of a certain state for the benefit of the same organizations and groups.

The Turkish lobbying organisations have much more experience compared to Azerbaijani ones, which just launch their steps. In the USA the legislative and executive powers the Azerbaijani lobbying activity is supported by Ankara and the USA lobbying organizations. Turkish-Azerbaijani lobbying invests millions of dollars for the rise of Azerbaijani and Turkish benefits in the USA. It is noteworthy that the main part of the evolving lobbying activities is directed anti-Armenian activities, especially against the Armenian diaspora, the Republic of Armenia and Artsakh.

Armenian lobby also implements tremendous work. It supports not only the Armenians of the USA, but exercises pro-Armenian activities throughout the world. This fact is the reason of the Anti-Armenian intense activities of the Turkish - Azerbaijani lobbying.

ՊԱՐՏԱԴՐՎԱԾ ՀԱՂԹԱՆԱԿ

Արտեմ Հակոբյան

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող
Գիտ. դեկ.՝ պ.գ.թ., դոց. Է Ջոհրաբյան
Էլփոստ՝ artem.hakobyan@mail.ru

Ներկայումս, ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգային ամենակարևոր հարցը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն է՝ ԼՂՀ միջազգային ճանաչումը. դիվանագիտական լեզվով ասած, աջակցություն ԼՂՀ-ին՝ ձեռք բերելու միջազգային ճանաչում: Կովկասյան տարածաշրջանը, որտեղ մենք՝ հայերս, բնակվում ենք հազարամյակներ ի վեր, ունենալով բարդ աշխարհաքաղաքական դիրք, գտնվել է և շարունակում է մնալ զանազան գերտերությունների շահերի խաչմերուկում և արժանի է բազմակողմանի ուսումնասիրման: Այս տարածաշրջանում հազարամյակներ ի վեր տեղի են ունեցել բազմաթիվ հակամարտություններ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև հակամարտությունն ունի դեպի նախորդ դարի սկիզբ գնացող արմատներ. 1920-ական թթ.՝ «քաղաքական առուծախի» արդյունքում, խորհրդային ղեկավարության կողմից որոշվեց Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավար մարզի կարգավիճակ՝ նորաստեղծ Ադրբեջանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմում: 1980-ական թթ. վերջին Ադրբեջանը, Արցախը հայաթափելու նպատակով, ռազմական ուժ կիրառեց Արցախի խաղաղ բնակչության նկատմամբ, որը վերաճեց ԼՂՀ-Ադրբեջանական հակամարտության: Արցախի հայությունը ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության ներքաշվելով ռազմական գործողությունների մեջ, որոնք սանձազերծվեցին Ադրբեջանի կողմից: ԼՂՀ բնակչությանը պարտադրեցին ռազմական գործողություններ. ազգային համախմբման արդյունքում, հերոսական պայքարի շնորհիվ, Արցախն ազատագրվեց, սակայն մենք կարծես թե կանգ առանք ձեռք բերվածի վրա, ուստի ցանկանում են մշել, որ ինչպես հայտնի ասացվածքում է ասվում «Հաղթանակը պահպանելն ավելի դժվար է, քան այն ձեռք բերելը»: Ես ինքս բնավորությամբ մի փոքր ինքնաքննադատ եմ և, եթե ինչ-որ բան կյանքում ինձ մոտ չի ստացվում կամ լավ չի ստացվում, ապա առաջին հերթին ինքս իմ մեջ եմ փնտրում սխալներն ու թերությունները: Ինչու մշեցի այս մասին, որովհետև միջազգային ինֆորմացիոն դաշտում մենք մի փոքր կաղում ենք: Ստեղծվել է մի իրավիճակ, որ հարևան Ադրբեջանը միջազգային բոլոր ատյաններում Հայաստանի Հանրապետությանը ներկայացնում է որպես ագրեսոր, այնինչ ճշմարտությունն այն է, որ ինքն է կիրառել ագրեսիա Արցախի խաղաղ բնակչության նկատմամբ: Ահա սա է պարզ իրականությունը, որը մենք պետք է մեծ եռանդով շրջանառության մեջ դնենք միջազգային ինֆորմացիոն պայքարում:

Կցանականայի մի փոքր պատմական էքսկուրս անցկացնել Արցախի պատմության վերաբերյալ: Եվ այսպես, Արցախը, ընդգրկված է եղել հնագույն հայկական Ուրարտու պետության կազմի մեջ դեռևս Ք. ա. VIII-V դդ.: Համաձայն «Աշխարհացոյցի», Արցախը Մեծ Հայքի տասներորդ նահանգն էր և ուներ 12 գավառ: 387 թ. Հայաստանի՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանումից հետո, Արևելյան Անդրկովկասը՝ ներառյալ Արցախը, անցել են Պարսկաստանի տիրապետության տակ: Միջնադարում Արցախն ունեցել է մի քանի տարբեր անվանումներ՝ Ծավդեից աշխարհ, Խաչենք, Ղարաբաղ: «Ծավդեիցը» նահանգի իշխանական նստավայր Ծավդ-Օոդ (այժմ՝ Ջոդ) ավանի անունից էր, «Խաչենքը»՝ հետագայի նստավայր Խաչեն բերդավան անունից, իսկ «Ղարաբաղ» անվանվել է թուրքալեզու եկվորների

կողմից¹: Արաբական տիրապետության օրոք ազատագրական պայքարն ու ինքնապաշտպանական գործողություններն առօրեական էին արցախցիների համար, և այդ ժամանակաշրջանում բարձրացավ Արցախի բերդերի նշանակությունը: Այդ բերդերից յուրաքանչյուրն էլ ուներ իր հեղինակություն ունեցող, որը տևական ժամանակ իշխանների նստավայրն էր: Հիմնականում նրա անունով էր կոչվում ամբողջ նահանգն ու իշխանությունը: Այս հանգամանքի կողքով անտարբեր չէին անցնում օտար պետությունները: 10-րդ դ. Բյուզանդիայի կայսր Կոստանդին Ծիրանածինը, որը նաև պատմագրական աշխատության հեղինակ էր, գրել է, որ իր երկիրը փոխհարաբերություններ ունի Խաչենի իշխանության հետ²: 11-րդ դ. առաջին կեսին Արցախը ենթարկվեց թուրք-սելջուկյան հրոսակախմբերի պարբերաբար ասպատակություններին: 13-րդ դ. Արցախում մոնղոլ-թաթարական ուժերն իրականացրեցին ավերածություններ: 15-րդ դ. հայկական գավառական իշխանություններն այնքան ուժ ունեին, որ պարսից շահը նրանց շնորհում է հատուկ կարգավիճակ, և այսպես ստեղծվում են հայկական մելիքությունները, որոնք ունեին որոշակի ինքնուրույնություն: 1805 թ. Արցախը մտավ Ռուսական կայսրության կազմի մեջ, որը հետո ամրագրվեց Գյուլիստանի (1813 թ.) և Թուրքմենչայի (1828 թ.) պայմանագրերով՝ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև:

Այս ամբողջ ժամանակահատվածում Ղարաբաղը բնակեցված է եղել բացառապես հայերով և նրանք, չնայած զանազան ասպատակությունների ու հալածանքների, պահել, պահպանել և սերնդեսերունդ փոխանցել են իրենց մշակույթը, լեզուն, գիրը, գրականությունը, արվեստը: Իսկ ադրբեջանցիները, որոնք իրենց համարում են շատ հին ազգ, պնդում են, որ Արցախը ադրբեջանական տարածք է: Սիս վերոնշյալ ինֆորմացիոն պայքարում պատմական փաստերը պետք է օգտագործենք ի օգուտ ԼՂՀ միջազգային ճանաչման: Բոլոր լրատվական և ինֆորմացիոն տեղեկատվական միջոցներով՝ էլեկտրոնային, տպագիր և այլն, պետք է տարածվի պատմական ճշմարտությունը:

1921 թ. հուլիսի 5-ին Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության կովկասյան բյուրոյի որոշմամբ, մեկ օր առաջ ընդունված որոշումը վերանայվեց և որոշվեց, որ Լեռնային Ղարաբաղը պետք է թողնվի Ադրբեջանի կազմում՝ «մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից ելնելով»: Ինչևէ հատկանշական է, որ այս ձևակերպման մեջ նույնիսկ «ադրբեջանցի» ազգ, ընդհանրապես, չի նշվում: Այս որոշումը ոչ միայն անընդունելի էր մեր՝ հայկական կողմի համար, այլ նաև՝ ապօրինի: Ստացվեց այնպես, որ երկու պետությունների միջև տարածքային խնդիրների վերաբերյալ ոչ թե կնքվել է համաձայնագիր տվյալ երկրների միջև, այլ դրանք սահմանների վերաբերյալ որոշում է ընդունել երրորդ երկրի կուսակցական մի մարմին: 1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեի որոշումով ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: ԼՂԻՍ սահմանները գծվեցին միանգամայն կամայականորեն՝ ինքնավար մարզից դուրս թողնելով Լեռնային Ղարաբաղի զգալի հատվածներ արևմուտքից, հյուսիսից և հարավից: Մինչև 1930 թ. հրատարակված քարտեզները վկայում են, որ միայն 1930-ական թթ. է Ադրբեջանին հաջողվել Լեռնային Ղարաբաղին զրկել Հայաստանի հետ ունեցած ընդհանուր սահմանից³: Պատմությունը միշտ ապացուցել է, որ անարդարացի պահանջներին զիջումների գնալը՝ հանուն մի քանի տարվա խաղաղության, հետագայում հանգեցրել է շատ բարդ և արյունալի իրավիճակների:

Լեռնային Ղարաբաղի բնակչությունը Ադրբեջանի կազմում դե յուրե գտնվելու տարիներին բազմիցս դիմել է խորհրդային ղեկավարությանը՝ խնդրելով վերանայել Լեռնային Ղարաբաղի ենթակայության հարցը՝ պատճառաբանելով, որ մշտապես

¹ Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը (սկզբից մինչև մեր օրեր), Երևան, 1994, էջ 10:

² Նույն տեղում, էջ 55:

³ Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, 2008, էջ 63:

ենթարկվում է խտրական վերաբերմունքի և ճնշումների: Ճնշումների և ապօրինությունների մի նոր շրջան էլ սկսվեց 1987 թ. ամռանից, երբ Բաքուն որոշում

ընդունեց Արցախի հյուսիսային մի շարք հայկական գյուղեր հողեր ադրբեջանական գյուղերի փոխանցելու վերաբերյալ: Այս որոշումը վկայում էր այն մասին, որ Ադրբեջանը չի հրաժարվում իր կամայականություններից՝ հայերի նկատմամբ: Սկսվեց Լեռնային Ղարաբաղի ենթակայության վերանայման վերաբերյալ ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին ուղղված դիմումի ստորագրահավաք:

1987 թ. հոկտեմբերին բողոքի ցույց տեղի ունեցավ Երևանում: 1988 թ. փետրվարի 13-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ առաջին ցույցը: Մեկ շաբաթ անց՝ փետրվարի 20-ին, տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատգամավորների խորհրդի արտահերթ նիստ, որը որոշեց դիմել Ադրբեջանական ԽՍՀ և Հայաստանի ԽՍՀ գերագույն խորհուրդներին՝ մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու վերաբերյալ: Հաջորդ օրը ԽՄԿԿ կենտրոնական կոմիտեն դատապարտեց այդ որոշումը, այն համարելով սադրանք: Ի պատասխան այդ օրինական նիստի և մարդկանց օրինական պահանջի Ադրբեջանը պատասխանեց աննախադեպ բռնությունների կիրառմամբ: Փետրվարի 27-29-ին Սումգայիթ քաղաքի հայ բնակչության նկատմամբ երեք օր շարունակ իրականացվում է ցեղասպանություն, որի արդյունքում, պաշտոնական տվյալներով սպանվում են 32, վիրավորվում են հարյուրավոր մարդիկ: Արդյունքում վտարվում է քաղաքի ամբողջ հայ բնակչությունը: Սեպտեմբերին հայերին բռնությամբ դուրս են մղում Շուշի քաղաքից: 1990 թ. հունվարի 13-15-ին զանգվածային ջարդեր են տեղի ունենում Բաքվում: 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղն իրեն հռչակում է անկախ հանրապետություն: Հոկտեմբերի 18-ին Ադրբեջանը ընդունում է «Ադրբեջանի անկախության մասին» սահմանադրական ակտը, որով հրաժարվում է Ադրբեջանական ԽՍՀ իրավահաջորդությունից¹: Հատկանշական է այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղը՝ «որպես նվիրատվություն», տրվել էր Ադրբեջանին՝ ինքնավար մարզի կարգավիճակով, երբ վերջինս գտնվում էր խորհրդային Միության կազմում: Փաստորեն, Ադրբեջանի Հանրապետությունը 1991 թ. անկախություն հռչակելիս, հայտարարեց, որ իրավահաջորդն է ոչ թե խորհրդային Ադրբեջանի, այլ՝ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության, որի կազմում Լեռնային Ղարաբաղը երբևէ չի եղել: Հաշվի չառնելով այս ամենը, Ադրբեջանի հանրապետությունը նոյեմբերի 26-ին Գերագույն խորհրդի որոշմամբ նույնիսկ լուծարեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը՝ մեկ անգամ ևս ցույց տալով, որ երբեք չի ընդունի Արցախի հայերի ինքնորոշման իրավունքը: Ադրբեջանի այդ ժամանակվա ղեկավարությունը հույս ուներ, որ իր կողմից զանգվածային և բիրտ տեղահանումների միջոցով սանձազերծված ռազմական գործողությունների միջոցով, թվական և ռազմական ահռելի առավելությունների արդյունքում կարող է հաստատել իր վերահսկողությունը Ղարաբաղի վրա, և, քանի որ իր օրենսդրությամբ ԼՂԻՄ-ն արդեն գոյություն չէր ունենա, ապա այս հարցը, որը նրանց շուրջ 70 տարի անհանգստացնում էր, միանգամից կլուծվեր: Այսինքն, ռազմական գործողությունները, այսպես թե այնպես ինչ-որ ժամանակ հետո ավարտվելու էին, երբ արդեն նոր կազմավորված Ռուսաստանի Դաշնությունն արդեն չէր ունենա ներքին խնդիրներ և կսկսեր իր արտաքին քաղաքական շահերն իրականացնել հետխորհրդային տարածքային տիրույթում: Եվ ահա Ռուսաստանի և միջազգային միջնորդների հորդորներով ռազմական գործողությունները կավարտվեին, Ադրբեջանը կտիրեր Ղարաբաղի ամբողջ տարածքին, իսկ արցախահայերը նույնիսկ չէին ունենա ինքնավար մարզի կարգավիճակ և Ղարաբաղը կսկսեր կամաց կամաց հայաթափվել: Սիս սա էր, ըստ իս, Ադրբեջանի սարդիչ և անհեռանկար նախագիծը, որը նրան պարտության բերեց և՛ քաղաքական առումով և՛ ռազմական: Ադրբեջանցիները չէին

¹ Թորոյան Տ., էջ 66:

սպասում, որ հայ ազգը կարող է միահամուռ ուժով պաշտպանել Արցախի անվտանգությունը և պահպանել, ԽՍՀՄ օրենքների համաձայն անկախություն ստացած, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը: Գրեթե 70 տարի Ադրբեջանի գաղութատիրական քաղաքականության զոհ դարձած Ղարաբաղի հայերը կարողացան հերոսական պայքարի միջոցով ձեռք բերել անկախություն: Այս պայքարը, իրականում, հակազաղութատիրական պայքար է, որը շարունակվում է մինչ օրս, քանի որ բազմաթիվ համաշխարհային կենտրոններ հաճախ փորձում են քաղաքական և դիվանագիտական ճանապարհներով ներքաշել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի նախկին ԽՍՀ առասպելական տարածքային ամբողջականության սահմաններում¹:

Հայ ժողովրդի միասնության արդյունքում հաջողվեց ցույց տալ ցեղասպան Ադրբեջանին, որ հայ ժողովուրդը միահամուռ է, երբ իրեն վտանգ է սպառնում: Ադրբեջանն ինքը սանձազերծեց այս արյունալի պատերազմը՝ հարձակվելով արարող, խաղաղասեր, հրաշալի ժողովրդի վրա, որը բացի գյուղացիական պարագաներից ոչ մի տեսակի զենք չուներ, որպեսզի դիմակայեր ադրբեջանական «Օմոն»-ի կազմակերպած հալածանքներին և ջարդերին:

1994 թ. մայիսի 12-ին ուժի մեջ մտավ Բիշկեկ քաղաքում կնքված զինադադարի պայմանագիրը, որի տակ ստորագրեցին Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները: Մինչ այդ, նույն թվականի փետրվարի 18-ին, հայկական կողմի փայլուն ռազմական հաջողություններից հետո, Մոսկվա քաղաքում, ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչյովի միջնորդությամբ, ստորագրվել էր ևս մեկ փաստաթուղթ, որտեղ Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների հետ մեկտեղ, իր ստորագրությունը դրել էր նաև Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի ներկայացուցիչը²: Այսպիսով, 1994 թ. Ադրբեջանի հանրապետությունը դե յուրե ճանաչել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես հակամարտող կողմ:

Խոսելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ Ռուսաստանի դերակատարման մասին, պետք է անպայման նշել, որ Խորհրդային Միության փլուզման ամմիջական պատճառներից էր Անդրկովկասյան երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների անկախացումը: ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանը ճանաչեց այս երեք հանրապետությունները և տևական ժամանակ չէր ներկայացնում որևէ շահեր տարածաշրջանում³: Այնուամենայնիվ հետագայում Ռուսաստանը սկսեցիր ռազմաքաղաքական և տնտեսական շահերը ներկայացնել Անդրկովկասում: Հայաստանն իր աշխարհաքաղաքական դիրքով շատ հետաքրքիր է Ռուսաստանի համար: Այժմ ստեղծված է մի իրավիճակ, որ Անդրկովկասյան հանրապետություններից Հայաստանն է, որ գտնվում է ամենանպաստավոր դրության մեջ Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերություններում: Ռազմաքաղաքական համագործակցության ոլորտում Հայաստանը Ռուսաստանի հետ ունի այնպիսի մի դաշինք, որն արտահայտում է Ռուսաստանի շահերն Անդրկովկասում և նաև շահեկան է մեզ համար՝ անվտանգության տեսանկյունից: Իսկ մենք գիտենք, որ, որքան ապահով է Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, այնքան էլ անվտանգ է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Լեռնային Ղարաբաղը պատմականորեն եղել է, որպես Հայաստանի մի մաս և հանդիսացել է՝ հայ ազգը Ռուսաստանի հետ կապող առաջին կամուրջ: Հենց

¹ Мелик-Шахназаров А., Нагорный Карабах: факты против лжи, <http://www.sumgait.info/caucasus-conflicts/nagorno-karabakh-facts/nagorno-karabakh-facts-contents.htm>.

² Նույն տեղում:

³ Корнелл С., Конфликт в Нагорном Карабахе: динамика и перспективы решения, <http://www.karabah88.ru/conflict/karabah/01.html>.

Ղարաբաղն է, որ առաջին անգամ «շփվել է» ռուս ազգի հետ, և որտեղ ձևավորվել է հայերի քաղաքական ուղղվածությունը դեպի Ռուսաստան¹:

Ադրբեջանը սկսած 1994 թ. վարում է փաստերը խեղաթյուրելու քաղաքականություն: Չունենալով Լեռնային Ղարաբաղի տարածքի վրա ռազմական ուժի կիրառմամբ կրկին տիրապետություն հաստատելու հնարավորություն, Ադրբեջանի Հանրապետության իշխանությունն անում է ամեն ինչ, որպեսզի, պատմության խեղաթյուրման միջոցով, հաստատի Ղարաբաղն իր տարածքի շրջանակներում, այն էլ առանց ինքնավարության տրամադրման: Ադրբեջանի հանրապետությունը պետական մասշտաբով լծված է պատմությունը կեղծելու գործընթացին: Ծախսելով ահավոր մեծ նյութական միջոցներ, նրանք մոլորության մեջ են փորձում զցել ողջ միջազգային հանրությանը: Այս գործընթացում Ադրբեջանի քաղաքական էլիտային հարող պատմաբանները, հնէաբանները, լեզվաբանները և այլոք ամեն կերպ ձգտում են առաջին հերթին արմատավորել ադրբեջանցիներին Ադրբեջանի ներկայիս տարածքում և երկրորդ՝ մաքրել այն հայկական ժառանգությունից: Ադրբեջանին, իր կազմավորման առաջին իսկ տարիներից սկսած, շատ են «զայրացրել» այս տարածքում հայերի մնայուն հետքերը, այսինքն մշակութային արժեքները, եկեղեցիները և այլն, և նրանք ողջ ժամանակահատվածում փորձել են ձերբազատվել դրանցից (դրա մասին է վկայում Նախիջևանում հայկական խաչքարերի ոչնչացումը, որը տեղի ունեցավ մի քանի տարի առաջ) և այդ արժեքներն ու մշակույթը կրողներից՝ հայերից: Եվ ահա այս գործունեությունը գրեթե մեկ դար իրականացվում է Ադրբեջանի իշխանությունների կողմից և ստանում է առեւտրի ֆինանսական միջոցներ:

Ձանազան միջազգային փորձագետներ ժամանակ առ ժամանակ իրենց տարբեր վերլուծություններում Ղարաբաղյան հակամարտության համատեքստում համենատարբերություններ են անում Հայաստանի և Ադրբեջանի տնտեսական, ռազմական և այլ ներուժերի միջև՝ ընդհանրապես չանդրադառնալով ԼՂՀ-ին և դուրս մղելով նրան իր իսկ շուրջ ծավալվող գործընթացներից: Այս մոտեցումը, ժամանակի ընթացքում, տեղափոխվեց նաև միջազգային կառույցներ: Հասկանալի է, որ Ադրբեջանը ամեն կերպ խոչընդոտելու է, որպեսզի ԼՂՀ-ն երբևէ չդառնա բանակցային կողմ, սակայն Հայաստանի Հանրապետությունը պետք է անի ամեն ինչ, որպեսզի ԼՂՀ-ն ներկայացվի բանակցային գործընթացում, այլապես այս հանդիպումները, որոնք տեղի են ունենում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև, ոչինչ չեն կարող տալ խաղաղ կարգավորման գործընթացին: Բանի դեռ Ադրբեջանը պատրաստ չի լինի հաշվի նստել ԼՂՀ օրինական ձևավորված իշխանությունների հետ, կարգավորման մասին խոսք անգամ լինել չի կարող:

Կարևոր է աշխատանքն այն միջազգային կառույցներում, որոնց անդամ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, քանզի ԼՂՀ-ն, լինելով միջազգայնորեն չճանաչված հանրապետություն, չի կարող բարձրացնել իր խնդիրները միջազգային հարթակներում, ուստի այդ պատասխանատու և ծանր բեռն ընկած է ՀՀ արտաքին քաղաքական ոլորտի պաշտոնյաների վրա: Ադրբեջանի սադրանքների շնորհիվ, ընդունվող բանաձևերի մեջ փորձեր են արվում, ԼՂՀ համար անցանկալի ձևակերպումներ ներառել, ինչպես օրինակ 2004 թ. ԵՄԽՎ լիազումար միստի ժամանակ եղավ, երբ հակամարտության վերաբերյալ բանաձևը, Ադրբեջանի լոբբինգի շնորհիվ, քվեարկության էր ներկայացվել «Ղարաբաղի տարածքը վերահսկող Հայաստանի զինված ուժեր» ձևակերպմամբ: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ պատվիրակության բժախնդիր և ուշադիր աշխատանքի և անձամբ պատվիրակության ղեկավար Տիգրան Թորոսյանի ջանքերի շնորհիվ այդ ձևակերպման մեջ կատարվեց փոփոխություն և «Հայաստանի զինված ուժերը» փոփոխվեց «հայկական զինված ուժեր» ձևակերպմամբ:

¹ Мелик-Шахназаров А..

Շատ հաճախ Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների միջև հանդիպումների մասին խոսելիս զանազան երկրների լրատվամիջոցների կողմից, միտումնավոր կերպով, կամ գուցե անգիտակցաբար, այդ հանդիպումներին տրվում է երկկողմ բանակցությունների կարգավիճակ: Սա իսկական դիվանագիտական ծուղակ է ՀՀ-ի և ԼՂՀ-ի համար: Քանզի, երկու երկրների միջև տարածքային վեճի հետ կապված բանակցությունների առկայության դեպքում, երկրներից մեկն ի վերջո կճանաչվի հարևան երկրի տարածքային ամբողջականությունը խախտող: Ուստի վերոնշյալ հանդիպումներում ՀՀ հանդիսանում է որպես միջնորդ երկիր՝ Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև: Բոլոր մակարդակներով բազմիցս խոսվում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը պետք է լուծվի բացառապես խաղաղ ճանապարհով և երկկողմանի զիջումների միջոցով: Իհարկե, բոլոր հակամարտությունների խաղաղ լուծելու միակ ճանապարհը փոխզիջումն է, սակայն այս դեպքում երկկողմ պատկերացումներն այդ փոխզիջումների վերաբերյալ շատ տարբեր են: Ադրբեջանի պատկերացմամբ ամենամեծ զիջումը, որին նա կարող է գնալ՝ Լեռնային Ղարաբաղին մարզի ամենաբարձր կարգավիճակ տրամադրելն է: Արցախցիների համար, մասնավորապես այն արցախցիների, որոնք ծնվել և մեծացել են արդեն անկախ Ղարաբաղում, Ադրբեջանի կազմում ապրելը նույնիսկ ծիծաղելի է. նրանց պատկերացման մեջ, պարզապես, այդ չի կարող երբևէ լինել: Ղարաբաղցիների համար էլ փոխզիջման առարկա կարող է հանդիսանալ նախկին ինքնավար մարզի տարածքին հարակից տարածքները, որոնք, սակայն, ևս պատկանում են պատմական Արցախին: Ահա, քանի դեռ երկու կողմերի պատկերացումները՝ փոխզիջումների վերաբերյալ, գտնվում են այս փուլում, անհնաստ է նույնիսկ մտածել կարգավորման մասին: Լեռնային Ղարաբաղի հայերը վաստակել են անկախ ապրելու իրենց իրավունքը արյան գնով: Երիտասարդ արցախցին, որը ծնվել, մեծացել է անկախ Արցախում, ապրում է իր առօրյա կյանքով, իր երկրում ստանում է լավ կրթություն, կազմում է ընտանիք, մասնակցում է համապետական ընտրություններին և մեկ վայրկյան անգամ նրա մտքով չի կարող անցնել, որ ինչ-որ մի օր ինքը կարող է դառնալ Ադրբեջանի քաղաքացի. ահա սա է կարևորը: Այս հարցում է, որ մենք ազգովի պետք է համախմբվենք, և արտաքին աշխարհին բացատրենք ու ցույց տանք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացած պետություն է, և պետք է հարգել արցախահայերի ինքնորոշման իրավունքը:

Կարգավորման հիմնական սկզբունքների շուրջ ներկայացվող նախագծերը միշտ առաջ են քաշվում միջազգային միջնորդների կողմից: Դրանք ստանում են զանազան տեղանունների կամ քաղաքների անվանումներ: Օրինակ, վերջին մեզ հայտնին՝ Մադրիդյան սկզբունքներն են: 2007 թ. Իսպանիայի մայրաքաղաքում տեղի ունեցած ԵԱՀԿ նստաշրջանում Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարների կողմից ներկայացվեցին կարգավորման հիմնական սկզբունքները, համաձայն որոնց, հայկական կողմը անմիջապես պետք է ազատի նախկին մարզի տարածքից դուրս գտնվող և իր կողմից վերահսկվող 7 շրջաններից 5-ը, ուր վերադառնալու են ադրբեջանցի փախստականները, այնուհետև հակամարտության գոտի են մտցվում խաղաղապահ ուժեր: Հետագայում փախստականները նաև վերադառնում են ԼՂՀ-ի տարածք: Ամենազավեշտալիին այն է, որ նշանակվում է հանրաքվե 10-15 տարի հետո, որի արդյունքը կլինի վերջնական և անբեկանելի¹: Փաստորեն, մեզ առաջարկ է արվում, ընդունելով այս սկզբունքները, չճանաչել ԼՂՀ 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեն, և, հետևաբար, նաև 2006 թ. դեկտեմբերի սահմանադրական հանրաքվեն: Այսինքն, մեզ փորձում են համոզել, որ անկախության ճանաչումը կրկին խնդրելը գերադասելի է արդեն ձեռք բերված անկախությունից: Անկախություն, որը ձեռք է բերվել միանգամայն օրինական ճանապարհով: 1991 թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ բնակչությունը հանրաքվեի միջոցով

¹ Ուլուբաբյան Բ., էջ 334:

արտահայտեց իր վերաբերմունքը ԼՂՀ համար ամենակենսական խնդրի՝ անկախության նկատմամբ: Պետք է անպայմանորեն նշել, որ այդ պահին հանրապետությունում բնակվում էր 207.678 մարդ (166.066 հայեր, 36.737 ադրբեջանցիներ և 2875 ռուսներ): Հանրաքվեին մասնակցեցին քվեարկության իրավունք ունեցողների 91.14 %-ը, որոնցից 99.69 %-ը քվեարկեցին «ԱՅՈ» ԼՂՀ անկախության համար: Այս գործընթացին ևս հետևեցին 50-ից ավելի դիտորդներ, որոնք արձանագրեցին դրական արդյունքներ¹:

Բավականին հաճախակի հնչում են հայտարարություններ, թե Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում միջազգային իրավունքի երկու հիմնարար սկզբունքներ՝ տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման, հակասում են միմյանց: Նմանատիպ ձևակերպումները իրավաբանորեն կոռեկտ չեն ու, թեև այս երկու սկզբունքները, իրավական տեսանկյունից, միմյանց հետ շփման եզրեր ունեն, այնուամենայնիվ դրանք չեն կարող միմյանց հակասել: Ի տարբերություն տարածքային ամբողջականության սկզբունքի, որը կարգավորում է պետությունների միջև հարաբերությունները, ազգերի ինքնորոշման իրավունքը կարգավորում է հարաբերություններն առաջին հերթին ազգի՝ որպես տարածքային իրավունքների առաջնային կրողի և պետության միջև, որի միջոցով վերջինս իրականացնում է իր իրավունքները²:

Ղարաբաղի հայությունը բազմիցս խնդրել է հարգել իր ինքնորոշման իրավունքը՝ միանգամայն օրինական ճանապարհներով, և արդյունքում արժանացել է անհարգալի, գաղութատիրական վերաբերմունքի և պատերազմի հրահրման, որում հաղթանակած է:

Տարբեր մակարդակներով Ադրբեջանը բարձրացնում է Ղարաբաղի ազգությանը ադրբեջանցի փախստականների հարցը, սակայն քիչ է խոսվում հայ փախստականների մասին, որոնք մազապուրծ եղան Ադրբեջանի տարածքից՝ Բաքվից, Շամախիից, Սումգայիթից և տասնյակ այլ քաղաքներից ու Ղարաբաղի Շահումյանի շրջանից: Նրանք բնակություն հաստատեցին Հայաստանում և, հիմնականում, Ռուսաստանում:

Ադրբեջանցի փախստականները իրավունք ունեն վերադառնալու իրենց բնակավայրերը, հայերը չունեն³: Այս փաստերը վկայում են այն մասին, որ Ադրբեջանը չի փոխվել և չի էլ փոխվի, և այն շարունակում է իր հայատյաց քաղաքականությունը, որն արդեն սերմանվում է Ադրբեջանի նոր սերունդների մեջ՝ դպրոցից սկսած: Ադրբեջանցի երիտասարդի մեջ սերմանվում է այն համոզմունքը, որ հայ սպանելը դա հերոսություն է: Ասածիս լավագույն ապացույցն է քնած հայ սպա Գուրգեն Մարգարյանին կացնահարած Ռամիլ Սաֆարովի հերոսացումը՝ Ադրբեջանի իշխանությունների կողմից: Ադրբեջանի նախագահը իր ներքաղաքական խնդիրները լուծելու և երկրում իր վարկանիշը բարձրացնելու համար կազմակերպեց այս թատերական ներկայացումը, որը դեռևս իր հետևանքների մասին զգացնել կտա հետագայում: Հերոսացնելով քնած մարդուն սպանած Ռամիլ Սաֆարովին, Ադրբեջանի ներկայիս իշխանությունը ցույց տվեց, որ այնքան էլ այժմ չի շտապում, որ լուծվի Ղարաբաղյան հակամարտությունը:

Ամփոփելով վերոշարադրյալը, պետք է նշել այն մի քանի կետերը, որոնց վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ժամանակակից հայ դիվանագիտության կողմից: Եվ այսպես՝ ա) պետք է ամեն ինչ արվի, որ ԼՂՀ-ն դառնա բանակցային կողմ, այլապես խաղաղ կարգավորում ակնկալելն անհիմաստ է, բ) պետք է պաշտոնական դիրքորոշում ամրագրվի միջնորդների կողմից առաջ քաշվող և Ադրբեջանի կողմից ողջունվող, այսպես ասած, «Լեռնային Ղարաբաղի հետագա կարգավիճակի

¹ Барсегян Х., Истина дороже. К проблеме Нагорного Карабаха-Арцаха, Ереван, 1989, с. 13.

² Барсегов Ю., Право на самоопределение-основа демократического решения межнациональных проблем: К проблеме Нагорного Карабаха, Ереван, 1989, с. 50.

վերաբերյալ հանրաքվեի» մասին մոտեցման վերաբերյալ, համարելով այն անթույլատրելի. Լեռնային Ղարաբաղը սկսած 1991 թ. ունի հանրապետության կարգավիճակ, որը ձեռք է բերել միջազգային օրենքներին և այն ժամանակվա ԽՍՀՄ գործող օրենսդրության համապատասխան, ուստի կարիք չունի մի նոր հանրաքվեի, որը հղի կլինի նորանոր արյունահեղություններով, գ) պետք է անընդհատ բարձրաձայնվի Ադրբեջանի ԽՍՀ-ում ապրող ազգությամբ հայ հարյուր հազարավոր փախստականների հարցը, որոնք, մի կերպ կենդանի մնալով, խուսափելով հերթական ցեղասպանությունից, ցրվեցին ամբողջ աշխարհով մեկ՝ իհարկե չմոռանալով այն անմեղ մարդկանց մասին, որոնց չհաջողվեց փրկվել Ադրբեջանի ցեղասպան քաղաքականությունից, դ) պետք է անընդհատ դիվանագետների, պատմաբանների, էլեկտրոնային բլոգերների մակարդակով նշվի և բարձրաձայնվի այն փաստը, որ թեև անցյալ դարասկզբին Լեռնային Ղարաբաղը «նվիրվել էր» Ադրբեջանի ԽՍՀ-ին, այնուամենայնիվ այժմյան Ադրբեջանը, համաձայն իր իսկ կողմից ընդունված օրենսդրության, միջազգային իրավունքի տեսանկյունից կապ չունի Ադրբեջանի ԽՍՀ-ի հետ, ուստի Լեռնային Ղարաբաղը չի կարող գտնվել Ադրբեջանի վարչական տարածքում: Կարծում եմ, որ այս հիմնախնդիրը առնչվում է յուրաքանչյուր հայի հետ, և մեզանից յուրաքանչյուր ոք պարտավոր է մի ինչ-որ քայլ անել, որպեսզի աշխարհն ի վերջո հարզի արցախցիների ինքնորոշման իրավունքը: Մեզ պարտադրեցին ռազմական գործողություններ և պատերազմ՝ մենք ունեցանք «պարտադրված հաղթանակ», այժմ մեզ նետվում են այլ մարտահրավերներ դիվանագիտական, իրավական և ինֆորմացիոն հարթություններում, որտեղ մենք պարտավոր ենք լինել շատ զգոն և պահպանել մեր «պարտադրված հաղթանակը»:

НАВЯЗАННАЯ ПОБЕДА

Арте́м А́кобян

В статье коротко представлены некоторые эпизоды истории Нагорного Карабаха. Убедительно показано, что отправной точкой для урегулирования карабахского вопроса является самоопределение народа Нагорного Карабаха.

IMPOSED VICTORY

Artem Hakobyan

The article discusses the historical past of Karabakh. The author also convincingly shows that peaceful resolution of the Karabakh problem is its self-determination.

**ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՐՑԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ
ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ**

Գոհար Բաղդասարյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ պ.գ.թ. դոց. Յ. Գրիգորյան

Էլփոստ՝ gohar.baxdasaryan@mail.ru

Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքները Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցը հանդիսանում է Հայկական հարցի անքակտելի մասը: Վերջինս օտար տիրապետությունից Հայաստանի ազատագրման, պատմական հայրենիքի տարածքում հայկական անկախ պետականության վերականգնման և այդ նպատակներին հասնելու համար նդված ազգային-ազատագրական պայքարի հիմնահարցերի ամբողջությունն է:

Ցեղասպանությունից փրկված հայության մնացորդները տարիների ընթացքում վերագտան իրենց, չկորցրեցին ազգային ինքնագիտակցությունը՝ շարունակելով պայքարը հանուն ազգային գոյատևման և կորսված հայրենիքին վերատիրելու իրավունքի: Այդ խնդիրների լուծման համար հայությունը ձգտում էր օգտագործել միջազգային ցանկացած առիթ: Ամենկին պատահական չէ, որ Երկրորդ աշխարհամարտի ավարտին, երբ ակնհայտ էր Գերմանիայի և նրա դաշնակիցների անխուսափելի պարտությունը, Սփյուռքի և Հայաստանի մտավորականության շրջանում բարձրացավ Արևմտյան Հայաստանը և Կարսի մարզը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու պահանջը՝ աշխարհասփյուռ հայերին հայրենիքում համախմբելու համար:

Թուրքիայի կողմից զավթված Արևմտյան Հայաստանի հողերը Խորհրդային Հայաստանին միացնելու համար հատկապես եռանդուն գործունեություն էին ծավալել սփյուռքահայ կազմակերպությունները և գործիչները: Նրանք այդ պահանջով բազմիցս դիմեցին հաղթող տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարներին, ՄԱԿ-ի Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսին (1945 թ. ապրիլ), երեք տերությունների ղեկավարների Բեռլինի կոնֆերանսին (1945 թ. օգոստոս), երեք տերությունների արտաքին գործերի նախարարների խորհրդի Լոնդոնի նստաշրջանին (1945 թ. սեպտեմբեր), արտաքին գործերի նախարարների Մոսկվայի խորհրդակցությանը (1945 թ. դեկտեմբեր) և այլն:

1945-1953 թթ. ԽՍՀՄ կողմից Թուրքիայից Կարսի, Արդահանի և Արդվինի պահանջը պատմագրության մեջ ներկայացվել է որպես Ի. Ստալինի կողմից Հայկական հարցի լուծման փորձ: Մինչդեռ, մեր կարծիքով, Ի. Ստալինի հայասիրության մասին հյուսված լեգենդը հեռու է ճշմարտությունից և զուրկ տրամաբանությունից: Իսկ ԽՍՀՄ տարածքային պահանջներն էլ էապես տարբերվում էին Հայ դատի լուծման վերաբերյալ հայ ազգային-քաղաքական ուժերի ունեցած պատկերացումներից ու պահանջներից, քանզի Հայ դատ ասելով պիտի հասկանալ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և վնասների փոխհատուցում, այդ թվում՝ նաև հայկական տարածքների վերադարձն իր օրինական տիրոջը՝ հայությանը:

Երկրորդ աշխարհամարտը սկսվելուց հետո նոր ընթացք ստացան գերմանա-թուրքական հարաբերությունները: Թուրքիան վարում էր ճկուն և խորամանկ արտաքին քաղաքականություն: Թեև 1939 թ. հոկտեմբերին ստորագրվեց անգլո-ֆրանս-թուրքական փոխօգնության պայմանագիր, Թուրքիան հետագայում ոչ միայն խորշեց օգնության հասնել դաշնակիցներին, այլև 1940 թ. առևտրական պայմանագիր կնքեց Գերմանիայի հետ: Երկրորդ աշխարհամարտի տարիներին Թուրքիան, թեև ակնհայտ ելույթ չունեցավ ԽՍՀՄ դեմ, այսուհանդերձ, նրա համակրանքը Գերմանիայի կողմն էր: 1940 թ. հուլիսին ստորագրվել էր գերմանա-

թուրքական գաղտնի պայմանագիր՝ Գերմանիային ռազմավարական հունքով ապահովելու մասին: Թուրքիայից Գերմանիա էր տեղափոխվում քրոմի հանքանութ, նավթ, բամբակ, կաշի և սննդամթերք, անագ և կաուչուկ: ԽՍՀՄ դեմ պատերազմի սկսվելուց չորս օր առաջ 10 տարի ժամկետով ստորագրվեց գերմանա-թուրքական բարեկամության և չհարձակման մասին պայմանագիր¹: 1941 թ. հունիսի 18-ին, Գերմանիայի կողմից ԽՍՀՄ վրա հարձակվելուց չորս օր առաջ, Բեռլինը և Անկարան համաձայնագիր ստորագրեցին չհարձակման և բարեկամության մասին: Մոսկվայի թուրքական դեսպանատան 1941 թ. հունիսի 25-ի հուշագրում ասվում էր, որ Թուրքիան այս պատերազմում չեզոքություն է պահպանելու, այնուհանդերձ նա առանձին դեպքերում օգնում էր Գերմանիային²: Թուրքիայի հիմնական նպատակն էր Խորհրդային Միության պարտությունը: Վարչապետ Սարաջօղլուն Գերմանիայի դեսպան ֆոն Պապենին ասում էր. «որպես թուրք... սաստիկ ցանկանում է, որ Ռուսաստանը ոչնչացվի», որ «Գերմանիան կարող է լուծել Ռուսաստանի հարցը, միայն եթե սպանվի Ռուսաստանում ապրող ռուսների առնվազն կեսը...»³:

Պատերազմում Թուրքիայի կողմնորոշման հարցը քննարկվել էր ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի արտգործնախարարների 1943 թ. հոկտեմբերի 19-30-ին տեղի ունեցած Մոսկովյան կոնֆերանսում: Թուրքիային առաջարկություն արվեց մինչև 1943 թ. վերջը միանալ հակաֆաշիստական դաշինքին, բայց այդ առաջարկը չպաշտպանվեց Թուրքիայի կողմից⁴: Երկրորդ, այնուամենայնիվ, 1945 թ. փետրվարի 23-ին նա պատերազմ հայտարարեց Գերմանիային, բայց ոչ մի մասնակցություն չունեցավ Երկրորդ աշխարհամարտին⁵:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից մի քանի ամիս առաջ Խորհրդա-թուրքական առանց այդ էլ բարդ հարաբերություններն ավելի սրվեցին՝ կապված ԽՍՀՄ կողմից 1925 թ. դեկտեմբերի 17-ի Խորհրդա-թուրքական չեզոքության և բարեկամության պայմանագիրը չեղյալ հայտարարելու հետ: 1945 թ. մարտի 19-ին, երբ Թուրքիան արդեն պատերազմ էր հայտարարել Գերմանիային, ԽՍՀՄ-ը չեղյալ հայտարարեց վերը նշված պայմանագիրը և Թուրքիայից պահանջեց հայկական որոշ տարածքներ (Կարս, Արդահան, Արդվին) և Մոնթրոյի 1936 թ. կոնվենցիայի վերանայում⁶:

Ի պատասխան Թուրքիայի առաջարկի՝ կնքել նոր դաշնակցային պայմանագիր, Մոսկվայում հունիսի սկզբին վերսկսվեցին բանակցությունները: 1945 թ. հունիսի 7-ին, ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Սելիմ Սարաբերի հետ հանդիպման ժամանակ ԽՍՀՄ արտգործոժողկոմ Վ. Մոլոտովը կրկին ներկայացրեց ԽՍՀՄ տարածքային պահանջները⁷: Նա հայտարարեց, որ «մինչև նոր համաձայնագրի կնքումը, անհրաժեշտ է լուծել մեր միջև եղած դժվար հարցերը: Առաջին հարցը վերաբերում էր Թուրքիայի հետ 1921 թ. մարտի 16-ին կնքած պայմանագրին, որը կնքվել էր այն ժամանակ, երբ Խորհրդային Միությունը թույլ էր, և դա բերեց տարածքային փոփոխությունների»⁸: Խորհրդային կողմը առաջ քաշեց մի շարք

¹ Տե՛ս **Վիրաբյան Ա.**, Խորհրդա-թուրքական հարաբերությունները և հայկական տարածքների խնդիրը 1945-1947 թթ., «Գարեգին Նժդեհ 115. գիտաժողովի նյութեր», Երևան, 2001, էջ 79:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս **Մելքոնյան Է.**, Ստալինի աշխարհաքաղաքական նկրտումները և հայերի հայրենադարձությունը 1946-1948 թթ., «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրն այսօր», համահայկական գիտաժողով, զեկուցումների ժողովածու, Երևան, 2009, էջ 23:

⁴ Տե՛ս **Киракосян А.**, Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг., Ереван, 2010, էջ 30-31:

⁵ Տե՛ս **Մելքոնյան Է.**, էջ 23:

⁶ Տե՛ս **Սարգսյան Ն.**, 1945-1953 թթ. ԽՍՀՄ կողմից Թուրքիայից հայկական տարածքների պահանջը որպես հայկական հարցի լուծման խոչընդոտ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ա, Երևան, 2011, էջ 220:

⁷ Տե՛ս «Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը», Երևան, 1989, էջ 167:

⁸ **Киракосян А.**, с. 237.

նախապայմաններ՝ ԽՍՀՄ-ին վերադարձնել Կարսի և Արդահանի տարածքները, վերանայել Մոնթրոյի կոնվենցիան և ԽՍՀՄ տրամադրել ռազմական բազաներ նեղուցներում: Ընդ որում, Ի. Ստալինը նպատակ ուներ Կարսի շրջանը միացնել Խորհրդային Հայաստանին, իսկ Արդահանի շրջանը՝ Խորհրդային Վրաստանին¹:

Վ. Մոլոտովը փորձում է թուրքական պատվիրակությանը հավատացնել, որ տարածքային հարցերի լուծումը կամրապնդեր նորմալ հարաբերությունները Խորհրդային Միության և Թուրքիայի միջև: Երկրորդ հանդիպումը Մոլոտովի և Սարպերի միջև կայացավ հունիսի 18-ին: Այդ ժամանակ Սարպերը հայտարարեց, որ չի կարող ընդունել թվարկված կետերը: Իսկ հետո, անդրադառնալով 1921 թ. կնքված պայմանագրին, հայտարարեց, որ ինքը մանրակրկիտ ծանոթացել է այդ պայմանագրին, որն արտացոլում էր երկու կողմի ժողովուրդների և կառավարությունների կամքը²:

Թուրքիան ընդհանրապես մերժում էր Խորհրդային Միության ներկայացրած տարածքային պահանջները: «...Թուրքիա պատերազմի ժամանակ չեզոքութիւն խաղցաւ և այժմ գինը վճարելու հարկադրանքին առջեւ կը գտնուի,- գրում է «Հայրենիք» թերթը,- Ռուսիա կը պահանջէ այնպիսի դաշնագրութիւն մը, որ Խորհրդային Միութեան ընծայէ շատ մը առավելութիւններ, ի վնաս թուրքերու... Ռուսիա կը պահանջէ նոր դաշնագիր մը, որու համաձայն՝

1) Դարսի և Արտահանի շրջաններ վերադարձուին Ռուսիո, որոնք տրուած էին Թուրքիոյ 1921-ին,

2) հաստատուին ռուսական կայաններ Վոսփորի և Տարսանելի մեջ,

3) վերաքննուի Նեղուցներու վերաբերեալ Մոնթրոյի դաշնագիրը,

4) ընդունուի Պալքաններու մեջ կարգ մը սահմանային փոփոխութիւններ կատարել: Այդ պահանջներուն ամենէն կարևորը Մոնթրոյի դաշնագրին բարեփոխութիւնն է»³:

Արևմտյան մասուլը անդրադառնալով Կարսի և Արդահանի թեմային, այն որակում էր որպես նեղուցներում ռազմաբազաներ տեղադրելու Խորհրդային պահանջների բավարարմանը միտված ճնշում Թուրքիայի վրա⁴:

1945 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը Բեռլինի Պոտսդամ արվարձանում տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակած երեք մեծ տերությունների ղեկավարների (ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) Խորհրդաժողովը, որը նվիրված էր հետպատերազմյան աշխարհի սոցիալական տարբեր կարգ ունեցող պետությունների քաղաքական և ռազմական համագործակցության հարցերին:

Պոտսդամում Ստալինին անհրաժեշտ էր հիմնավորել ԽՍՀՄ տարածքային պահանջները, քանի որ Թուրքիան փաստացի հայտնվել էր հաղթանակած պետությունների կազմում: Ահա այստեղ է, որ նա որոշեց օգտագործել «հայկական խաղաքարտը»: Դա պահի տակ արված քայլ չէր, այլ նախօրոք պատրաստված գործողություն: Սկսած մոտավորապես 1944 թ. կեսերից Մերձավոր Արևելքի երկրներում աշխատող Խորհրդային դիվանագետները, ի կատարումն Մոսկվայից ստացած հրահանգների, աշխուժացրել էին իրենց շփումները տեղի հայ համայնքների հետ՝ նպատակ ունենալով ուսումնասիրել նրանց տրամադրություններն ու դիրքորոշումները, հատկապես Խորհրդային Հայաստան ներգաղթելու վերաբերյալ, ինչպես և էլ ավելի խթանել Խորհրդային Միության հետ կապված նրանց ազգային-քաղաքական սպասելիքները: Այդ գործունեության ձևերից էր նաև «տեղեկատվության արտահոսքը», որի արդյունքում սփյուռքում հետզհետե ավելի հաճախակի և առավել

¹ Киракосян А., с. 262.

² Տե՛ս նույն տեղում, էջ 38:

³ «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1 հուլիսի 1945:

⁴ Տե՛ս **Թովմասյան Կ.**, Կարսի և Արդահանի հիմնախնդիրը և ամերիկյան դիվանագիտական դիրքորոշումը 1945-1947 թթ., «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Բ, Երևան, 2011, էջ 176:

վատահ սկսեցին խոսել հայկական տարածքների վերադարձման, նոր ներգաղթի մոտալուտ կազմակերպման մասին¹:

Պոտոդամից առաջ և հետագա մի քանի ամիսներին տարբեր երկրների հայ համայնքներից բազմաթիվ նամակներ ուղարկվեցին Ի. Ստալինին, որոնցում սփյուռքահայերը ողջունում էին հայկական տարածքների վերադարձման և ներգաղթի կազմակերպման վերաբերյալ նրա մտադրությունները: Իսկ դա, իր հերթին, իրավունք էր տալիս Ի. Ստալինին և Վ. Մոլոտովին Պոտոդամում Խորհրդային Միության տարածքային պահանջները ներկայացնելիս ասել, որ «...խոսքը այն սահմանի մասին է, որ գոյություն է ունեցել մինչև Առաջին համաշխարհային պատերազմը...»²:

Պոտոդամի կոնֆերանսի բացումից մեկ օր առաջ՝ հուլիսի 16-ին, ԽՍՀՄ արտգործոժողկոմ Վ. Մոլոտովի և Անգլիայի արտգործնախարար Ա. Իդենի միջև տեղի է ունենում զրույց, որի ընթացքում քննարկվում են երկու կարևոր հարց՝ ա) Բոսֆորի և Դարդանեղի նեղուցների, բ) թուրքերի կողմից 1920 թ. բռնագրաված հայկական հողերի հարցը: Զրույցի ժամանակ Վ. Մոլոտովը հատկապես ընդգծում է, որ 1921 թ. թուրքերն օգտվեցին Խորհրդային պետության թուլությունից և նրանից խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը: Հայերը Խորհրդային Միությունում իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառով էլ Խորհրդային կառավարությունը բարձրացնում է Խորհրդային Միությանը օրինաբար պատկանող տարածքներն իրեն վերադարձնելու հարցը³:

Թուրքիայի վրա Խորհրդային ճնշումները թուլացնելու նպատակով Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը Խորհրդա-թուրքական հարաբերություններին առնչվող հարցերը բարձրացրեց Պոտոդամի կոնֆերանսում: Այստեղ հայկական տարածքների մասին առաջինն արտահայտվում է Մեծ Բրիտանիայի պատվիրակությունը: Հուլիսի 22-ին Ու. Չերչիլը զգուշացրեց Ի. Ստալինին, որ նա չվախեցնի Թուրքիային, մեջտեղ հանելով տարածքների խնդիրը, որ Թուրքիան առանց այն էլ շատ անհանգստացած է Բուլղարիայում բուլղարական և Խորհրդային զորքերի կուտակումներով: Ի. Ստալինի առաջարկով այդ հարցապնդմանը պատասխանում է Վ. Մոլոտովը: Հայտնելով, թե ինչից է ծագել հարցը, նա նշում է. «1921 թ. Թուրքիայի կողմից Խորհրդային Հայաստանից և Խորհրդային Վրաստանից խլվել է տարածք, դա Կարսի, Արդվիհի և Արդահանի մարզերի հայտնի տարածքն է: Այդ պատճառով ես հայտարարեցի, որ դաշնակցային պայմանագիր կնքելու համար պետք է կարգավորել Վրաստանից և Հայաստանից խլված տարածքների հարցը, հետ վերադարձնել այդ տարածքները»⁴:

Բացահայտ հասկացնելով, որ Անգլիան աջակցում է Թուրքիային, Ու. Չերչիլը նշում է, որ սահմաններն ուղղելու հարցը կարող է վախեցնել թուրքերին: Ի. Ստալինը կրկնում է Վ. Մոլոտովի խոսքը. «Բայց խոսքը գնում է սահմանի վերականգնմանը, որը գոյություն է ունեցել մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: Ես նկատի ունեմ Կարսի շրջանը, որը պատերազմից առաջ գտնվում էր Հայաստանի կազմում և Արդահանի շրջանը, որը պատերազմից առաջ գտնվում էր Վրաստանի կազմում: Մենք գտնում ենք, որ Կարսի և Արդահանի շրջանում սահմանը ճիշտ չէ, և մենք Թուրքիային հայտարարեցինք, որ եթե նա ուզում է մեզ հետ դաշինք կնքել, հարկավոր է շտկել այդ սահմանը, եթե ոչ, ապա վերանում է դաշինքի հարցը»⁵:

¹ Տե՛ս Մելքոնյան Է., էջ 24-25:

² Նույն տեղում, էջ 25:

³ Տե՛ս Սարուխանյան Ն., Ռուսաստանը և Հայկական հարցը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2009, N 2-3, էջ 17-18:

⁴ Տե՛ս «Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտոդամի) կոնֆերանսը», էջ 167-168:

⁵ Տե՛ս Նույն տեղում, էջ 183-184:

Սակայն Պոտսդամում թուրքիայի հարցում Չերչիլը չուներ ԱՄՆ-ի նախագահ Տրումենի անվերապահ աջակցությունը: ԱՄՆ-ն ԽՍՀՄ աջակցության կարիքն ուներ ճապոնիայի դեմ պատերազմում և այդ նկատառումներից ելնելով մտադիր չէր բարդացնել խորհրդա-ամերիկյան հարաբերությունները Կարսի և Արդահանի պատճառով: Ավելին՝ ԱՄՆ կարծես համակերպվել էր թուրքիայում խորհրդային ազդեցության հաստատման անխուսափելիության հետ: Այդ մասին են վկայում հուլիսի 17-ով և 19-ով քվազրված հույժ գաղտնի զեկուցագրերը, որոնցում նշվում էր, որ «Թուրքիան վաղ թե ուշ անխուսափելիորեն պետք է ընկնի խորհրդային ազդեցության տակ»¹:

Սա էր պատճառը, որ Պոտսդամի կոնֆերանսում, զգալով, որ իրավիճակը Կարսի և Արդահանի հարցում ծայրահեղ շփկանում է, ԱՄՆ-ի նախագահ Չարրի Տրումենը հայտարարեց. «Ինչ վերաբերվում է տարածքային հարցերին, ապա այն վերաբերվում է միմիայն խորհրդային Սիուլթանը և թուրքիային և պետք է լուծվի նրանց միջև»²:

«Ստալինը Հայկական հարցում հետևողական էր,- գրում է Լ. Խուրշուդյանը,- պահանջելով թուրքիայից հետ վերադարձնել հայկական տարածքները, նա այնուամենայնիվ մտադիր էր դրանց մի մասը նվիրաբերել Վրաստանին»³:

Պոտսդամի կոնֆերանսում հայկական տարածքների հարցը այլևս չբարձրացվեց: Կանցնեն մի քանի տարիներ և Ու. Չերչիլը կհայտարարի, թե «Սովետական Սիուլթան պահանջը ոտնձգութիւն մըն է թուրքիոյ ամբողջականութեան դէմ»⁴, իսկ ԱՄՆ-ի նախագահ Տրումենն էլ կնշի, որ «Թիւրքիոյ արեւելեան սահմանները Սիւսցեալ Նահանգներու սահմաններն են»⁵:

Պոտսդամը, Հենրի Քեսինջերի խոսքերով՝ «խուլերի այդ երկխոսությունը», որևէ լուծում չտվեց Ի. Ստալինի կողմից թուրքիային ներկայացրած պահանջներին: Նրա հիմնական արդյունքը եղավ այն, որ սկիզբ դրվեց մի գործընթացի, որը Եվրոպան և ամբողջ աշխարհը բաժանեց ազդեցության երկու ոլորտների: Ինքը՝ Ի. Ստալինը, ոչ միայն շարունակեց թելադրել իր կամքը Արևելյան Եվրոպային, այլև առավել մեծ եռանդով ձեռնամուխ եղավ նմանօրինակ մի ծրագրի իրականացմանը Սիջին Արևելքում՝ ոչ միայն թուրքիայում, այլև միաժամանակ Իրանում⁶:

1953 թ. մայիսի 30-ին խորհրդային կառավարությունը, անտեսելով հայ ժողովրդի ակնկալիքներն ու ձգտումները, թուրքիայի կառավարությանը հայտարարեց, որ «հանուն բարիդրացիական հարաբերությունների պահպանման և խաղաղության ու անվտանգության ամրապնդման, Հայաստանի և Վրաստանի կառավարությունները հնարավոր գտան հրաժարվել թուրքիայի նկատմամբ ունեցած իրենց տարածքային պահանջներից ...»⁷:

¹ Թովմասյան Կ., էջ 175:

² «Պաշտակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը», էջ 186:

³ Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, 1995, էջ 58:

⁴ Տե՛ս Իգմիրլեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս, Պէյրուք, 1964, էջ 276:

⁵ Տե՛ս Ժիրայր Նաիրի, Հնչակեան կուսակցութիւնը և հայկական հողային դատը, Պէյրուք, 1968, էջ 18:

⁶ Տե՛ս Մելքոնյան Է., էջ 26:

⁷ Տե՛ս Բաղայան Ա., Հայկական պահանջատիրության հարցը հետպատերազմյան առաջին տարիներին (1945-1947 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1, 2005, էջ 27:

ВОПРОС ВОЗВРАТА АРМЯНСКИХ ТЕРРИТОРИЙ ВО ВРЕМЯ ЗАКЛЮЧИТЕЛЬНОГО ЭТАПА ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Гоар Багдасарян

В статье рассматривается армянский вопрос, т.е. предъявление территориальных претензий по возврату Карса, Ардаана, Ардвина, который вновь стал предметом дипломатического обсуждения после Второй мировой войны.

С 17-ого июля до 2-ого августа 1945 года в городе Потсдам прошла конференция трех крупных держав – победителей во Второй мировой войне. На ней 22-ого июля был поднят армянский вопрос, но в мае 1953 года, когда Советское правительство объявило, что они не имеют никаких территориальных претензий к Турции, он был закрыт.

THE ISSUE OF RETURN OF THE ARMENIAN TERRITORIES IN THE FINAL PHASE OF THE SECOND WORLD WAR

Gohar Baghdasaryan

In the current article we have introduced the Armenian question of territorial claims after the Second World War. The Armenian question again became the subject of diplomatic discussion after the Second World War.

A conference took place in 1945 from July 17 to August 2 with the participation of three major countries which were the winners of the Second World War. In the conference Armenian question was risen in the 22nd of July. It refers to the territorial claims over Kars, Ardahan and Ardvin. But Armenian question was closed in May 1953 when the Soviet government announced that they had no territorial claims to Turkey.

ՎԱԶԱԳԱՆ ԲԱՐԵՊՈՒՇՏ ԹԱԳԱՎՈՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գոռ Սարիկյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ ասիստ. Ս. Սերոբյան
էլ փոստ՝ gor.msrikyan@gmail.com

Ինչպես հայտնի է, 387 թ. Հայոց թագավորությունը բաժանվել էր Հռոմի ու Պարսկաստանի միջև: Երկրի արևմտյան մասը մտցվել էր Հռոմեական կայսրության կազմի մեջ: Արևելյան մասը՝ Պարսկաստանի կազմի մեջ, որտեղ վերացվել էր թագավորությունը 428 թ.: Թագավորության փոխարեն Արևելյան Հայաստանում կազմավորվել էր մարզպանություն: Եվ որպեսզի այդ նորաստեղծ վարչական միավորը Պարսկաստանի կազմի մեջ պահպանելը հեշտ լիներ, հայերի անկախության վերականգնման հնարավորությունները նվազեցվեին, մարզի մեջ չէին մտցվել երկրի արևելյան շրջանները՝ Արցախ և Ուտիք նահանգները, որոնք հնուց ի վեր միասնաբար կոչվում էին Հայոց Արևելից կողմանք կամ Արևելից աշխարհ: Այդ տարածքները միացվել էին Կուր գետից մինչև Կովկասյան լեռներ ձգվող պարսկահպատակ աղվանական ցեղերի տարածքներին՝ կազմելով մեկ այլ մարզ՝ Աղվանք անունով:

Այս երկրորդ մարզը բաղկացած էր երկու անհամատեղելի մասերից, որի պատճառով մարզը գործնականում լիարժեք կերպով ամբողջական վարչական միավոր չդարձավ: Կուրից հյուսիս զբաղեցնում էին աղվանական տասնյակ մանր ցեղեր, մինչև ցեղի կտրված, առանց լեզվական, տնտեսական, կրոնամշակութային ընդհանրության: Իսկ Հայոց Արևելից աշխարհը, ընդհակառակը, լեզվական, կրոնամշակութային ու տնտեսական առումով ընդհանրություն ունեցող բնակչությամբ մի երկրամաս էր: Դեռևս հնագույն ժամանակներում հունահռոմեական պատմիչները վկայել են, որ Հայաստանը աղվանական ցեղերից բաժանված է եղել Կուր գետով:

Կուրից հյուսիս գտնվող տարածքները բնակեցված էին տասնյակ մանր ցեղերով և հնագույն հեղինակներին հայտնի են եղել Ալբանիա ընդհանուր անունով, որը նշանակում է լեռների երկիր:

Եվ այսպես, նորաստեղծ Աղվանք մարզի հարավային մասը՝ Կուր գետի աջափնյակը, հանդիսանում էր երբեմնի հայոց թագավորության արևելյան շրջանը, միասնական հայ բնակչությամբ, լեզվական, հոգևոր, պատմամշակութային ու տնտեսական ընդհանրությամբ: Այդ ընդհանրության շնորհիվ այստեղ 5-րդ դ. երկրորդ կեսին ձևավորվում է Պարսկաստանին հպատակ մի կիսանկախ փոքրիկ թագավորություն տեղի հայ նախարարական Առանշահիկ տոհմի գլխավորությամբ¹: Ըստ Խորենացու, այդ տոհմը սկիզբ է առել հայերի Հայկ նահապետից: Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանը ձգված էր Արաքս գետից մինչև Կուր գետի աջ ափը: Խորենացին պատմում է, որ այդ ընդարձակ տարածքի վրա կուսակալ է նշանակվել Առանը: Պատմահայրը գրում է. «(Առանը) Անվանի մարդ էր, առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում»²:

Առանից սերող նախարարական տոհմը, որը դարեր շարունակ կառավարել էր հայ ժողովրդի այդ հատվածին, հիմնվելով իր ավանդական իրավունքի վրա, 5-րդ դ. ստեղծեց մի փոքրիկ թագավորություն: Հայկական այս փոքրիկ թագավորությունը նորաստեղծ մարզի անունով երբեմն կոչվել է Աղվանք, բայց ապրել ու զարգացել է որպես հայկական երկրամաս, ըստ էության Հայաստանից անբաժան կերպով:

301 թ., ինչպես հայտնի է, Հայաստանում ընդունվել է քրիստոնեությունը որպես

¹ Ղաիրամանյան Կ., Իրավակարգի 1500-ամյա ակունքներն Արցախում, Երևան, 2010, էջ 7-9:

² Սովսես Խորենացի, Հայոց պատմություն, խմբ.՝ Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 127:

պետական կրոն: Դեռևս դրանից էլ շատ առաջ Հայաստանում, այդ թվում և նրա արևելյան նահանգներում՝ Արցախում և Ուտիքում, տարածվել է նոր հավատը, սակայն 301 թ. սկսած այդ գործընթացն իրականացվել է պետականորեն: Արցախ-Ուտիքում, կոչված Արևելից կողմանք, եպիսկոպոս է նշանակվել Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը: Այնուհետև, երբ ձևավորվեցին եկեղեցական թեմեր, Հայոց Արևելից կողմանց թեմը նորաստեղծ վարչական միավորի անունով կոչվեց Աղվանից: Հետագայում (6-րդ դար) ընդլայնվեցին այդ թեմի իրավունքները, այն համարվեց կաթողիկոսություն՝ էջմիածնի հովանու ներքո: Այս կաթողիկոսությունը դարեր շարունակ կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Դավիթ Անանունը գրում է. «Այն ժամանակ (18-րդ դ. վերջ, 19-րդ դ. սկիզբ) հայ ժողովուրդը իր հոգևոր պահանջների բավարարման համար Անդրկովկասի շրջանակներում ուներ երկու եկեղեցական նուիրապետութիւն, էջմիածնի Մայր Աթոռը համազգային պատրիարք-կաթողիկոսով և համարեայ թէ անկախ Աղուանից կաթողիկոսութիւնը»¹:

Իսկ ավելի ուշ, Գանձասարի վանքի կառուցումից հետո (13-րդ դ.) Աղվանից անվան փոխարեն հիմնականում գործածվում էր Գանձասարի կաթողիկոսություն անվանումը:

Որպեսզի հայկական այս երկրամասը չչփոթվի Կուր գետի ձախափնյա Աղվանք երկրի հետ, ուսումնասիրողները միշտ շեշտել են հայկական Աղվանք և բուն Աղվանք: Ա. Ա. Ցագարելին, օրինակ, հստակորեն առանձնացնում է բուն Աղվանք (Ալբանիա) երկիր, որը ձգվել է Կուր գետից հյուսիս, և Կուրից հարավ գտնվող «հայկական Աղվանք»: Ռուսաստանին միացվելու հենց սկզբնական ժամանակներից Ալեքսանդր 1-ին կայսեր կարգադրությամբ տպագրված նյութերի մեջ Կուր գետը ճանաչվում է որպես սահման Հայաստանի ու Աղվանքի միջև²:

5-րդ դ. 2-րդ կեսին Հայոց Արևելից աշխարհում ձևավորված թագավորությունն իր ծաղկմանն է հասել Վաչագան թագավորի օրոք, որն իր թագն ստացել է պարսից շահի կողմից: Նրա գործունեությունը հանգամանորեն ներկայացված է Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» մեջ: Պատմիչը գրում է, որ Աղվանքի նախարարները միաբանվում, վերցնում են քաջարի, իմաստուն, հասակով բարձր ու վայելուչ, իրենց հայրենի թագավորության ժառանգ Վաչագանին և տանում, թագավոր են դարձնում պարսից Վաղարշ արքայի ձեռքով³: Ուշագրավ է, որ պարսից արքունիքը նրան էր հանձնարարել ամբողջ Աղվանք մարզի կառավարումը, Վաչագանը Հայոց Արևելից կողմանց և Անդրկուրյան Աղվանք երկրի թագավորն էր⁴:

Իր բուռն և արգասավոր եկեղեցանպաստ գործունեության շնորհիվ Վաչագան թագավորն ստացել է Բարեպաշտ անվանումը: «Պատմությունը» վկայում է, որ նա բազմաթիվ եկեղեցիներ է կառուցել, բացել է դպրոցներ: Նրա գործունեության պսակը կարելի է համարել Կանոնական Սահմանադրությունը, որն ամբողջությամբ պահպանվել ու հասել է մեր օրերը: Ուշագրավ է, որ այն շուրջ 1500 տարի առաջ հենց այդպես էլ կոչվել է՝ Սահմանադրություն, և մշակվել, կազմվել, ամբողջացվել ու ընդունվել է, կարելի է ասել, համաժողովրդական ձևով⁵:

Ինչդեռ էր առաջացել Սահմանադրության պահանջ, և ինչպե՞ս է այն ստեղծվել: Այս հարցերի մանրամասն պատասխանը պարունակում է նույն աղբյուրը: Պատմիչը բացատրում է, որ հայոց միասնական թագավորության վերացումից հետո

¹ Դավիթ Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում, հ. 1, Բաքու, 1916, էջ 77:

² Ղահրամանյան Կ., էջ 13:

³ Մովսես Կաղանկատվացի, Աղվանից աշխարհի պատմություն, խմբ.՝ Ա. Աբրահամյան, Երևան, 1969, էջ 36:

⁴ Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975, էջ 61-62:

⁵ Каграмяян К., Книга очага: заветные крупицы, Ереван, 2012, с. 8.

Պարսկաստանը ամեն քայլի դիմել էր, որպեսզի այդ թագավորության վերականգնումը և Հայաստանի անկախության հաստատումն անհնարին լինի: Ամեն կերպ խրախուսել էր տարբեր աղանդների տարածումը, ձգտել պառակտում մտցնել միասնական հայ եկեղեցու ներսում, ինչպես նաև եկեղեցու և տեղական ազնվականության միջև: Նույնիսկ խլել էին առանձին իշխանների տիրույթները և տվել իշխանական արմատներ չունեցող մարդկանց: Այդ քայլայիջ քաղաքականությունը 5-րդ դ. կեսերին ոտքի էր հանել հայ ժողովրդին: Ամբողջ երկրում սկիզբ էր առել համաժողովրդական ազատագրական շարժում, որի մեջ ներգրավված էին, բնականաբար, նաև երկրի արևելյան շրջանները՝ Հայոց Արևելից կողմանք¹: 480-ական թթ. սկզբներին հայ ազատագրական հաղթական շարժումներն ավարտվեցին Նվարսակի պայմանագրով: Պայմանագրի համաձայն՝ Սասանյան արքունիքը վերստին հաստատեց Մարզպանական Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը և նախարարների ավանդական իրավունքները, պարտավորվեց չմիջամտել նրանց ներքին գործերին, չխրախուսել հայրենադավ ու հավատուրաց մարդկանց: Հենց այդ նպաստավոր պայմաններում էր, որ Արևելից կողմանց ազդեցիկ իշխանավորները գահ բարձրացրին Վաչագանին: Ուշագրավ է, որ թագադրության հետ միասին Պարսից արքան նաև դավանանքի ազատություն է տալիս: Մովսես Կաղանկատվացին գրում է. «Պարսից Վաղարշակ արքան հրամայում է, որ ամեն կրոն կարող են դավանել ըստ իրենց կամքի ու ցանկության»²:

Հասարակական կյանքի հիմքերի ամրապնդման, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների, բնակչության տարբեր խավերի միջև փոխհարաբերությունների կարգավորման նպատակով Վաչագան թագավորը նախաձեռնում է հայ ժողովրդի պատմական և պետական ավանդույթներից բխող օրենքների ժողովածուի ստեղծում: Այդ հարցում, թերևս, Վաչագանի համար օրինակ է ծառայել Ներսես Մեծ կաթողիկոսը:

4-րդ դ. կեսերին, երբ Արշակունյաց հայկական թագավորությունն ապրում էր ներքին ու արտաքին դժվարին ժամանակներ, Ներսես կաթողիկոսը համոզված էր, որ թագավորության ամրապնդման համար անհրաժեշտ է ամրապնդել պետության իրավական հիմքերը: Նա ուսումնասիրում է Հայաստանում գործող օրենքներն ու ազգային ավանդույթները, ինչպես նաև այն ժամանակվա քրիստոնյա աշխարհում հայտնի հիմնական կանոնական որոշումները: Դրանց հիման վրա ստեղծում է օրենքների մի ժողովածու: Ներսես կաթողիկոսի մշակած կանոնական որոշումներն ընդունվում են 356 թ. Աշտիշատի կանոնադիր ժողովում եպիսկոպոսների ու ավագ իշխանների մասնակցությամբ³:

Գ. Հարությունյանը նշում է. «1. Հինգերորդ դարի կեսերին հայ իրականության մեջ հասունացել էր այնպիսի միջավայր, երբ հասարակության տարբեր շերտերի միջև առաջացած «... հակառակությունները» փորձ էր արվում լուծել ոչ թե ուժի թելադրանքով կամ վարչարարությամբ (այդ թվում՝ արքայի հրամանով կամ մահակներով), այլ իրավական ճանապարհով՝ սահմանադրական օրենքի ընդունման միջոցով: Այս հանգամանքն առաջին հերթին վկայում է նախաձեռնության հեղինակի բարձր մտավոր որակների ու իրավագիտակցության մասին, ինչպես նաև՝ այդ որակները հասարակության կողմից ընկալված լինելու և նման միջավայրի հասունացած լինելու մասին»⁴:

Հաշվի առնելով հայ ժողովրդի պատմական անցյալի այդ փորձը՝ Վաչագան թագավորը դիմում է Հայաստանի տարբեր շրջանների նշանավոր մտածողներին և

¹ Ղահրամանյան Կ., էջ 22-23:

² Մովսես Կաղանկատվացի, էջ 36:

³ Ղահրամանյան Կ., էջ 25:

⁴ Հարությունյան Գ., Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, 2005, էջ 58-59:

խորհուրդ խնդրում՝ Մատթ գիտնական քահանային, Մամիկոնեից Աբրահամ եպիսկոպոսին և ուրիշներին: Այդ նյութերի մի մասը պահպանվել է «Աղվանից աշխարհի պատմության» մեջ,¹ ինչպես նաև միջնադարյան այլ պատմիչների մոտ: 13-րդ դարի հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, օրինակ, գրում է, որ Վաչագան թագավորը դիմել է Սյունիքի Պետրոս եպիսկոպոսին, «Հարցում արել բազմաթիվ լուրջ ու ծանրակշիռ խնդիրների մասին և պատասխան ստացել շատ պատշաճ լուծումով»²:

Վաչագան թագավորի նախաձեռնությունը երկու փուլով է իրականացվել: Առաջինը եղել է օրենքների (կանոնների), կարելի է ասել՝ նախագծի մշակման փուլը: Երկրորդը եղել է այդ նախագծի քննարկման և ընդունման փուլը: Առաջինն արժեքավորվում է հատկապես նրանով, որ ոչ թե սոսկ տվյալ երկրամասի, այլև ամբողջ Հայաստանի իրավագիտական միտքն ու պատմական ավանդույթներն է ամբողջացնում, խնդրի լուծմանը մասնակից դարձնում ժամանակի նշանավոր հայ մտածողներին: Երկրորդ փուլն արժեքավորվում է նրանով, որ ընդունվել է ոչ թե թագավորի հրամանով, այլ հասարակական բոլոր խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Ժողովին էլ նախագահել է ոչ թե թագավորն ինքը, այլ երկրի գավառներից մեկի իշխանը՝ քաջ Վարդանը: Մովսես Կաղանկատվացին վկայում է. «(Քաջ Վարդանը խմբ.) Աղվանքի արքա Վաչագանի ժամանակ արքայի կողմից Աղվենում ժողովի նախագահ եղավ...»³:

Օրենքները մշակելուց հետո Վաչագանը հրավիրել է բազմամարդ ժողով իր Աղվեն ամառանոցում, հասարակական բոլոր խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հասարակության բոլոր հիմնական խավերի ներկայացուցիչների ժողովն ընդունել է սահմանադրությունը, բոլորը երդում են տվել հավատարիմ լինել սահմանադրությանը և ստորագրել են դրա համար ու դրել իրենց կնիքը: Իսկ վերջում արդեն, առավել լիարժեք դարձնելու համար, այն կնքվել է թագավորի կնիքով: «Այս հրամանը մատանիներով կնքեցին արքայի հրամանակատար Մուծիկը, պալատի վերակացու Միրհոսիկը և տոհմապետներ Մարութը, Տիրազը, Սպարակոսը, Ղաման, Բակուրը, Ռատանը, Արչեսը, Գարդմանա տեր քաջ Վարդանը, Խուրսը, Գերմանոսանը, Խոսկենը, Փիրոզը, Նահապետը, Աղվանքի բոլոր ազնվականները և գրության ավելի վավերական լինելու համար կնքվեց նաև Աղվանքի թագավոր Վաչագանի մատանիով»⁴:

Վաչագան թագավորը ոչ միայն հենվել է Ներսես Մեծ կաթողիկոսի մշակած կանոնների վրա, այլև որոշ իմաստով զարգացման նոր աստիճանի է հասցրել դրանք՝ իր թագավորության պահանջներին համապատասխան: Ինչպես որ Ներսես Մեծը, Վաչագանը նույնպես կարևոր տեղ է հատկացրել տարբեր խավերի միջև հակասությունների վերացմանը, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհամաձայնեցված գործունեությանը, հարկերի թեթևացմանը և այլն: Վաչագանի սահմանադրությունն ուշագրավ է նաև մեկ այլ, շատ կարևոր առումով: Աշտիշատի կանոնադիր ժողովը հրավիրել, կանոններն էլ մշակել է, ինչպես ասվեց, Ներսես Մեծ կաթողիկոսը: Եվ դա իր հիմնավոր պատճառն ուներ: Բացի հայ եկեղեցու ղեկավար լինելուց, նա պետական կառույցի մեջ զբաղեցրել է մեծ դատավորի պաշտոնը, հետևապես միանգամայն բնական է, որ նա է զբաղվել հասարակական կյանքի իրավական հիմքերի ամրապնդման հարցով: Իսկ ահա նրանից շուրջ մեկուկես դար հետո Վաչագան թագավորն ինքն է նախաձեռնել հասարակական կյանքի կարգավորման իրավական հիմքերի ստեղծումը:

Սահմանադրությունն ընդունվել է 488 թ.: Այն բաղկացած է 21 գլուխներից: «Ա»-«Ե», «Ժ»- «ԻԱ» գլուխներն ամբողջությամբ սահմանում են աշխարհականների

¹ Մովսես Կաղանկատվացի, էջ 62-64:

² Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 120-121:

³ Մովսես Կաղանկատվացի, էջ 237:

⁴ Նույն տեղում, էջ 69:

կողմից եկեղեցու օգտին տրվող բարիքները, իսկ «Ը», «ԺԱ» - «ԺԶ» գլուխները ներառում են քրեական իրավունքի չափանիշները (կռվող և արյուն թափող քրիստոնյայի, ապօրինի ամուսնությունների և ամուսնալուծությունների, հակակրոնական արարքների, զրպարտությունների և այլ պատիժների մասին):¹ Աղվենում ընդունված սահմանադրության բուն նպատակը սահմանադրական կանոնների օգնությամբ հասարակության մեջ առկա «բազմաթիվ հակառակությունների» հաղթահարումն էր: Դրան հասնելու ճանապարհ է ընտրվում այնպիսի ընդհանուր կանոնների սահմանումը, որոնցից կբխեն հոգևորականների և աշխարհականների գործողությունները, որոնք այլևս սահմանափակվում էին սույն կանոններով: Վերջիններս Աստծո առաջ տիրոջն ու ծառային չէին տարբերակում («Կիրակի օրը տերն ու ծառան պետք է գնան մայր եկեղեցի, աղոթքներ ու հիշատակ կատարեն եկեղեցում...»), սահմանում են բարոյական համակեցության հստակ մոտեցումներ («Ոչ մի տղամարդ երրորդ պորտի ազգակցուհի կին չպետք է առնի և եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանա»), հստակեցնում էին լիազորությունների շրջանակները («Ազնվականներն առանց եպիսկոպոսի իրավունք չունեն քահանային հեռացնել կամ նշանակել չնայած որ իրենց դաստակերտն է. եպիսկոպոսն էլ չպետք է առանց նրանց ազատի կամ նշանակի...»): Մեկ տասնյակից ավելի նորմեր են սահմանվել աշխարհիկ և հոգևոր այլ հարաբերությունները կարգավորելու համար²:

Այսպիսով, Կանոնական Սահմանադրությունն արտացոլում է միջնադարյան Հայաստանի, մասնավորապես, նրա հյուսիս-արևելյան մասի՝ Աղվանքի (խոսքը նարգպանության մասին է) սոցիալ-տնտեսական և իրավական վիճակը: Դրա կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ ստեղծված լինելով դեռևս 5-րդ դ., այն հենց այդպես էլ կոչվել է՝ «Սահմանադրություն» և քննարկվել ու ընդունվել է համաժողովրդական ձևով: Հետևաբար, այն ոչ թե մի խոշոր մտածողի մտքի արգասիք էր, այլ համազգային կերպով մշակված ու համաժողովրդական ձևով ընդունված փաստաթուղթ: Այն հանդիսանում է ժողովրդավարության դրսևորում, նույնիսկ ներկայիս չափանիշներով, իհարկե, հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանի պատմական պայմանները:

КОНСТИТУЦИЯ ЦАРЯ ВАЧАГАНА БЛОГОЧЕСТИВОГО

Гор Мсрикян

В статье освещена история Армянского царства, образованного в Арцахе во второй половине XV века. С середины 480-х годов до 510 года этим царством правил Вачаган Благочестивый, о котором сохранилось множество народных преданий. Основным достижением правления Вачагана Благочестивого стала созданная им Конституция, которая была принята всем народом. Конституция Вачагана целиком сохранилась до наших дней. Примечательно, что и 1500 лет назад она так и называлась – «Конституция». По всем основным признакам этот уникальный документ можно считать воплощением демократии даже по нынешним меркам, учитывая, конечно, исторические условия.

¹ Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. 9-րդ դար - մ.թ. 19 -րդ դար:), Երևան, 2001, էջ 69-72:

² Հարությունյան Գ., էջ 79-80:

CONSTITUTION OF KING VACHAGAN THE PIOUS

Gor Msrikyan

The article describes the circumstances of creation of the Constitution, written by king Vachagan in the 5th century. Vachagan the Pious ruled in the period of 480s up to the year 510. His name and his work were respected for ages. The wearth of Vachagan's work was the "Constitution", which is wholly maintained to reach the present times. Interestingly, even 1500 years ago it was called a "Constitution" and was formed, developed and finalized nationwide. That document could be called democratic, even if compared to the nowadays criteria of democracy, of course with consideration of the realities of historic conditions.

**ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՆ ՈՒ ԱՂԻՐԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԴՐԱԵՎՈՐՈՒՄՆԵՐ**

Գևորգ Ղուկասյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ պ.գ.դ., պրոֆ. Յ. Պետրոսյան

Էլվիոստ՝ gmghukasyan@gmail.com

2004 թ. Աղբրեջանի Հանրապետության նախագահ Իլիհան Ալիևը, հրավիրելով Աղբրեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստ, հանձնարարում է երկրի գիտնականներին ապացուցել Արցախի ոչ հայկական ու հայերի՝ Արցախում նոր ժամանակներից եկվոր տարր լինելը:

Մինչ աղբրեջանական պատմագիտական դպրոցը կլծվեր նախագահի հանձնարարականի կատարմանն ուղղված նոր զեղծարարությունների, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի հնագիտական արշավախումբը՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանի գլխավորությամբ, Արցախի ազատագրված շրջաններում, նախկին Աղդամ քաղաքից ոչ հեռու, Շահբուլաղ կոչվող աղբյուրների շրջակայքում, հնագիտորեն վավերացրեց Արցախի Տիգրանակերտը, որը Ք.ա. առաջին դարի առաջին քառորդում կառուցել է Տիգրան Մեծը: Հաշվի առնելով սույն աշխատանքի բուն թեման՝ կշռանցենք Տիգրանակերտի հայտնաբերման պատմությունը, պեղումների ընթացքն ու արդյունքները, որոնք մանրամասնորեն ներկայացված են արշավախմբի հաշվետվություններում, ամենատարբեր հրապարակումներում¹, www.tigranakert.am կայքում:

Նման սենսացիոն գյուտը, այն էլ շուրջ երկու տասնամյակ առաջ ամբողջովին աղբրեջանաբնակ տարածքում, չէր կարող չհարուցել աղբրեջանական հակաքարոզչության հուժկու ալիք: Հարևան երկրի գիտատեղեկատվական ողջ պոտենցիալը նախանձելի օպերատիվությամբ ձեռնամուխ եղավ, այսպես ասած, «պատմական արդարության վերականգնմանը»՝ հակաքարոզչության մեծ ալիք ծավալելով Տիգրանակերտի ու Արցախի հնագիտական արշավախմբի դեմ: Սույն քննության նպատակն է ներկայացնել աղբրեջանական գիտական համրույթի կողմից պատմահնագիտական փաստերի աղավաղումը, ծավալված ու ընթացող հակաքարոզչությունը, վերջինիս հակագիտական լինելն ու ընդգծված հայատյաց ուղղվածությունը: Այդ հակաքարոզչությունը մեծ մասամբ կարելի է բնութագրել որպես անլրջությունից ու քամահրական վերաբերմունքից դեպի զգաստացման, փաստերի անտեսումից ու ծաղրից մինչև դրանց ընդունման, մեկնաբանման ու սեփականացման գործընթաց: Տիգրանակերտի 2006 թ. պեղումներից հետո, երբ արդեն բացվել էին հյուսիսային պարսպապատի ծիծեռնակապոչ կապերով շուրջ 5 մ բարձրություն ունեցող հատվածը, մասամբ վաղմիջնադարյան միանավ բազիլիկ եկեղեցին, ամրացված թաղամասի դարավանդներից մեկի հենապատը, աղբրեջանական մամուլն ու կայքէջերը անմիջապես սկսեցին հրապարակումներ թողարկել Տիգրանակերտի պեղումների մասին: Այդպես է մինչև օրս՝ սկսած ֆինանսավորումից, պեղումների տևողությունից, արշավախմբի եզրակացություններից, թեև ակնհայ-

¹ Պետրոսյան Յ., Ժամկոչյան Ա., Հայերեն արձանագրություններով սկսվառակ Արցախի Տիգրանակերտից (նախնական հաղորդում), «ՊԲՀ», թիվ 1, 2009, էջ 166-176: Պետրոսյան Յ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Վարդանեսովա Տ. և ուր., Արցախի Տիգրանակերտի հետազոտության հիմնական արդյունքները. 2005-2009 թթ.: «Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010 թթ.», Ստեփանակերտ, 2011, էջ 3-23: Petrosyan H., Kirakosyan I. Safaryan V. Zhamkochyan A. Vardanyan R. Karapetyan I. Vardanesova T., The Discovery and First Results of Archaeological Investigations of Tigranakert in Artsakh: 2005–2009, "Archaeology of Armenia in the Regional Context". Yerevan, 2012, p. 223-235. Petrosyan H., Archaeological Research in Tigranakert, "AIEA Newsletter", 2007, N 42, p. 31-38.

տորեն խուսափում են հուշարձանի ընդհանրական տեսքը ներառող լուսանկարների օգտագործումից. օրինակ, ադրբեջանական և ոչ մի կայքում դուք չեք հանդիպի Տիգրանակերտի պարիսպների լուսանկարների՝ այն դեպքում, երբ հյուսիսային պարսպի երկարությունը այժմ գերազանցում է 185 մ.:

Սկզբնական շրջանի անլուրջ ու քամահրական վերաբերմունքը, որը կարելի է անվանել հակաքարոզչության առաջին փուլ, շուտով վերաճեց առավել լուրջ ու հաշվենկատ կեցվածքի, արշավախմբի աշխատանքներում սկսեցին փնտրել քաղաքական աստառ: Իր խոսքն ասաց նաև Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիան, որի ընդունած հատուկ որշումը Տիգրանակերտի պեղումների վերաբերյալ, տեղադրված է Ադրբեջանի Ազգային անվտանգության ծառայության կայքում¹: Սա վկայությունն է այն բանի, որ հարևան երկրում պատմագեղծարարությունը ազգային ռազմավարության գերակա ճյուղերից է և ադրբեջանական միֆի դեմ ցանկացած նոր հակափաստարկ ուղղակի վտանգ է՝ ուղղված Ադրբեջանի ազգային անվտանգությանը:

Ինչևէ, այժմ փորձենք քննել Ադրբեջանի ԳԱԱ գիտնականների վարկածները՝ ադրբեջանական լրատվամիջոցներին տված հարցազրույցների հիման վրա, նրանց հրապարակած հոդվածները²:

Անդրադառնանք ԱԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Միլ-Ղարաբաղ հնագիտական արշավախմբի ղեկավար Թավաքյուլի Ալիևի հարցազրույցին³ տրված ադրբեջանական Day.az լրատվականին: Մեջբերում հարցազրույցից. «Մարդաբանությունը վկայում է, որ հայերը Կովկասում եկվոր են... Ղարաբաղը Կովկասի այլ տարածքների համեմատ հնագետների կողմից ավելի ուսումնասիրված տարածք է. օրինակ հայերը հայտարարում են, որ իրենք իբր Աղղամի շրջանից 10 կմ հեռավորության վրա հայտնաբերել են հին Տիգրանակերտ քաղաքը: Նրանք պնդում են, որ այդ քաղաքը հիմնադրվել է Տիգրանի տիրապետության ժամանակ, չնայած Տիգրանակերտը գտնվում է Ֆերեջե գետի աջ կողմում: Սակայն հայերը հորինել են, որ պատմության մեջ գոյություն են ունեցել չորս Տիգրանակերտներ: Եվ այժմ, իբր նրանք Շահբուլաղ կոչվող տեղանքում հայտնաբերել են այդ երեք քաղաքներից մեկը, որոնց գտնվելու վայրը հայտնի չէր: Դրանից ելնելով հայերը որոշել են Աղղամը վերանվանել Տիգրանակերտ: Հայտնի է, որ Շահբուլաղի ամրոցը հիմնադրել է Ղարաբաղի Փանահ-Ալի խանը 1751 թ.: Ադրբեջանի գիտնականները այդ ամրոցի ուսումնասիրության ժամանակ նրա քարերի վրա չեն հայտնաբերել խաչի նմանվող որևէ նշան, սակայն այժմ հայերը լուսանկարներ են տարածում, ըստ որոնց խաչի նշանն առկա է ամրոցի գրեթե բոլոր քարերի վրա: Բացի այդ, հայերին չի մտահոգում նաև այն, որ Տիգրանը ապրել է մ.թ.ա. 1-ին դարում, երբ քրիստոնեություն դեռևս չկար: Բացի այդ, հարկ է նշել, որ Տիգրան անվանումը վաղ միջնադարյան աղբյուրներում բացակայում է: Ցանկանում են նշել, որ այդ աղբյուրներում առկա են Միլ-Ղարաբաղյան գոտու հինգ հազարից ավելի գյուղերի անվանումներ, սակայն նրանցում Տիգրանակերտը բացակայում է, չնայած հայկական կողմի պնդմամբ բուն կյանքը այնտեղ շարունակվել է մինչև 16-17-րդ դարերը»:

Այնհայտ է՝ Ադրբեջանի ակադեմիական գիտնականը կամ չի տիրապետում անտիկ հունահռոմեական պատմագիրների ամենահայտնի հաղորդումներին կամ միտումնավոր պատմության խեղաթյուրման անհաջող փորձ է կատարում: «Չորս

¹ **Պետրոսյան Հ.**, Սշակութային ժառանգությունը հայ-ադրբեջանական հակամարտության գոտում. Արցախի Տիգրանակերտ. Քարոզչություն և հակաքարոզչություն, «Անցումային հասարակության առանձնահատկությունները», գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2011, էջ 149-150:

² Սույն աշխատանքում տեղ են գտել բացառապես ադրբեջանական ակադեմիական գիտնականների հրապարակումները:

³ **Алиев Т.**, Антропология свидетельствует, что армяне - пришлые на Кавказе, 6 февраля 2012, <http://news.day.az/society/313369.html>.

Տիգրանակերտ», այսպիսի արտահայտություն արշավախումբը չէր կարող շրջանառության մեջ դնել, այս բանաձևումը չի համապատասխանում աղբյուրների հաղորդումներին և պատմական իրականությանը, բացի այդ, գիտամեթոդաբանական սխալ է: Տիգրան Մեծը անծայրածիր կայսրության տիրակալ էր, որտեղ պաշտվում էր որպես աստված, և բնական է, որ շատ ու շատ հելլենիստական տիրակալների նման, նա ևս իր անունը հավերժացնելու համար նոր հիմնադրվող քաղաքները կոչելու էր իր անունով: Այս պարագայում կարող է խոսք լինել միայն սկզբնաղբյուրներում վկայված Տիգրանակերտերի մասին, որոնց թիվը հասնում է յոթ-ութի: Սկզբնաղբյուրներից գատ, ակնառու է, որ հնագետը չի տիրապետում Տիգրանակերտի պեղումների վերաբերյալ Արցախի հնագիտական արշավախմբի տարածած նյութերին, այլապես կիմանար, որ արշավախմբի կողմից Աղդամը երբեք չի անվանվել Տիգրանակերտ: Հայ հնագետները միշտ էլ նշել են, որ Վանքասար լեռան, որն ամփոփում է Տիգրանակերտի ամրացված թաղամասը, ստորոտին գտնվող ամրոցը կառուցել է Արցախի մելիքների երդվյալ թշնամի, քոչվոր Ջևանշիր ցեղի առաջնորդ Փանահը՝ 1751-1752 թթ.: Այդ ամրոցի պատերին ագուցված սրբատաշ քարերի գոյությունը (Ամրոցի վերին շարքերն իրականացված են կոպտատաշ խիստ մանր քարերով) բացատրվում է այն հանգամանքով, որ 18-րդ դարում, երբ Տիգրանակերտի քրիստոնեական տաճարը վաղուց արդեն խոնարհված էր, ամրոցի շինարարության ժամանակ օգտագործվել են տաճարի սրբատաշ կվադրերը, որոնց վրա խաչաքանդակներ չկան: Ավելի քան հավանական է, որ աղբյուրներից հնագետը, չհասկանալով կամ միտումնավոր, խաչաքանդակների տեղ է ընդունել Ամրացված թաղամասի պարսպի ծիծեռնակապոչ կապերը, կարծելով, թե արշավախումբը դրանք համարում է Փանահի կառուցած պատերի վրա փորագրված նշաններ: Հնագետը խոսում է վաղմիջնադարյան աղբյուրներում Տիգրան անվան բացակայության մասին, կարծում ենք սա ուղղակի չիմացության արդյունք է: Նախ Տիգրան երկրորդի անունն ու գործունեությունը լայնորեն լուսաբանված են անտիկ հունահռոմեական աղբյուրներում, երկրորդ, նրա մասին բազմաթիվ հիշատակություններ և ամբողջական պատմություններ են պահպանվել թե՛ վաղմիջնադարյան, թե՛ ավելի ուշ հայկական և օտար աղբյուրներում:

Մեկ այլ զրպարտություն ևս. Թավաքյուլի Ալիևը պնդում է, թե իբր արշավախումբը տեղեկություններ է տարածում, թե բուռն կյանքը Տիգրանակերտում պահպանվել է մինչև 16-17-րդ դդ., եթե հնագետը չզլանար ու հարցազրույցից առաջ թեկուզ թռուցիկ կերպով աչքի անցկացներ www.tigranakert.am կայքը կամ այլ նյութեր, կտեսներ, որ փաստված է՝ Տիգրանակերտը գործող բնակավայր է եղել մինչև 13-րդ դ. վերջը 14-րդ դդ. սկիզբը, և դրանից հետո բնակավայրը լքվել է:

Այսպիսով, Թավաքյուլի Ալիևի վերոբնյալ հարցազրույցը, որն ավելի ընդգրկուն չափով վերաբերում է բրոնզի և երկաթի դարերի հուշարձանների վավերացման ասպարեզում աղբյուրներից հիտության արձանագրած հաջողություններին, հնագետը երևան է բերում կատարյալ անտեղյակություն անտիկ և միջնադարյան հուշարձանների հարցում, ուստի ի վիճակի չէ հերքել կամ հաստատել Տիգրանակերտի հայտնագործումը:

Մեկ այլ հարցազրույց՝ «Արցախյան Տիգրանակերտ՝ հայկական պսևդոգիտության հերթական կեղծարարությունը»¹ խորագրով, «Բաքվի աշխատավոր» թերթը վարել է Աղբյուրների Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Աղվանքի պատմության հետազոտող Ուլվիյա Հաջիկայի հետ: Հաջիկան նշում է. «Այն ինչը հայ կեղծարարներն անվանում են արցախյան Տիգրանակերտ, հանդիսանում է ներկայիս Շահբուլաղ տեղանքը, որը հնուց ի վեր հայտնի է և հիշատակված է հայ եպիսկոպոս Մակար Բարխուդարյանցի 1895 թ. լույս տեսած

¹ Арцахский Тигранакерт — очередная фальсификация армянской псевдонауки, 03.06.2011, <http://1news.az/analytics/20110603044700457.html>.

«Արցախ» գրքում: Չնայած այն բանին, որ Բարխուդարյանի գիրքը տեղեկացիոգ է, այնուամենայնիվ նա նշում է, որ Ղարաբաղում տեղանքն անվանվում է Շահբուլաղ կամ Տառնագյուտ-Տառնակուտ, ինչը աղվանական բառակապակցություն է և չունի հայկական թարգմանություն»: Այսպիսով, Հաջիևայի հարցազրույցի հենց սկզբից կարող ենք փաստել, որ ադրբեջանցի հնագետներն իրենց հարցազրույցներում շահարկում են Շահբուլաղ տեղանունը: Հայ հնագետները միշտ էլ նշել են տարածքի անվան մասին, ինչն ամենևին չի կարող հակասել անտիկ քաղաքի տեղադրությունը հիշյալ տարածքում: Բացի այդ ամենևին էլ պարտադիր չէ պատմահամեմատական լեզվաբանության մասնագետ լինել՝ տեսնելու թնգոնակերտ – Տիգրանակերտ տեղանունների նույնականությունը, սակայն հարևան երկրի գիտնականներն աղճատում են նաև թնգոնակերտ անվանումը: Այնուհետև Հաջիևան, շարունակելով հարցազրույցը, նկատում է. «Հայ վերաբնակները Ղարաբաղ են ներմուծել նաև Թուրքիայի և Պարսկաստանի այն տեղանունները, որտեղից նրանք եկել են: Խորհրդային և ադրբեջանական գիտնականների հետազոտությունների համաձայն թուրքերը այդ տարածքներում բնակվել են առնվազն մեր թվականության 1-2 ու դ. սկսած, ուստի հայկական մշակույթի ոչ մի հետք այնտեղ չի հայտնաբերվել: Այդպիսի հայկական «գտածոներ» սկսեցին ի հայտ գալ ադրբեջանական հողերի օկուպացիայից հետո: Դրանք գտնում են հենց իրենք, հայերը և արտասահմանցի ոչ մի լուրջ գիտնականի չի թույլատրվել մասնակցել «արցախյան Տիգրանակերտի» ուսումնասիրությանը»:

Այս մտքերը լավագույն արտացոլումն են ադրբեջանական գիտական հանրույթի ցայտնոտային վիճակի մեջ գտնվելու: Քաջածանոթ ենք՝ ադրբեջանական գիտությունը, որը սերտաճած է պետական մեքենային, մեկ անգամ չէ, որ անզոր փորձեր է կատարել հերքելու հայերի պատմական մեծ դերակատարումը Առաջավոր Ասիայում: Իսկ այժմ, Հաջիևան, փաստորեն ընդունում է, որ հին աշխարհի թերևս ամենահռչակավոր քաղաքներից մեկը՝ Սիլվանի կամ Դիարբեքիի Տիգրանակերտը հայերինն է եղել. ընդունել այդ փաստը և հերքել Բ.ա. 1-ին դ. հայկական աշխարհակալ պետության գոյության և դրա տարածական արեալի փաստը, մեղմ ասած անտրամաբանական է: Բացի այդ, հետաքրքիր է, թե ադրբեջանական այդ ո՞ր հետազոտություններով է բացահայտվել ադրբեջանցիների մ.թ. 1-ին դարից Տիգրանակերտում ապրելու փաստը: Հնագետը նաև շահարկում է օտար գիտնականների պեղումներին չմասնակցելու հարցը, ակնարկում՝ մասնակցողների անլրջության մասին: Այդպիսի ձևակերպումից առաջ, հնագետը լավ կլիներ ծանոթանար միջազգային իրավունքի հանրահռչակ նորմերին: Հարկ ենք համարում հստակ ընդգծել, որ ոչ պաշտոնական մակարդակով պեղումներին իրենց համերաշխությունն են հայտնել և հետազոտություններին բարձր գնահատական տվել Ֆլորենցիայի, Լեչեի, Սիլանի համալսարանները: Պեղումներին մասնակցել է նաև Լեչեի համալսարանի Հռոմի պատմության պրոֆեսոր, հայագետ Ջուստինո Տրախանան, ով կարևորել է Տիգրանակերտի հայտնագործումն ու հետազոտությունները՝ Ստրաբոնի «Աշխարհագրություն» կոթողային աշխատության դեռևս անհայտ մնացած ծալքերը լուսաբանելու գործում¹:

Այսպիսով տեսնում ենք, որ ադրբեջանական ևս մի ակադեմիական գիտնական կրկին անլուրջ ու անպատրաստ փորձ է անում կեղծելու պատմությունը, չանդրադառնալով և ոչ մի ձեռքբերման՝ հնագետը հերքում է այն ամենն ինչ կապված է Տիգրանակերտի հետ, փոխարենը՝ չառաջադրելով որևէ սեփական վարկած: Այս ամենին արշավախումբը պատասխանում է լայնածավալ ինտենսիվ հնագիտական հետազոտություններով և նորանոր ցնցող ձեռքբերումներով:

¹ **Giusto T.**, Roman Perceptions of Caucasian Albania, «Լեռնային Ղարաբաղի հանրապետության անցյալը, ներկան և ապագան», Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2008, էջ 226:

Այսպիսով, ավարտված համարելով հարևան երկրի ակադեմիական գիտնականների այն հրապարակումների քննությունը, որոնք վերագրվում են հակաքարոզչության առաջին փուլին՝ անցում կատարենք աղվանական կամ ալբանական Տիգրանակերտի մասին վարկածին, որը նույնիսկ որպես այդպիսին գոյություն ունենալու որևէ գիտական հիմք բացարձակապես չունի:

Հասկանալով, որ Տիգրանակերտի գյուտն այլևս իրողություն է և քամահրական ու ոչ լուրջ վերաբերմունքը նախ և առաջ սեփական լսարանի աչքում վարկաբեկում է ադրբեջանական գիտությունը՝ հարևան երկրի պատմահնագիտական դպրոցը՝ հանձինս հնագետ, պատմագիտության թեկնածու Մ. Խալիլովի, ձեռնամուխ եղավ Արցախի Տիգրանակերտի դեմ համեմատաբար «գիտական» հակաքարոզչության: Շուտով համացանցում լայն տարածում գտավ Խալիլովի «Աղվանական Տիգրանակերտի տեղայնացման մասին» ծավալուն հոդվածը, որում հնագետն օգտվել է անտիկ հունահռոմեական, հայ միջնադարյան և ժամանակակից հեղինակների աշխատանքներից, արշավախմբի հրապարակումներից¹: Սակայն հոդվածում նյութն ընտրովի է ներկայացված, բացակայում է հաղորդումների համակողմանի քննությունը: Խալիլովն իր հոդվածը սկսում է մայրաքաղաք Տիգրանակերտին վերաբերող Ստեփանոս Մալխասյանցի մի նկատառումից, որը ոչ մի աղբյուր չի կարող ունենալ Արցախի Տիգրանակերտի հետ: Ապա, շարադրելով բուն տեքստը, ներկայացնում է արշավախմբի ֆինանսավորումը, անդրադառնում քաղաքի մասին հայ հետազոտողների հայտարարություններին ու հարցազրույցներին: Հնագետն այնուհետև անցնում է հոդվածի հիմնական ուղղվածությանը՝ միանգամից առաջ տանելով աղվանական Տիգրանակերտի թեզը: Հղում կատարելով Մալխասյանցին ու Պատկանյանին, Խալիլովը ընթերցողին շփոթմունքի մեջ է գցում՝ փորձելով մայրաքաղաք Տիգրանակերտի մասին վկայությունները ներկայացնել որպես Արցախի Տիգրանակերտին վերաբերող, և ապացուցել, որ Շահբուլաղի տեղանքը չէր կարող Տիգրանակերտ կոչվել: Հատկանշական է այն, որ հոդվածում բավականաչափ հղված են հայ հեղինակներ, այսպես Խալիլովը գրում է. «Ալիշանը, Ջալալյանն ու Բարխուդարյանը 19-րդ դարում այցելելով Աղդամի մոտ գտնվող Տառնակուտ գյուղի մոտակայքի հին բնակատեղին, տեղայնացրել են Տիգրանակերտը հենց այդտեղ»: Այստեղ հարկ է նկատել, որ ադրբեջանցի հետազոտողն այդքան էլ քաջածանոթ չէ հայ մատենագրության դասականներին՝ Ղևոնդ Ալիշանը Հայաստանում երբեք չի եղել: Գրավոր սկզբնաղբյուրներից հայտնի է, որ Տիգրան Մեծը Տիգրանակերտներ կառուցել է Արցախի և Ուտիքի տարածքում, Գողթնում², իսկ ադրբեջանցիների պատկերացրած Աղվանքը ընդգրկում է նաև Արցախն ու Ուտիքը: Խալիլովը հենվում է Մալխասյանցի այն պնդման վրա³, որ Աղվանքում եղել է երկու Տիգրանակերտ, որոնցից մեկը գտնվում է Շամխոր գետի ափին, մյուսը՝ Տառնուտ գյուղից ոչ հեռու⁴: Այստեղ հնագետը հաշվի չի առնում այն փաստը, որ Տիգրան Մեծը, նման հելլենիստական աշխարհի բոլոր հայտնի արքաներին, իր անունով հիմնադրել է մի շարք այլ բնակավայրեր, ինչպես Մեծ Հայքում, այնպես էլ նրա

¹ Халилов М., О локализации албанского Тигранакерта, «IRS», 2007, с. 31-35.

² Հակոբյան Հ., Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը, «ՊԲՀ», թիվ 3, 2007, էջ 3-29:

³ Ցավոք Մալխասյանցն էլ չի հստակեցրել, որ միջնադարյան հայ աղբյուրները Աղվանքի տակ նկատի են առել հենց Արցախն ու Ուտիքը, մանրամասն տես Ուլուքբաջան Բ., Հյուսիս - արևելյան Հայաստանի նախամարզականական շրջանի վարչաքաղաքական վիճակի հարցի շուրջ, «ԲԵՀ», 1975, թիվ 2, էջ 149-164: Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451 թթ., ԲԵՀ, 1976, թիվ 2, էջ 77-95: Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и армянских источниках, Ереван, 1987, с. 109-142: Новосельцев А., К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в Античный период - К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинции Армении, Ереван, 1991, с. 7-15: Арутюнян Б., Административно-политическое состояние Северо-восточных областей царства Великой Армении в 387-451 гг. - К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинции Армении, с. 16-36.

⁴ Այդ տարածքներում երկու Տիգրանակերտների գոյության և հիշատակության մասին խոսում է նաև Մերնուրը, տես «История епископа Себеоса», прим. 140, էջ 167:

սահմաններից դուրս: Գրավոր սկզբնաղբյուրներից հայտնի է մայրաքաղաք Տիգրանակերտը՝ Թուրքիայի ներկայիս Սիլվան քաղաքի մոտակայքում, Տիգրանակերտներ՝ Մարդինի մոտ և Ջևանայում, Տիգրանավանը՝ Գողթնում, Մարաստանում, Տիգրանակունեն՝ Լիբանանում, Տիգրանակերտ անունով երեք քաղաքներ Արցախում և Ուտիքում¹: Ըստ Խալիլովի, եթե Տիգրանակերտ անունով քաղաք կար Աղվանքում, (որը Արցախի Տիգրանակերտը չէ) ապա անայսմանորեն դա պետք է ունենա բուն աղվանական ծագում: Փոխարենը հայտնաբերված քաղաքը ներկայացվում է որպես Անարիակուն, որի մասին հիշատակում է Ստրաբոնը՝ հին հունական էնիայի հարևանությամբ: Որո՞նք են այդ քաղաքները և որտե՞ղ է ներկայացված էնիան.... Խալիլովը լռում է: Անարիակա բնակավայրը, որն ի նկատի ունի Ստրաբոնը, չի տեղայնացված Մեծ Հայքում: Այն Ստրաբոնի XI, 7.1-ը մեկնաբանելիս պարզ կերպով պիտի դրվի նրանից դուրս. այն Արաքսից և հայկական նահանգ համարվող Փայտակարանից, էլ չսասած ավելի հյուսիս գտնվող Արցախից շատ ավելի հեռու և հարավ կարելի է տեղադրել: Ավելին, Անարիական մոտավորապես տեղայնացվում է Կասպից ծովի հարավային ավազանում, այսինքն հին Մեծ Մարաստանի սահմանի հյուսիսային կողմում՝ դեպի Կասպից ծովի հարավային ափերը: Անարիական Կուրի և Արաքսի միջագետքից շատ ու շատ հարավ պիտի գտնվի²: Ուղղակի ադրբեջանցի գինագետը որոշել է Մարաստանը տեղադրել նաև Արցախի տարածքում, ինչն ուղղակի ծիծաղելի է: Այստեղ գործ ունենք ադրբեջանական գիտական հանրույթի կողմից լայնորեն օգտագործվող մի էժանագին աճպարարության հետ, հեղինակը հղում է Ստրաբոն, սակայն վերջինիս հայտնի աշխատության այդ հատվածի քննությունը, միայն ու միայն երևան է հանում հետազոտողի անասելի անպատրաստությունն ու ասածը հիմնավորելու անկարողությունը³: Փաստորեն, ադրբեջանցի հետազոտողն ինքն իր լարած թակարդն ընկնելով, նույնիսկ ոչ մեծ հողվածում չի կարողանում կարմիր թելի նման տանել առաջարկված հակագիտական տեղանունը, և քաղաքը, որը մի տեղ անվանում է «աղվանական Տիգրանակերտ», փոքր ինչ ուշ անվանում է Անարիակուն.... Հետո, առանց նույնիսկ որևէ փորձ կատարելու ստուգաբանել այսպես կոչված «աղվանական Տիգրանակերտ» անվան ծագումը, հնագետը, իր գործն ավարտված, ապացուցված համարելով Տիգրանակերտի աղվանական ծագումը, հայ հնագետների՝ մեղադրում է առանց Ադրբեջանի համապատասխան գերատեսչության թույլտվության «օկուպացված» տարածքներում պեղումներ իրականացնելու մեջ և առանձնակի շեշտում է հայ ակադեմիական-գիտական շրջանակների անտարբերությունը, որի քննարկումը դուրս է սույն աշխատանքի հիմնական ուղղվածությունից: Խալիլովը նաև խոսում է արտասահմանյան գիտնականների՝ հետազոտություններին չմասնակցելու մասին, ինչի պատասխանը սույն աշխատանքի միջնամասում արդեն տվել ենք: Իր հողվածն ադրբեջանցի գիտնականն ավարտում է հռետորական հարցով. «Հայտնաբերված հնագիտական նյութերը վկայում են այն մասին, որ նորահայտ ամրոցը ըստ երևույթին կառուցվել է ավելի շուտ, քան քաղաքը: Այ դա իսկական սենսացիա է, որ ուղղակի պատասխանում է այն հարցին, թե՞ արդյոք այդ քաղաքը Տիգրանակերտի մնացորդն է, որն իբրև կառուցվել է հայ Տիգրան 2-րդ արքայի կողմից»: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Արցախի Տիգրանակերտի տարածքում հնագիտորեն չի վավերացվել Ք.ա. 1-ին դ. ավելի վաղ կառուցված շինության մնացորդներ, բացի այդ տարօրինակ է այն, որ մարդն, ով իրեն հնագետ է հորջորջում, վերը քննված իր գործընկերների պես, բացահայտ խուսափում է շերտագրական նյութի ներկայացումից: Եթե Տիգրան Մեծը Ք.ա. 1-ին դ. 1-ին քառորդում այդ տեղանքում կառուցել է մի զորեղ բերդաքաղաք, ապա դա չի

¹ Տե՛ս **Հակոբյան Գ.**:

² Բանավոր արժեքավոր հաղորդումների համար շնորհակալություն ենք հայտնում պ.գ.թ. Գ. Հակոբյանին:

³ **Страбон**, География, Ленинград, 1964, с. 481, (книга XI, глава VII, § 1).

նշանակում, որ դրանից առաջ այդտեղ չէր կարող որևէ կառույց լինել, կամ դրանից հետո՝ ընդհուպ մինչև նոր ժամանակները:

Խալիլովի վերոբնյալ հոդվածը, սակայն, ունի մի շատ ուշագրավ կողմ, բանն այն է, որ ադրբեջանական ակադեմիական շրջանակներն արդեն ընդունում են, որ հայ հնագետները հայտնաբերել են Տիգրանի ժամանակների մի քաղաք, «մենք արդեն հնագետներ ենք, ոչ թե հին հայկական հնագետներ, ինչպես գրում էին 2006 թ.: Մենք արդեն պեղել գիտենք, քաղաք գտնել էլ կարող ենք, որն իրենք չեն էլ տեսել՝ տասնյակ տարիներ այնտեղ աշխատելով: Միակ կասկածն այն է, որ դա ոնց որ թե Տիգրանակերտը չէ...»¹, կասկած, որը սկզբնական շրջանում առկա էր նաև հայ մի շարք քաղաքական գործիչների և հետազոտողների մոտ, բայց և որը շատ շուտով, շնորհիվ արշավախմբի անխոնջ ու համառ աշխատանքի, հոդս ցնդեց:

Արդյունքում այսօր Տիգրանակերտում ունենք այն ինչ ունենք, մի անտիկ-հելլենիստական հզոր բերդաքաղաք՝ հիմնադրված մեր մեծագույն տիրակալի կողմից, Տիգրանակերտի հնագիտական թանգարանում դրված տպավորությունների մի շարք լրացված զրանցամատյաններ՝ լեցուն անասելի հպարտության մասին խոստովանություններով, հպարտություն.... մարդիկ գալով, տեսնելով նախ և առաջ հպարտությամբ են լցվում որ հայ են, ազատագրված հայրենիք ունեն ու նման մշակութային ժառանգություն: Սա է մեր աշխատանքի մեծագույն ձեռքբերումը և այն շարժիչ ոգին, որ մեզ մղում է նորանոր բացահայտումների:

ТИГРАНАКЕРТ АРЦАХА И НЕКОТОРЫЕ ПРОЯВЛЕНИЯ АЗЕРБАЙДЖАНСКОЙ АНТИПРОПАГАНДЫ

Геворг Гукасян

В 2005 году археологическая экспедиция Института археологии и этнографии НАН РА на освобожденных территориях Арцаха обнаружила Арцахский Тигранакерт, построенный в I веке до н.э. Тиграном Великим. Этот факт не мог остаться вне поля зрения политиков Азербайджана. В итоге началась антипропаганда археологической экспедиции, которую можно разделить на 2 этапа – от сарказма и отрицания фактов до их принятия и присвоения. Второй этап включает в себя так называемый тезис «Агванского Тигранакерта», не имеющий никакой научной основы для существования.

TIGRANAKERT OF ARTSAKH AND AZERBAIJANI ANTIPROPAGANDA

Gevorg Ghukasyan

In 2005 the archeological expedition of Artsakh NAS RA in the liberated areas of Artsakh found the ancient city Tigranakert in Artsakh, which was founded by Tigran the Great in the first quarter of the 1st century BC. This fact couldn't be overshoot by the national and political attention of Azerbaijani people.

As a result an intense antipropaganda begun against the archeological expedition of Artsakh and Tigranakert, which can be divided into two phases. The first one includes neglection, disparagement, as well as adoption and own interpretation of the facts.

The second phase includes the so-called version of «Albanian Tigranakert», which should not exist as a hypothesis.

¹ Պետրոսյան Յ., էջ 149-150:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱՐԻԶԻ ՎԵՅԱԺՈՂՈՎՈՒՄ. ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Դավիթ Ջուլհակյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրատուրա

Գիտ. դեկ.՝ պ.գ.դ., պրոֆ. Զ. Հովհաննիսյան

Էլփոստ՝ davit.julhakyany@rambler.ru

Հայաստանի անկախությունից հետո Հայաստանի անկախության և պետականության վերականգնումից հետո Հայկական հարցը թևակոխեց պատմադիվանագիտական որակապես նոր փուլ՝ միջպետական հարաբերությունների համակարգում շուրջ չորս տասնամյակ իրավաքաղաքական սոսկ օբյեկտ լինելուց այն վերածվեց սուբյեկտի:

1918 թ. նոյեմբերին, Գերմանիայի պարտությունից հետո, հաղթանակած Անտանտի երկրները, պարտված երկրների հետ հաշտության պայմանագիր կնքելու և նոր աշխարհակարգ ձևավորելու համար 1919 թ. հունվարի 18-ին Փարիզում հրավիրեցին վեհաժողով:

ՀՀ աչքի ընկնող պետական գործիչները խնամքով նախապատրաստվում էին Փարիզի հաշտության (խաղաղության) վեհաժողովին՝ դիվանագիտական այդ լաբիրինթոսից հաջողությամբ դուրս գալու համար: Դեռևս աշխարհամարտի ժամանակ Եվրոպայում էր արևմտահայերից կազմված Ազգային պատվիրակությունը՝ եգիպտահայ հայտնի հասարակական-քաղաքական գործիչ մեծահարուստ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: ՀՀ կառավարության 1918 թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ կազմված պատվիրակությունը, Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ, անդամությամբ՝ Հանո Օհանջանյանի ու Միքայել Պապաջանյանի փետրվարի 4-ին հասավ Փարիզ: Փարիզի հաշտության (խաղաղության) վեհաժողովը բացվեց 1919 թ. հունվարի 18-ին, որին մասնակցում էին 27 երկրների 1000 պատգամավոր:

Հայկական պատվիրակությունների ներկայությունը Փարիզում առարկայորեն կարելի է համարել օրինաչափ ու արդարացված, եթե, իհարկե, հենց սկզբից գործեին համերաշխ ու համագործակցված: Եթե ազգային պատվիրակությունը հավակնում էր ստեղծել Միացյալ և անկախ Հայաստան, որի բաղկացուցիչ մասը կազմելու էր Հայաստանի Հանրապետությունը կամ ինչպես արևմտահայերն էին անվանում «Արարատյան Հանրապետությունը», ապա ՀՀ պատվիրակությունը ելնելով կոնկրետ միջազգային իրավական վիճակից առաջարկում էր հայոց ընդարձակ պետություն ստեղծելու համար հենակետ դարձնել գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը: Թերևս ավելի իրատեսական էր Ահարոնյանի ղեկավարած պատվիրակության տեսակետը և քաղաքական-դիվանագիտական մարտավարությունը: Նախ՝ արդեն վերականգնվել էր հայկական պետականությունը, որը կապեր էր հաստատել հարևան երկրների հետ, գտնվում էր «ավագ» դաշնակիցների կողմից դե-ֆակտո (փաստացի) ճանաչման նախօրյակին և կարող էր ներկայացնել ողջ հայության շահերը, ամայացված Արևմտյան Հայաստանը միացնել Հայաստանի Հանրապետությանը: Իսկ Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակությունն իր պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների ընթացքում առարկայորեն աջակցելու էին Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը:

Սակայն, հայկական երկու պատվիրակությունները գործում էին վերին աստիճանի անհամերաշխ ու անմիաբան, միմյանց ներկայացնում են զանազան անհիմն մեղադրանքներ, թեպետ երկու պատվիրակության բոլոր անդամները անվերապահորեն պաշտպանում էին հայ ժողովրդի շահերը և ձգտում էին լուծել Հայկական հարցը: Ի վերջո, երկու պատվիրակությունների ղեկավարներ Պողոս Նուբարը և Ավետիս Ահարոնյանը միաբանվեցին և 1919 թ. փետրվարի 10-ին երկուսով

ներկայացան Ֆրանսիայի արտագործնախարար Պիշոնին: Վերջինս խորհուրդ տվեց համատեղ հուշագիր ներկայացնել խորհրդաժողովին:

1919 թ. փետրվարի 12-ին խորհրդաժողովին ներկայացրեց «Հայկական պահանջների հուշագիրը»: Այն պահանջում էր դատապարտել արևմտահայության նկատմամբ երիտթուրքերի կատարած ոճրագործությունը, պատժել հանցագործներին, հատուցել պատճառած վնասը, ստեղծել հայկական միասնական պետություն, որի մեջ պիտի մտնեին Արևմտյան Հայաստանը (Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Խարբեռլի, Սվասի, Էրզրումի, Տրապիզոնի վիլայեթները), Կիլիկիան՝ Մարաշի, Սսի, Ջեբել-Բեշիքերթի և Ադանայի սանջակներով ու Ալեքսանդրեթով, Արևելյան Հայաստանը՝ Երևանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավ-արևմտյան մասը, Կարսի մարզը՝ բացի Արդահանից հյուսիս ընկած շրջաններից: Դա կազմում էր մոտ 300.000 քառ. կմ. տարածք¹:

Փարիզում Անգլիայի ներկայացուցիչ Վանսիտարտը հայ պատվիրակություններին աշխատում էր համոզել նրանց հրաժարվել Լազիստանից և բավականաճալ Տրապիզոնով, ընդ որում՝ վերջինս չէր թաքցնում, որ Անգլիան ծրագրում էր ստեղծել «Բաթունի չեզոք պետությունը»: Ահարոնյանը հիմնավորեց, որ «Մենք շատ դեմ չէինք Տրապիզոնով միայն բավականաճալու առաջարկին, բայց Տրապիզոնի շուրջը հույների բարձրացրած աղմուկը և ֆրանսիացիների չկամությունը մեզ վախեցնում էր, թե մի գուցե Լազիստանից (Ռիզե-Աֆինե) մենք հրաժարվելով միաժամանակ էլ Տրապիզոնը մեզ չտան և մենք մնանք առանց ելքի: Պահանջելով և Տրապիզոնը և Ռիզե ու Աֆինե, մենք հույս ունենք ստանալ մեկն ու մեկը: Վանսիտարտը հրաժարվելով իր առաջարկից «հիշեցրեց» Ահարոնյանին, որ «լազերը վրացական ծագում ունեն... և վրացիք սաստկորեն պահանջում են այն»²: Իր հերթին ֆրանսիացի Կաներերը մի կողմից փորձելով անհիմն համարել Ահարոնյանի միանգամայն հիմնավորված պահանջը, մյուս կողմից ցուցաբերելով իր անգիտությունը նշում էր, թե Շվեյցարիան ապրում է առանց ծովի, իսկ Դուք (հայերը-Դ. Ջ.) երբեք ծով չեք ունեցել³: «Նախ՝ Շվեյցարիա Ասիայում,- ասաց Ահարոնյանը,- հնարավոր չէ, շրջապատված այնպիսի տարրերով, որ մենք ունենանք որպես հարևան: Երկրորդ՝ անգամ Շվեյցարիան շրջապատված այնքան բարեհաջող պայմաններով, այսօր այնուամենայնիվ, ձգտում է տնտեսական ելք ունենալ դեպի ծովը»⁴:

Հայաստանի ասհմանները որոշող հանձնաժողովի հետ բանակցելուց հետո հայոց պատվիրակությունը հրավիրվեց Իտալական Սան-Ռեմո քաղաք:

«Գերագույն խորհուրդը,- գրում էր Ավ. Ահարոնյանը,- Սան Ռեմո հավաքված օրից գրեթե մենակ թուրքական և հայկական հարցերով է զբաղված»⁵: Պարզ դարձավ նաև, որ «Էրզրումը մեզից ուզում են խլեն...որովիետև մենք, հայերս հարկավոր ուժ չունենք այն գրավելու թուրքերի ձեռքից և մանավանդ պահելու»⁶- հիշում է Ա. Ահարոնյանը: Փարիզի հաշտության խորհրդաժողովը 1920 թ. հունվարի 19-ին ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ միջազգային հեղինակության բարձրացման ու դիրքերի ամրապնդման վառ վկայությունն էր, որ ԱՄՆ 1920 թ. ապրիլին նույնպես de facto (փաստացի - Դ. Ջ.) ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Հայոց պատվիրակներին հենց սկզբից սպասում էր տիպիկ անակնկալ ու բարդ իրավիճակ Էրզրումի առնչությամբ:

Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի բարձրաստիճան պետական այրերը և դիվանագետները ցանկանում էին վերջնականապես պարզել, թե ինչպես են հայ

¹ Արզումանյան Մ., Արևմտահայերի վերածնունդ, Երևան, 1973, էջ 227:

² Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (Քաղաքական օրագիր), Բոստոն, 1943, էջ 45:

³ Նույն տեղում, էջ 45:

⁴ Նույն տեղում, էջ 45-46:

⁵ Նույն տեղում, էջ 71:

⁶ Նույն տեղում, էջ 71:

պատվիրակները պատկերացնում հայկական հարցի լուծումը: Ուստի հայկական պատվիրակություններն առանձին-առանձին հրավիրվեցին խորհրդաժողովին:

Հայկական երկու պատվիրակությունների ղեկավարներից Գերագույն խորհրդի նիստին առաջինը մասնակցեց Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ 1920 թ. ապրիլի 22-ին: Իտալիայի վարչապետ Նիտտին համառոտակի նշեց հետևյալը. «Պատրա՛ստ է Հայաստանը պաշտպանելու իր նոր սահմանները և ցանկանում է նա, որպեսզի Երզրունը ընդգրկվի այդ սահմաններում»: «Այնուհետև, կարծու՛մ է արդյոք Պողոս Նուբար փաշան, որ Հայաստանն ի վիճակի կլինի վերակառուցել իր բանակը և միջոցառումներ ձեռնարկել նոր պետության ապահովության համար»¹: Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջը առաջադրեց մեկ այլ հարց «Կարծում է փաշան, որ հայերն ի վիճակի կլինեն գրավել Երզրունը, որն այժմ թուրքերի տիրապետության տակ է, և հաստատվել այդ ամրոցում»²: Պողոս Նուբար փաշան ասաց, որ ինքը կասկած չունի, որ հայերը կարող են հաստատվել Երզրունում և այնտեղ ամրապնդել իրենց դիրքերը: Նրանք արդեն իսկ երևանում ունեն գործամասեր, որոնք կռվել են ողջ պատերազմի ընթացքում և արդարացրել իրենց իբրև գերազանց զինվորներ: Նրանք լիովին պատրաստ են կրկին մարտնչել և գրավել Երզրունը, որի ներառումը խիստ էական է Հայաստանի նոր հանրապետության համար: Հայերն արդեն ունեն 15.000-ից ոչ պակաս բանակ և կարող են առանց դժվարության ոտքի հանել ևս 40.000, եթե դաշնակիցները պատրաստ են ապահովել նրանց զինամթերքով ու հանդերձանքով:

Դրանից հետո Գերագույն խորհուրդը որոշեց թուրքական սահմանների և հատկապես հայկական սահմանների հարցի հետագա քննարկումը հետաձգել մինչև հաջորդ օրվա ժամը 11-ը³, և այս անգամ հրավիրեց Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանին: Գերագույն խորհրդին դա անհրաժեշտ էր Հայաստանի հիմնախնդրում վերջնական կողմնորոշման համար: Գերագույն խորհրդի անունից Նիտտին դիմում է Ահարոնյանին հետևյալ հարցով՝ ենթադրենք, թե դաշնակից տերությունները պատրաստ են սպաներ, զինամթերք և հանդերձանք մատակարարել հայկական բանակներին, այդ բանակներն ի վիճակի կլինեն թուրքերին Երզրունից վտարել և իրենք հաստատվել այդ ամրոցում, ինչպես նաև ապահովել իրենց նոր սահմանները: Ահարոնյանի վկայությամբ Նիտտին հիշեցրեց, որ այնտեղ Մուստաֆա Քեմալը 14 հազար զորք է կենտրոնացրել ու այդ առնչությամբ «որոնք կլինեին Հայաստանի շահերին համապատասխան սահմանները, ո՛րն է ամենահարմար սահմանագիծը, որը կարելի է անցկացնել»⁴: Ահարոնյանի կարծիքով Նիտտիի հարցադրումը կարելի է բաժանել երկու մասի: Առաջին՝ թուրքերի դրությունը և նրանց ուժերի տեղադրումը, և, երկրորդ՝ հայկական բանակի չափը և պատրաստվածությունը: Հայկական շտաբային սպաները զեկուցում են, - ասաց Ահարոնյանը, - որ Մուստաֆա Քեմալի հրամանատարության ներքո գտնվող զորքերը իրականում շատ ավելի վատորակ են, քան պատկերացվում է: Ավելին, այս զորքերը, փոքր բացառությամբ, կանոնավոր զորքեր չեն: Ահարոնյանը ասաց, որ հայերը ունեն 20-25 հազարանոց մի բանակ, բայց զորքին անհրաժեշտ են զինամթերք ու հանդերձանք:

Սան-Ռեմոյի խորհրդաժողովը որոշեց դիմել Վիլսոնին Հայաստանի մանդատը ընդունելու մասին: Սակայն 1920 թ. մայիսի 29-ին սենատի արտաքին գործերի հանձնաժողովը 11 ձայնով ընդդեմ 4-ի, իսկ հունիսի 1-ին սենատը 52 դեմով և 23

¹ Կարապետյան Հ., Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում, Երևան, 2004, էջ 34:

² «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», 2. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 651:

³ Նույն տեղում, էջ 652-653:

⁴ Նույն տեղում, էջ 655:

կողմով մերժեցին Վիլսոնի առաջարկը՝ Հայաստանի մանդատն ընդունելու վերաբերյալ¹:

Դաշնակից հաղթող տերությունները 1920 թ. օգոստոսի 10-ին պարտված Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագիր ստորագրելով ավարտեցին Եվրոպայում Վերսալյան համակարգի կազմավորման գործընթացը:

Մեծ դժվարությամբ ծնվեց Սևրի դաշնագրի երրորդ մասի 6-րդ բաժինը, որը կրում է «Հայաստան» վերնագիրը, իր պարունակած 88-93 հոդվածներով: Սևրի պայմանագիրը բավական շատ հարցեր է ընդգրկում և բաղկացած է 13 մաս կազմող 433 հոդվածներից²:

«Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է (ասված է Սևրի դաշնագրի 88-րդ հոդվածում) Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն»³:

«Թուրքիան և Հայաստանը, ինչպես և բարձր պայմանավորվող կողմերը, նշված է 89-րդ հոդվածում,- համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի Հայաստանի միջև սահմանագատունը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազանկանացման վերաբերյալ»⁴:

«Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից...Եթե 89-րդ հոդվածում նշված տարածքի մի մասը հանձնվի Հայաստանին, ապա Սահմանագծման հանձնաժողովը, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք անսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը»⁵: Սևրի դաշնագիրը ստորագրած տերությունները 92-րդ հոդվածով «Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ»⁶:

Ուշագրավ է 93-րդ հոդվածը, որով «Հայաստանն ընդունում է, համաձայնվելով դրանք մտցնել Գլխավոր տերությունների հետ պայմանագրի մեջ, այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզվի և կրոնի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից: Հայաստանը նմանապես համաձայնվում է Գլխավոր տերությունների հետ պայմանագրի մեջ մտցնել այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն տրանզիտի ազատությունը և այլ ազգերի առևտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար»⁷: Հայաստանին ու հայերին մասամբ կամ անուղղակիորեն վերաբերող 125-րդ, 142-րդ, 144-րդ, 277-րդ, 349-րդ, 351-րդ, 352-րդ⁸ հոդվածները մնացին թղթի վրա, որպես «մեռած տառ»:

¹ Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին, Երևան, 2003, էջ 313:

² Կարապետյան Յ., էջ 51:

³ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», էջ 676:

⁴ Նույն տեղում, էջ 676:

⁵ Նույն տեղում, էջ 676-677:

⁶ Նույն տեղում, էջ 677:

⁷ Նույն տեղում, էջ 677:

⁸ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», էջ 672-683:

1920 թ. նոյեմբերի 22-ին Վուդրո Վիլսոնը՝ ԱՄՆ-ի նախագահը հրապարակեց իր իրավարար վճիռը, որի համաձայն Հայաստանը պետք ստանար Վանի և Բիթլիսի վիլայեթների երկու երրորդը, Երզրունի գրեթե ողջ վիլայեթը և Տրապիզոնի վիլայեթի մեծ մասը՝ նավահանգստի հետ միասին: Ընդհանուր առմամբ՝ այդ տարածքը կազմում էր մոտ 100 հազար քառ. կմ. տարածք, որը միավորվում էր Հայաստանի Հանրապետության մոտ 60 հազար քառ. կմ տարածքին¹:

Սևրի դաշնագիրը ստորագրած պետություններից և ոչ մեկը՝ ընդ որում և՛ ոչ հաղթողները, և՛ ոչ էլ պարտվողները, չվավերացրին այդ կարևորագույն փաստաթուղթը, իսկ ՀՀ ի վիճակի չէր պարտադրել նրանց վավերացնելու դաշնագիրը, որովհետև դրա իրագործման համար նա չունեւր բավարար ներուժ, նվազագույն էին, զրոյական նրա հնարավորությունները: Դաշնակից տերությունների միջև եղած ակնհայտ հակասությունները և հակամարտությունները զգալիորեն խոչընդոտեցին պայմանագրի վավերացմանը, այսինքն՝ նրանք լիովին նահանջեցին նախկինում ունեցած իրենց հայանպաստ կառուցողական դիրքերից: Հատկանշական է, որ դաշնակիցները Սևրի պայմանագիրը ստորագրել էին սուլթանական կառավարության հետ, որը լիովին կախված էր և լիովին ենթարկվում էր Անտանտին՝ վերջինս 1920 թ. մարտի 16-ին ռազմակալել էր Ստամբուլը և պարտադրել սուլթանական կառավարությանը ստորագրելու դաշնագիրը: Մինչդեռ Թուրքիայում դրության փաստացի տերերը դարձան քեմալականները: Երկրում ստեղծված յուրահատուկ երկիշխանությունը շուտով ավարտվեց քեմալականների հաղթանակով, որոնք հենց սկզբից չճանաչեցին Սևրի դաշնագիրը: Իր դերը բացասական առումով խաղաց պայմանագրի ստորագրման ձգձգումը, որի ընթացքում քեմալականներն ամրապնդում էին իրենց դիրքերը՝ դառնալով իրական իշխանություն: Հատկանշական է, որ Սևրի դաշնագիրը չէր նախատեսում թուրքական պետության վերացում, մինչդեռ Քեմալ Աթաթուրքը և նրա շրջապատը պատերազմ սանձազերծելով ՀՀ դեմ առաջնային էին համարում հայոց ազգային պետության կործանումը: Թուրք-հայկական պատերազմը սկսվեց Սևրի դաշնագիրը կնքելուց անմիջապես հետո՝ 1920 թ. սեպտեմբերին սկսվեց ու ավարտվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլի՝ Հայաստանի համար ծանր ու ճակատագրական պայմանագրով, պարտված հայկական կառավարությունը բազում ծանրագույն կետերի հետ պարտադրված հրաժարվեց Սևրի դաշնագրից: Սևրի պայմանագիրն անիրագործելի էր: Այն ստորագրվեց Փարիզի վեհաժողովը հրավիրելուց մեկուկես տարի անց: Այդ ընթացքում քաղաքական ուժերի վերափոխումը ծառայեց Թուրքիայի շահերին:

Այսպիսով, տերությունները հրաժարվեցին Թուրքիայի ասիական հատվածը բաժանելու իրենց ծրագրերից՝ աշխարհում ստեղծված քաղաքական նոր պայմանների հրամայականով և խաչ քաշեցին արդեն ստորագրված Սևրի պայմանագրի վրա:

АРМЯНСКИЙ ВОПРОС НА КОНФЕРЕНЦИИ ПАРИЖА: СЕВРСКИЙ ДОГОВОР

Давид Джулакян

1920 год стал важнейшим для решения Армянского вопроса. После Первой мировой войны страны-победительницы включили Армянский вопрос в переговоры с Турцией. Воспользовавшись благоприятной ситуацией, Армения отправила свою делегацию на предстоящие переговоры, в результате которых был заключен Севрский договор, согласно которому Армянский вопрос был решен. Однако Севрский договор так и остался на бумаге.

¹ Կարապետյան Գ., էջ 9-10:

ARMENIAN QUESTION AT PARIS SUMMIT: THE TREATY OF SEVRES

Davit Julhakyan

1920 was radical for the solution of Armenian Question. After the World War the First the winning countries included the Armenian Question in the agenda negotiations with Turkey and in the process of signing a contract with the latter. Taking advantage of the situation the Republic of Armenia sent its delegation to take part in negotiations between the winning countries and Turkey. As a result the treaty of Sevres was signed, by which Armenian Question was solved. However, the treaty of Sevres remained unrealized.

**ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹԵՄԱՏԻԿ ԵՐԳԵՐԻ ԲՈՎԱՆՂԱԿԱՅԻՆ ՈՒՂՂԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՐԺԵՔԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Էդգար Էլբակյան

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրանտ

Էլփոստ՝ elbakyan.edgar@gmail.com

Յիշատակ արդարոց աւրինութեամբ եղիցի:

«Արցախյան պատերազմի թեմատիկ երգեր» ընդհանուր եզրույթի տակ հասկացվում են Արցախյան շարժման սկզբից¹ և գերազանցապես ռազմական գործողությունների թեժացման շրջանից ցայսօր գրված երգերը, որոնք բովանդակային և գաղափարական առումով նվիրված են Արցախյան շարժմանը, դրա պատմությանը, Արցախյան պատերազմին ընդհանրապես և առանձին ռազմական գործողություններին՝ մասնավորապես, Արցախ աշխարհին ու նրա զարթոնքին, ինչպես նաև Արցախյան պատերազմին իրենց կյանքը պատարագած, զոհված և կենդանի հերոսներին:

Հարցի ուսումնասիրությունն ունի տեսակիրառական հստակ նշանակություն: Սեզանում ռազմի և զինվորի երգերի մասին հրապարակումներն ունեն գերազանցապես երգարանային բնույթ², ըստ այդմ սահմանափակվում են միայն երգերի բառերով, երբեմն-երբեմն ձայնանիշներով և ծանոթագրական բնույթի առանձին տեղեկություններով, որոնք, բավարար չեն գիտական մեթոդին համապատասխան հասնելու ռազմի և զինվորի երգերի տեսական քննությանն ու գիտական ճանաչողությանը: Նշյալ ասպարեզում բացառություն է կազմում թերևս միայն Ա. Ս. Ղազիյանի աշխատասիրությամբ 1989 թ. հրատարակված «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր» աշխատությունը³: Գրքի՝ հիսուն էջից բաղկացած ներածությունը, ինչպես նաև բնագրերին հաջորդող գրեթե հարյուր էջանոց ծանոթագրությունները ընդհանուր տեսական հանրակարգայնացման են ենթարկում միջնադարից մինչև սովետական շրջանը գրված և՛ երգվող ռազմի, և՛ զինվորի երգերը ներառելով նաև արևմտահայոց ազգային-ազատագրական պայքարի և ֆիդայական (հայրուկի) երգերը, որոնք այդ շրջանում տակավին երգվում էին թե՛ սփյուռքյան գաղթօջախներում, և թե՛ մայր Հայրենիքում: Նշված աշխատությունը լույս է տեսել խորհրդային շրջանում՝ 1989 թ., ուստի, բնականաբար, նրա ուսումնասիրության շրջանակներից դուրս են մնացել ոչ այնքան հեռավոր ապագայում գրվելիք Արցախյան պատերազմի թեմատիկ երգերը: Այսբանով իսկ՝ խիստ կարևորվում են նշված կատեգորիայի գիտական քննությունն ու տեսական հանրակարգայնացումը:

¹ Որպես դրա թվական տվյալ դեպքում համարել 1988 թ.:

² Սույն հոդվածի շրջանակներում հիշատակվածներից զատ՝ տե՛ս «Ազգային հայրենասիրական եւ յեղափոխական նոր երգարան», Պէրոութ, 2004: **Սասունցի Ռազմար**, Անցնինք Սասուն, մտնինք Վան, Երևան, 2009: «Արյան ձայներ» Թիֆլիս, 1906: **Ֆահրատ**, Երգիչ Ֆահրատի ողբերն ու հառաչները կամ նորա բեկբեկ քնարի տխուր արծականքը, Ալեքսանդրապոլ, 1907: Վազգէն Երգարան, հաւաքեց Տ. Տերոյեան (Վազգէն), Պօսքըն, 1901:

³ Տե՛ս Ղազիյան Ա.Ս. «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր», Երևան, 1989:

Մեր աշխատանքն ամփոփելու շրջանում հաճելիորեն զարմացանք հայտնաբերելով սփյուռքահայ երաժշտագետ Գրիգոր Փիտեմեանի «Հայ յեղափոխական երգերուն տեղը Հայ երաժշտութեան պատմութեան մէջ» (Նիւ Եորք, 1998) աշխատությունը: Հեղինակը տեսական, ի մասնավորի՝ երաժշտագիտական, համակողմանի վերլուծության է ենթարկում ռազմի և զինվորի երգերը՝ անդրադառնալով նաև դրանց առաջացման պատմական համատեքստին: Արցախյան պատերազմի թեմատիկ երգերի պարագայում, սակայն, հեղինակը սահմանափակվում է միայն 4 երգերի բնագրերի շարադրմամբ՝ առանց որոշակի վերլուծության: Հեղինակը նաև համոզմունք է հայտնում, որ Հայաստանի Հանրապետության և Հայոց Բանակի ստեղծման կապակցությամբ՝ հեղափոխական երգերն իրենց տեղը կզիջեն «քայլերգի երաժշտատեսակին» (էջ 127):

Հարցի ուսումնասիրության կիրառական նշանակությունը սերտորեն կապված է արդի սոցիալ-հոգեբանական և պատմաքաղաքական իրողությունների, ինչպես նաև քննվող երգերի կիրառական նշանակության և կենցաղավարման առանձնահատկությունների հետ: Այդ երգերն արդեն իսկ իրենց ուրույն տեղն ունեն ոչ միայն առանձին կատարողների և խմբերի ծայնարարաններում, այլև ժողովրդի, ի մասնավոր՝ երիտասարդության շուրթերին: Երգերի նման լայն տարածվածության պայմաններում անհարկի և ոչ բնական իմաստային և բնագրային շեղումներից խուսափելու, ինչպես նաև երգերի ճշմարտացի վերաիմաստավորումն ապահովելու համար անհրաժեշտ է ոչ միայն դրանց տեքստերը գրի առնել երգարաններում, այլև տալ այդ երգերի գիտական քննությունը և մեկնությունը¹:

Աշխատանքը, հարկավ, ունի նաև սկզբնաղբյուրի և դաստիարակչական նշանակություն, քանզի ապագա ազգագրագետի և բանահավաքի համար պարզագույն պատկերացում է ձևավորում խնդրո առարկա հարցի կապակցությամբ՝ գրված ժամանակակցի և երևույթների անմիջական կրողի գրչով, իսկ ընթերցող լայն շրջանակների համար՝ նույնպիսի պատկերացում և արժեքային կողմնորոշում՝ առհասարակ:

Արցախյան պատերազմի թեմատիկ երգերն ըստ իրենց բովանդակային ուղղվածության կարելի է պայմանականորեն բաժանել երեք հիմնական խմբի: *Առաջին* խմբում բուն Արցախ աշխարհին, նրա առանձին շրջաններին նվիրված երգերն են՝ գրված պատերազմական միտմամբ, երկրորդում՝ ընդհանուր բնույթի պատերազմական երգերը՝ մարտակոչեր, պատմողական և զնահատողական բնույթի երգեր, քայլերգեր, իսկ երրորդ խմբում՝ հերոսներին նվիրված երգեր՝ ներառմամբ առանձին ազատամարտիկների, առանձին ջոկատների, ինչպես նաև արցախյան ֆիդայու ընդհանրական կերպարին նվիրված երգեր:

Առաջին խմբի երգերը համեմատաբար սակավ են Արցախյան պատերազմի թեմատիկ երգերի ընդհանուր համակարգում: Պատճառները թերևս խորքային են և հիմնականում կրում են էթնոհոգեբանական բնույթ՝ կապված Արցախի և մասնավորապես՝ նախկին ԼՂԻՄ-ին հարակից ազատագրված տարածքների՝ որպես հայրենիքի մի մասի թերի ընկալման հետ²:

Այս խմբի մեջ մտնող երգերը հիմնականում նվիրված են ճակատային այն միջնաբերդերին, որոնց ազատագրումն ուներ ռազմավարական կարևոր նշանակություն, և որոնց համար մղվող մարտերն առավել քան թեժ էին, իսկ որոշների պարագայում, ցավոք, ի վերջո ապարդյուն: Կապված հենց այս հանգամանքի հետ՝ տվյալ երգերում քնարականությունն ու վիպականությունը հաճախ մեկտեղվում են, իսկ գովերգվող բնակավայրը անձնավորվում է՝ որպես հերոս: Վերջինս ազատամարտիկների հետ համահավասար կրում է պատերազմի ծանրությունն ու նրանց

¹ Երբեմն պատահում են այնպիսի զավեշտալի և ցավալի դեպքեր, որ դիցուք՝ արցախյան պատերազմի հերոս Պետոյին (Պետրոս Արշալույսի Ղևոնդյան 30.1.1964 - 14.2.1994) նվիրված հանդեսի ժամանակ երիտասարդների կողմից խմբակային ձևով կատարվում է Պետոյին (Ալեքսանդր Պետրոսյան 1870 - 23.6.1896) նվիրված Ավետիս Ահարոնյանի հայտնի «Գարահիսար» երգը (տես http://www.youtube.com/watch?v=Q_VlyYeB09g): Կամ նույն այդ Գարահիսարը շփոթվում է հայոց Սեբաստիայի Շապին-Գարահիսար բնակավայրի հետ, մինչդեռ խոսքը Վանի Գարահիսար լեռան մասին է, որտեղ 1896 թ. հունիսին օրհասական կռիվներ են ընթացել հեռացող հայ ֆիդայիների և քուրդ ու թուրք ուխտարուժ գործի միջև: Այսինքն՝ ակնհայտ է, որ կատարողների մեծ մասին արհեստավարժ, թե սիրողական, անհայտ է երգերի տեսական-պատմական համատեքստը, տվյալ դեպքում՝ արբուլիամիդյան ջարդեր-Վանի միասնական ինքնապաշտպանություն-ֆիդայիների նահանջ դեպի պարսկական սահման-, Վանի Մեծ կռիվ-հանաստրի արշավանք և այլն:

² Հայաստանին՝ որպես ամբողջական հայրենիքին, և նրա առանձին շրջաններին նվիրված երգերի շարքում Արցախին նվիրված երգերի տեսակարար կշիռը փոքր է՝ անգամ բաղդատմամբ ներկայումս կորուսյալ Արևմտյան Հայաստանին նվիրված նոր շրջանի երգերի հետ: Այս բացը լրացնելու առումով խիստ կարևոր նշանակություն ունեցան «Կամք» և «Արցախակերտում» հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ անցկացված «Ազատագրված հայրենիքն ին՝ հոգու հայելիով» խորագրով գրական ստեղծագործությունների մրցույթը և ի հետևանս դրա տպագրված գրական ժողովածուն (տես <http://www.armgrak.info/node/905>):

հետ միասին պիտի քաղի փառքի դափնիները: Այսպես օրինակ՝ Գետաշենին նվիրված հայտնի երգի մեջ¹ ասվում է.

*Դու պիտի դիմանաս ու կանգուն մնաս,
Հակառակ թշնամուդ պիտի շենանաս,
Մայր Հայաստանին պիտի միանաս,
Արցախի դարպասն ես, իմ քաջ Գետաշեն²...*

Այս խմբի երգերին հատուկ են նաև չափազանցությունը՝ երևույթների և գործողությունների նշանակության և մասշտաբների ընդարձակումը: «Գետաշենի» առաջին տունը դրա փայլուն օրինակն է.

*Բազմել ես լեռներից, ունես հազար շեն,
Արծիվների բույն ես չքնաղ Գետաշեն.
Բարբարոս ցեղերին անդադար սանձող,
Դու քաջերի օրրան՝ իմ քաջ Գետաշեն³...*

Մեկ այլ՝ Շուշիին նվիրված երգում⁴ վերը թվարկված առանձնահատկություններից զատ՝ նկատում ենք նաև առանձին բնակավայրի և ընդհանրական հայրենիքի պատմական ճակատագրերի և գեղարվեստական կերպարների նույնացում:

*Երգդ վիրավոր, վերքդ բյուրավոր,
Մայրդ սգավոր, հայրենիք:
Երկինքդ ամպած, որդիքդ ընկած,
Բախտդ խռոված, հայրենիք⁵...*

Այսպիսով, խտացվում և ընդհանրացվում են Հայրենիքին և Շուշի-Հայրենիքին պատուհասած չարիքները, և արդեն կրկներգի մեջ նույն տրամաբանությամբ Շուշիին կոչ է արվում պայքարի (... *Դու պատռի՛ր դեմքիդ քողը մշուշի, Դու երկնքի դուռ, իմ չքնաղ Շուշի...*), քանզի վերջինիս փրկությունը կբերի ամբողջ հայրենիքի փրկությանը:

Առհասարակ Արցախյան պատերազմի թեմատիկ երգերին, այդ թվում՝ առանձին բնակավայրերին նվիրված երգերին հատուկ է ընդհանուր մի երևույթ, այն է՝ հստակ կապը Արևմտահայաստանի և վերջինիս ապագա ազատագրման հետ: Ընդհանրական առումով՝ այս երևույթը Արցախյան հարցը և Արցախի ազատագրումը որպես Հայոց հայրենիքի սահմանների քաղաքական ամբողջականացման և Հայոց հարցի

¹ Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=btkecxU5PuQ>:

² Բնագրային շեղումներով ներկայացվում է՝ **գուսան Հայկազուն (Գագիկ Նազարյան)**, Հայեր, միացե՛ք, Երևան, 2003, էջ 10: Գործնականում երգը գրվելուց անմիջապես հետո (1990 թ. սեպտեմբեր 20) սկսել է կատարվել և կենցաղավարել բնագրային որոշակի շեղումներով և այդ տեսքով էլ տեղ է գտել հետագա շրջանի երգարաններում (տես «Գրպանի երգարան», Երևան, 1993; «Հայրենասիրական և հեղափոխական երգեր», Երևան, 2011, էջ 130):

Հաշվի առնելով, որ սույն ուսումնասիրությունը նվիրված է Արցախյան պատերազմի թեմատիկ երգերին, ոչ թե բուն բանաստեղծական մտուշներին, մախրմտություն ենք այստեղ և այսուհետ մեջբերել երգերի երգվող տարբերակները:

³ Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ասենք, որ Գետաշենին նվիրված այս երգը հայության շրջանում իր տարածվածությամբ զիջում է միայն «Ձարթի լառ»-ին:

⁴ Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=qC0xFOVWGEY>:

⁵ Երգի բնագիրը դասական ուղղագրությամբ տես <http://sanahine.wordpress.com/2010/09/05/%D5%B7%D5%B8%D6%82%D5%B7%D5%AB-%D5%BD%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D5%A7%D5%AC-%D5%A5%D6%80%D5%A1%D5%B6%D5%A5%D5%A1%D5%B6/>:

լուծման նախերգանք գնահատելու էքոնոզեբանական և տեսական-հայեցակարգային մտայնությունների զեղարվեստական արտահայտությունն է: Հայրենիքի տարբեր գերյալ շրջանների ճակատագրի նույնացումը և զեղարվեստական բաղդատումը սկզբնավորվել է տակավին ժԲ դարում *Ներսես Շնորհալու* «Ողբ Եղեսիոյ» ողբով, որտեղ արծարծվում է Բագրատունյաց Անի և Միջագետք Հայոցի Եղեսիա մայրաքաղաքների ողբերգական ճակատագրերի նույնության հարցը¹: Նորագույն շրջանում այս միտման կրողն ու շարունակողն էր Շիրազն իր «Ղարաբաղի ողբը» երգ դարձած բանաստեղծությամբ, որտեղ Ղարաբաղը Կարսի, Սասունի ու Մասիսի «թայն» է²: Այս համապատկերի քննումից հետո արդեն բնավ պատահական չէ, որ *Գուսան Հայկազունի* Շուշիի ազատագրմանը նվիրված երգի հենց սկզբում Շուշին կոչվում է «բախտակից եղբայր Կարսի ու Մուշի»³, ազատամարտիկ Դուշման Վարդանիս⁴ նվիրված երգում հերոսը «նահատակվում է հանուն մեր ազատ Մասիս սարի»⁵, իսկ Արցախյան պատերազմի հերոսներ Բեկորը (Աշոտ Դուլյան)⁶, Պետոն, Շահենը⁷, Մոնթե⁸ մեկ այլ երգի մեջ «սերունդներին ցույց են տալիս Էրզիր տանող մեր ճամփան»⁹:

Գեղարվեստական և գաղափարական տեսանկյունից Արցախյան պատերազմի թեմատիկ երգերի առաջին խմբին¹⁰ անդրադառնալիս ակնհայտ է դառնում դրա արժեքաբանական նշանակությունը, այն է՝ արժևորել առանձին բնակավայրերը՝ որպես թշնամու դեմ պայքար մղող ամբողջական հայրենիքի նույնական կերպարներ: Ըստ որում, որպես առիթ ունեցանք տեսնելու, Արցախն իր ամբողջությամբ ներկայացվում է և՛ որպես բացարձակ արժեք («*Ղարաբաղ՝ մեր ազգի սրբություն...*»)¹¹, և՛ որպես գերագույն արժեքի բաղկացուցիչ ու անբաժանելի մաս:

Արցախյան պատերազմի թեմատիկ երգերի հաջորդ՝ ավելի մեծ խումբ են կազմում ընդհանուր բնույթի պատերազմական երգերը: Այս խմբի մեջ են մեկտեղված թե՛ քայլերգերն ու մարտակոչերը, թե՛ կարոտի և ընտանիքի երգերը, և թե՛ բուն պատմողական և գնահատողական բնույթ կրող երգերը:

Առանձնակի հայտնիություն և ճանաչում ունեն մարտակոչերը՝ «Հայեր, միացե՛ք»¹², «Հպարտ գնացե՛ք»¹³, «Ելե՛ք հայեր պայքարի»¹⁴: Սրանցից հատկապես

¹ **Գալստյան Յ.**, Անի՞ն՝ գրական կերպար, «Գիտական հոդվածների ժողովածու», մաս 1, Երևան, 2012, էջ 45:

² «Գրպանի երգարան», էջ 68:

³ «Հայրենասիրական և հեղափոխական երգեր», էջ 132: Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=sS55UXZ6eaM>:

⁴ Վարդան Ռոբերտի Ստեփանյան (9.3.1966 – 3.7.1992):

⁵ Ջրույց որդուս հետ – Վարդան-Դուշմանը, Երևան, 2006, էջ 90: Հեղինակ՝ Դավիթ Ամալյան: Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=pOWd7f8D0j8>,

<http://www.youtube.com/watch?v=5nQPf0-zGDM>:

⁶ Աշոտ Հնայակի Դուլյան (6.10.1959 – 24.8.1992):

⁷ Շահեն Զինավորի Մեղրյան (2.1.1952 – 17.4.1993):

⁸ Մոնթե Չարլզի Մելքոնյան (25.11.1957 – 12.6.1993):

⁹ «Հարսանիք լեռներում». խոսք՝ Ալեքսանդր Պետրոսյանի, երաժշտությունը՝ Շավարշ Մանուկյանի: Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=0Rg7McnXiql>:

¹⁰ Գեղարվեստաարտահայտչական տեսանկյունից այս խմբի երգերի ճնշող մեծամասնությունն ունի մի կարևոր առանձնահատկություն. դրանք բոլորն էլ գրված են տվյալ բնակավայրի հետ երկխոսության տեսքով («Ղաթիվանք» (հեղ.՝ Գուրգեն Գաբրիելյան) (ձայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=Eanq5WIkGHg>), «Հերոս Շահումյանին» (ձայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=VzuCaX8Yi0w>), «Գետաշեն» (հեղ.՝ Գուսան Հայկազուն) և այլն):

¹¹ Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=5Phc0D9gVQ>:

¹² Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=BQWjv2HKmnl>: Երգը գրվել է 1988 թ. հանրահավաքների ժամանակ հնչող համանուն վանկարկումների անմիջական ազդեցության տակ (<http://www.youtube.com/watch?v=J53nh65Ymk>):

¹³ Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=CGhcfJFVbCY>:

¹⁴ Առաջին երկու երգի հեղինակը Գուսան Հայկազունն է (տես Հայեր, միացե՛ք, էջք 6-8), երկրորդի հեղինակը մեզ հայտնի չէ. ամենայն հավանականությամբ այն կարող է լինել երգի առաջին կատարող Գառնիկ Սարգսյանը (ձայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=hT-Tjx5PbuA>):

առաջինը՝ «Հայեր, միացե՛ք», իրավամբ կարող է համարվել Արցախյան պատերազմի օրհներգը: Կառուցվածքային առումով երգը բաղկացած է անցյալը, ներկան և գալիքը նկարագրող տներից և ներկան սրբագրելու ու ապագան ըստ արժանվույն կերտելու խորհուրդ պարունակող կրկներգից.

*... Ուս ուսի տված, առյուծի նման
Ետ բերենք հողն ու փառքը հայրության՝...*

Այստեղ ևս օրինաչափ կապ կա Արցախի և Արևմտյան Հայաստանի ներկա և ապագա ազատագրումների հետ, քանզի «*դեռ ծամփա ունինք, պիտ հասնինք Սասուն...*»: Նույն մտայնությունը տեղ է գտել հեղինակի մյուս «Հպարտ գնացե՛ք» երգում, որտեղ ազատամարտիկներին կոչ է արվում.

*Դուք մեր նախնյաց հողը նորից ե՛տ բերեք,
Մեր հայկազյան փառքը նորից ե՛տ բերեք,
Մուշն ու Սասուն, Արարատը ե՛տ բերեք,
Դեպ Արցախ, Մուսալեռ բարով գնացե՛ք՝...*

Այս երգում, սակայն, նկատում ենք մի նոր երևույթ: Դա այն է, որ երգում ի մարտ կոչվող քաջերը խրախուսվում և քաջալերվում են ոչ միայն նախորդ սերնդի ֆիդայիների սխրանքով³, այլև իրենց ժամանակակից և երգի գրվելու ժամանակ⁴ արդեն զոհված Դուշման Վարդանի (... *Վարդանի արյունն է ձեր մեջ, իմացե՛ք...*):

Արցախի ազատագրումը՝ որպես կենսական, բայց ոչ վերջնական շրջափուլ է համարվում նաև մեր նշած երրորդ երգում (... *Թե չփրկենք մենք Արցախը՝, մենք չկանք, Մեր լինելն ու չլինելը ցույց պիտ տանք*, ինչպես նաև ... *Էսօր՝ Արցախ, վաղը՝ Վանը պիտ առնենք, Որ որպես ազգ մեզ հետ էլ հաշվի նստեն...*):

Ինչպես և ցանկացած պատերազմ, Արցախյան պատերազմը և նրա քնարը նույնպես չըջանցեցին ընտանեկան թեման: Ընտանեկան ցավի պատկերներ ենք հանդիպում *Ռուբեն Հախվերդյանի* «Վերադարձ» (առավել հայտնի որպես՝ «Ես սպասում եմ քեզ հայրիկ») ⁵, «Ծաղկած խնձորենի» (առավել հայտնի որպես՝ «Կարմիր կակաչները») ⁶ և այլ երգերում, երջանակահիշատակ հեղինակ-կատարող *Աշոտ Բեգոյանի (Տոտիկ)* Սփյուռքում և հայրենիքում լայն տարածում գտած «Ախպերս ու ես» երգում ⁷: *Հախվերդյանի* երգերում ընտանիքից ֆիզիկապես հավիտյան բաժանված ազատամարտիկը կերպավորվում է *գարնան* տեսքով՝ նազելի քրոջ պարագայում՝ որպես «*փեսացու գարուն*», իսկ հայրիկին սպասող երեխայի պարագայում՝ «*քո հայրիկը հենց գարունն է, որ եկել է քեզ նվեր*»:

¹ Պատերազմի տարիներին արդեն ձևափոխվելով դարձել է՝ «կռվելով պետք է փրկենք Հայաստան» (<http://www.youtube.com/watch?v=14sXVCJ5oIg>), Շուշիի առանձնակի գումարտակում՝ «կեցցե Հ.Յ.Դ.՝ հերոս հայկական» (<http://www.youtube.com/watch?v=H6QMXrRIKGI>):

² Ներկայումս ազգայնական շրջանակներում վերջին տողը երգվում է այսպես.

Դեպ Ջավախք ու Նախիջևան բարով գնացե՛ք...

կապված ՀՀ աշխարհաքաղաքական ներկայիս անմիջական շահերի հետ:

³ Այդպիսի դասական օրինակ է Գուրգեն Գաբրիելյանի «Արցախի ֆիդայիներին» երգը, որտեղ, դիմելով վերջիններսին, հեղինակն ասում է. «*Ամեն մեկդ մի նոր Գևորգ Չավուշ, մի Աղբյուր Սերոբ ու քաջ Անդրանիկ...*» (ծայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=x3sbN5pcnwU>):

⁴ Երգը գրվել է 1993 թ. հունվարի 20-ին, Վարդանը զոհվել է 1992 թ. հուլիսի 3-ին Սյուրիշենի մատույցներում: Այս մասին տես նաև http://ergir.wordpress.com/2012/11/23/paterazm_eq_gnum/ էջում առկա բացատրականը:

⁵ Երգի բնագիրը տես http://roubenhakhverdyan.net/english/words_4_DZAGHKADZ-KHNTSORENI.html: Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=CGFOifQxFy4>:

⁶ Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=nkH1aNEAO4c>:

⁷ Չայնագրությունը տես <http://www.youtube.com/watch?v=dS-o8tOGVCQ>,

<http://www.youtube.com/watch?v=78Knl8uGBSA>, <http://www.youtube.com/watch?v=6gjevQEHJN4>:

Ակնհայտ է, որ գարունն այստեղ՝ որպես այլաբանական կերպար, խորհրդանշում է «դաժան ծմեռներին» հաջորդող հայրենիքի ազատագրումն ու խաղաղ կյանքի վերածնունդը: Աշոտ Բեգոյանի երգում պատերազմ մեկնող եղբայրները, դիմելով մորը, խոստանում են մարտում ընկնելու դեպքում անգամ չլքել նրան և որպես «գույգ արծիվ» թռել հայրական տան կտրին: Այս երգը նույնպես ավարտվում է լավատեսական շեշտերով.

*Մամ ջան, կբացվեն դռները մեր գոց,
Ոսկի կհազնի սև օրը հայոց
Ու տուն կդառնանք հաղթությամբ էպես,
Ծափով-ծիծաղով ախպերս ու ես:*

Այս խմբի մյուս երգերը, ինչպիսիք են «Ազատ ոգին Հայաստանի»¹, «Արցախի մայրեր»², «Ախ, իմ չքնաղ ժողովուրդ»³, «Որ սարերը չմնան անտեր»⁴, «Շուշիի ազատագրման երգը», «Հարսանիք լեռներում», հեղինակների շուրթերով արտահայտում են այն ժամանակվա ազգային-քաղաքական և սոցիալ-հոգեբանական տրամադրություններն ու գնահատականը՝ պատերազմական այս կամ այն իրադարձությանը կամ պատերազմին՝ ընդհանրապես: Առաջին երգում դարձյալ արժարժվում է Արցախից հետո Նախիջևանի և Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը (... Թող ուժ առնեն ջոկատները մեր հայկական, ֆիդայական, որ ետ բերեն սուրբ հողերը պատենական...): Ռուբեն Հայսվերդյանի «Որ սարերը չմնան անտեր» երգում Արցախյան պատերազմի հերոսները «կարմիր տառերով իրենց արյան վերապատմում են պատմությունը մեր արիական», ասել է թե՛ Արցախյան պատերազմը հայոց պատմության փիլիսոփայության տեսանկյունից դիտարկվում է օրգանական սերտ միասնության մեջ մեր ներկայի և ապագայի հետ: «Արցախի մայրեր», «Շուշիի ազատագրման երգը», «Հարսանիք լեռներում» երգերում պատմվում է Քարվաճառի (պատմական Վայկունիք), Ակնա քաղաքի (նախկին Աղդամ), Շուշվա ազատագրումների մասին, պախարակվում է վախկոտ ու զավթիչ թշնամին, զովերգվում հայ ազատարար զինվորը, հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանը⁵, ինչպես նաև հայոց մարտիկներին խրախուսող ու քաջալերող հայուհիները:

Արցախյան պատերազմի թեմատիկ երգերի շարքում ամենաստվարածավալ խոսքը կազմում են հերոսներին նվիրված երգերը, որոնք, որպես մեր աշխատանքի սկզբում նշեցինք, ենթաբաժանվում են առանձին ազատամարտիկների, առանձին ջոկատների, ինչպես նաև արցախյան ֆիդայու ընդհանրական կերպարին նվիրված երգերի:

Ընդհանուր առանձնահատկություններից զատ՝ Արցախյան պատերազմի թեմատիկ երգերի այս խմբին բնորոշ են նաև մասնավոր առանձնահատկություններ: Դրանցից մեկը հետպատերազմյան աղապտացիայի խնդիրն է՝ արտահայտված երգերի մեջ: Երգերի հեղինակները, որոնք նախկին ազատամարտիկներ են կամ ազատամարտին մոտ կանգնած անձինք, երգերում արտահայտում են իրենց անձնական և ընդհանրական՝ ազգային, մտահոգությունը՝ կապված պատերազմական և հետպատերազմյան շրջանի զարգացումների հետ:

¹ Հեղինակ Գագիկ Մանուկյան: Չայնագրությունը տես՝ <http://www.youtube.com/watch?v=jx4F-nBSslg>:

² Չայնագրությունը տես՝ <http://www.youtube.com/watch?v=nnbLlppRlk>:

³ Երգում նորօրյա ազգային-քաղաքական իրողությունների պայմաններում, կարմիր թելի պես անցնում է Արցախյան պատերազմի, Սփյուռքի և մայր Հայրենիքի հայերի միասնության իրանայականի գաղափարը: Չայնագրությունը տես՝ <http://www.youtube.com/watch?v=4G6BsgP3G58>:

⁴ Երգի բնագիրը տես՝ http://roubenhakhverdyan.net/english/words_4_DZAGHKADZ-KHNTSORENI.html: Չայնագրությունը տես՝ <http://www.youtube.com/watch?v=sgH06h-pHAs>:

⁵ Արկադի Իվանի Տեր-Թադևոսյան (Արտուշ Գովհաննեսի Թադևոսյան) (ծ. 22.5.1939):

*Չէ՞ որ այդ դու էիր ծրագիր կազմել՝
Կորցրած Ազատն ու Կամոն ետ բերել,
Մարտունաշենը անառիկ դարձնել,
Մահվան իրավունք քեզ ով էր տվել՝...*

Ահա այսպիսի տողեր ենք հանդիպում *Գուսան Հայկազունի* Հյուսիսային Արցախի ինքնապաշտպանության կազմակերպիչ Սարմեն Պողոսյանին² նվիրված երգում: Համանման տողեր ենք հանդիպում մեկ այլ հեղինակի՝ Շահեն Մեղրյանի մարտական ընկերոջ՝ *Ռաֆիկ Ղազինյանի* երգում, որտեղ հեղինակը գեղարվեստական հանդիմանական երկխոսության մեջ է մտնում Շահունյանի խորհրդանիշ Մռավ սարի հետ՝ «Մեծ Շահենի կանչին ականջալուր չլինելու» համար և սրտի կսկիծով հարցնում. «... ո՞նց թողեցիր, որ քո լամջից Նահապետիդ խփեն...»³:

Ընթերցողը սխալ մեկնած կլինի վերոբերյալ հուզական տողերը, եթե նրանց միայն անձնական ցավի ու մտահոգության բնույթ վերագրի: Իրականում մտահոգությունը խորապես համազգային է, համապետական. այլ կերպ ասած՝ ո՞վ պիտի ազատագրի Շահունյանն ու Մարտունաշենը, եթե ընկան սարմեններն ու շահենները: Այս տրամաբանությունն է ընկած, ըստ մեզ, տվյալ երգերի հիմքում: Այդ մտահոգությունն ավելի ցայտուն է Արցախյան պատերազմի մեկ այլ մասնակցի՝ Դուշման Վարդանի մարտական ընկերոջ՝ *Դավիթ Ամալյանի* «Եռաբլուր» երգում⁴.

*Անցյալն իմ կարոտեցի. այնտեղ կարգին տղերք շատ կային,
Ներկայից էլ ես հոգնեցի. տղերքն ո՞ւր են, որ էլ չկան:
Ապագայի հետ վիճեցի. այնտեղ՝ անդունդ ու չար խաբան,
Էսքան որձեր որ ծնվեցին, տեսնես տղերք կդառնա՞ն...*

Դիցուք՝ մեկ այլ օրինակ՝ *աշուղ Գևորգի (Ժորա Գրիգորյան)* Սոնթե Մելքոնյանին նվիրված երգում «Ժեր արծիվը ժայռին նստած գլխահակ անձայն ողբաց մահը քահել արծվի՝ արծիվ, որի նմանը հագիվ թե ծնվի»⁵: Տարբեր հեղինակների մոտ առկա այս մտահոգությունը, հեղինակիս կարծիքով, ունի հստակ թքնոհոգբանական հիմք, որն է վախը՝ անցումային (հիմնականում՝ հենց հետպատերազմյան) ժամանակաշրջանում կորցնելու ազգի նախորդ սերունդների կուտակած դրական հատկանիշները և նոր սերնդի մոտ չտեսնելու այն նույն առաքինությունները, որոնք բնորոշ էին նախորդին, այսինքն՝ վախը հանդեպ Նժդեհի բանաձևած «հոգևոր խզումը սերունդների միջև»⁶:

Ահա այս համատեքստում էլ հերոսներին նվիրված երգերում առաջ է գալիս *ապագայի հարցը*, ասել է թե՛ որն է լինելու հետագա սերունդների պարտականությունը: Այսքանով իսկ օրգանական կապ է ստեղծվում ոչ միայն անցյալի և դրա հիմքի վրա՝ ներկայի, այլև արդեն ապագայի միջև: Ահավասիկ՝

*Հայոց մայրեր, ձեզ փառք, ձեզ նոր ծնունդներ,
Պարզևեք հայ ազգին Դուշման Վարդաններ,
Սասնա Դավթին ձգտող ահեղ հայոց մարտիկներ,*

¹ Տե՛ս «Հայեր, միացե՛ք», էջ 16:

² Սարմեն Արտաշի Պողոսյան (13.9.1950 – 16.9.1990): Չայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=u-k6M9RTaW0>:

³ Երգի բնագիրը տե՛ս http://nakhshkaryan.blogspot.com/2012/04/blog-post_9395.html: Չայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=xgSobHn6kJM>:

⁴ Չայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=wTwrardRLewY>:

⁵ Չայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=u44yZq3uDdk>:

⁶ Տե՛ս *Գարեգին Նժդեհ*, Ամերիկահայությունը - Ցեղը եւ իր տականքը, գլ. Ժ, Ցեղակրոն ուխտեր: Նույն մտավախությունը ժամանակին հայտնում էր նաև *Խաչիկ Դաշտենցը*՝ աչքի առաջ ունենալով արևմտահայոց դյուցազնապատումի հերոսներին:

Տիգրան Մեծին փառոս կնքած հայ կամավորներ¹:

Արցախյան պատերազմի թեմատիկ երգերի այս խմբի երգերում նկատվում է արժեքաբանական մի կարևոր յուրահատկություն ևս, այն է՝ որպես բարձրագույն արժեք կերպավորվում է նախ և առաջ այն գործը (*հանուն Արցախի և ողջ հայության*)², որի համար իրենց սուրն են մերկացրել հերոսները և ապա՝ որպես այդ գործի կողմնորդներ՝ բուն հերոսները: Այսքանով իսկ՝ դժվար է այս երգերում փնտրել և գտնել կուռքապաշտության հետքեր, ինչը բնորոշ է մշակութային-քաղաքակրթական զարգացման ավելի ցածր մակարդակի վրա գտնվող ցեղերին և ազգերին: Այդ է պատճառը, որ անգամ վրեժի երգերում խոսքը ոչ թե անձնական, այլ ազգային վրեժի մասին է: Այսպես՝ Մոնթե Մելքոնյանին նվիրված երգում.

*Արցախի քաջերը՝ ֆիդայիները,
Քո զերեզմանին երդում են տվել՝
Աղղասն ավերել ու հասնել Բարդա,
Մի խոսքով՝ արյան վրեժը լուծել³ ...*

Այս խմբի երգերում ուրույն տեղ են զբաղեցնում նաև պատմողական բնույթի երգերը, որոնցում առանցքային դեր ունեն հերոսի կերպարը և ռազմական գործողություններում նրա մասնակցության հարցը: Այդպիսի երգերից են Մովսես Գորգիսյանին⁴, Պետոյին⁵, Տուտուկին⁶, Բեկորին⁷, Կարոտին⁸, Տուլ Արմանին⁹, Ավոյին, Մեծն Շահենին, Սպիտակ Արջին¹⁰, Թաթուլ Կրպեյանին¹¹, Դեղին¹², Կոմանդոսին¹³, Վազգեն Սարգսյանին¹⁴ և այլոց նվիրված երգերը:

Այսպիսով՝ ամփոփելով մեր համեստ և իր տեսակի մեջ, ցավոք, եզակի ուսումնասիրությունը՝ համարում ենք մի շարք կարևոր ընդհանրացումների: Նախ՝ այդ երգերը, գրված լինելով առանձին և հաճախ՝ տարբեր հասարակական-քաղաքական հայացքներ ունեցող անձանց կողմից, որպես այդպիսիք, լրացնելով և ամբողջացնելով միմյանց, կազմում են մեկ ամբողջական և կուռ տրամաբանությամբ օժտված ընդհանրական համակարգ: Այդ համակարգը, ինչպես վերը ցույց տվեցինք, սերտ միասնության մեջ է իր «հայրերի հետ», իսկ բովանդակային առումով ունի գնահատ

¹ <http://www.youtube.com/watch?v=pOWd7f8D0j8>.

² Տե՛ս Գուրգեն Գաբրիելյանի նշված երգը:

³ Երգի հեղինակը մեզ հայտնի չէ: Չայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=OH03PFNPtHAK>:

⁴ Մովսես Գևորգի Գորգիսյան (3.12.1961 – 19.1.1990): Մովսեսին նվիրված երգի ձայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=hsoWQ-rgdOg>:

⁵ Պետոյին նվիրված երգի ձայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=sDxrW5GgRVU>:

⁶ Արթուր Վլադիմիրի Ղարիբյան (16.12.1967 – 6.11.1992): Արթուրին նվիրված երգի ձայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=pXLRZ-PKzc4>, <http://www.youtube.com/watch?v=4pJfoQJMNEQ>:

⁷ Բեկորին նվիրված երգը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=LbP5FXkxvM>:

⁸ Կարոտ Յովհաննեսի Մկրտչյան (19.2.1962 – 13.6.1992) - անհայտ կորել է Շահունյանի աղետի օրերին: Կարոտին նվիրված երգի ձայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=pqXRGTTc2cw>, <http://www.youtube.com/watch?v=Fpp32qKGMtA>:

⁹ Արման Վալիկոյի Ջոհրաբյան (16.9.1974 – 11.4.1994): Արմանին նվիրված երգի ձայնագրությունը տե՛ս http://www.youtube.com/watch?v=WO_Mgtu0uWg:

¹⁰ Կարապետ Յայկի Քաղբեջյան (24.3.1962 – 26.6.1993): Կարոյին նվիրված երգի ձայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=1jUTZaDYhjM>:

¹¹ Թաթուլ Ժորժիկի Կրպեյան (21.4.1965 – 30.4.1991): Թաթուլին նվիրված երգի ձայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=q5pVBdRa0kY>, գրաբար մշակմամբ՝ <http://www.youtube.com/watch?v=f-vCqevaXuY>:

¹² Սիմոն Յովհաննեսի Աչքբոյոզյան (6.2.1939 – 30.4.1991): Սիմոնին և Թաթուլին նվիրված երգի ձայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=hRya7xCb10o>:

¹³ Կոմանդոսին նվիրված երգի ձայնագրությունը տե՛ս <http://www.youtube.com/watch?v=2ecqJF7ImOI>:

¹⁴ Վազգեն Ջավենի Սարգսյան (5.3.1959 – 27.10.1999): Վազգեն Սարգսյանին նվիրված երգեր տե՛ս <http://www.youtube.com/watch?v=H4VRGkbCnVQ>, <http://www.youtube.com/watch?v=RFVr7dEaA8o>, <http://www.youtube.com/watch?v=G3-iiPQQSms>:

տողական և կողմնորոշիչ նշանակություն, մասնավորապես՝ ուղղված դեպի ապագան:

Արցախյան պատերազմի թեմատիկ երգերի առանձնահատկություններից մեկը նաև նրա ունեցած արժեքաբանական գործառույթն է, հատկապես ներկա օրերիս անցումային շրջանում¹: Երգերում արժարժվում և գովաբանվում են մնայուն արժեքների լայն շրջանակ՝ ներառելով հայրենիք, ազատություն, պատվախնդրություն, քաջություն, հերոսականություն, նվիրում, անձնագոհություն և այլն²: Հավիտենական այդ արժեքների շարքում է նաև վրեժը, որը, եթե վերանալու լինենք կենցաղային դատողությունների և պարզունակ ընկալումների մակարդակից, ոչ այլ ինչ է, քան մահին կյանքով հակադրվելու և ազգ-պետության մշտակատար զարգացման ու առաջընթացի կենսական գաղափարը: Այս համատեքստում էլ հենց պետք է դիտարկենք Արցախյան պատերազմի թեմատիկ երգերում արժարժվող *վրեժ* կատեգորիան և ինքներս էլ չդադարենք երգել.

*Ձեր թափած արյան կանչը թող ապրի հավերժ,
Ամեն հայի սրտում թող ծնի վրեժ...*

СЮЖЕТНАЯ НАПРАВЛЕННОСТЬ И АКСИОЛОГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ТЕМАТИЧЕСКИХ ПЕСЕН АРЦАХСКОЙ ВОЙНЫ

Эдгар Элбакян

В статье впервые в армянской научной литературе рассматривается сюжетная направленность песен Арцахской войны, а также их аксиологическое значение. В этих песнях четко прослеживается закономерная взаимосвязь с аналогичными стихами прошлого.

Песни Арцахской войны разделены нами на три группы: песни, посвященные Арцаху и арцахским селениям, песни общего военного характера и песни, посвященные отдельным отрядам, военачальникам и героям-добровольцам.

Отмечено, что в связи с победой армянской стороны в тематике песен Арцахской войны отсутствует классическая скорбь, которая присуща песням освободительной борьбы прошлых поколений.

NARRATIVE ORIENTATION AND AXIOLOGICAL SIGNIFICANCE OF THEMATIC SONGS ON ARTSAKH WAR

Edgar Elbakyan

The present article deals with the scientific issue of the narrative orientation and axiological significance of Artsakh War songs – yet not properly investigated in the Armenian scientific literature. Our theses state, that these songs are in consistent interdependence and correlation with their prototypes, composed in the late 19th and early 20th centuries. Thus, there

¹ Որոշ ուշագրավ դիտարկումներ հարցի առնչությամբ տես Սամուկյան Լ., Հայաստանյան երիտասարդության արժեքային ընկալումներն անցումային շրջանում, «Գիտական հոդվածների ժողովածու», մաս 1, Երևան, 2012, էջ 152-158:

² Ըստ մեզ՝ կապված պատերազմի ծանր, բայց և հերոսական ու, ի վերջո, հաղթական ընթացքի ու ավարտի հետ՝ հեղինակների գրիչը հիմնականում մոռացության է մատնել պատերազմի արատները, ինչը մեծ չափով բնորոշ է նախորդ շրջանի ազատագրական պայքարի երգերին: Ըստ էության, բացակայում են նաև դասական ողբի երգերը, որոնք նույնպես մինչ այդ բնորոշ են եղել մեր քնարին:

is a strong organic tie between the past, the present and the future which is made on the literary basis and expressed in the songs.

Due to the victorious outcome of the Artsakh War, thematic songs on Artsakh War are void of classical sorrow songs which were partly peculiar to the songs of the previous generation of the Armenian Liberty Fight.

The author has divided Artsakh War thematic songs into three distinct groups: songs dedicated to Artsakh in general and its different villages in particular, songs having general warlike character and songs dedicated to different battalions, commanders and hero-volunteers.

**ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՅՈՒՆՅՈՒՒ
ԵՐԿՈՒ ԾԱԿԱՏԱՍԱՐՏԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾՈՒՄ
(1921 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ)**

Էդգար Էլբակյան

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ պ.գ.դ., պրոֆ. Ա. Մելքոնյան

Էլփոստ՝ elbakyan.edgar@gmail.com

Մուստաֆա Քենալի գլխավորած Ազգայնական շարժման և դրա արտաքին քաղաքականության ու դիվանագիտության գիտական անաչառ քննությունն ունի տեսակիրառական կարևոր նշանակություն հայ պատմագիտական և քաղաքագիտական մտքի զարգացման, ինչպես նաև Թուրքիայի հանդեպ վարվող արտաքին քաղաքականության մշակման և կենսագործման համար:

Ժամանակագրական նեղ ընդգրկմամբ՝ Ազգայնական շարժման պատմության մեջ խիստ կարևոր նշանակություն ունի Ինյոնյուի երկու ճակատամարտերի միջև ընկած ժամանակաշրջանը, այն է՝ 1921 թ. հունվար-մարտ ամիսները: Տվյալ շրջանում տեղի ունեցած դեպքերն ու անցքերը՝ Լոնդոնի կոնֆերանս, Մոսկվայի կոնֆերանս, թուրքական կողմի կնքած երկկողմ պայմանագրեր: Մույն հոդվածում քննության են առնվում արևելյան հայկական և արևմտյան հունական, ռազմաճակատներում տեղի ունեցած իրադարձությունները՝ հաշվի առնելով դրանց վճռորոշ ազդեցությունը դիվանագիտական շրջանակներում ընթացող բանակցությունների վրա:

Այսպես, արևելյան ճակատում թուրքական զորքերը հոկտեմբերի վերջին գրավեցին Կարսը, իսկ նոյեմբերի սկզբներին՝ Ալեքսանդրապոլը՝ դրանով իսկ ռուսներին կանգնեցնելով կատարված փաստի առջև ակնկալելով զինու սպառնալիքով գրավված բոլոր տարածքները իրավական հարթության մեջ կցել իրենց: Դեպքերի քննությունը ցույց է տալիս, որ գրավված Ալեքսանդրապոլը և դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերն այնտեղ կնքված հայ-թուրքական անիրավահավասար պայմանագիրը՝ որպես ոչ այնքան միջազգային իրավական ակտ, այլ քաղաքական գործոն, թուրքական դիվանագիտությունն օգտագործում էր նաև արևմտյան դիվանագիտական ճակատում՝ Հայոց հարցի քննարկումներն ու հայանպաստ-հայաստանաճապաստ հավանական լուծումները գերեզմանելու համար: Ինչ վերաբերում է արևմտյան ռազմաճակատին, ապա այստեղ թուրքերի տարած առաջին նշանակալից հաջողությունը Ինյոնյուի առաջին հաղթանակն էր՝ հունվար 6-11, որը մասամբ հետևանք էր Հունաստանի ներքաղաքական ճգնաժամի՝ պայմանավորված Կոնստանտին արքայի վերագահակալմամբ և Վենիզելոսի մեկուսացմամբ: Կարելի է ասել, որ այս հաղթանակը թե՛ Արևմուտքից, թե՛ Ռուսաստանից զիջումներ կորզելու մի նոր լծակ էր: Մեծ Բրիտանիայի՝ այնժամ գաղութների գծով նախարար Ուինսթոն Չերչիլը հետևյալ կերպ էր գնահատում թուրքերի այդ հաղթանակի հնարավոր հետևանքները. «Թուրքերը կհայտնվեն բոլշևիկների գրկում, Միջագետքում կբռնկվեն հուզումներ... մեզ չի հաջողվի պահել Մոսուլն ու Բաղդադն առանց մեծ ու ծախսատար բանակի...»¹:

Եվ ահա 1920 թ. դեկտեմբերի 2-ին՝ Անտանտի դաշնակցային երկրորդ կոնֆերանսի ժամանակ, Ֆրանսիայի ներկայացուցիչը բացորոշ կերպով հայտարարեց, որ Մերձավոր Արևելքում ստեղծված նոր իրադրության պայմաններում լավագույն կուրսը պայմանագիրն իր ամբողջության մեջ պահպանելով հանդերձ՝ նրա

¹ **Բայրուրդյան Վ.**, Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, էջ 330:

առանձին կողմերի «բարեփոխումն» է, որի տակ հասկացվում էր առաջին հերթին Իզմիրի շրջանի հանձնումը Թուրքիային, առանց որի «չի կարող խաղաղություն լինել Փոքր Ասիայում»: Հաշվի առնելով, որ Անգլիային մտահոգում էր Հայաստանի անկմամբ պայմանավորված Ռուսաստանի և Թուրքիայի դիրքերի ամրապնդումն արևելքում ու նրանց հավանական մերձեցումը, ինչպես նաև Վենիզելոսի անկմամբ՝ հունական նախագծի հավանական դարձող ծախողումը՝ կողմերը եկան համաձայնության՝ Սևրի պայմանագիրը մասնակի փոփոխությունների ենթարկելու և այդ նպատակով Լոնդոնում դաշնակից տերությունների կոնֆերանս հրավիրելու հարցում¹: Ինչպես նշեցինք, այս հարցում վերջին դերը չխաղաց նաև հունվարի 6-11-ը Ինյոնյուի առաջին ճակատամարտում թուրքական զորքի հաջողությունը²:

Լոնդոնի կոնֆերանսին մասնակցելու հրավեր ստացան Հունաստանն ու Թուրքիան: Հրավերը Ստամբուլ էր հասել հունվարի 26-ին, և ցանկություն էր հայտնվել, որ առաքվող պատվիրակության կազմում Անկարայի պատվիրակներ էլ լինեն³: Սուստաֆա Քեմալը, հաշվի առնելով, որ հրավերը եկել է անուղղակիորեն (*dolaylı*), բայց ինչն անենակարևորն է՝ դաշնակիցները ցանկություն են հայտնել, որ Ստամբուլի պատվիրակության կազմում լինեն Անկարայի պատվիրակները, որոնք, ինչ խոսք, ունեին հակոտնյա շահեր, մերժում է հրավերը, ինչից հետո ծավալվում է թուրքագիտությանը հայտնի «հեռագրային պատերազմը» Քեմալի և կառավարչապետ Թևֆիկ փաշայի միջև⁴: Միացյալ պատվիրակություն կազմելու նպատակադրմամբ՝ Թևֆիկ փաշան փորձում էր համոզել Քեմալին, որ Ստամբուլի և Անկարայի կառավարությունների պատվիրակությունների նպատակները նույնն են, ինչին Քեմալը հակադարձում էր, որ անգամ եթե դրանք նույնն են, միևնույնն է՝ Անկարան չի կարող կախման մեջ լինել օկուպացված Ստամբուլից և նրա կառավարությունից⁵: ԱՄՄ-ում առհասարակ կասկածի տակ էին դնում Լոնդոնի կոնֆերանսին թուրքական, հատկապես՝ Անկարայի, ներկայացուցչության անհրաժեշտության հարցը՝ համարելով, որ դա կարող է դաշնակիցների կողմից կազմակերպված լինել Ինյոնյուում ձախողված հույներին ժամանակ շահելու հնարավորություն տալու համար: Քեմալին, այնուամենայնիվ, հաջողվեց Մեջլիսում անցկացնել իր որոշումը, որը միջին դիրք էր գրավում երկու ժայռահեղ մոտեցումների միջև: Արտգործնախարար Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ կազմվեց պատվիրակություն, որը 1921 թ. փետրվարի 1-ին անձամբ Լլոյդ Ջորջի հրավերով, Անթալիայից մեկնեց Հռոմ⁶:

Լոնդոնի կոնֆերանսն աշխատանքները սկսեց փետրվարի 21-ին: Կոնֆերանսում Ստամբուլի պատվիրակները, որոնք, ինչպես վկայում է ֆրանսիացի հեղինակ Պայարեսը, «անխոս դերակատարներ էին», ձուլվեցին Անկարայի պատվիրակությանը և խոսքի իրավունքը Թևֆիկ փաշայի միջոցով հանձնեցին Բեքիր Սամիին⁷: Փետրվարի 27-ին թուրքական միացյալ պատվիրակությունը ներկայացրեց իր

¹ **Սահակյան Ռ.**, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 95-96:

² **Uzgel İ., Kürkçüoğlu O.**, 1919-1923 İngiltere'yle İlişkiler, Baskın Oran (ed.), Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, cilt I, 6. Baskı, İstanbul, İletişim Yayınları, 2002, s. 145:

³ **Gönlübol M.**, Atatürk ve Türkiye'nin dış politikası (1919-1938), Ankara, 1990, s. 23.

⁴ Նույն տեղում, էջ 23-25; **Սահակյան Ռ.**, նույն տեղում, էջ 96-97:

⁵ **Gönlübol M.**, s. 25.

⁶ **Uzgel İ., Kürkçüoğlu O.**, s. 143-144.

⁷ Նույն տեղում: **Քեռյան Գ.**, Միջազգային հարաբերությունները և դիվանագիտությունը երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակաշրջանում, Երևան, 2006, էջ 21: **Սահակյան Ռ.**, էջ 97: Դժվարանում ենք հստակորեն պատասխանել այն հարցին, թե կոնկրետ որոնք էին սուլթանական պատվիրակության նման քայլի դրդապատճառները, հատկապես որ ձեռքներիս տակ չունենք ակնատեսների կամ հենց թուրքական պատվիրակների հուշերը կամ հարցին խորագիտակ մասնագետների վերլուծությունները, բայց վստահ ենք, որ հույների անհաջողությունները ռազմաճակատի գծում, ինչպես նաև ի տարբերություն Անկարայի պատվիրակության՝ սեփական ազգային ծրագրի չգոյությունը վերջին դերը չեն խաղացել Ստամբուլի պատվիրակության հիշյալ քայլի հարցում:

պահանջները, որոնք ներառում էին եվրոպական մասուն 1913 թ. սեպտեմբերի 16-ի թուրք-բուլղարական պայմանագրով գծված սահմանի վերականգնում, ինչպես նաև Արևելյան Թրակիայի վերադարձը թուրքական տիրույթի տակ, Թուրքիայի հարավային սահմանների անցնելը այն գծով, որը բաժանում էր նրան արաբական մեծամասնությամբ բնակեցված շրջաններից, իսկ այդ գծից հյուսիս ընկած վայրերը, որոնք բնակեցված էին թուրքերով, ինչպես և Կիլիկիան, պետք է պարպվեին օտար զորքերից և վերադարձվեին Թուրքիային, Թուրքիայի արևելյան սահմանի անցնելը պարսկական սահմանագծով և Թուրքիայի ու Հայաստանի միջև կնքված պայմանագրի (Ալեքսանդրապոլի – Ռ. Ա.) համաձայն, Իզմիրի և Փոքր Ասիայի գրավված տարածքների վերադարձը Թուրքիային, ներդրվելու ազատ նավարկության սկզբունքի հաստատում՝ այն հաշվով, սակայն, որ ապահովվեր Կ. Պոլսի կատարյալ անվտանգությունը և Թուրքիայի ինքնիշխանությունը, փորձանասնությունների, նրանց կրոնի և լեզվի պաշտպանությունը նույն կարգով, ինչ որ նախատեսված էր Սեն-ժերմենի, Նեյիի և Տրիանոնի պայմանագրերով, օսմանյան սուլթանության հարգումը, ռազմական և ծովային ուժերի չափը որոշելիս հաշվի առնել երկրի սահմանների տարածվածությունը, ինչպես նաև հարևան երկրների քաղաքական վիճակը՝ դրան համապատասխանորեն ապահովելու ներքին կարգ ու կանոնը և սահմանների անվտանգությունը, Թուրքիայի ֆինանսական ու տնտեսական անկախության ճանաչում՝ կապիտուլյացիաների ռեժիմը լրիվ վերացնելու և երկրի համակողմանի զարգացումն ապահովելու միջոցով¹:

Պաշտոնական նիստերից անդին՝ կոնֆերանսի ժամանակ կողմերից յուրաքանչյուրն ուներ հստակ հետնաբեմային նպատակներ, որոնց շուրջ և ընթանում էին զաղտնի բանակցություններ և կնքվում պայմանագրեր: Կոնֆերանսում անգլիական դիվանագիտության հետապնդած նպատակն էր, քենալականներին աննշան զիջումներ անելով, համաձայնության գալու վերջիններիս հետ և նրանց ուժն ուղղելու Խորհրդային Ռուսաստանի դեմ՝ միաժամանակ խոչընդոտելով ֆրանս-թուրքական մերձեցումը: Գաղտնի առանձնագրույցներ կայացան Բեքիր Սամիի և Լլոյդ Ջորջի միջև², որի ժամանակ թուրքական պատվիրակն առաջարկեց Թուրքիան ընդգրկել հակասովետական խմբավորման մեջ՝ նրան միացնելով Հյուսիսային Կովկասի լեռնականներին և այդպիսով ստեղծելով դաշնային արգելակ պետություն Արևմուտքի և Ռուսաստանի միջև³: Այս առաջարկը⁴ պետք է համարել այդ օրերի թուրքական դիվանագիտության առանցքը՝ կապված Մեծ Բրիտանիա-Ռուսաստան հակամարտության հետ, ինչին կանդիդատուրանք ստորև:

Ինչ վերաբերում է բուն թուրք-անգլիական պայմանագրին, ապա դրա առարկան երկու կողմերի գերիները և նրանց փոխանակման հարցն էր⁵: Հարցը գոյացել էր այսպես. Մուղրոսի զինադադարից հետո դաշնակիցների՝ հիմնականում

¹ **Սահակյան Ռ.**, էջ 97-98:

² Կոնֆերանսի ավարտից հետո՝ մարտի 16-ին, համայնքների պալատի շենքում կայացավ Լլոյդ Ջորջի և Բեքիր Սամիի առանձնագրույցը: Բրիտանական վարչապետը, խոսելով այն զիջումների մասին, որ Լոնդոնը կարող է անել Թուրքիային, հիշատակեց Հայաստանի ու Քուրդստանի անունները, ինչին Բեքիր Սամին պատասխանեց, որ «Միջագետքը թանկ գին չէ բրիտանական բարեկամության համար»՝ հավելելով, որ Անկարան մտադիր չէ Անգլիային անախորժություններ պատճառելու Մոսկուում (**Բայրուրդյան Վ.**, էջ 334-335): Հիշյալ երկխոսությունից պարզ է դառնում, թե ինչ առանցքի շուրջ էին հյուսվում այն օրերին երկրաքաղաքական սակարկումները:

³ **Սահակյան Ռ.**, էջ 99:

⁴ Առաջարկը բնավ անհիմն չէր, քանզի ռուս-թուրքական օգոստոսյան պայմանագրի տապալումից հետո էթնիկ օս Բեքիր Սամին եղել էր Հյուսիսային Կովկասում և հակաբուլղարական քարոզչություն վարել այդքանով իսկ ապագայի համար ապահովագրելով Թուրքիային ռուսական քաղաքականության փոփոխություններից (**Nur R.**, Moskova-Sakarya hatiralari, Istanbul, 1993, s. 96):

⁵ Ինչպես գրում է ժամանակաշրջանի դեպքերին խորագիտակ, հանրապետական Թուրքիայի պատմագիտության հիմնադիրներից Յուսուֆ Հիքմեթ Բայուրը. «... ըստ էության, այն ժամանակ Անգլիայի և մեր միջև անմիջական շփում ապահովելու ունակ այլ նպատակ չկար» (**Bayur Y. H.**, Türkiye Devletinin dış siyasası, İstanbul, 1938, s. 86):

Անգլիայի ու մասամբ ԱՄՆ-ի գլխավոր խնդիրներից մեկը Օսմանյան կայսրությանը Առաջին աշխարհամարտի և 1915 թ. ցեղասպանական գործողությունների մեղավորներին դատարանի առջև կանգնեցնելն էր: Հետաքննություններից հետո՝ 1919 թ. հունվարի վերջից սկսած՝ 112 կասկածյալ տեղափոխվեց ժամանակի հայտնի Բեքիրաղա զինվորական բանտը (*“Bekiraga Bölüğü”*): Իզմիրի գրավումից հետո Դամադ Ֆերիդի կառավարությունը ժողովրդին հանգստացնելու համար այնտեղից ազատեց 41 կալանավորի: Այս ամենից անհանգստացած՝ անգլիացիները 1919 թ. մայիսի 28-ին բանտում գտնվող 67 բանտարկյալի նկատմամբ հսկողություն հաստատեցին, իսկ սեպտեմբերի կեսերին նրանցից 12-ին տեղափոխեցին Մուղոս, մնացածին՝ Մալթա: Միևնույն ժամանակ անգլիացիները սկսեցին ուղիներ փնտրել Մալթայում պահվողներից 64-ին քենալականների ձեռքում գտնվող 29 անգլիացի գերիների հետ փոխանակելու համար, քանզի Մեծ Բրիտանիայի «... խորհրդարանի անդամները համոզված էին, որ *մեկ անգլիացի գերին թուրքերով լի մի նավի արժեք ունի* (ընդգծումն իմն է - Է.Է.)»¹: Ըստ Բեքիր Սամիի կնքած պայմանագրի՝ կյանքի էր կոչվում գերիների փոխանակման նախագիծը, և ըստ այնմ՝ Մալթայից ազատ արձակվածների դատավարությունը պետք է իրականացվեր Անկարայում: Պայմանագրում արվում էր վերապահում, որ թուրքերի ձեռքում գտնվող բրիտանացի գերիների դիմաց վերջիններս հետ են վերադարձնելու միայն այն գերիներին, ովքեր «հայ և անգլիացի գերիների (հին թուրքերեն՝ *üsera – Է.Է.*) հանդեպ հալածանք և բռնություն չեն կիրառել»²: Կարծում ենք, որ հետագայում այս պայմանագրի մերժման և չվավերացման պատճառի առանցքը կազմել է հենց նշված վերապահումը: Հունիսի վերջերին արդեն Անկարան սպառնագին կերպով տեղեկացրեց բրիտանական կողմին, որ իրենք չեն ճանաչում Բեքիր Սամիի կնքած համաձայնագիրը, և եթե անգլիացիներն իրենց մոտ եղած բոլոր գերիներին անխտիր բաց չթողնեն, ապա անգլիացի գերիներն էլ ազատություն չեն ստանա (այդ պահին՝ 24 հոգի)³:

Անգլիայի հետ կնքած պայմանագրից 4 օր առաջ՝ մարտի 12-ին, Բեքիր Սամին և Իտալիայի արտաքին գործոց նախարար Սֆորցան կնքել էին համաձայնագիր՝ համաձայն որի կոնֆերանսում Իտալիան պաշտպանելու էր Իզմիրը և Թրակիան Թուրքիային վերադարձնելու պահանջը, ինչի դիմաց Թուրքիան երկրի արևմտյան և հարավային մի քանի վիլայեթների (բացառությամբ Իզմիրի և ներառմամբ Անթալիայի, Բուրդուրի, Մուղլայի, Իսպարտայի, Աֆյոնգարահիսարի, Քյոթահիայի, Այդինի, Կոնիայի սանջակների) ապագայում որոշվելիք հատվածներում ճանաչելու էր տնտեսական գործունեության հանդեպ Իտալիայի արտոնությունը⁴: Նշված շրջաններում տնտեսական գործունեության իրավունքը թուրքական կառավարությունից և թուրքական կապիտալից հանձնվում էր իտալական կապիտալին, և միևնույն ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվում՝ Էրեղլիի հանքերը համատեղ թուրք-իտալական ընկերության միջոցով շահագործելու: Թուրք-իտալական ընկերություններում Թուրքիայի մասնաբաժինը լինելու էր 50 %⁵: Ինչպես 1927 թ. ասել է Քենալը⁶, «անկասկած, այս պայմանագիրը ևս մեր

¹ «Թուրքերը թուրքերի մասին», հ. III, Երևան, 2011, էջ 77-81:

² *Gönlübol M.*, s. 27:

³ «Թուրքերը թուրքերի մասին», էջ 81:

⁴ *Gönlübol M.*, s. 27:

⁵ *Bayur Y.*, s. 87:

⁶ Ավելորդ չենք համարում մշել, որ թուրք-իտալական այս պայմանագրի տեքստը գոնե մեզ հասանելի ոչ մի աղբյուրում տակավին հրատարակված չէ, և աշխարհիս պատմագիտությանը մատչելի է դառնում միայն Քենալի հայտնի ճառից, մասամբ նաև՝ Յուսուֆ Հիքմեթի՝ «Թուրքիա պետության արտաքին քաղաքականությունը» գրքից, իսկ մնացյալ՝ ավելի ուշ շրջանի հեղինակներն արդեն՝ ներառմամբ մեզ, բառացիորեն կրկնում են վերջիններիս ասածները:

կառավարությունը չէր կարող ընդունել» (*“Kuşkusuz bu sözleşmeyi de hükümetimiz kabul edemezdi”*)¹:

Ի տարբերություն Իտալիայի և Անգլիայի հետ կնքած պայմանագրերի՝ Ֆրանսիայի հետ կնքած պայմանագրի տեքստն ամբողջությամբ կա մեր ձեռքի տակ՝ շնորհիվ խորհրդային և հայ (Ռուբեն Գ. Սահակյան) պատմագրության, ուստի ավելի մանրամասն կարող ենք քննարկել խոսքի առարկա հանդիսացող պայմանագիրը: Նախ՝ նշենք, որ պայմանագիրը կնքվել է մյուս երկուսից առաջ՝ մարտի 9-ին, և ի տարբերություն մյուսների, որոնց դրույթները ծանրանում էին առանձին հարցերի վրա՝ ֆրանս-թուրքական պայմանագիրը կողմերի քաղաքական, տնտեսական ու ռազմական հայացքների համաձայնեցումն ապահովող համապարփակ իրավական փաստաթուղթ էր՝ բաղկացած 12 հոդվածից և կից հավելվածից²: Պայմանագրի ռազմական մասը նախատեսում էր թշնամական գործողությունների դադարեցում և ռազմագերիների փոխանակում, զինված բնակչության և հրոսակների զինափափում՝ ֆրանսիական և թուրքական հրամանատարության համաձայնությամբ: Թուրքական կառավարության տրամադրության տակ դրված ֆրանսիական սպաների և արդեն իսկ ստեղծված ժանդարմերիայի օգտագործմամբ նախատեսվում էր ստեղծել ոստիկանական ուժեր: Թուրք-սիրիական սահմանների հարցը որոշվում էր 12-րդ և 4-րդ հոդվածներով. համաձայն 4-րդի՝ ֆրանսիական զորքերի կողմից եվակուացված շրջանները, որոնք Սևրի պայմանագրով հանձնվել էին Սիրիային, բայց իրենց թքնիկական բնույթից ելնելով, վերստին մտցվում էին թուրքական պետության կազմի մեջ, 6 օրում զբաղեցվելու էին թուրքական զորքերի կողմից: Բաղդադի երկաթուղու՝ Կիլիկիայի և սիրիական սահմանի միջև ընկած հատվածը հանձնվելու էր ֆրանսիական ընկերության (հոդված 11): Վեցերորդ հոդվածով պաշտպանվելիք էին հռչակվում Թուրքիայի փոքրամասնությունների իրավունքները: Ի տարբերություն այս վերջին կետի ընդհանրական և ոչինչ չասող բնույթի՝ 10-րդ հոդվածում ավելի պարզ և հստակ էին ձևակերպված Սիրիային անցած Ալեքսանդրետի մարզում հօգուտ թքնիկ թուրքերի երաշխավորվող արտոնությունները՝ «իրենց մշակույթը զարգացնելու և թուրքերեն խոսելու, որն այստեղ պաշտոնական բնույթ կկրի այն չափով, ինչ չափով արաբերենը և ֆրանսերենը»: 9-րդ հոդվածը նախատեսում էր Թուրքիայում ֆրանսիական ազդեցության պահպանում, տվյալ մասնավոր դեպքում՝ դպրոցական ու բժշկական հաստատությունների ու բարեգործական հիմնարկների գործունեության պահպանմամբ: Տնտեսական հարաբերությունների կարգավորման էին նվիրված 7-րդ և 8-րդ կետերը: Համաձայն 7-րդի՝ առաջնության իրավունք էր տրվելու այն կոնցեսիաներին, որոնք տրվելու էին Կիլիկիայի՝ ֆրանսիական զորքերի կողմից պարպված շրջանների, ինչպես նաև Մամուրեթ-ուլ-Ազիզի, Դիարբեքիրի և Սվազի վիլայեթների տնտեսական օգտագործման նպատակով: Հօգուտ թուրքական կողմի վերապահում էր արվում, որ ֆրանսիական տնտեսական գործունեությունն իրականացվելու էր այն չափով, որչափ որ այն անմիջականորեն չէր իրագործվի օսմանյան ազգային կապիտալի միջոցով, ինչպես նաև, որ կոնցեսիոն ընկերությունները ստեղծվելու են օսմանյան օրենքի համաձայն, որից կարող ենք հետևցնել, որ գտնվելու էին թուրքական կողմի լիակատար իրավասության տակ: Արգանա-Մադենի հանքերի շահագործման իրավունքը հանձնվում էր ֆրանսիական ընկերության: Ինչպես և իտալական պայմանագրում, այստեղ ևս նախատեսվում էր օսմանյան և ֆրանսիական կապիտալների առավելագույն միավորում՝ թուրքականի 50 % մասնաբաժնով: Որպես երաշխիք կայուն տնտեսական գործակցության՝ 8-րդ հոդվածը նախատեսում էր թուրքական ու սիրիական մարզերի միջև մաքսային պատշաճ կարգի հաստատում³: Համաձայնագիրը, ինչպես տեսնում ենք, բաղդատմամբ Սևրի

¹ Atatürk, Söylev (Nutuk), 2. cilt, Yedinci baskı, Ankara, 1978, s. 432.

² Սահակյան Ռ., էջ 100:

³ Նույն տեղում, էջ 100-102:

պայմանագրի՝ նախատեսում էր տարածքային ավելի մեծ հատկացումներ՝ հօգուտ Թուրքիայի՝ փոխարենը, ըստ էության, նախատեսելով կապիտուլյացիաների ռեժիմի գոյության պահպանումը, ինչը հակասում էր «Ազգային ուխտի» և Ազգայնական շարժման հռչակած սկզբունքներին:

Անդրադառնալով Բեքիր Սամիի գործունեությանը և դրա առանցքը կազմող այս երեք պայմանագրերի «առեղծվածի» բացատրությանը հարկ է նշել, որ հայոց պատմագրության մեջ խորհրդային տարիներին իր «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.» ակադեմիական մենագրության մեջ (1970, խմբագրությամբ պրոֆ. Ե. Ղ. Սարգսյանի) հիշյալ խնդրականին տողատակում համառոտակի անդրադարձ է կատարել Ռուբեն Սահակյանը՝ կարծիք հայտնելով, որ սխալ է Բեքիր Սամիի վարած բանակցությունները (հեղինակը մասնավորեցնում է Լլոյդ Ջորջի հետ պարագան) նրա անձնական նախաձեռնության հետևանքը համարել: Որպես պնդման հիմնավորում՝ հեղինակը մատնանշում է Ինենյուի երկրորդ ճակատամարտի հաղթական ելքի ազդեցությունը Անկարայի երկրաքաղաքական ոգորումների վրա՝ ուշադրություն հրավիրելով, որ միայն մարտ 31-ի այդ հաղթանակից հետո է Բեքիր Սամին առժամանակ պաշտոնանկ արվել¹:

Համաձայնելով անվանի պատմաբանի նշված թեզին՝ մեր կողմից առաջ քաշենք ևս մի քանի հիմնավորում: Դեպքերի խորապատկերային համատեքստում Բեքիր Սամիի քայլերը կատարելապես տեղավորվում են թուրքական արտաքին քաղաքականության տրամաբանության մեջ: Բանն այն է, որ ինչպես միշտ, այնպես էլ ճնաժամային այս իրավիճակում, թուրքական արտաքին քաղաքականությունը խարսխված էր Արևմուտք-Արևելք՝ թալաստկրատիա-թելուրոկրատիա, մրցակցային հարաբերությունների հատման ծիրում թուրքական պետական շահը առարկայացնելու հղացքի վրա: Ռուս-թուրքական օգոստոսյան պայմանագրի տապալումից և երկկողմ հարաբերություններում լարվածության առաջին ալիքի գոյացումից հետո թուրքական արբանյակը սկսեց տրամադրվել դեպի Արևելքի թրքամահմեդականություն և վերստին՝ Արևմուտք: Պարտավոր ենք նաև արձանագրել, որ, այնուամենայնիվ, ազգայնական շարժման արտաքին քաղաքականության վեկտորը գերազանցապես ուղղված էր դեպի Ռուսաստան, քանզի միայն նրանից կարելի էր ստանալ Հունաստանի դեմ պատերազմը շարունակելու համար անհրաժեշտ միջոցներ, ուստի Արևմուտքի հետ սիրախաղը և լոնդոնյան բանակցությունները նպատակ ունեին միայն և միայն ճեպացնելու Մոսկվայում ընթացող բանակցությունները, և ո՛չ բնավ վիժեցնելու դրանք, ինչպես ներկայացնում էր ժամանակին խորհրդային պատմագրությունը՝ պայմանավորելով դա Բեքիր Սամի անձի ունեցած ռուսատյաց հայացքներով²:

Ինչ վերաբերում է ռուս-թուրքական հարաբերություններին, ապա դեռևս դեկտեմբերի 9-ին, արձագանքելով թուրքական կառավարության ցանկությանը՝ վերստին հրավիրելու ռուս-թուրքական կոնֆերանս, մոսկովյան կողմը պատասխանում է հավանությամբ՝ միաժամանակ հավելելով, որ կոնֆերանսին իրենց մասնակցությունը պետք է բերեն նաև Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորությունը, քանզի քննվելու է նաև այդ երկրների սահմանների հարցը, իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, ապա խաղաղությունը վերջինիս և Թուրքիայի միջև պետք է հիմնված լինի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա³: Արդեն այդ ժամանակ խորհրդային կողմի մոտ նկատելի էին միտումներ՝ մերժելու օգոստոսյան

¹ Սահակյան Ռ., էջ 99:

² «СССР и Турция 1917-1979», Москва, 1981, с. 30. Այս առումով չենք կարող համաձայնել նաև Արարատ Հակոբյանի այն թեզին, որ Անկարայի համար զուգահեռաբար ընթացող լոնդոնյան բանակցություններն ունեին ավելի մեծ նշանակություն, քան Մոսկվայինը, քանի որ այնտեղ Թուրքիայի գերնպատակը Սևրի պայմանագիրն ի չիք դարձնելն էր (Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 153):

³ «Документы внешней политики СССР», т. 3, Москва, 1959, с. 371, 392.

պայմանագրով ընդունված «Ազգային ուխտը» (*“Misak-ı Milli”*) և հարց հարուցելու Հայաստանին «Թուրքահայաստանի անհրաժեշտ մասերի» փոխանցման կապակցությամբ¹: Թուրքերն իրենց հերթին պայման էին առաջ քաշում, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայումը Մոսկվայում կարող է վերստին քննարկման առարկա դառնալ միայն այնտեղ հայերի «մինիմալ ներկայության պարագայում», իսկ արդեն արևմտահայկական՝ «արևելյան» տարածքների հետ կապված՝ սպառնալից պատասխան էին հնչեցնում, որ այդ հարցի հարուցումը միայն պատճառ կդառնա նախկին հակասությունների²:

Նախքան այս գրագրությանը հաջորդած դեպքերին անդրադառնալը մեջ բերենք Չիչերինի հաղորդումը Քաղբյուրոյին (դեկտեմբեր 3). «Թուրքերը մեզնից սպասում են հետագա օգնություն զենքով և ոսկով, և մենք այդպիսով ունենք նրանց վրա ազդելու հզոր միջոց: ... Մենք կարող ենք խոստանալ Թուրքիային՝ վերսկսելու մեր օգնությունը, *եթե նրանք հեռանան Հայաստանից* (ՀՀ տարածքից – **Է.Է.**): Պետք է հաշվի առնել, որ Կարսը բանալին է դեպքի Բաքու: ... *Թուրքահայաստանի որոշ մասի անկախությանը պետք է շարունակենք ձգտել* (ընդգծումները՝ **Ռ. Ղ.**), բայց ոչ ուղտիմատիվ կերպով, որ դա չձառայի խոչընդոտ թուրքերի հետ մեր բարեկամական հարաբերությունների ճանապարհին»³: Ժամանակաշրջանի քննությունը ցույց է տալիս, որ թուրքական կողմի հակադարձ հիմնական լծակը, ինչպես արդեն նշել ենք, գրավված Ալեքսանդրապոլն էր և այնտեղ կնքված պայմանագիրը: Այս ամենը հստակորեն գիտակցում էր նաև մոսկովյան վերնախավը: Այսպես, 1921 թ. հունվարի 20-ին՝ մի շրջանում, երբ թուրքական պատվիրակությունը չէր շտապում ժամանել Մոսկվա, Միլվանին հաղորդում է. «... Թուրքերը *դիտավորյալ չեն հեռանա Ալեքսանդրապոլից*, որպեսզի կոնֆերանսին առևտուրի առարկա ունենան», իսկ արդեն փետրվարի 9-ին Օրջոնիկիձեն իր ձեպագրում մտահոգություն է հայտնում, որ «Մուշ-Վան-Բիթլիսի չիչերինյան պահանջը ուժեղացրել է Անտանտի կողմնակիցներին (Թուրքիայում – **Ռ. Ղ.**), և Մուստաֆա Քեմալը սկսել է մերձեցման ուղիներ փնտրել Կոստանդնուպոլիս-Անտանտի հետ»: Եզրակացությունը մեկն էր՝ պետք էր շտապ կերպով կնքել պայմանագիրը թուրքերի հետ⁴: Վավերագրերի ուսումնասիրությունը կասկած չի թողնում, որ այդ պահին Ալեքսանդրապոլի զբաղեցումն ու Արևմուտքի հետ սիրախաղն ավելի զորավար գործոն եղան թուրքերի ձեռքին, քան Թուրքիայի կախվածությունը խորհրդային օգնությունից. հանգամանքները ճիշտ կառավարելու շնորհիվ՝ թուրքերն իրենք կախվածության մեջ զգեցին ռուսներին:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 8-ին Չիչերինը մտահոգված հեռագրում էր Օրջոնիկիձեին. «Եթե թուրքերը մեզ հետ բանակցելու համար Մոսկվա են գալիս, ուրեմն թող *շուտ* գան (ընդգծումն իմն է - **Է. Է.**)»: Մինչդեռ թուրքերը եկան միայն փետրվարի 18-ին, երբ արդեն Լոնդոնի կոնֆերանսը սկսել էր աշխատանքներն, իսկ Ռուսաստանում արդյունաբերական և վառելիքային ճգնաժամի պատճառով՝ խոշոր կենտրոններում բռնկվել էին աշխատավորական ապստամբություններ՝ որպես այդպիսին առաջինները խորհրդային Ռուսաստանի պատմության մեջ: Ըստ այդ օրերին շրջանառվող լուրերի՝ երեք հոգի սպանվել էր, իսկ կարմիրբանակայինները հրաժարվել էին կրակ բացել ժողովրդի վրա: Մինևույն ժամանակ ապստամբություն բռնկվեց Կրոնշտադտում. վտանգ կար նոր քաղաքացիական պատերազմի և նոր ինտերվենցիայի, այս անգամ արդեն՝ թուրք-վրացական դաշնակցությամբ⁵: Թուրքական կողմի խաղաքարտերը վերջնականապես հաղթական դարձան՝

¹ Казанджян Р., Еще раз к вопросу о подписании Россией в 1921 году русско-турецкого договора, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. 4, Երևան, 2006, էջ 135:

² «История Армении с древнейших врем, н до наших дней», Ереван, 1999, с. 217.

³ Казанджян Р., с. 135.

⁴ Утунի К вопросу об оценке московского русско-турецкого договора 1921 г., «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 20, Երևան, 2001, էջ 119-120:

⁵ Казанджян Р., Еще раз к вопросу о подписании Россией в 1921 году русско-турецкого договора, с.135-136.

կապված Հայաստանում Փետրվարյան ապստամբության բռնկման և Լոնդոնում Բեքիր Սամիի գործունեության հետ: Վերոբերյալ պայմանագրերից զատ՝ վերջինս մարտի 12-ին հարցազրույց էր տվել «Պթի պարիզեյն» լրագրին և անկեղծ գոհունակություն հայտնել ֆրանս-լեհա-ռումինական պայմանագրի առնչությամբ¹ և հավաստել, որ այն ամենի համար, ինչ թուրքերը ստացել են, պարտական են Ֆրանսիային և Բրիտանիան: Բեքիր Սամին չէր մոռացել հիշատակել, որ տվյալ համաձայնագիրը խոր ազդեցություն կթողնի մահմեդական աշխարհի վրա: Մոսկվային այլ բան չէր մնում անելու, քան բողոքի հայտագիր հղելու իրենց մոտ հավատարմագրված դեսպան Ալի Ֆուադին՝ հարցում անելով, թե «ո՞ւմ է ներկայացնում Բեքիր Սամի բեյը՝ Կ. Պոլսի՞ն, թե՞ Անգորային: Եվ այս վերջին դեպքում արդյոք տեղի չի՞ ունենում կողմնորոշման փոփոխություն, որի մասին, եթե այդ այդպես է, թուրքիան պետք է նախապես տեղեկացներ՝ համաձայն անցյալ տարվա որոշումների, եթե մինչև իսկ այդ որոշումներին վերաբերող ակտը չի էլ ստորագրվել (խոսքը օգոստոս 24-յան պայմանագրի մասին է – Է. Է.)»²: Ալի Ֆուադը պատասխանեց մեկ օր անց՝ մարտի 13-ին: Վերջինիս պատասխանի առանցքային հղացքը հանգում էր հետևյալին. «կապիտալիստական երկրները» ցանկանում են վիժեցնել մոսկովյան բանակցությունները և պայմանագրի կնքման գործընթացը, այդ իսկ պատճառով՝ նման տեղեկություններ են տարածում իրենց մամուլում³: Ալի Ֆուադի պատասխանից ուղղակիորեն կարելի էր հետևցնել, որ խորհրդային Ռուսաստանի համար լուծումը պայմանագիրը շուտափույթ կերպով կնքելն էր, այսպես ասած՝ ի հեճուկս Արևմուտքի (*“Нет времени долго обсуждать и передавать из инстанции в инстанцию тексты статей. Надо во что бы ни стало кончить немедленно и предстать перед политическим миром с готовым подписанным текстом”*, - Չիչերինը արդարադատության ժողկոմ Կուրսկուն 10 մարտ 1921թ.)⁴:

Ահա այսպիսի սպառնալից իրավիճակում խորհրդային Ռուսաստանը, երկրաքաղաքական առումով շրջապատված բոլոր կողմերից, ստիպված եղավ զոհելու իր շահերի մի մասը (տվյալ դեպքում՝ խորհրդային Հայաստանի տարածքները)՝ Անտանտի համակողմանի վերջնական շրջափակումից խուսափելու և թուրքիան սեփական ծիրում պահելու համար: Ինքը՝ Չիչերինը, պայմանագրի կնքումից հետո բազմիցս հաստատել է, որ Կարսի և Արդահանի զիջումը, անգամ՝ հանուն Բաթումի, բավականին մեծ զին էր, որ վճարեց խորհրդային Ռուսաստանը՝ հանուն Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների: Այսպիսով, դժվար է չհամաձայնել Գալուստ Գալոյանի այն թեզին, որ Մոսկվայի պայմանագիրը ոչ թե բուլշևիկյան Ռուսաստանի խոշոր հաղթանակն էր⁵, այլ քեմալական Թուրքիայի, ինչպես նաև հարցին խորագիտակ Ռեմ Ղազանջյանի այն պատկերավոր համեմատությանը, որ պայմանագիրը Ռուսաստանի համար «երկրորդ Բրեստն» էր⁶, որտեղ նույնպես հակառակորդն ուղղակիորեն թելադրել էր իր պայմանները:

Պայմանագիրը կնքվեց մարտ 16-ի թվագրմամբ՝ մի կողմից Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարության, մյուս կողմից՝ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի կառավարության միջև՝ «ազգերի եղբայրության սկզբունքի» հիման վրա: Պայմանագրի առաջին հոդվածով Ռուսաստանը ճանաչեց «Ազգային ուխտը»: Այդ նույն հոդվածով էլ ՀՀ իրավահաջորդ խորհրդային Հայաստանին պատկանող Կարսի շրջանը հանձնվեց Թուրքիային: Երկրորդ հոդվածով Թուրքիան իր հերթին համաձայնում էր հօգուտ խորհրդային

¹ Այս առանցքը Ֆրանսիայի երկրաքաղաքականության արևելաեվրոպական հայեցակարգի մասն է ուղղված Ռուսաստանի և Գերմանիայի շահերի դեմ:

² «Документы внешней политики СССР», т. 3, с. 589.

³ Նույն տեղում, էջ 590:

⁴ Казанджян Р., Еще раз к вопросу о подписании Россией в 1921 году русско-турецкого договора, с. 137-138.

⁵ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, Երևան, 1999, էջ 455:

⁶ Казанджян Р., К вопросу об оценке московского русско-турецкого договора 1921 г., с. 117.

Վրաստանի զիջել Բաթումի շրջանը, սակայն պայմանադրությամբ, որ մարզիս բնակչությունը օգտվի լայն ինքնավարությունից, իսկ Բաթումի նավահանգստից թուրքիա եկող ապրանքների վրա չդրվի ոչ մի տեսակի տուրք, ընդհակառակը, թուրքիային տրվի նավահանգստից անտուրք օգտվելու իրավունք: Երրորդ հոդվածով Նախիջևանը՝ որպես ինքնավար մարզ, հանձնվում էր Ադրբեջանի խնամակալությանը՝ երրորդ երկրին այն չզիջելու պայմանով¹: Հինգերորդ հոդվածով որոշվում էր, որ նեղուցների հարցը վերջնականապես պետք է լուծվի ափամերձ պետությունների կոնֆերանսում՝ բացառմամբ, սակայն, թուրքիայի ինքնիշխանության վնասման, ինչպես նաև թուրքիայի և մայրաքաղաք Կ. Պոլսի անվտանգության խախտման: Վեցերորդ հոդվածով չեղյալ էին հայտարարվում նախկինի ռուս-թուրքական բոլոր պայմանագրերը, ինչպես նաև հօգուտ թուրքիայի էին զիջվում «նախկինում թուրքիայի և ցարական կառավարության միջև կնքված միջազգային ակտերի վրա հիմնված դրամական կամ որևէ այլ պարտավորությունները»: Յոթերորդ հոդվածով ՌՍՖՍՀ-ն սկզբունքով չեղյալ էր հայտարարում կապիտուլյացիաների ռեժիմը: Ութերորդ հոդվածով կողմերը պարտավորվում էին արգելել իրենց տարածքներում պայմանավորվող մյուս կողմի հանդեպ թշնամական վերաբերմունք և թշնամաբար գործելու պատրաստակամություն ունեցող կազմակերպությունների և խմբերի գործունեությունը: Ուշագրավ է 11-րդ հոդվածը, որտեղ կողմերը միմյանց քաղաքացիներին տրամադրում էին առավելագույն բարենպաստման պայմաններ: Արվում էր, սակայն, վերապահում, որ սույն հոդվածը չի կիրառվելու Ռուսաստանի դաշնակից Սովետական Հանրապետությունների քաղաքացիների իրավունքների և թուրքիայի դաշնակից մուսուլմանական պետությունների քաղաքացիների նկատմամբ: Բաթումի և Կարսի մարզի բնակիչներին թույլ էր տրվում հեռանալու համապատասխանաբար Վրաստանի և թուրքիայի տարածքներից (հոդված 12). այսինքն՝ Չիչերինի՝ շուրջ կեսամյա ջանքերը՝ դեպի հայրենի եզերքները հայերի վերադարձի և ինքնորոշման իրավունքների կենսագործման, փոխարինվեցին գաղթի դասական արտոնությամբ, այն էլ՝ ձևականորեն, եթե հաշվի առնենք, որ հայ բնակչությունը Արևմտյան և մասամբ՝ Արևելյան Հայաստանում երկիցս ենթարկվել էր ցեղասպանության: 13-րդ հոդվածով կարգավորվում էր ռազմագերիների վերադարձի հարցը: Ինչպես և օգոստոսյան պայմանագիրը, և առհասարակ՝ համանման ցանկացած պայմանագիր՝ այս մեկը նույնպես նախատեսում էր հյուպատոսական կոնվենցիայի կնքում և հարաբերությունների հաստատում (հոդված 14): 15-րդ հոդվածով Ռուսաստանը պարտավորվում էր Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի վերջիններիս կողմից թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում անպատճառ ճանաչվեն սույն պայմանագրի՝ իրենց վերաբերող կետերը: 16-րդ հոդվածը նախատեսում էր, որ պայմանագիրը պետք է վավերացվի հնարավորինս շուտ, վավերագրերը փոխանակվեն Կարսում², որից հետո ուժի մեջ կմտնեն բոլոր հոդվածները՝ բացառությամբ 13-ի, որը ուժի մեջ էր մտնում՝ ըստ նշված պայմանների:

Այսպիսով, թուրքական կողմի հաղթանակը 1921 թ. մարտի դրությամբ ակնհայտ է: Եվ որքան էլ ուշագրավ է, կողմերից երկուսն էլ այս «բարեկամությունը» համարում էին ժամանակավոր. մարտի 24-ին և ապրիլի 7-ին Լոնդոնում հայոց պատվիրակության հետ զրույցի ժամանակ ճիշտ և ճիշտ նույն բանն են ասել և՛ Բեքիր

¹ Պետք է ասել, որ Նախիջևանի հարցն ամենակնճռոտն էր, քանզի թուրքական պատվիրակությունն ամեն ինչ անում էր՝ տարածքը ձեռք գցելու համար, իսկ խորհրդային կողմը չէր ցանկանում զիջել: Ստալինի այն հարցին, թե «ինչո՞ւ եք Նախիջևանի հարցում այդքան համառոտ», Յուսուֆ Քեմալը պատասխանել էր՝ «այնտեղից թուրքիայի դուռն է բացվում» (İsmayil M., Azərbaycan ve Rus kaynaklarına göre 1921 Moskova-Kars Antlaşmaları ve Kuzey Azerbaycan'ın toprak bütünlüğü meseleleri, "Belleten cilt: LXVI, Ağustos 2002, sayı: 246", 2003, s. 517):

² Կարսի՝ որպես տեղավայրի պարտադիր պայմանի առաջադրումը թուրքերի կողմից, հիշեցնում է դրանից տասնամյակներ անց Ադոլֆ Հիտլերի համանման պարտադրանքը Ֆրանսիային՝ կապիտուլյացիան կնքելու Կոմպիենում, որտեղ այն 1918 թ. պարտադրվել էր գերմանացիներին:

Սամին, և՛ ՌՄՖՍՐ ներկայացուցիչ Կրասինը՝ «Սեր այսօրուայ համաձայնութիւնը սովետների հետ մի ժամանակաւոր տակտիկական երեւոյթ է...», «... մեր եւ թուրքերի ժամանակաւոր բարեկամութիւնը... անցողական է»¹ (ընդգծումներն իմն են - Է. Է.):

ВНЕШНЯЯ ПОЛИТИКА КЕМАЛИСТСКОЙ ТУРЦИИ В ПЕРИОД МЕЖДУ ДВУМЯ БИТВАМИ ПРИ ИНЕНЬЮ (ЯНВАРЬ-МАРТ 1921 ГОДА)

Эдгар Элбакян

В статье рассматривается внешняя политика кемалистского правительства в период между двумя битвами при Иненью. Подчеркивается положительное воздействие победы турецких войск на процесс проведения дипломатических переговоров.

В статье обоснована неправомерность армяно-турецкого договора, заключенного турками в ноябре 1920 года после взятия города Александрополя, и доказано, что этот договор являлся рычагом политического воздействия. А также высказывается мысль о том, что участие ангорского правительства на Лондонской конференции и антисоветская политика Бекира Сами использовались турецкой стороной для воздействия на Москву с целью ускорения подписания двустороннего договора на выгодных для турецкой стороны условиях.

В статье был сделан вывод о том, что Бекер Сами подписал договоры с западными странами для того, чтобы вывести страну из дипломатической блокады, а Московский договор имел жизненно важное значение для продолжения войны против Греции и являлся далеко не взаимовыгодным.

THE FOREIGN POLICY OF KEMAL'S GOVERNMENT DURING THE PERIOD BETWEEN THE TWO BATTLES OF İNÖNÜ (JANUARY-MARCH 1921)

Edgar Elbakyan

The article focuses on the foreign policy of Kemal's government during the period between the two İnönü battles. The author outlines the positive impact that the success of the Turkish troops had on the negotiations held in diplomatic circles. It is substantiated that the occupation of Alexandropol and the Armenian-Turkish unequal agreement signed there as well as participation of Angora government in the London conference and the anti-Soviet policy of Bekir Sami were used by the Turkish party as a means of political leverage to influence Moscow in order to accelerate the signing of bilateral agreement on the most favourable terms for the Turkish side. Thus, the conclusions are the following: 1) the bilateral agreements signed by Bekir Sami between Turkey and Western powers had a single purpose to break the diplomatic blockade the country was in, 2) the Moscow treaty was of vital importance for Turkey for continuing the war against Greece and scarcely can be supposed as a mutual gain, because it was total the victory of Turkish diplomacy.

¹ Ահարոնեան Ա., Սարդարապատից մինչեւ Սեր եւ Լոզան (քաղաքական օրագիր), Պոսթըն, 1943, էջ 119-122:

ԹՈՒՐՔ-ՎՐԱՑԱՎԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918 Թ.

Էրիկ Դավթյան

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ. Ա. Մելքոնյան

Էլփոստ՝ komitas2010@gmail.com

Թուրք-վրացական հարաբերությունների մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ դրանք սկիզբ էին առել դեռևս Վրաստանի անկախության հռչակումից առաջ: Այստեղ ճակատագրական դեր խաղաց 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը, քանզի նախանշեց Անդրկովկասի՝ թուրքերի հետ սեփական միջոցներով հաշիվները մաքրելու գործընթացի սկիզբը: Ինչպես գիտենք, 1917 թ. դեկտեմբերի 5-ի (18-ի) Երզնկայի զինադադարը ամրագրեց ռազմաճակատի գիծը Երզնկայից մինչև Վանա լիճ: Ձինադադարից մի ամիս էլ չէր անցել, երբ դեկտեմբերի 29-ին բուլշևիկները ընդունեցին «Թուրքահայաստանի մասին» հայտնի դեկրետը, որով ռուսական զորքերը պետք է դուրս բերվեին Արևմտյան Հայաստանի գրավված տարածքներից, որպեսզի «հայերը կարողանան իրացնել ինքնորոշման իրենց իրավունքը»: Ռուսական զորքերի դուրսբերումը, որոնք ապահովում էին ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Արևելյան Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի անվտանգությունը, մեծ խանդավառություն առաջացրեց թուրքերի մոտ: Վերջիններս լավ հասկանում էին, որ անդրկովկասյան ուժերը չէին կարող սեփական միջոցներով ապահովել այդ հսկայական տարածքի պաշտպանությունը, ուստի հարմար պահը բաց չթողնելով, 1918 թ. հունվարին 30-ին վերսկսեցին ռազմական գործողությունները¹:

1918 թ. հունվարի 1-ին, ինչպես նշում է Ս. Վրացյանը, կովկասյան բանակի հրամանատար Օդիշելիձեն Վեհիբ փաշայից ստանում է հաշտություն կնքելու առաջարկ, որին պատասխան տրվում է միայն մեկ ամիս անց՝ փետրվարի 3-ին. Կոմիսարիատը համաձայնում է առաջարկին²: 1918 թ. փետրվարի 10-ին զուևարվեց Անդրկովկասյան Սեյմը՝ Կարլո Չխեիձեի գլխավորությամբ, որտեղ եղանակ էին ստեղծում վրաց մենշևիկները: Սեյմը առաջնահերթ խնդիր համարեց բանակցություններ սկսել թուրքերի հետ՝ հանդիպման վայր ընտրելով Տրապիզոնը: 1918 թ. փետրվարի 23-ին ժամանելով Տրապիզոն³, սկսվելիք բանակցություններում անդրկովկասյան պատվիրակությունը հետապնդում էր հետևյալ նպատակները՝ 1) հիմնական (պատվավոր) հաշտություն կնքել թուրքերի հետ, 2) հաստատել 1914 թ. պետական սահմանը, 3) հասնել Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը թուրքական պետության կազմում⁴:

Իրադարձությունները զարգանում էին շատ բուռն կերպով: Դեռ նոր էր որոշվել բանակցություններ վարել Թուրքիայի հետ, երբ լուր ստացվեց 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքման մասին, որով Թուրքիային էին զիջվելու Կարսը, Արդահանը և Բաթումը, ինչը մեծ զայրույթ առաջացրեց հայերի ու վրացիների մոտ: Իրադրությունը սպառնալից էր դառնում նրանով, որ թուրքական բանակի հաջողությունները, մասնավորապես՝ Էրզրումի խայտառակ անկումը փետրվարի 27-ին, քայլ առ քայլ իրականություն էին դարձնում պայմանագրային դրույթները⁵:

¹ Ինչպես նշում է գեներալ Թ. Նազարբեկյանը, հարձակման պատրվակը հայերի կողմից մահմեդական բնակչության նկատմամբ իրականացվող բռնաճնշումները վերացնելն էր (տե՛ս «Հայկական կորպուսն ընդդեմ թուրքական զորքերի (գե՛ն. Թ. Նազարբեկյանի հուշերը)», Երևան, 1994, էջ 26):

² Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 66-67:

³ Ս. Վրացյանի հիշատակմամբ՝ փետրվարի 22-ին (տե՛ս Վրացեան Ս., Անկախ եւ միացեալ Հայաստան, Բոսթոն, 1920, , էջ 29):

⁴ Manvelichvili A., Histoire de Géorgie, Paris, 1951, s. 420-421.

⁵ Վրացեան Ս., Անկախ և միացեալ Հայաստան, էջ 19:

Այնուամենայնիվ, թե՛ հայերը, թե՛ վրացիները որոշեցին հանդիպել թուրքերի հետ Տրապիզոնում՝ հույս ունենալով այլ կերպ լուծել Օսմանյան կայսրության հետ ունեցած հարցերը, մինչդեռ վերջինս, ինչպես նշում էր Ջուրաբ Ավալովը, «դեմ էր այդ ձեռքբերման վրա (ի նկատի ունի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը - Է. Դ.) ունենալ նաև Անդրկովկասի կնիքը»¹:

Տրապիզոնի բանակցությունները (1918 թ. մարտի 1 - ապրիլի 1) սակայն, տապալվեցին, քանզի թուրքական կողմը այդպես էլ չհրաժարվեց Կարսի, Արդահանի ու Բաթումի պահանջից²: Թուրքական պատվիրակությունը (Մախագահ՝ Ռաուֆ բեյ) մարտի 24-ին վերջնագիր ներկայացրեց՝ 48 ժամվա ընթացքում ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Նման պայմաններում ոչինչ էր մնում, քան շարունակել պատերազմը: «Այս րոպեին Կառավարությունը չի կարող ունենալ այլ որոշում, քան պատերազմը թուրքիայի հետ», - հայտարարում էր Գեգեչկորին³: Ապրիլի 1-ին (ապրիլի 14-ին) պատվիրակությունը հետ կանչվեց Թիֆլիս: Միևնույն ժամանակ պատերազմը շարունակելու համար ստեղծվեց Անդրկովկասի պաշտպանության գերագույն խորհուրդ՝ Գեգեչկորու, Կարճիկյանի և Ռամիշվիլու գլխավորությամբ, որը պետք է համակարգեր ռազմական գործողությունները, բայց այն չկանգնեցրեց թուրքական հաղթարշավը. ապրիլի 1-ին Բաթումը հանձնվեց: Չնայած 1 շաբաթ անց՝ ապրիլի 8-ին, Մազնիաշվիլու գլխավորած վրացական ուժերին հաջողվել էր Չուլքի ճակատամարտում ջախջախել թուրքական զորքերին, բայց այդպես էլ չհաջողվեց փրկել Բաթումը⁴: Այդպիսի անկումից սարսափած՝ վրացիները, ինչպես ասում էր Սիմոն Վրացյանը, այլևս հակվեցին ամեն գնով թուրքերի հետ հաշտվելու մտքին⁵:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումից հետո թուրքիայի համար առաջնա-յին խնդիր էր դարձել ստիպել Անդրկովկասին հռչակելու անկախություն, որպեսզի հնարավոր լինի բացառել Ռուսաստանի հնարավոր ազդեցությունը նրա վրա: Դա հնարավորություն կտար թուրքերին, մեծ-մեծակ մնալով վրացիների, հայերի ու մահմեդականների հետ, ավելի մեծ գիջումներ պարտադրել: Անկախության հռչակումը թուրքական ճնշման ներքո տեղի ունեցավ ապրիլի 9-ին (22-ին)⁶: Հետաքրքրական է, որ թուրքիայի կողմից Անդրկովկասի անկախության ճանաչումը տեղի ունեցավ միայն ապրիլի 12-ից (25-ից) հետո, երբ զինվորական նախարար գեներալ Օդիշելիձեն հրամայեց դադարեցնել ռազմական գործողությունները⁷:

Տրապիզոնում տապալված բանակցությունները վերսկսվեցին Բաթումում 1918 թ. մայիսի 11-ին այնպիսի մի իրավիճակում, որ անտանելի էր թե՛ վրացիների, թե՛ հայերի համար: Ինչպես իրենք վրացիներն էին նշում, պատվիրակների համար

¹ **Аваловъ З.**, Независимость Грузии въ международной политикѣ, 1918-1921 гг., Paris, 1924, с. 32.

² Տրապիզոնի բանակցություններին վրաց կողմից մասնակցում էին Չխենկելին (պատվիրակության նախագահ), Աբաշիձեն, Գվազավան, Լասխիշվիլին, Չիկալին և Նիկոլաձեն, հայոց կողմից՝ Քաջազնունին և Խատիսյանը, ադրբեջանական կողմից՝ Հաջինսիկն, Մեթիկը, Շեյխ-ուլ-Իսլամովը, Խաս-Մամեդովը և Ռասուլզադեն (տե՛ս **Վրացյան Ա.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 82):

³ Նույն տեղում:

⁴ **Վաչնաձե Դ.**, Վրաստանը հիւսիսի եւ հարաւի միջեւ. հին օրերէն մինչեւ մեր օրերը: Ռուսերէնէ թարգմ. Վ. Մասիսեան, էջ 46:

⁵ **Վրացեան Ա.**, Անկախ եւ միացեալ Հայաստան, էջ 25:

⁶ **Սահակյան Տ.**, Մեծ Հայաստանի Գուգարք-Գողերձական տարածաշրջանի քաղաքական և հոգևոր-մշակութային ճակատագիրն ի սկզբանե մինչև 1980-ական թվականները, Երևան, 2004, էջ 317:

⁷ Այստեղ կարելի է նկատել թուրքական դիվանագիտության փայլուն հեռատեսությունը: Առաջին հայացքից տարօրինակ է թվում, որ Անդրկովկասի անկախացման գործում այդքան շտապող թուրքերը հենց նույն օրը չճանաչեցին անկախությունը, այլ միայն մի քանի օր անց: Դա բացատրվում է նրանով, որ թուրքիայի համար կարևոր էր հասնել ոչ այնքան Անդրկովկասի անկախացմանը, որքան անկախացման ու դրան հաջորդելիք հաշտության բանակցությունների հետ ուղղակիորեն կապված ռազմական գործողությունների դադարեցմանը, ինչը, բնականաբար, հեշտացնելու էր թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Անդրկովկասի խորքերը:

սարսափելի էր բանակցություններ վարել թուրքերի հետ Բաթունում, որտեղ «որպես հյուր էին եկել թուրքերին»:

Թուրքական պատվիրակությունը առաջնորդում էր արդարադատության և արտաքին գործերի (ժամանակավորապես) նախարար Խալիլ բեյը: Բաթուն էին եկել նաև թուրքական կովկասյան բանակի հրամանատար Վեհիբ փաշան, ծովային նախարար Ջեմալ փաշան և ռազմական նախարար Էնվեր փաշան: Անդրկովկասյան միացյալ պատվիրակությունը ուներ նույն կազմը, ինչ Տրապիզոնի բանակցությունների ժամանակ: Ներկա էր նաև գերմանական պատվիրակությունը ֆոն Լոսսովի գլխավորությամբ:

Բաթունի կոնֆերանսը բացվեց մայիսի 11-ին, երբ ողջունի խոսքով հանդես եկավ Խալիլ բեյը: Թե՛ հայերի, թե՛ վրացիների համար միանգամից ակնհայտ դարձավ, որ կոնֆերանսում փշրվելու են պատվիրակության բոլոր հույսերը՝ թուրքերի հետ բանակցություններ վարելու միայն և միայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի շուրջ: Իրավիճակի լրջությունը իր ողջ էությանը ի հայտ եկավ այն ժամանակ, երբ թուրքերը ներկայացրին հաշտության պայմանագրի իրենց նախագիծը, որը բաղկացած էր 12 կետից¹: Պայմանագրի նախագիծը, բացի Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված տարածքներից, պահանջում էր Ախալքալաքի ու Ախալցխայի շրջանները, ինչպես նաև Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի շրջանները՝ երկաթուղիների նկատմամբ թուրքական լիակատար վերահսկողությամբ: Եթե վերոհիշյալ տարածքների հանձնումը կատարյալ աղետ էր հայերի համար, Վրաստանի համար սպառնալից էր Բաթունի, Ախալքալաքի ու Ախալցխայի շրջանների հանձնումը, քանի որ, բացի այն, որ դրանք վրացիները համարում էին վրացական տարածքներ, մեծանում էր Թիֆլիս ներխուժելու թուրքական վտանգը:

Այնուամենայնիվ, ո՛չ վրացիները, ո՛չ հայերը այդ պահին չէին կարող ոչինչ փոխել, քանզի ռազմի դաշտում պարտություն էին կրել, տարածքները վերահսկվում էին թուրքական զորքերի կողմից, ուստի փրկվելու միակ հույսը դիվանագիտական լծակներն էին, այն է՝ Գերմանիայի հնարավոր աջակցությունը ընդդեմ իր կրտսեր դաշնակցի՝ Անդրկովկասում դիրքերի չափից շատ ուժեղացմանը:

Մայիսի 26-ին թուրքական պատվիրակությունը 72 ժամ ժամկետով վերջնագիր ներկայացրեց անդրկովկասյան պատվիրակությանը՝ պահանջելով ընդունել հաշտության թուրքական նախագիծը, բայց վերջնագիրը ստանալուց 4 ժամ առաջ Անդրկովկասը որպես անկախ պետություն այլևս գոյություն չուներ:

Անդրկովկասյան հանրապետության լուծարումից հետո Բաթունի դիվանագիտական ռազմաճակատում որոշակի դադար հաստատվեց: Բանն այն է, որ թուրքական պատվիրակությունը սպասում էր Վրաստանի, նաև Հայաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակմանը, որպեսզի այսուհետ տարվեին բոլորի հետ առանձին բանակցություններ: Մինչ վրաց քաղաքական ընտրանին ճարպկորեն փորձում էր ապահովել Վրաստանի անվտանգությունը թուրքական հնարավոր ներխուժումից՝ ստորագրելով Փոթիի պայմանագիրը, նույն օրը՝ մայիսի 28-ին իրենց անկախությունը հռչակեցին Հայաստանն ու Ադրբեջանը:

Անդրկովկասյան հանրապետությունների անկախացման գործընթացի ավարտից մի քանի օր անց՝ մայիսի 31-ին վերսկսվեցին թուրք-վրացական բանակցությունները: Արդեն անկախ Վրաստանի Հանրապետությունը ներկայացնող պատվիրակության կազմում էին վարչապետ Նոյ Ռամիշվիլին, գեներալ Օդիշելիձեն, Գվազալան և Ռեխիլաձեն: Ռամիշվիլու այն հարցին, թե արդյոք Անդրկովկասյան հանրապետությանը ներկայացված վերջնագիրը այժմ վերաբերում է նաև Վրաստանին,

¹ Պաշտոնապես կոչվում էր «Օսմանյան Կայսերական Կառավարության և Անդրկովկասյան Կոնֆեդերատիվ Հանրապետության միջև հաշտության և բարեկամության պայմանագրի նախագիծ. այն ուներ նաև երեք հավելված, ինչպես նաև լրացուցիչ պայմանագրի» նախագիծ Թուրքիայի ռազմական շահերի վերաբերյալ (տե՛ս **Аваловъ** 3., էջ 41-42):

վրացիները ստացան «դրական պատասխան» ընդ որում՝ վերջնագրին պատասխան պետք է տրվեր նույն օրը մինչև գիշերվա ժամը 12-ը¹: Ռամիշվիլուն այլ ելք չէր մնում, քան համաձայնվել:

Օսմանյան կայսրության և Վրաստանի միջև «հաշտության և բարեկամության մասին» պայմանագիրը ստորագրվեց 1918 թ. հունիսի 4-ին: Պայմանագրի համաձայն՝ Թուրքիային էին անցնում Կարսը, Արդահանը, Բաթումը, ինչպես նաև Ախալքալաքի ու Ախալցխայի շրջանները: Թուրքիայի տարածքային նկրտումները մեղմելու հարցում Գերմանիայի միակ և կարևորագույն աջակցությունը եղավ այն, որ Վրաստանին վերադարձվեցին Ախալքալաքի շրջանի Աբասուման և Ածղուրի վայրերը²: Պայմանագիրն ուներ երեք հավելված՝ առևտրի ժամանակավոր կանոնների (հավելված 1-ին), սահմանային վայրերին տրվող հատուկ արտոնությունների (հավելված 2-րդ), ինչպես նաև Վրաստանի մահմեդականների հոգևոր իշխանության վերաբերյալ կանոնների մասին (հավելված 3-րդ)³:

Թուրքիայի և Վրաստանի միջև ստորագրվեց ևս մեկ պայմանագիր, որի մասին հիշատակումներ պատմագրության մեջ շատ քիչ կան, չնայած այն կարևոր էր այնքանով, որքանով բուն Բաթումի պայմանագիրը: Խոսքը հունիսի 4-ին ստորագրված լրացուցիչ պայմանագրի մասին է, որի դրույթներով 1) վրացական զորքերը պետք է դեմոբիլիզացիայի ենթարկվեին, 2) Թուրքիայի կողմից որոշակի վերահսկողություն էր հաստատվելու վրացական զինված ուժերի նկատմամբ, 3) վրաց կառավարությունը պարտավորվում էր հեռացնել բոլոր այն սպաներին ու պաշտոնյաներին, որոնք պատերազմի մեջ էին Թուրքիայի հետ (այսինքն՝ քաղաքական և ռազմական ապարատում վերացնել բոլոր հակաթուրքական տարրերին- Է.Դ.), 4) Թուրքիան իրավունք էր ստանում ռազմական փոխադրումներ իրականացնելու Վրաստանի երկաթուղիներով և սահմանվում էր դրա կարգը: Երկաթուղու վերահսկողությունը թողնվում էր վրացական զորքերին⁴: Վրացական նավահանգիստներում գտնվող ռուսական ռազմանավերը պետք է զինաթափվեին:

Միևնույն օրը համանման պայմանագրեր ստորագրվեցին նաև Թուրքիայի ու Ադրբեջանի և Թուրքիայի ու Հայաստանի միջև:

Բացի տարածքային և քաղաքական հարցերը կարգավորող պայմանագրերից կնքվեցին նաև տնտեսական բնույթի համաձայնություններ: Այսպես Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրվեց Բաթում-Բաքու կերոսինամուղի պահպանման մասին կոնվենցիա, իսկ Անդրկովկասյան հանրապետությունների և Թուրքիայի միջև ստորագրվեց պայմանագիր անդրկովկասյան երկաթուղիների շարժական գույքի վերաբերյալ, որով այն բաժանվեց ըստ «արդարացի սկզբունքի»՝ տարածքային պատկանելությամբ⁵:

Բաթումում ստորագրված պայմանագրերը ծանր էին Վրաստանի նորանկախ հանրապետության համար, իսկ անկախության առաջին ամիսներին վրացական քաղաքական ղեկավարությունը իր առջև խնդիր էր դրել ետ բերել կորցրած տարածքները դիվանագիտական միջոցներով: Միանգամայն պարզ էր, որ այդ շրջանում նմանատիպ աջակցություն կարող էր ապահովել միայն Գերմանիան, քանզի Ամտանտի հետ կապի մեջ մտնելու բոլոր ճանապարհները փակ էին:

¹ «Документы и матерьялы по внѣшней политикѣ Закавказья и Грузіи», Тифлисъ, 1919, с. 340.

² Ընդ որում՝ դեռևս մայիսի 11-ին ներկայացված թուրքական նախագծում վերոհիշյալ երկու վայրերը ևս անցնելու էին Թուրքիային (տե՛ս **Аваловъ 3.**, էջ 94):

³ «Документы и матерьялы по внѣшней политикѣ Закавказья и Грузіи», с. 349-357.

⁴ Լրացուցիչ պայմանագրի հատուկ հավելվածով սահմանվում էր ռազմագերիների փոխանակման կարգը (նույն տեղում, էջ 361):

⁵ Վրաստանի կողմից այն ստորագրել էին Ն. Ռամիշվիլին, Գ. Գվազավան, Գ. Ռցխիլածեն և Ի. Օղիշելի-ծեն, Հայաստանի կողմից՝ Ա. Խատիսյանը, Հ. Քաջագունին և Մ. Պապաջանյանը, Ադրբեջանից՝ Մ. Հաջինսկին, Մ. Ռասուլզադեն, Թուրքիայից՝ Խալիլ և Վեհիբ փաշաները: Պայմանագիրը Ջամայանի հավաստմամբ ստորագրվել է 1918 թ. հուլիսի 4-ին (տե՛ս **Ջամալեան Ա.**, Հայ-վրացական կնճիռը, Երևան, 2011, էջ 110):

Թուրքական զորքերը, մնալով Բաթումի պայմանագրով իրենց անցած տարածքներում, բռնություններ և ավերածություններ էին սփռում Բաթումի շրջանի վրացական բնակավայրերում, մասնավորապես Օզուրգեթիում¹:

Վրաց-թուրքական հարաբերություններում որոշակի դադար եղավ 1918 թ. ամռանը, երբ Բեռլինում ընթանում էին բանակցություններ Վրաստանի ու Գերմանիայի միջև: Կոստանդնուպոլսում գումարվելիք կոնֆերանսը պետք է էական փոփոխություններ մտցներ Անդրկովկասյան հանրապետությունների սահմանային հարցերում, ուստի այնտեղ հավաքվեցին երեք երկրների պատվիրակությունները, սակայն կոնֆերանսին վիճակված չէր սկսել իր աշխատանքները:

1918 թ. հոկտեմբերի դրությամբ ստեղծվել էր արմատապես լրիվ այլ քաղաքական իրադրություն, որը ամբողջովին փոխելու էր Օսմանյան կայսրության և Վրաստանի ու Հայաստանի հարաբերությունների իրավապայմանագրային դաշտը: Եթե 1918 թ. մայիսի վերջի ու հունիսի սկզբի դրությամբ պատերազմական գործողությունները ընթանում էին Քառյակ միության օգտին, նույն թվականի հոկտեմբերին ակնհայտ էր Գերմանիայի, առավել ևս՝ Օսմանյան կայսրության պարտությունը: Բնական է, որ Թուրքիայի պարտությամբ անպայմանորեն առաջ էր գալու Բաթումի պայմանագրի վերանայման հարցը, և լայն հնարավորություններ էին բացվելու Վրաստանի ու Հայաստանի համար՝ ստիպելու թուրքերին՝ զորքերը դուրս բերելու Բաթումի պայմանագրերով անջատված տարածքներից: Այդ ակնկալիքով հայկական և վրացական պատվիրակությունները եկան Կոստանդնուպոլիս, որտեղ պետք է գումարվեր Քառյակ երկրների և անդրկովկասյան հանրապետությունների կոնֆերանս՝ Բաթումի պայմանագրերը վերանայելու համար:

1918 թ. հոկտեմբերին վրաց պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան թուրքական կառավարության ներկայացուցիչների հետ՝ փորձելով հարցը լուծել երկկողմ հիմքի վրա: Այդ հանդիպումներից առանձնանում է հոկտեմբերի 17-ի հանդիպումը արտաքին գործերի նախարար Նաբի բեյի և Ռեշադ Յիքմեթ բեյի հետ²: Նոր վեզիր Իզզեթ փաշայի կառավարությունը, բնականաբար, ավելի մեղմ դիրք էր զբաղեցնում, քան Թալեաթի գլխավորած հանցախումբը: Հանդիպման ժամանակ Նաբի բեյը հայտարարեց, որ թուրքական զորքերը դուրս կգան Ախալքալաքի ու Ախալցխայի շրջաններից, իսկ ինչ վերաբերում է Կարս-Արդահան-Բաթում հատվածին, թուրքերը չէին պատրաստվում զիջել: Շուտով, սակայն, պարզ դարձավ, որ թուրքերի հետ բանակցելը այլևս ոչ մի նշանակություն չունի, քանի որ հանդիպումից ընդամենը երկու շաբաթ անց՝ հոկտեմբերի 30-ին կնքվեց Մուղրոսի զինադադարը, որով արձանագրվեց Օսմանյան կայսրության պարտությունը և կապիտուլյացիան: Ջինադադարի՝ Վրաստանի հետ առնչություն ունեցող 11-րդ հոդվածով օսմանյան զորքերը պետք է դուրս բերվեին Անդրկովկասից և անկարգություններ ծագելու դեպքում զբաղեցվեին դաշնակիցների զորքերի կողմից³:

Սրանով իսկ վերջակետ էր դրվում թուրք-վրացական հարաբերություններին 1918 թվականի ընթացքում, քանզի այլևս նպատակահարմար չհամարելով բանակցել պարտված կողմի հետ՝ վրացական դիվանագիտությունը թուրքական գործոնը էլ չէր դիտարկում որպես լուրջ սպառնալիք վրացական պետականության համար:

¹ Саркисов Е., Борьба народов Закавказья против турецких оккупантов в 1918 году, «Արևելագիտական ժողովածու», հ. 1, Երևան, 1960, էջ 238:

² Аваловъ З., էջ 140-141:

³ Nihat E., Devletlerarası Hukuku ve Siyasi Tarih Metinleri: cilt I (Osmanlı İmparatorluğu Andlaşmaları), Türk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1953, s. 521-522.

ТУРЕЦКО-ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ В 1918 ГОДУ

Эрик Давтян

В статье рассматриваются турецко-грузинские отношения в 1918 году. Большое внимание уделяется переговорам между делегациями Османской империи и Закавказья в Трабзоне и Батуме, которые сыграли важную роль в создании баланса сил между двумя государствами. Батумский договор, подписанный 4 июня 1918 года, стал стержнем двусторонних отношений до заключения Мудросского перемирия. Начиная с октября 1918 года (т.е. после поражения Турции в Первой мировой войне), турецко-грузинские отношения были приостановлены более, чем на год.

TURKISH-GEORGIAN RELATIONS IN 1918

Erik Davtyan

The current article presents a thorough investigation and analysis of Turkish-Georgian relations in 1918. The treaty of Batumi was the background of bilateral relations of this period and simply the dominant document underlining the balance of power between the Ottoman Empire and Georgia. The author has emphasized the importance of the negotiations in Trabzon (continued in Batumi) which have caused the independence of Georgia on the 28th of May. The threat of Turkish invasion was totally driven away after the armistice of Moudros was signed. The latter put a pause in Turkish-Georgian relations for more than a year, so the meetings of the politicians of both states in Constantinople in October shaped the last phase of bilateral relations in 1918.

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՌՈՒՄԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ
ԶՈՒԳԱՅԵՆՆԵՐ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ**

Լիլիթ Մելիքյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ. պ.գ.դ., պրոֆ. Յ. Մարգարյան

Էլփոստ՝ lilit777.az@gmail.com

Եկեղեցի-պետություն-հասարակություն հարաբերությունների կարգավորման հարցը կենսական կարևորություն է ունեցել ինչպես միջի, այնպես էլ 19-20-րդ դդ.: Հիմնահարցը առավել քան արդիական է մեր օրերում, երբ Հայաստանի անկախացումից հետո վերստին առաջացել է եկեղեցի-պետություն հարաբերությունները համակարգելու անհրաժեշտություն: Հայոց եկեղեցու և ռուսական իշխանությունների փոխհարաբերությունների հետազոտության հարցը այս դեպքում առաջնահերթ գիտական ու գործնական կարևորություն է ձեռք բերում, քանի որ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների միջև փոխհարաբերությունները կարող են իմաստավորվել՝ հաշվի առնելով անցյալի դասերը:

Դարեր շարունակ պետականության բացակայության պայմաններում հանդիսանալով ազգը ներկայացնող և հայոց պետականությունը կրող միակ կազմակերպությունը՝ հայոց եկեղեցին, բնականաբար, իր վրա էր վերցնում հայ ժողովրդի ազատագրական ծրագրերի ձևակերպման և ուղղություն տալու պատասխանատվությունը՝ դառնալով նրա քաղաքական շահախնդրությունների արտահայտողը: Հետևաբար, Անդրկովկասում հաստատվելու առաջին իսկ օրերից ցարական կառավարությունը, գիտակցելով հայոց եկեղեցու մեծ ազդեցությունը հասարակական-քաղաքական գործերում, ձեռնամուխ եղավ վերջինիս իր քաղաքական լծակներից մեկը դարձնելու գործին¹:

Սկզբնական շրջանում, երբ Ռուսաստանի դիրքերը Անդրկովկասում երերում էին, ռուսական կառավարությունը ստիպված էր հայ եկեղեցու հանդեպ շատ զգույշ քաղաքականություն վարել, սահմանափակելով իր միջամտությունը հայ եկեղեցական գործերին՝ որպես հովանավորող քրիստոնյա տերություն: Դրությունը միանգամից փոխվեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացումից հետո, երբ Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռն անցավ ռուսական տիրապետության տակ: Էջմիածնի Մայր Աթոռը անմիջապես իր վրա զգաց ռուսական քաղաքականության ազդեցությունը: Ցարական կառավարությունը առիթ բաց չէր թողնում միջամտելու հայ եկեղեցու գործերին, որի վառ օրինակը էր Ներսես Աշտարակեցու նկատմամբ վարած քաղաքականությունն էր:

Այսպես, հայոց եկեղեցին իր ձեռքում գործիք դարձնելու և նրա վրա հեշտությամբ ազդելու համար ռուսական կառավարությունը հարմար գտավ այդ եկեղեցու ներսում որպես իր դրածո ունենալ, ոչ ավել ոչ պակաս, հայ եկեղեցու գլուխը՝ Ամենայն հայոց կաթողիկոսին: Այդ նպատակադրումը իրականացնելու համար Կովկասի ռուս պաշտոնեությունը որոշ միջոցներ է ձեռնարկում՝ ստիպելով արդեն զառամյալ Եփրեմ կաթողիկոսին հրաժարվել կաթողիկոսական աթոռից և իրենց հարմար թեկնածուին հաստատելու ուղղությամբ²:

Իրենց այս գործողություններում, սակայն, առաջին իսկ քայլերից հանդիպելով հայ եկեղեցու գործերում մեծ ազդեցություն ունեցող՝ Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցու համառ դիմադրությանը, ցարական պաշտոնյաները նախ ձեռնամուխ եղան նրան ասպարեզից հեռացնելու: Եվ ահա

¹ Ալեքսանյան Կ., Հայ եկեղեցին և «Պոլոժենիեն», Երևան, 2011, էջ 130:

² Նոյն տեղում, էջ 16:

սկսվում են Կովկասի կառավարչապետ Պասկևիչի ամբաստանությունները: Պասկևիչը այնքան էր չափը անցել, որ Պետերբուրգում ստիպված էին սահման դնել նրա ոգևորությանը: Այսպես, ռազմական մինիստր Պ. Գ. Չերնիշևը Պասկևիչին ուղղված գրության մեջ, վերջինիս սթափության և զգուշության կոչով է դիմում. «...վերջում կայսրը բարեհաճեց հիշեցնել, որ անհրաժեշտ է կայսրությանը նոր միացված ժողովուրդների մեջ որոշ արտաքին հարգանք ցույց տալ այն անձանց նկատմամբ, որոնք օգտվում են ժողովրդի վստահությունից և բարեհաճությունից, թեև նրանք իրենց հակումներով, բնավորությամբ դրան արժանի չեն, հատկապես եթե այդ անձինք եկեղեցական բարձր աստիճան են գրավում, առավել ևս ժողովրդի մտքի վրա ազդեցություն ունեն: Այսպիսով, Գլխավոր կառավարչին մնում է միայն խոհեմ շրջահայացությամբ կանխել նրանց կողմից ամեն մի դիմադրություն կառավարության մտադրությունների հանդեպ»¹:

Ի վերջո 1828 թ. հունիսի 10-ին կայացվեց հետևյալ որոշումը. «Ինքնակալը գտնում է, որ Ներսես Աշտարակեցու ներկայությունը վերգրավված տարածքներում և ընդհանրապես Կովկասում կարող է հանգեցնել բացասական քաղաքական հետևանքների, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է գտնում, հարմար առիթի դեպքում կանչել նրան Ռուսաստան, թողնել նրան այստեղ մշտական բնակության ...»²: Ներսեսը այլ ելք չուներ, քան հեռանալ և ընդունել Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդությունը: Այսպես, ռուսական իշխանությունների կողմից Ներսես Աշտարակեցու արքայությունը և ներքին քաղաքական ենթատեքստ, քանի որ հեռացնելով ասպարեզից Ն. Աշտարակեցուն՝ վերջիններս ազատ դարձան հայ առաքելական եկեղեցու ներքին գործերին միջամտելու՝ որդեգրած քաղաքականության մեջ:

Իրավիճակը ավելի բարդացավ Արևելյան Հայաստանը կայսրությանը միացնելուց հետո, երբ ռուսական իշխանությունները հրապարակեցին «Պոլոժենիե»-ն (1836 թ. մարտի 11), որով օրենսդրական դաշտի մեջ դրվեց հայոց եկեղեցու և կայսրության փոխհարաբերությունները:

«Պոլոժենիե»-ի հոդվածների վերլուծությունը մեզ բերում է հետևյալ սկզբունքային հարցերի առանձնացմանը.

1. Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավունքների սահմանափակում, որը ուղեկցվում էր՝

ա. էջմիածնի Սինոդի իրավունքների ուժձացմամբ,

բ. թեմակալ առաջնորդների անկախացմամբ՝ կաթողիկոսից:

2. Հայ եկեղեցական տնտեսության դրության անկայունացում³:

Պատմագրության մեջ տարբեր տեսակետներ են ձևավորվել եկեղեցական կանոնադրության վերաբերյալ:

Ըստ Վ. Թունյանի. «Պոլոժենիեն սահմանում էր եկեղեցու քաղաքական, իրավական, սոցիալական և տնտեսական գործունեությունը: Այս կերպ նպատակ էին հետապնդում նաև աշխարհասփյուռ հայերի շրջանում բարձրացնել էջմիածնի խաթարված հեղինակությունը: Ամենայն հայոց կաթողիկոսը կոչված էր մարմնավորել հայոց եկեղեցու ամբողջականությունը բոլոր հայերի համար, լինել միասնականության խորհրդանիշը, բայց միաժամանակ չպետք է կառավարեր որպես թեոկրատ»: Թունյանը առաջ է քաշում այն միտքը, որ կայսրությունը փորձում էր Անդրկովկասում իր հեռահար նպատակները իրագործելու համար որպես գործիք օգտագործել հայոց եկեղեցին:

Արշակ Ալաոյաճյանը հակված է կարծելու, որ «Մասնաւորապէս Պօլօժենիան կը պարունակէ տրամադրութիւններ, որոնք հիմնովին հակառակ են հայ եկեղեցւոյ

¹ Մատենադարան, ֆոնդ Կաթ. Դիվան, Թղթ. 64, վավ. 510:

² Тунян В., Церковная политика самодержавия в Закавказье в первой половине XIX в (1801- 1853), Ереван, 2005, с. 42.

³ Նույն տեղում, էջ 130:

աւանդութիւններուն և դարերէ ի վեր նուիրագործուած սովորութիւններուն, և ասոր համար առհասարակ բոլոր ազգին կողմք դիտուած է իբր օտարոտի կարգադրութիւն մը և միշտ դժգոհութեան և զանգատի տեղի տուած է» : Մաղաքիա Օրմանյանը գտնում է. «Բացարձակ կերպով չենք կրնար ուրանալ, որ մեծ քայլ մը և հիմնական օգուտ մըն է, որոշուած և պաշտոնապէս հաստատված և գործադրության միջոցներով գորացած կանոնադրություն մը ունենալ չունենալուն տասնապատիկ՝ հարյուրապատիկ լավագոյն է»¹:

Ըստ Լեոյի. ««Պոլոժենիէ»-ն միայն եկեղեցական կանոնադրության կանոնագիրք չէր, այլ դրանից էլ ավելին՝ Ռուսաստանի սահմաններում ապրող հայության էր ազգային-կուլտուրական ինքնորոշման առանձնաշնորհում: Ռուսաստանի աստվածապետական-բռնապետական հասարակարգի մեջ չէին կարող լինել առանձնապէս ճանաչված ազգություններ, որոնք իրավունքներ ունենային իբրև այդպիսին»²:

Այսպիսով, «Պոլոժենիէն» մի օրինագիծ էր, որը եականորեն սահմանափակում էր Հայոց եկեղեցու իրավունքները և ավանդույթները, ինչն էլ հնարավորություններ տալիս կայսրությանը հսկողության տակ պահել Հայոց եկեղեցու գործունեությունը: Կարելի է ասել, որ հայոց եկեղեցու և ռուսական իշխանությունների փոխհարաբերությունների ընթացքը մեծապէս պայմանավորված էր ներքին և արտաքին քաղաքականության մեջ կայսրության ունեցած շահերով:

Հայ եկեղեցու և ցարական կառավարության հարաբերություններում որոշակի դեր էր խաղում հայ ժողովրդի երկատված և աշխարհով մեկ ցրված լինելու հանգամանքը: Սա մի գործոն էր, որի հետ ցարիզմը ստիպված էր լինում հաշվի նստել՝ իր արտաքին-քաղաքական, մասնավորապէս արևելյան քաղաքականության շահերից ելնելով: Վերոհիշյալ հանգամանքով էր պայմանավորված, որ 1940-ական և 1950-ական թ. կայսրությունը փորձում էր օգտագործել հայոց կաթողիկոսի՝ աշխարհով մեկ ցրված հայության, մասնավորապէս թուրքահայերի շրջանում ունեցած հեղինակությունը, ամրապնդելու իր ազդեցությունը տվյալ տարածաշրջաններում:

Ահա, արդեն 1890 թ. Սանկտ-Պետերբուրգը վերանայեց իր ավանդական քաղաքականությունը և առաջնորդվեց նոր քաղաքական ուղիով, որը ավարտվեց հայոց եկեղեցու գույքի բռնագրավման (1903-1905 թթ.) անհաջող փորձով: Քաղաքական կողմնորոշման վերանայումը պայմանավորված էր ոչ միայն 1880-ական թթ. ընդունված՝ ռուսաֆիկացման քաղաքականությամբ, այլև ևս երկու հիմնական գործոններով: Առաջին հերթին առկա բոլոր տարածքային խնդիրները, մնում էին չլուծված, և գնալով այս հարցը ավելի էր խորանում: Պետերբուրգը գտնում էր, որ այն ընթացքում, երբ կաթողիկոսը պայքարում էր արտասահմանի հայության վրա իր ազդեցությունը տարածելու համար, Ռուսաստանի ներսում հայոց եկեղեցու գործերը դարձել էին քառսային և անկառավարելի:

Այս ամենի հետևանքով, 1897 թ. հունիսի 2-ին ցարը հաստատեց Պետական խորհրդի որոշումը հայակական եկեղեցական դպրոցները ժողովրդական լուսավորության տնօրինության հանձնելու մասին:

Ըստ Վ. Թունյանի. «Հոգևոր դպրոցների և սովորողների թվի կրճատումը նպատակ ուներ հայ հոգևորականությունը դարձնել կառավարության աստիճանավորներ: Նախատեսվում էր փոխհարաբերությունների ժամանակ ծագած բախումները լուծել կառավարության որոշումներով: Այն սովորողները, ովքեր չէին ընդգրկվել հոգևոր դպրոցներում, ուսուցանելու էին միջնակարգ դպրոցներում»³:

¹ Մաղաքիա Օրմանյան, Ազգապատում, հ. 4, Ս. Էջմիածին, 2001, էջ 36-96:

² Լեո, Հայոց պատմություն, հ. 4, Երևանի ժողովածու, Երևան, 1984, էջ 490:

³ Նոյն տեղում, էջ 144:

Մ. Վարանդյանի խոսքերով. «Պատճառները խորն էին և կուգային հեռուէն: Ցարերու ընդհանուր քաղաքականութեան մէջ էին անոնք: Այս քաղաքականութիւնը մէկ բառով կը ձևակերպուէր- ռուսացում»¹:

1903 թ. հունիսի 12-ին ցարական նոր օրենքը հայոց եկեղեցու ողջ գույքի բռնագրավման մասին. «....որոշում է յարքունիս գրաւել հայ եկեղեցականա-ազգային կալածքներ, որպէս զի այդ կալածների «եկամուտները չը գործադրեն յեղափոխական նպատակների համար»²:

«Դա մի արտակարգ պատժամիջոց էր ժողովրդի նկատմամբ, որի միակ պաշտոնական ներկայացուցիչը փաստորեն եկեղեցին էր: Եթէ վերջինս հնազանդ-վեր և դառնար հլու կամակատար, ապա ցարական բյուրոկրատիայի կարծիքով ժողովուրդը կդիմագրկվէր և ոչինչ անել այլևս չէր կարող: Գրավելով եկեղեցու ունեցվածքը և դրա փոխարեն հոգևորականութեանը տալով նյութական փոխհատու-ցում, ցարիզմը նրան ցանկանում էր դնել պետական նպաստ ստացող պաշտոնե-ութեան կարգավիճակում»³-, այսպիսի գնահատական է տալիս 1903 թ. հունիսի 12-ի օրենքին Վ. Երկանյան:

Ըստ Վ. Թունյանի. «Այս կերպ կառավարութիւնը նպատակ ուներ զրկել Էջ-միածնի կաթողիկոսութիւնը քաղաքական նշանակութիւնից՝ դարձնելով հոգևորա-կանութեանը սոսկ կառավարութեան ծառայողների՝ թույլ չտալով վերջիններիս օգտագործել եկեղեցու միջոցները ազգային գործերի համար»⁴:

Ցարական Ռուսաստանում Հայոց եկեղեցու կարգավիճակի մասին ավելի հստակ պատկերացում կստանանք, եթէ քննարկենք նաև կայսրութեան ներսում մյուս եկեղեցիների կարգավիճակը: Այս առումով հետաքրքրական է Ռուսական կայսրութեան ներսում վրաց եկեղեցու կարգավիճակի լուսաբանումը: Անդրկովկասին տիրելուց անմիջապէս հետո Ռուսաց կառավարութիւնը անհրաժեշտ համարեց միջամտել վրացական եկեղեցու ներքին ծիսական և վարչական գործերին՝ նպա-տակ ունենալով վերացնել վրաց եկեղեցու անկախութիւնը և ազգային բնութիւնը: Ռուսաստանի ուղղափառ եկեղեցու զերագույն հաստատութեան կարգադրութեամբ վերացվեց դարեր շարունակ գոյություն ունեցող վրաց կաթողիկոսութիւնը և նշանակվեց վերջինիս համար իբրև հոգևոր առաջնորդ՝ Էքզարխ, որը ամբողջապէս ենթակա էր ռուսական Սբ. Սիմոնի: Համաձայն պատմաբան Վ. Ստանկևիչի Ռուսա-կան կայսրութեան տիրապետութեան հաստատումը Վրաստանում նպաստավոր էր վերջինիս համար, բայց ոչ Վրաց եկեղեցու համար, որը վրաց-ռուսական հարա-բերութիւններում դիտարկվում էր որպէս դիսոնանս. «Սիայն վրաց հոգևորակա-նութիւնն է հակված ընդդիմութեան: Եթէ վրացական արքունիքում ռուսաց լեզուն սահմանափակում էր վրացերենի գործածութիւնը, ապա հոգևորականութիւնը, ելնելով ժողովրդի հետ շփումը պահելու անհրաժեշտութիւնից, հանդիսանում էր վրաց լեզվի պահապանը: Բացի այդ հոգևորականութիւնը միշտ հիշում էր վրաց եկեղեցու ինքնավարութիւնի գրկելու և այն Սիմոնի ենթարկելու փաստը: Սակայն հոգևորականութեան կողմնորոշումը ոչ մի կերպ չէր ազդում վրացիների տրա-մադրութեան վրա: Ինչքան էլ վատ լինէր Ռուսաստանի կառավարումը, այնու-ամենայնիվ, այն կարևոր խթան էր Կովկասի զարգացման համար»⁵:

Այսպիսով, հաստատելով վրաց Էքզարխութիւն, կայսրութիւնը վերացրեց կաթողիկոսութիւնը, և որպէս ուղղափառ քրիստոնյաների՝ պարզապէս միացրեց Ռուսական «գերիշխող» եկեղեցուն՝ ամբողջութեամբ ենթարկելով Սբ. Սիմոնին: Ըստ այդ, ի տարբերութիւն հայոց եկեղեցու, վրաց եկեղեցին շատ չնչին ներքին

¹ Վարանդյան Մ., Հայ հեղափոխական Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 272:

² Тунян В., Эчмиадзинский вопрос в политике России, Ереван, с. 155-352.

³ Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դարոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970, էջ 239-240:

⁴ Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX - нач. XX вв. (1900-1915), ч. 6, Ереван, 2010, с.19.

⁵ Станкевич В., Судьбы народов России, Берлин, 1921, с. 219.

ինքնուրույնություն ուներ¹: Այս մասին վկայում է արտաքին գործերի նախարարության ծառայող Ն. Մուրավյովը. «Չայաստանի մասին» խորագրով աշխատության մեջ: Վերջինս գրում է. «Ես չեմ խոսում վրացական եկեղեցու մասին, քանի որ այս հարցը վերաբերում է հենց մեր սեփական եկեղեցուն, բայց 300 հազար հայեր մտան կայսրության տարածքը և ևս 5 մլն. նրա սահմաններից դուրս, որոնք հոգևոր կախվածության մեջ էին մեր տարածքում գտնվող կաթողիկոսից, շատ հիշարժան են որպես եկեղեցու նվիրյալներ և որպես քաղաքացիներ»²: Այսպես, ուղղափառ, վրացիները չստացան այն զիջումները, որոնք ձեռք բերեց հայ առաքելական եկեղեցին: Կայսրության մյուս ուղղափառ եկեղեցիները ամբողջովին ենթարկված էին Սինոդին:

Կարելի է ասել, որ հայոց եկեղեցին իր կարգավիճակով ավելի նման էր Ռուսաց ուղղափառ եկեղեցուն, քանի որ 1836 թ. «Պոլոժենիե»-ի ծրագիրը կազմված էր, կառավարության կողմից ուղղափառ եկեղեցու համար ընդունված օրինագծի համաձայն: Եիշտ է հայոց կաթողիկոսի աստիճանը պահպանվում էր, իսկ ուղղափառ պատրիարքինը փոխարինվում է Սբ. Սինոդով (1721 թ.), բայց շատ դեպքերում այս 2 եկեղեցիները իրար նման էին: Չայոց կաթողիկոսին վերահսկողության տակ պահելու համար ընդարձակվեցին Սինոդի իրավունքները: Այնուհետև որպես առանձին հոգևոր ներկայացուցիչ կառավարության կողմից հաստատվեց օբերպրոկուրորը, որը պետք է հետևեր եկեղեցու և թեմերի գործունեությանը, իսկ այդ հոգևոր գործերի կառավարման համար ստեղծվեցին կոնսիստորիաներ³: Ըստ Պոլ Վերտի, թեև, հայոց կաթողիկոսի պաշտոնը պահպանվեց, բայց այնուամենայնիվ շատ այլ հարցերում հայոց եկեղեցին սկսում էր նմանվել ուղղափառ եկեղեցուն: Լայն իրավունքներ ընձեռնելով 1807 թ. ստեղծված Սինոդին, «Պոլոժենիե»-ն սահմանեց կոլեգիալ կառավարման սկզբունքը՝ կաթողիկոսի իրավունքները սահմանափակելու նպատակով: «Պոլոժենիե»-ն առաջ քաշեց նաև պրոկուրորի և կոնսիստորիանների պաշտոնները՝ առաջինը պետք է հետևեր եկեղեցու կառավարմանը, իսկ վերջինը՝ հաստատեր վերահսկողություն հոգևոր թեմերի վրա⁴:

Չետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ որոշակի զուգահեռներ են դիտարկվում կայսրության տարածքում գտնվող հայոց և կաթոլիկ եկեղեցիների կարգավիճակներում: Կարևորելով կաթոլիկ եկեղեցու և նրա առաջնորդամիստ Վատիկանի արտաքին քաղաքական գործոնը վերջինիս նկատմամբ համեմատաբար զգույշ քաղաքականություն էր վարվում: Եթե հայոց եկեղեցու լիազորությունները սահմանափակում էր Սինոդը, ապա կաթոլիկ եկեղեցու իրավունքները սահմանափակում էր Պետերբուրգում գտնվող հոգևոր կոլեգիան: Մյուս նմանությունը այն էր, որ եթե Չայոց կաթողիկոսը արտասահմանի հայերի հետ կապը հաստատում էր արտաքին գործերի նախարարության միջոցով, ապա Չռոմեակաթոլիկական եկեղեցու բոլոր հետևորդները՝ հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչները, իրենց դավանաբանական հարցերում կապը հաստատում են Չռոմի հետ ներքին գործերի նախարարության միջոցով՝ այսինքն ներկա դեպքերում էլ միջնորդավորված: Չռոմի Պապի կողմից առաջ քաշած ոչ մի տեսակի բուլլաններ, ուղերձներ և կարգադրություններ կայսրությունում չէին կարող գործի դրվել առանց ներքին գործերի կողմից խնդրված հավանության⁵: Ահա այս սահմանափակումները տարածվում էին նաև որպես առանձին համայնք հաստատված հայ կաթոլիկների վրա, որոնք ենթարկվում էին Սարատովի կաթոլիկ եպիսկոպոսին:

¹ Paul W., Imperial Russia and the Armenian Catholicos at Home and Abroad, տե՛ս http://src-h.slav.hokudai.ac.jp/coe21/publish/no10_ses/08_werth.pdf.

² Тунян В., Церковная политика самодержавия в Закавказье в первой половине XIX в. (1801- 1853), с. 94.

³ Paul W., Imperial Russia and the Armenian Catholicos at Home and Abroad

⁴ Верт П., Глава церкви, поданный императора: Армянский католикос на перекрестке внутренней и внешней политики империи (1824-1974), Ab imperio, 3/2006, с. 109-110.

⁵ Зеленков М., Государственно-религиозные отношения: правовой аспект, с. 35, տե՛ս zelenkov.ucoz.ru/gro.doc.

Փաստորեն, հայ եկեղեցուն իր պատմականորեն ձևավորված դերից զրկելու ցարական կառավարության փորձը անհաջող էր, որը չենք կարող ասել Վրաց եկեղեցու դեպքում: Ցարական իշխանությունը հաջողությամբ իրագործեց Վրաց եկեղեցու նկատմամբ ռուսաֆիկացման քաղաքականությունը՝ վերացնելով կաթողիկոսությունը և հաստատելով էքզարխություն, որն ամբողջությամբ ենթակա դարձավ ռուսական Սբ. Սինոդին: Հատկանշական է այն հանգամանքը, որ կայսրության ներսում հայոց եկեղեցու կարգավիճակը որոշակի նմանություն ուներ կաթոլիկ եկեղեցու կարգավիճակի հետ, պայմանավորված կայսրության արտաքին քաղաքականության մեջ տվյալ եկեղեցիների ունեցած հավասարաթեք նշանակությամբ:

**АРМЯНСКАЯ АПОСТОЛЬСКАЯ ЦЕРКОВЬ В РОССИЙСКОЙ ИМПЕРИИ:
СТАТУС И ПАРАЛЛЕЛИ С ДРУГИМИ ХРИСТИАНСКИМИ ЦЕРКВЯМИ,
НАХОДЯЩИМИСЯ ПОД ВЛАСТЬЮ РОССИЙСКОЙ ИМПЕРИИ**

Лилит Меликян

В статье анализируется статус Армянской апостольской церкви в Российской империи со второй половины XIX века до начало XX века. Особое внимание уделяется правовой системе Армянской церкви, проводятся параллели со статусами других христианских церквей, находящихся под властью Российской империи.

**ARMENIAN APOSTOLIC CHURCH IN THE RUSSIAN EMPIRE: STATUS AND
PARALLELS WITH OTHER CHRISTIAN CHURCHES UNDER THE POWER OF
THE RUSSIAN EMPIRE**

Lilit Melikyan

This article analyzes the status of the Armenian Apostolic church in the Russian Empire since the second part of the 19th century to the beginning of the 20th century. We have especially the outlined legal system of the Armenian church, drawing parallels with the statuses of other Christian churches to be under the power of the Russian Empire.

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԸ

Հայարփի Հակոբյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ. դասախոս L. Սարգսյան

Էլփոստ՝ hayarpi-hakobyan@mail.ru

Վասպուրականը Պատմական Հայաստանի այն շրջաններից է, որը պատմության տարբեր ժամանակներում միշտ էլ առանձնացել է իր ուրույն հայրենասիրական ոգով, ոճով և ստեղծագործական մտքի անկրկնելի արգասիքներով: Ծավալվելով Վանա լճից հյուսիս և հարավ-արևելք՝ տարբեր պատմական շրջաններում հիմնականում դուրս գտնվելով բուն Հայաստանից՝ այն իր մեջ կրել է հայոց դարավոր ավանդներն ու ավանդույթները, խորապես պահպանել քրիստոնյա Արևելքի պարզ ու լույսով լի աշխարհագրաօրոշությունը: Վասպուրականցու ստեղծագործ հոգին չէր կարող կրել դաժան քաղաքական իրադրությունների կապանքները, արաբական լուծը, սելջուկ թուրքերի մերկ սուրն ու մոնղոլական հորդաների բերած ավերը: Հալածանքների, սովի ու կորուստների իրար հաջորդող դարերը միայն հարկադրում էին վասպուրականցուն իր հոգուն անթելված լույսը աշխարհին տալ արվեստ ծնելով ու ապա՝ այդ նոր ծնված արվեստից վերստին կյանք ու լույս քաղել, որպեսզի ծննդի շղթան շարունակական ու անմեռ լինի: Այդ շղթայի օղակների մի ստվար մասն է իր մեջ ներառում Վասպուրականի մանրանկարչական դպրոցը, որից մեզ հասած օրինակները՝ շուրջ հազար հինգ հարյուր նկարազարդ մատյաններ¹, թվագրվում են ընդհուպ մինչև 17-րդ դ.: Այս մանրանկարչական դպրոցը, սակայն, չնայած իր ուրույն ոճին, երկարատև գոյությանը և թողած բազմաքանակ ժառանգությանը, հայ մանրանկարչության ամենաքիչ ուսումնասիրված կողմերից է:

Նախ՝ դիտարկենք այս մանրանկարչական դպրոցի մի շարք առանձնահատկություններ, որոնք էականորեն տարբերակում և անջատում են այն մյուսներից: Վասպուրականի ձեռագրերում մանրանկարները տեղադրված են սկզբում: Այս, ինչպես գիտենք, բնորոշ էր մինչև 11-րդ դ. ստեղծված հայկական ձեռագրերին: 11-րդ դ. հետո այս համակարգը պահպանվում է միայն Վասպուրականում: Այդ է պատճառը, որ միայն այս տարածաշրջանում է շարունակվում այն տեսարանների պատկերումը, որոնք ավետարանական թեմաներ չլինելու պատճառով դուրս էին մնացել ավետարանական պատկերաշարից (լավագույն օրինակներն են «Աբրահամի զոհաբերությունը», «Քառակերպյան աթոռ» և այլն): Թեմատիկ մանրանկարներին հաջորդում են համաբարբառի խորանները, ապա, որոշ ձեռագրերում, չորս ավետարանիչների՝ մեկ էջի վրա արված պատկերները կամ, ինչն առավել շատ է հանդիպում, չորս ավետարանիչների պատկերները առանձին էջերի վրա՝ համապատասխանաբար տեղադրված յուրաքանչյուր Ավետարանի սկզբում: Մանրանկարները արված են բաց, անգույն խորքի վրա, դրանց հատուկ է լավ արտահայտված գծայնությունը, սահմանափակ թվով գույների կիրառումը, կերպարների հագուստների յուրատեսակ ծալքավորումը: Կերպարներն առանձնանում են խոշոր, լայն բացված (ինչն ընդգծում է ներքին էքսպրեսիվ լարվածությունը), մի կողմի վրա թեքված, ավելի ուշ շրջանում՝ անկյուններում ձգված աչքերով, խոշոր ձեռքերով: Տեսարանները պատկերվում են ֆրիզային հերթագայմամբ, հաճախ մեկ էջում

¹ **Հակոբյան Հ.**, Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում, Երևան, 1997, էջ 9: Հայտնի է, որ 1890-1923 թթ հայկական ջարդերի ժամանակ բարբարոս ձեռքերը անխնա ոչնչացրել են հայոց նյութական մշակույթի դրսևորումները: Թեև չենք կարող հաստատապես ասել ոչնչացված ձեռագիր մատյանների թիվը, սակայն գիտենք, որ միայն Վասպուրականում դրանց թիվը մոտավորապես հասել է երեք հազարի. տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 12:

համադրված են մի քանի տեսարաններ, նույնիսկ՝ հակադրված հինկտակարանային նախատիպը և նորկտակարանային օրինակը (նկ. 6): Դրանք շատ հաճախ պատկերված են ըստ պարականոն տեքստերի, կերպարներից վերև արված են մակագրություններ դրանց ով լինելու վերաբերյալ: Պատկերներում գործող կերպարների թիվը հասցված է նվազագույնի, ընտրված է ամենապարզ ու հակիրճ պատկերագրությունը, բացառված է ոսկու կիրառումը (մինչև 14-րդ դ. վերջ)¹, բնապատկերային խորքի առկայությունը:

Վասպուրականում ստեղծված և մինչև 14-րդ դ. առաջին տասնամյակներով թվագրվող ձեռագրերը շատ քչաքանակ են, ուստի դրանք կարելի է համակարգել որպես այս դպրոցի «վաղ շրջանի» ձեռագրեր²:

Այս տարածաշրջանից մեզ հայտնի առաջին ձեռագիրը Մլքե թագուհու (Գագիկ Արծրունու կնոջ) Ավետարանն է (նկ. 1)՝ ստեղծված 862 թ.³ (Վենետիկ, մխիթարյանների մատենադարան, ձեռ. 1144): Այս ձեռագիրը, սակայն, ոճով ու պատկերագրությամբ ամենակին չի հարում ոչ մի քանի տասնամյակ անց ստեղծված կոթողային գեղանկարչության նմուշներին՝ Սբ. Խաչ կամ Սբ. Հակոբ եկեղեցիների որմնանկարներին, ոչ ավելի ուշ՝ 13-րդ դ. հետո ստեղծված ձեռագրավեստի նմուշներին: Ոճական աղերսները բյուզանդական կոթողային գեղանկարչության նմուշների և արևմտաքրիստոնեական գրքարվեստի օրինակների հետ օտար են դարձնում ձեռագրի գեղանկարչական կատարողականությունը Վասպուրականի մաքուր «արևելյան» գեղարվեստական ավանդույթներին: Այս ամենից ելնելով ենթադրվում է, որ ձեռագիրը ստեղծվել է Հայաստանի բյուզանդահպատակ տարածքում (հավանաբար Անիում), որտեղից էլ 9-րդ դ. վերջում՝ Արծրունիների իշխանության շրջանում, տեղափոխվել է Վասպուրական⁴:

Այս դպրոցից մեզ հայտնի հաջորդ, հստակ թվագրում ունեցող և տարակարծությունների առիթ չհանդիսացող ձեռագիրը Սիմեոն Արժիշեցու 1277 թ. Մ. 208 ձեռագիրն է⁵:

Ներկայիս աշխատանքում մենք կփորձենք վեր հանել 9-13-րդ դդ. վերջն ընկած ժամանակահատվածի միջև եղած բացը և տեսնել այդ ժամանակամիջոցում քննվող գեղարվեստական դպրոցի հնարավոր զարգացումը: Այսպիսով մեր ուսումնասիրությունը կստանա համակարգող, երբեմն էլ՝ մեր տեսակետներն արտահայտող բնույթ: Եռենք, որ պատմա-բաղաբական ծանր իրադրությունները իրենց դրոշմն են դրել դպրոցի թողած նյութական ժառանգության վրա և մոտ չորս հարյուր տարվա ընթացքում ստեղծվել են կամ ոչնչացումից փրկվել չափազանց քիչ թվով ձեռագրեր: Այսպիսով եթե մյուս դպրոցների կամ գոնե այլ դարերից պահպանված ձեռագրերի հարցում նման համակարգումը անհուսալի ձեռնակում կլիներ ավարտին հասցնելու տեսանկյունից, Վասպուրականի դպրոցի առնչությամբ այդ ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ բնույթ է կրում հետագա դարաշրջանների ձեռագրերի գեղարվեստական ակունքների բացահայտման համար: Ներկայիս աշխատանքում կնշվեն այն ձեռագրերը, որոնք ունեն մանրանկարներ (հիմնականում տերունական շարքի) կամ էլ գեղարվեստական հարդարման մյուս միջոցներն էլ հայտնի են ըստ վերատպությունների:

¹ Mathews T., Wieck R., Treasures in Heaven, New York, 1994, p. 94.

² Այս շրջանի վերաբերյալ նման պայմանական անվանը հանդիպում ենք Հ. Հակոբյանի մոտ «Սիմեոն Արժիշեցին Վասպուրականի մանրանկարչական դպրոցի վաղ շրջանի ներկայացուցիչ» հոդվածի թեկուզ հենց վերնագրում: Տարիներ շարունակ Վասպուրականի դպրոցի անդրանիկ գործ է համարվել Կիրակոս Աղբակեցու 1330 թ. Սատենադարանի թիվ 2929 Ավետարանը, ուստի մեզ մնում է միայն մինչ այդ ստեղծված և ավելի ուշ հայտնաբերված ձեռագրերը խմբավորել նման անվան տակ:

³ **Հակոբյան Զ.**, Անտիկ ավանդույթների վերապրումները Մլքե թագուհու Ավետարանի մանրանկարներում, «Հայ արվեստի հարցեր», հ. 3, Երևան, 2010, էջ 287:

⁴ Նույն տեղում, էջ 305:

⁵ **Leyloyan-Yekmalyan A.**, De Siméon Arčiseac' i à Zak'aria Alt'marc'I, Revue des etudes arméniennes, tome 29, Paris 2003-2004, p. 235-236. Այսուհետ Մ. Մաշտոցի անվան մատենադարնի ձեռագրերը կնշենք հետևյալ ձևով:

Սկսենք մեր քննությունը 10-րդ դարից, քանի որ, ինչպես նշվեց, այս դպրոցի ենթադրյալ առաջին ձեռագիրը թվագրվում է 9-րդ դ. երկրորդ կեսով: Վերևում մենք արդեն խոսեցինք այն մասին, որ 10-11-րդ դդ. գեղանկարչական ոճի դրսևորումը կարող ենք տեսնել Աղթամարի Սբ. Խաչ և Ոչտունիքի Սբ. Հակոբ եկեղեցիների որմնանկարներում: Գեղարվեստական ոճով այս դպրոցին են հարում 10-րդ դ. մի քանի ձեռագրեր՝ Մ. 7739, Մ. 10780 (Վեհափառի Ավետարան) և Ծղրութի 974թ Ավետարանը (նկ. 2): Որոշ ուսումնասիրողներ 10-րդ դ. այս հարթային ու գծային ոճի շարունակությունն են համարում նաև 989 թ Մ. 2374 (Էջմիածնի Ավետարան) և Երուսաղեմի հայոց պատրիարքարանի ձեռ. 2555-ը (Էջմիածնի երկրորդ Ավետարան), այն ոճով մոտեցնում Սբ. Խաչ եկեղեցու որմնանկարներին¹:

11-րդ դ. բացը Ի. Դրամբյանը և Է. Կորխմազյանը լրացնում են երկու ձեռագրերով՝ 1038 թ. (Մ. 6201) և 1069 թ. (Մ. 10434): Վերջինս կարող ենք հաստատապես մտցնել Վասպուրականի դպրոցի մեջ, քանի որ հայտնի է ձեռագրի ընդօրինակման վայրը, այն է՝ Վարազավանք: Ձեռագիրը Ի. Դրամբյանը և Է. Կորխմազյանը դիտարկում են որպես Վասպուրականի դպրոցի «արիստոկրատական ուղղության» նմուշ, այնինչ 1038 թ. Ավետարանը՝ նույն դպրոցի «ժողովրդական» շրջանի հետ կապված ձեռագիր²:

Տ. Իզմայլովան ևս 1038 թ. (նկ. 3) ձեռագիրը համարում է Վասպուրականի աշխատանք: Որպես փաստարկ իր պնդմանը նա բերում է ոչ միայն ոճական նմանությունը, այլ նաև այն, որ ձեռագրի հիշատակարանում որպես ստեղծման վայր նշվում է Տարբերանը: Ի տարբերություն այլ մասնագետների, ովքեր այդ համարում են Տուրուբերան նահանգը³, նա բառը կարդացել է որպես Տարբերունի(ք), այն է՝ Վասպուրականի Բերկրի գավառը⁴: Այս դեպքում, եթե մենք ընդունում ենք 1038 թ. Ավետարանի՝ Վասպուրականի դպրոցի աշխատանք լինելու փաստը, ապա ինքնըստինքյան ընդունում ենք նաև ավելի վաղ ստեղծված Ծղրութի Ավետարանի պատկանելության հարցը: Վերջինս էլ իր ոճական առանձնահատկություններով կարծես կապող օղակ է հանդիսանում Մ. 10780 և Մ. 6201 ձեռագրերի միջև, չնայած առանց դրա էլ մասնագետներն ընդունել են վերոնշյալ երկու աշխատանքները որպես նույն դպրոցի գործեր: Մասնավորապես Ա. Մաթևոսյանը ենթադրում է, որ և՛ Վեհափառի Ավետարանը, և՛ 1038 թ. Ավետարանը ստեղծվել են «Վանա լճի հյուսիսային»՝ Քաջբերունի, Տարբերունի և նրանցից արևելք ընկած գավառների տարածքում⁵: Ինչ վերաբերում է Ծղրութի Ավետարանին, ապա գիտենք, որ մասնագետները ընդունում են դրա՝ 1038 թ. Ավետարանից առաջ ստեղծված լինելու փաստը, այսինքն՝ այն հանդիսանում է վերջինիս նախօրինակը⁶: Պատկերագրական և ոճական նույնությունը անհերքելի են դարձնում այն միտքը, որ սրանք նույն տարածաշրջանի և նույն դպրոցի, թեև՝ ոչ նույն վարպետի գործեր են⁷:

Վասպուրականի դպրոցի ձեռագրերի ոճի հետ ակներև նմանություններ ունեն 11-րդ դ. Սեբաստիայում և Մելիտենեում ստեղծված մի քանի ձեռագրեր՝ Մ. 3723

¹ Der Nersessian S., Aghtamar. Church of the Holy Cross, Cambridge, 1965, p. 49. Narkiss B., Stone M., Sanjian A., Armenian Art Treasures of Jerusalem, Jerusalem, 1979, p. 32.

² Драмбян И., Корхмазян Э., Художественные сокровища Матенадарана, Москва, 1976, с. 49.

³ Дурново Л., Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, с. 25.

⁴ Измайлова Т., Армянская миниатюра 11 века, Москва, 1979, с. 45. Այսպես է ընդունում նաև Ա. Մաթևոսյանը. տես Մաթևոսյան Ա., Իզմայլովա Տ., Վազգեն Վեհափառի Ավետարանը. Ժ դար, Երևան, 2000, էջ 562: Ի դեպ, ձեռագիրը ոճական և պատկերագրական նմանություններ ունի մասնավորապես Բերկրիում ստեղծված մեկ այլ ձեռագրի՝ Խաչերի 1294 թ. Ավետարանի հետ (նկ. 4), ինչը նկատել են դեռևս Լ. Դուռնովոն և Տ. Իզմայլովան. տես Դурново Л., Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, с. 25; Измайлова Т., Армянская миниатюра 11 века, с. 45.

⁵ Մաթևոսյան Ա., Իզմայլովա Տ., Վազգեն Վեհափառի Ավետարանը, էջ 561-562:

⁶ Քոթանջյան Ն., Ծղրութի Ավետարանը, Երևան, 2006, էջ 11:

⁷ Նույն տեղում, էջ 11:

(1045 թ.), Մ. 3784 (1057 թ.), Մ. 974¹: Այս նմանությունը կարելի է բացատրել Սենեքերիմ Արծրունու՝ իր մտերիմներով և փոքրաթիվ բնակչության ուղեկցությամբ Կապադովկիայի Սեբաստիա քաղաքը տեղափոխվելու հանգամանքով: Այստեղից հարց է ծագում՝ արդյո՞ք քա Վասպուրականի գեղարվեստական ոճը իր հետ տեղափոխեց Սեբաստիա, թե՞ Մելիտենե-Սեբաստիայի ոճը այդ կապի հետևանքով տեղափոխվեց Վասպուրական և եթե չլիներ այդ իրադարձությունը, միգուցե Վասպուրականի ձեռագրային գեղանկարչությունը զարգանար 862 թ. և 1069 թ. ձեռագրերի ոճական ուղղությամբ: Մենք առավել տրամաբանական ենք համարում առաջինի եղելությունը², քանի որ դեռևս 10-րդ դ. Վասպուրականի գծային ու հարթային ոճի դրսևորումն ենք գտնում Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու հարթաքանդակներում և որմնանկարներում: Արդեն վերևում նշեցինք 862 թ. ձեռագրի ստեղծման հնարավոր պատմությունը, իսկ այն, որ ըստ տեղեկությունների 1069 թ. ձեռագիրը ընդօրինակվել է Վարագավանքում, ամենևին հակասություններ չի առաջացնում: Անշուշտ, Վասպուրականցի նկարիչները ևս տիրապետում էին գեղարվեստական մեծ վարպետության և կարող էին այլ դպրոցից, միգուցե բյուզանդահպատակ որևէ տարածքից բերված ձեռագրից նման ընդօրինակում անել: Նման դեպքերի սակավաթիվ լինելը պայմանավորված է նրանով, որ նկարիչը ստեղծագործում էր ոչ թե իր կարողություններից ելնելով, այլ՝ կոնկրետ ոճական ուղղության շրջանակներում: Վերջինս միջնադարին բնորոշ պարզ, հարթային, միաժամանակ անչափ արտահայտիչ (էքսպրեսիվ) ոճն է, «որը առավել ընդգծված ձևերով պետք է արտահայտի սուբյեկտի ներքին, գերբնական, սպիրիտուալիստական, վերզգայական աշխարհը»³: Ինչպես նշում է Լ. Ազարյանը՝ «ոճավորումն ու ոճական ինքնատիպությունը որոշակի գեղագիտական կոնցեպցիայի դրսևորման արգասիք է և ոչ թե արվեստի ցածր որակի արտահայտություն»⁴: Իր հերթին Յ. Հակոբյանը հնարավոր է համարում, որ 11-րդ դ. այդ ձեռագրերի ստեղծողները հենց Հայաստանի հարավային գավառներից, այդ թվում՝ Վասպուրականից գաղթած վարպետներ լինեին⁵:

Յ. Հակոբյանի կարծիքով Կապադովկիայի որմնանկարները և Վասպուրականի ձեռագրերի մանրանկարները ունեն պատկերագրական ընդհանրություններ⁶: Մեր կարծիքով նմանություն կա այնքանով, որքանով երկու տարածաշրջաններն էլ կրողն էին արևելաքրիստոնեական միևնույն գեղարվեստական պատկերացումների և ավանդույթների: Ընդամին ամբողջովին չենք հերքի այդ տեսակետը, քանի որ եթե

¹ Ս. Տեր-Ներսեսյանը որպես Մելիտենեի տարածքում ստեղծված ձեռագրեր այս խմբին է ավելացնում Կղաթուն 1018 թ. (Մ. 4804) և Շուխր Խանդարայում 1064 թ. (Երուսաղեմ, ձեռ. 1924) գրված և նկարագրված ձեռագրերը: Տե՛ս *Der Nersessian S., Armenian manuscripts in the Freer gallery of art, Washington, 1963, p. 4*: Սրանք ևս ունեն տեսարանների պատկերման նույն ոճը, իսկ ինչ վերաբերում է կերպարների մարդաբանական տիպի և տարբեր մանրամասների առանձնահատուկ տարբերությանը, ապա դրանք գալիս են նկարիչների անհատական ոճի ցուցաբերումից: Այնուամենայնիվ այս ձեռագրերը մենք ևս կդիտենք որպես Մելիտենեի շրջանում ստեղծված, վերոնշյալ ընդհանուր ոճական առանձնահատկություններին բավարարող, սակայն ոչ Վասպուրականի ձեռագրեր:

² Խոսքը բնավ այն մասին չէ, որ միայն Վասպուրականում էր պահպանված միջնադարյան այդ ոճը և հարթային պատկերումով բոլոր ձեռագրերը պետք է վերագրել Վասպուրականի շրջանին կամ նրա ազդեցություններին, այլ այն ակնառու նմանությունների, որոնք հանդես են գալիս վերոնշյալ երկու շրջաններում ստեղծված ձեռագրերի միջև: Նկատի ունենք այնպիսի արտահայտչաձևեր, ինչպիսիք են լավ արտահայտված գծայնությունը՝ մասնավորապես հագուստների ծալքերի մշակման մեջ, խոշոր, լայն բացված, անկյուններում ձգված աչքերը (չպետք է շփոթել Արցախի դպրոցի ձեռագրերի հետ, որոնցում ևս առկա է կողմնային անկյուններում ձգված աչքերի պատկերումը), խոշոր ձեռքերը, ետնապատկերի բացակայությունը և մյուս առանձնահատկությունները, որոնք թվել ենք վերը որպես Վասպուրականի դպրոցի գեղարվեստական արտահայտչամիջոցներ:

³ Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, էջ 33:

⁴ Նույն տեղում, էջ 14:

⁵ Հակոբյան Յ., Աղթամարի մանրանկարչության սկզբնավորման և նրա ակունքների հարցի շուրջ, «Լրագրեր հասարակական գիտությունների», Երևան, 1966, էջ 44:

⁶ Հակոբյան Յ., Մի քանի ընդհանրություններ Վասպուրականի մանրանկարչության և Կապադովկիայի որմնանկարների միջև, «Քամբեր Մատենադարանի», Երևան, 1977, № 11:

անգամ ազդեցություններ եղել են, ապա այդ չի եղել ինքնանպատակ: Հայտնի բան է, որ «ամեն կարգի փոխառումները կամ ազդեցությունները, ինչ տիպի էլ որ նրանք լինեն, չեն կարող մերվել որևէ ժողովրդի արվեստի հետ, եթե վերջինիս մեջ չեն գտնում տեղական սովորությունների հաստատուն, նպաստող հիմքեր»¹:

Որպես այս տարածաշրջանի 12-րդ դ. գործեր Հ. Հակոբյանը դիտարկում է Մ. 3756, Մ. 4753 և Մ. 4807 ձեռագրերը²: Մ. 3756 ձեռագրի մանրանկարային էջերից պահպանվել են չորս ավետարանիչների պատկերները, Անովն Աղեքսանդրացու պատկերը, խաչի պատկեր և տասը խորանները: Մ. 4753 Ավետարանում անհայտ նկարչի ձեռագրին են մեզ ծանոթացնում հինգ խորանները և լուսանցքային պատկերները, որոնք հակիրճ ներկայացնում են ավետարանական այս կամ այն տեսարանը: Դրանցում կարող ենք նկատել վասպուրականյան ոճի արտահայտություններ (օրինակ՝ յուղաբեր կանանց պատկերող լուսանցագաղթը):

Թեև Հ. Հակոբյանը չի բերում կոնկրետ փաստարկներ իր պնդման համար, սակայն մենք Մ. 4807 ձեռագրի վերաբերյալ նման կարծիքի ճշտությանը նպաստող հանգամանք կարելի է համարել դրա ոճական աղբյուրները 1290-1330 թթ. թվագրվող Նյու Յորքի Մետրոպոլիտան թանգարանի ձեռ. 57.185.3-ի հետ³: Խոսքը, անշուշտ, վերաբերում է ձեռագրի այն մանրանկարներին, որոնք հեղինակել է Օեր ծաղկողը: Մետրոպ քահանայի հեղինակած մանրանկարները այլ ոճական ուղղության մասին են խոսում, որոնց նմանը անձամբ մենք դեռևս չենք հանդիպել: Այսուհանդերձ նմանություն կա երկու նկարիչների պատկերած կերպարների հագուստների պատկերման մեջ: Ենթադրում ենք, որ Մետրոպ քահանան ավելի ուշ է ստեղծել իր մանրանկարները և նկարելու ժամանակ էլ օգտագործել է ձեռագրում արդեն առկա կերպարների հագուստների ձևերը:

Մեր կարծիքով Մ. 3756 ձեռագիրը ոճական հնարքներով մի փոքր տարբերակվում է Վասպուրականի դպրոցին բնորոշ գեղարվեստական ձևերից, սակայն, որևէ կոնկրետ տեղեկություն չունենալով, չենք կարող բացառել, որ այն ևս միզուցե ստեղծվել է 1069 թ. ձեռագրի ստեղծման հանգամանքներին նման պայմաններում⁴:

13-րդ դ. սկզբից մենք չունենք Վասպուրականի դպրոցին վերագրվող անգամ ենթադրյալ ձեռագրեր, չնայած ժամանակին այս շրջանի Արցախի դպրոցի մի քանի ձեռագրեր դիտարկվել են որպես Վասպուրականի մանրանկարչական դպրոցի աշխատանքներ⁵:

13-րդ դ. վերջում հանդես է գալիս Սիմեոն Արճիշեցին: Նրանից մեզ հայտնի թվագրում ունեցող առաջին ձեռագիրը ստեղծվել է 1277 թ. (Մ. 208), ապա հայտնի են նրա 1288 թ. երկու (Մ. 1135 և Մ. 4851⁶), 1292 թ. (Հ. Քյուրտյան հավաքածու, ձեռ.

¹ Ազարյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը 12-13-րդ դդ., Երևան, 1964, էջ 16:

² Հակոբյան Հ., Ձեռագիր մատյանների պատկերագրողման արվեստը Վասպուրականում, էջ 16:

³ Mathews T., Wieck R., Treasures in Heaven, p. 61, 95.

⁴ Մեր կարծիքով մանրանկարների այսօրինակ գծային ոճով պատկերումը, խոշոր ձեռքերը կամ ձգված աչքերը միայն բավարար չեն ձեռագրի տեղայնացման համար (դրա լավագույն օրինակը Արցախի դպրոցի ձեռագրերն են, որոնք ունեն նույն արտահայտչաձևերը, սակայն տարբերվում են մարդաբանական տիպով և նախշագրողի մեծ կիրառությամբ): Մեզ համար երկմտամբի տեղիք է տալիս ավետարանիչների պատկերներում գույնով լցված ետնապատկերը (չնայած որ այդ ևս հանդիպում է Վասպուրականի ավելի ուշ շրջանի ձեռագրերում, օրինակ՝ Կարապետ Բերկրեցու աշխատանքներում, սակայն չպետք է մոռանալ, որ խոսքը այստեղ 12-րդ և ոչ թե 15-րդ դարի մասին է), նաև՝ նման ռեալիստորեն հաստոցային նկարի շրջանակ պատկերելու միտումը: Վասպուրականի մանրանկարների շրջանակները հիմնականում գուրկ են նախշերից, եղածներն էլ այնքան պարզունակ նախշեր են, որ հազիվ թե կարելի լինի համենատեղ այս ձեռագրի շրջանակի զարդանախշի հետ: Այսպես, օրինակ, հյուսվածքային պարզունակ նախշ են պարունակում Նյու Յորքի Մետրոպոլիտան թանգարանի թիվ 57.185.3 ձեռագրի մանրանկարների շրջանակները:

⁵ Закарян Л., Из истории Васпураканской миниатюры, Ереван, 1980.

⁶ Ե. Լալայանը, Հ. Քյուրտյանը որպես այս ձեռագրի ստեղծման թվական նշում են 1286 թ., սակայն այդ հավանաբար չունի այլ պատճառներ, բացի այն, որ նրանք հայոց ՉԼԵ թվականը կարդացել են ՉԼԵ: Առհասարակ Սիմեոնի ձեռագրերում մի փոքր դժվար է իրարից տարբերել Ե և Է տառերը, որտեղից էլ գալիս է թվագրման երկու տարվա տարբերությունը՝ 1288 և 1286: Տե՛ս Լալայան Ե., Ցուցակ հայերեն

29), 1297 թ. (Մ. 4867) ձեռագրերը, 1305 թ. երկու Ավետարանները (Մ. 4819 և Մ. 2744 (նկ. 5)), իսկ վերջին գործը 1309 թ. Նոր Կտակարանն է (Երուսաղեմ, ձեռ.1786)¹:

Այս նույն ժամանակահատվածում՝ 13-րդ դ. վերջում են երևան գալիս նկարիչներ Ստեփանոսը՝ Արճեշում, ումից մեզ հայտնի են 1292 թ. (Մ. 6387) և 1303 թ. (Մ.4052) ձեռագրերը, իսկ Բերկրիում՝ Խաչերը, ով հեղինակել է 1294 թ. (Մ. 4814) Ավետարանը (նկ.4, սրա մասին արդեն խոսել ենք վերևում՝ 1038 թ. Ավետարանի հետ պատկերագրական նմանության կապակցությամբ. տե՛ս հղում 10):

14-րդ դ. սկզբում Բերկրիում ստեղծագործել է Դովսիանը (1303 թ. - Մ. 10670, 1306 թ. - Մ. 4806 և 1316 թ. - Մ. 4818 (նկ.6) ձեռագրերը), իսկ Արճեշում՝ Վարդանը (1319 թ. - Մ. 4125 և դեռևս հստակ թվագրում չունեցող Մ. 7456 Ավետարանները):

Արդեն 14-րդ դ. առաջին երեք տասնամյակից՝ երկար ժամանակ այս դպրոցի անդրամիկ գործ համարվող ձեռագրի ստեղծումից (1330 թ.՝ Մ. 2929, նկարիչ՝ Կիրակոս Աղբակեցի) հետո, նկատվում է աննախընթաց վերելք, որը շարունակվում է մինչև 15-րդ դ. ներառյալ: Այս շրջանում ստեղծվում է մեծատաղանդ արվեստագետների աստղաբույլ, որի մեջ ներառվում են Ջաքարիա Աղթամարցին, Ռստակեսը, Ծերղուն ծաղկողը, Թուման, Դովհաննես Խիզանեցին, Դանիելը, Գրիգորը, Սինասը և այլք²: Սրանք, արդեն, նշանավորում են այս մանրանկարչական դպրոցի հասուն շրջանի զարգացումը³:

Ահա այսքանն էին այն ձեռագրերը, որոնք համակարգել էինք «Վասպուրականի մանրանկարչական դպրոցի վաղ շրջան» անվան տակ: Այնուամենայնիվ մենք չենք դադարում հուսալ, որ Սատենադարանում միգուցե էլի կան այս խմբին դասվող գանձեր, որոնք, տարբեր հանգամանքներից ելնելով, դեռևս ամբողջությամբ չեն բացահայտել իրենց և միայն առայժմ անհայտ են մեզ: Էլ ավելի մեծ է մեր ցանկությունը, որ մոտ ապագայում մեր Սատենադարանի ձեռագրերի ցանկը համալրվի այս դպրոցին պատկանող նորանոր ձեռագրերով կամ էլ գոնե բացահայտումներ լինեն տարբեր հավաքածուներում դրանց գոյության մասին: Այսպիսով ակնկալում ենք, որ շուտով հարկ կլինի նորովի և հավելումներով արվեստասեր շրջաններին ներկայացնել խնդրո առարկա թեման:

ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 106: **Քյուրոյան Զ.**, Համառոտ ցուցակ հայերեն գրչագիրներու Քյուրոյան հավաքածոյի ի Ուիչիդա. Կանգաս, ԱՄՆ, «Բանբեր Սատենադարանի», № 11, Երևան, 1973, էջ 406: Նույնը կարող ենք ասել Մ. 1135 ձեռագրի մասին: Երկու ձեռագրերն էլ Սատենադարանի ձեռագրերի ցուցակում թվագրված են 1288 թ.: Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Սատենադարանի», հ. Ա, Երևան, 1965, սյուն. 1300, 484:

¹ **Leyloyan-Yekmalyan A.**, De Siméon Arčiseac'i à Zak'aria Alt'marc'i, Revue des etudes arméniennes, tome 29, p. 235-236.

² **Հակոբյան Զ.**, Վասպուրականի մանրանկարչություն, Գիրք Բ, Երևան, 1982:

³ 13-14-րդ դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանի Վասպուրականի ձեռագրերից Սատենադարանում պահվում են երկու տասնյակից ավելի օրինակներ: Տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի գրչության կենտրոնները 10-15-րդ դդ., Երևան, 2012: Սրանք, սակայն, մանրանկարներ չեն ունեցել կամ էլ դրանք թափվել են: Գեղարվեստական հարդարման մյուս միջոցները (խորաններ, կիսախորաններ, լուսանցազարդեր) առայժմ մեզ անհասանելի են ուսումնասիրման տեսանկյունից, ուստի դրանց կանդիդատները հետագայում:

РАННИЙ ПЕРИОД ШКОЛЫ МИНИАТЮРЫ ВАСПУРАКАНА

Айарпи Акопян

Школа миниатюры Васпуракана со своими иконографическими и стилистическими особенностями является одним из уникальных явлений армянской культуры. Для общего представления об этой школе было необходимо сначала обозначить обстоятельства её создания и развития, рассмотреть ранний период её работы, во время которого в 30-ые годы XIV века была создана рукопись, которая долгое время считалась лучшим творением этой школы. Мы постарались провести сравнительный анализ манускриптов раннего периода работы этой школы с манускриптами более позднего времени.

THE EARLY PERIOD OF MINIATURE SCHOOL OF VASPOURAKAN

Hayarpi Hakobyan

The school of miniature of Vaspourakan is a unique display of the Armenian miniature with its iconographic and stylistic peculiarities. First of all it is necessary to comprehend the conditions of foundation and development of the school, to form a complete apprehension of the whole school. It particularly gains paramount significance in the case when researchers considered the first works to be produced since 30s of the 14th century for a long time. In the very work we have tried to highlight the manuscripts created that period, which have a crucial role for the cohesion of the source of this school and the manuscripts.



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6

ԲԱՔՎԻ 1905 Թ. ՀԱՅ-ԹԱՅԱՐԱԿԱՆ ԲԱՍՈՒՄՆԵՐԸ

Հովհաննես Հարությունյան
ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող
Գիտ. դեկ. պ.գ.դ., պրոֆ. Յ. Գրիգորյան
Էլփոստ՝ hovomiler@mail.ru

Կովկասում 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվները ոչ թե լուկ մեր պատմության արյունոտ էջերից են, այլև կարոտ են հանգամանալից ուսումնասիրության: Ա. Գյուլխանդանյանի բնորոշմամբ՝ «Հայ-թաթարական հարաբերությունների ուսումնասիրմամբ է, որ հնարավորություն պիտի լինի կովկասյան ժողովուրդների փոխհարաբերության և քաղաքական կյանքի բանալի¹»: Եվ իրոք, առերես հաշտարարի դեր ստանձնելով թաթարներին աջակցող վրաց քաղաքական գործիչներին՝ օրինակ՝ ժողդանիային, Ռամիշվիլուն, ավելի քան մեկ տասնամյակ անց տեսնում ենք Անդրկովկասյան Սեյմի ղեկավարների դերում, ու նաև նրանց հակահայ գործունեության արդյունքն էր 1918 թ. Կարսի անկումը, թուրքականգործերիմուտքն Ալեքսանդրապոլ (Գյումրի) ուՂարաքիլիսա (Վանաձոր): Իսկ կրոնական զանգվածից ազգ դառնալ փորձող թաթարների գաղափարախոսները՝ օրինակ՝ Աղաևը, կանգնած էին համաթուրանականության (պանթուրքիզմի) ձևավորման ակունքներում, գաղափարախոսություն, նաև որի արդյունքը եղավ 1915 սև թվականը²:

Հարկավոր էր խեղդել կովկասյան ժողովուրդների հեղափոխական տրամադրությունները, թույլ չտալ հայերին, վրացիներին ու թուրքերին միավորելու՝ ընդդեմ ցարական իշխանությանը: Ռուսական բյուրոկրատիան դիմեց ամենափորձված «բաժանիր որ տիրես» միջոցին, որի իրականացման համար ավելի խորացնելով ազգամիջյան, կրոնական առկա հակասությունները՝ թշնամամբ սերմանեց կովկասյան ժողովուրդների մեջ³:

Ռուսաստանը գյուղացիական երկիր էր. պետության հենարանը կալվածատիրությունն էր, ու Կովկասում ամեն ինչ արվում էր վրաց ազնվականության և թաթար բեկերի դիրքը պահպանելու համար: Բայց թաթարներն անհուսալիորեն ետ էին մնացել հասարակական-տնտեսական զարգացումից, իսկ մեռնող վրաց «ազնվականությունը» (որը կազմում էր վրաց բնակչության... 5,26 %-ը), վերջին ունեցվածքը գրավ դնելով, շարունակում էր շվայտ կյանքը:

Թիֆլիսում ու Կենտրոնական Վրաստանում սնանկացողների ունեցվածքն ու կալվածքները գրեթե ինքնաբերաբար անցնում էին Կովկասում տնտեսապես միակ կենսունակ տարրի՝ խելոք ու ձեռներեց հայերի ձեռքը, ովքեր աստիճանաբար տիրում էին ողջ առևտրաարդյունաբերական կապիտալին: Հայերից մեկը գնել էր անգամ... վրաց ազնվականության պարագլխի գրավադրված տունը: Բայց սրանք իրենց անկարողության հետևանքներն իսկույն քաղաքականացնում էին: Թաթարները ևս իրենց իրավունքների ոտնահարում էին դիտում հայերի տնտեսական առաջընթացը, միայն, ի տարբերություն վրացիների, սրանք անպայման իրենք էին գնում սնանկացած ցեղակցի կալվածքները: Եվ Բաքվի նավթահանքերի, Նախիջևանի և Գանձակի շուկաների, Շուշիի ամենակուլ հրդեհները, խուժանի մութ բնագոյների արդյունք լինելուց առաջ հայերի տնտեսական հզորությունը ոչնչացնելու հստակ նպատակ ունեին:

Իշխանությունները Կովկասի զարգացման համար սկզբնապես աջակցում էին հայերին, բայց երբ տեսան, որ տնտեսությունն անցնում է հայերի ձեռքը, դիմեցին ամենատարբեր ճնշումների, որոնք, սակայն, սպասված արդյունքը չունեցան:

¹ Գյուլխանդանյան Ա., Հայ-թաթարական բախումները, հ. 1, Փարիզ, 1933:

² Դարիկյան Տ., Հայ-թաթարական բախումները 1905-1906 թթ., Երևան, 2006, էջ 6:

³ Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2002, էջ 141:

Հայերի դրամատնտեսական հզորությունը վերածում էր քաղաքականի. «Քաղաքների մասին» օրենքն ընտրվելու իրավունք էր տալիս անշարժ գույք ունեցողներին ու վաճառականներին, և Թիֆլիսում քաղաքային ինքնավարության մարմինները, սկսած քաղաքագլխի պաշտոնից, արագորեն անցան հայերին, ովքեր ամրապնդվում էին նաև Բաքվում: Այս վիճակը պահպանվեց մինչև 1917 թ. Հեղափոխությունը: Հիշենք նաև, որ 1905 թ. Թիֆլիսում ապրում էր 120000 հայ, 80000 վրացի, 70000 ռուս, և Թիֆլիսը ոչ ժողովրդագրական, ոչ դրամատնտեսական առումով վրացական քաղաք չէր¹:

«Անդրկովկասի գիտակից, վարիչ թաթարների աչքին,- գրում է Մ. Վարանդյանը, - հայերը անհաշտ հակառակորդներ են և այդ է պատճառը, որ նա տասնյակ տարիներ ի վերկռիվներ էր մղում իր սահմաններում տաճիկ կայսրության դեմ, ձգտելով ստեղծել, Եվրոպայի օգնությամբ ազատ, ինքնավար Հայաստան: Հակառակ հայոց այնքան աղետներուն, հայ դատի կրած անօրինակ հալածանքներին ու թշվառություններին, մեր դրացիները- և ոչ միայն թաթարը- նախանձում էին հային, նրանց առաջադիմությանը, և ահավոր վտանգ էին նշմարում «հայկական կոմիտեների» մեջ...»²:

Վիճակն ավելի լավ չէր բազմազգ Բաքվում: «Անդրկովկասյան Կովկասում վրացիների դերը պահպանվում էր միայն նշանակովի պաշտոններ զբաղեցնելով (ռուսական օրենքներով՝ սա ազնվականների մեծաշնորհն էր), և սրանք, կռիվներին սկսվելուն պես, դարձան տնտեսաքաղաքական հավակնություններ չունեցող հետամնաց թաթարների բնական դաշնակիցն ընդդեմ հայերի: Բորչալուի դեպքերի օրերին «ազնվականների» պատգամավորությունն իսկույն մեկնեց այնտեղ՝ հավաստիացնելու, որ «վրաց ժողովուրդն անհողդողդ կանգնած է մուսուլման ժողովրդի կողքին», իսկ մամուլը բոլոր կռիվների համար մեղադրում էր հայերին: Մյուսներից ետ չէին մնում անգամ... վրաց մարքսիստները, ովքեր, Արմեն Գարոյի (Գարեգին Փաստրմաջյան) բնորոշմամբ, մարքսիզմը հարմարեցրին «տեղական պայմաններին»՝ յուրաքանչյուր հայի հռչակելով շահագործող, ամեն վրացու և թաթարի՝ շահագործվող...»³:

Կովկասում ցարական իշխանությունները օգտագործեցին ազգային, տնտեսական ու կրոնական հակասությունները և այն հասցրեցին ընդհուպ՝ ազգամիջյան ջարդերի: Խոսելով 1905-1906 թթ. ազգամիջյան կոտորածների պատճառների մասին, Գ. Գալոյանը գրում է. «Մեր կողմից հրապարակված արխիվային բազմաթիվ փաստաթղթեր կասկած չեն թողնում, որ այդ կոտորածները հրահրել էին ցարական իշխանությունները և անձամբ Նիկոլայ II-ը»⁴:

Կռիվներն սկսեցին թաթար վարձու մարդասպանի սադրանքից, և գրգռված ամբոխը մինչ երեկո սպանում էր պատահած հային: Կեսօրին թաթարները սուրհանդակներ ուղարկեցին Ապշերոնի գյուղեր, որտեղի խուժանն էլ գործեց ամենազագրելի ոճիրները: Տարերային դիմադրությունների արդյունքում սպանվեցին նաև թաթարներ: Ոստիկանությունը չմիջամտեց: Ազգային մարմինները բողոքով դիմեցին Բաքվի նահանգապետ Նակաշիձեին, ով խոստացավ վերականգնել անդորրը, բայց հավելեց, թե անկարգությունների ծավալման դեպքում բավարար զորք չունի: Սրա ծայրահեղ հայատյացությունը դրսևորվել էր Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ժամանակ ցուցաբերած ապշեցուցիչ եռանդում, երբ դեռ Երևանի փոխնահանգապետն էր⁵: Այդ իրողությունը 1905 թ. փետրվարին Բաքվի արյունահեղությունը և Նախիջևանի կոտորածները մայիսին «մեզ հանկարծակիի բերին ...»:

¹ Դևրիկյան Տ., էջ 7:

² Վարանդյան Մ., Գ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. 1, էջ 360:

³ Դևրիկյան Տ., էջ 6:

⁴ Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Երևան, 1982, էջ 137:

⁵ Դևրիկյան Տ., էջ 8:

Այդ իրողությունների վերաբերյալ 1907 թ. Վիեննայում կայացած ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում ունեցած իրենց զեկուցագրում խոստովանում են Սևբաբեցի Սաքոն և Խանասարի Վարդանը. «մինչև հայ-թրքական ընդհարումների սկսվելը դաշնակցությունը ոչ մի ուշադրություն չէր դարձրել կովկասահայ ազգաբնակչության զինման գործի վրա, որովհետև նախ՝ մենք զբաղված էինք եղել բացառապես Թուրքա-Հայաստանի գործերով և երկրորդ, չէինք կարող երևակայել թե ռուս կառավարությունը կարող կլիներ այդքան հաջողությամբ հայ-թրքական ընդհարում առաջ բերել:

1905 թ. փետրվարին Բաքվի արյունահեղությունը և Նախիջևանի կոտորածները մայիսին մեզ հանկարծակիի բերին ...»¹:

Փետրվարի 7-ի առավոտից թշնամին տարբեր ուղղություններով առաջանում էր դեպի քաղաքի կենտրոն՝ միանալու իրար և հայկական թաղամասերը կտրելու միմյանցից: Ազգային-ազատագրական պայքարի ամենապայծառ դեմքերից Նիկոլ Դումանը², ով նախորդ երեկոյան նավթահանքերից թաթարական գյուղերի միջով հասել էր քաղաք, երկար տատանումներից հետո վճռական որոշում ընդունելով, հանգուցակետային վայրերում դիմադրություն կազմակերպեց: Սկզբում ուներ 7 մարտիկ, նրանց թիվը գիշերը հասավ 60-ի: Նիկոլ Դումանի օգնականներն էին Սկրտիչ Աղամալյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը և Մարտիրոս Չարուխչյանը, նա մասնակցեց նաև Երևանի կռիվներին ու նախկին գեներալ-նահանգապետ Ալիխանով-Ավարսկու ահաբեկմանը (Դրոյի հետ), զոհվեց պարսկական հեղափոխության կռիվներում: Հարձակումը կանգնեցվեց, և հայկական թաղերի մեծ մասը կապվեց միմյանց: Ավելին անելն անհնար էր. Բաքվի հայությունն անգեմ էր, մի մասն ապրում էր խառը բնակչությամբ թաղերում, և եթե գյուղական խուժանը ևս մտներ քաղաք, աղետ կլիներ:

Երեկոյան մեկ վաշտ տեղակայվեց Հայոց եկեղեցու հրապարակում, ու թվաց՝ զորքը միջամտում է, բայց հետևեց հուսախաբությունը. փախուստի դիմած խուժանը, զորքի երևալուն պես հայտնվելով, սկսեց հայերի խանութների թալանը ու երբ վերստին ետ շարտվեց, զորքը... կրակ բացեց հայերի վրա:³ Գյուլխանը կորցրած հայերը չիմանալով իրենց անելիքը, աղետուն են մահմեդական ազդեցիկ դեմքերին ու ցարական աստիճանավորներին՝ դադարեցնելու կոտորածները: Օրհասականությամբ նպաստում է նաև այն հանգամանքը, որ Բաքվի նահանգապետ Նակաշիծեն անձամբ ինքն է կազակների գլուխ անցած՝ քաջալերում մահմեդական ամբոխի հարձակումները հայկական թաղամասերի վրա⁴:

Հայերի դիմումը նահանգապետին՝ ինքնապաշտպանության համար գեներալադրաբելու կամ կոտորածը կանխելու նպատակով, մերժում է, պատճառաբանելով՝ իբր. «քաղաքում զինվորական բավարար ուժեր չկան»: «Տարօրինակ պատասխան, - ամենամեծ ցույցերի ժամանակ, նրա ունեցած ուժերը բավական են լինում երկու ժամվա մեջ ցրելու ցուցարարներին, իսկ կոտորածի ժամանակ՝ ուժը անհետանում է»⁵: Իրականում այդ ժամանակ կային 6000 զինվորներ:⁶ Ավելի ականատեսների վկայությամբ. «...ոստիկանության ստորին պաշտոնյաները, որոնք

¹ «Նյուլթեր Հ. Յ. Դաշնակցութեան», հ. Բ, էջ 254-255:

² Նիկոլոյաոս Տեր-Յովհաննիսյանը, մարտական ծածկանունը՝ Նիկոլ Դուման, ծնվել է 1867 թ. Արցախի Խաչեն գավառի Դշլաղ գյուղում քահանայի ընտանիքում: 1887 թ. ավարտելով Շուշիի թեմական դպրոցը՝ երկու տարի ղեկավարել է Արցախի թեմի կոնսիստորիայի քարտուղարությունը, ապա շուրջ երեք տարի դասավանդել է Յուսիսային Կովկասի հայկական դպրոցներում: Հետո մեկնել է Թավրիզ, ուր աշխատում էր Լիլավա թաղի Հայկազյան-Թամարյան դպրոցում. «1891 թվի աշնան սկզբին, միջախասակից ավելի բարձր, ջղուտ ու ոսկրոտ Նիկոլը, յափնջու մեջ փաթաթված, սև փափախը գլխին, մի որսորդական «Բերդան» հրացան ձեռին, որսի շունն առաջ ձգած, իբրև մի տիպիկ հայրուկ, Արդաբիլի վրայով հասավ Թավրիզ»:

³ Դերիկյան Տ., էջ 10:

⁴ Գևորգյան Հ., էջ 147:

⁵ «Դրոշակ», 1905, էջ 37:

⁶ Գևորգյան Հ., էջ 147:

անմիջապես կապեր ունեին ժողովրդի տականքների հետ, թուրք սրիկաներից կազմում են խմբեր և զինում օֆիցերական ատրճանակներով: Կռվի ժամանակ թուրքերի մեծ մասը այդ ատրճանակներով էր զինված: Կռվի օրերին, թուրքերը, Չեմբերբենուի կողմերում շարունակ մտնում էին ոստիկանություն և փամփուշտներ ստանում»¹:

Այլևս ամեն ինչ պարզ էր, հայերի շփոթությունն անցնում էր, մարտիկների թիվը մեծանում, սակայն մի քանի մարտախմբերի ատրճանակներից բացի, զենք չկար: Սրանք էլ ցրված էին քաղաքի ու նավթաշրջանի տարբեր մասերում: Երկիր ուղարկելու համար փոքրաքանակ զենքն էլ, կասկած չհարուցելու համար, գտնվում էր թաթարական թաղում: Հագիվ 40 հրացան ու ատրճանակ կար: Իսկ կռիվը շարունակվեց մինչև գիշեր: Թաթարները գիշերային ժամապահներ չուներին, ու մարտիկները մեծագույն զգուշությամբ կարողացան նրանց թաղում գտնվող զենքը փոխադրել հայկական շրջագիծ: Մի քիչ զենքն էլ հայթայթվեց մի հայի զինավաճառանցից²:

Մի ուշագրավ փաստ ևս՝ ջարդերի երկրորդ օրը Բաքվի հայոց թեմի առաջնորդ Անանիա եպիսկոպոսին այցելում են նահանգապետ Նակաշիձեն և մահմեդականների հոգևոր առաջնորդը: Հայոց թեմի առաջնորդը մեղադրանքներ էր ներկայացնում նահանգապետին՝ կոտորածները չկանխելու գործում³: «Նահանգապետը աչքերը գետին հառած՝ լռություն է պահպանել»⁴:

Փետրվարի 8-ին հայերը ոչ միայն պաշտպանվում, այլև նախահարձակ էին լինում, ինքնապաշտպանության կենտրոնում հավաքված հարյուրավոր անզեն երիտասարդներ մարտիկների հետ զնում էին հարձակման՝ թշնամու զենքը խլելու, զորքն ու ոստիկանությունը՝ շարունակում... զինաթափել հայերին: Դիմադրության մի քանի դեպքերից հետո սրանց եռանդը մարեց, բայց փողոցներում փամփուշտ էին բաժանում թաթարներին: Կեսօրին համոզվելով, որ անգոր են գրավել հայկական քաղաքամասը, սրանք զորքի աչքի առջև հրդեհում էին իրենց թաղերի հայկական տներն ու սպանում բնակիչներին: Որոշվեց նրանց փրկել գիշերը, քանի որ մութն ընկնելիս զորքերը հեռանում էին՝ վախենալով ցերեկվա արածների հատուցումից: Մարտիկները կեսգիշերին մի քանի ուղղություններով անցան գրոհի: Հայերի ածխացած դիակների մոտ զվարճացող խուժանը մեծ կորուստներով փախավ, իսկ փրկվածները չէին հավատում, որ հայ մարտիկներ են եկել օգնության⁵:

Հայ մարտիկների անկոտրում դիմադրությունը, դիպուկ հարվածները և փողոցներում փռված զնդակահար թուրքերի դիակները, սարսափելի ազդեցություն էին գործում անակնկալի եկած ամբոխի վրա: Թուրքերը հանդիպելով կազմակերպված դիմադրության խուճապահար փախան⁶: «Նիկոլը հետապնդում էր, մենք ձագերի պես նրա ետևից վազում էինք: Հրաշք էր, որ Նիկոլը ետևից՝ «խուժանի» զնդակներից չսպանվեց»⁷: «Ես, - նշում է Վ. Մինախորյանը, - Նիկոլի այդ գործը համարում են «Սրբազան Արշավանք»»⁸:

Քաղաքի տարբեր մասերում գտնվող հայերը, անձնուրաց կանանց ու օրիորդների միջոցով, կապ էին հաստատում ինքնապաշտպանության կենտրոնի հետ. Կարևոր դիրքերը հայերի ձեռքում էին, իսկ ոստիկանությունը հավաքում էր թաթարների դիակները: Ուժերի հարաբերակցությունն այլևս փոխվել էր, թաթարները հասկացել էին, որ հատուցման ժամը մոտ է, ու փետրվարի 9-ին նահանգապետի բնակա-

¹ «Դրոշակ», 1905, էջ 37:

² Դևրիկյան Տ., էջ 10-11:

³ Չևորոյան Հ., էջ 148:

⁴ «Դրոշակ», 1905, էջ 39:

⁵ Դևրիկյան Տ., էջ 12:

⁶ Չևորոյան Հ., էջ 155:

⁷ «Հայրենիք» ամսագիր, թիվ 7, 1948, էջ 20:

⁸ ՀՀ ՀԶԿԾ ԿԴԱ, Ֆ. 4047, Գ 2:

րանում հայ և թաթար երևելիները հաշտություն կնքեցին: Վերջիններս սկզբում պնդում էին, թե անկարող են զսպել խուժանին, բայց գիշերային հարձակումից հետո իրենք հաշտություն խնդրեցին՝ իսկույն «զսպելով» ամբոխին: Հայերը ևս 4-5 օր շարունակեցին դիրքապահությունը: Դիմադրության շնորհիվ ընդհարումները չձավարվեցին նավթաշրջանում, ուր, սակայն, հաշտության առաջին գիշերը սպանվեցին քնած 27 հայ բանվորներ: Այստեղից շատերը փորձել էին օգնության հասնել քաղաքի հայերին, բայց ճանապարհների հսկողությունը խստացրած զորքերը զինաթափում էին նրանց¹: Բաքվի կռիվների երեք օրերին սպանվեց 205 հայ (40-ը կանայք, ծերեր ու երեխաներ էին, իսկ 30-ը ողջակիզվել էին տներում) և 111 թաթար, որոնք բոլորը կռվող տղամարդիկ էին: Հրդեհների ու կողոպուտների՝ մոտ երեք միլիոն ռուբլի վնասի գերակշիռ մասը հայերինն էր²: Փետրվարյան զինադադարը, ինչպես և սպասվում էր, տևում է շատ կարճ: Յոթ ամիս հետո՝ օգոստոսին, Բաքվում նորից են վերսկսվում ընդհարումները, այս անգամ՝ ավելի մեծ ծավալով: Երկրորդ ընդհարումների ժամանակ սպանվում են 400 հոգի՝ 270 թուրք, 160 հայ և այլազգիներ³:

Ամենածանրը Շամախիկայի շրջանում էր, ուր ևս խուժանը չհամարձակվեց մոտենալ վտանգավոր կետերին: Թաղևա Ամիրյանը, հրացան ունենալով, փրկեց իր ընտանիքն ու հարևաններին: Թաթարները նրան կոչեցին Գիժ Թաթոս և հեռու էին փախչում այդ տնից: Իսկ Բաքվի մեծահարուստներից Ադամյանը, նա նաև լավ որսորդ էր, զոհվեց իր այրվող տան պատշգամբից 20 հրոսակ ոչնչացնելուց հետո միայն⁴:

Բաքուն այնպես էր կազմալուծվել, որ անգամ նավթարդյունաբերողների հանագումարը մեղադրեց իշխանություններին, իսկ ձեռնարկատերերը բանվորների հետ քաղաքական փաստաթղթեր էին ստորագրում և բողոքի գործադուլի կոչ անում: Կարճ ժամանակում Թիֆլիս, Հյուսիսային Կովկաս ու Ռուսաստան հեռացավ շուրջ 20000 հայ և ռուս: Թաթարների առաջարկով ստեղծվեց խաղաղարար հանձնաժողով՝ «թյուրիմացությունները հարթելու համար»: Այն մեռելածին մարմին էր, որի հայ անդամները խոշոր հարուստներ էին, ձգտում էին Անդրկովկասում արգելել ազգամիջյան կռիվները, բայց ազդեցություն չունեին հայության վրա, թաթարներից Աղանը բախումները համարում էր ազգային գիտակցությունը բարձրացնելու լավագույն միջոցը և գտնում, որ պիտի խորացնել հայերի նկատմամբ ատելությունը:

Խաղաղության հաստատումից հետո միայն Բաքվում հայտարարվեց զինվորական դրություն, վրացի իշխան Ամիլխավարին, ում բթամտությունն անեկոտների առարկա էր, նշանակվեց զինվորական նահանգապետ և հոխորտալուն ու հայկական թաղամասերում խուզարկություններին զուգընթաց՝ զենք կրելու այնքան թույլտվություն բաժանեց թաթարներին, որ ի վերջո հանձնաժողովի թաթարներն էլ բողոքեցին: Եթե սկզբնապես կատարվածի մեղքը բարդվում էր Նակաշիձեի ու ոստիկանության անգործության վրա, ապա սա ամեն ինչ «հայ կոմիտեների» վրա բարդեց, ինչը շուտով դարձավ պաշտոնական տեսակետ: Նրա գործունեության վերաբերյալ հայերն ու անգամ ռուսներն այնքան բողոքներ հղեցին մայրաքաղաք, որ մարտի 2-ին Նիկոլայ II-ը Բաքվի դեպքերը քննող հանձնաժողով ստեղծեց սենատոր Կուզմինսկու ղեկավարությամբ: Բայց սա չէր զիջում Ամիլխավարուն և հինգ ամիս աշխատելով՝ կեղծեց ամեն ինչ: Բաքվի դեպքերի ու իշխանությունների այսօրինակ արձագանքի նույն ձեռագիրը մենք հետո կտեսնենք Անդրկովկասում 1905-1906 թթ. կռիվների ողջ ընթացքում, ինչպես և տարբեր վայրերում

¹ Դերիկյան Տ., էջ 12:

² Գյուլխանյան Ա., էջ 167:

³ Գևորգյան Հ., էջ 175:

⁴ Դերիկյան Տ., էջ 12:

կհանդիպենք շատերին այն մարտիկներից, ովքեր արգելեցին Բաքվի հայության ծրագրված ջարդը¹:

«Յ.Յ. Դաշնակցութիւնը, այս կռիւներէ ետք, որոնց զսպումին մեջ մեծ եղաւ Դումանին դերը, Բագուի մէջ սարքուած կոտորածներուն պատճառով, մահուան դատապարտեց ոստիկանապետ Դեմինսկին, ոստիկանական սպայ Մահմետբէկովը եւ ուրիշ հինգ հոգի, որոնց բոլորին ալ ապահովագրուած նամակներով հաղորդուեացան մահապճիռները, քանի որ երկու ամիսներու ընթացքին պիտի սպանուին առանց այլևայլի: Եւ արդար գործադրուեցաւ մէկ մասը մահապճիռներուն, որոնց մէջ կարևորագույնը Նակաշիճէի սպանութիւնն էր»²: Վրեժխնդրության տենչով համակված հայ քաջորդիները, փետրվարյան արյունալի դեպքերին հաջորդող երկու ամիսների ընթացքում, ահաբեկչության գոհերի թվում էր Նակաշիճեն որին մայիսի 11-ին Դրոն ռուսքի հարվածով գետին է տապալում: Այդ գործողությունների կազմակերպիչն ու ղեկավարը նույնպես Դումանն էր, և նա երբեք դատարկ սպառնալիքներ չէր տալիս³:

АРМЯНО-ТАТАРСКИЕ СТОЛКНОВЕНИЯ В БАКУ 1905 ГОДА

Ованес Арутюнян

В феврале 1905 года начались армяно-татарские столкновения, которые потрясли весь Кавказ. Армяно-татарские столкновения прояснили политические настроения кавказских народов и по большому счету помогли их сближению. Чтобы понять историческую ситуацию в Закавказье, нами в статье были рассмотрены причины (большое влияние армян на Кавказе) и последствия армяно-татарских столкновений, оставивших неизгладимый след в истории армянского народа.

ARMENIAN-TATARIAN CLASHES IN BAKU IN 1905

Hovhannes Harutyunyan

Armenian-Tatarian clashes erupted in February 1905 and shocked the entire Caucasus. Tatars allied with Turkey. Armenian-Tatarian clashes had clarified the political aspirations of the Caucasian people which have not been subjected to any changes up to now. That changes greatly contributed to the Caucasian Peoples allied organization. To understand the situation in Transcaucasus we need to recall the course of events, causes and consequences. These events had left their traces on the Armenian society and it took a long time to be able to revive those clashes after that clashes. Armenian people have strengthened positions and they have great importance in the political life.

¹ Գյուլխանդանյան Ա., էջ 71:

² Գևորգյան Կ., Ամենուն Տարեգիրք, 1964, էջ 216:

³ Գևորգյան Յ., էջ 162:

ՊՐԻՆՑԻՊՍԻ ԴԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ

Մարիամ Բաբայան
ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ
Գիտ. դեկ.՝ պ.գ.թ. դոց. Լ. Մինասյան
Էլփոստ՝ mary.babayan@mail.ru

Պրինցիպատի քաղաքական-իրավական համակարգը եզակի երևույթ է ոչ միայն Հռոմի պատմության մեջ, այլև համաշխարհային քաղաքական փորձում: Ամեն ինչ, իհարկե, ներկայացվում էր այնպես, թե իբր Հռոմում վերականգնվում են կառավարման լավագույն ավանդույթները, վերադարձվում են օրենքների ուժը, վերականգնվում են դատարանների հեղինակությունը, սենատի մեծությունը, մագիստրատուրաների իշխանությունը հին կարգով, վերականգնվում են հանրապետության հնագույն կարգերը, սրբերի պաշտամունքը, դաշտերի վերանշակումը, մարդկանց անվտանգությունը, սեփականության ապահովությունը:

Եվ մետաղադրամների վրա և գրություններում Օգոստոսը ներկայացվում էր որպես կուսակցության կամայականություններից պետությունը ազատագրող, հռոմեացի ժողովրդի ազատություն վերադարձնողի: Օգոստոսը կտրականապես մերժեց իրեն՝ որպես Հռոմի վերականգնողի, Հռոմուկոսի կոչում տալու առաջարկից: Նա վախենում էր, որ իրեն կմեղադրեն թագավորական իշխանության ձգտման մեջ: Նույն կերպ նա հրաժարվեց նաև դիկտատուրայից: Կեսարի օրինակը նրան հանգիստ չէր տալիս: Օգոստոսը ինքն էլ խոստովանում էր, որ չունեի Հուլիոս Կեսարի հանճարը, բայց անշուշտ նա քաղաքական տաղանդավոր գործիչ էր: Օգոստոսի երկարատև կառավարման շրջանը ոչ միայն դարձավ Հռոմի քաղաքական նոր համակարգի հիմքերի ձևավորման շրջան, այլև այն հավանաբար հանդիսացավ ամբողջ պետության «ոսկե դարը»¹: «խաղաղություն»՝ ահա այն բառը, որով Օգոստոսը բնութագրում է իր արտաքին և ներքին քաղաքականության ուղղությունը²: Նրա նպատակն էր հաստատել խաղաղություն հռոմեական քաղաքացիների խավերի, խաղաղություն քաղաքական հակառակորդների հետ, պրովինցիաների և կենտրոնի միջև: Հռոմում՝ Մարսյան դաշտում, Օգոստոսը կառուցում է սպիտակ մարմարից խաղաղության խորան, ի պատիվ այն բանի, որ Օգոստոսը կարողացավ «պարզել խաղաղություն, ինչպիսի հռոմեացիները չեն տեսել իրենց ամբողջ պատմության ընթացքում»: Եթե իր գործունեության սկզբում Օգոստոսը հանդես էր գալիս որպես դաժան, անբեկանելի քաղաքական գործիչ, ապա իր իշխանությունը ամրապնդելուց հետո, նա ընտրեց նոր քաղաքականություն՝ խելամիտ, հեռատես և կշռադատված:

Կայսրության ժամանակաշրջանը, որն ընդգրկում է Ք.ա. 1-ին դ. մինչև մեր թվարկության 5-րդ դ., ընդունված է բաժանել երկու շրջանի՝ վաղ կայսրության շրջան (Ք.ա. 1-3-րդ դդ.) և ուշ կայսրության շրջան կամ դոմինանտ՝ «DOMINUS» տիրակալ (3-5-րդ դդ.): Վաղ կայսրության շրջանը անվանվում է նաև պրինցիպատ՝ լատիներեն principatus, princeps բառից, որը նշանակում է առաջին, գլխավոր սենատոր: Սա պայմանական եզրույթ է, որը բնութագրում է վաղ Հռոմեական կայսրության քաղաքական կարգը: Սակայն արդեն Օգոստոսի ժամանակ այս տերմինի նշանակությունը շատ ավելին էր, քան զուտ առաջին սենատոր կամ առաջին քաղաքացի: Հարկ է նշել, որ «պրինցեպս» տերմինը իր պարունակությամբ ավելի ընդարձակ է քան «կայսր» տերմինը, որը մտնում է պրինցեպս հասկացության մեջ որպես նրա հիմնական առանձնահատկություններից մեկը: Հետագայում՝ մեր թվար-

¹ Syme R., The Roman Revolution, Oxford University Press, 2001, p. 95.

² Rudich V., Political Dissidence under Nero, London and New York, 2005, p.28.

կության առաջին երկու հարյուրամյակների ընթացքում պրինցեպսը աստիճանաբար վերածնվում է կայսեր հասկացությանը՝ այս տերմինի ավելի իմաստին, այսինքն թագավորի կամ անսահմանափակ իշխանի: Պրինցիպատի հիմքում դրված էին Հռոմեական կայսրության առաջին կայսրի՝ Օգոստոսի (Ք.ա. 27 թ. - մ.թ. 14 թ.), բարեփոխումները: Բարեփոխումների նպատակն էր վերականգնել քաղաքական և սոցիալական կայունությունը կենտրոնական ուժեղ իշխանության միջոցով՝ դրա հետ մեկտեղ չվերացնելով դեռևս ուժեղ հանրապետական կարգերը: Պրինցիպատի համակարգը սկսում է ձևավորվել Օգոստոսի ժամանակ, որի իշխանությունը հիմնվում էր տարբեր մագիստրատուրաների համատեղման մեջ:

Ք.ա. 27 թ. հունվարի 13-ին Օկտավիանոսը ներկայացավ սենատ և «խնդրեց» իրեն ազատել բոլոր պարտականություններից, պատճառաբանելով իր վատառողջ լինելով: Ի գարնանս բոլոր ներկաների նա հայտարարում է, որ քաղաքացիական պատերազմը ավարտել է և պաշտոնապես հրաժարվեց իրեն տրված արտակարգ լիազորություններից՝ վերադարձնելով իշխանությունը «սենատին և ժողովրդին»¹: Սա շատ ճիշտ մտածված քայլ էր: Նրանից վախեցող սենատորները սկսեցին համոզել նրան հրաժարվել այդ մտքից և «խնդրեցին» ղեկավարել պետությունը, և հենց նույն օրը փաստորեն Հռոմում հանրապետությունից անցում կատարվեց կայսրությանը: Սակայն պետք է հաշվի առնել, որ *res publica* իրենց՝ հույների հասկացության մեջ պետության հստակ ձև չէ, այլ նրա այնպիսի վիճակ, որի ժամանակ «պետությունը հանդիսանում է հասարակության սեփականությունը»²: Ոչ մի վկայական չկա որ սկզբնական շրջանում պրինցիպատը հռոմեացիների կողմից ընկալվում էր որպես բռնապետություն: Դեռ հակառակը, այս քայլը դրականորեն էր ընդունվում, քանի որ նրանում տեսնում էին բնականոն կարգերի վերականգնում: Պետությունը այլևս չէր բաժանվում իշխանություն տեմչող կուսակցությունների կողմից՝ կրկին դառնալով հասարակության սեփականությունը: Այսինքն կանգնած չէր քաղաքացիների խմբավորման վրա, այլ արտահայտում է նրա կամքը, ծառայում է քաղաքացիների հետաքրքրություններին³: Հունվարի 16-ին՝ երեք օր անց, նա ստացավ Օգոստոս անունը, որը նշանակում է վսեմագույն, դրանով մատնանշելով նրա իշխանության աստվածային բնույթը:

Այսպիսով, իր ամբողջական անունը դարձավ Իմպերատոր Կեսար Ավգուստոս կամ Օգոստոս Լիվի Ֆիբիուս՝ Աստվածային որդի, հռչակվելով սենատի պրինցեպս⁴, որը, ինչպես և իմպերատորի տիտղոսը, Հռոմի համար նորություն չէր, սակայն նորություն էր, թե ինչպիսի կերպարանք են ստանում այս տիտղոսները: Այսուհետև իմպերատոր տիտղոսը տրվում էր այն զորավարներին, որոնք հաղթանակով ավարտել էին պատերազմը և դա պահվում էր մինչև նրա կողմից Հռոմում հաղթահանդեսի կամ տրիումֆի անցկացումը: Ք.ա 29 թ. սենատի կողմից ստանալով իմպերատորի կոչում, այն դարձավ ցմահ և մատնանշում էր Օգոստոսի բարձրագույն իշխանությունը, որը ներառում էր նաև բանակի հրամանատարությունը, հարկեր հավաքելու իրավունքը, հայտարարել պատերազմ կամ խաղաղություն, ղեկավարել պրովինցիաները և իշխանություն քաղաքացիների նկատմամբ՝ ընդհուպ մինչև սենատորների և հեծյալների կյանքի ու մահվան հարցը: «Կեսար» նախկին տոհմական «Հուլիոս» անվան փոխարեն (չնայած վերջինս նախկինի նման շարունակում էին կրել կայսերական տան կանայք): Սա դարձավ կայսեր ամենագլխավոր տիտղոսներից մեկը, իսկ ապա նաև կայսերական գահի ժառանգորդի համար:

¹ Дион Кассий, Римская история, Москва, 1981. с. 2-13.

² Cic. Resp. I. 39.

³ Межеричкий Я., Принципат Августа, от Республики к Монархии, §Древнее право, Москва, 1995, N 1, с. 157.

⁴ Парфенов В., Император Цезарь Август. Армия. Война. Политика., Москва, 2001, с. 18.

Փոխհամաձայնությունը, որը իրավաբանորեն հաստատվեց Ք.ա. 23 թ. համաձայնագրով, հանդիսացավ Օգոստոսի քաղաքական դիրքի հիմքը, որը արտահայտվում էր, բացի սենատի և ժողովրդի կողմից նրան լիազորությունների հանձնմամբ, նաև նրա անձի հատուկ հեղինակությամբ (*auctoritas Augusti*), որը մեծ ուժ էր պարունակում: Փաստը նրանում է, որ Օգոստոսը իր ձեռքում ուներ լիակատար իշխանություն: Այդ ամենի Տակիտոսն ու Գիբոնը իրական դրությունը շատ ավելի լավ էին հասկացել, քան ժամանակակից գիտնականներից և ուսումնասիրողներից շատերը:

Պրինցիպատի իշխանությունը իրավական տեսանկյունից ներկայացնում էր ավանդական հանրապետական մագիստրատուրաների համադրում, բայց հենց այդ համադրությունը ստեղծում էր նոր որակ¹: Մագիստրատուրական իշխանության կողքին հանդես էր գալիս Օգոստոսի «*auctoritas*», որից էլ ի հայտ էր գալիս միապետական իշխանություն: Ի վերջո ուսումնասիրողները հանգում են այն եզրակացության, որ մեր օրերում չկա հասարակական-քաղաքական համակարգը բնորոշող որևէ եզրույթ, որը ամբողջությամբ կրնոթագրի պրինցիպատի համակարգ, արդի գիտությունը կարող է տալ միայն նրա բազմակողմանի նկարագրությունը:

Օգոստոսի և նրա կողմնակիցների առաջ դժվարին խնդիր էր դրված ձևավորել միապետական իշխանությունը նոր հիմքերի վրա և դրա հետ մեկտեղ օգտագործելով, այսպես ասած, հռոմեական ավանդական կառավարման ինստիտուտները: Իր կառավարման 44 տարվա ընթացքում Օգոստոսը զբաղված էր աստիճանաբար և նպատակասլացորեն նոր միապետական գրասենյակների ձևավորմամբ²:

Պրինցիպատի մեջ, որը ստեղծել է Օգոստոսը, համադրվում են հանրապետական մագիստրատուրաները ռազմական միապետության հետ: Մագիստրատուրան կարող է հիմնված լինել ընտրության կամ նշանակման վրա, միապետությունը պահանջում է ժառանգականություն: Պրինցիպատի պատմության մեջ մենք հանդիպում ենք երկու սկզբունքների կիրառումը միաժամանակ, հաճախ ի վնաս մեկը մյուսին, երբեմն հնարամիտ համադրություններով, հռոմեական որդեգրության սովորույթի համաձայն, պրինցեպը որդեգրում էր իր իրավահաջորդին: Քաղաքական համակարգը պաշտոնապես անվանվեց «հանրապետություն», իսկ գերագույն ղեկավարը՝ «պրինցեպս», այսինքն «առաջին քաղաքացի» կամ «առաջին սենատոր», այստեղ էլ «պրինցիպատ» հասկացությունը³: Այս կոչումը առաջին անգամ սենատից ստացավ Օգոստոսը, որը առաջինն էր սենատորների ցուցակում և իրավունք էր ստացել առաջինը հանդես գալ սենատում: Դա թույլ էր տալիս կանխորոշել վերջինիս որոշումները: հանրապետական իշխանության մարմինները՝ աշխարհաժողովը, սենատը, մագիստրատուրաները, շարունակում էին գործել՝ կորցնելով իրենց նախկին լիազորությունների զգալի մասը: Հանրապետական և միապետական կարգերի երկարատև համատեղումը թույլ չի տալիս Վալ կայսրության քաղաքական համակարգը միանձանակ բնութագրել որպես միապետական կամ հանրապետական: Հաճախակի պրինցիպատը անվանում են «հանրապետական միապետություն»⁴: Այս տերմինը գիտական գրականության մեջ ավելի ճշգրիտ է համարվում: Օգոստոսը ուժեղացրեց պետական ապարատը՝ ստեղծելով մշտական բանակ, ոստիկանություն և բյուրոկրատիան: բանակը կազմված էր սահմանապահ լեգեոններից, նրանց տրամադրված պահեստային զորքերի և արետորական զվարդիաններից⁵: Հենց բանակի հետ կապը, լինի այն պաշտոնական կամ ոչ պաշտոնանկ³³, թույլ էին տալիս պրինցեպսներին պրինցիպատի առաջին տասնամյակ-

¹ **Машкин Н.**, Принципат Августа: Происхождение и социальная сущность, Москва-Ленинград, 1949, с. 68.

² **Shotter D.**, Nero, London- New York, 2005.

³ **Виппер Р.**, Очерки по истории Римской империи, Москва, 1995, с. 179.

⁴ **Косарев А.**, История государства и права зарубежных стран, Москва, 2002, с. 259.

⁵ **Крист К.**, История времен римских императоров от Августа до Константина, Ростов-на-Дону, 1997, с. 125.

ներում իրենց ձեռքում կենտրոնացնել ողջ իշխանությունը: Ձիմվորականների կողմից ընտրված իշխանության հերթական թեկնածուն շատ ժամանակ անսպասելի էր նույնիսկ հենց իր՝ «ընտրյալի» համար¹: Բանակից էր մեծապես կախված կառավարչի դիրքի ամրությունը և կառավարման հաջողությունը: Բանակի տրամադրությունները ձևավորվում էին ոչ միայն բուն լեգեոնների հայքների և իրողությունների նկատմամբ նրանց վերաբերմունքի հիման վրա, այլև ուղղորդվում էին հրամանատարների և շրջակա բնակչության կողմից: Լեգոններում համընկնում էին կայսրության բնակչությունների մի քանի խմբերի՝ արիստոկրատների, մանր հողագործների, քաղաքային և գյուղական պրովետարիատի հայաքները, որոնցից հավաքվում էր զորքը: Կայսեր համագործակցությունը բանակի հետ արտահայտվում էր հրամանատարների նշանակմամբ, զորքերի տեղաշարժմամբ, ռազմական արշավանքների կազմակերպմամբ, զինվորներին պարգևներ տալով, իսկ բանակի կողմից՝ կայսեր պաշտպանությամբ և աջակցությամբ: Մեծ նշանակություն ուներ պրինցեպատի համակարգի ձևավորման հարցում զորքի կողմից կայսերը տրվող հավատարմության երդումը՝ առանձնացնելով բանակի կառավարման համար առանձին անհատի²: Վաղ պրինցիպատի ժամանակաշրջանի բանակը կատարում էր իր համար ոչ բնորոշ «հանրապետական գործառույթներ», այնպիսին, ինչպիսին է պրինցեպսի ընտրության վերահսկումը, ընդիմության սաստումը և այլն: Դեռևս ռազմական ուժերը դարձան գլխավոր գործիքը ընդհանուր կայսերական բյուրոկրատական ապարատի ձավորման համար, իսկ բանակը՝ հարկադրանքի միջոց, և այդ կարգավիճակով Զոմենական կայսրության մեջ զբաղեցրեց կարևորագույն դերերից մեկը: Պրոկոնսուլական տիտղոսը, որն իր տիրապետողին տալիս էր բանակի նկատմամբ գերագույն իշխանություն, հետագայում դառնում է պրինցեպատի կարևորագույն բաղադրիչներից մեկը: Այդ տիտղոսը Օգոստոսը մինչև Ք.ա. 23 թ. համատեղում էր կոնսուլի իշխանության հետ՝ ամեն տարի վերաընտրվելով: Որպես կոնսուլ նա կարող էր օգտվել ինտերցեսսիայի իրավունքից, չեղարկել յուրաքանչյուր մագիստրոսի որոշումը: Բացի դրանից դեռևս Ք.ա. 36 թ. և Ք.ա. 30 թ. նա ստացել է նաև ժողովրդական տրիբունի որոշ լիազորություններ: Դա հնարավորություն էր տալիս վետո դնել սենատի կամ մագիստրոսների որոշումների վրա: Պրինցեպսը «թրի իրավունքով» իշխանություն ուներ իրեն ենթակա պրովինցիաների բնակչության կյանքի և մահվան վրա, թողարկում էր դեկրետներ, սահմանում արկերը, ղեկավարում էր հասարակական աշխատանքներով, շինարարությամբ և հանդիսանում էր գերագույն վերաքննիչ և վճռաբեկ դատական օրգան: Օգոստոսը ստանձնել «*tridunicia potestas*» լիակատար լիազորությունները: Ապպանոսի համաձայն Օկտավիանոսը տրիբունի ամբողջ լիազորությունները ստացել է Ք.ա. 39 թ.³: Տակիտոսը նշում է, որ այն բանից հետո, երբ Օկտավիանոսը հաղթանակ տարավ Անտոնինոսի նկատմամբ, հրաժարվելով տրիբունիարատի տիտղոսից, պահպանեց կոնսուլի և տրիբունի իշխանությունը՝ իբր ժողովրդին պաշտպանելու համար⁴: Ինքը Օգոստոսը իր տրիբունական իշխանության հաշվարկը սկսում է Ք.ա. 23 թ.: Դիոնիսիոս Կասիոսը նշում է երեք տարեթիվ Ք.ա 36 թ., Ք.ա 30 թ., Ք.ա 23 թ. նշում է Օգոստոսի կողմից ցմահ տրիբունական իշխանության ստանձման մասին: Մամնզենը գալիս է այն եզրակացության, որ ամբողջական տրիբունական իշխանություն Օգոստոսը ստանում է արդեն Ք.ա 36 թ.: Ք.ա. 30 թ. նա ընդարձակում է այն տարածքային առումով, իսկ Ք.ա 23 թ. այն վերահաստատվում էր ամեն տարի⁵: Դիոնիսիոս Կասիոսի կարծիքոց Ք.ա 27 թ. Օգոստոսը, մի շարք պրովինցիաների

¹ Ботвинник М., Жизнеописание знаменитых греков и римлян, Москва, 1988, с. 84.

² Նույն տեղում, էջ 94:

³ Парфенов В., Император Цезарь Август: армия. война. политика, Санкт-Петербург, 2001, с. 205.

⁴ Тацит, Сочинения, т. 1, Санкт-Петербург, 1993.

⁵ Моммзен Т., История римских императоров, Санкт-Петербург, 2002, т. II, с. 128.

վրա իշխանության ստացման հետ մեկտեղ, ստացավ որոշ ընդարձակ լիազորություններ, որը նրան գերագույն իշխանություն էր տալիս վերահսկել բոլոր պետական գործերը: Ք.ա. 27 թ. «կարգավորումներից» հետո Օգոստոսը իր համար ընտրում է մագիստրատուրաների առավել օգտակար համադրություն, որը կնպաստեր իր ծրագրի իրականացմանը, այն է անտեսանելիորեն և միևնույն ժամանակ անբողջությամբ իրեն հնազանդեցնել հանրապետական իշխանության մարմիններին՝ սենատը, կոմիցիաները, մագիստրատուրական իշխանությունները: Այս տեսակետից պրոկոնսուլական իշխանության և կոնսուլի պաշտոնների համադրումը իրեն չէր արդարացնում: Ք.ա. 23 թ. տեղի է ունենում նոր բարեփոխում՝ Օգոստոսը հրաժարվում է կոնսուլի տիտղոսից, որը մինչ այդ նա զբաղեցնում էր ամեն տարի: Այժմ սկսվում է կարևորվել «tridunicia potestas» տիտղոսը, որն ավելի շահավետ էր քաղաքական տեսանկյունից: Տրիբունական իշխանության կարևորության մասին կայսերական տիտղոսների շարքում վկայում է նաև նրա հիշատակումը մետաղադրամների վրա:

Օգոստոսի իշխանությունը նրա հիմնական բաղադրիչների տեսանկյունից, հանձնման ձևից և իրավական տեսակետից իրենից չէր ներկայացնում միապետություն, համենայն դեպս անտիկ, հելլենիստական իմաստով, այլ բազմաթիվ մագիստրատուրաների համադրություն: Այսպիսով՝ Օգոստոսը և նրա հաջորդները իրենց ձեռքում կենտրոնացնում էին գերագույն ռազմական, քաղաքական և քրմական իշխանությունը: Պրինցիպատի էությունը կայանում էր նրանում, որ պրինցեպսի բռնակալական իշխանությունը, որը հիմնականում հիմնվում էր պրինցեպսի իշխանության հաստատման վրա բանակի և արետորիական գվարդիայի նկատմամբ, որոնք հավաքագրվում էին կայսեր կողմից, վճարվում նրա զանձարանից և հավատարմության երդում տալիս նրա տանը, իրավաբանորեն ձևակերպված էր որպես հանրապետական մագիստրատուրաների և արտոնությունների համատեղում: Այնուամենայնիվ Օգոստոսը և նրա հաջորդները ամեն կերպ խուսափում էին քազավորի կամ դիկտատորի կոչումից:

СТАНОВЛЕНИЕ ПРИНЦИПАТА

Мариам Бабаян

Начало императорской эпохи, называемой принципатом, представлявшим собой монархию под видом республики, восходит к 27 году до н.э. По выражению римского философа-стоика Сенеки, «государь спрятался в одежды республики». При принципате сохранялись прежние учреждения: собиралось народное собрание, действовал сенат, избирались консулы, трибуны, однако без распоряжений принцепса ничего в империи не происходило. Октавиан был единственным человеком, который управлял государством. Он узаконил принцип формального усыновления «лучшего» гражданина, становившегося наследником и преемником высшей власти. Этот принцип был нарушен императорами лишь в конце II века н. э.

При Октавиане была проведена очередная чистка сената, который был сокращен, но формально возвеличен, поскольку являлся символом республиканской государственности. Октавиан постоянно подчеркивал достоинства сената и юридическое равноправие с ним.

FORMATION OF THE PRINCIPATE

Mariam Babayan

The title, in full, *Princeps Senatus* / *Princeps Civitatis* (first amongst the senators, viz., amongst the citizens), was first adopted by Octavian Caesar Augustus (27 BC - AD 14), the first Roman 'Emperor', who chose – like the assassinated dictator Julius Caesar – not to reintroduce a legal monarchy. The purpose was to establish the political stability desperately needed after the exhausting civil wars by a *de facto* dictatorial regime within the constitutional framework of the Roman Republic as an alternative to the hated early Roman Kingdom.

The title itself derived from the position of the *princeps Senatus*, traditionally the oldest member of the Senate who had the right to be heard first on any debate. Although dynastic pretenses crept in from the start, formalizing this in a monarchical style remained politically unthinkable.

Frequently in a more limited and precise chronological sense, the term is applied either to the Empire (in the sense of the post-Republican Roman state) or specifically the earlier of the two phases of 'Imperial' government in the ancient Roman Empire, extending from when Augustus claimed *auctoritas* for himself as *princeps* until Rome's military collapse in the West (fall of Rome) in 476, leaving the Byzantine Empire sole heir or depending on the source, up to the rule of Commodus, of Maximinus Thrax or of Diocletian. Afterwards, Imperial rule in the Empire is designated as the Dominate, which is subjectively more like an (absolute) monarchy while the earlier Principate is still more 'Republican'.

ՀՈՒՆԱ-ՀՈՈՄԵՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ԱՂՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մելիք Սկրտչյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ պ.գ.թ., դոց. Է. Զոհրաբյան

Էլփոստ՝ meliqmkrtyan@mail.ru

Աղվանքի մասին պատմաաշխարհագրական բնույթի տեղեկություններ են հաղորդում անտիկ աշխարհի երեք խոշորագույն աշխարհագետներ.Ստրաբոնը (մ.թ.ա. 1-ին դ.), Պլինիոս Ավագը (մ.թ. 1-ին դ.), Կլավդիոս Պտղոմեոսը (մ.թ. 2-րդ դ.): Այժմ ծանոթանանք նրանցից յուրաքանչյուրի հաղորդած տեղեկությանը: Մասնավորապես, Պլինիոս Ավագը (մ.թ. 1-ին դ.) Աղվանքի սահմանների մասին գրում է. «Կուր գետի շրջակայքում տարածված էր ալբանացիների (աղվանների) երկիրը, իսկ դրանից հետո Վրաստանն էր¹: Նա նաև նշում է. «Աղվանները ապրում էին մի տարածքում, որը ձգվում էր մինչև Վրաստանի հետ սահմանաբաժան Կուր գետը»: Հետո ավելացնում է, որ Աղվանքն արևմուտքում սահմանակից էր Վրաստանին: Ըստ Պլինիոսի՝ «Աղվանքի և Վրաստանի սահմանը Ալազան գետն էր, այսինքն, Կուր գետից սկսվող ողջ դաշտավայրը աղվանների տարածքն էր, իսկ դրանից հետո ընկած էր իբերիացիների (վրացիների) բնակավայրը: Ալազան գետը դրանց սահմանաբաժանն էր: Այս գետը սկիզբ էր առնում Կովկասյան լեռնաշղթայից և հոսում էր դեպի Կուր գետը»²:

Իսկ Պտղոմեոսը վերջիններիս վերաբերյալ սահման է հիշատակում միայն Կուր գետը, որը ընդգրկել է մինչև Կովկասյան լեռնաշղթան ընկած տարածք³:

Աղվանքի վերաբերյալ մեզ որոշակի տեղեկություններ են հաղորդում հունահռոմեական աղբյուրները: Դրանք հիշատակում են հետևյալը. Աղվանքը գտնվում էր Կովկասի արևելքում և հարավում սահմանակից էր Հայաստանին, հյուսիսում՝ Սարմատիային, արևմուտքում՝ Վրաստանին, իսկ արևելքում նրա ափերը ողողում էին Կասպից ծովի ջրերը: Այսինքն, համաձայն այս աղբյուրների՝ Կուր գետը եղել է Աղվանքի և Հայաստանի սահմանաբաժանը⁴:

Ուսումնասիրվող երկրամասի մասին քիչ տեղեկություններ չեն տալիս նաև հունահռոմեական մյուս հեղինակները, որոնք սակայն, հայտնի չափով կրկնում են վերոհիշյալների: Բայց այստեղ մենք առավել շատ կանգ կառնենք Ստրաբոնի վկայությունների վրա⁵, որոնք ամենից մանրամասն ու լիակատար են ներկայացնում Աղվանից երկրի սոցիալ-տնտեսական կյանքի, քաղաքական պատմության ու աշխարհագրության բոլոր ոլորտներն՝ իրենց ընդգրկումով:

Ստրաբոնը⁶ հաճախ ու երկար է ճանապարհորդել և «Աշխարհագրություն» հակիրճ վերնագիրը կրող նրա աշխատության համար մեծ չափով նյութ են ծառայել իր սեփական դիտարկումների արդյունքները: Դրա հետ զուգահեռ նա լայնորեն օգտվել է ինչպես իր նախորդների, այնպես էլ իր ժամանակակիցների աշխատու-

¹ Pliny, National history, London, 1969, p. 28-29.

² Նույն տեղում, էջ 30:

³ Ptolemeos, Geography, p. 3.

⁴ Էնայաթլլա Ռ., Առանը հնագույն ժամանակներից մինչև մոնղոլները, Երևան, 2003, էջ 41:

⁵ Страбон, География, пер. Г. А. Стратановского, Ленинград, 1964.

⁶ Ստրաբոնը ծնվել է մ. թ. ա. մոտ 64 - 63 թթ. Պոնտոսի Ամասիա քաղաքում և մահացել մ. թ. 23 - 24 թթ.: Գրել է «Պատմական հիշատակարանները» վերնագրով մի աշխատություն, որն ամբողջությամբ կորած է: Սրա շարունակությունն է կազմում «Աշխարհագրություն»-ը: Այն գրվել է մ. թ. ա. 7 թ. և բաղկացած է 17 գրքերից, որոնք էլ մեզ են հասել գրեթե ամբողջությամբ: Թարգմանվել է մի շարք լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն: Հայերեն թարգմանվել են հայերին վերաբերող հատվածները (Ստրաբոն, թարգ. Հ. Աճառյան, Երևան, 1940): Վերջին ռուսերեն թարգմանությունը (լույս է տեսել 1964 թ.) կատարել է Գ. Ա. Ստրատանովսկին:

թյուններից: Չպետք է զարմանալ, քանի որ նրա աշխատության մեջ մենք հանդիպում ենք մոտ հարյուր հիսուն հեղինակների անուններ, որոնցից Ստրաբոնը ուղղակի մեջբերումներ է կատարել կամ վկայակոչել¹, հատկապես մեծ տեղ տալով ժամանակակիցների ու ականատեսների վկայություններին²:

Մի կողմ թողնելով Ստրաբոնի աղբյուրների հարցն ընդհանրապես, փորձենք մեր ուշադրությունը կենտրոնացնել ուսումնասիրվող աշխատության XI գրքի IV գլխի աղբյուրների վրա, որովհետև այս գիրքը նվիրված է Կասպից ծովի մերձափնյա շրջանի մարզերի նկարագրությանը և նշված գլխում է, որ աշխարհագետը, այլ երկրամասերի հետ, պատմում է մասնավորապես Աղվանքի, նրա բնակլիմայական պայմանների, պետական ու հասարակական կարգի, ռազմական ուժի ու կրոնական սովորույթների մասին: Աղվանքի պատմության ուսումնասիրողների իրարամերժ ու հակասական տեսակետները առանձին հարցերում հենց այս գլխի հաղորդումների տարբեր ընկալումների արդյունք են³:

Վերոհիշյալ գլխում Ստրաբոնը Աղվանից երկիրը նկարագրելիս վկայակոչում է նրանց, ովքեր «արշավանքի են եղել այդ կողմերում, պատմելով նրանց, այսպես կոչված «կիկլոպյան» ապրելակերպի մասին»⁴: Ամենայն հավանականությամբ նա նկատի ուներ Թեոփանես Միտիլենացուն (մ. թ. ա. I դար)՝ Պոմպեոսի ընկերոջը և խոշոր պետական գործչին: Յենց այս միտիլենացի պատմիչն էր, որ ուղեկցել էր Պոմպեոսին՝ վերջինիս Աղվանք կատարած արշավանքի ժամանակ և եղել էր, ալբանացիների երկրում»⁵:

Սրանք են Ստրաբոնին ժամանակակից այն աշխարհագետները, քաղաքական գործիչներն ու պատմաբանները, որոնց դիմել է Ստրաբոնը Աղվանքին ու ընդհանրապես Կովկասին վերաբերող մասերը շարադրելիս:

XI գրքում հիշատակվում են նաև մինչստրաբոնյան դարաշրջանի հեղինակներ՝ Էրատոսթենես, Պոսիդոնիոս, Պատրոկլես, Պլինիոս, Դիոն Կասիոս և այլն, բայց «բացի այն մի քանի օրինակներից, որոնք նշում է ինքը՝ Ստրաբոնը, մենք չգիտենք, թե հատկապես ինչ է փոխառել աշխարհագետը այս հեղինակների գրվածքներից»⁶: Այդ օրինակներից մեկը, որը նշում է Ստրաբոնը, Էրատոսթենեսի հաղորդումն է այն մասին, որ Կովկաս լեռը տեղաբնիկների կողմից անվանվել է «Կասպ», այդ անվան մեջ տեսնելով նաև կասպերի ցեղանվան հետքերը: Բայց ինչպես այս, այնպես էլ մինչստրաբոնյան շրջանի նշված հեղինակների տեղեկություններն են, որ հավասարապես կարող են վերագրվել թե՛ Աղվանքին, թե՛ Իբերիային⁷ և թե՛ ընդհանրապես Կովկասի լեռնալանջերին բնակվող ցեղերին:

Վերոհիշյալ հեղինակները նշում էին, որ Աղվանքի արևելյան սահմանն ողողում էին Կասպից ծովի ջրերը: Մասնավորապես Պլինիոսը՝ Կասպից ծովը անվանել է «Ալբանական ծով»՝ գրելով, որ ալբանացիների (աղվանների) առջևի ծովը կոչվում է «Ալբանական ծով»⁸:

Ենթադրություն կա նաև, որ այն տեղեկությունները, որոնք հաղորդում է Թեոփանեսը, «կարող են ոչ միայն սեփական դիտարկումների արդյունքը լինել, այլև այն ամենի հավաքածուն, ինչ իր ժամանակ հայտնի էր մերձկասպյան ցեղերի

¹ Арский Ф., Страбон, Москва, 1974, с. 50.

² Strabo, Geography, trans. by H. Jones, London, 1960, II, V, 12.

³ Աղվանքի պատմության ստրաբոնյան աղբյուրների վերաբերյալ հողվածով հանդես է եկել Քենալ Ալիևը (Алиев К., К вопросу об источниках Страбона в описании древней Кавказской Албании, «Доклады» АН АзССР, 1960, т. XVI, № 4, с. 419-422): Հողվածը նույնությամբ մտել է հեղինակի մեկ այլ աշխատության մեջ՝ տեսնալի Աлиев К., Кавказская Албания (I в. до н. э. — I в. н. э.), Баку, 1974, էջ 6-8:

⁴ Strabo, XI, IV, 3.

⁵ Սույն տեղում, XI, V, 1:

⁶ Алиев И., К интерпретации параграфов 1, 3, 4 и 5 IV главы книги «География» Страбона, «ВДИ» 1975, N 3, с. 152-153.

⁷ Болтунова А., Описание Иберии в «Географии» Страбона, с. 142-160.

⁸ Pliny, p. 38.

ու ժողովուրդների մասին դեռևս նախորդ դարաշրջանից»¹: Միաժամանակ նշվում են նաև այն հեղինակները, որոնց տեղեկությունները կարող էին թեոփանեսի հաղորդումների հավաքածուն կազմել: Այդ հեղինակներն էին Յերակլիդեսը (մ.թ.ա. 4-րդ դ. վերջին քառորդ) և Պատրոկլեսը (մ.թ.ա. 3-րդ դ. սկիզբ):

Յերակլիդեսի արշավախումբը մ.թ.ա. 323 թ. Ա.Մակեդոնացու հանձնարարությամբ պետք է սկսեր Կասպից ծովի ուսումնասիրությունը՝ պարզելու համար, թե այն կապ ունի Սև կամ այլ ծովի հետ², այլ խոսքով՝ Կասպից ծովը ներքի՞ն ծով է, թե՞ ծովածոց: Ուսումնասիրությունը նախապատրաստական փուլից այն կողմ չի անցնում: Հիրկանիայում (Վրկան) նախապատրաստվող այս արշավանքը այդպես էլ տեղի չի ունենում՝ Ալեքսանդր Մակեդոնացու հանկարծակի մահվան պատճառով³: Ուստի հազիվ թե արշավախումբը Աղվանքի մասին ունենար այնպիսի տեղեկություններ, որոնցից օգտվեր թեոփանեսը: Մի քիչ այլ է Պատրոկլեսի հաղորդումների խնդիրը:

Սելևկյան զորավար Պատրոկլեսը, Յերակլիդեսի չկայացած արշավանքից որոշ ժամանակ անց, մոտ մ.թ.ա. 285-280 թթ., Սելևկիոս 1-ինի հանձնարարությամբ, իբր, Կասպից ծովի շուրջը կատարել է մի ճանապարհորդություն, որի արդյունքը նույնիսկ մի քայլ հետ էր այդ ծովի՝ ժամանակի աշխարհագրական պատկերացումների մեջ: Դեռևս Յերոդոտին էր հայտնի, որ Կասպից ծովը ներքին ծով է, փակ մի ջրամբար և ոչ մի կապ չունի այլ ծովերի հետ, իսկ Պատրոկլեսի արշավախումբը «բացահայտում է», թե այն «հյուսիսում իբր միանում է օվկիանոսի հետ⁴», այսինքն այն պարզապես ծովածոց է: Պատրոկլեսի աշխատությունը մեզ ամբողջապես չի հասել: Նրա տեղեկություններին հավատ է ընծայվում լոկ այն պատճառով, որ նա, իր իսկ խոստովանությամբ, երկար տարիներ եղել է պետական արխիվի կառավարիչ և օգտագործել է աշխարհագրական բոլոր այն գրառումները, որոնք կապված են եղել Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետ:

Մակեդոնացու արշավանքները և նրա արդյունքները իրոք որ երկար ժամանակ հանդիսացել են աշխարհագրական նոր վայրերի հայտնագործման և ուսումնասիրման հիմնական աղբյուրներ, բայց նախ՝ դրանք իրենցից ներկայացնում էին «մտացածին ու սխալ տվյալների մի խառնուրդ»⁵ և երկրորդ՝ նրանք չէին կարող նույն դերը կատարել ընդհանրապես Կովկասի և մասնավորապես Աղվանքի համար, քանի որ Ալեքսանդր Մեծը չի եղել այդ վայրերում⁶: Ուստի հավանական է, որ Պատրոկլեսը չէր կարող լինել այն աղբյուրը, որից կարողանային օգտվել Աղվանքի և ընդհանրապես, Կովկասի մասին խոսող հեղինակները և, մասնավորապես թեոփանես Միտիլենացին: Պլուտարքոսը Պոմպեոսի կովկասյան արշավանքի մասին խոսելիս, հայտնում է, որ աղվանները սկզբում Պոմպեոսին թույլ են տվել փախչող Միհրդատին հետապնդելիս՝ անցնել իրենց երկրով: Նույն հեղինակը վկայում է, որ Պոմպեոսը 66-65 թթ. ձմռանը իր լեգեոններով ձմեռել է Աղվանքում, ենթարկվել աղվանների 40-հազարանոց բանակի հարձակմանը, բայց և հաղթանակել է, ու ստիպել է նրանց փախչել՝ տալով մեծ կորուստներ: Յետագայում էլ Պոմպեոսը, մեծահոգաբար ներելով աղվանների հռոմեական հասկացողությամբ նրանց «դավաճանության» համար, բանակցությունների մեջ է մտել և ընդունել նրանց առաջարկած հաշտությունը: Բացի դրանից, Պոմպեոսը Աղվանից երկրով շարժվել է դեպի Կասպից ծով, որը հնուց ի վեր հետաքրքրել է հռոմեացիներին, բայց երբ իրենց նպատակակետին հասնելու համար մնացել էր երեք օրվա ճանապարհ, ետ է

¹ Тревер К. Очерки по истории и культуре Кавказской Албании: IV в. до н. э. - VII в. н. э., Москва – Ленинград, 1959, с. 9.

² Арриан, Поход Александра, пер. Е. Сергеевко, Москва – Ленинград, 1962, кн. VII, гл. XVI, § 1, նաև Тревер К., с. 56:

³ Томсон Дж., История древней географии, Москва, 1953, с. 191.

⁴ Тревер К., с. 56.

⁵ Томсон Дж., с. 186.

⁶ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 502:

վերադարձել: Այս բոլոր դադարները, բանակցությունները, դեպի երկրի խորքը թափանցելը և այլն, լայն հնարավորություն կտային դիտող աչքին տեսնելու և ուսումնասիրելու աղվանների կյանքն ու կենցաղը, սովորույթներն ու բարքերը: Եթե Պլուտարքոսի տեղեկություններին ավելացնենք նաև Դիոն Կասիոսի հաղորդումը այն մասին, որ Աղվանքով անցնելիս Պոմպեոսը իր հետ վերցրել էր միայն ջուր, «քանզի մնացած ամեն ինչ նրանք ստանում էին տեղաբնիկներից կամավոր կերպով. այդ իսկ պատճառով նրանք ոչ մի չարիք չէին հասցնում», ապա երկիրը ու նրա բնակիչներին ճանաչելու Միտիլենացու հնարավորությունների շրջանակները այնքան են լայնանում, որ նրա հաղորդումների արժանահավատությունը կասկած չի հարուցում: Դ. Կասիոսի վերը բերած վկայությունը խոսում է այն մասին, որ աղվանները առևտրական հարաբերությունների մեջ են մտել Պոմպեոսի մարտիկների հետ. նրանց համար կամովին հայթայթել են սննդամթերք, և փոխարենը հռոմեացիները ոչնչով չեն նեղացրել նրանց: Ըստ Ստրաբոնի աղբյուրի, որն անկասկած թեոփանես Միտիլենացին է, այդ առևտուրը կրել է փոխանակման բնույթ: Աղվանքի պատմական տարածքի պեղումները լույս աշխարհ են հանել մեծաքանակ դրամներ, որոնց մեջ հանդիպում են թե՛ Մակեդոնացու, թե՛ պոնտական, թե՛ սելևկյան, թե՛ արշակունյան և այլ բազմատեսակ դրամներ², որոնք անշուշտ վկայում են Աղվանքի սոցիալական կյանքի մասին և զարգացման չափանիշ են, և վկայում են վերջինիս առևտրական լայն կապերի մասին: Նշված փաստի ու Դ. Կասիոսի հաղորդումների միջև զուգահեռներ անցկացնելիս աներկբա է դառնում այն միտքը, որ Ստրաբոնի վկայությունը, թե աղվանները «զբաղվում էին միայն ապրանքափոխանակությամբ»³, ոչ միայն նրա աղբյուրից՝ Թ. Միտիլենացուց է գալիս, այլև պատկերում է աղվանների սոցիալ-տնտեսական կյանքը մ.թ.ա. 1-ին դ. կեսերին: Այս դարաշրջանին է վերաբերվում նաև Ստրաբոնի նկարագրությունը աղվանների պարզ ու նահապետական վիճակի մասին:

Ստրաբոնի գրքի XI գրքի IV գլխի 3-րդ պարագրաֆում խոսվում է Աղվանքի բնակլիմայական պայմանների և ոռոգման ու հողօգտագործման մասին: Հեղինակը այս գլխում նշում է, որ այստեղ հողը շատ բերրի է, այն մշակում են փայտե արորի ու ոռոգման միջոցով: Անդրադարձել է նաև Աղվանքի անասնապահությանը:

Ստրաբոնի՝ Աղվանքի նկարագրությանը վերաբերող հաղորդումները քննարկելիս ուսումնասիրողները իրավացիորեն գտնում են, որ դրանք ոչ թե ամբողջ երկրի ընդհանուր վիճակն են արտացոլում, այլ նրա առանձին մարզերի և առաջին հերթին այն վայրերի, որոնցով անցել են Պոմպեոսի լեգեոնները: Այստեղից էլ եզրակացվել է, որ Ստրաբոնի այն հաղորդումները, որոնք վերաբերում են մ.թ.ա. 1-ին դ. Աղվանքի ու աղվանների պարզունակ կյանքով ապրելուն, կարող են բնութագրել ոչ թե երկիրն ու նրա ժողովրդին ամբողջապես, այլ նրա մի մասը միայն՝ Կամբեճանն ու նրան հարող շրջանները:

Սակայն վերջինիս նկարագրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ նկարագրվող երկրամասը կազմում է երկրի հարթավայրային ու բերքառատ մասը⁴: Այդ հաղորդումը չէր կարող վերաբերվել Կամբեճանին, որը նույն հեղինակի հաղորդման համաձայն խիստ, չորային ու լեռնոտ երկիր էր⁵: Աղվանքում ամենից բերքառատ ու բերրի էր Ավթարանի հովիտը, որն էլ կարող էր զարմացնել հռոմեացիներին իր բուսականության փարթամությամբ ու առատությամբ և որին էլ կարող էր վերաբերել Ստրաբոնի նկարագրությունը:

Անշուշտ Աղվանքում Ստրաբոնի հիշատակած 26 ցեղերը չէին կարող լինել զարգացման միևնույն մակարդակի և աշխարհագետի բերած տեղեկությունները

¹ Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասիոս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 145:

² Пахомов Е., Античные монеты в Албании, «Вопросы истории Кавказской Албании», Баку, 1962, с. 107.

³ Strabo, XI, IV, 4.

⁴ Նույն տեղում, XI, IV, 1:

⁵ Նույն տեղում, XI, XIV, 19:

չէին էլ կարող հավասարաչափ տարածվել բոլորի վրա: Եվ եթե, այնուամենայնիվ, պետք է փնտրել հետամնաց ցեղեր Աղվանքում, ապա նրանց կարելի է գտնել մերձկասպյան հարթավայրերում, Կուրի՝ Կասպից ծովը թափվող հատվածից հյուսիս ընկած մասերում (ուր ապրում էին ձկնորսությամբ զբաղվող ցեղեր) և Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի անտառածածկ շերտերում¹: Այնուամենայնիվ, Ստրաբոնի հիշատակած այս ցեղերի մեջ ամենամեծը եղել են աղվանները, որոնք ապրել են Կասպից ծովի արևմտյան ափամերձ տարածքներում: Սա է երևի պատճառը, որ ծովի մի հատվածը նրանց անունով կոչվել է «Ալբանական ծով»²: Իսկ Յերոդոտոսը մ.թ.ա. 6-5-րդ դդ. այս վայրում հիշատակում է կասպերին, մյուկերին և ուտիներին³: Այս երեք ցեղերն այն կորիզն էին, որոնցից հետագայում կազմավորվեց Ալբանիա (Աղվանք) կոչվող երկրի բնակչությունը, որոնք հետագայում միավորվեցին⁴:

Չնայած սկզբնաղբյուրներում որևէ հիշատակություն Կովկասյան Աղվանքի մայրաքաղաքի կամ թագավորանիստ քաղաքի մասին չկա, այնուամենայնիվ որոշ մատենագիրներ, հատկապես Պլինիոսը՝ Կապադակը համարել է այս երկրամասի գլխավոր քաղաքը: Այս քաղաքը հին հայկական աղբյուրներում հիշատակվում է Կապադակ, իսկ արաբալեզու աղբյուրներում՝ Կաբալահ ձևով: Յիմմվելով վերջինիս վկայությունների վրա՝ որոշ գիտնականներ հենց Կապադակն էլ համարել են Աղվանքի մայրաքաղաքը: Իսկ Պտղոմեոսը իր հերթին հիշատակելով Աղվանքի 29 բնակավայրերը, այդ թվում Կապադակը, սակայն դրանցից ոչ մեկին չի համարել մայրաքաղաք⁵:

Այսպիսով, Աղվանից երկրի պատմության ամենազանազան հարցերին նվիրված իր հաղորդումների համար Ստրաբոնը պարտական է հիմնականում Թեոփանես Միտիլենացուն, որի տեղեկություններն էլ բնութագրում են գրեթե ողջ աղվանից երկիրը և նրա ժողովրդին հին ու նոր դարաշրջանների սահմանագլխին:

Վերը նշված փաստերը հնարարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմելու Աղվանքի, հատկապես էթնիկ կազմի մասին: Աղվանական ցեղերը, բնականաբար չեն պատկանել հնդեվրոպական լեզվաընտանիքին, բայց, այնուամենայնիվ, տարբեր դարաշրջաններում կրել են նրա, հատկապես հայկական ճյուղի մշակութային, քաղաքական, ինչու չէ՞ նաև գրային-այբբենական ազդեցությունը (մասնավորապես Մեսրոպ Մաշտոցի կողմից Կուրի ձախ ափին բնակվող գարգարացիների համար այբուբենի ստեղծումը, կամ հոգևոր առումով Չայ առաքելական եկեղեցու ազդեցության ոլորտում գտնվելու փաստը): Միջին դարերում քաղաքական ազդեցությունը և միջէթնիկ և միջմշակութային կապերը այնքան էին սերտաճել, որ միջնադարյան հեղինակները Չայոց Արևելից կողմանցը և Աղվանքի առանձին շրջանների պատմությունը դիտում էին անբաժան, ինչպես օրինակ Սովսես Կաղանկատվացին: Բայց և այնպես չպետք է աղվանական պատմությունը և մշակույթը դիտել որևէ այլ մշակույթի կոնտեքստում: 21-րդ դարում սա քաղաքական նկատառումներով գտնվել է պատմաբանների ուսումնասիրման կենտրոնում: Մասնավորապես, չջանկանալով այստեղ ևս այն քաղաքականացնել, պետք է նշել, այնուամենայնիվ, կեղծարարությունների մասին: Մասնավորապես ադրբեջանական գիտական մեքենան ջանք ու միջոց չի խնայում պատմականը ցանկության հետ համատեղելու համար, հաճախ կոպտորեն շրջանցելով փաստերը: Հունա-հռոմեական պատմիչների վկայությունները ցայտուն կերպով ցույց են տալիս այս ցեղերի վաղմշակական ժամանակներից այստեղ բնակվելը: Այնինչ թյուրքական ցեղերի համար, ընդհուպ մինչև 4-րդ դ., էթնոգենեզի արեալ եղել է Սոնդուխան և Սիբիրը, միայն 5-րդ

¹ Еремьян С., Экономика и социальный строй Албании III—VII вв., «Очерк.истории СССР III—IX вв.», Москва, 1958, с. 306.

² «История Азербайджана», Баку, 1958, т. 1, стр. 51.

³ «Herodotus», London, 1948, v.1-4 Books, p. 68.

⁴ Ենայաթուլա Ռ., էջ 55:

⁵ Pliny, p. 30.

դ., թյուրքական հզոր կազանատի ստեղծումից հետո նրանք տեղափոխվեցին Միջին Ասիա, այնտեղից էլ միայն 11-րդ դ. արդեն Մերձավոր Արևելք: Սա մի ժամանակահատված էր, երբ արաբական ծանր լծի պայմաններում սկսել էր դանդաղորեն ասպարեզից դուրս գալ Աղվանքը, որպես էթնիկական միավոր, իսկ թյուրքական արշավանքները՝ միայն արագացրեցին այն: Ուստի աղվանական մշակույթին վնաս հասցրած էթնիկական միավորը իրավունք չունի խոսելու նրա մշակութային ժառանգորդը լինելու մասին:

АНТИЧНЫЕ ИСТОЧНИКИ О КАВКАЗСКОЙ АЛБАНИИ

Мелик Мкртчян

О географических границах Кавказской Албании, ее природных условиях, этническом составе ее населения, о его быте и обычаях подробно сообщает Страбон (64/63 год до н.э.-23/24 год н.э.) в IV главе XI книги своего труда «География». Однако некоторые исследователи находят противоречия в этих сведениях и пытаются объяснить их тем, что Страбон использовал в своей работе источники разных времен. Они считают, что автор «Географии» передает сведения, восходящие к более раннему периоду истории Албании. Проведенный нами сравнительный анализ источников Страбона об Албании XI книги показывает, что никаких противоречий в этих сообщениях нет. Это еще раз подтверждает тот факт, что своим описанием Албании Страбон полностью обязан Феофану Митиленскому. Страбон дает характеристику социально-экономической, политической и духовной жизни Албании именно на рубеже нашей эры.

GRECO-ROMAN SOURCES ABOUT CAUCASIAN ALBANIA

Melik Mkrтчyan

Information about the geographic boundaries of the Caucasian Albania, its natural conditions, the ethnic composition, its activities, life and customs of the details is reported by Strabon (64/63 B. C. – 23/24 A.D.) in Chapter IV of Book XI of his labor. Researchers find contradictions in these evidences and try to explain the usage of various sources by Strabon. They believe that the author of «Geography» transmits the information back to an earlier period in the history of Albania. Analysis of sources of Strabon about Albania in relation to the remaining chapters XI book shows that there are no contradictions in the messages there. This once again confirms the fact that his description of Albania Strabon totally obliged Theophanes Mitilenskom. It describes the socioeconomic, political and spiritual life of Albania was the exactly on the boundary of our era.

ՍԻՈՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԻԹՅՈՒՆ

Մելիք Սկրտչյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ պ.գ.թ. դոց. Ս. Զովհաննիսյան

Էլփոստ՝ meliqmkrtyan@mail.ru

Հրեաների համար պետություն ստեղծելու ծրագիրը շատ բարդ էր ու սովորաբար պատմության մեջ քիչ են լինում այնպիսի դեպքեր, երբ այս կամ այն ազգին հաջողվում է հետ բերել իր պատմական հայրենիքը՝ հայրենիք, որը դարեր շարունակ արդեն այդ ազգին չի պատկանում և բնակեցված է այլազգի ժողովուրդներով: Բայց այդ ծրագիրը զարմանալիորեն բարեհաջող է ավարտվում հրեա ժողովրդի համար և նրանք կարողանում են ոչ միայն մի բարդ տարածաշրջանում ստեղծել իրենց պետությունը, այլև հետագա տարիների ընթացքում զարգացնել ու հզորացնել այն: Այս փոքրիկ պետությունը հետագայում կարողանում է ոչ միայն ձեռք բերել ռազմական մեծ ներուժ, այլ նաև հաջողացնում է հաղթանակներ տանել այնպիսի խոշոր պետությունների դեմ, ինչպիսիք օրինակ Եգիպտոսն է, կամ Սիրիան: Իհարկե պարզ է, որ խոսքը գնում է Իսրայելի մասին:

Իսրայելը՝ չորս կողմում շրջապատված լինելով արաբական պետություններով, արաբ ազգաբնակչությամբ, որից ի դեպ նա ազատել էր իր պատմական հայրենիքը, կարողացավ չջախջախվել, պահպանվել ու զարգանալ՝ դառնալով տարածաշրջանի ամենազարգացած պետություններից մեկը: Սա իրոք ֆենոմեն է համաշխարհային պատմության մեջ, և առաջին հայացքից ավելի շատ հեքիաթի է նման քան իրականության: Սակայն այս ամբողջը իրականություն է՝ հեքիաթային իրականությունը հրեաների համար և դառը իրականությունը արաբների համար: Ու բնականաբար հարց է առաջանում, թե ինչպիսի՞ գաղափարախոսություն այսպես փոխեց այս տարածաշրջանի ամբողջ քաղաքական քարտեզը, ինչպիսի՞ շարժում կարողացավ հասնել այսպիսի չլսված քաղաքական հաջողությունների, և վերջապես ո՞վ էր այս ամենի հովանավորն ու աջակցողը, եթե իհարկե այդպիսին կար, և եթե իհարկե ամբողջ աշխարհով մեկ սփռված հրեաները իրենք չէին իրենց միացյալ ուժերով «ազատագրել» իրենց հայրենիքը: Սակայն հրեաները իրենց պետության ստեղծման համար պետք է երախտապարտ լինեն մի գաղափարախոսության, մի շարժման, որը կազմում է ամբողջ Իսրայել պետության հիմքը, և իրավացի կլինենք, եթե ասենք, որ առանց այս գաղափարախոսության ու դրանից ծնված շարժման, հրեաները մինչ օրս էլ կլինեին այն ժողովուրդների շարքում, որոնք չունեն իրենց պետությունը և ստիպված կլինեին գոյատևել այլ պետությունների տարածքում ու լինել փոքրամասնություն: Խոսքը Սիոնիզմի՝ սիոնիստական շարժման մասին է: Սա է այն հիմնաքարը, որը կազմել է ամբողջ Իսրայել պետության հիմքը, ամբողջ աշխարհի տարագիր հրեաների հույսերի ու ցանկությունների իրականացնողը, նրանց համախմբողը և ուղղորդողը դեպի բաղձալի նպատակակետը:

Քաղաքական սիոնիզմը (ուղղություն, որն անմիջականորեն կապված է հրեական պետության ստեղծման հետ) առաջացել է 19-րդ դարի վերջին, երբ կապիտալիզմը հասավ իր ամենաբարձր աստիճանին՝ իմպերիալիզմին: Այդ շրջանի համար բնութագրական էր ազգային ճնշման ուժեղացումը, ինչպես նաև բազմաթիվ բուրժուական գաղափարախոսական հոսանքների առաջացումը: Սիոնիզմը արտահայտում էր ուտոպիական բուրժուական պատկերացումները այն ժամանակվա խնդիրների լուծման շուրջ, որոնք կանգնած էին հրեական համայնքների առաջ բոլոր երկրներում, որտեղ նրանք հաստատվել էին:

Սիոնիզմը ազգայնական գաղափարախոսության տեսակ է, կապված «բոլոր հրեաների» վերաբնակեցման հետ իրենց հեռավոր նախնիների հողերի վրա՝ Սիոն

լեռան մոտ, այժմյան Իրայել պետություն, որը «ավետյալ երկիր» է համարվում հրեաների համար: Սիոնիզմը որպես հատուկ գաղափարական և կազմակերպչական հոսանք, ծագել է միայն 19-20-րդ դդ. սահմանագծին¹: Սակայն 20-րդ դարի սկզբին սիոնիզմի գաղափարախոսության մեջ տեղի ունեցան որոշակի մոդիֆիկացիաներ:

Սիոնիզմը ի հայտ է եկել անցյալ դարի վերջին, երբ 1897 թ. ստեղծվեց Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը: Նրա առաջին նախագահը և տեսաբանը դարձավ վիեննական լրագրող Թեոդոր Հերցլը: Նա ոչ պակաս դեր է խաղացել այսպես կոչված հրեական ժողովրդի բուրժուական-ազգայնական ծրագրի մշակման մեջ: Իր բրոշյուրում՝ «Հրեական պետություն» (1896 թ.), նա հայտնեց իր գաղափար՝ նման պետության ստեղծման վերաբերյալ, որպես այսպես կոչված հրեական հարցի լուծման միակ միջոց: Թեոդոր Հերցլը ձևավորել է սիոնիզմի հիմնական դոկտրինաները, այնպիսիք, ինչպիսիք են աշխարհում «միակ հրեական ժողովրդի» գոյությունը, հրեաների «բացառիկ» դերը պատմության մեջ և աշխարհի բոլոր հրեաների «կոնցենտրացիայի» անհրաժեշտությունը մեկ տարածքի վրա²:

Իրենց հիմնական ազգայնական խնդրի՝ հրեական պետության ստեղծման, ռեալիզացիայի համար սիոնիստները օգտագործում էին ասես գոյություն ունեցող «միասնական հրեական ժողովրդի» վերաբերյալ գաղափարը, որը «հավերժական հակասեմիտիզմի» պայմաններում, պետք է հավաքվի Պաղեստինում, որը նրանց կողմից հռչակվել էր «նախնիների հայրենիք»:

Փորձելով «հաստատել» հակասեմիտիզմի հավերժության վերաբերյալ իրենց թեզի արդարությունը, որից ասես փրկություն չկար, բացի հրեաների իրենց պետությունում հավաքվելուց, սիոնիստները սովորաբար հղում են կատարում հրեական լայն մասսաների ողբերգական ճակատագրի վրա՝ ֆաշիստական ահաբեկչության տարիներին և հակակշիռ այդ ամենին՝ «հրեաների փրկությունը» Պաղեստինում³:

Սիոնիզմի գաղափարաբանները համոզված էին, որ միայն այդ ճանապարհով կարող է լուծվել հրեական հարցը (որպես հրեական պետության ապագա տարածք Պաղեստինի հետ մեկտեղ սիոնիստները առաջ էին քաշել և դիտել այլ տարբերակներ՝ Ուզանդա, Սինայ, Արգենտինա և այլն): Վերջնական ընտրությունը կանգ առավ Պաղեստինի վրա, քանի որ սիոնիստները հաշվարկել էին իրենց շահերի համար օգտագործել աստվածաշնչյան միջերը, կապված այս տարածքի հետ, որի շնորհիվ հնարավոր կլինի հույսը դնել նաև հավատացյալ մասսաների կողմից սիոնիստական նպատակների աջակցության վրա:

1897 թ. մարտին «ամբողջ աշխարհի» հրեաներին առաջարկվեց պատվիրակների ուղարկել Սիոնիստական կոնգրեսին մասնակցելու համար Մյունխենում նույն տարվա օգոստոսին: Սակայն բողոքներ եկան սկզբում Գերմանիայի ռաբբիների կողմից, իսկ հետո մյունխենյան հրեաներից, այնպես որ ստիպված եղան կոնգրեսը տեղափոխել շվեյցարական Բազել քաղաք⁴:

Հերցլի կոնգրեսին ժամանեցին 197 պատվիրակներ, որոնք մեծ մասամբ Արևելյան Եվրոպայից էին: Այս խումբը հայտարարեց Համաշխարհային սիոնիստական կազմակերպության ստեղծման վերաբերյալ, որը հրեաներին հռչակեց առանձին ազգ, որն իր առջև նպատակ դրեց հասնել «հասարակայնորեն ճանաչված և իրավաբանորեն երաշխավորված տան», իսկ Հերցլը հայտարարեց, որ «հրեական պետությունը» արդեն գոյություն ունի:

¹ «Цели и методы воинствующего сионизма», ред. Сванидзе К., Москва, 1971, с. 96.

² «Израиль в поисках мира», Иерусалим, 1994, с. 110-112.

³ Гольденберг М., Мифы сионизма, Кишинев, 1972, с. 29.

⁴ Широков А., Социально-политическая доктрина сионизма, Киев, 1988, с. 15-20:

Այնուամենայնիվ նրանց առաջարկներն ինչպիսի տեսք էլ որ նրանք ունենային այն ժամանակ, օրակարգի դրվեցին միջազգային քաղաքականության համար: Առաջին Սինեդրիոնը ժխտեց հրեաների որպես առանձին ազգի ճանաչումը և հրեական պետություն ստեղծելու բոլոր հավակնությունները:

«Համաշխարհային հրեական ազգի» գոյության հաստատմանը աջակցելու համար, սիոնիստական քարոզիչները, ստիպված էին տենդենցային սահմանում գտնել, որը չէր համապատասխանում հրեական համայնքների իրական վիճակին, բայց հնարավորություն կտար հրեաներին ներառել «համաշխարհային հրեական ազգի» մեջ: Նման տենդենցային խաղ սկսեց Թեոդոր Յերցլը: Իր խոսքում «Հրեականություն» (1896 թ. փետրվարի 7) նա ասաց. «Ես ազգից չեմ պահանջում ընդհանուր լեզու կամ խիստ արտահայտված ռասայական նշաններ: Նման պարզ և հասարակ սահմանումը բավական է ազգի համար: Մենք մարդկանց պատմական ընդհանրություն ենք, պատկանում ենք միմյանց՝ խիստ արտահայտված կապով, և մեր համախմբվածությունը պահպանվում է ընդհանուր թշնամու գոյության հաշվին»:

Ժամանակակից սիոնիստական հայացքներում մենք հանդիպում ենք հրեական ազգի սահմանման շուրջ Յերցլի մոտեցման արտացոլմանը: 1964 թ. դոկտոր Նաում Գոլդմանը՝ այն ժամանակ Համաշխարհային սիոնիստական կազմակերպության նախագահը, գրել է. «Հրեական ժողովուրդը պատմական էություն է՝ միակն իր տեսակով... Նրան բնութագրում են երեք գործոններ. այն, որ նա համաշխարհային ժողովուրդ է, այն, որ նա կապված է Իսրայելի հետ, այն, որ ընդհանուր պատմական տեսանկյունից նա հանդիսանում է համաշխարհային պատմության ամենանույնական խմբերից մեկը համաշխարհային պատմության մեջ»¹:

Հարյուրավոր տարիների ընթացքում հրեաները, ովքեր կազմում էին Պաղեստինի բնակչության աննշան փոքրամասնությունը, այնուամենայնիվ հիմնական արաբական բնակչության հետ օգտվում էին հավասար իրավունքներից: Շատ բան էր նրանց միավորում. համագործակցությունը տնտեսական և մշակութային ոլորտում, ընդհանուր սեմական ծագումը, Պաղեստինում օտարերկրյա հալածանքների երկար տարիները: Չի կարելի համարել, որ հրեաները Պաղեստինի տարածքում ապրելու հատուկ իրավունքներ ունեին²: Հոգ չտանելով համամարդկային բարոյականության տարրական նորմերին հետևելու մասին, «սիոնիզմի հայր» Թեոդոր Յերցլը առանց խղճի խայթ զգալու ցույց էր տալիս իր հրեական ազգակիցներին ճանապարհը՝ Պաղեստինի տարածքում մաքուր հրեական պետություն ստեղծելու վերաբերյալ. «Ենթադրենք, օրինակ, որ մեզ անհրաժեշտ է երկիրը մաքրել վայրի կենդանիներից, մենք նետեր և նիզակներ չենք նետի և ուղղակի հետապնդենք արջերին, մենք կազմակերպում ենք լայն և էներգետիկ որս, մենք միասին նրանց դուրս կհանենք և նրանց վրա կնետեինք մելիմիտե նռնակներ»: Այս բառերում է սիոնիստական գաղութարարների մարդաստաց ծրագիրը³...:

Այլ կերպ ասած, սիոնիզմը վաղուց էր ձգտում համաշխարհային տիրապետության նվաճման, բայց քանի որ «արտաքին ինֆորմացիայի» համար լայն հասարակայնությանը խաբելու նպատակով գործն այսպես էր ներկայացվում, ասես նրա նպատակը «հրեական պետության» ստեղծումն էր, այդ պատճառով էլ այդ սուտը ներդրվեց ամենատարբեր ուղղությունների գրականության մեջ, ասես ճշմարտություն՝ սիոնիստական կազմակերպությունների ձգտումների վերաբերյալ⁴: Եվ դրա ցայտուն վկայությունն է համարվում Թալմուդի ուսմունքը կամ գաղափարախոսությունը, որն ընկած էր միջազգային սիոնիզմի վարած համաշխարհային քաղաքականության հիմքում:

¹ «Сионизм: правда и вымыслы». Москва, 1986, с. 22.

² Семенюк В., Современный сионизм. Минск, 1986, с. 68-72

³ Романенко А., О классовой сущности сионизма. Москва, 1985, с. 72.

⁴ Նոյն տեղում, էջ 127:

Այս ուսմունքով տարվեցին բազում հրեաներ, որոնք իրենց համերաշխությունը կիսում էին այդ ուսմունքի հետ, և հավատում էին, որ որպես, ցեղային բացառություններ, Աստօծ կողմից միայն իրենց է տրված իրավունք՝ առաջնորդելու մարդկությանը: Այս ուսմունքը ժամանակի ընթացքում վերածվեց ազգայնական շարժման, որով սկսեցին ղեկավարվել ռասիստական լիդերները:

Միաժամանակ նրանք իրենց գաղափարները այլազգիներից անվտանգ դարձնելու նպատակով ստեղծեցին ևս մեկ մարմին, որը կոչվում էր «Կազալ»¹: Այն տանում էր հրեական ազգային կառավարության դեր՝ մշակելով բավականին բարդ քաղաքականություն՝ իրենց համաշխարհային տիրապետության հասնելու միջազգային սիոնիզմի ծրագիրն աննկատ դարձնելու համար: Այն նաև կտրուկ կերպով իրագործում էր Թալմուդի նպատակային խնդիրները:

Այսպիսով այս ամենից ելնելով պետք է հասկանալ այն, որ Թալմուդն աշխատում էր հրեաների համար, իսկ ողջ հրեական համայնքները՝ Թալմուդի ուսմունքի համար: Ահա սա էր Թալմուդի ուսմունքի էությունը:

Միաժամանակ Պաղեստինում սիոնիստական կազմակերպության սկզբնական փուլում, այսինքն՝ 1897 թ. համաշխարհային սիոնիստական կազմակերպության ստեղծման պահից մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, տեղի էր ունենում միջազգային սիոնիզմի շահերի և բրիտանական իմպերիալիզմի միակցում²:

1898 թ. սիոնիստական երկրորդ կոնգրեսում Թեոդոր Յերցըլը անկեղծ խոսեց. «Անգլիան առաջինը ժամանակակից աշխարհում հասկացավ գաղութային էքսպանսիայի անհրաժեշտությունը... Այդ պատճառով ես գտնում եմ, որ սիոնիզմի գաղափարները, որոնք հանդիսանում են գաղութատիրության գաղափարները, պետք է գտնեն արագ և հեշտ ըմբռնում Անգլիայում»: Այդ ժամանակ սիոնիստների նպատակներն ու առաջարկները լիովին համապատասխանում էին Անգլիայի կառավարող շրջանների կայսերական ստրատեգիական շահերին³:

Անգլիական կառավարության կողմից այսպես կոչված Բալֆուրի դեկլարացիայի (1917 թ. նոյեմբերի 2) ընդունումից հետո և Պաղեստինի կառավարման մանդատը Ազգերի լիգայի կողմից Մեծ Բրիտանիային հանձնելու վերաբերյալ, այդ երկրի սիոնիստական գաղութատիրությունը նոր փուլ մտավ: Սակայն Անգլիան Բալֆուրի դեկլարացիայի հռչակումից հետո զիտակցաբար կեղծավորում էր՝ հայտարարելով իր ձգտման մասին՝ չվճարել ոչ հրեական համայնքների իրավունքները Պաղեստինում: Այսպիսով, նկատվում էր բրիտանական իմպերիալիզմի հետպատերազմյան նպատակների և սիոնիստական շարժման համընկում⁴:

Սիոնիստական գաղափարախոսությունը ներառում է հետևյալ հարցերը.

- 1) գոյություն ունի՞ հրեական համաշխարհային ազգ,
- 2) գոյություն ունի արդյո՞ք հրեաների համաշխարհային ազգային-ազատագրական պայքար,
- 3) կարո՞ղ է հրեաների տարածքային կոնցենտրացիան լուծել հրեական հարցը,
- 4) հավերժ է արդյո՞ք հակասեմիտիզմը,
- 5) նույնական են «հրեա-Իսրայել-սիոնիզմ» հասկացությունները⁵:

Իրենց հեզեմոնիական քաղաքականության անցկացման վերաբերյալ բոլոր ուղղություններով և ասպետկներով սիոնիստական առաջնորդները ամենաակտիվ ձևով օգտագործում են միջազգային սիոնիստական կազմակերպությունների ճյուղավորված ցանցը⁶:

¹ Տե՛ս <http://www.eleven.co.il/?mode=article&id=11902&query=>

² «Когда исчезают миражи? Сионизм: практика тёмных дел». Москва, 1987.

³ Նոյն տեղում, էջ 25-26:

⁴ «Сионизм в системе империализма», Москва, 1988, с.36-40.

⁵ «Цели и методы воинствующего сионизма», с. 48-56.

⁶ **Алестин Ф.**, Палестина в петле сионизма, Москва, 1988. с.75-80.

Այսպիսով, սիոնիզմի գաղափարախոս Յերցելի մասին կարելի է նշել, որ նա սովորական հրեա բարերար չէր, որն ուներ գումար և ազդեցիկ ընկերներ, և որը աջակցում է հրեաներին իր ունեցածի չափով: Յերցելը չուներ գումար և քաղաքական իշխանություն, նա ուներ միայն գաղափար, նպատակ: Հրեաների շատ առաջնորդներ, ինչպես հոգևոր, այնպես էլ ֆինանսական, նրանից աշխատում էին հեռու մնալ և չէին ընդունում նրա գաղափարները: Յերցելին իր ծրագրերի հաջողության մեջ օգնում են միմիայն իր մասնագիտական հմտությունները՝ նա փորձառու լրագրող էր, ուներ հասարակության հետ աշխատելու մեծ փորձ, և կարողանում էր լինել ուշադրության կենտրոնում: Ահա այս փաստերի համադրությունն է ծնում Յերցել, և նշել միայն, որ նա հաջողության հասավ իր գաղափարների շնորհիվ, իհարկե մեր կողմից սխալ կլիներ: Յերցելին հրեաները սիրեցին ոչ թե նրա գաղափարների նորության համար, այլ այդ գաղափարները իրականացնելուն ուղղված նրա անսահման աշխատանքի և եռանդի համար: Նա ամբողջովին նվիրվեց իր սրբազան գաղափարին՝ ստեղծել Հրեական պետությունը և այդ գաղափարով էլ ապրեց իր կյանքը: Նրա գործունեությունը անգնահատելի արժեք ունի սիոնիստական շարժման պատմության մեջ: Մի վառ անհատականություն էր, որ հանուն իր ժողովրդի լավ ապագայի և բարեկեցության՝ պատրաստ էր դիմելու ամեն քայլի: Նա պատմության մեջ մտավ որպես հրեական պետության հիմնադիր և հրեաների շրջանում սերմանեց գաղափարական ազատություն, սեփական հայրենիք ունենալու գաղափար:

ИДЕОЛОГИЯ СИОНИЗМА

Мелик Мкртчян

Идея сионизма, сформулированная Т. Герцли, представляет собой основную доктрину учения «единого еврейского народа», который, изучив исключительную роль евреев в мировой истории, признал необходимость объединения еврейского народа. Однако существующая теория «единого еврейского народа» находится в постоянном противоречии.

THE IDEOLOGY OF ZIONISM

Melik Mkrtchyan

The ideology of Zionism formulated by J. Herzl represents the main doctrine of “nation”, which had exceptional role in the world history and the formation of Jewish state. The theory “one Jewish nation” constantly contradicts with Palestine which is proclaimed to be their historic homeland.

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐՔԻՆ ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Սիեր Հակոբյան

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ. ք.գ.դ., դրոց. Ա. Աթանեսյան

Էլփոստ՝ mberhakobyan1994@gmail.com

Ժամանակակից միջազգային հարաբերությունների սուբյեկտների շարքում ԱՄՆ-ը, անշուշտ, զբաղեցնում է կենտրոնական դիրք, ինչն ամրապնդվել է հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո: ԱՄՆ-ի ձեռքում են կենտրոնացած համաշխարհային գիտատեխնիկական ռեսուրսի նշանակալի հատված, նավթի ու գազի մեծ պաշարներ, ինչպես նաև քաղաքական գերակայության ազդեցիկ գործիքներ:

Չնայած ներկայումս իր ունեցած բազմաթիվ առավելություններին՝ Միացյալ Նահանգներում անհաշիվ են ներքին անորոշություններն ու խնդիրները: Մեծ թիվ են կազմում էթնիկ փոքրամասնությունները, որոնք բավականին մեծ ազդեցություն ունեն երկրի ներքին ու հատկապես արտաքին քաղաքականության, ինչպես նաև ազգային անվտանգության վրա: Այդպիսի էթնիկ խմբերից նշանակալի են հրեական, հունական, հայկական, կուբայական և այլ համայնքները:

Սույն հոդվածում ներկայացվում են ԱՄՆ-ում հիմնական հայկական լոբբիստական կազմակերպությունները, դրանց նշանակությունը երկրի ազգային անվտանգության համար և ազդեցությունն արտաքին քաղաքական կուրսի մշակման վրա:

ԱՄՆ-ում հայկական լոբբին ձևավորվել է արտագաղթած հայության ինքնակազմակերպման գործընթացի արդյունքում, սակայն որպես լավ կազմակերպված համայնք այն ի հայտ եկավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ԱՄՆ-ում հայերի խնդիրների բարձրացման ու դրանց համապատասխան լուծումներ տալու գործում սկսվեց էապես կարևորվել հայության շահերը պաշտպանող լոբբիստական խմբերի ու կազմակերպությունների դիրքորոշումը: Հայկական լոբբինգը նոր թափ առավ խորհրդային կարգերի փլուզումից, նորանկախ հանրապետության ստեղծումից ու Արցախյան ազատամարտից հետո, երբ ինքնուրույնության զգացումը պայթարի մղեց ողջ հայկական Սփյուռքին:

Հայկական լոբբիստական կազմակերպություններից առավել հայտնի են ՀՀԴ «Հայ դատի» հանձնախումբը, Ամերիկայի հայկական համագումարը, Հայ-ամերիկյան քաղաքական գործողությունների հանձնաժողովը, ԱՄՆ-Հայաստան հասարակական հարցերով հանձնախումբը, Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախումբը և այլն¹: ԱՄՆ-ում ամենաազդեցիկ հայկական լոբբիստական խմբերն են ՀՀԴ Հայ դատի հանձնախումբը (այսուհետ՝ ՀԴԴ) և Ամերիկայի հայկական համագումարը (այսուհետ՝ ԱՀՀ): Հենց ՀԴԴ ակտիվ գործունեության շնորհիվ է 1992 թ. սկսած Հայաստանն ԱՄՆ-ից ստացել տնտեսական աջակցություն: Հայկական լոբբիի գլխավոր հաջողություններից է նաև 1992 թ. Ազատության աջակցման ակտի 907 բանաձևի ընդունումը, որը սահմանափակում էր ԱՄՆ-ի հարաբերություններն Ադրբեջանի հետ և վերջինիս զրկում ԱՄՆ-ի հնարավոր աջակցությունից (որը գործեց սակայն մինչև 1993 թ.)²: ՀԴԴ-ի և ԱՀՀ-ի գործունեության հիմնական նպատակները վերաբերում են հակաթուրքական և հակաադրբեջանական քարոզչությանը, մասնավորապես՝ ԱՄՆ-ի կողմից Թուրքիային և Ադրբեջանին ֆինանսական և ռազմական օգնության տրամադրման կասեցմանը՝ որպես փաստարկ բերելով Լեռնային Ղարաբաղի շարունակվող հակամարտությունը և ցեղասպանության

¹ «Հայ համայնքն ԱՄՆ-ում», Երևան, 2010, էջ 4:

² The Freedom Support Act, Public Law 102-511, October 24, 1992, <http://www.fas.org/nuke/control/ctr/docs/s2532.html>.

իրավական ճանաչումը: 2011 թ. Հայ դատի հանձնախմբի ճնշման ներքո կասեցվեց Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան Մեթյու Բրայզայի գործունեությունը՝ հաշվի առնելով նրա կնոջ թուրքական ծագումը¹:

Վերը նշվածը որևէ կերպ չի խոչընդոտում ԱՄՆ-ի քաղաքական կուրսի իրականացմանը, սակայն հայկական քարոզչության օրակարգում կա մի գործոն, որը հակասում է Միացյալ Նահանգների ռազմավարական շահերին: Եթե Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, իսկ Ադրբեջանը՝ ավելի ձեռնտու տնտեսական ու ռազմավարական գործընկեր, ապա Հայաստանը միակն է Հարավային Կովկասում, որ իր տարածքում պահպանում է ռուսական ռազմաբազաներ և ունի սերտ համագործակցություն Իրանի հետ: Հենց այստեղ է առաջ գալիս հիմնական խնդիրը հայ-ամերիկյան հարաբերություններում, քանի որ Հայաստանը վարում է կոմպլիմենտար քաղաքականություն՝ համագործակցելով և՛ ԱՄՆ-ի, և՛ Ռուսաստանի, և՛ Եվրամիության հետ, ըստ այդմ՝ չունի հստակ ամերիկյան կողմնորոշում:

Դիտարկենք ԱՄՆ-ում գործող երկու հիմնական լրբբիստական կազմակերպությունների՝ Հայ ազգային կոմիտեի (ՀՀԴ Հայ դատի հանձնախումբ) և Ամերիկայի հայկական համագումարի գործունեության բնույթն ու ուղղությունները և դերն ԱՄՆ-Հայաստան դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու զարգացման գործում:

Հայ ազգային կոմիտե (ՀՀԴ Հայ դատի հանձնախումբ): 1918 թ. հիմնադրված ԱՄՆ հայ ազգային կոմիտեն ԱՄՆ-ի հայության խոշոր և ազդեցիկ լրբբիստական կազմակերպություններից է: Իրականացնում է համայն հայության շահերի պաշտպանության քաղաքականություն տարբեր ոլորտներում: ԱՄՆ-ի հայ ազգային կոմիտեի գործունեության հիմնական նպատակներից են².

- հասարակական տեղեկացվածության խթանումը՝ ի շահ ազատ, միացյալ և անկախ ՀՀ աջակցման,
- ԱՄՆ քաղաքականության ուղղորդումը՝ կապված ԱՄՆ հայության շահերի հետ,
- ԱՄՆ պետական քաղաքականության հարցերի վերաբերյալ ԱՄՆ-ի հայության համընդհանուր մոտեցումներն ընտրողների ու պաշտոնյաների փոխհարաբերություններում ներկայացնելը:

ԱՄՆ-ի հայ ազգային կոմիտեն ակտիվորեն ներգրավված է նաև ԱՄՆ ընտրական գործընթացներում՝ դաշնային, նահանգային և տեղական մակարդակներով: Կոմիտեն հատկապես ակտիվանում է նախընտրական շրջաններում, երբ կարիք է լինում ԱՄՆ-ի հայկական բնակչությանը տեղեկացնել այս կամ այն թեկնածուի կամ կուսակցության ծրագրերին և թե որքանով են դրանք վերաբերում համայնքի շահերին: Հենց ՀՀԴ-ի քարոզչության արդյունքում և՛ Ջ. Բուշ կրտսերը, և՛ Բ. Օբաման իրենց նախընտրական քարոզարշավում բազմիցս խոստացան ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Իհարկե, դա տեղի չունեցավ, սակայն հարցի արծարծումը չդադարեց:

Հանձնախումբը լրբբիստական գործունեություն է ծավալում ինչպես ԱՄՆ պետական ու կոնգրեսական շրջանակներում, այնպես էլ պետքարտուղարության պաշտոնյաների շրջանում: Հանձնախմբի Լոս Անջելեսի գրասենյակն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանում մարդու իրավունքների ու ցեղասպանության առարկաների դասավանդման օրինագծի վավերացման (1985 թ.), ինչպես նաև նահանգային կրթական ծրագրում հայերի դեմ իրականացված ցեղասպանության հիշատակման (1988 թ.) գործում³:

¹ The National Interest. 19 Oct. 2012, De Waal Thomas, “Insejm in the Senate.”, <http://nationalinterest.org/commentary/insejm-the-senate-4262>.

² Armenian National Committee of America website, <http://anca.org/ancaprofile.php>.

³ «Հայ Սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003, էջ 39:

ՀԴՀ-ն իր գործունեության հիմնական երաշխիքներից է համարում համագործակցությունն այլ կազմակերպությունների հետ: Ինչպես նշում է աշխատակիցներից մեկը. «ՀԴՀ-ն կայուն կապեր ունի ԱՄՆ-ի հունական, կիպրական, քրդական և լիբանանյան համայնքների հետ: Մենք նաև աշխատում ենք տարբեր աշխատանքային և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ»¹: ՀԴՀ-ն լայնորեն օգտագործում է նաև ինտերնետի ընձեռած հնարավորությունները՝ սեփական հրատարակությունները տարածելու համար: Հայտնի հրատարակություններից են «Trans Caucasus: A chronology»-ն, որը հասանելի է կայքում²:

ՀԴՀ-ի կարևորագույն ձեռքբերումներից են Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին ԱՄՆ-ի տարբեր պետական մարմինների ներգրավումը, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում ԱՄՆ-ի դերակատարության ավելացումը հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, ինչպես արդեն նշվել է, Ազատության աջակցման ակտի 907 բանաձևը, 1992 թ. ԱՄՆ-ի կողմից Հայաստանին օգնության տրամադրումը, դիվանագիտական կապերի հաստատումն ու պահպանումը, Թուրքիային ռազմական օգնության կրճատումը և այլն:

Ամերիկայի հայկական համագումար: 1970-ական թթ. սկզբներին Միացյալ Նահանգների հայության շրջանում առաջացավ սեփական շահերի պաշտպանությանը միտված կազմակերպության ստեղծման անհրաժեշտություն: Այդ կազմակերպությունը դարձավ Ամերիկայի հայկական համագումարը, որը հիմնվեց 1972 թ.³: ԱՀՀ-ն Միացյալ Նահանգներում գործող առաջին հայկական լրբիստական կազմակերպություններից էր, որն ակտիվորեն ներգրավվեց Հայոց ցեղասպանության միջազգայնացման գործընթացին: Կազմակերպությունը զգալի հասարակաքաղաքական և տեղեկատվական աջակցություն է ցուցաբերել նաև ՀՀ և ԼՂՀ անկախացման շարժումներին:

Կազմակերպության հիմնական նպատակներն են⁴.

- աջակցել և ուժեղացնել կազմակերպության ներուժը, կազմակերպություն, որը ԱՄՆ հայության շահերը պաշտպանող առաջատար հաստատություններից է,
- ապահովել առավելագույն հնարավորություններ՝ խթանելու ԱՄՆ հայության բոլոր կազմակերպությունների ու անհատ գործիչների ակտիվ մասնակցությունն ԱՄՆ ժողովրդավարական գործընթացներին՝ դաշնային, նահանգային և տեղական մակարդակներով,
- զարգացնել և ընդլայնել կազմակերպության առաջադեմ հետազոտական, կրթական ու խորհրդատվական գործունեությունը՝ ուղղված Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի աջակցման աշխատանքներին,
- աջակցել ու խորացնել ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ հարաբերությունները՝ հիմնվելով ժողովրդավարության, օրենքի գերակայության, ազատ շուկայական հարաբերությունների, տարածաշրջանային անվտանգության հարցերի շուրջ ընդհանրական մոտեցումների վրա,
- ակտիվ մասնակցություն ցուցաբերել Միացյալ Նահանգների և այլ երկրների հայության կազմակերպությունների հետ համագործակցության զարգացմանը:

Հիմնականում անդրադարձանք ԱՄՆ-ում գործող հայկական լրբիստական կազմակերպություններից երկու գլխավորների՝ Հայ դատի գրասենյակի և Ամերիկա-

¹ The Armenian Weekly Online, (May 2001), Adanalıan Garo. Pursing the Armenian Cause in the 21s t Century: An Interview with Sharıstan Ardhalđjian, <http://free.freepreech.org/armenian/weekly/may>.

² http://www.anca.org/resource_center/transcaucasus.php?transyear=2004.

³ «Հայ համայնքն ԱՄՆ-ում», էջ 115:

⁴ Armenian Assembly of America website, <http://www.aaınc.org/index.php?id=86>.

յի հայկական համագումարի նպատակներին ու գործունեությանը: Պարզ է դառնում, որ այս կազմակերպությունների ազդեցությունն ամերիկյան ներքաղաքական գործընթացների ու արտաքին քաղաքականության ձևավորման վրա իրապես նշանակալի է, թերևս, այն պատճառով, որ ԱՄՆ-ը բազմատարր հասարակություն է, ըստ այդմ՝ սոցիալական շերտերը տարբեր են, և հնարավոր է ազդել դրանցից թեկուզ մի քանիսի վրա, ինչը հատկապես նախագահական ու խորհրդարանական ընտրությունների ժամանակ մեծ նշանակություն ունի, քանի որ մի քանի սոցիալական խմբի մոտ քաղաքական դիրքորոշման փոփոխությունը փոփոխություններ է առաջացնում ընտրությունների վերջնարդյունքում:

Որոշակիորեն վերլուծենք նաև ԱՄՆ-ի և ՀՀ միջև եղած հարաբերությունների բնույթը, որոնք հիմնվել են Հայաստանի անկախացումից հետո, և 20-ամյա ժամանակահատվածում դարձել ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը: Դրանք հիմնականում զարգանում են հետևյալ ուղղություններով.

- քաղաքական փոխգործակցություն (այդ թվում՝ Եվրամիության, Ռուսաստանի, Չինաստանի և Իրանի հետ Հայաստանի փոխհարաբերությունների համատեքստում),

- տնտեսական շփումներ (հատկապես հաշվի առնելով ԱՄՆ-ի կողմից ցուցաբերվող տնտեսական և հումանիտար օգնությունը և ԱՄՆ-ում մեծաթիվ հայկական սփյուռքի գործոնը),

- համագործակցություն անվտանգության ոլորտում և ռազմաքաղաքական հարաբերություններ (այդ թվում՝ ռազմատեխնիկական օգնությունը Հայաստանի զինված ուժերին և հայ խաղաղարարների մասնակցությունը միջազգային խաղաղարարությանը Իրաքում և Աֆղանստանում՝ ԱՄՆ-ի հովանու ներքո),

- տարածաշրջանային համագործակցությունը և ներգրավվածությունը հակամարտությունների կարգավորմանը (հաշվի առնելով ԱՄՆ-ի միջնորդական դերը՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում):

Չնայած հայկական լոբբիի գործառնության խաղաղ բնույթին՝ Արևմուտքում հրատարակվում են աշխատություններ, որոնք պնդում են, որ Հայաստանը իր լոբբիստական կազմակերպությունների (իհարկե, առաջին հերթին, նկատի են առնվում ԱՄՆ-ում գործող կազմակերպությունները) միջոցով հանդես է գալիս որպես Հարավային Կովկասի կայունության խոչընդոտ և թշնամանքի սերմանման աղբյուր: Այդպիսի աշխատություններից է Եվրոպական ռազմավարական հետախուզության ու անվտանգության կենտրոնի հրատարակած «The Armenian Job: The role of Armenia lobby in the pattern of enmity in South Caucasus» զեկույցը, որը տպագրվել է 2013 թ. հունվարի 17-ին: Այստեղ մասնավորապես նշված է. «Հայկական լոբբին մեծ դեր է ունեցել Հայաստանի ու Ադրբեջանի միջև թշնամանքի սերմանման հարցում: Ըստ որում, քարոզչությունն Ադրբեջանին հնարավորինս վանում է Եվրոպայից, իսկ Հայաստանը ներկայացվում է որպես կայուն դեմոկրատական պետություն: Ճշմարտությունն այդպես էլ մնում է չբացահայտված:

Ադրբեջանն անցումային պետություն է, որը դեմոկրատիայի ճանապարհին է: Իհարկե, այստեղ կան ընտրական գործընթացի, կոռուպցիայի և խոսքի ազատությանն առնչվող խնդիրներ, սակայն Հայաստանն ավելի լավ վիճակում չէ: Անկախացումից սկսած՝ Ադրբեջանը ստիպված է եղել պայքարել սեփական տարածքային ամբողջականության համար, աղքատության և ահաբեկչության դեմ: Մինչդեռ հայկական լոբբին ամեն կերպ փորձել է մեկուսացնել նրան միջազգային աջակցությունից՝ այդպիսով խոչընդոտելով քաղաքացիական հասարակության ու դեմոկրատիայի կայացումը: Հայաստանը դեռևս շարունակում է բռնազավթել

Աղբբեջանին պատկանող որոշ տարածքներ, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղը և դրան հարակից շրջանները»¹:

Վերը նշվածի առունով հայկական լրբբին դեռևս անկատար է: Նման ապատեղեկավտոթյան դեմ պայքարի բացակայոթյունը կարող է նպաստել աշխարհում հայկական քարոզչոթյան ազդեցոթյան նվազեցմանը, ըստ այդմ՝ խոչընդոտել հայոթյան շահերի պաշտպանոթյունը:

ԱՄՆ-ում Հայկական լրբբիստական կազմակերպոթյունների գործունեոթյան վերլուծոթյունը թույլ է տալիս կատարել հետևյալ երկու ընդհանուր եզրահանգունները²:

Նախ, էթնիկ խմբի չափն ամենևին չի պայմանավորում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականոթյան վրա ունեցած իր ազդեցոթյան հնարավորոթյունները: Չնայած մյուս էթնիկ խմբերի համեմատոթյամբ (հրեական, հունական) հայկական լրբբին այնքան էլ հին պատմոթյուն չունի, սակայն հասցրել է գրանցել նշանակալի արոյունքներ, որոնց մասին խոսվել է աշխատանքի սկզբում: Կարող ենք նաև հետևոթյուն անել, որ ընտրոթյունների արոյունքում օրենսդիր մարմիններում տեղ զբաղեցնելը մեծ դեր է խաղում ԱՄՆ-ում քաղաքական որոշումների ընդունման վրա ազդելու գործում: Հայկական համայնքն ԱՄՆ-ում հիմնականում տեղակայված է մի քանի նահանգներում՝ Կալիֆորնիա, Մասաչուսեթս, Նյու Յորք, Նյու Ջերսի և այլն: Կոմպակտ ձևով ապրելով և նշանակալի քանակ կազմելով նշված նահանգներում՝ հայկական համայնքը կարողանում է ազդեցոթյուն ունենալ տեղական ինքնակառավարման և նահանգային մարմինների ընտրոթյունների վրա: Սակայն նույնիսկ այս պայմաններում հնարավոր է ազդեցոթյուն գործել տվյալ պետոթյունում օրենքների ընդունման ընթացակարգի վրա՝ միասնականոթյան և պահանջների արոյունավետ ներկայացման ճանապարհով:

Երկրորդ, ՀՀ-ի գործունեոթյունը ցույց է տալիս, որ էթնիկ լրբբին կարիք չունի տրամադրել առեւելի ֆինանսական միջոցներ: Եվ եթե աղբբեջանական լրբբին ներդնում է միլիարդավոր դոլարներ նավթային քաղաքականոթյան մշակման վրա, սակայն, այնուամենայնիվ, չունի կազմակերպվածոթյան այն նակարդակը, որքան հայկական լրբբին: Դրան հակառակ՝ հայկական համայնքն առկա ռեսուրսների նպատակային բաշխման միջոցով իր հաստատուն տեղն է ձեռք բերում ԱՄՆ-ի էթնիկ խմբերի շարքում: Չնայած ի հակադրումն դրան՝ 1994 թ. ՀՀ-ն ծախսել է մոտ 7 մլն դոլար Կոնգրեսում հայամետ քաղաքականոթյուն իրականացնելու նպատակով³: 7 մլն դոլարը, հիրավի, փոքր գումար չէ, սակայն դարաբաղյան հակամարտոթյան ամենաթեժ շրջանում դրա կարգավորման վրա մեծ ազդեցոթյուն ունեցող պետոթյան օրենսդիր մարմնում քարոզչոթյուն իրականացնելու անհրաժեշտոթյանը համարժեք է:

Փորձենք գտնել նաև ԱՄՆ-ի ու Հայաստանի միջև այս համագործակցոթյան հիմքերն ու նախադրյալները: Ինչպես արդեն նշվել է, Հայաստանին օգնոթյուն տրամադրելը չի բխում ԱՄՆ-ի քաղաքականոթյան հիմնական դրույթներից ու ռազմավարական նպատակներից: Այդ եղանակով նա չի կարող գերակայոթյուն հաստատել իր համար ցանկալի տարածաշրջաններից մեկում՝ Հարավային Կովկասում, քանի որ Հայաստանում տեղակայված են և դեռ առնվազն 46 տարի տեղակայված կլինեն ռուսական ռազմաբազաներ, որոնց շնորհիվ Ռուսաստանի Դաշնոթյունն ավելի մեծ ազդեցոթյուն ունի ՀՀ արտաքին քաղաքականոթյան

¹ The Armenian Job: The role of Armenia lobby in the pattern of enmity in South Caucasus, European Strategic Intelligence and Security Center Report, Edited by Claude Moniquet and William Racimora, January 17 2013, <http://www.esisc.org/upload/publications/analyses/the-armenian-job/The%20Armenian%20Job.pdf>.

² Heater S. Gregg, Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the US, <http://intersci.ss.uci.edu/wiki/eBooks/Articles/Success%20of%20Armenian%20Lobbies%20Gregg.pdf>

³ Money spent by the Armenian Lobby in America (USA/ Armenia), <http://www.tc-america.org/files/news/pdf/lobby.pdf>.

վրա: Բացի այդ, Անդրկովկասում ԱՄՆ-ն ունի մեկ այլ, ավելի հուսալի և Ռուսաստանի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող դաշնակից՝ Վրաստանը: Միացյալ Նահանգները լավ հարաբերությունների մեջ է նաև Թուրքիայի հետ՝ հատկապես վերջինիս տնտեսական զարգացվածության բարձր ցուցանիշների ու աշխարհագրական նպաստավոր դիրքի (զբաղեցնելով ողջ Փոքր Ասիա թերակղզու տարածքը՝ Թուրքիան երեք կողմից շրջապատված է Սև, Էգեյան և Միջերկրական ծովերով, ինչի շնորհիվ հեշտությամբ կապ է պահպանում և ազատ առևտուր անում եվրոպական պետությունների հետ) նկատառումներով: Թուրքիան նաև համարվում է տարածաշրջանային առաջատար պետություն, քանի որ տիրապետելով նշանակալի ռազմական ռեսուրսի՝ միակն է, որ անդամակցում է ՆԱՏՕ-ին: ԱՄՆ-ի համար մեկ այլ դաշնակից կարող է հանդիսանալ մեր արևելյան հարևան Ադրբեջանը, որը Հայաստանից և՛ տնտեսական զարգացվածության (մեծ քանակությամբ նավթային պաշարներ Կասպյան ավազանում), և՛ ռազմական ներուժի առումով գերազանցում է Հայաստանին:

Այս բոլոր գործոնները հաշվի առնելով՝ պետք է նշել հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման մեկ կարևոր նախադրյալ՝ աշխարհում Իրանի դիրքերի ամրապնդումը: Ինչպես հայտնի է, վերջին տասնամյակի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետությունը սկսել է վարել ակնհայտ ինքնուրույն քաղաքականություն և փորձում է դառնալ նոր համաշխարհային տերություն՝ հատկապես ուրանի և միջուկային զենքի ստեղծման ճանապարհով: Սա, իհարկե, ձեռնտու չէ ԱՄՆ-ին, և վերջինս փորձում է օգտագործել բոլոր հնարավոր միջոցները դա թույլ չտալու համար: Իրանի հզորացումը կանխելու ամենաարդյունավետ տարբերակներից մեկը, բնականաբար, նրա հարևանների հետ համագործակցելն ու հակաիրանական տրամադրություններ սերմանելն է: Հայաստանն այս առումով կարևոր նշանակություն ունի, քանի որ ունի սերտ կապեր Իրանի հետ, մինչդեռ Ադրբեջանն արդեն իսկ լարված հարաբերությունների մեջ է իր հարավային հարևանի հետ՝ մասնավորապես Իրանի հյուսիսում ապրող ադրբեջանցիների ինքնորոշման խնդրի հետ կապված: Այնուամենայնիվ, սա այն գործոնը չէ, որի համար ԱՄՆ-ը պատրաստ կլիներ Հայաստանի հետ ունենալ այսպիսի հարաբերություններ: Միացյալ Նահանգներում գործող հայկական լրբբիստական կազմակերպությունների ակտիվ գործունեության արդյունքում է, որ ԱՄՆ-ը Հայաստանի հետ պահպանում է կայուն դիվանագիտական հարաբերություններ: Նրանք, հիրավի, կարողանում են ազդել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ու որոշումների կայացման գործընթացի վրա՝ Կոնգրեսում որոշակի ներկայացվածության, ինչպես նաև ակտիվ քարոզչության միջոցով հատկապես խորհրդարանական ու նախագահական ընտրությունների ժամանակ: Մասնավորապես, Կալիֆորնիայում հայկական լրբբին գործում է ամբողջ թափով, քանզի այստեղ է բնակվում ԱՄՆ-ի հայ համայնքի գերակշիռ մեծամասնությունը: Իհարկե, պայքարը ցեղասպանության միջազգային ճանաչման համար չի ավարտվել և ԱՄՆ-ի հայկական լրբբիզմը դեռևս շարունակում է կազմակերպել բազմաթիվ դեմոնստրացիաներ այդ առիթով: ԱՄՆ-ի բազմաթիվ նահանգներ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, սակայն պետական մակարդակում հարցը դեռևս առկախված է:

Այսպիսով, կարող ենք վստահորեն փաստել, որ ԱՄՆ-ում գործող հայկական լրբբիստական կազմակերպություններն իրականացնում են ակտիվ քարոզչություն մի շարք հիմնախնդիրների հետ կապված: Չնայած որ այդպիսի քարոզչությունը շատ դեպքերում չի համապատասխանում կամ անգամ հակասում է ամերիկյան արտաքին քաղաքական գերակայություններին՝ այն իր նշանակալի ազդեցությունն ունենում է այդ գերակայությունների ձևավորման վրա:

АРМЯНСКОЕ ЛОББИ В КОНТЕКСТЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ США

Мгер Акобян

В статье исследуются история образования двух основных организаций армянского лобби, основные направления их деятельности, а также их влияние на армяно-американские отношения. В результате проведенного анализа были сделаны следующие выводы: численность этнического состава обуславливает, влияя на внешнюю политику исследуемого государства (армянская община в нескольких штатах США заселена большим количеством армян и играет важную роль в принятии государственных решений) и армянское лобби способно отстаивать приоритеты своей деятельности, несмотря на отсутствие огромных финансовых средств.

В статье делается попытка проанализировать современные армяно-американские отношения с позиции интересов США на Южном Кавказе, в частности, рассматриваются отношения соседних с Арменией государств с США.

ARMENIAN LOBBY IN CONTEXT OF THE US FOREIGN POLICY

Mher Hakobyan

The present article discusses the history and main directions of activity of the two Armenian lobbying organizations and their influence on Armenian-American relations. The analysis leads us to the following two general conclusions. First, the quantity of an ethnic group does not condition its influence on the country's foreign policy. Being spread in a few states of the US (California, Massachusetts New York, New Jersey) they play influential role in the state decision-making process. Second, the Armenian lobby has the power of pursuing its priorities even without having enormous financial capacity.

Later an attempt is made to analyze the essence of modern Armenian-American relations from the perspective of the US interests in South Caucasus, particularly taking into account the relations between the US and the neighboring countries of Armenia.

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ռուզաննա Յուլյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ. պ.գ.դ., պրոֆ. Պ. Չոբանյան

Էլփոստ՝ ruzanna_elchyan@mail.ru

Կովկասագիտության նշանակությունը այսօր գնալով կարևորվում է, որովհետև մեծանում է կովկասյան տարածաշրջանի դերակատարությունը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության մեջ: Հյուսիսային Կովկասը, գտնվելով Ռուսաստանի կազմի մեջ, գնալով ավելի է դրսևորում ինքնորոշվելու միտումները, ինչը հրատապ է դարձնում գերտերությունների կողմից նրանց օգտագործելու հնարավորությունը, ձգտումը, քաղաքականությունը, որը ևս ուղղակիորեն կարող է անդրադառնալ Վրաստանի հետագա զարգացման գործընթացներին: Կովկասյան լեռնաշղթայի երկայնքով բնակվող ժողովուրդների հետ Վրաստանը ունեցել է և ունի բազմապիսի խնդիրներ և հարաբերություններ, Սև ծովի ափերից՝ չերքեզներ, ադղներ, ափխազներ, մինչև Կասպից ծովի ափեր՝ Դաղստան կամ Կովկասյան Աղվանք:

Կովկասագիտությունը սկսեց ձևավորվել այն ժամանակ, երբ առաջ եկավ Կովկասի նվաճման խնդիրը, և սկսվեց Կովկասի նկատմամբ հարակից շահագրգիռ պետությունների կողմից այդ տարածքների ուսումնասիրման գործընթացը:

Կովկասագիտությունը ուսումնասիրում է Կովկասի տարածաշրջանի ժողովուրդների էթնիկական կազմը, նրանց լեզուները, կովկասյան ժողովուրդների զարգացման առանձնահատկությունները: Կովկասագիտության հետագա զարգացման համար կարևոր է իմանալ նաև ծագումը և ձևավորումը, կովկասագիտության հիմնական դպրոցները, Կովկասի պատմության սկզբնաղբյուրները և այդ թվում նաև արդիականությունը:

Կովկասի ուսումնասիրման առաջատար երկիրը Ռուսաստանն էր: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Ռուսաստանը նախաձեռնում էր իր տիրապետությունը հաստատել ոչ միայն Կովկասյան լեռնաշղթայի երկայնքով ապրող ժողովուրդների վրա, այլ նաև՝ Անդրկովկասի: Կովկասի ուսումնասիրման հիմնական, առաջնային պատճառը նրան թելադրում էր քաղաքականությունը:

19-րդ դ. Ռուսաստանում մեծ թափ ստացավ կովկասյան ժողովուրդների ուսումնասիրման գործընթացը: Ռուսական իշխանությունների ներկայացուցիչները հանգամանալի տեղեկություններ էին հավաքում Կովկասի ժողովուրդների մասին, նրանց փոխհարաբերությունների, ներքին իրավիճակի, տնտեսության, մշակութի, հավատալիքների, կենցաղի ուսումնասիրման վերաբերյալ: Միաժամանակ Կովկասի նկատմամբ հավակնություններ ուներ նաև Օսմանյան պետությունը, որը փորձում էր Ռուսաստանի առաջխաղացումը կասեցնել՝ Կավկասում մահմեդականություն տարածելու միջոցով: Մինչև 18-րդ դ. կեսը մահմեդականությունը ամուր միասնական համակարգ չէր ձևավորել, սակայն 18-րդ դ. 2-րդ կեսից օսմանյան աջակցությամբ Կովկասում լայն թափ ստացավ մահմեդականության տարածումը՝ Շեյխ Մանսուրի գլխավորությամբ: Ռուսաստանը մահմեդականության տարածմանը դիմագրավելու համար փորձեց իր հերթին իրականացնել քրիստոնեության արմատավորում և այդ նպատակով ստեղծեց այսպես կոչված «Осетинская комиссия» (Օսական հանձնաժողով): Այդ հանձնաժողովի մեջ էին ընդգրկված նաև վրացի հոգևորականները, որոնք ավելի սերտ հարաբերության մեջ էին կովկասյան ժողովուրդների հետ. վրացիների մեջ նշանավոր էր Գայոզ Ռեքտորը:

Ռուսաստանի գիտական և քաղաքական շրջանակների կողմից Կովկասի ուսումնասիրությունը ընթանում էր պատերազմական գործողությունների

զուգահեռ, սակայն երբ այդ պատերազմը ավարտվեց, և Կովկասը ամբողջությամբ նվաճված էր Ռուսաստանի կողմից, Ռուսաստանում ձեռնամուխ եղան կովկասյան ժողովուրդների հնագանդեցման նոր ուղիներ որոնելուն և միաժամանակ սկսեցին նախապատրաստել այդ տարածաշրջանի կառավարման համակարգը: Կովկասի խոր և հանգամանալի ուսումնասիրությունը Ռուսաստանին հնարավորություն տվեց լիակատար հասկանալ և իրականացնել Ռուսաստանի տիրապետության հաստատումը այնտեղ:

Կովկասի պատմության վերաբերյալ իրենց հաղորդումների ճշգրտությամբ և հարստությամբ կարևոր տեղ են զբաղեցնում վրացական աղբյուրները: Լինելով մշտապես ուղղակի փոխհարաբերության մեջ՝ վրացիները ավելի իրագեկ և ավելի հավաստի տեղեկություններ են ունեցել Յուսիսային Կովկասի ժողովուրդների մոտ ընթացող իրադարձությունների մասին, որոնք իրենց արձանագրումն են ունեցել վրացական պատմական տարբեր սկզբնաղբյուրներում, գեղարվեստական գործերում, վավերագրերում և այլ փաստաթղթերում:

Կովկասագիտության վրացական դպրոցը ունեցել է զարգացման երկարատև ընթացք, ինչը պայմանավորված էր կովկասյան լեռնաշղթայի երկայնքով բնակվող ժողովուրդների ու ցեղերի հետ Վրաստանի դարավոր հարաբերություններ ունենալու հանգամանքով:

Վրաց սկզբնաղբյուրների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում պատմական աշխատությունները, որոնք հնուց ի վեր ամփոփված են հատուկ ժողովածուում՝ «Քարթլիս ցխովրեբա»-ում («Քարթլի կյանքը»): «Քարթլիս ցխովրեբա»-ի («ქართლის ცხოვრება») մեջ ընդգրկված աշխատությունները կարևոր սկզբնաղբյուրներ են կովկասյան ժողովուրդների ուսումնասիրությունների համար: Կարևոր են այն հաղորդումները, թե ինչպես Դավիթ Շինարարը Վրաստան հրավիրեց 40 հազար ղվիչաղների և նրանց տեղաբաշխեց Վրաստանում: Վրացիների և կովկասյան այլ ժողովուրդների հարաբերությունների սերտության մասին է վկայում այն, որ Թամարի ամուսինը՝ Դավիթ Սոսլանը, ցեղային պատկանելությամբ օս էր, և նրան պահել-մեծացրել ու դաստիարակել էր Թամարի հորաքույր Ռուսուդանը:

Վրացական վավերագրական աղբյուրներում բազմաթիվ են այնպիսի տեղեկությունները, որոնք վկայում են օսերի, խևուրների, փշավների և այլ լեռնականների մասին: Վրացական աղբյուրներից կովկասյան տարածաշրջանին առավել հանգամանալի անդրադարձել է 18-րդ դ. վրացի պատմաբան և աշխարհագրագետ, արքայազն Վախուշտի Բատոնիշվիլին, նա Վախթանգ VI-ի ապօրինի զավակն էր և հոր հետ փոխադրվել էր Մոսկվա և իր պատմությունը շարադրել 1740-ական թթ.՝ մոտավորապես 4-5 տարվա ընթացքում: Վրաստանի պատմությանն ու աշխարհագրությանը վերաբերող նրա աշխատությունները՝ «Վրաց թագավորության նկարագրությունը» («აღწერა სამეფოსა საქართველოსა») և «Աշխարհագրական աստլաս»-ը («გეოგრაფიული ატლასი») տեղեկությունների ճշգրտությամբ գրեթե ականատեսի նկարագրություններ են¹:

Վրաստանում գիտական մեծ զարգացում ապրեց հատկապես լեզվաբանությունը, այստեղ է լույս տեսել «Իբերոկովկասյան լեզուներ» տարեգիրքը (Չիքոբավա, Շանիձե, Գամկրելիձե), որն ունի միջազգային մեծ պահանջարկ: Ուղիներնի ուսումնասիրության ոլորտում առաջնությունը նորից պատկանում է վրաց լեզվաբանական դպրոցին: Այստեղ կազմվել ու հրատարակվել են ուղիական լեզվի քերականություն, ուղիներն-վրացերեն բառարան, պաշտպանվել են ատենախոսություններ, կատարվել այլ հետազոտություններ: Կովկասագիտության մեջ կարևոր ձեռքբերումներ կան նաև օսերենի առումով: Օսերենը հնդեվրոպական լեզվաընտանի-

¹ Волкова Н., Этнонимы и племенные названия Северного Кавказа, Москва, 1973, с. 10.

քին է պատկանում և այսպիսով բացառություն է կազմում կովկասյան լեռնաշղթայի ազգերի մեջ. այն մոտ է պարսկերենին:

18-19-րդ դդ. վրացական աղբյուրներում Կովկասի ժողովուրդների մասին տեղեկությունները շատ են: Դա պայմանավորված էր նրանով, որ վրացի գործիչները մասնակցում էին Ռուսաստանի կողմից Կովկասի նվաճման համար մղված պայքարին և շատ փաստաթղթեր ստեղծում այդ իրադարձությունների մասին:

Վրացական սկզբնաղբյուրներում բազմաթիվ տեղեկություններ կան կովկասյան ժողովուրդների մասին: Այդ ժողովուրդների մի մասն անգամ ընդգրկված է վրաց պետության սահմաններում (թուշեր, խևուրներ, փշավներ, սվաններ): Վրացական փաստաթղթերում բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել 18-րդ դ. կովկասյան տարածաշրջանի հետ Վրաստանի ունեցած հարաբերությունների մասին: Ուշագրավ է Վրաստանի հարակից երկրների և ժողովուրդների վերաբերյալ Յերակլ II թագավորի 1769 թ. կազմած նկարագրությունը, որտեղ համառոտ ներկայացված են ինչպես Երևանի, Գանձակի խանությունները, այնպես էլ՝ Շամախիի, Շաքիի, կովկասյան լեզգիների և այլնի վերաբերյալ տեղեկությունները:

19-րդ դ. կովկասագիտության ձևավորման գործում կարևոր դեր ունեցան ընթացիկ ուսումնասիրություններն ու նկարագրությունները: Կարևոր տեղեկատվություն էր պարունակում Թիֆլիսում լույս տեսնող «Тбилисские ведомости» («თბილისური ჟურნალი») պարբերականը: Այստեղից վերցված տեղեկատվությունները թարգմանվում էին տարբեր լեզուների և նպաստում Կովկասի վերաբերյալ իմացությունների ընդլայնմանը:

Վրացական պատմագիտության համար կարևոր նշանակություն ունեցավ Թիֆլիսում ռուսական վարչակազմի կենտրոն լինելու հանգամանքը: Կովկասի փոխարքայության կենտրոն հանդիսանալով՝ Թիֆլիսը համակարգում էր այդ ժողովուրդների հետ ցարական իշխանությունների հարաբերությունները, և այդ ամբողջ տեղեկատվությունը հավաքվում ու պահպանվում էր Թիֆլիսում: Վրաց գործիչները ոչ միայն ուղղակիորեն հասու էին դառնում այդ տեղեկատվությանը, այլև ակտիվ գործունեություն էին ծավալում ռուսական տիրապետությունը Կովկասում հաստատելու առումով:

Կովկասագիտական պատմության մշակման գործում կարևոր դերակատարում ունեցավ ֆրանսիացի անվանի հայագետ-վրացագետ, ակադեմիկոս Մարի Բրոսեն, որը դեռևս Փարիզում արդեն իսկ ուսումնասիրել էր հայոց և վրաց լեզուները, և հրավիրվելով Ռուսաստան, ձեռնամուխ էր եղել Կովկասի պատմության համակողմանի ուսումնասիրման գործին:

Կարող ենք արձանագրել, որ Մարի Բրոսեն առաջինն էր, որ գիտական կովկասագիտության հիմքը դրեց: Առաջին անգամ ֆրանսերենով շարադրեց Վրաստանի պատմությունը, բազմաթիվ նյութեր թարգմանեց հայերենից և վրացերենից ֆրանսերեն, դրանք դրվեցին գիտական շրջանառության մեջ և հետզհետե ստացան ավելի լայն ճանաչում: Բրոսեն կազմեց նաև Վրաստանի հարաբերությունները եվրոպական երկրների հետ փաստաթղթերի ժողովածուն: Նրա գործունեությունը մեծ խթան հանդիսացավ վրաց իրականության մեջ և կովկասագիտության նկատմամբ հետաքրքրության մեծացման համար: Յետևելով նրա օրինակին և ոգևորվելով նրա օրինակով՝ վրացագիտության և կովկասագիտության խնդիրներին ավելի մեծ ուշադրություն հատկացվեց՝ Պլատոն Իոսելիանիի, Դիմիտրի Բաքրաձեի, Ալեքսանդր Խախանաշվիլու (Խախանով) և ուրիշների կողմից: Թիֆլիսում Պլատոն Իոսելիանիի խմբագրությամբ 1845-1856 թթ. լույս էր տեսնում «Закавказский Вестник» թերթը: 1860-1875 թթ. Պլատոն Իոսելիանիի հրատարակել է վրացագիտության կնճռոտ հարցերին նվիրված տասնյակ աշխատություններ:

Վրացի պատմաբան, ազգագրագետ, հնագետ Դիմիտրի Բաքրաձեն գլխավորել է Վրաստանի պատմության աղբյուրների հավաքման աշխատանքները: Եղել է «Կովկասյան հնագիտություն սիրողների ընկերության» հիմնադիրներից մեկը,

մասնակցել «Կովկասյան հնագրական հանձնաժողովի ակտերի» հինգ հատորների ստեղծմանը, եղել է համառուսաստանյան հնագիտական համագումարի կազմակերպիչներից: Դիմիտրի Բաքրաձեն գիտական նպատակներով ճանապարհորդել է Վրաստանի հարավ-արևմտյան շրջաններ՝ Գուրիա, Աջարիա, Շավշք և այլն¹: Նրա ուղևորության արդյունքն են «Յնագիտական ճանապարհորդություն Գուրիայում և Աջարիայում» (1878), «Կարսի մարզի պատմական-ազգագրական գրառումներ» աշխատությունները և այլն: Դ. Բաքրաձեի խմբագրությամբ հրատարակվել է Ի. Բատոնիշվիլու «Կալմասոբա»-ն (մաս I, 1862) Վախուշտիի՝ «Վրաստանի պատմությունը» (1885), Վախթանգ VI-ի Օրենքների ժողովածուի ռուսերեն թարգմանությունը (1887) և այլն: Դ. Բաքրաձեն ուսումնասիրություններ է գրել Վրաստանի պատմության և հնագիտության վերաբերյալ²:

Վրացի բանասեր, պատմաբան, հասարակական գործիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Խախանաշվիլին (Խախանով) նույնպես մեծ դեր է ունեցել վրացագիտության բնագավառում: Նա դասավանդել է Լազարյան ճեմարանում և 1900 թվականից վրաց լեզվի ու գրականության մասին դասախոսություններ է կարդացել Մոսկվայի համալսարանում: Վրաստանի պատմության, ազգագրության և վրաց գրականության մասին նրա հրապարակած գործերի թիվը հասնում է մոտ ութսունի, որոնք լույս են տեսել վրացերեն, ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով³:

Յուսիսային Կովկասի կատարած դերը վրաց իրականության մեջ խորհրդանշական ձևով է արտացոլվել «Թերզդալետուխ» բնութագրման մեջ: Այդ հասարակական-քաղաքական շարժումը որոշակի առաջընթացի ձգտող վրաց երիտասարդների շարժում էր, ովքեր նախաձեռնել էին Կովկասի իրականության մեջ ևս նպաստել առաջադիմական գաղափարների արմատավորմանն ու լուսավորականության տարածմանը:

19-րդ դ. երկրորդ կեսին վրաց կովկասագիտության ձևավորման գործում մեծ դերակատարում ունեցավ Պետերբուրգի կովկասագիտական դպրոցի ուժեղացումը: Այն պայմանավորված էր Նիկողայոս Մառի և նրա աշակերտների գործունեությամբ, ինչպիսիք էին՝ Իվանե Ջավախիշվիլին, Ի. Դիվիձեն, Ա. Շանիձեն և այլն: Նիկողայոս Մառի հիմնադրած «Христианский Восток» ակադեմիական հանդեսն իր հեղինակությամբ ու կարևորությամբ եզակի հրատարակություն էր, իսկ Յայվրացական բանասիրության բնագրեր ու հետազոտություններ, Կովկասյան բանասիրության բնագրեր ու հետազոտություններ և այլ մատենաշարեր դարձել են գիտության համապատասխան ճյուղերի կազմավորման դպրոցներ: Ն. Մառի ազդեցությամբ այս գիտնականների մոտ ձևավորվեց ակադեմիական բարձր մակարդակ⁴: Մեծ են Ջավախիշվիլու՝ վրացագիտությանը մատուցած ծառայությունները: Նա Վրաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության, ինչպես նաև հայ մատենագրության հետազոտողներից էր: Խորհրդային Չայաստանի գիտնականները, նշելով ակադեմիկոս Ջավախիշվիլու հարյուրամյա հոբելյանը, իրավամբ նրան համարում էին հայագիտության երախտավոր: Ջավախիշվիլու գիտական ժառանգությունը հսկայական նշանակություն ունեցավ վրացագիտության և հայագիտության համար, ինչպես նաև գիտական կադրեր աճեցնելու գործում, 1918 թ. իր նախաձեռնությամբ Թբիլիսիի համալսարանը ստեղծելու գործում, որտեղ առայսօր գործում է նաև հայագիտության ամբիոնը:

Կովկասագիտությունը և այդ թվում Վրաստանի պատմությունը իրենց զարգացումն են ունեցել նաև եկեղեցական, ազգագրական ընկերությունների շրջանակներում: Այդ գործիչների մեջ հատկապես աչքի ընկան Էքվթինե Թաղաիշվիլին,

¹ Ըղջմաձե Թ., Իստորոշոսի Ըմիտրի Զայրաձե (Շեջրեբա Ըա մոլջա՛լլեոբա), Զատ., 1950:

² Զանտաձե Յ., յարտուլի Նաձկոտա յեՆցիկոլոբեձիա, տձ., 1977 Ֆ.Յ. 2, թց. 240-241:

³ ԶաԸրձե Թ. - յարտեվեոտմոցԸճեոբոձի զամոհեՆիոլի մոձիրՆաեշլեղ ալեղյՆաՆԸրեղ ՆաեՆաՅեջիոլի. տձ. 1968:

⁴ Миханкова В., Николай Яковлевич Марр, Москва, 1944:

Կոռնելի Կեկելիձեն: Կաթոլիկ համայնքի գործունեության մեջ աչքի ընկավ Միխեիլ Թամարաշվիլին և այլք:

Վրացի գիտնական և հասարակական գործիչ, Աստվածաբանության դոկտոր, պրոֆեսոր Միխեիլ (նախկինում Ալեքսանդրե) Թամարաշվիլին, որ Խոտախայում հայտնի էր որպես Միքել Թամարաթի, գրել է «Վրաստանում կաթոլիկության պատմությունը» "ისტորիա კათոլიკობისა ქართველთა შორის" (Թբիլիսի, 1902 թ.), «Վրաց եկեղեցու պատմությունը» "საქართველოს ეკლესიის ისტორია" (1910 թ., Զոն), ընդ որում վերջինս ֆրանսերեն է գրել, և այն մեծ արձագանք է գտել եվրոպական գիտական շրջանակներում: Իսկ կաթոլիկության պատմությունը գրել է վրացերեն:

Նրա նախնիները եղել են Ջավախքի Թոկի գյուղից, հետագայում վերաբնակվել են Ռաբաթիում, որտեղ էլ կաթոլիկ քարոզիչների ազդեցությամբ ընդունել են կաթոլիկություն: Թամարաշվիլին առաջիններից էր, ով եվրոպական հանրությանը ներկայացրեց Վրաստանի պատմությունն ու նշակույթը:

Կոռնելի Կեկելիձեն մնացել է գիտության պատմության մեջ. գրել է անփոխարինելի «Վրաց հին մատենագրության պատմությունը» սկսած վաղագույն շրջանից մինչև 18-րդ դ. վերջը: Նրա հոդվածները հրատարակվել են 12 հատորով «էտյուդներ (ակնարկներ) վրաց հին մատենագրության» "ბველი ქართული მწერლობის ეტიუდები":

Էքվեինե Թաղաշվիլին զբաղվել է միջնադարյան վրացական գրական և հնագիտական հուշարձաններով, ինքն էլ է ճանապարհորդություն կատարել Կղարջ, հրատարակել է 3 հատորով «Վրաստանի հնությունները» 18-19-րդ դդ. փաստաթղթերի ժողովածուն "საქართველოს სიძველენი": Աշխատասեր, նվիրյալ անձնավորություն է եղել, քայլել և չափագրել է Տայքի և Կղարջի այն հուշարձանները, որոնք այսօր բանավեճի առարկա են հայերի և վրացիների համար:

Վրացի բանասեր, հայագետ Իլիա Աբուլաձեն զբաղվել է հայ և վրաց բանասիրությանը վերաբերող հարցերի ուսումնասիրությամբ: 1938 թ. հրատարակել «Վկայաբանություն Շուշանիկի» վարքագրության վրացերեն և հայերեն տեքստերը: Գրել է «Չայ-վրացական գրական կապերը IX-X դդ.» աշխատությունը, տպագրել վրաց ժողովրդի հնագույն պատմության՝ «Քարթլիս Ցխովրեբա»-ի գրաբար տեքստը, վրացերեն թարգմանությունը և դրան նվիրված հետազոտությունը:

Ահա այս գործիչների գիտական գործունեությունն էր այն հենքը, որի վրա ձևավորվեց կոլկասագիտությունը խորհրդային Վրաստանում:

1974 թ. Թիֆլիսում սկսեց լույս տեսնել "იბერიულ-კავკასიური ენათმეცნიერების წელიწადული" («Ежегодник иберийско-кавказского языкознания») վերնագիրը կրող լեզվաբանական տարեգիրքը, որը նվիրված էր կոլկասյան լեզուների ուսումնասիրությանը: Տարեգրքի գլխավոր խմբագիրն էր Ա. Զիքոբական, նրանից հետո այս գործը ստանձնեց Ք. Լոնթաթիձեն:

1970-ական թթ. Թիֆլիսում լույս տեսան «კავკასიის ეთნოგრაფიული კრებული» («Кавказский этнографический сборник») ժողովածուի հատորները, որտեղ նկարագրված են Վրաստանի տարբեր հատվածներում բնակվող վրացիների առօրյա զբաղմունքը, փոխառնչությունները թե՛ միմյանց, և թե՛ հյուսիսկոկասյան այլ ժողովուրդների հետ:

1974 թ. լույս տեսած «Առևտուրը և առևտրական խավը նախառեֆորմային ժամանակաշրջանի Վրաստանում» գրքում մանրամասը քննվում է նախառեֆորմային ժամանակաշրջանի Վրաստանի ներքին և արտաքին առևտուրը և ցարիզմի տնտեսական քաղաքականությունը: Ուսումնասիրված է առևտրական խավի քանակային, ազգային և սոցիալական կազմը և առևտրի կապիտալի զարգացման դինամիկան: Է. Օրջոնիկիձեն գրում է. «Վրաստանը տնտեսական սերտ կապեր ուներ հյուսիսկոկասյան լեռնականների հետ՝ դաղստանցի լեկերի, օսերի,

չեչենների, ինգուլների, քիստերի և այլն: Նրանք առևտրի համար գալիս հասնում էին Օնիի, Ցխինվալիի, Ախալգորիի, Դուշեթիի, Թելավիի, Ղվարելիի և Թբիլիսիի շուկաներ: Իրենց հետ բերում էին դադստանյան հագուստ, զենք, մթերքներ՝ պանիր, կարագ, ինչպես նաև կենդանիներ, հիմնականում՝ ոչխարներ: Փոխարենը Յուսիսային Կովկասի լեռնականները գնում էին բամբակե գործվածքներ, աղ և այլ առարկաներ»¹: Գրքում կարևոր տեղեկություններ կան այն մասին, որ 18-րդ դ. 50-ական թթ. էրեկե-Թեյմուրազի կողմից «Դարիալի անցքի» կամ ինչպես այն ժամանակ էր կոչվում «Ալանաց դռան» վերաբացման ժամանակ Վրաստանի վաճառականները առևտրական կապի մեջ էին ռուսական քաղաքների՝ Մոզդուկի, Ղզլարի և Աստրախանի հետ: Առևտրին մեծ մասամբ նպաստում էր այս քաղաքներում վրացի և հայ գաղութների առկայությունը: Չնայած տեղեկությունները բավականին քիչ են, սակայն առկա փաստերից էլ պարզ երևում է, որ 18-րդ դարի վերջին Վրաստանի դերը առևտրում բավականին կարևոր էր:

Նշանակալից նվաճում է ք. Թբիլիսիում 1997 թ. տպագրված Ռուլանդ Թոփչիշվիլու «Վրաստանում օսերի վերաբնակեցման և Շիդա Քարթլիի էթնոպատմության հարցեր» աշխատությունը: Այստեղ հեղինակը կատարյալ տրամաբանական դատողությամբ լուսաբանում է հենց աշխատության վերնագրում տրված խնդիրը, և սրա հետ մեկտեղ այս աշխատությունը Վրաստանի պատմությամբ հետաքրքրվող անձանց համար բավականին կարևոր տեղեկություններ է պարունակում: Տվյալ պարագայում Ռ. Թոփչիշվիլու կողմից Դվալեթիի անցյալից քննարկված նյութը մեզ օգնում է ավելի լավ հասկանալու Վրաստանի պատմական աշխարհագրությունը:

Վրաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Ծերեթելու անվան Արևելագիտության ինստիտուտի կողմից 1999 թ. հրատարակված՝ Գոչա Ջափարիձեի «Ծանարների մասին» հոդվածը կարևոր տեղեկություններ է պարունակում VIII դ. Արևելյան Վրաստանի քաղաքական կյանքում ակտիվություն ցուցաբերած ծանարների մասին, ովքեր Կախեթիի միավորման և արաբների դեմ պայքարի նախաձեռնողները եղան, որի հետ կապված Ծանարեթիի նշանակությունն աճեց և հետզհետե տարածվեց Կախեթիի լեռնաստանում (Սթիուլեթի):

Յեղինակը հոդվածում ներկայացնում է վրաց և օտար պատմողական (նարատիվ) սկզբնաղբյուրներ, անդրադառնում միջին դարերի արաբական պատմաաշխարհագրական գրականությանը, որը հարուստ տեղեկություններ է պարունակում վրացիների և Վրաստանի մասին: Այնուհետև քննության առնելով ծանարների խնդիրը, բերում է տարբեր տեսակետներ՝ ծանարների արաբական, չեչենական-ինգուլական (վեյնախյան) ծագման հետ կապված, ներկայացնում արաբ աշխարհագրագետների ու բառարանագետների, ինչպես նաև՝ Ն. Մառի, Վ. Բարտոլդի, Վ. Մինորսկու, Ա. Գենկոյի, Ա. Մկրտումյանի տվյալները, և հիմնավորում է այն տեսակետը, որ ծանարները վրացական ծագում ունեն: Սակայն, այս տեսակետը ևս հետագայում քննության է ենթակա:

Կովկասի պատմության, ինչպես վաղ միջնադարյան, այնպես էլ հետագա ողջ ժամանակաշրջանի ուսումնասիրությունը կարևոր է Վրաստանի պատմության շատ հարցերի ճշգրիտ լուսաբանման համար, ինչպես նաև ժամանակակից ուսումնասիրությունը՝ Ռուսաստանի հետագա քաղաքականության մշակման համար: Այդ խնդիրների լուծման ուղղությամբ մեծ է վրաց կովկասագիտության ներդրումը:

¹ **Ռոջոնձոյե Ե.**, «Վաթրոձա և Վաթարտա ցւնա ռեցօրմամձելու խանի Տաթարտեվոլոձի», Մեցնիբրեձա, 1974, թ. 5.

ФОРМИРОВАНИЕ ШКОЛЫ КАВКАЗОВЕДЕНИЯ В ГРУЗИИ

Рузанна Елчян

Исторические сведения о Северном Кавказе зафиксированы в разных грузинских исторических источниках, в литературных произведениях, документальных надписях и в документах. Они занимают одно из первых мест среди кавказоведческих источников по объему информации и её достоверности.

Грузинская школа Кавказоведения имела длительную историю существования, которое было обусловлено вековыми взаимоотношениями Грузии с народами и племенами, заселяющими горную цепь Кавказа.

FORMATION OF THE SCHOOL OF CAUCASIOLOGY IN GEORGIA

Ruzanna Elchyan

Georgian sources that tell us about the history of the Caucasus have high level of reliability of its information and the richness of this information. Being constantly in direct relationship, Georgians owned more reliable and accurate information about the events in the North Caucasus, which were recorded in different Georgian historical sources, in literary works, documentary inscriptions and documents.

Georgian school of Caucasiology had long a course of development, which was due to the circumstances of ancient Georgian relations with the peoples and tribes that inhabited the mountain range along the Caucasus.

**ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԱՂՎԱՆՔՈՒՄ ԵՎ ԵՂԻՇՆ ԱՈՒՔՅԱԼԻ
ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԵՋ**

Սաշա Կատվալյան
ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրոս
Գիտ. դեկ.՝ պ.գ.թ., դոց. Է. Ջոհրաբյան
Էլփոստ՝ skatvalyan@mail.ru

Ուղիների պատմությունը ներկայացնում է որպես ազգային պահպանության մի յուրահատուկ դրսևորում, երբ մի ժողովուրդ, որը երբեք չի ունեցել պետականություն, կարողացել է պահպանել իր ինքնությունը և ոտք է դրել XXI դար: Պատմական Աղվանքի էթնիկ ընդհանրություններից այս էթնոսի պատմությունը պետք է դիտել հենց Աղվանքի պատմության համատեքստում այնքան ժամանակ, քանի դեռ վերջինս գոյություն ուներ որպես ազգային-վարչական միավոր:

Բուն Աղվանքի տարածքի աղվանական էթնիկ ընդհանրություններից միայն մեկի՝ ուղիների մի հատվածն է, որ մինչ այսօր մնացել է քրիստոնյա: Քրիստոնյա ուղիների այդ խումբն ապրում է Աղբրեջանի Վարդաշենի շրջանի Վարդաշեն շրջկենտրոնում և Կուտկաշենի շրջանի Նիժ գյուղում: Վարդաշենից 1910-ական թթ. ջարդերից փախած ու Վրաստանում ապաստանած քրիստոնյա ուղիների մի գյուղ էլ կա՝ Օկտոմբերին: Նշված բնակավայրերի ուղի բնակչությունը պահպանել է ոչ միայն նախնիների որդեգրած դավանանքը, այլև ուղիներն լեզուն, ազգային կենցաղամշակութային առանձնահատկությունները: Ուղիախոս ուղիներից գատ Կուտկաշենի շրջանի Սուլթան-Նուխի, Ջոուռլու և Միրդաբեյլու գյուղերում ևս ապրում են իրենց էթնիկ ինքնագիտակցությունը պահպանած և իրենց քրիստոնյա համարող ուղիներ, որոնք, սակայն, խոսում են աղբրեջաներեն:

Նախ անհրաժեշտ է նշել, որ Աղվանից ժողովրդի ազգային, կրոնական, քաղաքական ճակատագիրը սերտորեն կապված է եղել Հայաստանի պատմական զարգացումների հետ:

Այժմ խոսենք ուղիների քրիստոնեության ընդունման և եղիշե առաքյալի գործունեության մասին: Նախ պետք է նշել, որ քրիստոնեությունը Աղվանք ներթափանցել է երկու փուլով: Առաջին փուլը կապվում է եղիշե առաքյալի անվան հետ, իսկ երկրորդ փուլը՝ Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի:

Համաձայն սկզբնաղբյուրների՝ եղիշեն մինչև Չողում և Աղվանքում քարոզչական գործունեություն ծավալելը, նման աշխատանք կատարել է նաև Հայաստանում: Լինելով ս. Թադեոսի աշակերտը՝ նրա հետ եկել է Հայաստան և օգնել՝ նոր հավատը Հայաստանում տարածելու գործում: Ինչպես գիտենք քրիստոնեության տարածման սկզբնական շրջանում քրիստոնյա քարոզիչները ենթարկվում էին հալածանքների և բռնությունների: Այդ բռնություններից անմասն չի մնում նաև Թադեոսը, ով իր մի քանի աշակերտների հետ հայոց թագավոր Սանատրուկի (88-110 թթ.) հրամանով սպանվում է: Նրա աշակերտներից եղիշեն վերադառնում է Երուսաղեմ և Քրիստոսի եղբայր Հակոբի կողմից ձեռնադրվում եպիսկոպոս և ուղարկվում է Արևելք՝ այս անգամ ինքնուրույն քարոզչական աշխատանքի¹:

Ստանալով նոր նշանակում՝ եղիշեն ճանապարհվում է «Արևելք»: Դուրս գալով Երուսաղեմից՝ նա անցնում է Պարսկաստան, ապա, հավանաբար, Ատրպատականի վրայով մտնում է Մազքթաց երկիր՝ Չող (Չոր, Շոր), որտեղից էլ մեկնում է Ուտիք: Այստեղ նրա առաջին հանգրվանը լինում է Սահառ քաղաքը, ուր նա հասնում է իր երեք աշակերտներով: Խմբին կրնկակոխ հետևում են վերջիններիս հարազատները, որոնք ձգտում են հետ վերադարձնել նրանց: Արդյունքում եղիշեի աշակերտներից

¹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, խմբ.՝ Վ.Առաքելյանի, Երևան, 1983, էջ 10:

երկուսը լքում են նրան, իսկ երրորդին՝ սպանում են: Այս դեպքերից հետո Եղիշեն գնում է Ուտիքի Գիս ավանը: Ուտիքում նրա գործունեությունը ավելի երկար է լինում: Այստեղ նա նույնիսկ կառուցում է այդ տարածքի առաջին եկեղեցին և պատարագ մատուցում¹:

Ավարտելով իր առաքելությունը Գիսում՝ Եղիշեն տեղափոխվում է Ջերգունի կոչվող դաշտը այնտեղի բնակավայրերում քարոզչական աշխատանք տանելու համար: Դա բավականին ծանր խնդիր էր, քանի որ, ինչպես ներկայացնում է Կաղանկատվացին, Ջերգունի դաշտը դիցանոյ կռապաշտների զոհագործումների վայր էր: Այստեղից կարելի է ենթադրել, որ Ջերգունի դաշտը եղել է հեթանոսական կրոնի կենտրոնատեղիներից մեկը: Պատահական չէ նաև, որ հենց այստեղ էլ Եղիշեն սպանվում է և Յոնենք անվանվող վայրում նետվում փոսի մեջ²:

Այսպիսով պետք է նշել, որ ըստ տեղեկությունների՝ Եղիշեի գործունեության հիմնական ոլորտը եղել է Ուտիքը՝ նրա Սուհառ և Գիս քաղաքները, Ջերգունի դաշտում ընկած բնակավայրերը, այնուհետև նահատակվում և թաղվում է նույն կողմերում գտնվող Յոնենք կոչվող վայրում: Այս բոլոր աշխարհագրական վայրերը կազմել են Յայոց երկրի հյուսիս-արևելյան կողմերը կամ Ուտիք-Արցախյան աշխարհը³:

Եղիշե առաքյալի ավանդազրույցի հետ կապված մի շարք խնդիրներ ավելի լավ հասկանալու համար փորձենք հակիրճ ներկայացնել Աղվանքում քրիստոնեության տարածման պատմությունը:

Աղվանքի եկեղեցին ընդունել է Յայաստանի առաքելական եկեղեցու գահերեցությունը և «ի հոգևորս» ենթարկվել նրան: III դարից սկսած Աղվանքում հանդես են գալիս քրիստոնեական համայնքներ:

Աղվանքում քրիստոնեության տարածման երկրորդ փուլը կապվում է Մանուկ Գրիգորիսի անվան հետ, ով հայոց կաթողիկոս Վրթանեսի որդին էր և Գրիգոր Լուսավորչի թոռը: Մինչև Մանուկ Գրիգորիսի՝ Աղվանքում որպես քարոզիչ հանդես գալը, վերջինս գտնվում էր Փայտակարանում և Աղվանք է ուղարկվում այս անգամ Վրթանես հայոց կաթողիկոսի (331-341 թթ.) և Խոսրով III (330-338 թթ.) թագավորի հրամանով՝ ընդ որում, աղվանացիների խնդրանքով⁴: Գրիգորիսը 330 թ. նահատակվել է մագթթաց Սանատրուկ Արշակունի թագավորի հրամանով: Ավանդաբար Գրիգորիսն է համարվում Աղվանից եկեղեցու հիմնադիրն ու ավագ հովվապետը, քանի որ, գալով Աղվանք, նա ծավալում քարոզչական գործունեություն է տանում շեներում և քաղաքներում, կառուցում է եկեղեցիներ, ձեռնադրում քահանաներ, պահում աշակերտներ և զբաղվում նրանց ուսուցմամբ⁵:

370-ական թթ. Ուռնայր թագավորը քրիստոնեությունը հռչակել է Աղվանքի պետական կրոն: Նոր կրոնը խթան է հանդիսացել 415-420 թթ. Բենիամին Երեցի օգնությամբ Մեսրոպ Մաշտոցի կողմից աղվանից գրերի ստեղծմանը: Ժամասացության լեզուն նախապես եղել է հունարենը, սակայն Եսվաղեն (Երսվաղեն) թագավորի օրոք (մոտ 414-444 թթ.) փոխարինվել է հայերենով: Աղվանից կաթողիկոսը պաշտոնապես կրել է «Կաթողիկոս Աղվանից, Լվինաց և Չողայ» տիտղոսը: Աղվանից եկեղեցու եպիսկոպոսական աթոռանիստ կենտրոններ են եղել Կապաղակը, Չողը, Շաքին⁶:

¹ Մովսես Կաղանկատվացի, էջ 11:

² Սվազյան Դ., Սուրբ Եղիշան Յայոց Արևելից կողմանց, Չողա երկրի և Աղվանից աշխարհի լուսավորիչ, «Լրաբեր», Երևան, 2000, թիվ 2, էջ 58:

³ Նույն տեղում, էջ 60:

⁴ Մովսես Կաղանկատվացի, էջ 14, 350:

⁵ Սվազյան Դ., Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակները, «ՊԲՀ», 2002, թիվ 2, էջ 139:

⁶ «Քրիստոնյա Յայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 41-42:

Կրելով հայ եկեղեցու անմիջական ազդեցությունը՝ Աղվանից եկեղեցու առաջնորդները հիմնականում գործել են Հայոց կաթողիկոսների հետ «համական եղբայրութեամբ և անքակ ուխտի», միասնաբար հանդես են եկել դավանաբանական և քաղաքական կարևորագույն հարցեր քննարկած մի քանի եկեղեցական ժողովներում:

506 թ. Դվինի ժողովում աղվանաց եկեղեցին ևս մերժել է Քաղկեդոնի ժողովի որոշումները: Այնուհետև 551 թ. ստեղծվում է Աղվանից կաթողիկոսությունը, և նրա առաջին գահակալ է դառնում Աբասը (551-595 թթ.): 554 թ. Դվինի եկեղեցական ժողովում հայ և աղվանից եկեղեցիները վերջնականապես խզել են հարաբերությունները բյուզանդական եկեղեցու հետ¹:

Ըստ հայկական աղբյուրների՝ Աղվանքի եկեղեցին VI դ. մինչև XIX դ. ունեցել է իր առանձին կաթողիկոսությունը, բայց աղվանից կաթողիկոսները օծվել են հայոց ընդհանուր հայրապետներից: Հետագա դարերում կրոնական հալածանքների հետևանքով ծավոլեցիները, կասպեից, մազքթաց, լիմաց, եղբայ, սարմատական ցեղերը, որոնք երբևէ միացել էին Հայաստանյալ առաքելական եկեղեցուն, մահմեդականություն են ընդունում: Ուղիների մի մասը ընդունում է հունադավանություն, մյուս մասը՝ մահմեդականություն, և միայն մի փոքր հատված՝ 6 գյուղ, մնում է հայադավան²:

Եղիշե առաքյալի պատմության աղբյուրը բացառապես «Աղվանից պատմություն» երկի տեղեկություններն են, ավելի ստույգ՝ նրա VII դարով թվագրվող աղբյուրը: Ա. Հակոբյանը նույնիսկ ճշտում է կոնկրետ տարին՝ 684 թ.³:

Փորձենք վերլուծել VII դարում առաջին անգամ հիշատակված այս առասպելի առաջացման հնարավոր պատճառները, դրա ժամանակը և տեղեկությունները:

Պետք է նշել նաև, որ ոչ միայն առասպելի հայկականացման փորձ չի եղել, այլ, ընդհակառակը, այն իրականում հակահայկական էր՝ թե՛ իր բովանդակությամբ, թե՛ առաջացման պատճառով:

Այս առաքյալի ավանդագրույցի առաջին պլան մղվելու պատճառը բացատրվում է VII դ. Անդրկովկասի պատմական իրականությամբ, քանի որ այս նույն ժամանակ տարածաշրջանում տեղի էին ունենում կրոնական վեճեր: Չնայած այդ վեճերի հիմքում ընկած էր այս կամ այն երկրում քրիստոնեական գաղափարախոսության տարածման առաջնության խնդիրը՝ իրականում, սակայն, դրանք պայմանավորված էին Հայաստանի եկեղեցական ազդեցությունից դուրս գալու միտումով: VII դ. հետո քաղկեդոնության ուժեղացման հետևանքով Անդրկովկասի երկրներում տեղի էր ունենում եկեղեցիների ազգայնացման պրոցես: Եկեղեցական վեճերի այս շրջանում Անդրկովկասում քաղկեդոնիկ կամ լուսավորչական լինելու հանգամանքը պայմանավորվում էր էթնիկ ինքնահաստատման պրոցեսով: Աղվանից եկեղեցուն չհաջողվեց դավանապես հակադրվել հայոց եկեղեցուն, և գաղափարական անկախության ու ինքնահաստատման միտումը մարմնավորվեց հայոց եկեղեցուց, մասնավորապես համակովկասյան քարոզիչ համարվող Գրիգոր Լուսավորչից անկախ քարոզչի կերպարի առաջ մղումով: Քաղաքական մտադրություններն արդարացնելուն կոչված այս ծրագրային առաքյալը պիտի համապատասխաներ մի շարք նախադրյալների. առաջին՝ նրա գործունեության աշխարհագրական շրջանակը պիտի համապատասխաներ Աղվանից առաջին կաթողիկոսության նստավայրին, այն է՝ Կապադակ-Շաքի տարածքներին, և երկրորդ՝ առաքյալը պիտի գործունեություն ծավալած լիներ բնիկ աղվանական էթնիկ միջավայրում, այսինքն՝ Կուրի ձախսափնյա մասում, որպեսզի նրա կերպարը ծառայեր աղվանից եկեղեցու ազգայնական միտումներին: Ուշագրավ է, որ Եղիշեի մասին առաջին հիշատա-

¹ «Քրիստոնյա Հայաստան», էջ 42:

² **Առաքելյան Հ.**, Եղիշե առաքյալի պաշտամունքն ուղիների մեջ, «Լրաբեր», Երևան, 1991, էջ 72-73:

³ **Акопян А.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 196-201:

կությունը 684 թ., զուգադիպում է այն տարիներին, երբ աղվանից կաթողիկոսն էր Շաքիի եպիսկոպոս Եղիազարը (680-686 թթ.)¹ :

Եղիշե Առաքյալի պատմության աղբյուրը բացառապես «Աղվանից պատմություն» երկխոսեղեկություններն են, ավելի ստույգ՝ նրա VII դ.. թվագրվող աղբյուրի: VII դ., երբ աղվանից եկեղեցին քաղաքական անհաջող փորձ է անում հայոց եկեղեցու գերակայությունից ազատվելու և պարտվում է, սկսվում է երկրի քրիստոնեացման սեփական պատմության մշակումը: Այդ նոր պատմության համաձայն քրիստոնեության մուտքն Աղվանք պետք է՝ ա) առնվազն հավասար լիներ հայկականին, այսինքն՝ լիներ առաքելական, սկսված լիներ առաջին դարից, և բ) լիներ ինքնուրույն, այսինքն՝ կապ չունենար հայկական եկեղեցու և հայության հետ: Ահա հենց VII դ. էլ «հայտնվում է» մի նոր առաքյալ: Պետք է ասել՝ Կովկասի քրիստոնեության պատմության մեջ այս առաքյալը հայտնվում է միանգամայն հստակ քաղաքական իրավիճակում՝ այն շրջանում, երբ աղվանները փորձում են ազատվել հայերի կրոնական գերակայությունից:

VII դ. դ. առաջ Եղիշե առաքյալի մասին պարզապես ոչ մի հիշատակություն չկա: Ալեքսան Դակոբյանն իրավացիորեն գրում է, որ եթե Եղիշեի անունը և նրա մշխարհների գյուղը հայտնի լինեին «Վաչագանի վեպ»-ի հեղինակին, ապա այդ սրբի հիշատակությունը կլիներ գոնե այն դրվագում, երբ Վաչագանի իրամանով հավաքվում են Աղվանքի տարբեր շրջաններում պահվող սուրբ մշխարհները (Գրիգոր Լուսավորչի, Պանդալեոնի, Ջաքարիայի, Զեփսիմեի և Գայանեի), որպեսզի նրանց օգնությամբ գտնվի Գրիգորիսի մշխարհների թաքցնելու վայրը²: Իրականում առաջին հերթին «Վաչագանի վեպ»-ում հիշատակված չլինելու պատճառով պարզ է, որ Եղիշե առաքյալի և Ուռմայր թագավորի հետ կապվող Աղվանից լուսավորության պատմությունները ստեղծվել են VI դ. վերջից կամ VII դ. սկզբից ոչ շուտ և արդյունք են այդ ժամանակ ծագած հայոց եկեղեցու գերագահության կարգավիճակից ձերբազատվելու վրաց և Աղվանից եկեղեցիների այնպիսի միտումների, որոնք դեռևս չեն նկատվում «Վաչագանի վեպ»-ում³:

Ուշագրավ է, որ Եղիշե առաքյալի մասին մատենագրական առաջին հիշատակությունը վերաբերվում է VII դարի այն տարիներին, երբ Աղվանքի կաթողիկոսը Շաքիի նախկին եպիսկոպոս Եղիազարն էր (680-686 թթ.): Շաքին իր շրջակայքով իդեալական տարածք էր նորահնար առաքյալի գործունեությանը Աղվանքի ինքնուրույն քրիստոնեացման գաղափարի հաստատման համար, քանի որ անհրաժեշտ էր համակոծկայան քարոզիչ համարվող Գրիգոր Լուսավորչից ու նրա տոհմից անկախ քարոզչի կերպար առաջ բերել: Դրա համար նախ անհրաժեշտ էր, որ նոր առաքյալը իր գործունեությունը ծավալած լիներ բուն աղվանական էթնիկ միջավայրում, այն է՝ Կուրի ձախափնյա մասում, որպեսզի նրա կերպարը ծառայեր աղվանից եկեղեցու ազգայնական, տեղայնական միտումներին, ապա նաև կապ չունենար Կուրի աջափնյակի հայերի հետ: Զիրավի, ավելի ուշ հենց Շաքիում էլ զարգանում է Եղիշեի պաշտամունքը և դրա դրսևորումները⁴:

Անդրադառնալով Եղիազարի քաղաքական գործունեությանը՝ պետք է մշել, որ կաթողիկոսն Աղվանքի քաղաքական ու հոգևոր անկախության առավել հետևողական կողմնակիցներից էր, և այդ նպատակին ուղղված նրա ջանքերը կենտրոնացել էին Կուրի ձախափնյա Աղվանքի դերի բարձրացմանը: Մինչև կաթողիկոս

¹ Акопян А., с. 277:

² Դակոբյան Ա., «Վաչագանի վեպ»-ը և Արշակունյաց թագավորության խնդիրը Դ-Ձ դարերի Աղվանքում, «ԶԱ», 2003, էջ 47:

³ Акопян А., с. 183:

⁴ Խառատյան Ջ., Եղիշե առաքյալի պաշտամունքն ուղիների մեջ և Ուտի գավառի հարցի շուրջ, «ԼԳԳ», Երևան, N 6:

դառնալը ենթադրվում է, որ Եղիազարը ուներ ամուր հենարան տեղական ավագանու մեջ¹:

Աղվանքի ինքնուրույնությունը Շաքիի շուրջ կենտրոնացնելու Եղիազարի ծրագիրը, գուցե, պայմանավորված էր այդ տարածքի նախկին քաղաքական դերով. Կապադակն ու Շաքին բուն Կովկասյան Աղվանքի աշխարհիկ և հոգևոր կենտրոններն էին մինչև Աղվանից մարզպանության ձևավորումը ու Կուրի աջափնյակի հայկական տարածքներում Աղվանքի իշխանության կենտրոնացումը: Շաքիի կարևորության ընդգծումով միաժամանակ կտրուկ փոխվում էր այդ տարածքում ապրող էթնիկ միավորի՝ ուղիների դերը: Ուղիները դառնում էին Եղիազարի ծրագրի կարևոր դերակատար և, հավանաբար, դրանով պետք է բացատրել «Պատմություն Աղուանից»-ում Ուտիացոց աշխարհի հաճախակի հիշատակությունը՝ որպես Աղվանքի ցանկալի և հնարավոր կենտրոնաձիգ տարածքի: Այս իմաստով հատուկ կարևորություն է ստանում Եղիազարի երկրորդ ծրագիրը՝ Մեսրոպ Մաշտոցի գործունեությունն Աղվանքում հիշյալ տարածքի հետ կապելու պատմությունը և VII դ. անանուն պատմիչի հիշատակությունն այդ մասին: Այսպես, պատմելով Աղվանքում Մեսրոպ Մաշտոցի գործունեության մասին, «Պատմություն Աղուանից»-ի տվյալ հատվածի աղբյուրը հաղորդում է, որ Մեսրոպ Մաշտոցը, հաստատվելով Գիսուն, այստեղից է քրիստոնեությունը վերահաստատում Ուտիացոց աշխարհում, «և յԱղուանս, և Լփինս, և ի Կասպս» և Կովկասյան մեծ լեռան ստորոտի այլազգիների մեջ, այստեղից է «Սարոստաններին» դպրություն սովորեցնում²:

Այսպիսով «Պատմություն Աղուանից»-ի համաձայն (Եղիազարի ծրագրի մաս դառնալով)՝ Մաշտոցը նույնպես, Եղիշեի նման հենց Գիսուն է սկսում քրիստոնեության վերահաստատումը և այդ Գիսն, ըստ ամենայնի, հենց «գավառն Ուտիական»-ի Գիսն է: Ավելին՝ ըստնոր առասպելի՝ Մեսրոպ Մաշտոցը անհավատներից թաքցնելու համար իբր թե Գիսուն է թաղում Քրիստոսի խաչի մասնիկը, որի վրա հետագայում կառուցվում է եկեղեցի:

Պետք է նշել, որ Ուտիք տերմինը հայկական աղբյուրներում հանդիպում է բացառապես հայկական Ուտիքի կապակցությամբ: Հետևաբար, եթե Մաշտոցը մասունքները թաքցրել է Ուտիի շրջանի Գիս կոչվող գյուղում (իսկ Մաշտոցը գործել է V դ.), ապա դա Արցախում գտնվող Գիսն է: Ուրեմն այս նույն Գիսուն էլ պետք է փնտրել Մաշտոցին նախորդած Եղիշե առաքյալի գործունեության տարածքը: Մինչդեռ VII դ. աղբյուրն առաջնորդվում է իր տրամաբանությամբ, աստիճանաբար Կուրի ձախափնյակի «Ուտիացոց աշխարհում» տեղադրելով բուն Աղվանքի սրբազան պատմությունները, Եղիազարի առասպելաչեն նախաձեռնության արդյունքը: Ամենայն հավանականությամբ նույն Եղիազարի նախաձեռնությամբ է Աղվանքում Մեսրոպ Մաշտոցի գործունեության ելակետ ընտրվում Գիսը՝ թերևս վերջինիս ծանրակշռությունն ավելի հիմնավորելու համար: Մաշտոցի մասին Կորյունի երկում Գիսը բնականաբար բացակայում է, ինչպես այն բացակայում է մինչև Դասխուրանցին մատենագրական այլ աղբյուրներում, և դա հասկանալի է:

Գիսի անհրաժեշտությունն առաջացել է VII դ.՝ Եղիշե առաքյալի վերաբերյալ ծրագրային առասպելի հետ կապված, և բուն Աղվանքի տարածքում Մաշտոցի գործունեությունը Գիսուն կենտրոնացնելու Եղիազարի գաղափարը նույնքան ծրագրային է, որքան Եղիշե առաքյալի կերպարի ստեղծումը: Այն հիմնավորելու համար Եղիազարը կազմակերպում է Մաշտոցի կողմից իբրև թե պահված խաչի պատմությունը, և ինքն էլ «հայտնագործում» այն³:

Այսպիսով, կարծես թե ակնհայտ է, որ Շաքվա Եղիազար եպիսկոպոսի՝ հետագա կաթողիկոսի ջանքերով ու ծրագրով է ստեղծվել Եղիշե առաքյալի առասպելը (ինչպես նաև Մաշտոցի կողմից Գիսուն խաչի թաքցնելու և Եղիազարի կողմից այն

¹ Խառատյան Գ.:

² Մովսես Կաղանկատվացի, էջ 95:

³ Նույն տեղում, էջ 213-220:

հայտնաբերելու առասպելը), և այն, որ դրանք ըստ էության պետք է ծառայեին Աղվանքի կրոնական ինքնուրույնացման ծրագրերի հիմնավորմանը:

Այս ամենից պետք է փաստել, որ ուղիների մոտ քրիստոնեությունը, հատկապես Եղիշեի միջոցով տարածված քրիստոնեությունը, կատարել է էթնիկական հետաքրքիր ցուցիչի դեր: Առաքյալն ազգայնացավ ոչ միայն պաշտամունքի շրջանակներում, այլ՝ էթնիկ պատկանելիությամբ. նրան սկսեցին վերագրել ուղիական ծագում: Այս հանգամանքը Եղիշեի կերպարից ջնջեց դավանական կնիքը և որպես սուրբ ընդունելի դարձրեց ինչպես քրիստոնեական երկու դավանանքներին՝ հետևող ուղիների (լուսավորչական և ուղղափառ), այնպես էլ մահմեդականացված ուղիների համար: Որպես այդպիսին՝ Եղիշե առաքյալի սրբավայրերը քրիստոնեական գաղափարախոսական ֆունկցիա իրականացնելուց զատ իրենց վրա վերցրին էթնոձիգ օջախների, կոնսոլիդացնող գործոնի դերը. ուղիների շրջանում էթնիկ համախմբիչի ֆունկցիան բաժին ընկավ Եղիշե առաքյալի անունը կրող և ավանդաբար նրա գործունեության հետ կապվող հոգևոր կենտրոններին: Եղիշե առաքյալի գործունեության բոլոր վայրերը տեղադրվում են ըստ «Աշխարհացույցի» տասներկուերորդ աշխարհ Ուտիքում:

РАСПРОСТРАНЕНИЕ ХРИСТИАНСТВА И ВЕРЫ АПОСТОЛА ЕГИШЕ СРЕДИ УДИН Саша Катвалян

Эта статья рассказывает о распространении христианства в Кавказской Албании. Также она содержит информацию о распространении веры апостола Егише среди удин. В статье представлены некоторые факты, доказывающие существование придуманной личности Егише. В статье также утверждается, что образ Егише был создан в VII веке католикосом Кавказском Албании Егизаром. Причиной тому являлось утверждение независимости алвардской церкви.

SPREAD OF CHRISTIANITY AND YEGHISHE APOSTLE'S FAITH AMONG UDIS Sasha Katvalyan

The article introduces the spread of Christianity in Caucasian Albania. It also contains information about Yeghishe Apostle's faith among Udies. In the article there are several facts that prove the imaginary character of Yeghishe. It also states that the character of Yeghishe was created in the 7th century by catholicus of Caucasian Albania Yeghiazar. The reason of creating Yeghishe's imaginary character was to get the independence of Caucasian Albanian church from Armenian church.

ԹՈՒՐԲ-ՄԵՍԻՏԵԹՅԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վահագն Հակոբյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, ասպիրանտ

Գիտ. դեկ.՝ պ.գ.թ., դոց. Է. Ջոհրաբյան

Էլփոստ՝ vah.hakobyan@gmail.com

Թուրք-մեսիտեթյանը սունի մահմեդականներ են, որոնք ապրել են Վրաստանի հարավային շրջանում, որը հայտնի է նաև Մեսիտեթ (Սամցխե) անվանմամբ: 1944 թ. նրանք ենթարկվեցին բռնի տեղահանման՝ մեղադրվելով թուրքական հետախուզության հետ կապ ունենալու, թշնամական ուժերի հետ համագործակցության, և հայրենիքի դավաճանության մեջ: Տարբեր տվյալների համաձայն այսօր թուրք-մեսիտեթյանի թիվը կազմում է 300-500 հազար, որից 260-280 հազարն ապրում են հետխորհրդային տարածքում¹:

Նրանք իրենց համարում են էթնիկ թուրքեր, սակայն նրանց էթնիկ պատկանելության վերաբերյալ գոյություն ունի երեք տեսակետ :

Առաջին տեսակետի համաձայն թուրք-մեսիտեթյանը էթնիկ թուրքեր են, որոնք հնագույն ժամանակներից ապրել են Վրաստանի հարավային շրջաններում: Այս տեսակետի կողմնակիցները հիմնվում են նաև այն փաստի վրա, թուրք-մեսիտեթյանը խոսում են թուրքերենի անատոլիական բարբառներից մեկով:

Երկրորդ տեսակետի համաձայն թուրք-մեսիտեթյանը մահմեդականացված վրացիներ են, որոնք ժամանակի ընթացքում թուրքերի հետ լինելով մշակութային և քաղաքակրթական շփումների մեջ կորցրել են իրենց վրացական ազգային դիմագիծը:

Ըստ երրորդ տեսակետի՝ նրանք առանձին էթնոս են, որը ձևավորվել է թուրքերի և քարթվելական մեսիտեթի ցեղի միաձուլումից:

Թուրք-մեսիտեթյանի իրենց նախկին բնակվայրեր հետ վերադարձի խնդիրը մինչ օրս մնում է չլուծված: Այս խնդիրը իրենց ազգային շահերին են փորձում ծառայեցնել տարածաշրջանում իրենց դերն ունեցող պետությունները՝ հիմնվելով նաև թուրք-մեսիտեթյանի էթնիկ պատկանելիության վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր տեսակետների վրա: Նրանց էթնիկ պատկանելության հարցի մասին առավել լավ պատկերացում կազմելու համար հարկավոր է անդրադառնալ վերոհիշյալ Մեսիտեթ տարածքի դեմոգրաֆիական փոփոխություններին:

Ըստ պատմաբան Արիֆ Յունուսֆի թուրքական և ուլդուրյան ցեղերը հոների հետ Կովկաս են եկել դեռևս 4-րդ դ., իսկ 5-րդ դ. Վրաստանի հարավում և Հայաստանի հյուսիսում արդեն բնակություն են հաստատել թուրքական բասիլ, օնօգուր, բուլղար կամ բուլգար, կոլով ցեղերը²: Թուրքական ցեղերի զանգվածային հոսքը դեպի Անդրկովկաս տեղի ունեցավ 11-րդ դ.՝ սելջուկ-թուրքերի արշավանքների ժամանակ: Այս արշավանքներով ոչ միայն ավելացավ թուրքական տարր երկրամասում, այլև փոխվեց նրանց կարգավիճակը: Լինելով երկրամասը նվաճած ցեղեր՝ նրանք իրենց իշխանությունները հիմնեցին և դոմինանտ դիրք գրավեցին բնիկների նկատմամբ: 10-12-րդ դդ. վերելք էր ապրում Վրացական թագավորությունը: Սակայն վրացիների համար վտանգ էին ներկայացնում օղուզ մուսուլմանները: Նրանց դեմ պայքարելու համար Վրաց թագավոր Դավիթ 4-րդը 1118 թ. Հյուսիսային Կովկասից Վրաստանի հարավ-արևելյան շրջաններ, այդ թվում նաև Մեսիտեթ, բնակվելու է հրավիրում ղփչաղների թուրքական ցեղին որոնց առաջնորդն

¹ Հովյան Վ., Թուրք-մեսիտեթյանի Վրաստան վերադարձի խնդրի շուրջ,

http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=460&sphrase_id=23263, 21:00, 22.02.2013.

² Юнусов А., Месхетинские турки : Дважды депортированы народ, Баку, 2000, с. 14.

եր Արտակը (թուրքերենով Արտիկ)¹ : Վերջինիս զորքի թիվը հասնում էր 40-50 հազարի : Նրանց օգնությամբ էլ Դավիթ 4-րդը գրավեց Թբիլիսին :

16-րդ դ. սկզբին Վրաստանը տրոհվեց մի քանի մասի՝ Քարթլիի, Իմերեթի, Կախեթիի թագավորությունների և Սամցխեյի աթաբեկության: Վերոնշյալ տարածքները դարձան Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի մրցակցության թատերաբեմ: Մեսխեթի տարածքը երկու կողմերի համար էլ ռազմավարական տեսանկյունից կարևոր նշանակություն ուներ և 16-17-րդ դդ. ընթացքում պարբերաբար լինում էր Սեֆյան Պարսկաստանի կամ Օսմանյան կայսրության կազմում: Սակայն այն վերջնականապես մնաց Օսմանյան կայսրության կազմում և Մեսխեթի համար սկսվեց նոր՝ օսմանյան դարաշրջան, որը մեծ հետք էր թողնելու տեղի բնակչության կյանքում: Սկսվեց այդ տարածքներում թուրքական քաղաքակրթական էքսպանսիան: 1625 թ. Մեսխեթի վերջին քրիստոնյա աթաբեկի՝ կառավարչի, մահվանից հետո իշխանությունը իր ձեռքում կենտրոնացրեց Բեկ Ջակելի (1625-1635), ով իսլամ ընդունելուց հետո հայտնի դարձավ Սաֆիր փաշա անունով և ժառանգության անցավ թուրք սուլթանի մոտ: Շուտով երկրամասում լուծարվեց աթաբեկությունը և կազմվեց Ախլցխայի փաշայությունը: Կարճ ժամանակում այստեղ վերացան վրացական վարչական բաժանումները և այն վերաբաժանվեց թուրքական վարչական միավորներով: Իրենց տիրույթները պահպանելու համար վրացի ֆեոդալները ևս սկսեցին իսլամ ընդունել: Ըստ Վահուշտի Բագրատիոնի մինչև 1626 թ. բոլոր մեսխեթցիները քրիստոնյա էին, սակայն Բեկ Ջակելի իսլամ ընդունելուց հետո սկսվեց տեղի բնակչության իսլամացումը: Սակայն մուսուլմանություն էին ընդունում միայն իշխանները, իսկ նրանց կանայք և ընտանիքի մյուս անդամները մնում էին քրիստոնյա: Այս ամենը վկայում է այն մասին, որ իսլամ ընդունելը ուղղակի բխում էր տիրույթները չկորցնելու ցանկությունից: Միայն մեկ դար հետո Ռոստամ աթաբեկի կառավարման ժամանակ սուլթանը հրաման արձակեց, որ բոլոր մահմեդականների կանայք ևս պետք է լինեն մահմեդական և ապրեն մահմեդական սովորույթներով²: Դրանից հետո տեղի բնակչությունը անցավ մահմեդական սովորույթներով ապրելակերպին՝ վրացերեն լեզուն պահպանելով միայն տանը: Ֆրանսիացի դեսպանը, որը եղել է Թիֆլիսում 1820-1824 թթ. վկայում է որ Ախալցխայում հիմնականում խոսում էին թուրքերենով, ինչը վկայում է այն մասին, որ մինչև Ռուսական կայսրության տարածքի մեջ մտնելը տեղի բնակչությունը արդեն կորցրել էր իր վրացական դիմագծերը : Պատահական չէ, որ ռուսական զորքերի հրամանատար Պասկևիչը, մինչև Ադրիանապոլսի հաշտության պայմանագրի կնքումը, Մեսխեթի մուսուլմաններին իրավունք տվեց վաճառել ունեցվածքը և հեռանալ դեպի Թուրքիա: Ռուսական իշխանությունները փորձում էին ամեն կերպ նվազեցնել մահմեդական բնակչության ազդեցությունը ռազմավարական տեսանկյունից մեծ նշանակություն ունեցող այդ տարածքում: Նման պայմաններում տեղի մահմեդականները շտապում էին վաճառել իրենց ունեցվածքը, երբեմն չնչին գումարով, և անցնել Թուրքիա: Մյուս կողմից ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Արևմտյան Հայաստանից սկսվեց մեծ թվով հայ բնակչության գաղթը դեպի Ռուսաստան: Կարսի և Բայազետի հայությունը հիմնականում տեղափոխվեց Ախալցխա³: Վրաստանի հարավային շրջանների էթնիկ պատկերը փոխվեց և մահմեդականները նախկինի պես մեծամասնություն չէին կազմում: Այդ մասին առավել հստակ տեղեկություններ են պահպանված Թիֆլիսի նահանգի փաստաթղթերում, որոնց համաձայն 1869 թ. դրությամբ Ախլցխայի շրջանի բնակչությունը կազմում էր 80,500 մարդ, որոնցից մուսուլմանները 26,000, այսինքն 32 %, այդ թվում նաև վրացի - սունիները՝ 16,700:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ ստեղծվեց Անդրկովկասյան Կոմիսարիատը, դրա կազմի մեջ էր նաև թուրք-մեսխեթցի Ահմեդ Պեպիոնովը: Շուտով

¹ Юнусов А., с. 32.

² Նույն տեղում, էջ 44:

³ Гаджиев А., Ахалцихские турки; история, этнография, фольклор, No 2 (26), 2007, с. 8.

Անդրկովկասյան Կոմիսարիատը դադարեց գոյություն ունենալ և Մեսխեթի մուսուլմանները 1917 թ. դեկտեմբերին Աբաստուման գյուղում ժողով հրավիրեցին և որոշեցին առանձին վարչական միավոր ստեղծել, որի կազմի մեջ պետք է լինեին Աջարիան, Կարսը, Ախալքալաքը և Ախալցխան¹: Նրանք անգամ ստեղծել էին իրենց դրոշը, որը հետագայում դարձավ Թուրքիայի դրոշը: Սակայն նրանց որոշմանը դեմ գնացին հայերը և վրացիները²: Օմար Ֆահի Բեկը, որը թուրք-մսխեթցիների շրջանում մեծ հեղինակություն ուներ, կազմավորեց մի քանի հարյուր մարդուց բաղկացած ջոկատներ, բայց չկարողացավ դիմադրել հայկական և վրացական զինված ուժերին: Միևնույն ժամանակ բոլշևիկյան Ռուսաստանի, Գերմանիայի և Թուրքիայի միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ստորագրվեց Բրեստ Լիտովսկի պայմանագիրը, որի համաձայն ռուսական զորքերը դուրս պետք է բերվեին Հարավային Մեսխեթի տարածքից և այդ տարածքի բնակիչները հետագա հանրաքվեի միջոցով պետք է իրենք որոշեին իրենց կարգավիճակը: Բաթումի բանակցությունների ժամանակ Մեսխեթի մուսուլմանների ներկայացուցիչները հանդես եկան հայտարարությունով, ըստ որի, ելնելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքից, նրանք որոշում են մտնել Թուրքիայի կազմի մեջ, հակառակ դեպքում, մնալով Վրաստանի կազմի մեջ, Մեսխեթի մուսուլմանները կկորցնեն ոչ միայն ազգային կապերը թուրքերի հետ, այլ նաև վտանգի կենթարկվեն իրենց լեզուն և կրոնը, դրանց ուղղված քաղաքականություն իրականացրել են վրացական իշխանությունները հեղափոխությունից հետո: Բաթումի պայմանագրից հետո Թուրքիային անցավ ամբողջ Մեսխեթին, իսկ Կարսում, Արդահանում և Բաթումում 1918 թ. հուլիսի 14-ին հանրաքվե անցկացվեց, որի արդյունքում այդ տարածքների բնակչության 98 %-ը քվեարկեց Թուրքիայի կազմի մեջ մտնելու օգտին: Վրաստանը, Հայաստանը և Ռուսաստանը չճանաչեցին այդ հանրաքվեի արդյունքները: Այնուհետև Մուղրոսի զինադադարից հետո թուրքական զորքերը հետ քաշվեցին այդ տարածքներից և Վրաստանը Մեսխեթին վերցրեց իր հսկողության տակ: Այդ ժամանակ մեսխեթցիները, չկարողանալով դիմադրություն ցույց տալ վրացական ուժերին, որոշեցին միանալ Հայաստանի ադրբեջանցիներին, ովքեր 1918 թ. նոյեմբերի 3-ին հռչակել էին Արաքսի թուրքական հանրապետությունը: 1918 թ. նոյեմբերի 30-ին 60 մուսուլմանի ներկայացուցիչներ Մեսխեթից և Հայաստանից Կարսում համագումար անցկացրեցին, որի արդյունքում դեկտեմբերի 1-ին հռչակեցին Հարավ-արևմտյան Կովկասյան հանրապետությունը Կարս մայրաքաղաքով: Երբեմն այն անվանվում էր նաև Կարսի հանրապետություն: 1919 թ. հունվարի 14-ին կազմվեց նաև այդ պետության խորհրդարանը, որը բաղկացած էր 60 պատգամավորից: 1919 թ. մարտի 27-ին այդ խորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց հանրապետության ստեղծման մասին, որտեղ նշվում էին նաև այդ պետության մեջ մտնող տարածքները՝ Ախալքալաքը, Ախալցխան, Կարսը³: Սակայն այս պետությունը երկար չէր կարող գոյատևել. Կովկասում մուսուլմաններին լայն աջակցություն ցուցաբերող Թուրքիան առաջին համաշխարհային պատերազմից դուրս էր եկել որպես պարտված պետություն և այժմ այս տարածաշրջանում նրան փոխարինելու էին եկել Անտանտի երկրները: Բացի այդ դա չի կարելի համարել անկախ պետություն. այդ տարիներին Անդրկովկասի մուսուլման հողատերերից շատերն էին իրենց հռչակել անկախ, բայց պետք է չանտեսել այն փաստը, որ

¹ Юнсов А., с. 56.

² Այս նույն ժամանակաշրջանի վերաբերյալ հակասական տեղեկություն է տալիս բանասեր Ասիֆ Գա. ջիևը: Վերջինս տեղեկացնում է, որ 1917 թ. Թբիլիսիում ստեղծվում է հակահայկական վրաց-մուսուլմանական դաշինք: Այնուհետև հեղինակը պնդում է, որ հայերի կողմից շարունակ հալածանքի են ենթարկվել մուսուլմանները և 1919 թ. վրացական քրիստոնեական կազմակերպությունները հանդես են եկել հայտարարությունով՝ կոչ անելով հայերի ղեկավարությանը դադարեցնել մուսուլմանների ահաբեկումը: Մուսուլմաններն էլ իրենց հերթին ապաստարան են հատկացրել Ախալցխայի վրաց կաթոլիկներին, որոնք հալածանքների են ենթարկվել հայերի կողմից:

³ Юнсов А., с. 58.

հաճախ նրանք չէին կարողանում վերահսկել այն տարածքները, որոնք անկախ էին հռչակել:

Անդրկովկասի խորհրդայնացումից հետո Մեսխեթին վերջանականապես մնաց Վրաստանի կազմի մեջ: Վրացական իշխանությունները Մեսխեթի մուսուլման բնակչության վրացականացման քաղաքականություն սկսեցին վարել 1920-ական թթ. վերջին և 1930-ական թթ.: Այդ ժամանակ նրանցից շատերի ազգանունները փոխվում էին և վրացական ազգանուններ էին օգտագործվում: Այդ քաղաքականությունը Վրաստանում շարունակվեց մինչև 1944 թ. բռնագաղթը: Իսկ բռնագաղթի ենթարկվելուց հետո նույն քաղաքականությունը շարունակվեց թուրք-մեսխեթցիների նոր բնակավայրերում: Ուզբեկստանում և Ղազախստանում նրանց գրանցում էին որպես ուզբեկ, ղազախ, ադրբեջանցի և այլն¹:

Թուրք-մեսխեթցիների խնդիրը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում հայտնվեց 1989 թ. Ֆերգանայում միջէթնիկական լարված մթնոլորտի արդյունքում տեղի ունեցած ջարդից հետո²: Թուրք-մեսխեթցիների սփռման համար վճռական եղավ 1989 թ.: Այդ տարի Ուզբեկստանի Ֆերգանայի հովտում սոցիալ-քաղաքական լարվածությունը հանգեցրեց թուրք-մեսխեթցիների կոտորածին, որի արդյունքում, ըստ էության, նրանք ենթարկվեցին երկրորդ տեղահանության: Ուզբեկստանից տեղահանվելով՝ թուրք-մեսխեթցիները մեծ մասամբ հաստատվեցին Ռուսաստանի Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, ինչպես նաև Ղազախստանում և Ադրբեջանում: Որոշ քանակությամբ թուրք-մեսխեթցիներ էլ հաստատվեցին Ուկրաինայում (7.000): Տեղահանվածների մի մասն էլ՝ մոտ 30 հազար մարդ, հաստատվեց Թուրքիայում: Թուրք-մեսխեթցիների Ռուսաստանի հարավային շրջաններում հաստատվելուց հետո Թուրքիան սկսեց օգտագործել այդ գործոնը երկրամասում իր ազդեցությունը մեծացնելու համար: Թուրքիայի վարած քաղաքականությունը չէր կարող անհետևանք մնալ: Տեղի ռուս բնակչության և թուրք-մեսխեթցիների միջև լարվածությունն առաջացավ 1990-ական թթ.: Թուրք-մեսխեթցիների նկատմամբ բռնություններ կիրառվեցին կազակների կողմից³: Ռուսաստանում բանկվող թուրք-մեսխեթցիների և նրանց առաջացրած խնդիրներին երկրի դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը անդրադարձավ 2001 թ. դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած ՆԳՆ խորհրդակցության ժամանակ⁴: Սակայն այդ ժամանակ էլ էական փոփոխություններ տեղի չունեցան: Հետագայում Ռուսաստանում հաստատված թուրք-մեսխեթցիների մի մասը՝ մոտ 10 հազ. մարդ տեղափոխվեց ԱՄՆ:

1991 թ. ապրիլին ՌԴ Գերագույն խորհրդի՝ «Բռնաճնշված ժողովուրդների վերականգնման մասին օրենքի» ընդունումից անմիջապես հետո թուրք-մեսխեթցիների ոչ մեծաթիվ խմբեր վերադարձան Վրաստան և փորձեցին հաստատվել Ջավախքում: Սակայն տեղի հայ բնակչությունը նրանց չընդունեց և ստիպեց հետ դառնալ:

1990 թ. Թուրքիայի իշխանությունները առաջ քաշեցին նախագիծ որը իրենից ենթադրում էր մոտ հարյուր ընտանիքի ընդունում⁵: Իսկ 1992 թ. հուլիսի 2-ին

¹ **Jin Ch.**, OHDiasporas with Nowhere to go: The survival of the Ahiska Turkish and Korean Diasporas in Post-Soviet Kazakhstan and Uzbekistan, Rethinking Global Migration: Practices, Policies and Discourses in the European Neighbourhood, Ankara 2008, p. 87.

² <http://www.kavkazoved.info/news/2012/02/10/turki-meshetincy-mezhdu-pantjurkizm-i-vahhabizm-i.html>,

Ордынский В., Турки-месхетинцы в России: между пантюркизмом и вахабизмом, 11:16, 15.03.2013.

³ <http://www.du.edu/korbel/hrhw/researchdigest/russia/repatriation.pdf>, **Benits K.**, Human Rights in Russia and the Former Soviet Republics, Repatriation of Ethnic Groups, p. 90.

⁴ Ռոստովի իրավապահ մարմինների մոտ հայտնվեցին Թուրքիայում տպագրված քարոզչական թերթիկներ, որտեղ թուրքերենով և ռուսերենով գրված էր, որ ամբողջ Հյուսիսային Կովկասը, Կուբանը, Դոնը և Աստրախանը թուրքական տարածքներ են և պետք է վերադարձվեն իրենց «իսկական տերերին»:

⁵ <http://hunger.cwsglobal.org/PDFs/refugees/MeskhetianTurksQA.pdf>, Church World service, Meskhetian Turks resettlement, 15:00, 20.03, 2013.

Թուրքիայի Ազգային Մեծ ժողովը (ԹԱՄԺ) ընդունեց համար 3835 օրենքը «Թուրք-մեսխեթցիների ներգաղթի և Թուրքիայում վերաբնակեցնելու մասին», որը երաշխավորում էր նրանց տեղափոխումը Թուրքիա ինչպես ինքնուրույն, այնպես էլ համապատասխան վերաբնակեցման ծրագրերով, սակայն պայմանով, որ նրանց թիվը չգերազանցի տարեկան սահմանաչափը: 1992-1993 թթ. մոտ 500 թուրք-մեսխեթցիների ընտանիք բնակություն հատատեց Թուրքիայում, սակայն նրանք չդարձան Թուրքիայի քաղաքացի՝ Օրենքը նախատեսում էր ստեղծել նաև հատուկ հանձնաժողովներ, որոնց միջոցով նրանք պետք է ազատվեին բոլոր տեսակի հարկերից, վճարներից և տուրքերից (ի դեպ, Թուրքիայում նրանց անվանում էին ախիսկյան թուրքեր)²:

1999 թ. Վրաստանը, Եվրոպայի խորհուրդ մտնելով, պարտավորվեց թուրք-մեսխեթցիների հայրենադարձությունն ապահովել մինչև 2011 թ. և դրա համար 40-50 մլն եվրո ֆինանսական օգնություն ստացավ: Սակայն մինչ այժմ վրացական իշխանությունները չեն կատարել իրենց ստանձնած պարտավորությունները:

Թուրք-մեսխեթցիներն ունեն մի շարք կազմակերպություններ, որոնք կոչված են պաշտպանել իրենց իրավունքներն ու շահերը: 1991 թ. Ալմա Աթայում և Տաշքենդում հիմնվեց թուրք-մեսխեթցիների Կենտրոնական ասոցացիան: Այս կազմակերպության ղեկավարները նշում են, որ իրենց նպատակն է թուրք-մեսխեթցիներին դեպի Թուրքիա բնակեցնելը, որը նրանք համարում են իրենց հայրենիքը³: Նման մոտեցումով նրանք էականորեն տարբերվում են մյուս կազմակերպություններից, որոնց համար թուրք-մեսխեթցիների վերաբնակեցման վայր դիտվում է միայն Վրաստանը: Բացի Կենտրոնական ասոցիացիայից ավելի հայտնի ու ազդեցիկ է «Վաթան» (թուրքերենից թարգմանաբար՝ «Հայրենիք») կազմակերպությունն է. որը հիմնվել է 1990 թ.: «Վաթանի» հիմնական նպատակներն են հասնել 1944 թ. բռնազաղթի անարդարացի լինելու ճանաչմանն ու թուրք-մեսխեթցիների վերաբնակեցմանը բնակության նախկին տարածքներում, մասնավորապես՝ Ախալցխայում: Կազմակերպությունը գտնվում է Անկարայի վերահսկողության ներքո և վարում է հիմնականում Թուրքիայի շահերին համապատասխան քաղաքականություն: Ընդդեմ «Վաթանի» Վրաստանի կառավարությունն ստեղծել էր մեկ այլ կազմակերպություն՝ «Խսնա» (վրացերենից թարգմանաբար «Փրկություն»), որի նպատակների մեջ նույնպես մտնում էր մեսխեթցիների վերաբնակեցումը Վրաստանում, սակայն նրանք չէին սահմանափակվում միայն Սամցխե-Ջավախեթի շրջանով, այլ կոչ էին անում վերադառնալ ընդհանրապես Վրաստան⁴: Այս ամենը նախ և առաջ պայմանավորված է թուրք-մեսխեթցիների՝ տվյալ տարածքում բնիկ լինել-չլինելու մասին տարբեր ու հակասական կարծիքներով: «Խսնան» թուրք-մեսխեթցիներին համարում էր մահմեդականացած վրացիներ ու չէր ճանաչում նրանց՝ որպես ազգային փոքրամասնություն: Նման մոտեցում ուներ նաև «Խսնայի» ժառանգորդը՝ Վրացի վերաբնակների միությունը, իսկ ըստ «Վաթանի»՝ թուրք-մեսխեթցիները թուրքեր են ու Վրաստան վերադառնալու պարագայում անպայման նրանք պետք է ստանան ազգային փոքրամասնության կարգավիճակ:

Այսպիսով, այսօր թուրք-մեսխեթցիների հարցը դեռևս մնում է չլուծված: Նրանց իրենց հին բնակավայրեր վերադարձը բխում է Թուրքիայի և Ադրբեջանի շահերից,

¹ Jin Ch., p. 89.

² <http://www.kavkazoved.info/news/2012/02/23/ahyanskieskie-tjurki-i-turecko-gruzinskie-otnosheniya-segodnja.html>, Мэхи К., Ахьские тюрки и турецко-грузинские отношение сегодня, 13:00, 10.03.2013. 2001 թ. Թուրքիայում հրատարակվում է «Ahiska» ամսագիրը, որը 2007 թ. անվանվում է «Bizim Ahiska» (մեր Ախիսկա): Այս ամսագրի գլխավոր խմբագիր Յուլուս Չեիրեկը նշում է, որ «Ախիսկ» տեղանվան տակ պետք է հասկանալ ամբողջ Սամցխե-Ջավախքը: Թուրքիայում ստեղծված քարտեզի համաձայն Ախիսկայի շրջանը ընդգրկում է Ադիգեյան, Ախալցխայի, Ախալքալաքի և Նինոծմիդյայի շրջանները:

³ Jin Ch., p. 90.

⁴ http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=539&sphrase_id=23259 Շաքարյան Ա., Թուրք-մեսխեթցիները տարածաշրջանային գործոն, 20:00, 20.03.2013:

քանի որ դրանով կավելանա մահմեդական տարրը Վրաստանում, Ադրբեջանը և Թուրքիան իրար հետ կկապվեն մահմեդական բնակչություն ունեցող տարածքով, իսկ Հայաստանը բոլոր կողմերից կհայտնվի մահմեդական շրջափակման մեջ: Թուրք-մեսխեթցիների վերադարձը չի բխում Վրաստանի շահերից, քանի որ նրանց ներկայությամբ երկրի դեմոգրաֆիկ խնդիրը ավելի կբարդանա: Երկրի հարավային շրջանների մահմեդական բնակչության ավելացումը կարող է նպաստել հետագայում նրանց կողմից անջատողական ձգտումների առաջացմանը: Նման պարագայում Թուրքիան և Ադրբեջանը գերծ չեն մնա Վրաստանի մահմեդականների շահերը պաշտպանելուց և նրանց անջատողական տրամադրությունը կծառայեցնեն իրենց նպատակներին: Վրացական իշխանությունները մյուս կողմից նրանց վերաբնակեցնելով Ջավախքում կարող են այստեղ թուլացնել հայերի ազդեցությունը և վրացիների դեմ պայքարելու փոխարեն հայերն ու թուրք-մեսխեթցիները կարող են պայքարել միմյանց դեմ: Բայց վրացական իշխանությունները նախընտրում են երկրում որպես անջատողական ուժ մահմեդականների փոխարեն տեսնել հայերին: Բացի այդ չի կարելի պնդել որ Ջավախքում հայերի և մուսուլմանների միջև լարված իրադրության առաջացումը միանշանակորեն բխում է Վրաստանի շահերից: Վրաստանի իշխանություններին առավել ձեռնտու է երկրում խաղաղության պահպանումը, քանի որ ազգային բախումների անմիջական հետևանքը կարող է լինել վերոնշյալ ազգերի պետությունների միջամտությունը: Ըստ որոշ ռուս ռազմական հետազոտողների Վրաստանի ՆԱՏՕ-ի անդամ դառնալուց հետո Ռուսաստանը կխրախուսի Ջավախքի անեքսիան Հայաստանի կողմից¹: Նման պարագայում նրանց համար ավելի նախընտրելի է որպես երկրի անջատողականներին սատարող ուժ տեսնել Հայաստանին՝ Թուրքիայի և Ադրբեջանի փոխարեն: Վրաստանը հաճախ թուրք-մեսխեթցիների վերադարձը խոչընդոտում է նաև հայերի միջոցով՝ օգտվելով այն հանգամանքից, որ հայերին ևս ձեռնտու չէ թուրք-մեսխեթցիների վերադարձը: Վրացիների կողմից որպես բնակության վայր նրանց առաջարկվում է Քվեմո-Քարթլին, որը ստրատեգիական առումով չի բխում Թուրքիայի և Ադրբեջանի շահերից²: Բացի այդ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ 1944 թ. բռնազաղթման ենթարկված թուրք-մեսխեթցիների երկրորդ կամ երրորդ սերունդն է այսօր ապրում և նրանք այնքան էլ կապվածություն չունեն Մեսխեթի հետ: Այդ սերունդի ներկայացուցիչները ծնվել և մեծացել են այլ միջավայրում և նրանք ինտեգրվել են այդ հասարակությանը: Այդքանից հետո նրանց մոտ այնքան էլ մեծ չի ցանկությունը վերադառնալ Վրաստան: Բացի այդ նրանց համար դժվար կլինի ինտեգրվել վրացական հասարակությանը քանի որ նրանց մեծ մասը վրացերեն չգիտի: Իսկ վրացական կառավարությունը նրանցից պահանջում է վերադառնալ Վրաստան լիարժեք գրավոր և բանավոր վրացերենին տիրապետելուց հետո: Այդ իսկ պատճառով մոտակա ժամանակաշրջանում թուրք-մեսխեթցիների վերադարձի խնդիրը ամենայն հավանականությամբ իր լուծումը չի ստանա: Նման պարագայում թուրք-մեսխեթցիների Վրաստան վերադառնալու խնդիրը, որը այլևս համար մեկ խնդիրը չէ հենց իրենց՝ թուրք-մեսխեթցիների համար, ուղղակի գործիք է դարձել տարբեր պետությունների ձեռքում, որոնք երբեմն այն ծառայեցնում են իրենց շահերին:

¹ Sabanadze N., Georgia's Ethnic Democracy: Source of Instability, The Fate of Ethnic Democracy in Post-Comunist Europe, Butapest, 2005, p. 129.

² <http://www.kavkazoved.info/news/2011/08/28/problema-turok-meshetincev-v-zalozhnikah-geopolitiki.html>, Егоров А., Проблема турк-месхетинцев в заложниках геополитики, 15:00, 03.02.2013.

ПРОБЛЕМЫ ТУРОК-МЕСХЕТИНЦЕВ

Ваагн Акопян

Турки-месхетинцы, мусульмане Суна, проживали до 1944 года в Грузии. Но в 1944 году они были депортированы из страны советской властью. После распада Советского Союза они не вернулись на свои земли, и проблема их переселения все еще остается нерешенной, несмотря на тот факт, что грузинские власти обязались принять их обратно. Турки-месхетинцы считают себя этническими турками, а грузинские власти – грузинами, принявших мусульманство. Это не приводит к взаимопониманию заинтересованных сторон. Для создания возможных решений переселения турок-месхетинцев необходимо проанализировать политическую_ заинтересованность сторон, а для более глубокого анализа рассмотреть демографические изменения территории Месхети на протяжении всей истории её существования.

ON ISSUES OF MESKHETIAN TURKS

Vahagn Hakobyan

Meskhethian Turks are Sunni Muslims who have lived in the north of Georgia until 1944. In 1944 they were deported to other countries by Soviet authorities. After the collapse of the Soviet Union they did not return back and their problem keeps on being unresolved, although the Georgian authorities have taken obligations to organize their resettlement. Meskhethian Turks consider themselves as belonging to the Turkish ethnos, but the Georgian authorities consider them ethnic Georgian people. These two different points of view become reason of such problems because of which the Georgian authorities and other interested sides can't come to an agreement. To find solutions of this problem it is necessary to analyze the political interests of the above mentioned sides and think about demographic changes in the territory of Meskhethi throughout history to carry out a deep analyze of their origin.

ՄԱՅՄԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Տաթևիկ Խանադյան

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ. պ.գ.դ. պրոֆ. Յ. Մարգարյան

Էլփոստ՝ tatevkhaghyan@gmail.com

Վրաստանը եթնիկ և դավանական առումով բարդ խճանկար ունեցող երկիր է: Այստեղ բնակվում են թե՛ քրիստոնյա, թե՛ իսլամ փոքրամասնություններ: Վրաստանի տարածքում, իսլամի համաշխարհային կրոն դառնալուց ի վեր, միշտ էլ եղել է մուսուլմանական զգալի բնակչություն: Ենթադրվում է, որ առաջին մուսուլմանները Տփղիսում հայտնվել են 7-րդ դ. երկրորդ կեսին՝ արաբական նվաճումների ժամանակ: Հաբիբ իբն Մասլամայի՝ արաբական զորքերի հրամանատարի հետ 654 թ. կնքած պայմանագրով՝ տփղիսեցիներից նրանք, ովքեր մուսուլմանություն էին ընդունում, դառնում էին արաբների եղբայրները և ունեին նույն իրավունքները, իսկ փաստացի՝ նույն արտոնությունները, ինչ որ մյուս մուսուլմանները: Հետագա դարերում (հատկապես 8-րդ դ. մինչև 12-րդ դ. սկիզբը) մուսուլմանները կարևորագույն տնտեսական և քաղաքական դերակատարություն ունեին քաղաքի կյանքում¹:

Իրավիճակը սկզբունքորեն փոխվեց 1122 թ. Դիզդորի ճակատամարտից հետո, երբ Դավիթ 4-րդ Շինարար թագավորը նվաճեց քաղաքը՝ նրան վերադարձնելով քրիստոնեական պետության մայրաքաղաքի դերը: Միջին դարերում և նոր ժամանակների սկզբներին վրացական թագավորության և իսլամական աշխարհի ինտենսիվ շփումների շնորհիվ իսլամը լայն տարածում գտավ Վրաստանում: Բացի այդ, երկիր ներթափանցեցին մեծ թվով թուրքալեզու մուսուլմաններ, որոնք ցարական շրջանում հայտնի էին որպես կովկասյան թաթարներ, իսկ խորհրդային ժամանակաշրջանում՝ ադրբեջանցիներ: Մինչև ցարական շրջանի ավարտը Վրաստանի բնակչության 20 %-ը մուսուլմաններ էին: Ընդհանուր առմամբ, ռուսական կայսերական իշխանություններն ավելի հանդուրժող էին Վրաստանի մուսուլմանների նկատմամբ, քան խորհրդային իշխանությունները: Խորհրդային պետությունը 1920-1930-ական թթ. արշավ սկսեց կրոնական հաստատությունների և եկեղեցական իշխանությունների դեմ: Հետագայում ԽՍՀՄ-ի կողմից ավանդական կրոնների, ներառյալ՝ իսլամի նկատմամբ վերաբերմունքի որոշակի մեղմացում նկատվեց: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում խորհրդային իշխանությունները ձևավորեցին չորս մուսուլմանական կրոնական վարչություններ՝ վերահսկելու ԽՍՀՄ-ում իսլամի հետ կապված հարցերը²: Այս վարչությունների գործառույթներից էին հոգևորականների ուսուցումը և նշանակումները, մզկիթների գործունեության ծավալումը, գիտաժողովների և սեմինարների կազմակերպումը, գրքերի, պարբերականների և օրացույցների տպագրությունը: Հարավային Կովկասի համար կազմավորվեց այդպիսի մի ընդհանուր վարչություն, որի կենտրոնը Բաքվում էր: Այս արշավը և հետագայում էլ Վարչության և այլ պաշտոնական հաստատությունների ստեղծումը խորհրդային Միության տարածքում առաջացրին մի իրավիճակ, երբ իսլամը և համապատասխանաբար իսլամական ծիսակարգերը սկսեցին զարգանալ ոչ պաշտոնական համատեքստում, և այդ ոչ պաշտոնական արարողակարգերն ավելի

¹ Asatrian G., Margarian H., The Muslim Community of Tiflis (8th-9th centuries), "Iran and The Caucasus", 8.1, 2004, p. 29-30.

² Sanikidze G., Walker Ed., Islam and Islamic practices in Georgia, BPS Working Paper Series, University of California, Berkeley, 2004, p. 3.

մեծ կարևորություն ձեռք բերեցին¹: Վրաստանում, ինչպես և Խորհրդային Միության մյուս վայրերում, իսլամը զգալիորեն «վերածնունդ ապրեց գորբաչովյան շրջանում և հետխորհրդային ժամանակաշրջանի սկզբին՝ հիմնականում ի հաշիվ արտաքին, մասնավորապես թուրքական և իրանական իսլամական կազմակերպությունների աջակցության»²:

Ըստ վրաց գիտնականների՝ 1989 թ. հանրապետությունում ապրում էր 640.000 մուսուլման կամ հանրապետության բնակչության 12 %: Սակայն պետք է նշել, որ ճշգրիտ թիվը դժվար է բացահայտել, քանի որ 1989 թ. մարդահամարը կրոնական պատկանելության վերաբերյալ ցուցումներ չունեց, և մուսուլմանների քանակը որոշվում էր՝ հիմնվելով ավանդաբար մուսուլման համարվող ազգությունների տվյալների վրա: Բացի այդ, Վրաստանի հարավ-արևմուտքում Թուրքիային սահմանակից Աջարայի Ինքնավար Հանրապետության բնակչության մի մասը ևս մուսուլման է:

2002 թ. մարդահամարը թեև պարունակում էր կրոնի վերաբերյալ հարցադրում, սակայն, ելնելով երկրում տիրող անկայուն իրավիճակից, այս մարդահամարի վստահելիությունը վիճելի է: Այս ամենով հանդերձ, մարդահամարը միակ քիչ թե շատ ճշգրիտ աղբյուրն է. 2002 թ. մարդահամարի տվյալներով՝ Վրաստանի մուսուլման բնակչության թիվը 433 784 է, այսինքն՝ ընդհանուր բնակչության 9.9 %: Վրաստանի մուսուլման բնակչության քանակի վերաբերյալ մուսուլման համայնքի ներկայացուցիչների և գիտնականների եզրահանգումներին կարող ենք հանդիպել նաև ԶԼՄ-ներում: Ըստ այս մասնավոր գնահատականների՝ մուսուլմանների թվաքանակը Վրաստանի տարածքում 300.000 է, «European Stability Initiative»-ը հրապարակում է 430.000 թիվը, Մեծ Բրիտանիայում գտնվող «Muslim Education Trust» կազմակերպությունը՝ 574.179-ը (ընդհանուր բնակչության 11 %)՝³, ադրբեջանական զանգվածային լրատվամիջոցներում մահմեդականների թվաքանակը հասցվում է 500.000-ի⁴:

Վրաստանում մուսուլմանությունը դավանող էթնիկ խմբերից ամենամեծը ադրբեջանցիներինն է (ըստ վերջին՝ 2002 թ. մարդահամարի՝ 284.761 մարդ կամ բնակչության 6,1 %-ը)՝ ամենամեծ ազգային փոքրամասնությունը⁵: Ադրբեջանական աղբյուրները Վրաստանի ադրբեջանցիների մասին խոսելիս հաճախ նշում են 500.000 թիվը՝ հիմնվելով «ոչ պաշտոնական» աղբյուրների վրա: Նրանք հիմնականում մուսուլմաններ են, գլխավորապես բնակվում են հարավային Քվեմո Քարթլի (ադրբեջանական տարբերակով՝ Բորչալու) երկրամասում, որը ներառում է Մառնեուլի, Գարդաբանի, Բուլնիսի և Դմանիսի շրջանները: Տփղիսում բնակվում է 15.654 ադրբեջանցի, իսկ Կախեթում՝ 33.600: Ադրբեջանցիների մեծամասնությունը իսլամի շիա Ճյուղի հետևորդ է⁶:

Մյուս խումբը Աճարայի Ինքնավար Հանրապետության (այսուհետ՝ Աճարա) վրացի մուսուլմաններն են: Ըստ Աճարայի վիճակագրության բաժնի 2006 թ. հաշվարկների՝ մուսուլմանները և ուղղափառ քրիստոնյաները կազմել են ընդհանուր բնակչության համապատասխանաբար 30 և 63 %-ը: 1990-ական թթ. սկզբին մուսուլմանները Աճարայում եղել են 130.000, քրիստոնյաները՝ 175.000:

Մուսուլմաններ կան նաև Վրաստանի այլ շրջաններում՝ այդ թվում՝ մայրաքաղաքում: Իսլամադավան են նաև Պանկիսի կիրճում բնակվող և վայնախյան

¹ Saroyan M., Rethinking Islam in the Soviet Union Location: Global, Area, and International Archive, University of California, Berkeley, 1997, p. 27 (<http://www.escholarship.org/uc/item/2s90w4tw> - 29. 12.09).

² Balci B., Motika R., Islam in Post-Soviet Georgia, “Central Asian Survey” (September 2007), 26(3), p. 335.

³ Տե՛ս <http://islamicweb.com/begin/population.htm>:

⁴ Մկրտչյան Ս., Վրաստանի մուսուլմանները, <http://javakhk.livejournal.com/308883.html>:

⁵ Նույն մարդահամարի արդյունքներով հայերը կազմում են ընդհանուր բնակչության 5,7 %:

⁶ Weattley J., Obstacles Impeding the Regional Integration of the Kvemo Kartli Region of Georgia, ECMI Working Paper # 23.

էքնիխ խմբին պատկանող քիստերը (մոտ 12.000), որոնց շրջանում տարածում ունի սուֆիականությունը:

Բացի նշված խոշոր խմբերից, Վրաստանում բնակվում են մի քանի այլ փոքրաթիվ մուսուլմանական խմբեր՝ արխազ բնակչության մի փոքր հատված, ավարներ, թաթարներ, ղազախներ, ուզբեկներ, քրդեր, տաջիկներ և այլն (ըստ 2002 թ. մարդահամարի տվյալների):

Մեկ այլ իսլամադավան խումբ՝ թուրք-մեսխեթցիները, մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը զգալի թվով ապրում էին Վրաստանի հարավ-արևմուտքում: 1944 թ. մոտ 100.000 մեսխեթցիների՝ Վրաստանից տեղահանման որոշում ընդունվեց Ստալինի կողմից: Վերջինս մտավախություն ուներ, որ նրանք կարող էին համագործակցել գերմանացիների կամ թուրքերի հետ: 2007 թ. Վրաստանի կառավարությունն ընդունեց հայրենադարձության մասին օրենքը. պարտավորություն, որ երկիրը ստանձնել էր Եվրախորհրդի առջև դեռևս 1999 թ.: Ըստ մասնագիտական մի զնահատման՝ 2001 թ. Վրաստանում ապրում էր 1.000 մեսխեթցի: Ըստ Ա. Ծերեթելու՝ Վրաստանի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահին 2009 թ. հուլիսին 2.000 մեսխեթցի ընտանիք համապատասխան դիմում է հանձնել հայրենադարձվելու համար¹:

Վրաստանում ապրում են նաև այլ մուսուլմաններ՝ տարբեր երկրների քաղաքացիներ, որոնք Վրաստանում են դիվանագիտական ծառայությամբ, բիզնեսի, կրթական կամ զբոսաշրջության նպատակներով:

Հարևան Ադրբեջանում իսլամի դիրքերի ամրապնդումը և իսլամական գործոնի աշխուժացումը ցույց է տալիս, որ Վրաստանի քաղաքական կյանքում ևս իսլամի դերը աստիճանաբար աճելու է, առավել ևս, որ իսլամական բնակչությունը Վրաստանում բազմանալու կայուն միտում է դրսևորում: Եթե այս երևույթներին ավելացնելու լինենք քաղաքական առումով հզոր թուրքիայի աջակցությունը և տնտեսապես բարգավաճող Ադրբեջանի հովանավորողական քաղաքականությունը, ապա պարզ կդառնա մուսուլմանական գործոնի ողջ վտանգավորությունը Հայաստանի անվտանգության առումով: Վրաստանում իսլամական գործոնի ակտիվացմամբ կարող են հետաքրքրված լինել ոչ միայն թուրքիան և Ադրբեջանը, այլ նաև Ռուսաստանը:

ИСЛАМ В ГРУЗИИ

Татевик Ханагян

В 736-1122 гг. Тбилиси был важным культурно-религиозным центром местного мусульманского эмирата, хотя грузинское население окружающих сельских регионов сохраняло приверженность христианству. В период между 1080 и 1480 годами, ислам находится в состоянии упадка. Однако в конце XVI века с усилением власти персидских царей на территории восточной Грузии поселяется значительное количество исламизированных тюркских групп, которые стали основой азербайджанского этноса.

Западная Грузия, перешедшая под управление Османской империи, подвергается интенсивной исламизации в период между XV и XVIII веками, в результате которой из состава грузинского этноса выделяются субэтнические группы грузин – лазы, аджарцы и чвенебури – часть которых подвергается сильной тюркизации, принимая участие в этногенезе тюрк-месхетинцев.

¹ Տե՛ս <http://www.civil.ge/eng/article.php?id=21252&search=mekshetian>:

ISLAM IN GEORGIA

Tatevik Khanaghyan

Islam is quite common in Georgia. The Muslims were involved in social life of Georgia, creating their worship centers, educational institutions already in the 20th century by the Azerbaijanis of Georgia, who spread rapidly Georgia.

The fact that Muslims form Georgia demographic growth making only religious minority, and which constitute the overwhelming majority of Azerbaijanis and Turks claim on the cultural values of the past, trying to strengthen these baseless claims Georgia's economic, political engagement, undermine the government adopted policy, perhaps in Georgia, no matter that the latter will have to consider the concept of providing benefits to the national minorities and reconsider its policy with neighbouring countries, the prospect of creating a united platform of struggle.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԹԵՐՐԱՆՈՒՄ

Տիգրան Սարգսյան

ԳԳ ԳԱԱ, ՀԱԻ հայցորդ, կրտսեր գիտաշխատող

Գիտ. դեկ.՝ պ.գ.դ., պրոֆ. Յ. Խառատյան

Էլփոստ՝ tigransargisyan@yandex.ru

Հանրահայտ է, որ ԻԻՀ մայրաքաղաք Թեհրանի բնակչությունը խիստ բազմազգ է: Սակայն Թեհրանում բազմազգությունը գործնականում նկատելի չէ: ԻԻՀ բնակչությունը բնութագրող գլխավոր քաղաքական տերմինը՝ «իրանցի», առհասարակ զգալիորեն «ծածկում է» երկրի բնակչության էթնիկությունը, իսկ եթե այդ բնակչությունը նաև շիիզմի հետևորդ է, ընդհանրապես առաջնային է դառնում ինքնության կրոնական բաղադրիչը՝ «իրանցի» տերմինը դարձնելով ինքնության առաջնային բաղադրիչ: Այս հավաքական «մենքությունը» առավել ակտիվ է արտահայտված քաղաքներում, իսկ մայրաքաղաք Թեհրանում այն պարզապես ցայտուն է: Թերևս այստեղ զգալի դեր է խաղում նաև այն հանգամանքը, որ Թեհրանի բնակչությունը մեծ չափով տիրապետում է ֆարսիին, ինչը միշտ չէ, որ պարտադիր է զավառներում, ինչպես նաև այստեղ զգալի է մշակութային համահարթեցումը՝ հազուստի միօրինակությունը, հասարակական հարաբերությունների «քաղաքացունը» և «մայրաքաղաքացունը», սովորութային իրավունքի նորմերի թեհրանյան զգալի ընդհանրությունը և այլն:

Թեհրանում զբոսնելիս մեծ դժվարությամբ կարող ես տարբերակել որևէ էթնիկ խմբի ներկայացուցչի, նույնիսկ քրիստոնյա բնակչության դեպքում: Բացի այդ, որպես ինքնության բնութագիր էթնիկությունը զգալի չափով ստորադասված է: Շատ քիչ ազգերի ներկայացուցիչներ են իրենց անվանում իրենց էթնիկ պատկանելության անվանումով: Իմ ուսումնասիրության ընթացքում Թեհրանում ապրող հայերից, քրդերից (քորդերից), ադրբեջանցիներից (ազերբայջանցիներից), ֆարսերից բացի ուրիշ որևէ ազգության ներկայացուցչի չեն հանդիպել, ովքեր միանգամից իրենց անվանեն ոչ թե իրանցի, այլ իրենց էթնիկական անվանումով: Կատարված հարցումների ժամանակ (Թեհրան 2012 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր) ֆարսերն իրենց նաև տեղանուններով են անվանում, օրինակ՝ հյուսիսից, սպահանցի, յազդեցի: Թեհրանում շատ տարօրինակ հարց է ազգային պատկանելության մասին հարցը: «Արդյոք դուք ի՞նչ ազգի կամ ցեղի եք պատկանում»: Այս հարցը հնչելուց հետո երբեմն անմիջապես տիրում է որոշ լռություն, որից հետո կարճ և հստակ հնչում է «իրանցի եմ» պատասխանը, իսկ երբ փորձ է կատարվում ավելի հստակեցնել հարցը, ապա մեծ մասը, անկախ կրթական, գիտական և սոցիալական դիրքից, հարցին զարմացած պատասխանում է հարցով, թե ինչ նկատի ունեն, երբ հարցնում են տվյալ անհատն ինչ ազգի կամ ցեղի է պատկանում: Եղել են նույնիսկ դեպքեր, երբ զրուցակցիս համար կարևոր է եղել, թե ինչ նպատակով են այդ հարցը տալիս: Ոմանք հարցը հասկանալուց հետո փորձում են իրենց նախնիների ծագումն ու էթնիկ պատկանելիությունը վերհիշել, հաճախ իրենց մեջ մտաբերում են Իրանի տարբեր էթնիկ խմբերի խառն ամուսնությունների շառավիղ, քանզի գրեթե բոլոր մահմեդականները միմյանց հետ ամուսնանում են (սուննիները գերադասում են չամուսնանալ շիաների հետ, բայց նախընտրությունը կրկին պայմանավորված է կրոնով) և կազմում են խառն ամուսնություններ: Բացառություն կարելի է համարել հայերին, ասորիներին և թերևս զրադաշտականներին, ովքեր, Իրանում հանդիսանալով կրոնական (քրիստոնյա) փոքրամասնություն, արդեն իսկ սոցիալական որոշ մեկուսի խումբ են և հենց իրենք էլ բացառել են այլ էթնիկ խմբերի՝ հատկապես մահմեդականների հետ ամուսնությունը: Ճիշտ է, պետք է ավելացնել, որ Իրանում խստորեն պահպանվում է մահմեդականի հետ ամուսնանալիս կրոնը փոխելու և

մահմեդականամալու պարտադրանքը: Այլ կերպ ասած, ամուսնությունները կողմնորոշված են ոչ թե էթնոլեզվական, այլ կրոնական պատկանելությամբ:

Թեհրանում հատկապես մեծ թիվ են կազմում էթնիկ խառնամուսնությունները, որոնց արդյունքում աստիճանաբար առաջանում է բնակչության մի նոր տեսակ, որն իրականում չի կողմնորոշվում, թե իր իրական ազգային պատկանելիությունը որն է, և դա նրանց այդքան էլ չի մտահոգում: Նրանք իրենց մեջ որոշակիորեն կրում են իրենց նախնիների մշակույթը, սակայն թեհրանը, լինելով երկրի մայրաքաղաքը, ինքն իր հերթին ստեղծել և շարունակում է ստեղծել մի ընդհանուր մշակութային արեալ, որն իր մեջ կլանել է իր ներսում ապրող բոլոր էթնիկ խմբերի մշակույթը: Գուցե դա է պատճառը, որ այսօր թեհրան քաղաքն արտաքնապես իրենից ներկայացնում է ոչ թե էթնիկ խմբերի բազմություն, այլ իր մեջ միաձուլված մեկ ընդհանուր լեզվամշակութային արժեքներ կրող բնակչություն: Այստեղ կարող ենք տեսնել իրար կողքի խոյացող տարբեր կրոնական կառույցներ, օրինակ՝ Քարին խան զանդ փողոցում է գտնվում Սուրբ Սարգիս առաջնորդամիստ հայկական եկեղեցին, իսկ նրա հարևանությամբ՝ Մոֆաթեհ փողոցում, իսլամական մզկիթը, ռուսական ուղղափառ եկեղեցին, քիչ ներքև՝ հունական օրթոդոքս եկեղեցին: Կրոնական հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի օրինակ կարելի է համարել ամեն տարի Մոհառամ ամսին Աշուրայե Զոսեյնին մկիրված միջոցառումների կազմակերպման համար Զայ Առաքելական եկեղեցու կողմից ունեցած համեստ միջոցների հաշվին կատարված հանգանակությունը¹, ինչը մեծ հարգանքով է ընդունվում իսլամադավան բնակչության կողմից:

Նոր սերնդի որոշ ներկայացուցիչների կողմից իր էթնիկ ինքնության բացակայությունն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Սուբյեկտիվ պատճառներից կարելի է համարել ԻԻԶ Սահմանադրությունը, որում խոսք անգամ չկա կոնկրետ որևէ էթնիկ խմբի կամ ազգության մասին, բոլորն իրանցիներ են, կան միայն կրոնական փոքրամասնություններ և ըստ Սահմանադրության 13-րդ հոդվածի՝ քրիստոնյա ,գրադաշտ և հրեա իրանցիները պաշտոնապես ճանաչված կրոնական փոքրամասնություններ են, որոնք օրենքի սահմաններում ազատորեն կարող են կատարել իրենց կրոնական ծեսերը, ինչպես նաև, համաձայն իրենց կրոնի, զբաղվել նոտարական գործերով և կրոնագիտական աշխատանքներով: Այսպիսով, պետությունը պաշտոնապես ճանաչում և ընդունում է միայն որոշ կրոնական փոքրամասնությունների ինքնությունը և դրանով պայմանավորված՝ նրանց մասնավոր իրավունքները և ներքին որոշ ինքնուրույնությունը: Նույն Սահմանադրության մեջ կա հետաքրքիր հոդված ևս, որում ընդհանրական ձևով հիշատակվում է երկրում գոյություն ունեցող այլ էթնիկ խմբերի ներքին սովորույթների, մշակութային դրսևորումների իրավունքների մասին: Հոդված 15-ում նշվում է. «Իրանի ժողովրդի պաշտոնական գիրը և ընդհանուր լեզուն պարսկերենն է: Պաշտոնական փաստաթղթերը, գրագրությունը, տեքստերը և դասագրքերը պետք է կազմվեն այդ լեզվով և գրով, սակայն տեղական և էթնիկ խմբերի լեզուների օգտագործումը մասնուլում և զանգվածային լրատվամիջոցներում և պարսկերեն լեզվին զուգահեռ նրանց գրականության ազատ դասավանդումը թույլատրելի է»²:

Հայերը, հաստատվելով Իրանում, դարեր շարունակ փորձել են զերծ մնալ այլազգիների հետ ամուսնությունից, և այս արգելք դարձած սովորույթն այնքան է արմատավորված եղել իրանահայերի մոտ, որ համայնքի կողմից արգահատանքի է արժանացել այլազգիների, մանավանդ մահմեդականների հետ ամուսնության փորձ ունեցող ընտանիքը: Հայերի ամուսնությունը կատարվում է ըստ հայկական ավանդության և ծիսակարգի: Պսակը կատարվում է հայկական եկեղեցում և այն

¹ Թեհրանի Մաջիլիս (Ձեյթուն) քաղաքամաս, 2.000.000 ռեալ. 2010 թ. դեկտեմբեր:

² Տե՛ս «ԻԻԶ Սահմանադրության» (հիմնական օրենք), թարգմ. Գ. Բադալյանի, Թեհրան, 2005:

արձանագրվում է եկեղեցու ծխական մատյանում: Եկեղեցու կողմից տրված ամուսնական վկայականն ընդունվում և ճանաչվում է պետության կողմից:

Ինչ վերաբերում է մահմեդականների, ապա նրանց ամուսնությունը կատարվում է Քաղաքացիական օրենսգրքի համաձայն, որն էլ հիմնված է Շարիաթի օրենքների և Ղուրանի վրա: Իսլամում թույլատրվում է բազմակնությունը և խրախուսվում է մոտ ազգականների միջև ամուսնությունը:

Թեհրանում իմ կողմից կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ էթնիկական համահարթեցմանը զուգահեռ խստորեն տարանջատված են սեռերի սոցիալական դերերը, և սա սկսվում է վաղ մանկության և դեռահասության շրջանից:

Լինելով Իսլամական Հանրապետություն և հիմնվելով կրոնական դոգմաների վրա՝ Իրանում արգելվում է սեռերի համատեղ դաստիարակությունը կրթարաններում՝ մանկապարտեզներում և դպրոցներում: Միայն բարձրագույն ուսումնական հաստատություններում է, որ տղաները և աղջիկները միևնույն լսարանում են սովորում: Սակայն նույնիսկ այստեղ երբեմն աղջիկների և տղաների նստարանաշարքերը միմյանցից առանձնացված են, օրինակ՝ լսարանի աջ մասում նստում են տղաները, ձախում՝ աղջիկները: Եթե բուհերում աղջիկներն ու տղաները միայն շարքերով են առանձնացված, ապա մանկապարտեզներն ու դպրոցներն ամբողջովին առանձին են: Գոյություն ունեն աղջիկների տարրական (5 տարի), ուղղեցույց (3 տարի), հիմնական (3 տարի) և նախահամալսարանական (1 տարի) դպրոցներ և նույնը՝ տղաների համար: Ամբողջովին առանձին են նաև մանկապարտեզները՝ աղջիկների և տղաների:

Առանձնացման այս օրենքը վերաբերում է Իրանի Իսլամական Հանրապետության ողջ տարածքների դպրոցներին ու մանկապարտեզներին՝ անկախ երեխաների կրոնական և ազգային պատկանելիության: Օրինակ՝ հայ երեխաները, այցելելով Թեհրանի հայոց ազգային առաջնորդարանի հովանու ներքո գտնվող հայկական դպրոցները, նույնպես ենթարկվում են առանձնացման վերոնշյալ օրենքներին: Սակայն մինչև իսլամական հեղափոխությունը հայ (կամ քրիստոնյա) տղաներն ու աղջիկները միասին են սովորել:

Աղջիկների և տղաների՝ կրոնական հիմք ունեցող այս առանձնացումը, հանգեցնում է մի շարք խնդիրների, որն իր արտացոլումն է գտնում չափահաս տարիքում: Դեռ փոքր տարիքից աղջիկները և տղաները մեծանում են իրարից անկախ միջավայրում, ինչն էլ հանգեցնում է նրանց փոխհարաբերությունների կաշկանդվածությանը: Եթե գյուղական միջավայրում որոշակի տարիքում երեխաները (տղաներն ու աղջիկները) հնարավորություն ունեն միմյանց հետ խաղալու և շփվելու, ապա քաղաքային միջավայրում, երեխաները հիմնականում առանց ծնողների տանից դուրս չեն գալիս և նրանց շրջապատը սահմանափակվում է ընտանեկան կամ ազգակցական միջավայրով, կամ նույն սեռի ներկայացուցիչների շրջապատով: Օրինակ՝ փոքր տարիքի երեխաները ծնողների ուղեկցությամբ քաղաքային այգիներում զբոսնելիս առիթ են ունենում հիմնականում խաղահրապարակներում, որոշակի չափով միմյանց հետ շփվել և խաղալ: Արդեն դեռահաս տարիքում, ակնհայտորեն տեղի է ունենում աղջիկների և տղաների շփման սահմանափակում, և երկու սեռերի շփումն իրականացվում է ընտանեկան և ազգակցական միջավայրում: Նույնիսկ հասարակական տրանսպորտում, օրինակ՝ ավտոբուսներում, առանձնացված են տղամարդկանց և կանանց նստարանները. ավտոբուսների մի մասը հատկացված է տղամարդկանց, մի առանձին մասը՝ կանանց համար¹: Այսպիսի-

¹ Վերջին ժամանակներս հասարակական մասնավոր որոշ ավտոբուսների մեջ արդեն բացակայում է բաժանախչ ձողը, սակայն սովորույթի ուժով ավտոբուսի միջնամասից դեպի ձախ նստում են կանայք, իսկ դեպի աջ՝ տղամարդիկ: Երբ տղամարդկանց հատվածում լինում են ազատ տեղեր, ապա երբեմն համարձակ կանայք գալիս և նստում են այդ պոռոներին, սակայն նույնը չի կարելի ասել հակառակ դեպքում: Օրինակ՝ տղամարդկանց հատվածում նույնիսկ կարող է կանգնելու տեղ չլինի, իսկ կանանց հատվածում ազատ նստատեղեր լինեն:

սով, երեխան փոքր տարիքից մեծանում է իր համար արհեստականորեն բաժանված միջավայրում, և մինչև չափահաս դառնալը աղջիկ-տղա շփումը դառնում է խիստ սահմանափակ:

Պատանեկան տարիքից սկսած՝ որոշ ծնողների կողմից սահմանափակվում է երեխաների հետ նույնիսկ ազգակիցների տուն այցելելը: Սա բացատրվում է նրանով, որ ըստ մահմեդական օրենքների, ոչ միայն թույլատրվում, այլ խրախուսվում է ազգականների միջև ամուսնությունը: Այս սովորույթն ունի դարերի պատմություն, սակայն այսօր ժամանակակից Իրանում այն ավելի լայն տարածում ունի գյուղական միջավայրում: Քաղաքային միջավայրում նկատվում է մոտ ազգակիցների միջև ամուսնության նվազում, ինչը, կարելի է ասել, պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Ավանդական ընտանեկան կարգերի քայքայում, որը խրախուսվում էր մոտ ազգականների միջև ամուսնությունը
- քաղաքային միջավայրում ազգականները բնակվում են միմյանցից հեռու, և նրանց միջև շփումը ոչ հաճախակի է լինում
- քաղաքային միջավայրում մեծացած երեխաները հետագայում կողակցի ընտրության հարցում ավելի ազատ են լինում և ավելի քիչ են կախում ունենում ծնողներից, պակաս են նախընտրում ազգակցական ամուսնությունները:

Սակայն սա չի նշանակում, որ ազգակցականների միջև ամուսնական կապերն անկում են ապրում, քանի որ դա ոչ միայն կրոնական, այլև դարեր շարունակ եկած ժողովրդական սովորույթ է:

Դեռահասները մինչև հասունանալն են սեռերի փոխադարձ ճանաչողություն ձեռք բերում համատարիք ազգակիցների հետ շփման միջոցով: Գուցե դա է պատճառը, որ այսպես կոչված առաջին սիրահարվածության օբյեկտ են հանդիսանում ազգակից աղջիկը կամ տղան, քանի որ սովորաբար նրանք իրենց շփման միջավայրում հակառակ սեռի օտար ներկայացուցիչների չեն հանդիպում և չփվում: Հետաքրքիր հանգամանք է այն, որ պարսկերենով հորեղբոր, հորաքրոջ, մորեղբոր և մորաքրոջ երեխաները չունեն ազգակցական տերմին, ինչպես օրինակ՝ հայերենում զարմիկ բառն է, և չեն հանդիսանում «եղբայր ու քույր»: Դա հավանաբար այն պատճառով է, որ ըստ մահմեդականների սուրբ գրքի՝ Ղուրանի, եղբոր և քրոջ միջև ամուսնությունը արգելվում է, մինչև դեռ վերոնշյալ ազգականների միջև ամուսնությունը թույլատրվում է¹:

Աղջիկների և տղաների շրջապատում հակառակ սեռի հետ շփման բացառումը, ըստ իս, իր արտացոլումն է գտել նաև լեզվի մեջ: Օրինակ՝ պարսկերենում «դուսք»՝ ընկեր բառը չունի սեռային տարբերակում: Այսպես՝ եթե աղջիկն (տղան) ասում է. «զնում են ընկերոջս տուն», ապա ոչ մեկի մտքով չի անցնում, որ այդ ընկերը հակառակ սեռի է:

Իրանում՝ տվյալ դեպքում թեհրանում, երիտասարդներն ունեն շփման միջավայրի մեծ խնդիր, և նրանց ազատ շփվելու իրավունքը փաստացի բացակայում է: Գրեթե բացակայում են ժամանցային վայրերը՝ կարաոկե բարեր, պարահրապարակներ (դիսկոտեկներ), երիտասարդական ակումբներ և այլն: Շատ դեպքերում արգելվում է նույնիսկ տնային պայմաններում կատարվող հավաքությունները, խնջույքները, որտեղ տղաները և աղջիկները միասին ուրախանում են:

Խնդիրը փոքր-ինչ փոխվում է մասնագիտական ուսումնական հաստատություններում: Եթե աղջիկը կամ տղան դարոցն ավարտելուց հետո որևէ հաստա-

¹ Տե՛ս «Ղուրան». Սուրահ 4 Ան-Նիսա, «Կանայք», Այաթ 4:23, «Արգելվում է ամուսնանալ մայրերի, դուստրերի, քույրերի, հորաքույրերի և մորաքույրների, քույրերի և եղբայրների աղջիկների, ստնտու մայրերի, նույն կաթով սնված քույրերի, զոքանջների հետ, ինչպես նաև խորթ դուստրերի, որոնց մայրերի հետ արդեն ամուսնացած եք: Արգելվում է նաև ամուսնանալ որդիների կանանց հետ, ինչպես նաև ամուսնացած լինել միաժամանակ երկու քույրերի հետ»:

տությունում շարունակում է իր ուսումը, ապա դա նրան թույլ է տալիս ունենալ ընդհանուր շփման միջավայր, օրինակ՝ համալսարանական լսարան, միջոցառումներ, բանավեճեր, որտեղ նրանք կարող են շփվել, փոխանակել կարծիքներ, համատեղ որևէ թեմայի շուրջ աշխատել: Դրանով հնարավորություն է ստեղծվում մեկը մյուսին լավ ճանաչելու, և որոշակի չափով հաղթահարելու երկու սեռերի միջև եղած բարդություները: Նմանատիպ դեպքերում հնարավոր է լինում երկու սեռերի միջև բնական ընտրությունը: Արդյունքում ստեղծված ընտանիքներն իրենց բնույթով տարբերվում են ավանդական իրանական ընտանիքներից, որտեղ գրեթե բացակայում է ամուսնացող զույգերի ազատ ընտրությունը, պահպանվում է սեռերի իրավունքների հավասարությունը, հայրիշխանությունն իր դիրքերը զիջում է համազոր իրավունքներով և պարտականություններով օժտված ընտանիքի ինստիտուտին:

Եթե երիտասարդները՝ հիմնականում աղջիկները, չեն աշխատում կամ սովորում որևէ տեղ, հետևաբար տանից քիչ են դուրս գալիս, բնականաբար, չեն ունենում շփման լայն շրջապատ և հիմնականում ամուսնանում են ծնողների (ընտանիքի) միջամտությամբ՝ ընտանքի հետ առնչություն ունեցող անձանց հետ:

СОЦИАЛЬНАЯ ЖИЗНЬ В СОВРЕМЕННОМ ТЕГЕРАНЕ

Тигран Саргсян

Хорошо известно, что население Тегерана, столицы Исламской Республики Иран, многонационально. Большинство из проживающих в этой стране называют себя просто иранцами, и очень немногие – по своей этнической принадлежности.

Кроме того, существует большое количество смешанных браков в Тегеране, в результате которых постепенно появляется новый тип населения, который на самом деле не понимает, какова его этническая принадлежность.

Проведенные нами исследования в Тегеране в течение 2010-2012 годов также показали, что существует большая дифференциация между представителя двух полов, в результате чего возникают проблемы .

Однако несмотря на религиозные и национальные различия, люди живут бок о бок с терпимостью и уважением друг к другу.

THE SOCIAL LIFE IN MODERN TEHRAN

Tigran Sargsyan

It's well known that the population of Tehran, the capital of Islamic Republic of Iran, is too multinational. Very few people call themselves by the name of their ethnicity. Majority of them call themselves just Iranian.

There is a great number of mixed marriages in Tehran as a result of which gradually a new type of population arises which actually doesn't realise what his real ethnicity is. Our studies in Tehran (2010-2012) also showed that there is a great allocation between two genders in a result of which a lot of problems rise such as the problem of social contact and free spouse choosing.

Despite religious and national differences people live side by side with toleration and respect.

**ԱՄՆ-ՎՐԱՍՏԱՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆԱՏՕ-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (2003-2013 ԹԹ.)**

Էդկար Չախոյան

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ ասիստ. Շ. Թորոսյան

Էլ. փոստ՝ edgarchakhoyan@mail.ru

Վրաստանը ռազմավարական կարևոր դիրք ու նշանակություն ունի Արևմուտքի համար, իսկ Արևմուտքն իր հերթին շարունակում է Վրաստանի համար անվտանգության և տնտեսական զարգացման երաշխավոր մնալ: Երկրի բարենպաստ աշխարհագրական դիրքը թույլ է տալիս Աև ծովի միջոցով կապ հաստատել Եվրոպայի, իսկ Կասպից ծովի միջոցով՝ Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի երկրների հետ: Վրաստանը քաղաքական շահեր է հետապնդում ՆԱՏՕ-ի, ԵՄ-ի ու ԱՄՆ-ի հետ հարաբերություններում՝ նպատակ ունենալով լիարժեքորեն ապահովել իր անվտանգությունը տարածաշրջանում: Վրաստանի համար ՆԱՏՕ-ն և ԵՄ-ն կարևոր միջազգային կազմակերպություններ են, որոնց նա ձգտում է անդամակցել՝ հետապնդելով տնտեսական և քաղաքական որոշակի շահեր¹:

Վրաստանի քաղաքական ղեկավարության կարծիքով երկրի քայլ առ քայլ ինտեգրումը Եվրատլանտյան երկրների հետ կարող է լուծել պետության անվտանգության խնդիրները և փաստացի զսպել հնարավոր հակամարտությունները: Այն նաև կարող է խթանել ժողովրդավարության ամրապնդմանը Կենտրոնական Եվրոպայի և Բալկանյան թերակղզու օրինակով:

Մ. Սաակաշվիլիի իշխանության գալուց հետո Վրաստանի իշխող վերնախավը, ելնելով երկրի անվտանգության շահերից, սկսեց ենթարկվել բոլոր այն չափորոշիչներին, որոնք անհրաժեշտ են ՆԱՏՕ-ի անդամ դառնալու համար: Ինքնին այն փաստը, որ Վրաստանն իրականացնում է եվրոպական ու Եվրատլանտյան անվտանգության համակարգերում ինտեգրվելու արտաքին քաղաքական ուղեգիծ, վկայում է այն մասին, որ ի դեմս Վրաստանի, Զարավային Կովկասում առաջ է եկել նշված եվրաինտեգրման գործընթացների իրական լուրմոտիվ:

Վրաստան-ՆԱՏՕ պատմական հարաբերությունները սկսվել են դեռևս 1994 թ. «Գործընկերություն հանուն խաղաղության» և «Անհատական գործընկերություն» ծրագրերի² շրջանակներում՝ չնայած այն հանգամանքին, որ 1993 թ. Վրաստանը դարձել է ԱՊՀ անդամ, ինչը սահմանափակում էր Վրաստանի հարաբերությունների շրջանակը Զյուսիսատլանտյան դաշինքի հետ³:

ՆԱՏՕ-ի կողմից տարածաշրջանի երկրների, այդ թվում՝ Վրաստանի հետ «Գործընկերություն հանուն խաղաղության» համաձայնագիրը ստորագրելու ժամանակից սկսած ԱՄՆ-ի ջանքերով իրականացվել են հարյուրավոր միջոցառումներ: Օրինակ՝ Վրաստանը միայն 1998 թ. ընթացքում ՆԱՏՕ-ի հովանու ներքո մասնակցել է 83 միջոցառումների, սակայն ԱՄՆ-ի ռազմական մասնագետները պաշտոնապես Վրաստան այցելել են 2002 թ. փետրվարից՝ հատուկ ջոկատների վերապատրաստման նպատակով⁴: 2002 թ. փետրվարից ՆԱՏՕ-ի շրջանակներում սկսվել է

¹ "U.S. - Georgia Forum, Georgia's Security Challenges and Policy Recommendations", Policy Brief Number One, July 2012, p. 6. http://csis.org/files/publication/120716_Georgia_Policy_Brief_One.pdf

² Վրաստանի ԱԳՆ պաշտոնական կայք, NATO-Georgia Relations, http://www.mfa.gov.ge/index.php?lang_id=ENG&sec_id=453

³ **Воробьев В.**, История СНГ, Этапы формирования Содружества Независимых Государств, «Вестник Челябинского государственного университета», 2011, № 34 (249).

⁴ «Южный Кавказ: тенденции и проблемы развития (1992–2008 годы)», ред. В. Гусейнов, Москва, 2008, с. 173.

ԱՄՆ-Վրաստան սերտ համագործակցությունը Վրաստանի հատուկ ծառայությունների ու զինված ուժերի հետ:

2002-2007 թթ. ընթացքում ԱՄՆ-ի ռազմական մասնագետների կողմից Վրաստանի զինված ուժերում վերապատրաստվել են շուրջ 8 000 զինծառայողներ, որից 2 000-ը պետք է մասնակցեին ՆԱՏՕ-ի խաղաղապահ գործողություններին¹:

Այսպիսով, վրաց-ամերիկյան համագործակցությունն ամրապնդվում է ինչպես քաղաքական ու տնտեսական, այնպես էլ՝ ռազմական ոլորտներում: Դեռևս 2004 թ. հուլիսի 14-ին ՆԱՏՕ-ի շրջանակներում կողմերի միջև կնքված պայմանագրով Վրաստանին է հատկացվել 12 մլն դոլար ռազմական օգնություն՝ ՁՈւ զինման, վրաց զինծառայողների ծառայողական պայմանների բարելավման նպատակով²:

2004 թ. սեպտեմբերին ավարտվել է Վրաստանի Պաշտպանության նախարարության ենթակազմում գտնվող խաղաղապահ «Շավնաբադ» 4-րդ գումարտակի վերապատրաստումը: Ամերիկյան հրահանգիչները նախորդ երեք գումարտակների վերապատրաստմանը հատկացրել էին 64 մլն դոլար: Վրաստանի ՁՈւ 11-րդ մոտոհրաձգային բրիգադի 470 վրացի զինծառայողներից բաղկացած 111-րդ գումարտակը մեկամսյա վերապատրաստման դասընթացը կրկին անցել է ամերիկյան հրահանգիչների անմիջական նախաձեռնությամբ և նրանց կողմից պատրաստված ծրագրերով³: Գումարտակի զինծառայողները այնուհետև մեկնել են Իրաք և Կոսովո՝ խաղաղության աջակցման առաքելությամբ:

Վրաստանում 2004 թ. վերջից սկսվել է հավելյալ 4 000 զինծառայողի վերապատրաստման ծրագրի իրականացման գործընթացը, և Վրաստանը պատրաստակամություն է հայտնել՝ 2007 թ. 300 հոգանոց զորամիավորում ուղարկելու Իրաք⁴:

2007 թ. երկրորդ կեսին Վրաստանի զինծառայողների թիվը, որոնք մասնակցում էին Իրաք-Իրան սահմանին և Բաղդադի «Կանաչ գոտում» խաղաղապահական աշխատանքներին, հասնում էր շուրջ 2 000-ի: Բացի այդ, զինծառայողների մի մասը 2012 թ. ուղարկվել է Աֆղանստան: Նրանց շարքերը համալրել է Սաչխերի 16-րդ լեռնահրաձգային գումարտակի հետևակի ուժեղացված դասակը:

Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ն դեռևս 2002-2004 թթ. անցկացրել է զորավարժություններ «Cooperative Best Effort» ծրագրի շրջանակներում: Սևծովյան շրջանում ՆԱՏՕ-ի կազմակերպած խաղաղարար ուժերի զորավարժություններին ակտիվորեն մասնակցել են Վրաստանի մեծ թվով զինծառայողներ⁵:

ՆԱՏՕ-ի վերջին ընդլայնումից հետո (2004 թ.) որոշում է ընդունվել Հարավային Կովկասի երկրներից յուրաքանչյուրի հետ համագործակցել երկկողմանի ծրագրերով: Այս ուղղությամբ Վրաստանն արդեն 2004 թ. հոկտեմբերին ՆԱՏՕ-ի հետ ստորագրել է «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» համաձայնագիրը, որում մեծ են եղել նաև ԱՄՆ-ի գործադրած ջանքերը: ՆԱՏՕ-ն նաև հատուկ ներկայացուցիչների ինստիտուտ է ստեղծել Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում: Վրաստանը, համագործակցելով ՆԱՏՕ-ի հետ, ռազմական բյուջեի՝ անսպասելի աճ է գրանցել. 2004 թ. Վրաստանի ռազմական ծախսերը կազմել են 60 մլն դոլար, 4 տարի անց՝ 572 մլն դոլար⁶:

2004 թ. հոկտեմբերին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատն ու Սենատը վավերացրել են երկրի 2005 թ. ֆինանսական տարվա պաշտպանական բյուջեն՝ 477 մլրդ դոլար: Նախատեսվում էր Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում զանգվա-

¹ «Южный Кавказ: тенденции и проблемы развития (1992–2008 годы)», с. 173-176.

² ՆԱՏՕ-ի պաշտոնական կայք, NATO's relations with Georgia, http://www.nato.int/cps/en/natolive/topics_38988.htm

³ «Южный Кавказ: тенденции и проблемы развития (1992–2008 годы)», с. 173.

⁴ Նույն տեղում:

⁵ ՆԱՏՕ-ի պաշտոնական կայք, http://www.nato.int/cps/en/natolive/topics_38988.htm

⁶ **Կիրակոսյան Ռ.**, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀԿ) քաղաքական ամփոփագիր, թ. 2, Ապրիլ 2009 թ., էջ 9:

ծային ոչնչացման գեները չտարածելու ամերիկյան նոր «Մետաքսե ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում «Օդաչուական ծրագրի» իրականացման նպատակով Վրաստանին հատկացնել 10 մլն դոլար:

Վրաստանի համար 2006 թ. եղավ Պաշտպանության նախարարության քաղաքականության ուղղության փոփոխության տարի: Հունվարի 25-ին Վրաստանը դուրս եկավ «ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների խորհրդի» կազմից¹: Պաշտոնական պատճառաբանությունն այն էր, որ Վրաստանը չի կարող միաժամանակ անդամակցել երկու ռազմական կառույցի, ուստի իր ջանքերն ուղղորդելու է ՆԱՏՕ-ին անդամակցությանը: 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո Վրաստանը հայտարարեց ԱՊՀ-ից դուրս գալու մասին, որը տեղի ունեցավ 2009 թ.²:

Վրաստանի պաշտպանության նախարար Դավիդ Կեզարաշվիլին կոչ էր անում հրավիրել Իսրայելի ու ԱՄՆ-ի ռազմական մասնագետներին՝ Վրաստանի զինված ուժերը վերապատրաստելու և վերազինելու համար՝ նպատակ ունենալով ռազմական պայմանները համապատասխանեցնել ՆԱՏՕ-ի չափանիշներին: Իսկ ավելի ուշ՝ 2008 թ. հունվարի 26-ին, Վրաստանը հայտարարեց ռուսական AK-47 ավտոմատներից հրաժարվելու և փոխարենը ամերիկյան արտադրության M-4 հրացաններ գնելու մասին, որը միայն քաղաքական նպատակ էր հետապնդում³: Բացի դրանից՝ անհրաժեշտ է իրավիճակը դիտարկել նաև հարավկովկասյան քաղաքական գործընթացների տեսանկյունից, քանի որ Հյուսիսատլանտյան դաշինքը ներկայումս առավել մեծ ուշադրություն է դարձնում Հարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի երկրների հետ հարաբերություններին:

ՆԱՏՕ-ի համակարգին ինտեգրվելն այսօր Վրաստանի արտաքին քաղաքականության գլխավոր գերակայություններից մեկն է, որի նախապայմաններից են նաև երկրի ուժային համակարգը ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցնելն ու շարժուն զորամիավորումներ ստեղծելը: Ուժային գերատեսչությունների համապատասխանեցումը ՆԱՏՕ-ի չափանիշներին ինքնին առաջադրում է ՁՈւ-ի բարելավում, զորքերի շարժուն համակարգի ստեղծում:

2004 թ. հոկտեմբերի 29-ին ՆԱՏՕ-ի ղեկավարությունը վավերացրեց Վրաստանի հետ «Անհատական գործընկերության ծրագիրը», որը նախատեսում է երկրի քաղաքականության, անվտանգության և պաշտպանության ոլորտների բարեփոխումներ⁴: Դեռևս 2004 թ. հոկտեմբերի սկզբին Վրաստան էր ժամանել ՆԱՏՕ-ի Միջազգային ծառայության պաշտպանական քաղաքականության վարչության պատվիրակությունը՝ Բոյուս Բախի գլխավորությամբ: Հանդիպումների ընթացքում քննարկվեց Վրաստանի ՁՈւ-ն և երբին զորքերին միակցելու հարցը: Պաշտոնական թբիլիսիյն նախատեսում է, որ վերոնշյալ ծրագրի հաջող իրագործումից հետո կանցնի «ՆԱՏՕ-ի հետ միավորման ծրագրի» նախապատրաստական աշխատանքներին:

ՆԱՏՕ-ին անդամակցության հարցում վրացական իշխանությունները չիրագործված լուրջ խնդիրներ ունեն: Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցության գլխավոր նախապայմաններից մեկն ազգային անվտանգության հայեցակարգի ստեղծման խնդիրն է, որը Վրաստանում մինչև 2011 թ. չի մշակվել: Այս խնդրում պաշտոնական թբիլիսիյն աջակցում է ԱՄՆ-ն:

Դեռևս 2003 թ. հունվարի 29-30-ին Վրաստանի նախորդ կառավարությունը թբիլիսիում կազմակերպել է «Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգ» խորագրով համաժողով, որտեղ քննարկման է դրվել հայեցակարգի նախա-

¹ «Южный Кавказ: тенденции и проблемы развития (1992–2008 годы)», с. 174.

² Грузия окончательно ушла из СНГ, Росбалт, 17/08/2009 12:39, <http://www.rosbalt.ru/exussr/2009/08/17/663998.html>

³ «Южный Кавказ: тенденции и проблемы развития (1992–2008 годы)», с. 175.

⁴ **Darchiashvili D.**, Head, Georgian Security Sector: Achievements and Failures, Center for Civil-Military Relations, Tbilisi, 2004, p. 20.

գիծը¹: Համաժողովին մասնակցել են փորձագետներ մերձբալթյան երկրներից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից ու Գերմանիայից: Հայեցակարգի նախագծի հեղինակները, ի թիվս ազգային անվտանգության դրույթների, ընդգծել են նաև ներքին ու արտաքին սպառնալիքներից անհատի, հասարակության ու պետության իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտությունը:

Բացի աջակցություններից, ԱՄՆ-ը Վրաստանի հետ տարածաշրջանում ունի յուրահատուկ հարաբերություններ: Նրանց միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են դեռևս 1992 թ. ապրիլի 23-ին²: Կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր նորանկախ Վրաստանին ԱՄՆ-ը քաղաքական, ռազմական, ֆինանսական և մարդասիրական օգնություն է ցուցաբերել՝ դառնալով Վրաստանի ինքնիշխանության ու անվտանգության պահպանման հիմնական միջազգային երաշխավորը:

Վրաստանի անկախությունից հետո ԱՄՆ-ն միայն Քլինթոնի վարչակազմի ժամանակ՝ 1997 թ., սկսեց լրջորեն հետաքրքրվել Հարավային Կովկասով, երբ հայտարարվեց, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթանուղը ռազմավարական կարևոր օբյեկտ է ԱՄՆ-ի համար³: ԱՄՆ-ն էլ ավելի սկսեց հետաքրքրվել Վրաստանի տարածքով 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո: Վրաստանն սկսեց գործուն մասնակցություն ունենալ խաղաղարար գործողություններում, հակաթափախյալ և հակահուսեյնյան դաշինքներում: Առկա էին վրացական զորամիավորումներ Կոսովոյում, Աֆղանստանում և Իրաքում: Վրաստանի՝ հակաահաբեկչական կռաւիցիային անդամակցությունից հետո ԱՄՆ-ը Վրաստանին ավելի շատ ռազմական օգնություն հատկացրեց զինված ուժերի վերապատրաստման համար⁴:

«Աջակցություն ահաբեկչության դեմ պայքարում» ծրագրի շրջանակներում 2005 թ. Վաշինգտոնը Վրաստանին տրամադրել է ավելի քան 15 մլն դոլար: ԱՄՆ պետքարտուղարության մամուլի ծառայության տեղեկատվության համաձայն՝ վերջին երեք տարիների ընթացքում «Աջակցություն ահաբեկչության դեմ պայքարում» ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ը Վրաստանին է տրամադրել 47 մլն դոլար:

2002 թ. ԱՄՆ-ն սկսեց օգնություն ցուցաբերել ՆԱՏՕ-ի շրջանակներում տարածաշրջանի երկրների ազգային բանակների կայացման և հակաահաբեկչական պայքարում կադրերի պատրաստման գործում: Այսպես, Վրաստանում ԱՄՆ-ի աջակցությամբ ստեղծված է հակաահաբեկչական կենտրոն: Պատահական չեն նաև ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնյաների հաճախակի այցելությունները տարածաշրջան: Բավականին խոսուն է այն փաստը, որ վերջին երկու տարում ԱՄՆ-ի պաշտպանության նախարարը երեք անգամ այցելել է Ադրբեջան: Առավել ուշագրավ է, որ ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը ԱՊՀ երկրներից առաջինն այցելել է Վրաստան 2005 թ. մայիսի 10-ին⁵: 2006 թ. սկզբին կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել ԱՄՆ-ի արագ արձագանքման ուժեր տեղակայել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթանուղի վրացական հատվածում՝ անվտանգություն ապահովելու և Սև ծովի ավազանում Վրաստանի շահերը պաշտպանելու համար: Պատահական չէ, որ Մ. Սաակաշվիլին 2006 թ. սեպտեմբերին ոչ պաշտոնական այցով մեկնել էր Վաշինգտոն՝ ռազմական աջակցություն ստանալու ակնկալիքով⁶:

Վրաստանի պաշտպանության ոլորտի զարգացման պատճառով տնտեսական աճը կտրուկ նվազեց: Թբիլիսիին Վրաստանի անվտանգության խնդիրների լուծման համար ավելի լայն մասնակցության խնդրանքով մի քանի անգամ դիմեց

¹ “Georgian Foreign Policy, The Quest For Sustainable Security”, ed. by K. Kakachia & M. Cecire, 2013, p. 215.

² Վրաստանի ԱԳՆ պաշտոնական կայք, http://www.mfa.gov.ge/index.php?sec_id=268&lang_id=ENG

³ «Ожрый Кавказ: тенденции и проблемы развития (1992–2008 годы)», с. 165.

⁴ U. S. Announces New Military Assistance Program for Georgia. – Civil Georgia, November 5, 2004, <http://www.civil.ge/eng/article.php?id=8271>

⁵ Վրաստանի ԱԳՆ պաշտոնական կայք, Relations Between Georgia and the United States of America, http://www.mfa.gov.ge/index.php?sec_id=268&lang_id=ENG

⁶ Նոյն տեղում:

ՆԱՏՕ-ին: 2008 թ. հունվարի 1-ին Վրաստանից ռուսական զորքերի դուրս բերումից հետո նախագահ Սաակաշվիլին պաշտոնապես առաջարկեց ստեղծել ռուս-վրացական հակահարբեկչական միացյալ կենտրոն, բայց առաջարկը չիրագործվեց¹:

2008 թ. ՆԱՏՕ-ի Բուխարեստի գագաթաժողովի ժամանակ սահմանվել է, որ Վրաստանը պետք է դառնա դաշինքի անդամ, ինչը պետք է վերահաստատվեր 2012 թ. մայիսին Չիկագոյի գագաթաժողովում²: ԱՄՆ-ի գործուն աջակցությամբ Չիկագոյի գագաթաժողովում դաշինքի անդամները համաձայնեցին ամրապնդել ՆԱՏՕ-Վրաստան քաղաքական երկխոսության և փորձնական համագործակցության կապերը, բայց Վրաստանը լիարժեք անդամ այդպես էլ չդարձավ: Գագաթաժողովը հայտնի էր նաև Վրաստանի՝ Եվրատլանտյան անվտանգության ծրագրերում էական ներդրմամբ, որի մասին վկայում է Աֆղանստանում վրաց խաղաղարար ուժերի տեղակայումը: Բացի այդ՝ Վրաստանի առաջխաղացումն ընդգծվում է ամենամյա ծրագրերի իրականացմամբ և Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի գործունեությամբ:

Վրաստանն արտաքին ներդրումների ծավալով գերազանցում է տարածաշրջանի մյուս պետություններին: Վրաստանում հիմնական ներդրումներ իրականացնող և մարդասիրական օգնություն ցուցաբերող երկրներն են ԱՄՆ-ը և ԵՄ անդամ պետությունները: Ռուսաստանի հետ 2008 թ. հնգօրյա պատերազմից հետո Վրաստանը ԵՄ-ից ու ԱՄՆ-ից ստացել է 1 մլրդ դոլարից ավելի մարդասիրական օգնության փաթեթ, իսկ 2011-2012 թթ. եվրոպական տարածաշրջանում նման ծրագրերով Վրաստանը երկրորդն էր Ուկրաինայից հետո³:

Վրաստանի համար կարևոր են անվտանգության հարցերը: Վրաստանի անվտանգության ապահովմանը կարող է խթանել տնտեսական զարգացումը: Վրաստանը հարավկովկասյան անկայուն տարածաշրջանում սեփական անվտանգությունն ապահովելու համար պետք է կառուցի կայուն ժողովրդավարություն և մրցունակ տնտեսություն: Վրաստանը վերջին տասը տարիների ընթացքում ձգտում է դառնալ տարածաշրջանային մոդել՝ ամրապնդելով ժողովրդավարական կարգերը: Սրա վառ օրինակն են 2012 թ. հոկտեմբերին Վրաստանում անցկացված խորհրդարանական ընտրությունները, որոնք ամբողջովին համապատասխանում էին ԵԱԿԿ-ի չափանիշներին:

Վրաստանի մերձեցումը ՆԱՏՕ-ի անդամ երկրների հետ հանգեցրել է Ռուսաստանի հետ հարաբերությունների սրմանը: Ռուսաստանն իր զորքերը հանել է Ջավախքի⁴, որին մի քանի տարի անց՝ 2008 թ. օգոստոսին, հետևել է հնգօրյա պատերազմը Վրաստանի և Ռուսաստանի միջև: 2000 թ. սկսած վերջինիս նպատակն է եղել խոչընդոտել Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու գործընթացը: ԱՄՆ-ն իր հերթին մտադիր է ռազմաքաղաքական վերադասավորումներ իրականացնել տարածաշրջանում, ինչը հանգեցնում է Ռուսաստանի հետ շահերի բախմանը⁵:

Ամերիկյան նոր քաղաքական ու ռազմական վերադասավորումները ենթադրում են «առաջավոր տեղակայման» ուժերի առկայություն, որոնք ի վիճակի կլինեն կարճ ժամանակահատվածում ներգրավվել Եվրոպայում և նրա սահմաններից դուրս ցանկացած հակամարտության գոտում: Պետք է բացառել, որ Պենտագոնի իրականացրած վերադասավորումների արդյունքում Վրաստանում հայտնված ամերիկյան զորքերը կարող են լրացուցիչ սրացումների պատճառ հանդիսանալ վրաց-հարավօսական հակամարտության գոտում: Թերևս, պետք է բացառել նաև հակա-

¹ Georgia Proposes New ‘Mechanics’ for Relations with Russia. – Civil Georgia, September 22, 2004, <http://www.civil.ge/eng/article.php?id=7891>

² ՆԱՏՕ-ի պաշտոնական կայք, NATO’s relations with Georgia, Milestones in relations, www.nato.int/cps/en/natolive/topics_38988.htm

³ “U.S. - Georgia Forum, Georgia’s Security Challenges and Policy Recommendations”, July 2012.

⁴ «Кавказ - 2008 г.» («Ежегодник Института Кавказ»), отв. ред. А. Искандарян, Ереван, 2010, с. 203.

⁵ «Южный Кавказ: тенденции и проблемы развития (1992–2008 годы)», с. 377.

ռակը՝ ամերիկյան զինուժի ներկայությունը կարող է կայունացնող ազդեցություն ունենալ:

Հնգօրյա պատերազմից հետո Վրաստանի անվտանգության ամրապնդման նպատակով 2009 թ. հունվարի 9-ին ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսն ու Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշածեն Վաշինգտոնում ստորագրեցին ԱՄՆ-ի և Վրաստանի ռազմավարական համագործակցության հուշագիր, որը, սակայն, ունի դեկլարատիվ բնույթ, բայց կողմերի համագործակցության ու հարաբերությունների առումով որակական նոր իրողություն է¹:

Փաստաթուղթը ստորագրելիս ԱՄՆ պետքարտուղարը կրկին հայտարարել է, որ Միացյալ Նահանգները աջակցել է և շարունակում է աջակցությունը Վրաստանի ինքնորոշման և տարածքային ամբողջականության պահպանմանը, ինչպես նաև երկրի եվրատլանտյան ինտեգրմանը, իսկ ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Մեթյու Բրայզայի կարծիքով հռչակագիրն անվտանգության երաշխիք չէ, և այդպիսին կլինի միայն անդամակցությունը ՆԱՏՕ-ին: Այդ մասին նշվում է նաև փաստաթղթում՝ այն ընդգծմամբ, որ Վրաստանի՝ եվրատլանտյան ինտեգրացիայի խորացումը երկու երկրների համար ընդհանուր առաջնահերթություն է, ինչի առընչությամբ էլ ստորագրող կողմերը նախատեսում են համագործակցության ընդլայնված ծրագիր անվտանգության ոլորտում, որի նպատակը կլինի Վրաստանի հնարավորությունների ավելացումն ու ՆԱՏՕ անդամակցության նախապատրաստումը:

4 բաժնից բաղկացած փաստաթղթի առանձին բաժնում բավականին ծավալուն ներկայացվել է հենց համագործակցությունը անվտանգության ու պաշտպանության ոլորտներում: Միևնույն ժամանակ հիմնական մտահոգությունն ու սպասելիքը, թե ԱՄՆ-Վրաստան հռչակագիրը կարող է պարունակել ամերիկյան ռազմական բազաների տեղակայում Վրաստանի տարածքում, ըստ պաշտոնական թեմիսի, չի համապատասխանում իրականությանը²:

Սրանից հետո Վրաստանի նախագահ Մ. Սաակաշվիլիի՝ 2009 թ. նոյեմբերի 1-20-ը Լիսաբոնում տեղի ունեցած ՆԱՏՕ-ի գագաթաժողովին մասնակցությունից հետո ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը հայտարարել է, որ Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցության հետ կապված ոչ մի անակնկալ որոշում գագաթաժողովում չի կայացվի. «Վրաստանը ՆԱՏՕ-ի անդամ կդառնա, երբ կհամապատասխանի դաշինքի չափանիշներին», - ասել է Ռասմուսենը:

Այս հայտարարությունից հետո Ռասմուսենը Վրաստան է ժամանել 2010 թ., իսկ 2012 թ. նոյեմբերի 14-ին երկօրյա այցով Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում գտնվելու ժամանակ հանդիպում է ունեցել Վրաստանի պաշտոնատար անձանց հետ: Նրանց հետ բանակցել է Վրաստանի մարտունակության կառուցվածքային բարեկարգումների գործընթացի մասին: Ռասմուսենը Թբիլիսի մեկնելուց առաջ վստահություն է հայտնել, թե Վրաստանը կշարունակի ժողովրդավարական պետության կառուցումն ու ապագայում կդառնա Հյուսիսատլանտյան դաշինքի լիիրավ անդամ:

2011 թ. օգոստոսին Բաթումում Հ. Քլինթոնը մասնակցել է առափնյա պահպանության՝ ամերիկյան կողմի միջոցներով վերագինված ՈՒՄՔԱ-109 տեսակի երկու մոտորանավերի հանձնման արարողությանը: 2009 թ. սկսած ամերիկյան կառավարությունը շուրջ 10 մլն դոլարի աջակցություն է ցուցաբերել վրացական առափնյա անվտանգությունը կատարելագործելու համար: Վրաստանի առափնյա պահպանությունը ներքին գործերի նախարարության ենթակայության տակ է, իսկ օգնությունն իրականացվում է ԱՄՆ արտահանման վերահսկողության և սահմանների անվտանգության ծրագրերի շրջանակում: ԱՄՆ ֆինանսական և տեխնիկական աջակցութ-

¹ U.S. Department of State, “United States-Georgia Charter on Strategic Partnership”, Signed at Washington, DC on January 9, 2009, <http://2001-2009.state.gov/p/eur/rls/or/113762.htm>

² Նույն տեղում:

յամբ 2011 թ. օգոստոսին Փոթիում սկսվել է առափնյա պահպանության մոտորանավերի վերանորոգման և տեխնիկական սպասարկման կենտրոնի կառուցումը¹:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ, անվտանգության նկատառումներից ելնելով, Վրաստանի կողմնորոշումը դեպի ՆԱՏՕ բխում է մեծապես վրաց-ամերիկյան ռազմավարական գործընկերությունից: Վրաստանի՝ ՆԱՏՕ անդամակցությունը և ԱՄՆ-ի հետ գործընկերությունը կարելի է դիտել որպես փոխկապակցված գործընթացներ: Դեպի ՆԱՏՕ կողմնորոշման մասին են վկայում Վրաստանի անվտանգությանն առնչվող բազմաթիվ փաստաթղթեր՝ ներառյալ 2011 թ. ընդունված «Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգը»²:

Այսպիսով, Արևմուտքի և Ռուսաստանի համար Վրաստանը ինչպես տարանջիկ երկիր է դեպի Եվրոպա, Միջին Ասիա, Մերձավոր Արևելք, այնպես էլ ռազմական կարևոր նշանակություն ունեցող տարածք: Չնայած ԱՄՆ-ի բոլոր ջանքերին ու ֆինանսական աջակցությանը՝ Վրաստանը, այնուամենայնիվ, առայժմ չի կարող դառնալ ՆԱՏՕ-ի լիարժեք անդամ, քանի դեռ չեն լուծվել Վրաստանի տարածքային խնդիրները (Աբխազիա, Չարավային Օսիա): Քաղաքական վերջին իրադարձություններից ելնելով՝ կարելի է ասել, որ այդ հարցերի լուծումը ԱՄՆ-ի ու Ռուսաստանի շահերի բախման թիրախ է դարձել:

Эдкар Чахоян

ОТНОШЕНИЯ МЕЖДУ США И ГРУЗИЕЙ В РАМКАХ НАТО (2003-2013 ГГ.)

В этой статье обсуждаются отношения Грузии с США в рамках НАТО. Особое внимание уделяется прозападной политике, военному потенциалу и модернизации обороны Грузии. В подробностях изложены детали поддержки Грузии со стороны США, а также возможность вступления Грузии в НАТО.

Edkar Chakhoyan

US-GEORGIA RELATIONS WITHIN NATO (2003-2013)

This article discussed Georgia's relationship with the United States in the frameworks of NATO. It pays due attention to Georgia's pro-western policy and official Tbilisi's military capabilities and military modernization. The article thoroughly reviews the US advice support to Georgia, as well as Georgia's possible scenarios for NATO membership and the level of readiness.

¹ Հիլարի Բլինթոնի այցը Վրաստան, <http://razm.info/5701>

² Վրաստանի պաշտպանության նախարարության կայք, International Mission, Rights and Duties of Military Servicemen, <http://www.mod.gov.ge/en/ArmedForces/InternationalMission/>, 20.7.2012.



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը ԵՊՀ ուսանողներին և ասպիրանտներին միավորող համալսարանական ստորաբաժանում է: Նրա նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը: Այդ նպատակով ՈՒԳԸ-ն կազմակերպում է գիտաժողովներ, սեմինարներ ու դասախոսություններ, հրատարակում երիտասարդ գիտնականների և ուսանողների գիտական հոդվածները:

ԵՊՀ հիմնադրումից (1919 թ.) մի քանի տարի հետո սկսել են գործել ամբիոնային ուսանողական գիտական խմբակներ: 1947 թ. սեպտեմբերին հրավիրվել է այդ խմբակների անդամների ընդհանուր ժողով, և որոշվել է ստեղծել համահամալսարանական ՈՒԳԸ: ԽՍՀՄ փլուզման ժամանակ Հայաստանում ճգնաժամային իրավիճակին զուգընթաց, ի թիվս գիտական ուղղվածություն ունեցող այլ ստորաբաժանումների, ՈՒԳԸ-ն դադարել է գործել: Սակայն 1996 թ. մայիսի 25-ին այն վերահիմնադրվել է, ընդունվել է նոր կանոնադրություն, ընտրվել ՈՒԳԸ գիտական խորհուրդ:

2011 թ. դեկտեմբերից ԵՊՀ ՈՒԳԸ նախագահն է Սիքայել Մալխասյանը, նախագահի տեղակալը՝ Միեր Հակոբյանը, քարտուղարը՝ Տիգրան Ղանալանյանը:

2011 թ. դեկտեմբերից մինչև 2014 թ. հոկտեմբերը ԵՊՀ 19 ֆակուլտետներում և Իջևանի մասնաճյուղում ՈՒԳԸ շրջանակներում կազմակերպվել է ավելի քան 1500 միջոցառում, հրատարակվել է ՀՀ ԲՈՂ-ի պահանջներին համապատասխանող գիտական հոդվածների 15 և թեզիսների 4 ժողովածու, 4 մենագրություն, ավելի քան 600 գիտական հոդված, ավելի քան 150 թեզիս: Պարբերական բնույթ է ստացել ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուների հրատարակումը: ՈՒԳԸ կառուցվածքային ստորաբաժանումներին անդամակցում է շուրջ 400 ուսանող և ասպիրանտ:

ՈՒԳԸ աշխատանքներին կարող եք ծանոթանալ՝ հետևելով մեր պաշտոնական կայքին (sss.yu.am, ssspub.yu.am) և «Facebook» սոցիալական ցանցում «ԵՊՀ Ուսանողական Գիտական Ընկերություն» էջին: Հարցերի և առաջարկների պարագայում կարող եք դիմել sss@yu.am էլփոստի հասցեով:

«ԵՊՅ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու»
ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻՆ
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՐՎՈՂ ՀՈՂՎԱԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

ԵՊՅ ՈՒԳԸ կողմից պարբերաբար նախապատրաստվում է ԵՊՅ հրատարակչության կողմից հրատարակվող «ԵՊՅ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» խորագիրը կրող հոդվածների ժողովածուն, որտեղ տեղ են գտնում ռուսանոցների, ասպիրանտների, հայցորդների և երիտասարդ գիտնականների գիտական հոդվածներ:

«ԵՊՅ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու»-ին հոդված կարող է ներկայացնել ՀՀ բուհերից կամ գիտահետազոտական կենտրոններից որևէ մեկում սովորող կամ աշխատող մինչև 35 տարեկան անհատը: Ներկայացված գիտական հոդվածն իր բովանդակությամբ պետք է արտացոլի հեղինակ(ներ)ի կողմից ինքնուրույն աշխատանքի արդյունքները և պարունակի գիտականորեն ընդունված ձևակերպումներ:

Հոդվածի համակարգչային շարվածքը՝ Word-97-2007 ծրագրով: Ծավալը՝ 3 ամբողջական էջից մինչև 7 էջ:

Տեքստի տառատեսակը՝ ըստ KDWIn-ի. հայերեն՝ Armenian Phonetic Unicode, ռուսերեն՝ Russian Phonetic Unicode, անգլերեն՝ US:

Առաջին էջի վերին տողի աջ մասում 10 pt տառաչափով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ): Մեկ տող ներքև՝ տողի աջ մասում, 10 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, կարգավիճակը (բակալավր, մագիստրանտ, ասպիրանտ): Մեկ տող ներքև 10 pt տառաչափով գրվում է «Գիտական ղեկավար» արտահայտությունը, այնուհետև բութ դնելով՝ գրվում են գիտական ղեկավարի գիտական աստիճանը, կոչումը, անունն ու ազգանունը: Մեկ տող ներքև 10 pt տառաչափով գրվում է «Էլ. փոստ» արտահայտությունը, այնուհետև բութ դնելով՝ տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 10 pt տառաչափով, գլխատառերով (մեծատառերով), թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի հիմնական տեքստը:

Հիմնական տեքստի տառաչափը՝ 10 pt, տողերի հեռավորությունը՝ 1, էջի ֆորմատը՝ A4 (210 x 297 մմ), լուսանցքները. ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 15 մմ, ներքևից՝ 20 մմ: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ: Գրաֆիկներ օգտագործելիս անհրաժեշտ է կիրառել տեխնիկական այնպիսի միջոցներ, որոնք հոդվածի տպագրական էջադրման ժամանակ կբացառեն գրաֆիկի հնարավոր աղավաղումները:

Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում (բնական և տեխնիկական գիտությունների պարագայում՝ հոդվածի բուն տեքստից հետո՝ «Գրականություն» վերտառությամբ)՝ 8 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1: Հղման տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (alignment: Justify): Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (թավ տառերով՝ Bold), այնուհետև՝ աշխատանքի վերնագիրը, հրատարակման վայրը, թվականը, օգտագործած ինֆորմացիայի էջը (բնական գիտությունների պարագայում՝ հղվող աշխատանքի էջերի ընդհանուր թիվը):

Հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը պարտադիր են. հոդվածի տեքստից մեկ տող հետո 10 pt տառաչափով տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ): Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 10 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) հայերենով գրվում է հոդվածի վերնագիրը: Հաջորդ տողի կենտրոնում գրվում է «Բանալի բառեր» արտահայտությունը, և տրվում են բանալի բառերը՝ 5-10 բառեր կամ բառակապակցություններ (հասկացություններ,

առանցքային բառեր կամ արտահայտություններ), որոնք հնարավորինս ամբողջականորեն և յուրահատուկ կերպով բնորոշում են գիտական հոդվածի կամ դրա առանձին մասերի բովանդակությունը: Այնուհետև մեկ տող թողնելով՝ 50-60 բառի սահմաններում համառոտ ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (հիմնական էությունը՝ նպատակը, խնդիրները, արդյունքը/եզրակացությունը):

Հայերեն ամփոփագրի օրինակով պարտադիր է նաև ռուսերեն և անգլերեն ամփոփագրերի ներկայացումը՝ համապատասխան բանալի բառերով: Օտարալեզու հոդվածի դեպքում հայերեն ամփոփագիրը պարտադիր է:

Յոդվածն անհրաժեշտ է տպագիր և էլեկտրոնային տարբերակներով ներկայացնել ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահին կամ ԵՊՀ ՈՒԳԸ կենտրոնական գրասենյակ (Ա. Մանուկյան 1, ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 6-րդ հարկ, 608 սենյակ) կամ էլ ուղարկել ՈՒԳԸ էլեկտրոնային փոստի հասցեին՝ sss@ysu.am:

Յոդվածին պարտադիր պետք է կցված լինեն գիտական ղեկավարի կարծիքը և համապատասխան ամբիոնի վարիչի կամ գիտական կենտրոնի կողմից տրված երաշխավորագիրը: Եթե հոդվածը ներկայացվում է էլեկտրոնային փոստով, ապա անհրաժեշտ է ուղարկել նաև երաշխավորագրի սքանավորված տարբերակը:

Վերը նշված չափորոշիչներին չհամապատասխանող հոդվածները չեն տպագրվում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարգելի ընթերցող (Ռուբեն Մարկոսյան, Միքայել Մալխասյան) 5

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղասի Առաքելյան. ԲԱՆՈՒՉԻՍՏԱՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 9

Անգելինա Գաբրիելյան. ԱՅՄՊԵՍ ԿՈՉՎԱԾ «ԿԱՐՄԻՐ ՔՐԴՍԱՆ» 14

Անի Հովակիմյան. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԸ ԻՐԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 19

Անժելա Կժրոյան. ԹՈՒՐԹ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2000-2010 ԹԹ. 25

Արմեն Ժամհարյան. ԹՈՒՐԹԻԱ-ԱԼժԻՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1996-2002 ԹԹ. 28

Արշակ Գևորգյան. ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓԱՐԻՉՅԱՆ ԿՈՆԳՐԵՍՆ ՈՒ ՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 33

Դիանա Եղիազարյան. ԵԳԻՊՏՈՍՈՒՄ «ՍՈՒՍՈՒԼՄԱՆ ԵՂԱՅՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇՈՒՐՉ 39

Էդգար Էլքալյան. ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1919 Թ.) 47

Էլինա Միրզոյան. ՀՐԱՆՏ ԴԻՆՔ. ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹՅՈՒՆԸ 56

Էրիկ Դավթյան. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՉԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՈՒԵՋԻ ԳՅԱԺԱՄԻՑ ՀԵՏՈ (1957-1958 ԹԹ.) 61

Հարություն Ծատրյան. ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼԻ ԴԻՏԱՆԿՑՈՒՄԻՑ (2012 Թ.) 67

Մխիթար Հայրապետյան. «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ» ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ 77

Վարդան Կոստանյան. ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՏՅԱՆ ԲԱԼԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ «ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ 83

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ալբերտ Բարսեղյան. ԱՂԱՆՔԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 91

Անի Պապյան. ԵԿՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԳԱՆՊԱՐԻՅԻՆ ԱՌԿԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՉՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 95

Արամ Պողոսյան. ԻՐԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՆՎԱՃՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ 101

Արմեն Ժամհարյան. ԹՈՒՐԹԻԱ- ԼԻԲԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ 1989-1995 ԹԹ. 108

Արմինե Բաղայան. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՈՐԲԻՆԳԻ ՀԱԿԱՅԱՅ	
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	114
Արտեմ Հակոբյան. ՊԱՐՏԱԴՐՎԱԾ ՀԱՂԹԱՆԱԿ.....	120
Գոհար Բաղդասարյան. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՐՑԸ ԵՐԿՐՈՐԴ	
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ	128
Գոռ Մարիկյան. ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳԱՎՈՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.....	134
Գևորգ Ղուկասյան. ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՆ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ՄԻ	
ՔԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ	140
Դավիթ Ջուլիակյան. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱՐԻՉԻ ՎԵՅԱԺՈՂՈՎՈՒՄ. ՍԵՎՐԻ	
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ.....	147
Էդգար Էլքակյան. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹԵՄԱՏԻԿ ԵՐԳԵՐԻ ԲՈՎԱՆՂԱԿԱՅԻՆ	
ՈՒՂԴՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԺԵՔԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	153
Էդգար Էլքակյան. ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՆԵՆՅՈՒԻ	
ԵՐԿՈՒ ԸՎԱԿՏԱՄԱՐՏԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՅՎԱԾՈՒՄ (1921 Թ. ՀՈՒՆՎԱՐ-	
ՄԱՐՏ).....	163
Էրիկ Դավթյան. ԹՈՒՐՔ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918 Թ.....	173
Լիլիթ Մելիքյան. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՌՈՒՄԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.	
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ.....	179
Հայարփի Հակոբյան. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԸ.....	185
Հովհաննես Հարությունյան. ԲԱՔՎԻ 1905 Թ. ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԲԱՆՈՒՄՆԵՐԸ.....	193
Մարիամ Բաբայան. ՊՐԻՆՑԻՊԱՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ	199
Սելիթ Մկրտչյան. ՀՈՒՆԱՀՈՒՍԵԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՆՆԵՐԸ ԱՂՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ.....	205
Սելիթ Մկրտչյան. ՍԻՈՆԻՉՄԻ ԳԱՂՎՓԱՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ	211
Սիեր Հակոբյան. ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐԲԻՆ ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	216
Ռուզաննա Յոլչյան. ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ.....	223
Սաշա Կատվայան. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԱՂՎԱՆՔՈՒՄ ԵՎ ԵՂԻՇԵ ԱՌԱՔՅԱԼԻ	
ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ՈՒԴԻՆԵՐԻ ՄԵՋ.....	230
Վահագն Հակոբյան. ԹՈՒՐՔ-ՄԵՍԽԵԹՅԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ	236
Տաթևիկ Խանադյան. ՄԱՀՄԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՐԱՍՏԱՆՈՒՄ	243
Տիգրան Սարգսյան. ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԹԵՀՐԱՆՈՒՄ	247
Էդկար Չախոյան. ԱՄՆ ՎՐԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՏՕ-Ի	
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (2003-2013 ԹԹ.).....	252
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.	
<i>ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.....</i>	261
«ՈՒԲԸ գիտական հոդվածների ժողովածու». ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ	
ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՐՎՈՂ ՀՈՂՎԱԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ..	262

СОДЕРЖАНИЕ

ВОСТОКОВЕДЕНИЕ

Агаси Аракелян. БЕЛУДЖИСТАН: КРАТКИЙ ИСТОРИЧЕСКИЙ ОБЗОР.....	9
Ангелина Габриелян. ТАК НАЗЫВАЕМЫЙ «КРАСНЫЙ КУРДИСТАН»	14
Ани Овакимян. АТРОПАТЕНА В ИРАНО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ОТНОШЕНИЯХ	19
Анжела Кждрян. ТУРЕЦКО-СИРИЙСКИЕ ОТНОШЕНИЯ С 2000 ГОДА ПО 2010 ГОД.	25
Армен Жамгарян. ОТНОШЕНИЯ МЕЖДУ ТУРЦИЕЙ И АЛЖИРОМ В 1996-2002 ГОДАХ.	28
Аршак Геворкян. ПЕРВЫЙ ПАРИЖСКИЙ КОНГРЕСС ОСМАНСКИХ ОППОЗИЦИОННЫХ СИЛ И ПОЛИТИЧЕСКОЕ УЧАСТИЕ В НЕМ АРМЯН	33
Диана Егиазарян. ПРИЧИНЫ ПРОВАЛА ОРГАНИЗАЦИИ «БРАТЬЯ-МУСУЛЬМАНЕ» В ЕГИПТЕ	39
Эдгар Элбакян. ЗАРОЖДЕНИЕ КЕМАЛИСТИЧЕСКОГО ДВИЖЕНИЯ И ВНЕШНЯЯ ПОЛИТИКА (1919 ГОД).....	47
Елина Мирзоян. ГРАНТ ДИНК: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ	56
Эрик Давтян. МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ И ДИПЛОМАТИЯ НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ ПОСЛЕ СУЕЦКОГО КРИЗИСА 1957-1958 ГОДОВ.....	61
Арутюн Цатрян. СИРИЙСКАЯ ГРАЖДАНСКАЯ ВОЙНА И ПРОБЛЕМЫ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В ПЕРСПЕКТИВЕ АРМЯНСКИХ ПЕЧАТНЫХ СМИ (2012 ГОД)	67
Мхитар Айрапетян. «АРАБСКАЯ ВЕСНА» НА ПОВЕСТКЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ В 2011 ГОДУ.....	77
Вардан Костанян. ОТНОШЕНИЯ ТУРЦИИ С ЗАПАДНЫМИ БАЛКАНАМИ В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ ПАРТИИ «СПРАВЕДЛИВОСТЬ И РАЗВИТИЕ».....	83

ИСТОРИЯ

Альберт Барсемян. МНОГООБРАЗИЕ РЕЛИГИЙ АЛУАНКА И ИХ ОСОБЕННОСТИ.....	91
Ани Папян. ПОЛИТИЧЕСКИЕ И ЭКОНОМИЧЕСКИЕ ПРЕПЯТСТВИЯ НА ПУТИ ИНТЕГРАЦИИ ТУРЦИИ В ЕС И ПОЗИЦИИ ВЕДУЩИХ ЕВРОПЕЙСКИХ СТРАН В ЭТОМ ВОПРОСЕ.....	95
Арам Погосян. ПРЕДПОСЫЛКИ АРАБСКОГО ЗАВОЕВАНИЯ ИРАНА	101
Армен Жамгарян. ТУРЕЦКО-ЛИВИЙСКИЕ ОТНОШЕНИЯ И ИХ РОЛЬ ВО ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ ДВУХ СТРАН (1989-1995).....	108

Армине Бадалян. ТУРЕЦКАЯ И АЗЕРБАЙДЖАНСКАЯ ANTI-АРМЯНСКАЯ ЛОББИСТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ	114
Артем Акобян. НАВЯЗАННАЯ ПОБЕДА	120
Гоар Багдасарян. ВОПРОС ВОЗВРАТА АРМЯНСКИХ ТЕРРИТОРИЙ ВО ВРЕМЯ ЗАКЛЮЧИТЕЛЬНОГО ЭТАПА ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ	128
Гор Мсрикян. КОНСТИТУЦИЯ ЦАРЯ ВАЧАГАНА БЛОГОЧЕСТИВОГО	134
Геворг Гукасян. ТИГРАНАКЕРТ АРЦАХА И НЕКОТОРЫЕ ПРОЯВЛЕНИЯ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ANTIПРОПАГАНДЫ	140
Давид Джулакян. АРМЯНСКИЙ ВОПРОС НА КОНФЕРЕНЦИИ ПАРИЖА: СЕВРСКИЙ ДОГОВОР	147
Эдгар Элбакян. СЮЖЕТНАЯ НАПРАВЛЕННОСТЬ И АКСИОЛОГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ТЕМАТИЧЕСКИХ ПЕСЕН АРЦАХСКОЙ ВОЙНЫ	153
Эдгар Элбакян. ВНЕШНЯЯ ПОЛИТИКА КЕМАЛИСТСКОЙ ТУРЦИИ В ПЕРИОД МЕЖДУ ДВУМЯ БИТВАМИ ПРИ ИНЕНЬЮ (ЯНВАРЬ-МАРТ 1921 ГОДА)	163
Эрик Давтян. ТУРЕЦКО-ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ В 1918 ГОДУ	173
Лилит Меликян. АРМЯНСКАЯ АПОСТОЛЬСКАЯ ЦЕРКОВЬ В РОССИЙСКОЙ ИМПЕРИИ: СТАТУС И ПАРАЛЛЕЛИ С ДРУГИМИ ХРИСТИАНСКИМИ ЦЕРКВЯМИ, НАХОДЯЩИМИСЯ ПОД ВЛАСТЬЮ РОССИЙСКОЙ ИМПЕРИИ	179
Айарпи Акопян. РАННИЙ ПЕРИОД ШКОЛЫ МИНИАТЮРЫ ВАСПУРАКАНА	185
Ованес Арутюнян. АРМЯНО-ТАТАРСКИЕ СТОЛКНОВЕНИЯ В БАКУ 1905 ГОДА	193
Мариам Бабаян. СТАНОВЛЕНИЕ ПРИНЦИПАТА	199
Мелик Мкртчян. ANTIЧНИЕ ИСТОЧНИКИ О КАВКАЗСКОЙ АЛБАНИИ	205
Мелик Мкртчян. ИДЕОЛОГИЯ СИОНИЗМА	211
Мгер Акобян. АРМЯНСКОЕ ЛОББИ В КОНТЕКСТЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ США	216
Рузанна Елчян. ФОРМИРОВАНИЕ ШКОЛЫ КАВКАЗОВЕДЕНИЯ В ГРУЗИИ	223
Саша Катвалян. РАСПРОСТРАНЕНИЕ ХРИСТИАНСТВА И ВЕРЫ АПОСТОЛА ЕГИШЕ СРЕДИ УДИН	230
Ваагн Акопян. ПРОБЛЕМЫ ТУРОК-МЕСХЕТИНЦЕВ	236
Татевик Ханагян. ИСЛАМ В ГРУЗИИ	243
Тигран Саргсян. СОЦИАЛЬНАЯ ЖИЗНЬ В СОВРЕМЕННОМ ТЕГЕРАНЕ	247
Эдкар Чахоян. АМЕРИКАНО-ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ В РАМКАХ НАТО (2003-2013 ГГ.)	252

TABLE OF CONTENTS

ORIENTAL STUDIES

Aghasi Arakelyan. BALOCHISTAN: A BRIEF HISTORICAL OVERVIEW	9
Angelina Gabrielyan. THE SO-CALLED RED KURDISTAN	14
Ani Hovakimyan. ATROPATENE IN IRANIAN-AZERBAIJANI RELATIONS	19
Anzhela Kzhdryan. TURKISH-SYRIAN RELATIONS FROM 2000 TO 2010	25
Armen Zhamharyan. TURKEY-ALGERIA RELATIONS IN 1996-2002.	28
Arshak Gevorgyan. THE FIRST CONGRESS OF OTTOMAN OPPOSITION FORCES IN PARIS AND POLITICAL PARTICIPATION OF ARMENIANS	33
Diana Yeghiazaryan. ON THE REASONS OF COLLAPSE OF THE “MUSLIM BROTHERHOOD” SOCIETY IN EGYPT.....	39
Edgar Elbakyan. THE EMERGENCE OF KEMALIST MOVEMENT AND ITS FOREIGN POLICY (1919).....	47
Elna Mirzoyan. HRANT DINK: LIFE AND ACTIVITY	56
Erik Davtyan. INTERNATIONAL RELATIONS AND DIPLOMACY IN THE MIDDLE EAST AFTER THE SUEZ CRISIS (1957-1958).....	61
Harutyun Tsatryan. SYRIAN CIVIL WAR AND THE PROBLEMS OF ARMENIAN COMMUNITY FROM THE PERSPECTIVE OF THE ARMENIAN PRINT MEDIA (2012).....	67
Mkhitar Hayrapetyan. THE ARAB SPRING ON TURKEY’S FOREIGN POLICY AGENDA IN 2011	77
Vardan Kostanyan. TURKEY’S RELATIONS WITH THE WESTERN BALKANS DURING THE GOVERNMENT OF JUSTICE AND DEVELOPMENT PARTY	83

HISTORY

Albert Barseghyan. RELIGIOUS DIVERSITY AND FEATURES OF CAUCASIAN ALBANIA	91
Ani Papyan. ECONOMIC AND POLITICAL CHALLENGES ON THE WAY OF TURKEY FOR INTEGRATION TO EU AND POSITION OF EUROPEAN COUNTRIES	95
Aram Poghosyan. PREREQUISITES OF ARAB CONQUERING OF IRAN	101
Armen Zhamharyan. TURKISH-LIBYAN RELATIONS AND THEIR ROLE IN FOREIGN POLICY OF THE TWO COUNTRIES (1989-1995).....	108
Armine Badalyan. THE ANTI-ARMENIAN ACTIVITIES OF TURKISH AND AZERBAIJANI LOBBYING.....	114
Artem Hakobyan. IMPOSED VICTORY	120

Gohar Baghdasaryan. THE ISSUE OF RETURN OF THE ARMENIAN TERRITORIES IN THE FINAL PHASE OF THE SECOND WORLD WAR	128
Gor Msrikyan. CONSTITUTION OF KING VACHAGAN THE PIOUS	134
Gevorg Ghukasyan. TIGRANAKERT OF ARTSAKH AND AZERBAIJANI ANTIPROPAGANDA .	140
Davit Julhakyan. ARMENIAN QUESTION AT PARIS SUMMIT: THE TREATY OF SEVRES	147
Edgar Elbakyan. NARRATIVE ORIENTATION AND AXIOLOGICAL SIGNIFICANCE OF THEMATIC SONGS ON ARTSAKH WAR	153
Edgar Elbakyan. THE FOREIGN POLICY OF KEMAL’S GOVERNMENT DURING THE PERIOD BETWEEN THE TWO BATTLES OF İNÖNÜ (JANUARY-MARCH 1921).....	163
Erik Davtyan. TURKISH-GEORGIAN RELATIONS IN 1918	173
Lilit Melikyan. ARMENIAN APOSTOLIC CHURCH IN THE RUSSIAN EMPIRE: STATUS AND PARALLELS WITH OTHER CHRISTIAN CHURCHES UNDER THE POWER OF THE RUSSIAN EMPIRE.....	179
Hayarpi Hakobyan. THE EARLY PERIOD OF MINIATURE SCHOOL OF VASPOURAKAN	185
Hovhannes Harutyunyan. ARMENIAN-TATARIAN CLASHES IN BAKU IN 1905	193
Mariam Babayan. FORMATION OF THE PRINCIPATE.....	199
Melik Mkrtchyan. GRECO-ROMAN SOURCES ABOUT CAUCASIAN ALBANIA	205
Melik Mkrtchyan. THE IDEOLOGY OF ZIONISM.....	211
Mher Hakobyan. ARMENIAN LOBBY IN CONTEXT OF THE US FOREIGN POLICY	216
Ruzanna Elchyan. FORMATION OF THE SCHOOL OF CAUCASIOLOGY IN GEORGIA	223
Sasha Katvalyan. SPREAD OF CHRISTIANITY AND YEGHISHE APOSTLE'S FAITH AMONG UDIS.....	230
Vahagn Hakobyan. ON ISSUES OF MESKHETIAN TURKS	236
Tatevik Khanaghyan. ISLAM IN GEORGIA	243
Tigran Sargsyan. THE SOCIAL LIFE IN MODERN TEHRAN.....	247
Edkar Chakhoyan. US-GEORGIA RELATIONS WITHIN NATO (2003-2013).....	252

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ՈՒԳՐ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2 (2)

Հասարակական գիտություններ

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ **Միքայել Մալխասյան**
Սրբագրիչ՝ **Վահանդուխտ Դերձյան**
Ռուսերենի սրբագրումը՝ **Աննա Խիզանցյանի**
Անգլերենի սրբագրումը՝ **Միեր Հակոբյանի**
Տեխն. խմբագիր՝ **Տիգրան Ղանալանյան**
Համ. էջադրումը՝ **Միքայել Մալխասյանի**
Համ. ձևավորումը՝ **Արշակ Գևորգյանի**

Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ:
Չափսը՝ 70x100 1/16: Տպագր. 16.75 մամուլ:
Տպաքանակ՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
